

«Բանբեր Մատենադարանի»  
գիտական ժողովածուի սոյն հատորը տպագրում է

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան  
**ԱՆԴՐԱՆԻԿ Լ. և ԱՆՁԵԼ ՓՈԼԱՏՅԱՆ**  
Հիմնադրամի աջակցութեամբ և հովանատրութեամբ:

This volume of “BANNER MARENADARANI”  
was published by the  
**ANDRANIK L. and ANGEL POLATYAN**  
grant of the Armenian General Benevolent Union



**“MATENADARAN”  
MASHTOS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS  
  
BANBER MATENADARAN**

**18**

**Edited by  
S. AREVSHATYAN**

**“Nairi” publishing house  
YEREVAN – 2008**

**“МАТЕНАДАРАН”  
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМ. МАШТОЦА  
  
ВЕСТНИК МАТЕНАДАРАНА**

**18**

**Под редакцией  
С. АРЕВШАТЯНА**

**Издательство “Наири”  
ЕРЕВАН – 2008**

---

«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»  
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ԶԵՐԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

18

Խ մ բ ա զ ր ո ւ թ ե ա մ բ՝  
Ա . Ա ր ե պ շ Ա Տ ե Ա ն ի

«ՆԱԻՐԻ»  
ԵՐԵՎԱՆ – 2008

**Տպագրվում է Մաշտոցի անվան Մատենադարանի  
գիտական խորհրդի ոռոշմամբ**

«Բանբեր Մատենադարանի», Հ. 18 Մաշտոցի անվան հին ձեռագրերի ին-տ. —

Եր.: «Նախրի» հրատ., 2008:

Հ. 18/իմբ. Ա. Արեւշատյանի, 2008:

Մաշտոցի անվան Մատենադարանի «Բանբեր Մատենադարանի» գիտական նյութերի ժողովածուն կոչված է որոշակիորեն պատասխանելու միջնադարյան հայ մատենագրության հետ առնչվող ամենատարբեր մասնագիտության տեր գիտնականներին հետաքրքրող հարցերին, ինչպես նաև գիտական ոլորտի մեջ ներգրավելու ցարդ պատշաճ ուշադրության շարժանացած բազմաթիվ միջնադարյան բնագրեր:

## ՀՈԴՎԱԾՆԵՐ

### ՍՏԵՂԱՎԱՐԴԱՆՅԱՆ

**ԳՐԻԳՈՐ ՆՅՈՒՍԱՅԱՆԻ «ՏԵՍՈՒԹԻՒՆ Ի ՄԱՐԴՈՅՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ» ԵՐԿԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Հունաբան դպրոցի ուշ շրջանի թարգմանությունների շարքում աչքի է ընկնում Դ դարի նշանավոր աստվածաբան ու փիլիսոփիա Գրիգոր Նյուսացու «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» («Յաղագս կազմութեան մարդոյ») երկը: Այն իր մեջ ներառել է մարդաբանության կարեւոր հարցերի վերլուծություն՝ սկսած աստվածաբանությունից մինչեւ բնափիլիսոփայություն եւ բժշկություն: Իր գրքի առաջաբանում, որը Բարսեղ Կեսարացու մահվան տարում՝ 379 թ., որպես նվեր Զատկի տոնի առթիվ, ձոնել էր կրտսեր եղբորը՝ Պետրոս Սեբաստացուն, նա բացահայտում է գործի բուն նպատակը, այն է իրականացնել «Վեցաւրեայ»-ում անկատար մնացած ավագ եղբոր մտադրությունը՝ անդրադառնալ մարդաբանության հարցերին (3, էջ 321): «Ոչ իբրու աւտարացուցանել եւ աղարտել՝ խառնելով մերոյս զնորա ջանն կամեցեալ,- գրում է Նյուսացին: - Քանզի ոչ է արժան զբարձրն զայն թշնամանել բերան մերովքս հիւծեալ բանիւք, այլ զի թուեսցի անկատար եւ պակաս վարդապետին փառք յաշակերտսն իւր լինել: Քանզի եթէ թերոյն ի Վեցաւրեայն ի մարդն տեսլեան ոչ մի ոք յաշակերտելոցն փոյթ ինչ առ թերոյն լրումն մատոց առեալ լինէր յիրաւի զմեծէ փառաց նորա եպերանաց կոիւ, իբրու թէ ոչ կամեցեալ գիտութիւն ինչ հասական տեսանող ի լսաւզն գործել» (ՄՄ, ձեռ. 468, էջ 1բ-2ա):

Նյուսացու գիրքը լայն ճանաչում է գտել հայ մատենագրության մեջ: Միայն Մաշտոցի անվան Մատենագարանում այն պահպանվել է 31 գրչագրերում՝ ձեռ. 51, 417, 418, 419, 421, 463, 464, 466, 467, 468, 469, 470, 552, 620, 844, 1500, 1649, 1828, 2103, 2498, 2508, 2509, 2708, 3184, 3463, 3979, 5253, 6622, 6848, 7135, 9427 (5; 6; 7; 8; 10; 15, էջ 57-59; 17, էջ 199-207; 30, շ. 73-80 եւ այլն): Վենետիկի Միհիթարյան միաբանության մատենագարանն ունի «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» երկի 6 գրչագիր (ձեռ. 56, 294,

1128, 1129, 1241, 2119) (9), իսկ Երուսաղեմի Սրբոց Յակոբեանց վանքի մատենադարանը՝ 5-ը (Ճեռ. 390, 757, 820, 1122, 1810) (14):

Միջնադարում նյուսացու գիրքը թարգմանվել է նաև լատիներեն (Դիոնիսիոս Փոքր VI դ., Էրիփուգենա IX դ.) ասորերեն ու վրացերեն, իսկ նորագույն շրջանում՝ ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն, իտալերեն, իսպաներեն, լեհերեն, ուսւերեն եւ հրատարակվել՝ սկսած 1512 թ. մինչեւ մեր օրերը (18; 19; 22; 23; 24, 124D-256C; 27; 29, c. 145-146; 31, c. 152-158):

Առաջին անգամ եվրոպական գրականության մեջ նյուսացու երկի հայերեն թարգմանությանն անդրադարձել է 1832 թ. նոյմանը “Versuch einer Geschichte der armenischen Literatur” գրքում (23): Հետագայում Ջորջ Ֆորբսը՝ հիմնվելով մխիթարյաններից ստացած տեղեկությունների վրա, այն բնութագրել է որպես բառացի թարգմանություն (27): Նույնիսկ մեր օրերում Ֆիլիպ Լեւինն իր “Two Early Latin Versions of St. Gregory of Nyssse’s περὶ κατασκευῆς ἀνθρώπους” (22) արժեքավոր ուսումնասիրության մեջ համարյա ոչինչ չուներ ավելացնելու այս կարծիքին:

Պատճառը պարզ է: Հայերեն բնագիրը մինչ այսօր ձեռագիր վիճակում է: Այժմ հրատարակության ենք հանձնում «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» գրքի բննական բնագիրը, որի համար հիմք է ծառայել հունարեն բնագրին ամենամոտ կանգնած Մաշտոցի անվան Մատենադարանի Ժ-ԺԳ դարերի հմր. 468 լիարժեք ձեռագիր մատյանը եւ Ժ-ԺԳ դդ. ինը գրչագրեր՝ Ճեռ. 51, 469, 470, 620, 1500, 1649, 2508, 3463, 5253:

Հայերեն թարգմանության ժամանակի եւ թարգմանիչների հարցը հայագիտության մեջ առաջացրել է տարակարծություններ: Հայերեն գրչագրերի հիշատակարաններում միաժամանակ հանդես են գալիս գրության երկու տարբեր տարբեթիվ մեկը ըստ աշխարհի արարչագործության (6227 կամ ավելի ճիշտ՝ 6225 թ), որը համապատասխանում է փրկչականի 717 թվականին, իսկ մյուսը՝ ըստ հայոց թվականության (ՄիԱ), այսինքն՝ 772 թ.: Հիշատակարանում ասված է. «Ի Յ-Երորդի Մ-Երորդի Ի-Երորդի Ե-Երորդի (6227) արարածոց աշխարհիս, ըստ յունարէն թուոյ՝ ի չորեքտասաներորդի ընդիքտիոնին, իսկ ըստ հայում թվի ՄիԱ (772), յառաջին ամի թագաւորութեան Լեւոնի, թարգմանեցան գիրք սրբոյն Գրիգորի, Նիւանա եպիսկոպոսի, ի ստոյգ աւրինակաց, ի Կո[ս]տան[դն]ուպալիս, ի Ճեռն Դաւթի Հիւպատոսի, ի թագաւորական սեղանոյն յանգիւնառի [կենառի], ի Ճեռն Ստեփանոսի քահանայի եւ քերդողի, աշակերտի տեառն Մովսէսի՝ Միւնեաց եպիսկոպոսի» (ՄՄ Ճեռ. 470, էջ 115ա-բ):

Հետագայում պարզվեց, որ հայոց ՄիԱ (772) թվականը չի համապատասխանում ոչ Բյուզանդիայի Լեւոն Գ կայսեր թագավորության ժամանակաշրջանին (717-741 թթ.), եւ ոչ էլ Մտեփանոս Այունեցու ապրած տարիներին (680-735 թթ.), ուստի հայագետներից Մ. Զամշանը (12) եւ Հ. Տաշյանը այն համարեցին գրիշների սիսալ: Վերջինս գրում է. «Դար մը յառաջ Հ. Միքայէլ Վ. Զամշեան իւր Պատմութեան մէջ բերած է յիշատակարանս ուրիշ ձեռագրի մը համեմատ, ուր թուերը քիչ մ’այլազգ են: Աշխարհիս թուական կը դնէ 6225, իսկ «կենառ» բառի տեղ կը կարդանք ուրիշ աղաւազութիւն մը «յակիւնառի»: Ասոնք ի բաց թողլով՝ կը յիշեցընենք, որ Զամշեանի օրինակը «ըստ հայում թուականին ՃԿ» կկարդայ, որ է 716, ուրեմն՝ կրնանք ըսել՝ ճիշդ: Զամշեան կը յաւելու թէ «ի միում ձեռագրի» միայն «ՄիԱ. թուական գրուած է, զոր «յայտնի սիսալ գրչաց» կանուանէ» (16, էջ 9-10):

Համաձայն Գ. Հովսեփյանի կարծիքի՝ «այս ձեռագրի «իսկ ըստ հայում ՄիԱ» յետին յավելումն է, Լեւոն Գ-ի եւ Լեւոն Դ-ի (775-780) թուականների շփոթմամբ» (4, էջ 55): Անդրադառնալով այս հարցին՝ «Գրիգոր

Նյուսացին հայ մատենագրության մեջ՝ գրքում կ, Մուլապյանը նկատում է, «որ հետագոտողի «յետին յավելումն է» վերապահմամբ միանգամայն տեղին է, հաստատվում է վերում վկայակոչված Մաշտոցի անվան Մատենադարանի հմր 469 գրչագրի օրինակով, ուր «իսկ ըստ հայում ՄիԱ»-ն Ստեփանոս գրչի ձեռքով ավելացվել է լուսանցքում եւ միայն հետագա ընդօրինակություններում է մուծվել բնագիր եւ այդ եղանակով դարձել հիշատակարանի մաս» (10, էջ 68): Սակայն ըստ մեր հետազոտման տվյալների՝ Մաշտոցյան Մատենադարանի գրչագրերի հիշատակարաններում առկա է միայն «ՄիԱ» թվականը:

Վիճաբանություններ են ծավալվել նաեւ թարգմանչի կամ, ավելի ստուգ ասած, թարգմանիչների անձի շուրջ, քանի որ Ստեփանոս Սյունեցուց բացի եւ նույնիսկ նրանից առաջ վերոհիշյալ հիշատակարանում նշված է Դավիթ Հյուպատոսի անունը, որը կրում է «թագաւորական սեղանոյն կենառի (cenarius), այսինքն՝ սեղանապետի պատվավոր տիտղոսը: (Ի դեպ նշենք, որ վերջինս ձեռագրերում հաճախ առկա է աղավաղված «յակիւնառի» կամ «յանգիւնառի» ձեռով եւ որոշ հեղինակների, այդ թվում Բրոսսեի կողմից (21, pp. 82-83), սխալմամբ մեկնաբանվել է որպես կելար (celarius), այսինքն՝ մառանապետ):

Այս պարագայում հայագետների կարծիքը բաժանվել է. նրանցից մի մասը, օրինակ՝ «Նոր բառգիրք Հայկագեան լեզուի» հեղինակները (11, էջ 16) եւ Գ. Զարբհանալյանը (8, էջ 362-374) որպես թարգմանիչ էին ընդունում միայն է-լ դարերի անվանի գիտնական Ստեփանոս Սյունեցուն, մինչդեռ շատերը (1, էջ 603-605; 2, էջ 36; 10; 25), ելնելով վերոհիշյալ հիշատակարանի եւ ժԳ-ԺԴ դարերի նշանավոր հայ պատմիչ Ստեփանոս Օրբելյանի (13, էջ 135) «Պատմութիւն նահանգին Սիսական» գրքում բերած հայտնի վկայությունից («Եւ ծանօթացեալ մեծ հիւպատոսի մի Դաւիթ անուն եւ թագաւորական սեղանի կենառի. եւ ձեռնտուութեամբ նորին թարգմանէ զգեղեցիկ գիրսն սրբոյն Դիոնիսիոսի եւ դնէ ինքն դժուարագոյն եւ խրթին բանիցն լուծումն բան առ բան. թարգմանէ եւ զգիրսն քաղցրաբան Գրիգորի նիւսացւոյն զինութեան եւ զկազմութեան»), համարում են Դավիթ Հյուպատոսին Սյունեցու համագործակից: Հետաքրքրական է նշել, որ Դիոնիսիոս Արեոպագացուն վերագրվող երկերի հայերեն թարգմանության մեջ առկա հիշատակարանը համարյա նույնությամբ կրկնում է նյուսացու երկերը, այն տարբերությամբ միայն, որ իբրեւ թարգմանության ժամանակ նշված է հայազգի Փիլիպպոս կամ Փիլիպպիկոս Վարդան (711-713) Բյուզանդիայի կայսեր թագավորության երկրորդ տարին՝ 712 թվականը (6220-ը ըստ աշխարհի արարշագործության):

Ամփոփելով ձեռագրերում առկա հիշատակարանների տվյալները եւ Ստեփանոս Օրբելյանի վկայությունը՝ կարելի է եզրակացնել, որ հասնելով Պոլիս 712 թ., երբ դեռ թարմ էին հայերի հիշողության մեջ «կրակի տարին» ու նրա արհավիրքները, Ստեփանոս Սյունեցին մնում է այստեղ 6-7 տարի եւ թարգմանում Դավիթ Հյուպատոսի օգնությամբ՝ սկզբում Դիոնիսիոս Արեոպագացու, ապա՝ Գրիգոր նյուսացու ենմեսացու երկերը (ըստ որում վերջինիս աշխատությունը միջնադարյան մատենագրության մեջ նույնպես վերագրվում էր Գրիգոր նյուսացուն):

«Տեսություն ի մարդուն կազմութիւն» գրքի հունարեն բաղկացած է առաջաբանից եւ 30 կամ 31 գլուխներից, որոնցից մոտավորապես կեսը նվիրված է փիլիսոփայական, բնագիտական ու բժշկագիտական հարցերի (I, VII, VIII, IX, X, XI, XII, XIII, XIV, XV, XXIV, XXVIII, XXIX, XXX), իսկ մյուս կեսը զուտ աստվածաբանական բնույթի է (II, III, IV, V, VI, XVI, XVII, XVIII, XIX, XX, XXI, XXII, XXIII, XXV, XXVI, XXVII), թեպետ հաճախ պատահում է, որ այս հարցերը քննվում են միեւնույն գլխում:

Սկզբնաղբյուրի քննական բնագիրը քսանից ավելի ձեռագրերի բաղդատությամբ եւ Դիոնիսիոս Փոքրի լատիներեն թարգմանությամբ լուս ընծայեց 1855-61 թթ. Ջորջ Ֆորբսը (27): Վերջինս այն հրատարակեց

փոքր տպաքանակով իր սեփական տպարանում, որի պատճառով այսօր գարձել է գրեթե անմատչելի ուսումնասիրողների համար: Նրա հիման վրա 1893 թ. լուս տեսավ նյուսացու գրքի անգլերեն թարգմանությունը՝ "On the Making of Man" (19): Համաձայն ֆորբսի դասակարգման՝ գոյություն ունի 2 ձեռագրախումբ: Այս ձեռագրախմբերի միջեւ եղած տարրերությունը հիմնականում կառուցվածքային բնույթի է: Առաջին խմբի ձեռագրերը առաջաբանից բացի պարունակում են 30 գլուխ, մինչդեռ երկրորդ ձեռագրախումբը, առաջաբանով հանդերձ, ունի 31 գլուխ: Այս լրացուցիչ գլուխը լատիներեն տարրերակում եւ նրան հարող որոշ հունարեն ձեռագրերում գոյացել է ընդարձակ XII գլխի երկու մասի բաժանումից: Սրանից բացի երկրորդ ձեռագրախմբում հանդիպում են եւ այլ կառուցվածքային փոփոխություններ, օրինակ IX գլխի վերջին մասը լատիներեն ձեռագրերում տարվել է X գլխի սկիզբը, իսկ XXVIII գլխի վերջին նախադասությունը՝ XXIX գլխի սկիզբը:

Մեր կողմից կատարած հայերեն քննական բնագրի ուսումնասիրությունը ցուց տվեց, որ այն պատկանում է Ֆորբսի դասակարգման երկրորդ ձեռագրախմբին (28): Վերոհիշյալ կառուցվածքային տարրերություններից, որոնք բնորոշ են այդ խմբին, այստեղ առկա է XII գլխի բաժանումը երկու առանձին գլխի (հայերեն թարգմանության XIII - XIV գլուխներ), ինչպես նաև XXVIII-XXIX գլուխներում (հայերենի XXX-XXXI գլուխներ) կատարած բնագրային տեղափոխությունները: Դրանից բացի հայերեն թարգմանությունը պարունակում է 31-ի փոխարեն 32 գլուխ, քանի որ առաջաբանը մեզանում դիտվել է որպես առանձին գլուխ: Հայերեն թարգմանության մեջ բացակայում է հունարեն բնագրի ձոնը Գրիգոր Նյուսացու կրտսեր եղբայր Պետրոսին, սակայն դրա փոխարեն հեղինակի անվան կողքին նշված է նրա ավագ եղբայր Բարսեղ Կեսարացու անունը, որը առկա է նաև Ֆորբսի կողմից հրատարակված լատիներեն տարրերակի վերնագրում: Հասկանալի է, որ հայերեն թարգմանության մեջ պիտի բացակայեր նյուսացու գրքին նվիրված ոմն նիկիտայի բանաստեղծություն-էպիգրաման՝ *EΙΣ ΤΟΝ ΑΓΙΟΝ ΓΡΗΓΟΡΙΟΝ ΝΙΚΗΤΑ* (24, 124D-126C), որը հանդիպում է միայն ուշ շրջանի բյուզանդական ձեռագրերում (29, c. 180):

«Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» հայերեն թարգմանության քննական բնագիրը աբբահայր Փ. Պ. Մինի հրատարակված հունարեն սկզբնաղբյուրի (24,124 D-256 C) հետ համեմատելիս հայտնաբերել ենք հետեւյալ ուշադրության արժանի տեքստաբանական երեւութներ՝ 1. հայերեն թարգմանության մեջ հանդիպում են բառեր, որոնք բացակայում են հունարեն սկզբնաղբյուրում 2. հունարեն բնագրի բազմաթիվ բառեր հայերեն թարգմանության մեջ հանդես են գալիս աղավաղված ձեռով 3. հայերեն թարգմանության մեջ առկա են բնագրային բացթողումներ:

Ինչ վերաբերում է առաջին խմբի բառերին, ապա դրանք որոշ գեպքերում մատնանշում են բավականին կարեւոր երեւութ, այն է մեկ այլ հունարեն գրագրի առկայությունը, որը ընկած է հայերեն թարգմանության հիմքում: Այսպես, օրինակ՝ հունարեն բնագրում (24,153C), որտեղ խոսքը մտքի անտեսանելի բնույթի մասին է, սխալմամբ հանդես է գալիս *τΟῦ ἀνθρώπου* (մարդոյն) բառաձեւը *τΟῦ νοῦ* (մտացն\*)-ի փոխարեն, մինչդեռ հայերեն թարգմանության մեջ (ՄՄ ձեռ. 468, էջ 26բ), ինչպես նաև անգլերեն տարրերակում (19, Chap. XI), որոնք ամենայն հավանականությամբ արված են մեկ այլ հունարեն ձեռագրից, առկա է «մտացն - mind» հիշտ ձեւը:

Կամ էլ հունարեն բնագրի (24,176A) *τὴν δὲ τρεφομένην μὲν καὶ αὐξανομένην* (որ կերակրի եւ աճէ) հատվածը հայերեն թարգմանվել է «որ կերակրի եւ զգայ» (ՄՄ ձեռ. 468, էջ 46ա): Նույնը առկա է անգլերեն թարգմանության մեջ՝ «which at once receives nourishment and is capable of perception» (19,

*Chap. XIV, 2):* Խուսերեն թարգմանության մեջ, որը հետեւում է աբբահայր Ժ. Պ. Մինի հրատարակված հունարեն տարբերակին, սրա փոխարեն ունենք՝ «пимательную и расстительную» (29, с. 61): Սակայն տվյալ դեպքում հոգու երեք զորություններից, որոնք հատուկ են բույսերին, կենդանիներին եւ բանական էակին՝ մարդուն, խոսքը երկրորդի մասին է: Ուստի հունարեն բնագրում եւս պետք է լիներ, ինչպես հայերեն ու անգլերեն թարգմանության մեջ, ոչ թե τὴν δὲ τρεφομένην μὲν καὶ αὐξανομένην (որ կերակրի եւ աճէ), այլ τὴν δὲ τρεφομέնην μὲν καὶ αἰσθανομένην\* (որ կերակրի եւ զգայ): Այսպիսով կարելի է ենթադրել, որ հայերեն եւ անգլերեն թարգմանությունները հետեւել են հունարեն մեկ այլ գրշագրի, որը պատկանում էր ֆորսի դասակարգման երկրորդ ձեռագրախմբին (27): Վերջինս, ինչպես ասվեց, հունարենից բացի պարունակում է նաև լատիներեն տարբերակի ձեռագրեր: Իրոք, լատիներեն թարգմանության մեջ ասված է. «alia et nutritur, et sentiat» (24, 175A):

Եվս մի օրինակ. հունարեն բնագրում (24, 253C) ասված է. καὶ ἐστι λέων (եւ է առիւծ), մինչդեռ հայերեն թարգմանության մեջ «առիւծ»-ից հետո ավելացրած է «կամ մարդ» (ՄՄ ձեռ. 468, էջ 113թ): Նույնը հանդիպում է անգլերեն թարգմանության մեջ՝ «is a lion, or a man» (19, Chap. XXX, 30): Ուստի հայերեն եւ անգլերեն թարգմանությունները պիտի հետեւեին այնպիսի հունարեն գրշագրի, որտեղ առկա էր «ἄνθρωπος» հավելում: Խսկապես լատիներեն տարբերակում ասված է. «ipse vel leo, vel homo» (24, 253C): Այս ամենը վկայում է, որ հայերեն թարգմանությունն երկրորդ ձեռագրախմբին հատուկ կառուցվածքային առանձնահատկություններից բացի ցուցաբերում է նաև բնագրային բնույթի կարեւոր տարբերություններ:

Երկրորդ խմբի բնագրային շեղումների վերլուծության արդյունքում պարզվել է, որ դրանք իրենց հերթին բաժանվում են երկու ենթախմբերի: Առաջինը հիմնականում բաղկացած է այնպիսի բառերից, որոնք աղճատվել են դեռեւս հունարեն ձեռագրերում: Եվ իրոք, դժվար է պատկերացնել, որ Ստեփանոս Սյունեցին եւ Դավիթ Հյուպատոսը, որոնց թարգմանությունը ընդհանուր առմամբ բառացի բնույթ է կրում, ինչպես հունաբան դպրոցի այլ գործեր, այդքան հեռանալին հունարեն սկզբնօրինակից, կամ էլ նրանց հունարենի իմացությունը անբավարար լիներ:

Այդ խմբի աղճատված բառերին համապատասխանող հունարեն տարբերակներն իրենց ձեռով հնչակից են հունարեն ճիշտ տարբերակներին, ուստի աղավաղումը տեղի է ունեցել հենց հունարեն ձեռագրում: Բերենք օրինակներ: Հունարեն բնագրում (24, 132A.) ունենք՝ τῶν ὥραιῶν (ρերիւք\*) բառաձեւը, որը սակայն հայերեն թարգմանվել է որպես «լերամբք» (τῶν ὥρων) (ՄՄ ձեռ. 468, էջ 6 թ): Այս երկու բառաձեւերը՝ «ρερիւք» եւ «լերամբք» հայերենում երբեք չեն կարող շփոթվել, նույնիսկ եթե աղավաղվեին, մինչդեռ հունարենի ώραιῶν եւ ὥρων-ը այնքան մոտ են ձեւական առումով, որ մի փոքր աղավաղման դեպքում հեշտությամբ կարող էին նույնացվել: Հենց այդ էլ տեղի է ունեցել հունարեն ձեռագրում:

Մեկ այլ օրինակ. հունարեն բնագրի (24, 137C) τὴν ζητητικήν (գրննական\*) բառաձեւը, աղավաղված լինելով հունարեն ձեռագրում, շփոթվել է τὴν ζωτικήν (զկենդանականն)-ի հետ եւ հայերենում դարձել «զկենդանականն» (ՄՄ ձեռ. 468, էջ 12թ): Կամ էլ հունարեն բնագրի (24, 149A) τὸ στόμα (ρերանս\*) գոյականը, հայերեն տարբերակում (ՄՄ ձեռ. 468, էջ 22ա) հանդես է գալիս որպես «մարմին» (τὸ σῶμα): Հայերենում այս երկու բառաձեւերը չեն կարող շփոթվել, մինչդեռ հունարենում τὸ στόμα-ն աղավաղվելով հեշտությամբ կարող էր շփոթվել τὸ σῶμա-ի հետ: Մեկ այլ դեպքում հունարեն բնագրի (24, 149D) τὸν ἡθμὸν (ի մաղն\*) բառաձեւը հայերեն թարգմանության մեջ (ՄՄ, ձեռ. 468, էջ 23 թ) հանդես է գալիս որպես τὸν ἰσθμὸν (ի պարանոցն): Հայերենում «մաղն» եւ «պարանոցն» հնարավոր չեն շփոթել:

մինչդեռ հունարենում տօն ղթմօն-ը հեշտությամբ կարող էր աղավաղվել ու նույնացվել տօն լ՛օթմօն-ի հետ: «Նոր հայկացան բառարանում» վերջինս, ինչպես եւ «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» գրքի մի շարք այլ աղավաղված բառաձեւեր, ուղղված չեն: Նմանապես հունարեն ձեռագրում աղավաղվել են մի շարք այլ բառաձեւեր, օրինակ՝ ալ' տօլօցիա (պատճառագիտութիւն\*) գոյականի աղճատված ձեւը շփոթվել է ձնուլօցիա-ի հետ (24, 165Ա) ու թարգմանվել հայերեն որպես «հակառակաբանութիւն» (ՄՄ ձեռ. 468, էջ 36ա): Կամ էլ հունարեն ձեռագրերից մեկում (24, 177Բ) հաջարած գոյական (տակառաց\*) գոյական անունը, աղավաղվելով եւ շփոթվելով հայերեն թարգմանվել է որպես «ժամանակեաց» (ՄՄ ձեռ. 468, էջ 48ա): Պակաս հավանական է լատինացված ու աղավաղված *cadus* գոյականի նույնացումը լատիներեն *caducum* (ժամանակեաց) ածականի հետ:

Այլ գեպրում սկզբնաղբյուրի (24, 196Ա) ձեռաջևառ (զազատութիւն\*) գոյականը, աղավաղվելով ու շփոթվելով Ելեւուս (կատարեալ) ածականի հետ, հայերեն թարգմանվել է որպես «կատարեալ» (ՄՄ ձեռ. 468, էջ 62ա): Հունարեն ձեռագրերում բառաձեւերի աղավաղման պարզ օրինակներ են նաեւ ԹՀԸ լոցիկի (տրամաբանութեան\*)-ի (24, 224Ը) հանդես գալը որպես «անասնական» (ձլօցօս) հայերեն թարգմանության մեջ (ՄՄ ձեռ. 468, էջ 86բ), ինչպես եւ սկզբնաղբյուրի (24, 228Ԑ) տրօֆի (կերակուրն\*) բառաձեւի աղճատումը եւ շփոթումը հունարեն ձեռագրում ՏՐՈՓԻ (շրջումն)-ի հետ ու հայերենում (ՄՄ ձեռ. 468, էջ 90ա) որպես «շրջումն» թարգմանվելը: Այլ գեպրում հունարեն բնագրի (24, 244Ը) նւյնականության (թարթափ ական\*)-ի աղավաղված ձեւը հայերեն թարգմանության մեջ (ՄՄ ձեռ. 468, էջ 103բ) հանդես է գալիս որպես «իմանալույն» (ԽՕՂՄԱԿԱՊԻՒՅՆ) (ԽՕՂՄԱԿԱՊԻՒՅՆ):

Այս երեւութը ժամանակին նկատել էր նաեւ Ա. Թոմսոնը: Համեմատելով Դիոնիսիոս Արեոպագացուն վերագրվող գործերի հայերեն թարգմանությունը հունարեն բնագրի հետ՝ «Armenian Version of the Works attributed to Dionysius the Areopagite» գրքի առաջաբանում նա հետեւյալն է գրում. «Իր թարգմանության մեջ Ստեփանոս Սյունեցին փորձել է հնարավորինս մոտ մնալ հունարեն բնագրին, եւ այսպիսով հայերեն տարբերակի սխալներից շատերը ուղղակի հետեւանք են հունարեն բնագրում առկա ուղղագրական սխալների բառացի վերարտադրման» (25, *Introduction*, p. IX):

Բնագրագիտական վերլուծության ընթացքում պարզվել է նաեւ, որ մի շարք աղավաղումներ առաջացել են հայերեն բնագրում: Սրանց թիվն անհամեմատ ավելի փոքր է, քան առաջին խմբի բառերի: Կանգ առնենք այդ աղճատումների վրա: Այսպես, օրինակ՝ հունարեն բնագրի (24, 152Ը) ՁՕԽԵՂԱ (ամանք\*) գոյականը, աղավաղվելով մի շարք հայերեն գրչագրերում, հանդես է գալիս որպես «ամենեքին», «ամենեքեան» եւ «ամենեքեանք» գերանվանական ձեւեր (ՄՄ ձեռ. 468, էջ 24բ): Հունարեն բնագրի (24, 160Ը) ՊԱՐԵՂԱԽԵՈՒՏՈՍ՝ (հունելոյ\*) բառաձեւը հայերեն ձեռագրերի մեծ մասում դարձել է «հասելոյ» (ՄՄ ձեռ. 468, էջ 31ա): Հունարեն բնագրում (24, 172Ա, 173Ը) երեք անգամ հանդիպում է ԿԱԹ՝ ԾՊԱՐ (ի լրշէ\*, արթուն) արտահայտությունը, որը սակայն աղավաղվելով հայերեն գրչագրերում (ՄՄ ձեռ. 468, էջ 42ա-բ, 45ա) դարձել է «ի վերշէ» (ԿԱԹ՝ օնքան): Հունարեն բնագրի (24, 193Ը) ԴԵՎ ՁՆԾՈՒԱ (զարիութիւն\*) գոյականը հայերեն գրչագրերի մեծ մասում աղավաղվելով դարձել է «զարութիւն» (ՄՄ ձեռ. 468, էջ 61ա):

Ուսումնասիրության ընթացքում հայերեն թարգմանության մեջ հայտնաբերել ենք նաեւ բնագրային բացթողումներ, Այդ բացթողումները լինում են մեկ բառի, բառակապակցության, կամ էլ ամբողջ նախադասության տեսքով: Հայերեն թարգմանության մեջ (ՄՄ ձեռ. 468, էջ 13բ) բացակայում են «զմարդն\*» (ՁՆԾՈՒԱ) եւ «կերպարանի\*» (ՇՆԾՈՒԱ) բառաձեւերը, որոնք առկա են հունարեն բնագրում (24, 140Ը): Մեկ

այլ տեղ հայերեն թարգմանության մեջ (ՄՄ ձեռ. 468, էջ 33ա) բաց է թողած հունարեն բնագրի «պատահէ» (συμβαίνει) բայր (24, 161Ա):

Հունարեն բնագրի (24, 129Ը) է՞ն դա թագավոր մո՞ւ պէծութէ՛սոց (ոչ կապեալ ի շղթայս ծանրութեան\*) հատվածը բացակայում է հայերեն բնագրում (ՄՄ ձեռ. 468, էջ 5ա): Նույնը կարելի է ասել հունարեն բնագրի (24, 221Ա) առօծութունուն պահանջման մասին (կերպին ի կեանս դարձուցեալ լինի\*) հատվածի, որը չկա հայերենում (ՄՄ ձեռ. 468, էջ 83ա), կամ նրանից մի քանի տող ներքեւ գտնվող (24, 221Ա) է՛կ նօսուն չալե՛պի՛ (դժուար ախտից\*) բառակապակցության մասին (ՄՄ ձեռ. 468, էջ 84Բ): Հունարեն բնագրում առկա Պողոս առաքյալի հայտնի խոսքերը առեկութասթառ ծէ՛ն տօն պալածոն ձնթրապու, և է՛ն ճնշութասթառ տօն նէ՛օն («պարտ է ի բաց մերկանալ գհին մարդն եւ զգենով զնորն») (24, 256Ը) շնորհիկ բացթողումների թարգմանվել է ոչ ճշգրիտ ձեռով: Հայերեն թարգմանության մեջ բացակայում են «պարտ է» (ծէ՛ն) եւ «զնորն» (տօն նէ՛օն) բառաձեւերը (ՄՄ ձեռ. 468, էջ 115ա):

Որոշ դեպքերում դժվար է ասել՝ այս ամենը տեղի է ունեցել թարգմանության ժամանակ կամ էլ հայերեն ձեռագրերի ընդօրինակման ընթացքում, թե հունարեն ձեռագրերում առկա բացթողումների պատճառով: Յավոք սրտի, առ այսօր հրատարակված չէ «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» գործի լիակատար հունարեն քննական բնագիրը, որը պետք է կազմեր նյուսացու երկերի բազմահատորյակի (20) IV հատորը Հեղվիկա Հյորների խմբագրությամբ: Հուսով ենք, որ հետագայում նրա լույս ընծայելուն պես կարելի կլինի վերջնականապես հաստատել մեր տեքստաբանական վերլուծության արդյունքները: Սակայն առանց այդ էլ բերած փաստերը վկայում են, որ Ստեփանոս Սյունեցին ու Դավիթ Հյուպատոսն օգտվել են ոչ թե արբանայր Մինի կողմից հրատարակված ուշ շրջանի հունարեն տարբերակից (24, 124 D-256 C), այլ վաղ միջնադարի (V-VIII դ.դ.) սխալաշատ մի հունարեն գրագրից, որը մտնում էր Ֆորբսի դասակարգման երկրորդ ձեռագրախմբի մեջ եւ, ավաղ, հեռու էր «ի ստոյգ օրինակաց» լինելուց (միջնադարյան գրչի խոսքերով): Ի դեպ՝ Ա. Թոմսոնը եւս, անդրադառնալով Դիոնիսիոս Արեոպագացուն վերագրվող գործերի հայերեն թարգմանությանը, նշում է, որ վերջինս իր սխալներով շափականց մոտ է IX դարի սկզբին ընդօրինակված MS Parisinus 437 հունարեն ձեռագրին (26, *Introduction*, pp. VII-VIII):

«Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» աշխատությունը որոշակի ազդեցություն է թողել ոչ միայն աստվածաբանության ու փիլիսոփայության, այլեւ բնական գիտությունների ու բժշկության զարգացման վրա միջնադարյան Հայաստանում: Նրա ազդեցությունը պարզ զգացվում է կիլիկյան բժշկական դպրոցի ներկայացուցիչներ Աբուսալիդի (XII դ.) «Յաղագս կազմութեան մարդոյ» ու Իշուսի (XIII դ.) «Գիրք ի վերայ բնութեան» երկերում, ինչպես նաև Գրիգոր Տաթեւացու (1346-1409) «Գիրք հարցմանց»-ում: Նեմեսիոսի «Յաղագս բնութեան մարդոյ» երկասիրության հետ միասին այն ուսումնասիրվել ու մեկնաբանվել է Կիլիկիայի, Տաթեւի, Երզնկայի կաճառներում եւ այլուր հայ փիլիսոփաների, բնագետների ու բժիշկների, այդ թվում ժագարի նշանավոր գիտնական Վահրամ Իաբունու կողմից: Այդ հարուստ մեկնողական գրականությունը՝ «Լուծմունք կազմութեան գրոց» եւ «Մեկնութիւն կազմութեան գրոց» վերնագրով պահպանվել է Մաշտոցի անվան Մատենադարանի ԺԳ-ԺԸ դարերի մի շարք գրչագրերում (ձեռ. 55, 59, 621, 626, 1919, 2498 եւ ուրիշներ): Դեռ ավելին, «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» երկը պարունակող Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրերի լուսանցքներում եւ նույնիսկ բոլոն տեքստում առկա են բազմաթիվ լուծմունքներ:

Եվ վերջում մի քանի խոսք «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» գործի հայերեն թարգմանության լեզվի եւ ոճի մասին: Այն թարգմանելիս Ստեփանոս Սյունեցին ու Դավիթ Հյուպատոսը, անկասկած, զգացել են նրա

«քաղցրաբան» լեզվի գեղեցկությունը, ուստի տեղ-տեղ հրաժարվելով հունաբան դպրոցի բառացի թարգմանության սկզբունքից, կարողացել են գրաբարի ընձեռած հարուստ հնարավորություններով վարպետորեն վերարտադրել նյուսացուն հատուկ պատկերավոր մտածողությունը եւ նուրբ գեղարվեստական ճաշակն ու ոճը: Այսպես, օրինակ՝ անդրադառնալով արարչագործությունից հետո երկրի հրաշալիքներին, նյուսացին բանաստեղծի եւ արվեստագետի ոգեշնչմամբ ստեղծում է հետեւյալ սքանչելի պատկերը (24, 132A, B), որը հայերեն թարգմանության մեջ չի կորցրել իր հմայքը. «Եւ լի էր լեռամբք [բերիւթք] երկիր՝ ի միասին միանգամայն ծաղկաւք զպտուզ բուսացեալ: Եւ լի մարգք եւ բուրաստանք, որ ինչ միանգամ ի նոսա բնութիւն է լինել: Եւ ամենայն ողունք, ծորք եւ ծործորք, եւ սարք, եւ ամենայն, որ ինչ միանգամ կողմանաւոր է եւ զառիկող, եւ որ ինչ միանգամ ի հովիտս նորափթիթ դալարի: Եւ բազմապատիկ ծառոցն ժամանակ պսակեալ էր արդի եւս յերկրէ ի վեր բուսեալ եւ անդէն առ կատարեալ գեղեցկութիւնն հասեալ: Եւ խնդայր եւ զուարձացեալ էր ամենայն ինչ լստ վայելցութեան եւ խայտայր, հրամանով Աստուծոյ կենդանածնեալ արաւտականք յանդեայս եւ յազգս իւրաքանչիւր՝ ի թփուտ մացառս այսր-անդր ընթանալով: Երաժշտական թոշնոցն երգովք ամենայն վայրք հնչէին, ամենայն, որ ինչ միանգամ թաւ եւ տերեւախիտ էր եւ հովանուտ» (ՄՄ ձեռ. 468, էջ 6բ-7ա): «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» գրքի էջերում, ինչպես եւ նյուսացու այլ գործերում, կարծես վերակենդանանում է իր հայրենի Կապադովկիայի բնության անզուգական գեղեցկությունը:

Ամփոփելով կարելի է ասել, որ հայերեն թարգմանությունը տեղ-տեղ մոտենալով ծագումով սկզբութացի Դիոնիսիոս Փոքրի (VI դ) լատիներեն տարբերակի ազատ քերթողական ոճին, ընդհանուր առմամբ ավելի հարազատ է մնում իոլանդացի երիտրենայի (IX դ) բառացի թարգմանությանը, որը հատուկ էր միշնադարին:

### ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա.-Ե, Երեւան, 1942-1962, հ. Դ, 1948:

2. Ս. Ս. Արեւարապյան, Հնագույն հայկական թարգմանությունները եւ նրանց պատմամշակութային նշանակությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 1973, N 1:

3. Բարսեղ Կեսարացի, Յաղագս վեցաւրեայ արարչութեան, աշխ. Կիմ Մուրադյանի, Երեւան, 1984:

4. Գարեգին Ա. կաթողիկոս Յովսէփեան, Յիշատակարանք ձեռագրաց, Ա. Անթիլիաս, 1951:

5. Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա.-Բ, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյրունյան, Փ. Անքարյան, Երեւան, 1965, 1970:

6. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ա, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյրունյան, Փ. Անքարյան, Երեւան, 1984:

7. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյրունյան, Փ. Անքարյան, Երեւան, 2004:

8. Գ. Զարպիանալեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889:

9. Ս. Ճեմճեմեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Միհթարեանց ի Վենետիկ, հ. Դ-Հ, Վենետիկ, Ս. Ղազար, 1993-1998:

10. Կ. Մուրադյան, Գրիգոր նյուսացին հայ մատենագրության մեջ, Երեւան, 1993:

11. Նոր Բառգիրք Հայկագեան Լեզուի, աշխ. Գ. Ավետիքեանի, Խ. Սյուրմելեանի, Մ. Ավգերեանի. հ. Ա.-Բ, Վենետիկ, 1836-37:

12. Մ. Զամշեանց, Պատմութիւն Հայոց, հ. Բ, Վենետիկ, 1785:

- 
13. Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստ. Օբքէեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910:
14. Ա. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Ա. Յակոբեանց, հ. Ա.Ժ, Երուսաղէմ, 1966-1991:
15. Ստելլա Վարդանյան, Հայաստանի բժշկության պատմություն, Երեւան, 2000:
16. Յ. Տաշեան, Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք, Ա.-Զ, Վիեննա, 1895:
- 17 Ա.Վ. Տեր-Պողոսյան, Բիոլոգիական մտքի զարգացումը Հայաստանում, Երեւան, 1960, էջ 199-207:
18. M. Altenburger, F. Mann, *Bibliographie zu Gregor von Nyssa, Editionen, Übersetzungen- Literatur, Leiden etc, E, J. Brill, 1988.*
19. Gregory of Nyssa. *On the Making of Man, translated by W. Moore and H. Wilson, in The Select Library of Nicene and Post-Nicene Fathers, Ser. II, 5, New York, 1893.*
20. Gregorii Nysseni Opera. Leiden, 1959- 1987. Vol. I, II, III (pars 1, 2), V, VI, VII (pars 1, 2), VIII (pars 1, 2), IX (pars 1) Supplement.
21. *Histoire de la Siounie par Stéphannos Orbélian, traduite de l'Arménien par M. Brosset, Saint Pétersbourg, 1864.*
22. P. Levine, Two Early Latin Versions of St. Gregory of Nysse's περὶ κατασκευῆς ἀνθρώπου, *Harvard Studies in Classical Philology*, 63, (1958), p. 473-492.
23. C. F. Neumann, *Versuch einer Geschichte der armeniaschen Literatur*. Leipzig, 1836.
24. *Patrologiae Cursus Completus*. Accurante J. P. Migne. Series graeca.. Parisiis.
25. R. W. Thomson, *Armenian Version of the Works attributed to Dionysius the Areopagite*, CSCO, 488 (Armenian text), Scriptores Armeniaci 17, Louvain, 1987.
26. R. W. Thomson, *Armenian Version of the Works attributed to Dionysius the Areopagite*, CSCO, 489 (English translation), Scriptores Armeniaci 18.
27. Τοῦ ἐν ἀγίοις πατρὸς ἡμῶν Γρηγορίου ἐπισκόπου Νύσσης(ἀδελφοῦ τοῦ μεγάλου Βασιλείου ) τὰ εὑρισκόμενα πάντα. Sancti patris nostri Gregorii Nysseni Basilii Magni fratris quae supersunt omnia. In unum corpus collegit, ad fidem codd. mss. recensuit, Latinis versionibus quam accuratissimis instruxit et genuina a supposititiis discrevit Georgius H. Forbesius. Tomus primus. Burntisland, e typographeo de Pitsligo. Fasc. I, 1855. Fasc. II, 1861
28. Stella Vardanyan, *The ancient Armenian Version of “On the Making of Man” by Gregory of Nyssa. Proceedings of the 21 st International Congress of Byzantine Studies, London 21-26 August 2006, v. III, p.197.*
29. Григорий Нисский. *Об устройении человека, пер., послесл. и примеч. В. М. Лурье, СПБ, 2000.*
30. Хр. Кучук-Иоаннесов, Григорий Нисский (331-394 гг.), *Известия Таврической ученой архивной комиссии, Симферополь, 1916, 53.*
31. Л. А. Оганесян, *История медицины в Армении в 5 томах, т. 1, Ереван, 1946.*

## ԳՈՀԱՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

### ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹԻ «ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ Ի ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆՆ ՊՈՐՓԻՒՐԻ» ԵՐԿԲ. ՏԵՔՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Դավիթ Անհաղթի հայերեն ժառանգությունը, ինչպես հաստատել է Ս. Արեւածայանը, բաղկացած է շորս գրվածքից՝ «Փիլիսոփայության սահմանումներ», «Արիստոտելի Ստորոգությունների (Կատեգորիաների) մեկնություն», այդ նույն ստորոգությունների՝ «Պորփիորի «Ներածության» վերլուծություն», «Արիստոտելի Վերլուծականի (Անալիտիկայի) մեկնություն»<sup>1</sup>: Առաջին երեք գրվածքների հունարեն սկզբնագիրը պահպանվել է, վերջինի սկզբնագիրը չկա, սակայն այն նույնպես ակնհայտորեն թարգմանված է հունարենից:

Ինչո՞ւ Ալեքսանդրիայի նորավատոնական դպրոցի բոլոր ներկայացուցիչներից միայն Դավիթի գրվածքներն են թարգմանվել հայերեն. այս հարցին պատասխանելու համար բավարար փաստեր չկան: Հետազոտողները զանագան վարկածներ են առաջ քաշել: Ս. Արեւածայանը համոզված է, որ Դավիթը հայ է եղել, Ալեքսանդրիայում ուսանելիս գրել է հունարեն, իսկ հետագայում վերադարձել է Հայաստան եւ, կամ ինքն է թարգմանել իր երկերը հայերեն, կամ էլ կազմակերպել է դրանց թարգմանությունը<sup>2</sup>:

Սրանք հայագիտության մեջ հայտնի փաստեր են: Հայտնի է նաև, որ Դավիթին վերաբերող հայկական ավանդությունը<sup>3</sup>, ըստ որի Դավիթը հայ փիլիսոփա էր, որեւէ աղերս չունի հունական աղբյուրներից հայտնի տվյալների

<sup>1</sup> Տե՛ս օրինակ, այդ շորս երկն ամփոփող հրատարակությունը՝ Դավիթ Անյաղը, Երկասիրութիւնք փիլիսոփայականք, համահավաք ֆնանկան բնագրերը և առաջարանը Ս. Ս. Արեւածայանի, Երևան, 1980: Միշնադարյան ավանդությունը՝ Դավիթն է վերագրել նաև Պորփիորի «Ներածության», Արիստոտելի «Կատեգորիաների» և «Յաղագս մեկնութեան», Արիստոտելին վերագրվող «Յաղագս աշխարհի» և «Յաղագս ատամինութեան» երկերի բարգմանությունն ու «Փ սուրբ խաչ աստուածընկալը» հառը, «Առաջի հինգ Դաւիթ» և «Վասն բաժնաման» մանր գրվածքները: Այս ավանդությունն արտացոլվել է Դավիթի Անյաղը փիլիսոփայի Մատենագրութիւնք եւ Թուղթ Գիտուայ առ Դավիթ, ի Վենետիկ, 1932, հրատարակության մեջ, որը կրկնությունն է Կորին վարդապետի, Մամբրէ Վերծանողի և Դաւիթի Անյաղթի Մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, հրատարակության:

<sup>2</sup> С. С. Аревшатян, *Формирование философской науки в древней Армении (V-VI вв.)*, Ереван, 1973, с. 325:

<sup>3</sup> Այդ ավանդությունն ի մի է քերել Ժ.-Պ. Մահեն՝ "David l'Invincible dans la tradition arménienne", in Simplicius, *Commentaire sur les Catégories*, traduction commentée sous la direction de Ilsetraut Hadot, fasc. 1, Leiden, New York, København, Köln: E.J. Brill, 1990, p. 189-207:

Հետ<sup>4</sup>: Ա. Արեւշատյանը փորձել է, հաշտեցնելով այդ հակասական տեղեկությունները, վերականգնել Դավթի կենսագրությունը<sup>5</sup>: Պակաս հայտնին այն է, որ Դավթի հունարեն բնագրերը կրում են նույն վերնագրերը, արծարծում են նույն թեմաները, օգտագործում են հասկացությունների ու եզրերի նույն համակարգը, բերում են նույն օրինակները, ինչ եւ Ալեքսանդրիայի դպրոցի մյուս ներկայացուցիչների գրվածքները: Նատ հատվածներ նրանցում համարյա բառացի համընկնում են: Այդ գրվածքները նույն դասախոսությունների գրառումներն են: Դավթին ամենամոտ հեղինակը նրա ժամանակակից եւ աշակերտակից էլիասն է: Իզուր չէ, որ ժամանակին նրան են վերագրվել Դավթի վերը թվարկված չորս գործերից երկուսը՝ Արիստոտելի «Կատեգորիաների»<sup>6</sup> եւ «Անալիտիկայի» մեկնությունները<sup>7</sup>: Սակայն բնագրային նմանությունների վրա հիմնված այս ենթագրությունները հերքվել են ինչպես բանասիրական փաստերով<sup>8</sup>, այնպես էլ տարբեր մոտեցումներով, որ Դավթին ու էլիասը ցուցաբերում են միեւնույն խնդիրների հանդեպ (օրինակ՝ արդյոք տրամաբանությունը փիլիսոփայության մաս է թե՞ գործիք)<sup>9</sup>:

Ի տարբերություն «Կատեգորիաների մեկնության», որը պահպանվել է միակ թերի ձեռագրով<sup>10</sup>, մյուս երեքի բազմաթիվ ձեռագրեր են պահպանվել: Դրանք պարունակող մի շարք ժողովածուներ կան, որոնցում Պորֆիրի «Նե-

<sup>4</sup> Որոնց համաձայն՝ նա էլիասի հետ մեկտեղ Ալեմանդրյան դպրոցի 6-րդ դարի երկրորդ կեսի ներկայացուցիչ է. տվյալներն ամփոփված են R. Goulet (ed.), *Dictionnaire des philosophes antiques*, II, Paris, 1994, s.v. "David l'Invincible" (A. Ouzounian): Վեստերինկը նույնիսկ համարում է, որ Դավիթը եղել է էլիասի հաջորդը, որն իր հերքին հաջորդել էր 565 թ. Ալեմանդրիայի դպրոցի վիլխովայուբյան ուսուցիչ պաշտոնը քողած Օլիմպիոդրոսին, և «վերջին ալեմանդրացի» Ստեփանոսի նախորդը, տե՛ս L. G. Westerink, "Elia as on the Prior Analytics", in *Collected Papers of L. G. Westerink*, Amsterdam, 1980, p. 131:

<sup>5</sup> Ա. Ա. Արեւշատյան, Դավթի Անհաղթը զին Հայաստանի ականավոր փիլիսոփա, Երևան, 1980, էջ 30-36 («Կյանքն ու գործունեաբյունը» գլուխը):

<sup>6</sup> Ինչպես հոգնարեն սկզբնագիրը (*Eliae (olim Davidis) in Aristotelis Categorias commentarium*, in: *Eliae in Porphyrii Isagogen et Aristotelis Categorias Commentaria*, ed. A. Busse (CAG, XVIII, 1) Berolini 1900), այնպես էլ հայերեն թարգմանությունը (Մեկնութիւն Ստորոգութեանց Արիստոտելի ընծագեալ էլիասի հմաստասիրի, ի լոյս էած Յ. Մանանդեան, Ս. Պետերոսյան, 1911):

<sup>7</sup> Յ. Սահմանդեան, Յունական գարոցը եւ նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1928, էջ 59-67, նաև՝ M. G. Papazian, "The Authorship of an Armenian Commentary on Aristotle's Prior Analytics," *Journal of the Society for Armenian Studies*, vol. 10 (1998, 1999 [2000]), p. 55-62:

<sup>8</sup> Ս. Ս. Արևիտյան, նշանական աշխատանքներ, էջ 273-280:

<sup>9</sup> Ա. Թոփշյան, «Դիտողութիւններ Դավիթ Անյաղը Մեկնութիւն ի Վերլուծականն Արիստոտելի մասին (կառուցուածքը, բովանդակութիւնը, լեզուն, թարգմանչի ու հեղինակի խնդիրները)». – «Հանդիսանալության ամսության աշխատանքներ», 2006, էջ 63-90:

<sup>10</sup> Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետև ՄՄ), ձեռ. № 1930:

բածության» Դավիթի վերլուծությունը հետեւում է մեկնվող երկի՝ Պորփիորի «Ներածության» թարգմանությանը, շատերում էլ դրանց նախորդում է Դավիթի «Սահմանք իմաստասիրութեան»-ը: Այդ ձեռագրերից մի քանիսը, այլ երկերի թվում, պարունակում են նաև Դավիթի Արիստոտելի «Անալիտիկայի» մեկնությունը:

Պորփիորի «Ներածության» Դավիթի վերլուծության հիսուն ձեռագիր ենք ուսումնասիրել (46 Մատենագարանի<sup>11</sup>, 2 Փարիզի<sup>12</sup>, 2 Վիեննայի<sup>13</sup>), որոնք միօրինակ բնագիր են պարունակում: Գլուխների բաժանումն էլ նույն է: *Sapientia* բրությունները հիմնականում գրչական բնույթի են: Որոշ ձեռագրերում պարունակվող մի շարք տարբնթերցումներ հաստատվում են հունարենով եւ թույլ տալիս առանձին ուղղումներ առաջարկել հրատարակված տեքստին: Ամենից կարեւորն այս առումով Մատենագարանի № 1746 ձեռագիրն է, որ ամենից մեծ թվով ճիշտ ընթերցումներ է պարունակում:

Հունարեն երեք ձեռագրերից, որոնց հիման վրա կազմված է Բուսսեի քննական հրատարակությունը, V (Vaticanus N 1470) ձեռագիրն է, որ բոլորից շատ լոնդնանուր ընթերցումներ ունի հայերեն թարգմանության հետ. Երեսուներեք դեպքում այն միայնակ է հաստատում հայերենի ընթերցումները, երեք դեպքում K (Marcianus 539) ձեռագրի եւ վեց դեպքում T (Vaticanus N 1023) ձեռագրի հետ համատեղ: Միայն T ձեռագրի ընթերցումներն են համապատասխանում հայերենին ինն անգամ, միայն K-ն՝ յոթ անգամ, եւ այդ երկուսը համատեղ, ի հակադրություն V-ի վեց անգամ:

Անդրադառնանք Պորփիորի «Ներածության» Դավիթի վերլուծության հունարեն սկզբնագրի եւ հայերեն թարգմանության բաղդատությանը<sup>14</sup>: Դավիթի երկը նվիրված է Պորփիորի արծարծած հինգ եղբերի քննարկմանը. դրանք են՝ «սեռ», «տեսակ», «տարբերութիւն», «լատուկ», «պատահումն»:

<sup>11</sup> ՄՄ, ձեռ №№ 1746, 1716, 2326, 1766, 1751, 1748, 6897, 1715, 8722, 1753, 8522, 1813, 1809, 1500, 1744, 1916, 2368, 3914, 1742, 1739, 1750, 1738, 2364, 1810, 1811, 3130, 2293, 1687, 3501, 1688, 1765, 4027, 1858, 1691, 1808, 1826, 2652, 1692, 1812, 1996, 3683, 5033, 8214, 1740, 1763, 4008, 4006:

<sup>12</sup> ՄՄ, ձեռ №№ 263 եւ 656:

<sup>13</sup> ՄՄ, ձեռ. №№ 240 եւ 242:

<sup>14</sup> Բացի Վենետիկի վերոհիշյալ հրատարակություններից (ծնք. 1) եւ Դավիթի շորս երկի՝ Արեւշատյանի համահավաք հրատարակությունից, լշ 103-192 (ծնք. 2), պետք է նշել 18-րդ դարի հետեւյալ հրատարակությունը՝ Գիրք Պորփիորի որ կոչի ներածութիւն, յորում պարունակին վերծանութիւնք ամէնիմաստ Դաւիթի Անյաղթ փիլիսոփայի եւ լուծմունք ներածութեան Սրբոյն Գրիգորի Տաթեւացւոյ, Մադրաս, 1793, լշ 69-323: Բաղդատությունը հիմնված է հետաւյալ հրատարակության վրա՝ Դավիթ Անյաղթ, Վերլուծութիւն «Ներածութեանն» Պորփիորի, համահավաք հնական բնագիրը, բարգմանությունը գրաբարից ուսերեն, առաջարանն ու ծանոթագրությունները Ս. Արեւշատյանի, Երևան, 1976:

Պորփիուրի «Ներածության» հունարեն մեկնություններ, բացի Դավիթից, գրել են նաև Ամմոնիոսը (5-6 դդ.)<sup>15</sup>, վերոհիշյալ Էլիասը (6 դ.)<sup>16</sup>. գոյություն ունի նաև մեկ այլ՝ այսպես կոչված, կեղծ-Էլիասի (կեղծ-Դավիթի) մեկնություն<sup>17</sup>: Պահպանվել է նաև հունարեն մի անանուն մեկնություն, 6-րդ դարի հեղինակ Բոեթիուսի երկու լատիներեն մեկնություն, ասորերեն մեկնությունների պատառիկներ, ասորերեն սխոլիաների մի ժողովածու եւ այլն<sup>18</sup>:

Վերոհիշյալ երեք հունարեն մեկնությունները սկսվում են շատ ծավալուն ներածություններով, որոնց բովանդակությունը համապատասխանում է Դավիթի «Սահմանք իմաստափառութեան» երկին փաստորեն, Ամմոնիոսը, Էլիասը եւ կեղծ-Էլիասը մեկ գրվածքի մեջ ամփոփել են Դավիթի երկու գրվածքների նյութը: Իսկ Դավիթի ինսրո առարկա մեկնությունը սկսվում է մեկնվող երկի նպատակի («դիտաւորութիւն» – օ ՏԿՕԾ), օգտակարության («պիտանացու» – ՏԸ Խրήσιմօն), վերնագրի պատճառաբանվածության («պատճառ մակագրութեան» – ՞ ԱԼՏԻԱ ՏԴԾ ՇՊՐԱՓՀԾ), վավերականության («Հարազատութիւն» – ՏԸ ԿՆՀԾԻՕՆ), գլուխների բաժանման («զ՚ի գլուխս բաժանումն» – ՞ ԵՌԾ ՏԱ ԿԵՓԱԼԱԻ ՏԼԱՌԾԵԾԻԾ), նյութի դասավորության («կարգ» – ՞ ՏԱՀԾԻԾ), ուսուցման եղանակի («վարդապետական եղանակ» – օ ՏԼԱՌԿԱՆՈՒԹԾ) – ՏԸ ՊՈԾ) եւ այն հարցի, թե փիլիսոփայության ո՞ր բնագավառին է վերաբերում ավալ երկը («առ ինչ մասն վերաբերումն» – ՞ ՆՊԸ Տւ ՄԵՐՕՅ ԱՆԱՓՈՐԱ), ավանդական քննարկմամբ: Նույնպիսի հարցեր են արծարծված Դավիթի Արիստոտելի «Անալիտիկայի» մեկնության սկզբում:

Հայերեն եւ հունարեն տեքստերի համեմատությունից պարզվում է, որ մի կողմից թարգմանությունը բառացի է, հունարան (պատկանում է հունարան դպրոցի երրորդ խմբին)<sup>19</sup>, մյուս կողմից՝ երկուսի միջեւ զգալի տարբերություններ կան, այդ թվում՝ հայերենում հունարենի համեմատ պակասում են մեծ ու փոքր հատվածներ, որոնք երբեմն ամբողջական էշեր են կազմում, նույնիսկ

<sup>15</sup> Ammonii in Porphyrii isagogen sive quinque voces, ed. A. Busse (CAG, IV 3), Berolini 1891.

<sup>16</sup> Eliae in Porphyrii isagogen et Aristotelis categorias commentaria, ed. A. Busse (CAG, XVIII, 1), Berolini 1900.

<sup>17</sup> Pseudo-Elias (Pseudo-David), *Lectures on Porphyry's Isagoge*, Introduction, text and indices by L.G. Westerink, Amsterdam 1967: Գեուագրելից մի խանիսում այս մեկնությունը կրում է Դավիթի անունը (նոյն տեղում, էջ VII-VIII): Վեստերինկի կարծիքով՝ հեղինակը ո՞չ էլ Դավիթը, այլ դարձալ Օլիմպիոդորոսին հաջորդած եւ նոյն կրթական ավանդույթը ներկայացնող մի մեկնից (նոյն տեղում, էջ XI-XVI):

<sup>18</sup> Porphyry, *Introduction*, translated, with a Commentary by Jonathan Barnes, Clarendon press, Oxford 2006, p. xx-xxi, and n. 47.

<sup>19</sup> Յ. Մանադեան, Յունարան գպրոցը եւ նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1928, էջ 142-173, C. C. Արևածառ, նշվ. աշխ., էջ 186-187:

գլուխներ՝ գլուխ 11 եւ 18, կան եւ մեծ ու փոքր հատվածների հավելումներ, տարբեր է գլուխների բաժանումն ու համարակալումը. այսպես, հունարեն տեքստը սկսվում է շորս ներածական գլխով, այնուհետեւ գալիս է բուն տեքստի առաջին գլուխը, որը համապատասխանում է Հայերենի հինգերորդ գլխին, իսկ որոշ գլուխներ համապատասխանում են հունարենի 2 կամ 3-ական գլուխների<sup>20</sup>: Հունարեն տեքստում գլուխները եզրափակվում են միօրինակ նախադասություններով, որոնց Հայերեն համարժեքն է «Ընդ այսուիկ հանդերձ աստուծով առաջիկայ գործաւորութիւն» կամ «պրակ» կամ «տեսութիւն»: Գրանք ձեռագրերում գրվել են կարմիրով եւ, ընկալվելով որպես հաջորդ գլխի վերնագիր, այդպես էլ վերնագրերի տեսքով հանդես են գալիս Վենետիկի հրատարակությունների մեջ մինչդեռ Արեւշատյանն իր հրատարակություններում հունարենի հետեւությամբ զետեղել է դրանք գլուխների վերջում: Նշենք, որ «տեսութիւն»-ը հունարեն թեարձակություն կամ գործաւորութիւն»-ը՝ նույնի թարգմանություն: «Առաջիկայ» բառը հունարեն թարձակություն է, որ նշանակում է ոչ թե հաջորդ, այլ ներկա եւ իրականում վերաբերում է ոչ թե հաջորդ, այլ տվյալ գլխի նախորդ շարադրանքին: Նման հատվածներով են եզրափակվում նաև «Փիլիսոփայության սահմանումների» եւ «Վերլուծականքի մեկնության» բոլոր գլուխները:

Թարգմանությունն այնքան բառացի է, որ երբեմն տուժել է իմաստը: Օրինակ՝ «պատահումն» եզրը բնորոշվում է որպես «քառափաղառական» (Դ. Պորփ., 190.18-19), այսինքն՝ քառավանկ, մինչդեռ այն եռավանկ է, որովհետեւ հունարեն համապատասխան բառը՝ συμβεβηκός (*Dav.*, in *Isag.*, 210.24-25) քառավանկ է: Սակայն երկու նմանօրինակ դեպքերում «սեռ» բառը ճիշտ բնորոշված է որպես միավանկ, մինչ ցենոս բառը երկվանկ է՝ τὸ εἶναι [...] δισύλλαβον, τὸ καλεῖσθαι αὐτὸ γένος (*Dav.*, in *Isag.*, 210.15-16) – «գմիափաղառական գոլ, եւ կամ զկոչիլն նմա սեռ» (Դ. Պորփ., 190.6) – «նրա երկվանկ / միավանկ լինելը կամ սեռ կոչվելը» (հմմտ. նաև *Dav.*, in *Isag.*, 210.18 – Դ. Պորփ., 190.9):

Դավիթի խնդրո առարկա բնագրում բազմաթիվ մեջբերումներ կան Պորփուրի «ներածությունից»: Հայերեն թարգմանության մեջ այդ մեջբերումները մեծ մասամբ համընկնում են Պորփուրի հայերեն տեքստի հետ: Կարելի է ենթադրել, որ Դավիթի մեկնության թարգմանիչն աշքի առաջ է ունեցել Պոր-

<sup>20</sup> Հայերենի «Պրակֆ Զ» համապատասխանում է հունարենի 2-րդ, 3-րդ և 4-րդ գլուխներին, «Պրակֆ ԺԱ»՝ հունարենի 9-րդ և 10-րդ գլուխներին, «Պրակֆ ԺԲ»՝ 13-րդ և 14-րդ գլուխներին, «Պրակֆ ԺԸ»՝ 19-րդ և 20-րդ գլուխներին:

փյուրի «Ներածությունը», կամ որ մեջբերումները թարգմանվել են անկախ, իսկ մի ուշ խմբագիր համապատասխանության է բերել մեջբերումները Պորփյուրի «Ներածության» թարգմանության հետ:

Այն դեպքերում, երբ հունարեն մեջբերումները տարբերվում են Պորփյուրի տեքստից, այդ նույն տարբերություններն են ցուցաբերում Պորփյուրի եւ Դավիթի հայերեն թարգմանությունները, օրինակ՝ ծիափօրձ է ԾՏՒՆ ՞ ՊԵՐՈՇ ԾԵՆԵՍ ՏԸ ԷՇՅՈՍ ԾՈՎ ԿԵՆՈՎՈՒՆ ԱՅՆ Է, ՈՐՈՎ ՄԵԽԱԿԸ ԳԵՐԱՎԱՆՑՈՒՄ Է ԱԵՌԻՆ») = «ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ Է՝ ՈՐՈՎ ԱՊԱԵԼՈՒ ՄԵԽԱԿԸ ՔԱՆ ԳԱԵՌՈՆ» (Պորփ., 143), եւ լեցետαι ՏՕՆՍՆ ԾԻԱՓՕՐՁ ՞ ՊԵՐՈՇ ԾԵՆԵՍ ՏԸ ԷՇՅՈՍ ԾՈՎ ԿԵՆՈՎՈՒՆ Է ԿՈՉՎՈՒՄ, ՈՐՈՎ ՄԵԽԱԿԸ ԳԵՐԱՎԱՆՑՈՒՄ Է ԱԵՌԻՆ») = «ԱՐԴ, ԱՍԻ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ, ՈՐՈՎ ԱՊԱԵԼՈՒ ՄԵԽԱԿԸ ՔԱՆ ԳԱԵՌՈՆ» (Դ. Պորփ., 136.13-14):

Որոշ դեպքերում հունարեն «Ներածության» հատվածներն ու Դավիթի մոտ գրանց մեջբերումները նույնանում են, իսկ հայերեն համապատասխան հատվածների միջեւ տարբերությունները զուտ գրչական բնույթի են, օրինակ՝ ՏՅՆ ԿԱՏԵՂՈՐԾՄԵՆՈՎ ՏԱ ՄԵՆ ԿԱՅԾ ԷՆԸԾ ԼԵԿԵ ՀԵԿ ՈՐ ՎԱՐԱԿԵ ԱՍԻ ՄԻԱՅՆՈՐ» (Պորփ., 135), եւ «ՔԱՆՎԻ ՍՏՈՐՈԳԻՑԵԼՈՎՈՒՆ Է ԻՆԸ՝ ՈՐ ՎՃԻՌԵԿ ԱՍԻ ՄԻԱՅՆՈՐ» (Դ. Պորփ., 76.18): Միմյանցից տարբերվում են ընդգծված բառերի վերջավորությունները՝ «-ոյ» անցյալ դերբայի կանոնավոր եղակի սեռական է, իսկ «-ոյր»՝ հունարան թարգմանիչների ստեղծած սեռականի արհեստական վերջավորությունն է, այն տրականից տարբերակելու համար<sup>21</sup>:

Երբեմն մեջբերումներն ու «Ներածության» համապատասխան հատվածները հիմնականում նույնն են, սակայն մանրամասների մեջ կարեւոր տարբերություններ կան, որոնք վկայում են նորովի թարգմանության մասին. ԾԼՈՏ (Պորփ., Isag, 1.5-6 = Dav., in Isag, 97.1-3) = «ԲՈԼՈՐՈՎԻՆ» (Պորփ., 133), եւ նրան հոմանիշ «ամենեւին» (Դ. Պորփ., 28.4), օրէ ՀՈՒՐՏԱ ԾԵ (Պորփ., Isag, 11.7 = Dav., in Isag, 195.30) – «Եւ որոշեն» (Պորփ., 143) եւ «ԲԱԿ ՍԱՀՄԱՆ» (Դ. Պորփ., 156.21), ու ԽՈՐԾԵՎ (Պորփ., Isag, 11.18-19 = Dav., in Isag, 196.18) = «մեկնելն» (Պորփ., 144) եւ «անշատելն» (Դ. Պորփ., 156.31), ԽՈՐԾԾՈՆՏՈՎ (Պորփ., Isag, 12.2 = Dav., in Isag, 199.11) – «մեկնողացն» (Պորփ., 144) եւ «անշատողացն» (Դ. Պորփ., 164.2):

Դավիթի թարգմանիչն ուղղել է Պորփյուրի թարգմանչի մի սխալը՝ ու ԾԼՈՏԱԿՈՎՈՎ (Պորփ., Isag, 4.13 = 6.12-13, Dav., in Isag, 162.22, 27) –

<sup>21</sup> Կանոնավոր ո-ին ավելացրած ու տարրը դերանվանական հոլովումից է, հմմտ. այս - այսր, նա - նորա, ո - ոյր:

«յատկագոյն», «յատկագոյնսն» (Պորփ., 136, 138-139, որ արդյունք է ei երկհնցունի պարզեցված և լնթերցման, որպես ուժ օճակածագոյն), փոխարինված է օրինաշափ «տեսակագոյն», «տեսակագոյնսն» թարգմանություններով (Դ. Պորփ., 100.26, 102.1):

Երբեմն հունարեն հատվածների միջեւ տարբերություններն արտացոլված չեն հայերեն թարգմանություններում՝ Դավթի հայերեն մեջբերումները տարբերվում են իրենց հունարեն սկզբնագրից եւ համընկնում են Պորփիրի հայերեն տեքստի հետ. ուժ ուժությունը պահպանվում է առաջին հայերեն տեքստում:

Պորփիյուրի հայերեն թարգմանությունը, ինչպես եւ Արիստոտելի «Ստորոգությունների» եւ «Յաղագս մեկնութեան» երկի, պատկանում են հունաբան դպրոցի երկրորդ շրջանին, իսկ Դավիթի եղիկերը թարգմանվել են երրորդում<sup>24</sup>, ուրեմն թարգմանիչներն էլ տարբեր մարդիկ են: Այդ տեքստերը թարգմանական տեխնիկայով եւ հետեւաբար լեզվական առանձնահատկություններով տարբերվում են միմյանցից: Այնուամենայնիվ, Դավիթի թարգմանիչը լայնորեն օգտագործել է «Ներածության» (նաեւ «Ստորոգությունների») մեջ հանդիպող հունաբան բառեր եւ հատկապես եզրեր, եւ սա չի կարելի բացատրել որպես ուշ խմբագրի աշխատանքի, այլ միայն Պորփիյուրի հայերեն տեքստն աշքի առջեւ ունենալու արդյունք: Ահա մի քանիսը,

ἀλλοῖον (*Porphy., Isag, 8.18-9, Dav., in Isag, 181.10*) = «ալլայլակ» (*Պորֆ., 141, թ. Պորֆ., 128.3*),

ἀπειρος (*Porph.*, *Isag*, 6.12-13, *Dav.*, in *Isag*, 110.9) = «անհուն» (*Պոռփ.*, 139, թ. *Պոռփ.*, 40, 14).

ἀπόδειξις (*Porphy., Isag.*, 1.5-6, *Dav.*, in *Isag.*, 88.14) = «ապացոյց» (*Պորֆ.*, 133, թ. *Պորֆ.*, 16.24),

<sup>22</sup> Այդ մասին տե՛ս նաև R. Sgarbi, *Osservazioni sul testo e sulla lingua della versione armena dell' "Isagoge" di Porfirio* (Memorie dell' Istituto Lombardo - Accademia di scienze e lettere, classe di lettere - scienze morali e storiche, vol. XXXI, fasc. 5), Milano 1972, p. 398-399:

<sup>23</sup> Σπουδαία περιβολή της Αθηναϊκής αρχαιότητας είναι η περιοχή της Κάτω Βασιλείας, στην οποία βρίσκονται τα μεγαλύτερα αρχαιολογικά μνημεία της πόλης.

<sup>24</sup> Յամանդեան, նշվ. աշխարհագիր պահպանությանը:

ձոքածու (Porph., Isag, 1.5-6, Dav., in Isag, 88.14) = «բացատրութիւն» (Պորֆ., 133, Դ. Պորփ., 16.24),

ցեռւկատած (Porph., Isag, 1.5-6, Dav., in Isag, 87.7) = «սեռականագոյն» (Պորփ., 133, Դ. Պորփ., 14.10),

εἰδικώτατος (Porph., Isag, 4.13-14, Dav., in Isag., 87.18) = *տեսակագոյն* (Պորփ., 146, Դ. Պորփ., 84.17),

εἰδόποιός (Porph., Isag, 8.15-16, Dav., in Isag., 177.3) = «տեսակարար» (Պորփ., 141, Դ. Պորփ., 188.15),

ψιλὴ ἐπίνοια (Porph., Isag, 1.10-11, Dav., in Isag, 110.24) = «սոսկ մտածութիւն» (Պորփ., 133, Դ. Պորփ., 40.22),

ἥ ἰδιαίτατα (διαφορά) (Porph., Isag, 8.19, Dav., in Isag, 179.1) = «յատկեղ (տարբերութիւն)» (Պորփ., 141, Դ. Պորփ., 122.18),

ἰδιότης (Porph., Isag, 7.21-23, Dav., in Isag, 204.20) = «յատկութիւն» (Պորփ., 140, Դ. Պորփ., 174.29),

ὑπογραφή (Porph., Isag, 3.19-20, Dav., in Isag, 94.1) = «հնիթագրութիւն» (Պորփ., 136, Դ. Պորփ., 24.26),

նփ՛օտամալ (Porph., Isag, 1.10-11, Dav., in Isag, 110.24) = «հնիթակայանամ» (Պորփ., 133, Դ. Պորփ., 40.24),

ἄτομος = «անհատ» (ստեղ), ἀχώριστος = «անանջատական» (ստեղ), γένος = «սեռ» (ստեղ), διաφορά = «տարբերութիւն» (ստեղ), εἰδος = «տեսակ» (ստեղ), ὕδιον = «յատուկ» (ստեղ), κατηγορούμενον = «ստորոգեալ» (ստեղ), συμβεβηκός = «պատահումն» (ստեղ), χωριστός = «անջատական» (ստեղ):

Դավթի Մեկնության վերջին հատվածը նվիրված է վերոհիշյալ հինգ եղբերի նմանություններին ու տարբերություններին: Հունարեն բնագիրը պարունակում է միայն «սեռ»-ի բաղդատությունը մնացած չորսի հետ (Dav., in Isag, 208.1-218.31). այն եզրափակվում է հետագա բաղդատության մասին ընդհանուր համառոտ դատողություններով (Dav., in Isag, 218.32-219.25), ինչի փոխարեն հայերենում մյուս եզրերը համեմատված են մնացածների հետ (Դ. Պորփ., 200.2-202.23): Դավթի մեկնության հունարեն տեքստի վերջին էջերը բացակայում են հրատարակության մեջ. հրատարակիչ Բուսսեն նշում է, որ շարունակությունը նույնն է Էլիասի նույնանուն երկի վերջավորության հետ<sup>25</sup>: Հայերեն համապատասխան հատվածը կարելի է բնորոշել որպես Պորփյուրի «Ներածության» (Porph., Isag, 18.10-22.13), կամ էլ նրա՝ Էլիասի մեկնու-

<sup>25</sup> Elias, in Isag, 100.27-107.1. Բուսսեն ընդհատում է Դավթի տեքստն այսուղ (Dav., in Isag, 219.25): ծանոթագրության մեջ ավելացնելով "reliqua cum Elia congruunt":

թյան համապատասխան հատվածների համառոտ տարբերակ: Սակայն հայերեն հատվածին ամենից նման հունարեն հատված գտանք ուղղափառ եկեղեցու սյուներից մեկի, աստվածաբանական գրվածքներով հայտնի Հովհաննես Դամասկացու (7-8-րդ դդ.) *Dialectica* երկում (*Damasc.*, Dial, 24.1-29.9), որի մասին հուն բյուզանդակետ կինոս Բենակիսը գրել է, թե նա մեջբերումներ ունի Դավիթի Պորփյուրի «Ներածության» հունարեն մեկնությունից<sup>26</sup>: Դամասկացու առանձին նախադասություններ կարծես Դավիթի հայերեն նախադասությունների սկզբնագիրը լինեն, օրինակ՝ «Հասարակութիւն տարբերութեան եւ տեսակի՝ եթէ հանգիտաբար ունականան, եթէ միշտ առընթեր գոն՝ որոց ընդունականն գոն» (Դ. Պորփ., 200.2-4) = Կունա ծիափօրաց և Շուշանի պատճենությունների մեջ, իսկ հունարեն սկզբնագրում այն համառոտվել է:

«Ներածության» մեկնության հունարեն սկզբնագրի եւ հայերեն թարգմանության միջեւ տարբերությունները շատ ավելի բազմաթիվ ու էական են, քան հունարեն եւ հայերեն ձեռագրերի տարբերցումները: Ամենից աչքի գարնողը հայերեն շթարգմանված հունարեն մեծ ու փոքր հատվածներն են: Տարբերությունները կարող են ունենալ երեք հնարավոր բացատրություն, ա. պատ թարգմանության տարրեր կամ թարգմանչի սխալներ, բ. փոփոխություններ հունարեն տեքստի պատմության ընթացքում, գ. փոփոխություններ հայերեն տեքստի պատմության ընթացքում:

### 1. Հայերեն թարգմանության կրած բացահայտ փոփոխություններ

Երբեմն ակնհայտ է, որ երկու տեքստերի տարբերությունները հայերեն թարգմանության փոփոխության հետեւանք են, սակայն հաճախ դժվար է լինում տարբերակել՝ թարգմանչի, թե հետագա խմբագրի ձեռքի գործն է դա: Այնուամենայնիվ երբեմն դա հնարավոր է:

#### 1.1. Թարգմանչի ներմուծած փոփոխությունները

ա) Փոփոխության պատասխանատուն կարելի է համարել թարգմանչին հատկապես այն դեպքերում, երբ նա բառեր է ավելացրել բառացի թարգմանությունը բացատրելու համար, կամ էլ մեկ բառը թարգմանել է հոմանիշների գույգերով: Օրինակ՝ ՚Ըմվսչօ՛ս (Dav., in Isag, 88.15) – «ներանձնական [...]»

<sup>26</sup> Լ. Բենակիս, «Դավիթ հայը Արխատուելի բյուզանդական մեկնիշների երկերում». – «Պատմաբանասիրական հանդես», 1981, № 1, էջ 46-55:

<sup>27</sup> Պորփյուրի եւ Էլիասի համապատասխան հատվածներն (Porph., Isag, 18.10-14, Elias, in Isag, 101.2-7) ավելի երկար են՝ նոյն այդ երկու ընդհանուր գծերը («հասարակութիւնք») լրացրանված են օրինակներով:

այս ինքն շնչական» (Դ. Պորփ., 16.25-26): Առաջին համարժեքը հունարեն բառի պատճենումն է, որ հանդիպում է եւ այլ հատվածներում (օրինակ, *Porph.*, Isag, 10.6 – Պորփ., 142), իսկ երկրորդը՝ նրա սովորական հայերեն համարժեքը: Նման գեպքեր են՝ ա) ծրագրությունը (Dav., in Isag, 133.19) – «տարագատէ, այս ինքն որոշէ» (Դ. Պորփ., 68.16-17), բ) ուժ ֆլեքտորում (Dav., in Isag, 100.27) – «երակահատն» (Դ. Պորփ., 32.24 պատճենում), որին հաջորդ նախագասության մեջ հետեւում է ՀԱՍՏՈ («ինքը»), որին հայերենում համապատասխանում է «նշտրակ» բառը, գ) ուժուունը (Dav., in Isag, 195.29) – «որակ [...] այս ինքն որպիսութիւն» (Դ. Պորփ., 156.20), եւ այն: Մյուս գեպքերում գործ ունենք հոմանիշների զույգերի հետ, օրինակ, ծրագրությունը (Dav., in Isag, 138.27) = «որոշեալ եւ սահմանեալ» (Դ. Պորփ., 74.27-28):

2) Սովորական է «գոյեղք» («էական»՝ ուժ օնսιածու) – «մակագոյեղք»<sup>28</sup> («վերէական»՝ ուժ էպօսիածու) հակագրությունը, սակայն մեկ անգամ ունենք «յատկեղք»<sup>29</sup> – «մակագոյեղք» (Դ. Պորփ., 166.17-19) որպիս հունարեն նույն եղբերի համարժեք (*Dav.*, in Isag, 201.1-2). ակնհայտ է, որ «գոյեղք»-ի փոխարեն է սխալմամբ հայտնվել «յատկեղք»:

Հունարեն սկզբնագրի հայերեն համարժեք չունեցող հատվածների մեջ մասսը, թվում է, բաց է թողնվել թարգմանության ընթացքում<sup>30</sup>:

### 1.2 Հայերեն բնագրի պատճենթյան ընթացքում կատարված փոփոխություններ

1) Հայերեն տեքստի որոշ հավելումներ, որոնք նախորդող հատվածների կրկնությունը կամ ամփոփումն են, կարող են հայ խմբագիրների աշխատանքի արդյունք լինել:

Օրինակ՝ «եթէ Արիստոտէլի Ստորոգութիւնքն յամենայն իմաստասիրութիւն պիտանանան» (Դ. Պորփ., 14.31-32) կրկնվում է մեկ նախագասություն անց (Դ. Պորփ., 14.34-35), մինչդեռ միայն առաջին գեպքում այն ունի հունարեն համարժեք (*Dav.*, in Isag, 86.24-25):

Մեկ այլ գեպքում կարդում ենք. «Եւ արդ այսոքի յաղագս ոչ գոլոյ զէ-ակն սեռ» (Դ. Պորփ., 92.25, հունարեն համարժեք հմմտ. *Dav.*, in Isag, 156.30), սակայն մի խմբագիր համարյա նույն միտքն է ներմուծել սրանից առաջ. «Ապա ուրեմն յասացելոցս երեւի, թէ ոչ կարօղ գոյ էակն սեռ գոլ» (Դ. Պորփ.,

<sup>28</sup> Հմմտ. Դ. Պորփ., 120.15, 16, 18, 25, 122.9, 124.3, 5, 17, 126.25, 26, 28, 136.12, 148.1, 160.6, 20:

<sup>29</sup> Այն համարժեքն է հունարեն ի ձևականացությունը (διαφορά)-ի (*Dav.*, in Isag, 173.14 – Դ. Պորփ., 112.11) «առավել հատուկ (տարբերություն)»:

<sup>30</sup> Առնվազն այն հատվածները, որոնց հարազատությունը հունարեն նախնական բնագրին ապացուցվում է այլ մեկնություններում զուգահեռ հատվածների առկայությամբ, անըս սասորեւ:

92.24-25 հունարենում համարժեք չունի):

Խմբագրի հավելում է թվում եւ «հոմանունութիւն մայր է մոլորութեան եւ երկբայութեան» (Դ. Պորփ., 58.14-15) նախադասությունը, հունարենի համապատասխան հատվածում (*Dav.*, in *Isag.*, 122.32) այն համարժեք չունի:

2) Աշակերտների՝ սեփական գրվածքներն իրենց ուսուցիչներին վերագրելու սովորութիւն մասին պատմող հատվածին (ինչպես Պյութագորասի հետեւորդներինը՝ Պյութագորասին), ավելացված է. «որպէս Պղատոն զՍոկրատայն»<sup>31</sup> (Դ. Պորփ., 6.10-11): Սա հավանաբար ուշ հավելում է: Այդ հավելման աղբյուրը, հնարավոր է, Դավիթի՝ Արիստոտելի «Ստորոգությունների» մեկնության համանման հատվածն է, որտեղ կարդում ենք. «կամ յաղագս բարեմտութեան աշակերտաց, որք զիւրեանց շարագրածութիւնս իւրեանց վարդապետացն ձաւնեցին, որպէս պատճառաց բարեաց, որպէս Պիւթագորի եւ Սոկրատայ Պիւթագորականաց եւ Սոկրատականաց» (Դ. Ստոր., 222): Այս հատվածը բավական ճշգրիտ համապատասխանում է հունարեն սկզբնագրին (*Dav.*, in *Cat.*, 128.2-5):

### 1.3 Երկիմաստ դեպքեր

Սրանք այն դեպքերն են, որոնց համար հայերեն եւ հունարեն տեքստերի տարբերության պատճառը բացատրելու համար որեւէ կովան չկա:

1) «Մարդ, ձի» օրինակին ավելացրած է «արծուի» օրինակը (Դ. Պորփ., 8.31, 10.9, 38.11, 54.9, 70.8, 92.21, 156.7): Դավիթի «Սահմանք իմաստասիրութեան»-ում նույնպես կարդում ենք. «մարդ, ձի, արծուի» (Դ. Սահմ., 4.2), մինչդեռ հունարենն է ձնթրապոս ՞ Յօ՞ս (*Dav.*, Prol., 1.21 «մարդ կամ արջառ»):

2) Հունարեն նորությունություն (Դ. Պորփ., 84.5-6, 7 «ձիակենտավրոս») թարգմանված է «ձիակապիկն եւ եղերուաքաղն» (Դ. Պորփ., 8.33): Հավանաբար «ձիակապիկ»-ը թարգմանվի հորինած արհեստական նորաբանություն է, իսկ «եղերուաքաղ» բառը (Դ. Պորփ., 38.6, 50.8, 52.10) պատճենումն է տրացնական էլեկտրականություն (Դ. Պորփ., 108.26, 116.13, 117.23 «այծեղերու») բառի: Մեկ անգամ էլ հանդիպում է «արալէզ» (Դ. Պորփ., 68.8) առանց համարժեքի հունարենում:

Դավիթի «Սահմանք»-ում նույնպես այս առասպելական էակների անունների շփոթություն է դիտվում. նորությունություն (Դ. Պորփ., 21.7) – «արալէզն եւ եղերուաքաղն» (Դ. Սահմ., 50.24), տրացնական էլեկտրականություն (Դ. Պորփ., 47.1) – «եղերուաքաղն» (Դ. Սահմ., 108.17), տրացնական էլեկտրականություն (Դ. Պորփ., 116.13) – «արալէզ» (Դ. Սահմ., 117.23).

<sup>31</sup> Այս հատվածի հունարեն համարժեքը կիմներ. \*ածութակ Պլատոն τὸ Σωκράτους ἐπὶ οἰκείων συγγραμμάτων ἐπέγραψεν (շեղատառ շարվածքով բառերը մեր վերականգնածն են, մնացածները՝ Դավիթի առկա տեքստից):

(*Dav., Prol. 1.17*) – «Եղջերուաքաղն եւ արալէզն» (*Դ. Սահմ., 1.22*): *Այսպիսով, Ի՞նչ թումանի պնդումն այն մասին, որ այս տեքստում բռացնակած է հայկական առասպելական «արալէզ» էակի անվամբ<sup>32</sup>, որոշ ճշգրտման կարիք ունի:*

Ուշագրավ է, որ «Սահմանք»-ում թումսոնի նկատած որոշ օրինակների «հայացման» մնացած դեպքերը զուգահեռ չեն գտնում մեր «Ներածության վերլուծության» մեջ. «պոետ» (Dav., Prol, 14.35) թարգմանված է «Հոմերոս» (Դ. Սահմ., 34.34), «Հեկտոր» անունը (Dav., Prol, 62.20) փոխարինված է «Տիգրան»-ով (Դ. Սահմ., 130.34), նյումփաների (Dav., Prol, 16.2) փոխարեն՝ «ճրեշտակք եւ դեւք» (Դ. Սահմ., 38.12),<sup>33</sup> աղետների թվին (Dav., Prol, 33.22) ավելացված է երկրաշարժը (Դ. Սահմ., 76.30), թարգմանության մեջ բացակայում են մարմնամարզության եւ Ալկիբիադեսի անվան հիշատակումները, եւ այլն:<sup>34</sup>

ՄԵՐ քննության առարկա հայերեն թարգմանության մեջ պահպանված են անտիկ աշխարհի հեղինակների, փիլիսոփաների, պատմական եւ դիցաբանական անձանց հետեւյալ հիշատակումները՝ «Պիսիստրատոս» եւ «տաղը հոմերականք» (Դ. Պորփ., 4.36-6.6 խոսքը Հոմերոսի պոեմների մասին է), Պիսիստրատոս եւ Դիոնիսիոս (Դ. Պորփ., 16.37-18.3, 18.21-23), Պիթիա (Դ. Պորփ., 22.19), Հերակլիտոս (Դ. Պորփ., 34.20), «Գայինայինք ասացուածքն»

<sup>32</sup> David the Invincible Philosopher, *Definitions and Divisions of Philosophy*, translated by B. Kendall and R.W. Thomson (*University of Pennsylvania, Armenian Texts and Studies*, 5, Series editor M.E. Stone), Chico, CA 1983, p. XIX-XX, հմմա. R. Thomson, "Notes on the Armenian Version of David the Invincible's *Definitions of Philosophy*," Գավիթ Անհաղթը՝ հին Հայաստանի մեծ փիլիսոփիան (Զեկուցումներ՝ կարգացած Քալիթի Անհաղթի ծննդյան 1500-ամյակին նվիրված Երեւանում կայցած գիտական Կոնֆերանսում), Երևան, 1983, էջ 292, որտեղ նա մեկնարանում է արակէ բառն այս կոնֆերանսում որպես հունարեն սկզբնագրի երկու մյուս օրինակների համարձելք. դրանք են՝ ԾԿԽ ԾԱԽԱՅՈՒԹՅԱՆ գործիք, իմաստագործկ բառ») և ՅԱԿԱՐ ՅԱԿԱՐ ԱՐԴԱԿԱՅ ՃԱՅԱՐ. իմաստագործկ ՃԱՅԱՐ»):

<sup>33</sup> Երկի նախադասությունն է. «Ու միայն մարդ է կենդանի բանաւոր, այլ եւ զրաշտակը եւ դեւք»: Զարմանալիորեն այս նախադասության նշգրիտ հումարեն համարժեք երկիցս գտնում ենք Դավիթի «Պորփիռի Ներածության մեկնության» մեջ. օ՛վ մօնօն յար ծ ձնթրապօ՛ է սու լօցիկօն ձլլա կա ձցելօս կա ձամառ (Dav., *in Isag.*, 85.17-18),, օ՛վ մօնօն յար ծ ձնթրապօ՛ լօցիկօն է սու ձլլա կա ձցելօս կա ձամառ (Dav., *in Isag.*, 99.15-16). Երկու անգամ է դրանք արտացղված չեն հայերեն բարգմանության մեջ: Ուրեմն «Սահմանն»-ի հումարեն բնագրում այս նախադասությունը պես է որ սկզբնապես եղած լիներ: Սա նշանակում է նաև, որ Դավիթի երկու գրվածքների տեխսերի պատմությունը բավական խճենական է:

<sup>34</sup> Համբ. David the Invincible Philosopher, *Definitions and Divisions of Philosophy*, p. XIX-XX, R. Thomson, "Notes on the Armenian Version of David the Invincible's *Definitions of Philosophy*", p. 292-296:

(Դ. Պորփ., 34.24 Գալենոսի խոսքերը), Առկրատես, Ալկիբիադես, Պլատոն (Դ. Պորփ., 40.6-7), Անտիսթենես (Դ. Պորփ., 38.18, 32), Պլութագորաս (Դ. Պորփ., 6.12, 58.26), Այաքս եւ Տիգես (Դ. Պորփ., 42.27, 30-31), Հերակլես (Դ. Պորփ., 58.22-23, 62.7), Աքիլլես (Դ. Պորփ., 60.5), Օրեստեսն ու Նրա նախնի Տանտալոսը, եւ Հիլոսն ու Նրա նախնի Հերակլեսը (Դ. Պորփ., 62.12-14):

Եյուս կողմից թարգմանչի բաց թողած կամ, պակաս հավանականությամբ, հետագա խմբագիրների հեռացրած, հատվածների թվում կա մեկը, որ նվիրված է «սեռականագոյն» (τὰ γενικώτατα) եւ «տեսակագոյն» (τὰ εἰδικώτατα) տարրերի հարաբերությանը, պարունակում է Զեւսին, Տանտալոսին, Պելոփսին, Ատրեւսին, Ագամեմնոնին եւ Օրեստեսին վերաբերող օրինակներ, եւ որում Զեւսը բնորոշված է որպես «մարդկանց եւ աստվածների հայր» (Dav., in Isag, 153.14-154.19): Զի կարելի բացառել, որ այս հատվածի այդպիսի «հեթանոսական հունական» բովանդակությունն է հանդիսացել այն բաց թողնելու պատճառը:

## Հ ԶՈՒԳԱՀԵՌ ՎՐԱՎԱՃՐՆԵՐԻ ՎԿԱԼՈՎԹՅՈՒՆՆԵՐԸ

Շատ գեպքերում Արխատոտելի մյուս մեկնիշների տարբեր գրվածքների զուգահեռ տեղիները օգնում են հաստատելու հունարեն կամ հայերեն տեքստի անխափառությունը: Մեզ հաջողվել է գտնել հետեւալ զուգահեռները:

## 2.1 Հունարեն տեքստի անխաթարությունը հաստատող վկալություններ

2) Θωρακός μάνικη ή πλευρική γρίπη ή ασθματική γρίπη. Η σύνδρομος της γρίπης είναι η ασθματική γρίπη. Η γρίπη είναι η ασθματική γρίπη.

ριώρισται πόθεν ἔως ποῦ ἐστιν ἡ χεὶρ καὶ πόθεν ἔως ποῦ ἐστιν ὁ πούς), τὰ δὲ τέσσαρα στοιχεῖα οὐκ ἔχουσι περιγραφὴν οὐδὲ εἰσι περιωρισμένα· οὐδὲ γάρ ἐστι περιωρισμένον πόθεν ἔως ποῦ ἐν τῷ ἀνθρώπῳ ἐστι τὸ ὅδωρ καὶ πόθεν ἔως ποῦ ἡ γῆ καὶ πόθεν ἔως ποῦ τὸ πῦρ καὶ πόθεν ἔως ποῦ ὁ ἄηρ. ταῦτα μὲν ἐν τούτοις (Dav., in Isag, 89.15-23· «*ἴκι* ὥκτερ *է* *իմանալ*, *որ* *այլ* *քան* *է* *վերլուծությունը* (*analysis*) *եւ* *այլ՝* *տարալուծումը* (*dialysis*), *քանի* *որ* «*տարալուծում*» *ասվում* *է* *մասերի* *կապակցությամբ*, *իսկ* *վերլուծություն՝* *շորս* *տարրերից*: *Մասերը* *տարբերվում* *են* *շորս* *տարրերից*, *քանի* *որ* *մասերն* *ունեն* *իրենց* *սեփական* *գծագրությունն* *ու* *սահմանազատված* *են* (*քանզի* *սահմանագծված* *է*, *թե* *որտեղից* *որտեղ* *է* *ձեռքը* *եւ* *որտեղից* *որտեղ՝* *ոտքը*), *իսկ* *շորս* *տարրերը* *չունեն* *գծագրություն*, *ոչ* *էլ* *սահմանազատված* *են*: *Քանզի* *սահմանագծված* *չէ*, *թե* *որտեղից* *որտեղ* *է* *մարդու* *մոտ* *զուրը*, *եւ* *որտեղից* *որտեղ* *է* *հողը*, *եւ* *որտեղից* *որտեղ՝* *հուրը*, *եւ* *որտեղից* *որտեղ՝* *օդը*: *Այս* *քաների* *մասին* *այսքան*): *Կեղծ-էլիասն* *ունի* «*վերլուծության*» *եւ* «*տարալուծման*» *տարբերությունը* *բացատրող* *նման* *մի* *հատված* (*ps.-Elias*, in Isag, 26.20-21), *եւ* *դա* *հաստատում* *է*, *որ* *մեջբերվածը* *Դավթի* *հունարեն* *տեքտում* *ուշ* *ներմուծություն* *չէ*<sup>35</sup>:

4) Τικηθερι խոսում է ճարտասանական տասներեք հարցադրումների մասին (*Dav.*, in *Isag.*, 83.26 στάσεις), նույն թիվն է նշում եւ կեղծ-էլիասը (*ps.-Elias*, 25.6), իսկ հայերեն թարգմանության մեջ «կացմունք» տասնչորսն են (*Թ. Պորփ.*, 8.18-19): Պատճառը պարզ է. «գ» եւ «դ» տառերի շփոթությունը բոլոր ձեռագրերի հիմքում ընկած մայր ձեռագրում:

5) Հայերենում շփոթովթյուն կա Դիոնիսիոսի եւ Պիսիստրատոսի միջեւ:

<sup>35</sup> Հմետ. այլ նման դեպքեր. Dav., *in Isag*, 80.18-81.3 – ps.-Elias, *in Isag*, 24.4-5; Dav., *in Isag*, 83.13-15 – ps.-Elias, *in Isag*, 25.2-3; Dav., *in Isag*, 83.26 (02.12) – ps.-Elias, *in Isag*, 25.6; Dav., *in Isag*, 89.9-10 – ps.-Elias, *in Isag*, 26.14; Dav., *in Isag*, 96.4-9 – ps.-Elias *in Isag* 28.7; Dav. *in Isag*, 96.15-16 – ps.-Elias *in Isag* 28.8:

<sup>36</sup> Տե՛ս մեկ այլ նման դեպք. Dav., in Isag, 125.4-126.5 – Elias, in Isag, 52.28-53.15:

Պիսաստրատոսը բնորոշված է որպես «բռնաւոր սիկիլացւոց» (Դ. Պորփ., 4.36-6.1), իսկ քիչ հետո Դիոնիսիոսը հանդես է գալիս որպես աթենական գործիչ. «Արք աթենացիք, ոչ տացուք Դիօնիսի թիկնապահս, վասն զի եւ Պիստրատոս առեալ բռնացաւ» (այսինքն՝ բռնապետ դարձավ, Դ. Պորփ., 18.1): «Արք աթենացիք» հայերեն տեքստի հավելումն է, եւ ստացվում է, որ Դիօնիսիոսի ճակատագիրը որոշվում է Աթենքում: Իրականում Պիստրատոսը Աթենքի բռնապետն էր, իսկ Սիկիլիայի Սիրակուզա քաղաքի բռնապետը Դիօնիսիոսն էր: Բռնապետի համար հունարենում «տիրաննոս» բառն է (մὴ δῶμεν τῷ Διονυσίῳ στρατόν, ինա մὴ τυραννήσῃ ὡς ὁ Πεισίστρατος, *Dav.*, in *Isag.*, 88.24-25), որ արխարիկ ժամանակներում միապետ կառավարիչ էր նշանակում, իսկ Արխատոտելի մոտ արդեն հանդես է գալիս բացասական իմաստով: Այս ճիշտ բնորոշումները պետք է որ սկզբնապետ եղած լինեին հունարենում, ինչի մասին վկայում է Դավիթի ուսուցիչ Օլիմպիոդորոսի «Փիլիսոփայության ներածություն» (համապատասխանում է Դավիթի «Սահմանք»-ին) երկում նույն դրվագը պատմող հատվածը, որտեղ կարդում ենք. օ՞նτως ο՞նν' Ιοβάτης ծ ո տῆς Λιβύης βασιλεὺς ἐραστής ἐγένετο τῶν Πυθαγορικῶν συγγραμμάτων καὶ Πτολεμαῖος ծ ἐπίκλητη Φιλάδελφος τῶν' Αριστοτελικῶν καὶ Πεισίστρατος ծ τῶν' Αθηναίων τύραννος τῶν' Ομηρικῶν και χρημάτων δωρεαῖς չ ծույնու տաῦτα συναγαγεῖν (*Olympr.*, Prol, 13.13-16 «այսպէս Կիրիայի թագավոր իորատեսը սիրեց Պյութագորասի, Փիլադելփոս կոչված Պտղեմեոսը՝ Արխատոտելի, իսկ Աթենքի բռնապետ Պիստրատոսը՝ Հոմերոսի գրվածքները, եւ ջանում էին հավաքել դրանք»): Իսկ Օլիմպիոդորոսի Պլատոնի մի ճառի մեկնության մեջ հիշատակվում է ևν Տυρակութաւ պրօք Դιοնութուն տօն մէց տնանու ծույնու ծույնունը Դավիթիոսիությունը»):

## 2.2 Հայերեն թարգմանության անխաթարությունը փաստող գուգագեռներ

1) Ներածական ութ «գլուխների» (κεφάλαια) շարքում երրորդն ու չորրորդն են «հարազատությունը» եւ «վերնագրի բացատրությունը» (το γνήσιον, ի ալτίա տῆς ἐπιγραφῆς, *Dav.*, in *Isag.*, 80.12). Հայերենում հակառակ հերթականությունն է «պատճառք մակագրութեան, հարազատութիւն» (Դ., Պորփ. 2.7-8): Էլիասի մեկնության մեջ նույնպես «վերնագրի բացատրությունը» (ի ալտիա տῆς ἐπιγրաφῆς, *Elias*, in *Isag.*, 38.32-39.3) նախորդում է «հարազատությանը» (τὸ γνήσιον, *Elias*, in *Isag.*, 39.4-19), նույնն է եւ կեղծ-էլիասի մոտ (*ps.-Elias*, 27.3-9, 10-13): Դավիթի հայերեն տեքստի հերթականությունը հաստատվում է նաև հենց Դավիթի հետագա շարադրանքով, որ նվիրված է գրվածքներին ընդհանրապես եւ Պորփյուրի մասնավոր գրված-

Քին (Դ. Պորփի., 2.16-6.19, 22.6-24.7):

3) «Βωμός της απορροφής είναι διανυσματικός χωρισμός δύο μέρων, μέρους ιδεών, μέρους ιδεών της απορροφής, ρυθμούς είναι ρυθμός της απορροφής<sup>37</sup>: Ρυθμός οντοτητής ή ρυθμός γνώσης<sup>38</sup> είναι ρυθμός φωνής, όπου η γνώση απορροφής είναι φωνή προφέτης ή θεοφάνειας: Και οι δύο ρυθμοί συναντούνται στην γνώση της απορροφής<sup>39</sup>» (Γ. Φωρηφ., 6.15-19) – Διακρίνονται δέ τα γνήσια συγγράμματα της τέλης της υλης καὶ τῶν εἰδείς· της υλης μὲν τῆς φράσεως ἔγοντας ταῖς λέξεσι, τῶν εἰδείς δέ τοῦτον τοῖς \*νοήμασι (Dav., in Isag, 82.20-22): Ζωγράφος της απορροφής της απορροφής<sup>40</sup> «θητού ή της απορροφής θεωρήμασι («φωστηράρκηνεροψ») ενθητηροποιούμενος ουρανού<sup>41</sup> \*νοήμασι («μαρτυρόψ»): Ήγησε την απορροφή της απορροφής είναι την απορροφή της απορροφής ουρανού<sup>42</sup>. Είναι νόθον ή γνήσιον τοῦ φιλοσόφου τὸ βιβλίον (πολλοὶ γάρ αὐτῶν συντιθέντες ἐπέγραφον τῶν Αριστοτέλους ὄντοματι, οὓς ἐλεγκτέον ἐκ της τοῦ εἰδούς καὶ τῆς υλης· εἶδος μὲν οὖν ἔστιν ή ποικιλία τῶν νοημάτων...) (Ammon., in Cat, 8.2-4 «αρτηρόψ φιληστινοψή φιληρόψ κελδή ή, ήτε διαρραφωτής (ρωμαϊκής γαστροφής, φρεσκοψής φρεσκορ), Ηριστητηράρκης αντοτητής είναι κοπέλη φραντζόφ, είναι ηρωαντής αφετηρίας η μαποτητής δεκτή είναι ηγιατρής αποτητής. δεκτή μαρτυρόψ φωνημαρτωντητητής ή), είναι συνταγματικά δέ καλούμενη ὅσα μετά τῶν νοημάτων καὶ λέξιν ἔχει κεκοσμημέ-

<sup>37</sup> Այստեղ տեսակ նշանակում է «ձեւ»:

<sup>38</sup> Այստեղ յարմարումն համապատասխանում է հունարեն «ոճ» բառին:

<sup>39</sup> Սահմանադրության համապատասխանությունը կլիքը առ այս բարեկարգությանը:

<sup>40</sup> 1976 թ. հիանալուկության մեջ եզակիինք Է «մտածովիթեան». ուղղել ենք ըստ Մատենադարանի № 1746 ձեռագիր՝ «բանագույնանց»:

<sup>41</sup> Սա հաստատում է նաև «թէ խորիթք իցեն, թէ հարազատք» հատվածի անխարարույթունը, մինչդեռ Դավթի հոնքարեն մեջերված հատվածում ունենք միայն «հարազատ գրվածքները» (τὰ γράπτα συγγράμματα).

νην και φράσιν κεκαλλωπισμένην πρέπουσαν τοῖς συγγράμμασιν (*Olympos*, Prol, 6.30-33 «Κανονική προτείνεται από την ομοιότητα της μεταφράσεως της επικής ποίησης με την επική ποίηση της αρχαίας γλώσσας»):

4) ἀχώριστον (συμβεβηκός) δὲ ὡς τὸ λευκὸν τοῦ κύκνου καὶ τὸ μέλαν τοῦ κόρακος (*Dav.*, in *Isag.*, 84.32-85.3 «ἀνανγωστακῶν· ἥντις εἴη  
καρπαρῆι οὐκιστακούθι ποιεῖν ποιεῖν αφειλῆι οὐκειστιθεῖν ποιεῖν»), μήντις ἵστηται τοῦ βαρηφόρου  
νοιτιθεῖν. Εἰ «ἀνανγωστακῶν· πράξεις αρδουποιεῖν καὶ, ἔνδιαστη» (*Τ. Φορφ.*, 10.18-  
19 «ἡντις εἴη περιβολή, κατασταφῆι»), πρεπειται τοῦτο τοῦ Πορφύρη της φυ-  
σικῆς. Τὸ δὲ γρυπόν ἢ σιμόν εἶναι κατὰ συμβεβηκός (*Porphy.* *Isag.*,  
9.13-14). Καρκίνης ἐστι τοῦ κερακωνόντος ἵστηται ακρηφνακῶν της φυσικῆς. \*ἀ-  
χώριστον δὲ ὡς γρυπόν σιμόν.

6) «Քանզի ասես կարող գոլ զքեզ ինքն՝ կամ ի սոսկ մտածութեանց գոլ զառաշիկայս, որպէս կարծեցին գոլ շնականքն, եւ կամ ենթակայացեալք, ինդրել եւ քննել» (Դ. Պորփ., 40.21-24): Հունարենը (Dav. in Isag, 110.23-24) չունի «շնականներին» (կինիկյան փիլիսոփաներին) վերաբերող միջանկյալ նախադասությունը. \*ῶσπερ ἐνόμισαν εἶναι οἱ Κυνικόί, սակայն այդպիսին պետք է որ եղած լիներ, հմմտ. Ելիասի մոտ. օ՛ մեն յար չլεγον նփεտάναι τὰ γένη καὶ τὰ εἰδη, ως Πλάτων καὶ Ἀριστοτέλης [...], ’Αντισθένης δὲ ὁ Κυνικὸς ὁ τοῦ Διογένους διδάσκαλος չλεγεν μὴ εἶναι τὰ καθόλου (Elias, in Isag, 47.12-15 «քանզի ոմանք ասում էին, որ սեռեր ու տեսակներ գոյություն ունեն, ինչպես Պլատոնն ու Արիստոտելը..., իսկ Դիոգենեսի աշակերտ շնական Անտիխթենեսն ասում էր, որ հանրականներ չկան»):

7) Ζειτονιαρκένη **κειμένων** της απόφασης «**κειμή**» (Τὸ ὅμιλον) είναι «**κράνω κειμή**» (διπλάσιον) της αρχαρκεποντικής (*Dav.*, in *Isag.*, 111.32-112.8), αυτόνοικον ως έναν πολιτισμόν μή καρδιά να κινηθεί αποτιθέμενος. «**κειμή**» είναι φαγητός πολιτισμός, **κράνω κειμή** από την πλευρά της αρχαρκεποντικής.

<sup>42</sup> Հրատարակության «աստուածաբանութեամբ» ընթերցումը փոխարինել ենք ձեռագրերի մեծամասնության ընթերցմամբ:

**Φηρφ., 42.33-34<sup>43</sup>**, πρὶ γὰς μηδὲν φοιτῶσθεν ἐς φαντασμὸν ζοψίων τοις θαῦμασι καὶ γραπτοῖς «θηλεῖκαστηκαγούμ». ὡς δὲ σχέσιν ἔχοντα πρὸς ἄλληλα [...], τὸ γάρ μέγα πρὸς τὸ μικρὸν λέγεται μέγα καὶ τὸ διπλάσιον πρὸς τὸ ἥμισυ (*Damasc., Dial.*, 50.73-76) «ορφέας ἡρωὶς ἀνταρπερούθησιν πινεցοη ρωνέρ... ρωνόφη μέδρι φορφῆς ἀνθεμώσιν ἐς λογούσιν μέδρι, ισικὴ λογίνωνακήν· λευκή ἀνθεμώσιν»: Ήγε μηδὲν φοιτῶσθεν φίλοιον ἐς, οὐρανούθηρακήν απωλόνωναγήν ἐς, ισικὴ ἀπονωρεύεντος ἀνταρπερούθησιν ἐς λογίνωνακήν:

8) μὴ δῶμεν τῷ Διονυσίῳ στρατόν, ἵνα μὴ τυραννήσῃ ὡς ὁ Πεισίστρατος (*Dav.*, in *Isag.*, 88.24-25) «ζωτανός θητονήσιον φορφῆς, ορφέασης φονίωνακαλὶ γηπονία, ινδικέας θητονήσιον φορφῆς», ισικὴ ἀγερένην ἐς «οὐ τασπούρη θητονήσιον φθίνωναψωνός, φωτίνην φορφῆς φονίωναστοποιού» (**¶. Φηρφ., 18.1-3**), ορφῆς φερακίνωνφωνάδης ἀνθεμόθερος λογίνηρ. \*μὴ δῶμεν τῷ Διονυσίῳ σωματοφύλακας, ἐπειδὴ καὶ ὁ Πεισίστρατος λαβών ἐτυράννησεν, ορφῆς ἀστατοφούσιν ἐς ἀντεκαλὶ ἀνθεμώνιμων μή ἀστψαδούλ. μὴ δῶσομεν Διονυσίῳ φυλακήν σωμάτων, ἐπειδὴ καὶ Πεισίστρατος λαβών ἐτυράννησεν (*ps.-Elias* 26.11) «ζωτανός θητονήσιον φθίνωνακαλὶ γηπονία, φρονίωνακαλὶ φορφῆς»):

9) Ζομδανούσιονφούθησιν φερακίνωναψωνός ἐρεφρές φωνάνικα, μασταψηματεύει, τρίτον τὴν περὶ τούτου ἐμφανίσαι διδασκαλίαν (*Dav.*, in *Isag.*, 122.32-33) «ερρορητής, φερακίνωναλέρην φερακίνωναφούθησιν φονίωνα» – «ερρορητής, απορραφεύει εἰς ανθεμώνικα φωνάνι, γαλαψού προη φωνάνι ἐς» (**¶. Φηρφ., 58.11-12** «απορραφεύει» ἀνθεμώνικον «ποτρψαφδεύει, λογίνωναφεύει»). ἀμμιτ. *Elias*, in *Isag.*, 51.26-27 διορίσαι περὶ οὖν ὁ λόγος κάκεῖνο ὑπογραφῆς ἢ ὁρισμοῦ ἀξιοῦν («ορπογέλη, βέβη λογίνη μαστήν ἐς λοποφρέ, εἰς αρθαναγένελι ἀγέν λογίνωναφροφεύειν εἰς ανθεμώνιμων»):

10) ἐπειδήπερ ἀνωτέρω ἐζητήσαμεν ὅτι ἀρετὴ ὁρισμοῦ ἐστι τὸ μόνω καὶ τὸ αὐτὸν ἀρμόζειν ἦτοι καὶ ἀντιστρέφειν (*Dav.*, in *Isag.*, 133.8-9) «φερεψη μένοντα φερακίνωναφούθησιν, οὐρανοφρατωρδηψηλέρην φωνάνην ἀνθεμώναπασιανέλρη εἰς ἀλαψαρδψελρησ»), ισικὴ ἀγερένησιν ασψαδης ἐς. «απωφεύνοθηταν ανθεμώνη μαστψηματαφωνάνηλρη εἰς ἀλαψαρδψελρησ» (**¶. Φηρφ., 68.1-2**), ορφῆς διψηρητης ἀπονωρεύεν ἀνθεμόθερος λογίνηρ. \*ἀρετὴ ὁρισμοῦ εἴπομεν εἶναι ἀντιστρέφειν πρὸς τὸ ὁριστόν. Ζωψαναφωρη ακίνωρηψιν ἐς «λογίνωναφρη» ἀντεκαλὶ μετηψη. τέλειος ὁρισμός ἐστιν ὁ ἀντιστρέφων πρὸς τὸ ὁριστόν (*Dav.*, *Prol.*, 19.10-11) – «καπωρεύει μαστψην ἀγέν

<sup>43</sup> Ζοπνωτεύειν μαστψηματεύειρη λογίνηρ. \*τί δέ ἐστι σχέσεις· τὸ διπλάσιον πρὸς ἥμισυ καὶ ἥμισεος πρὸς διπλάσιον.

է, որ անդրադարձի առ սահմանելին» (Դ. Սահմ., 46.9-10):

11) Օ անթրապոս ՀՅՈՆ է օտի յշատիկոն, օրթոպերիպատիկոն (*Dav.*, in *Isag.*, 142.14) – «մարդ է հետեւակ երկոտանի, ուղղորդագնաց, լայնեղունկն» (Դ. Պորփ., 78.15-16): Հունարենը չունի \*πλατυώνυχος (= «լայնեղունկն»), սակայն այն վկայված է Դավիթի «Սահմանքում»: Անթրապոս է օտին օրթոպերիպատիկոն յշատիկոն պլատունչոն (*Dav.*, *Prol.*, 12.16-17) – «մարդ է ուղղորդագնաց, ծիծաղական, լայնեղունկն» (Դ. Սահմ., 28.33), եւ կեղծ-էլիասի մոտ. լեցոյ տօն անթրապոն էնու օրթոպերիպատիկոն պլատունչոն յշատիկոն (*ps.-Elias*, 31.5 «նա կասի, որ մարդը ուղղահայաց քայլող է, լայնեղունկ եւ ծիծաղելու ունակությամբ օժտված»):

12) Հայերեն թարգմանության մեջ «շնչական» եւ «անշունչ», «զգայուն» եւ «անզգայ» «գոյացութիւն»-ների վեց հնարավոր «լծակցութիւն»-ների (Դ. Պորփ., 135.31-136.2, հմմտ. Շմփչոն, ճիշչոն, ալսթուկոն, ձնականուոն, *Dav.*, in *Isag.*, 186.20) մասին ասված է. «որոց տրամագծութիւնը լինին այսպէս» (Դ. Պորփ., 136.4-5): Սրանից հետո բազմաթիվ ձեռագրեր (*Մատենադարանի №№ 1691, 1746, 8722, 1716, 2326, 1766, 1750, 1765, 2652, 1811, 4006, 1739, 4027, 1740, Վիեննայի №№ 263, 656*) պարունակում են այդ հարաբերությունները պատկերող դիագրամներ: Հունարենը վերջին հատվածի համարժեք (\*ῶν διαγράμματα εἰσιν οὕτως) չունի: Սակայն հմմտ. նման կոնտեքստում. և աթօն տօն ծագրամմա տօնտօն ծղօլօն (*Elias*, in *Isag.*, 13.16-17 «ինչպես ցուց է տալիս այս դիագրամը»): Այսպիսով, Դավիթի սկզբնագրում պետք է որ նման նախադասություն եղած լիներ:

13) Տասներկու դեպքում հայերենում մեջբերումներ կան Պորփյուրից, մինչ հունարենում համապատասխան մեջբերումները կամ բացակայում են, կամ էլ լրիվ չեն: Սա նշանակում է, որ հայերենը հունարեն սկզբնագրի պատմության մի որոշակի փուլի արտացոլումն է, կամ էլ որ հայերեն թարգմանության ուշ խմբագիրները լրացրել են մեջբերումները Պորփյուրի հայերեն թարգմանությունց: Առնվազն երեք դեպքում (Դ. Պորփ., 62.23-24, 94.4-5, 110.11-13), որոնցում հունարենը չունի Պորփյուրից համապատասխան մեջբերում (երկրորդ դեպքում մեկ այլ մեջբերում է *Dav.*, in *Isag.*, 157.18), առաջին հնարավորությունն ավելի հավանական է թվում: Ուրեմն միանգամայն հավանական է, որ սկզբնապես Դավիթի հունարեն տեքստում եղել են համապատասխան մեջբերումներ:

Հունարեն սկզբնագրի եւ հայերեն թարգմանության միջեւ տարբերությունների ծագումը բացատրելու մեր փորձերը դուզզն-ինչ հավակնություն չունեն սպառիչ լինելու. ավելին, դրանք նույնիսկ վիճակագրական արժեք չեն կարող ունենալ: Սրանք պարզապես այն դեպքերն են, երբ մեզ հաջողվել է բա-

ցատրություն կամ այլ տեքստերում գուգահեռ նյութ գտնել: Խնդրո առարկա երկու ծավալուն տեքստերի միջեւ տարբերությունների ողջ բազմության քննությունը մեծագույն շանքեր պահանջող դժվարին խնդիր է:

Ակնհայտ է, որ Դավիթի երկի հետագա բաղդատությունը Արիստոտելի մյուս մեկնիշների գուգահեռ հունարեն տեքստերի, հատկապես Ամմոնիոսի, ելասի եւ կեղծ-էլիասի «Ներածության» մեկնությունների հետ, բացահայտելու է շատ ուրիշ հետաքրքրական փաստեր, որոնք կարող են բացատրել Դավիթ Անհաղթի «Պորփյուրի Ներածության վերլուծության» հունարեն սկզբնագրի եւ հայերեն թարգմանության տարբերությունները:

Ջուգահեռ հատվածների հետ համադրումներից մեր ընդհանուր եզրահանգումն այն է, որ ինչպես հունարեն սկզբնագիրը, այնպես էլ հայերեն թարգմանությունը մեզ են հասել խմբագրված տեսքով, ընդ որում հայերեն տեքստը խմբագրվել է 1280 թվականից առաջ, երբ գրվել է Մատենադարանի 1746 ձեռագիրը:

### Հապավումներ

Դ. Պորփ. – Դաւիթ Անյաղթ, Վերլուծութիւն «Ներածութեանն» Պորփիւրի, համահավաք քննական բնագիրը, թարգմանությունը գրաբարից ոռուերեն, առաջաբանն ու ծանոթագրությունները Ս. Ս. Արեւշատյանի, Երեւան, 1976

Դ. Սահմ. – Դաւիթ Անյաղթ, Սահմանք իմաստասիրութեան, քննական բնագիրը, ոռուերեն թարգմանությունը, առաջաբանը եւ ծանոթագրությունները Ս. Ս. Արեւշատյանի, Երեւան, 1960

Դ. Ստորոգ. – Դաւիթ Անյաղթ, Երկասիրութիւնք փիլիսոփայականք, համահավաք քննական բնագրերը եւ առաջաբաննը Ս. Ս. Արեւշատյանի, Երեւան, 1980, էջ 193-300

Պորփ. – Դաւիթ Անյաղթ փիլիսոփայի Մատենագրութիւնք եւ Թուղթ Գիւտայ առ Դաւիթ, ի Վենետիկ, 1932, էջ 133-156

Ammon., in *Cat – Ammonii in Aristotelis Categorias commentatorium*, ed. A. Busse (CAG, IV 4), Berolini 1904

Damasc., *Dial – Die Schriften des Johannes von Damaskos*, vol. 1 (*Patristische Texte und Studien*), ed. B. Kotter, Berlin 1969, p. 101-142: *Dialectica sive Capita philosophica* (recensio fusior).

Dav., in *Isag – Davidis in Porphyrii Isagogen Commentarium in Davidis Prolegomena et in Porphyrii Isagogen Commentarium*, ed. A. Busse (CAG, XVIII, 2), Berolini 1904

Dav., *Prol – Davidis Prolegomena Philosophiae*, in: *Davidis Prolegomena et in Porphyrii Isagogen Commentarium*, ed. A. Busse (CAG,

XVIII, 2), Berolini 1904

Dav., *in Cat – Eliae (olim Davidis) in Aristotelis Categorias commentarium, in: Eliae in Porphyrii Isagogen et Aristotelis Categorias Commentaria*, ed. A. Busse (CAG, XVIII, 1) Berolini 1900

Elias, *in Isag – Eliae in Porphyrii Isagogen et Aristotelis Categorias commentaria*, ed. A. Busse (CAG, XVIII, 1), Berolini 1900

Olymp., *in Alcibiad – Olympiodorus, Commentary on the First Alcibiades of Plato*, ed. by L.G. Westerink, Amsterdam 1956

Olymp., *Prol – Olympiodori Prolegomena et in Categorias commentarium*, ed. A. Busse (CAG, XII 1), Berolini 1902

Porph., *Isag – Porphyrii Isagoge et in Aristotelis Categorias commentarium*, ed. A. Busse (CAG, IV 1), Berolini 1887

ps.-Elias, *in Isag – Pseudo-Elias (Pseudo-David), Lectures on Porphyry's Isagoge, Introduction, text and indices by L. G. Westerink, Amsterdam 1967.*

## ՕԼԳԱ ՎԱՐԴԱՂԱՐՅԱՆ

«ՎԱՐՔ ՄԱՇՏՈՑԻ» ԵՐԿՈՒ ՍՐԲԱԳՐՈՒՄՆԵՐԸ ԵՒ ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ  
ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

### I

Կորյունի «Վարք Մաշտոցի» ընդարձակ խմբագրությունը պարունակում է այնպիսի հատվածներ, որոնք, բառացի թարգմանված լինելով գրաբարից հին հունարեն, ստանում են քերականական կանոնավոր կառուցվածք եւ ավելի պարզ եւ բնական իմաստ: Դա հիմք է տալիս ենթադրելու, որ «Ընդարձակ կորյունում» հունարեն ինչ-որ բնագրի կամ բնագրերի հետքեր են պահպանվել: Մեր ենթադրությունը ավելի հիմնավորված կլիներ, եթե այդ բնագրերը որեւէ կերպ վկայված լինեին այլ աղբյուրներում: Եվ իրոք, կարելի է մատնանշել այդպիսի առնչություններ «Ընդարձակ կորյունի» երկու վերականգնված հատվածների եւ Ղազար Փարպեցու «Հայոց պատմության» մեջ վերապատմվող «Կորյունի» միջեւ:

Առաջին հատվածի խնդիրը արդեն վաղուց ծանոթ է բանասերներին: «Ընդարձակ կորյունի» տեղիի քննական բնագիրը հետեւայալն է<sup>1</sup>.

Յայնժամ պատմէր նոցա արքայն վասն առն ուրումն (variae lectiones: b որում | ճա որումն) ասորոյ եպիսկոպոսի ազնուականի՝ Դանիել անուն կոչեցելոյ որոյ յանկարծ ուրեմն [գտեալ] (variae lectiones: ճա/ճք գրեալ | c լու. էր գր[ե]ալ | abdeվ շիք) նշանագիրս աղփարետաց հայերէն լեզուի:

Դեռեւ 1928 թվին Հր. Աճառյանը վերլուծության է ենթարկում տեղին եւ գալիս այն, կարծես թե անխուսափելի եղրակացության, որ բնագիրը աղավաղված է, եւ «յանկարծ ուրեմն» բառախմբից հետո պետք է ինչ-որ բայ զետեղված լիներ: Այս բայը, նրա կարծիքով, «գտեալ»-ն է, որն եւ հաստատվում է հաջորդ տողի մեջ հանդիպող «գրելոյն ի Դանիելէ» արտահայտությամբ, որն, իր հերթին, շտկելի է «գտելոյն» ձեւով, քանի որ պարբերության ավարտին կա «յանկարծագիւտն» բառը, «ուր», Հր. Աճառյանի խոսքերով, «առաջին

<sup>1</sup> Գրշագրերի տառանիշերը գործածվում են ըստ Մ. Աբելյանի հրատարակության՝ Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941, (այսումետե՛ Վարք), նույնը եւ Կորյուն, Վարք Մաշտոցի, իսմբ. է. Ա. Պիվազյանի, Երևան, 1981 (այսուեղ՝ Կորյուն, 1981), տես ծան. 4:

խոսքին յանկարծ եւ գտեալ բառերը միացած են»<sup>2</sup>: 1941 թվին նույն տրամաբանությամբ Մ. Աբեղյանը սրբագրում է «Ընդարձակ Կորյունի» բնագիրը, ծանոթագրության մեջ ավելացնելով Հր. Աճառյանի մշակած կովաններին եւս մեկը, եւ ծանրագույնը՝ ձեռագրային վկայություններ<sup>3</sup> (որոնք վերստուգվեցին անձամբ հրատարակչի կողմից 1981թ. վերահրատարակության համար<sup>4</sup>): Ձեռագրերի տվյալները, առաջին հայացքից, ամրապնդեցին սրբագրման հիմքը՝ պարզվեց, որ իրոք գոյություն ունի ձեռագրերի մի խումբ, որը «յանկարծ ուրեմն» բառերից հետո ունի «գրեալ» բայաձեւը<sup>5</sup>, որից արդեն դժվար չէր ստանալ վարկածով պահանջվող «գտեալ»-ը՝ բավական էր ենթադրել, որ նախագաղափարի երկաթագիրը Տ-ի ներքեւի մասը անընթեռնելի է դարձել հետագա ընդօրինակողների համար<sup>6</sup>:

Աճառյան-Աբեղյանի սրբագրումը ընդունվեց հայագետների կողմից իրեւ անառարկելի ճշմարտություն: Եվ դա հասկանալի է, քանի որ բանասերներին եւ պատմաբաններին առաջին հերթին հուզում էր «գանիելան» եւ «մաշտոցյան» գրերի փոխհարաբերության հարցը, եւ ո՛չ քննական բնագրի մշակման սկզբունքները: Մինչդեռ տվյալ պարագայում գիտնականների տրամաբանությունը տարակուսանքի բավական տեղիք է տալիս: Նախ, որքան էլ Տոնականների բնագիրը, որի հիման վրա կատարվել է մեզ հետաքրքրող տեղիի սրբագրումը, հեղինակավոր լինի իր հնությամբ եւ նմանվի «Ընդարձակ Կորյուն»:

<sup>2</sup> Հր. Աճառյան, Հայոց գրերը, Վիեննա, 1928, էջ 72-73:

<sup>3</sup> Վարք, էջ 20, 42, ծան. 58:

<sup>4</sup> Կորյուն, 1981:

<sup>5</sup> Ա. Մարեսոյանի «Վարք Մաշտոցի» բոլոր երեք խմբագրությունների հրապարակումից հետո անհրաժեշտ եղավ ես մեկ անգամ ստուգել մեզ հետաքրքրող տեղիի ընթերցվածները, քանի որ հրատարակչի հայտնած ավյանները հակասում են Մ. Աբեղյանի կողմից տրված նկարագրությանը: Սյապես, Ա. Մարեսոյանը գրում է, որ սրբագրման համար հիմք ծառայած «գրեալ»-ը առկա է «Ընդարձակ Կորյունի» բոլոր ձեռագրերում, ինչպես և Տոնականներում (Կորյուն, Վարք Ա. Մարտոք Մաշտոցի, աշխ. Ա. Ա. Մարեսոյանի, Երևան, 1994, էջ 152), մինչդեռ Մ. Աբեղյանը պենդում էր, որ այդպիսին բացակայում է ընդարձակ խմբագրության բոլոր գրչագիշում, բացի սիրուած մատյանից, որում «Եր գրեալ» բառախոսք գտնվում է լուսանցքում: Չեռագրերի զննումը ցույց տվեց, որ իրավացի է, ինարկե, Մ. Աբեղյանը: Ը (Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետ՝ ՄՄ), 1891) գրչագրում թ. 175ա «Եր գրեալ» լրացումը գտնվում է աջ լուսանցքում «որոյ յանկարծ ուրեմն նշանագիրս աղփարետաց հայերէնին լեզուին» հատվածից անմիջապես հետո՝ առանց ներմուծման նշանի եւ արված է այն նոյն ձեռնով, որը սրբագրումներ եւ լրացնումներ է կատարել ամբողջ ձեռագրում: Ե (ՄՄ, 2639, 552ա), Ժ (ՄՄ, 131, 46ա) եւ Է (ՄՄ, 3134, 19ա) գրչագրերում բայց համապատասխան տեղերում բացակայում է, իսկ նա, եթ (ՄՄ, 3787, 105ա, ՄՄ 3797, 117ա)՝ «Փոքր Կորյունի» բնագրում առկա է «որոյ յանկարծ ուրեմն գրեալ» ընթերցվածը: Ի դեպ, Ա. Մարեսոյանի գրում հապացոյց «գրեալ» ընթերցվածի բերված լուսանկարը (էջ 153), ինչպես պարզվում է բնագրերի համեմատությունից, ներկայացնում է ոչ այլ ինչ, եթե ոչ Մ. Աբեղյանին բազ ծանոթ այս Տոնականներից մեկը:

<sup>6</sup> Կորյուն, 1981, ծան. 58, էջ 308-309.

յունի» բնագրին, այն այնուամենայնիվ առանձին գործ է, որը ստեղծվել է եկեղեցում պարբերաբար վերծանվելու համար: Նշված նպատակը ազդել է բնագրի ոճի եւ կառուցվածքի վրա՝ պարզ է, որ եկեղեցում հավատացյալների համար կարդացվող վարքը պետք է հնարավորինս զերծ լիներ ցանկացած կրկնություններից, հավելաբանություններից, արտառոց բառերից եւ արտահայտություններից, մի խոսքով՝ պետք է լիներ համառոտ եւ դյուրըմբոնելի: Եւ իրոք՝ «Փոքր Կորյունի» վերծանումը զբաղեցնում է մոտ կես ժամ (այսինքն՝ մի քանի անգամ ավելի քիչ ժամանակ, քան ընդարձակ խմբագրության), իսկ ընթերցվածների բաղդատությունը ցուց է տալիս ոճը «թեթեւացնելու» միտվածություն: Այսպես, «Ընդարձակ Կորյունի» «եւ իբրեւ աւուրս բազումս անդէն ի նմին գեգերէր» բառախմբի<sup>7</sup> փոխարեն Տոնականներում ընթերցվում է «եւ իբրեւ բազում անգամ անդէն ի նմին գադարէր», «ազդ առնէին ... թագաւորին»<sup>8</sup> փոխարեն՝ «աստ առնէին...», «Հրովարտակօք»՝ «հանդէրձ հրովարտակօք»<sup>9</sup>: Նմանապես «Նշանագիրքն անշանագիրք» Տօնականներում դառնում է «Նշանագիրքն անշանագիրք»<sup>10</sup>, իսկ «առաջի արկեալ նոցա նշանագիրս» հատվածի «արկեալ»-ը փոխարինվում է «արարեալ» բառով<sup>11</sup>: «Թեւամուխ միշամուխ» ծանր հնչող հավելադրությունը պարզեցվում է մեկ բառով՝ «թեւակոխ»<sup>12</sup>, եւ իրոք դժվարհասկանալի «աշակերտեալ նմին սովորական աւետարանութեան» արտահայտությունը՝ «աշակերտել նմին աւետարանական սպասաւորության»<sup>13</sup> քիչ թե շատ ըմբռնելի ձեւով:

Դա նշանակում է, որ «Փոքր Կորյունը», անշուշտ ածանցված լինելով «Վարքի» ընդարձակ խմբագրությունից<sup>14</sup>, այնուամենայնիվ կարող է օգտագործվել այս վերջինը վերականգնելու համար իմաստ վերապահումով՝ այնտեղ,

<sup>7</sup> Կորյուն, 1981, էջ 90, տող 2 եւ տողատակ:

<sup>8</sup> Նոյն տեղում, տող 12-13 եւ Կորյուն, 1994, էջ 109, տող 35:

<sup>9</sup> Կորյուն, 1981, էջ 92, տող 3 եւ տողատակ: Առանց նախորդ գործիականը հավանաբար հավասար է հունարենի dativus sociativus՝ «համագործ տրականի» կառուցին, եւ կարող էր արհեստական բվալ արդեն վաղ հայերենում, իսկ ավելի ոչ՝ դառնալ պարզապես անհասկանալի:

<sup>10</sup> Նոյն աելում, էջ 94, տող 3 եւ տողատակ:

<sup>11</sup> Նոյն աելում, էջ 98, տող 13-14 եւ տողատակ:

<sup>12</sup> Նոյն աելում, էջ 84, տող 15 եւ տողատակ:

<sup>13</sup> Նոյն աելում, էջ 86, տող 14 եւ տողատակ:

<sup>14</sup> Պարզ է, սակայն, որ Ժ-ԺԵ դարերի հուշանանը կազմվել է Կորյունի ընդարձակ խմբագրության շատ ավելի հին ձեռագրերի հիման վրա, բայց այսօր մեր տրամադրության տակ եղածներն են: Հավանաբար, դրանով պետք է բացատրել «Փոքր Կորյունի» ընթերցվածների մեջ ֆերականական ուղագրակ տարբերակների առկայությունը, օրինակ, «-իւր» անցյալ անկատարի վերջավորությունը «-էր»-ի փոխարեն՝ «հանաշչիր» - «հանաշիւր» (Կորյուն, 1981, էջ 90, տող 4 եւ տողատակ), «կոչիւր» - «կոչիւր» (նոյն տեղում, տող 13-14 եւ տողատակ):

որտեղ բնագրի ընդհանուր իմաստը վերականգնելու բոլոր այլ միջոցները սպառված են: Անկասկած, այս պարագան գիտակցել է եւ ինքը՝ Մ. Աբեղյանը, քանի որ «Ճաճ/Ճք», այսինքն՝ Տոնականների ընթերցվածները նա գրեթե միշտ<sup>15</sup> բերում է տողատակը, շնորհնելով դրանք հիմնական բնագրի մեջ: Ուստի եւ «գրեալ»-ի ներմուծումը ընդարձակ «Վարքի» հիմնական բնագրի մեջ բնավ չի նշանակում, որ այս ընթերցվածքը ուժեղ է եւ նախընտրելի: Ընդհակառակն, դա պարզապես իմաստային բացը մի կերպ լրացնելու միակ միջոցն էր: Հաջորդ քայլը կատարելիս, այսինքն՝ սրբագրելով «գրեալ»-ը «գտեալ» ձեւով Մ. Աբեղյանն իրականում ավելի է թուլացնում առանց այդ էլ թույլ ընթերցվածը, քանի որ այն հիմնավորում է մյուս նախադասության մեջ գտնվող «յանկարծագուտ» բառով, մինչդեռ սրբագրության «հուշված» լինելը, այսինքն՝ *lectio facilior* վիճակի վերարտադրումը արդեն իսկ հատուկ զգուշավորություն է պահանջում: Եւ այս ամենը կատարվում է մի բնագրի նկատմամբ, որի խիստ խրթին եւ խճճված լինելու համար գանգատվում է ինքը հրատարակիցը<sup>16</sup>.

«Նա [այսինքն՝ Կորյունը] հորինում է շատ ճոռոմ, ավելորդ զարդերով եւ կրկնություններով. ինչպես ինքն ասում է, «ծաղկեցնում է»: Նրա գրածը հաճախ մութն է նաև անկանոն լեզվի պատճառով, պակասում են անհրաժեշտ բառեր, կամ շատ կամ ամբողջ նախադասությունների փոխարինող յուրահատուկ նորահար բառդ բառեր, այլեւ բառերի կիրառություն ոչ մեզ ծանոթ սովորական նշանակությամբ»:

Հետեւաբար, անհասկանալի տեղին միշտ չէ, որ սրբագրման կարիք ունի: Նախ պետք է համոզվել, որ սպառված են մեկնարանման բոլոր հնարավորությունները: Հնարավոր չէ՝ արդյոք ենթադրել, որ «յանկարծ ուրեմն նշանագիրս» բառախմբում սովորական բառերը գործածված են անսովոր իմաստով: Կամ, այլ կերպ ասսած, մեզ համար սովորականը մի՞թե նույնքան սովորական է եղել միշնադարի համար:

ՆԲՀՀ բերում է «յանկարծ» բառը երկու նշանակությամբ. սովորական՝ «յանկարծ ... որ եւ յանկարծակի իբր անկարծ. անկարծելի օրինակաւ, եւ յանկարծելի ժամու. իսկոյն. իսկ եւ իսկ. յանակնկալ պահու. յանպատրաստից. ի մի վայրկեան ժամանակի» եւ հազվադեպ՝ «յանկարծ ... իցէ թէ, երանի թէ»:

<sup>15</sup> Բացառությամբ երեք դեպքերի, որից մեկը՝ մեր ակնարկի առարկան է, իսկ մնացածները՝ բոլոր հիմնական ձեռագրերում վկայված «մարթեցեն»-ի փոխարեն երկու բառ՝ «արծարծել մարթացեն» (Կորյուն, 1981, էջ 92, տող 13 եւ տողատակ) եւ «զմանկումս»՝ հիմնական ձեռագրերի «մանկումս» ընթերցվածի փոխարեն (նույն տեղում, էջ 98, տող 8 եւ տողատակ):

<sup>16</sup> Կորյուն, 1981, էջ 65:

Սակայն եւ ոչ մեկի շնորհիվ ամբողջ նախադասությունը բավարար իմաստ չի ստանում:

Պատկերը մի փոքր փոխվում է, երբ «յանկարծ» բառի կիրառությունը դիտվում է Կորյունի դարաշրջանի հեղինակների երկերում: Այսպես, պարզվում է, որ

ա) Եղնիկը<sup>17</sup> առհասարակ չի գործածում ոչ «յանկարծ»-ը, ոչ ել «յանկարծ»-ով բարդված բառեր,

բ) Փակստոս Բյուզանդն<sup>18</sup> այն գործածում է 4 անգամ, մինչդեռ «յանկարծակի» ձեւը - 8, իսկ «յանկարծօրէն» - 14 անգամ,

գ) Եղիշեն<sup>19</sup>. «յանկարծ» - 1, «յանկարծակի» - 2 անգամ,

դ) Ղազար Փարպեցին<sup>20</sup>. «յանկարծ» - 5, «յանկարծակի» - 24, «յանկարծահաս» - 1 անգամ,

ե) Մովսես Խորենացին<sup>21</sup>. «յանկարծ» - 2, «յանկարծակի» - 4, «յանկարծօրէն» - 3 անգամ,

զ) Դաւիթ Անհաղթի<sup>22</sup> երկերի թարգմանություններում. «յանկարծ» - չիք, «յանկարծակի» - 1, «յանկարծօրէն» - 1 անգամ,

է) Ագաթանգեղոսը<sup>23</sup>. «յանկարծ» - 8, «յանկարծակի» - 7, «յանկարծօրէն» - 2, «յանկարծահաս» - 1, «յանկարծագոյն» - 1, «յանկարծաթափ» - 1, «յանկարծակամ» - 1 անգամ. Եւ, վերջապես,

ը) Կորյունն<sup>24</sup> ինքը գործածում է «յանկարծ» 2 անգամ, որից մեկը արդեն տեսանք, եւ «յանկարծագիւտ»՝ 3 անգամ:

Նախ, այս վիճակագրությունը ցուց է տալիս, որ հեղինակները որոշ նախապատվություն են տալիս ոչ թե «յանկարծ»-ին, այլ դրան հոմանիշ՝ «յանկարծակի» եւ «յանկարծօրէն» ձեւերին: Դա կարող է նշանակել, որ «յանկարծ» տարբերակը, հասկանալի լինելով հանդերձ, այնուամենայնիվ ինչ-որ շափով խորթ է եղել վաղ գրական հայերենին: Համարբարբառների գննման երկրորդ արդյունքն այն է, որ Ագաթանգեղոսը ոչ միայն միակ հեղինակն է, որ նախընտրում է «յանկարծ» ձեւի գործածումը, այլև ունի մի այնպիսի գործածում, որը, նախ, կապակցում է «յանկարծ»-ը «ուղեմն» մակրայի հետ, եւ, երկ-

<sup>17</sup> Հայկական Համարարքան, Երեւան, 1972

<sup>18</sup> Հայկական Համարարքան, Երեւան, 1974

<sup>19</sup> Հայկական Համարարքան, Երեւան, 1978

<sup>20</sup> Հայկական Համարարքան, Երեւան, 1978

<sup>21</sup> Հայկական Համարարքան, Երեւան, 1976

<sup>22</sup> Հայկական Համարարքան, Երեւան, 1979

<sup>23</sup> Հայկական Համարարքան, Երեւան, 1973

<sup>24</sup> Հայկական Համարարքան, Երեւան, 1972

բորդ՝ զուգահեռ է հանդիսանում Կորյունի «յանկարծ»-ի երկրորդ կիրառություն պարունակող տեղիի համար<sup>25</sup>.

### [Ազարանգեղոս]

Որպէս զՄովսէս, որ յանկարծ ու-ըեմն օրէնսուսոյց հերրայական բանակին լինէր, ամենայն մարգարեական դասուն, եւ կամ իբրեւ զառաջադէմն Պաւղոս բովանդակ առաքելական գնդաւն, հանդերձ աշխարհակեցոյց աւետարանաւն Քրիստոսի՝ սոյն եւ սա եկեալ հասեալ երեւեալ՝ հայաբարբառ հայերենախօս գտաւ:

### [Կորին]

Յայնմ ժամանակի երանելի եւ ցանկալի աշխարհս Հայոց անպայման սքանչելի լինէր. յորում յանկարծ ուրեմն օրէնսուսոյց Մովսէս մարգարեական դասուն, եւ յառաջադէմն Պաւղոս՝ բովանդակ առաքելական գնդովն, հանդերձ աշխարհակեցոյց աւետարանաւն Քրիստոսի, միանգամայն եկեալ հասեալ ի ձեռն երկուց հաւասարելոցն՝ հայաբարբառ հայերենախօսք գտան:

Մի կողմ թողնելով Ազարանգեղոսի եւ Կորյունի բնագրերի փոխառնչության շափազանց բարդ խնդիրը<sup>26</sup> մենք կարող ենք այստեղ փորձել գտնել «յանկարծ ուրեմն» արտահայտության նշանակությունը, բաղդատելով հայե-

<sup>25</sup> Ազարանգեղոս, 854 (Ազարանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխ. Գ. Տէր-Մկրտչեան եւ Սո. Կանանեանց, Տփիս, 1909, էջ 447-48): Կորյուն 1981, էջ 104, տող 10-15:

<sup>26</sup> Միայն մեզ հետաքրքրող Ազարանգեղոսի և Կորյունի տեղիների բաղդատության վերաբերյալ անհրաժեշտ է բերել Ա. Տեր-Ղետնյանի կարծիքը: Թարգմանելով Ազարանգեղոսի հատվածը («Փնշակես Մովսէար, որը միանգամից երրայական բանակին օրենսուսոյց էր եղել, ամբողջ մարգարեական դասի հետ և կամ ինչպես առաջադեմ Պողոսը բովանդակ առամելական գնդով Քրիստոսի աշխարհակեցոյց Ավետարանի հետ, նույնպես եւ սա [Գրիգոր] զարով հասներով, երեւարով՝ հայաբարբառ հայերենախոս դարձավ», Ազարանգեղոս, Հայոց պատմություն, Երեւան, 1983, էջ 477)՝ նա ծանրագրում է այն հետեւյալ կերպ (նոյն տեղում, էջ 524). «Սա Կորյունից հաղված է, սակայն Կորյունի մատյանում հստակ է արտահայտված. «Այն ժամանակ անպայման սխանչելի դարձավ մեր երանելի ու ցանկալի Հայաստան աշխարհը, ուր երկու հավասարակիցների ձեռքով հանկարծ միանգամից եկան հասան, հայաբարբառ հայերենախոս դարձան օրենուսոյց Մովսէար՝ մարգարեական դասի հետ և առաջադեմ Պողոսը՝ բոյոր առամելական գնդով, Քրիստոսի աշխարհակեցոյց Ավետարանի հետ միասին (Կորին, էջ 57)»: Կորյունի խոսքը Մովսէսի և Պողոսի, այսինքն՝ Հին և Նոր Կոտակարանների հայերեն բարգմանելու մասին է, իսկ Ազարանգեղոսը Գրիգոր Լուսավորչին է վերագրում Մովսէսին ու Պողոսին հայերենախոս դարձնելը, որն անիմաստ է»: Դժվար չէ նկատել, որ այս դատողությունը խորը լինելով Ազարանգեղոսի մտքի ընթացքին, նաեւ վաղ Քրիստոնեական բարողության պայմաններին անձանոր լինելու արդյունք է: Աստվածաշունչ մատյանը հայալեզու դարձնելու համար բավական էր պարզապես քարոզել այն բանավոր՝ ինչպես եւ արվում էր շատ հաճախ նոյնիսկ սեփական զիր ունեցող ժողովուրդների մեջ:

րեն Ագաթանգեղոսին հունարեն բնագրի հետ<sup>27</sup>: Մեր տեղին համապատասխանում է հետեւյալ հատվածին.

‘ՕՏ շար օ Մաստի՛ս նօմօթէ՛տης  
εնρεθէ՛տ տա՛ս ’Եթրաւակա՛ս պարεմ-  
թօլա՛ս մէտա՛ տօ՞ պրօֆիտիկօ՞ չօ-  
րօ՞ կաև օ պարրուսատիկօ՞ տա՞  
Պանլօ՞ մէտա՛ տօ՞ ձուստոլիկօ՞  
սստիմատօ՞, կաթ’ օմօւասիւ ա՞-  
տա՞ է՞ ս մէսօն պարεլթօ՞, տօ՞  
Հայութօն կդրսցա տօ՞ ւնացցէ-  
լիւ տօ՞ Խրւտօ՞ է՛պէրաթի (է՛պէ-  
թօ՞ տա՞ ՚Արմենիան շլա՞-  
տո՞՝<sup>28</sup>

Ինչպես Մովսեսը մարգարեական  
շուրջպարով հանդերձ եթրայական  
գորագնդերի համար օրենսդիր  
գտնվեց, եւ խիզախագույն Պողոսը,  
առաքյալների շոկատով հանդերձ,  
[այդպես եւ Գրիգորը], ի նմանու-  
թյուն նրանց, դուրս գալով [ասպա-  
րեզի] մեջտեղը, փորձեց [արտասա-  
նել] Քրիստոսի ավետարանի կենա-  
րար քարոզը հայերեն լեզվով:

Հունարեն Ագաթանգեղոսի հատվածում առկա է երկու բայաձեւ. մեկը՝  
εնրեթէ՛տ (անցյալ կատարյալի կրավորական դերբայ նըրօ՛սկօ «գտնել» բա-  
յից), մյուսը՝ է՛պէրաթի<sup>29</sup> (Յ-րդ գեմքի եզակի թվի անցյալ կատարյալ կրավո-  
րակերպ ուրացած ափորձել» բայից): Դրա գիմաց հայերեն տարբերակը  
ունի երկու ստորոգյալ՝ «յանկարծ ուրեմն ... լինէր» եւ «գտաւ»: Առաջինը  
գտնվում է նույն շարադասական դիրքում, ինչ եւ հունարենի նըրեթէ՛տ ձեւը,  
եւ նշանակությամբ, նախադասության իմաստը պահպանելու համար, պետք է  
հավասար լինի նրան: Ինչ վերաբերում է երկրորդ ստորոգյալին, ապա նա,

<sup>27</sup> Կցանկանայինք ձեռնպան մնալ նաեւ այն հարցում, թե արդյոք հունարեն Ագաթանգեղոսն է քարզմանվել հայերենից, թե ընդհակառակը, հայերենը՝ հունարենից: Մինչ օրս մշակված կովանները գալիս են ապացուցելու, որ հունարեն բնագիրն ածանցված է հայերենից (La version grecque ancienne du livre arménien d'Agathange. Edition critique par Guy Lafontaine. Université catholique de Louvain. Institute Orientaliste. Louvain-la-Neuve, 1973 (Publications de l'Institut Orientaliste du Louvain, 7), pp. 20-33), թեև զուտ տրամաբանական տեսակետից դիտվելիս, դրանք հաստատում են միայն, որ հունարեն տարբերակի հեղինակը հայկական լեզվամտածության կրող է եղել, եւ բաշ ծանոթ էր իր ժամանակի Հայաստանի պայմանների եւ իրադարձությունների: Ինչեվցե, ոչինչ չի խանգարում գործածել հունարեն բնագիրը հայերենի խրին տեղիների իմաստը պարզելու համար:

<sup>28</sup> Agathange, p. 157.

<sup>29</sup> Երկրորդ հունարեն ընթերցվածքը՝ է՛պէրաթի՝ ուրացած ափորձյան ենթարկել, գայ-  
րակութիւն (սեռական հոլովի խնդրառությամբ) բայի անցյալ կատարյալի կրավորականն է,  
որի դասական գործածությունը կիսախաեր տվյալ նախադասության շարահյուսական կա-  
ռուցվածքը: Սակայն կարելի է ենթարկել, որ ոչ, եւ հատկապես խոսակցական լեզվի մեջ  
ուրացած եւ ուրացած բայերի իմաստները, ինչպես եւ ծեւերը, սկսում են խառնվել.  
փոխվում է եւ խնդրառությունը՝ դառնապով հայցական:

թեեւ զբաղեցնում է ՇՊԵԿՐԱԹԻ բառին համապատասխանող տեղը, սակայն արտահայտում է, ինչպես եւ առաջին ստորոգյալը, ՇՆՐԵԹԵԼԸ ձեւի իմաստը: Դա նշանակում է, որ հայերեն տարբերակի երկու ստորոգյալները միասին կազմում են հավելադրություն, որի երկրորդ մասը, ինչպես եւ հաճախ պատահում է հատկապես թարգմանություններում, պարզաբանում է առաջինի՝ անսովոր, արհեստական նորամուծությունը:

Ուստի պարզում է, որ «յանկարծ ուրեմն» օժանդակ բայի հետ ինքը կարող է գործածվել իբրեւ հունարեն «գտնել» բայի կրավորածեւերի համարժեք: Ինչպես կարելի է տեղադրել ստացած իմաստը «Ընդարձակ կորյունի» առաջին, խնդրո արառկա տեղիի մեջ: Ճանապարհներից մեկը՝ ենթադրել, որ այս բառախմբին հարող օժանդակ բայը ինչ-ինչ պատճառներով ձեռագրերից դուրս է ընկել: Երկրորդ, ավելի բարդ, սակայն, մեր կարծիքով, ավելի արդյունավետ ճանապարհը՝ հասկանալ իբրեւ հունաբանություն ոչ միայն «յանկարծ ուրեմն» արտահայտությունը, այլեւ զա պարունակող ամբողջ նախադասությունը: Փորձենք այն «վերաթարգմանել» հունարեն ամբողջությամբ, գիտակցելով, իհարկե, որ նմանատիպ հետթարգմանությունը որոշ շափով պայմանական է: Այնուհանդերձ, հունարեն հիմքի վերականգնումը, թեեւ զանազանակերպ է առանձին բառերի առումով, տեսանելի է դարձնում կայունը՝ շարադյուսական կառուցվածքը, նախադասության կմախքը: Այսպես.

**յայնժամ = τότε**

**պատմեր = διηγήσατο**

**նոցա = τούτοις կամ ἐκείνοις**

**արբայն = ὁ βασιλεὺς**

**վասն առն ուրումն = περὶ ἀνδρός τινος**

**ասորոյ եպիսկոպոսի = ἐπισκόπου Σύρου**

**ազնուականի = εὐγενοῦς կամ γεννաίου**

**Դանիել անուն = ὄνομα կամ ὀνόματος Δανιήλ**

**կոչեցելոյ = [κληθέντος]. բնական հունարենում նախորդ բառախմբի**

**հետ մեկտեղ ավելրորդ կհամարվեր**

**որոյ = οὖ կամ Ὡ (հարաբերական դերանվան սեռականը կամ տրականը)**

յանկարծ ուրեմն [+ օժանդակ բայ] = ՇՆՐԵԹԻՆԱԼ (անցյալ կատարյալի կրավորականի անորոշ դերբայ, որը թելադրված է accusativus cum infinitivo՝ «հայցականը անորոշի հետ» կառուցով. այս վերջինը, իր հերթին, պայմանավորված է գլխավոր նախադասության «պատմէր» բայի առկայությամբ)

նշանագիրս = τὰ στοιχεῖα կամ τὰ γράμματα կամ τὰ σημεῖα: Հունարեն համարժեքներից վերջին երկուսը նշանակում են ոչ միայն «տառ», այլեւ «գրավոր նիշ», «գրություն»: Հաջորդ՝ «աղփաբետաց» բառը հայերենում ավելացվել է, հավանաբար, ցուց տալու համար, որ խոսքը հենց տառանշանների մասին է: Այս լրացուցիչ պարզաբանումը հարկավոր էր, թերեւս, այն պատճառով, որ հայերեն «նշանագիր» բառը ինքը կարող է նշանակել «գրություն» (տես նբՀ, «նշանագիր» II եւ III):

աղփաբետաց = [τῶν ἀλφαβήτων]. նախորդ «նշանագիր» բառի հետ հավելադրության տպագորություն է թողնում, դասական հունարենում բառը չէր գործածվում. խիստ կասկածելի է նաև դրա հոգնակի թիվը<sup>30</sup>:

հայերէն = τῆς' Αρμεնιակῆς կամ τῶν 'Αρμενίων

լեզուի = γλώττης / γλώσσης

հնչպես վերը տեսանք, «յանկարծ ուրեմն» արտահայտությունը օժանդակ բայի անցյալի հետ դիմավոր ձեւի իմաստ է ձեռք բերում («գտնվեց», «գտնվել է»), ընդ որում տվյալ հունարեն բայաձեւը, վերածվելով հայերենի, վերաբաշխվում է մակրայական («յանկարծ ուրեմն») եւ բայական («լինել» բայի դիմավոր ձեւը) խմբի միշեւ այնպես, որ օժանդակ բայը ստանում է անցյալ կատարյալի եւ համապատասխան դեմքի ցուցիչները, իսկ կրավորական սեփի իմաստը, առանց քերականական արտահայտման, փոխանցվում է մակրայներին: Պահպանելով այս բաշխումը, նույն բայի կրավորական անցյալի անորոշ ձեւը տառացի թարգմանելու համար օժանդակ բայը պետք է դնել անցյալի անորոշ ձեւով, սակայն այսպիսին հայերենում գոյություն չունի: Թարգմանիչն անորոշ ձեւի արտահայտման համար թողնում է մակրայական խումբը առանց օժանդակ բայի, զո՞րաբերելով նաեւ անցյալի իմաստը, քանի որ այն առկա է արդեն գլխավոր նախադասության «պատմէր» բայաձեւում: Մյուս կողմից, վերականգնելով անորոշ գերբայի կրավորական ձեւը, մենք դրանով բացառում ենք «որոյ» գերանվան ենթակա լինելու հնարավորությունը: Այս պարագայում «որոյ» կարելի է մեկնաբանել որպես ներգործող անուղղակի խնդիր («գործող անձ» կրավորական կառուցում). հունարենը կարտահայտէր այն նոր նախդիրով եւ սեռական հոլովով, այսինքն՝ տվյալ դեպքում որպես նօ՞օն, իսկ նօ՞օն նօրդինաւ հատվածը պետք է հասկանալ «որի կողմից գտնվել են» ձեւով: Հնարավոր է, սակայն, վերականգման երկրորդ տարբերակը՝ «ստացական տրականը» (dativus possessivus), որը ցուց է

<sup>30</sup> TLG 6.01 (1997)՝ «Հունարեն լեզվի համարաբառ» տվյալների հենքում բառը վկայված է ընդամենը 14 անգամ, որից 13-ը՝ եզակի թվով, եւ միայն մեկ անգամ՝ հոգնակիածեւ, բայց վնասված բնագրում (Epiphanius, Panarion, ed. K.Holl, Bd.3, S.35, Z. 2, Leipzig: Hinrichs, 1933 (Die Griechischen christlichen Schriftsteller 37) = PG 42, Haer. 66, 48C):

տալիս խոսքի առարկայի «ում մոտ» լինելը, հանդիպելը, հայտնվելը եւն. եթե խոսքը անձի մասին է, ապա այն սովորաբար ուղեկցվում է παρά նախդիրով. ուստի եւ παր՝ ՞ ՞ էնթրիդնալ պետք է թարգմանել «որի մոտ գտնվեցին, գտնվել են»:

Ի մի բերելով այս վերաթարգմանությունը, ստանում ենք մոտավորապես հետեւալը.

Τότε διηγήσατο τούτοις ὁ βασιλεύς περὶ ἀνδρός τινος ἐπισκόπου Σύρου εὐχενοῦς|| γενναίου ὄνομα Δανιήλ, ὦφ'οὐ|| παρ' ՞ ՞ էնթրիդնալ τα σημεῖα τῆς τῶν Ἀρμενίων γλώττης,

այսինքն՝

«Այդ ժամանակ պատմեց նրանց արքան ինչ-որ ազնվական այրի, Դանիել անունով ասորի եպիսկոպոսի մասին, որի կողմից գտնվել են || որի մոտ գտնվել են հայոց լեզվի նշանագրեր»:

Այժմ համեմատենք վերականգված հատվածը *Փարպեցու համապատասխան վկայության հետ*: *Փարպեցին շեշտը դնում է նշանագրերի պատահաբար գտնվելու վրա, լուսության մատնելով Դանիելի՝ այս գործում կատարած դերը: Ինչ-որ մեկը նշանագրեր է տեսել ինչ-որ եպիսկոպոսի մոտ, եւ ուրիշ ոչինչ<sup>31</sup>:* Հետաքրիրն այստեղ այն է, որ *Փարպեցու վերապատման մեջ տեղ գտած «առ որում նշանագիրք ... կային»<sup>32</sup> արտահայտությունը, թարգմանված լինելով հունարեն, ընդունում է παր' ՞ ՞ ՞ (՞σαν) տὰ γράμματα ձեւը, որը խիստ նման է մեր վերականգնած հատվածի «ստացական տրականի» տարբերակին: Նա համարյա թե նույնն է նշանակում, ինչ եւ παր' ՞ ՞ էնթրիդնալ դարձած հատվածը, այն փոքր երանգային տարբերությամբ, որ վերջին դեպքում խոսքի առարկայի պատկանելությունը անակնկալ է խոսողի համար: Այսպիսով, կարելի է ենթադրել, որ Ղազար *Փարպեցու դեպքերի մեկնաբանման յուրօրինակությունը բացատրվում է ոչ թե նրա «ասորատյացությամբ», այլ նրանով, որ նա, մեզ անհայտ հանգամանքների բերումով, գիտակցել է «Կորյունի» քննովող դրվագի հունաբանությունը եւ այնտեղից քաղած տեղեկություններն արտահայտել է ավելի բնական լեզվով, քան թե «Վարքի» հետագա մշակողները: Ուշագրավ է նաեւ, թե ինչպես է արտացոլվում «Պատմության» մեջ մեր վերականգված տեղիի երկրորդ կասկածելի արտահայտությունը: Կորյունի բնագրում Դանիելի նկատմամբ կիրառվում է «ազնուական» մակդիրը: «Աղնուական» բառի հունարեն համարժեքները, որոնք, ինչպես եւ հայերեն բառը, բնութագրում են ոչ միայն ծագումը, այլեւ բարոյական արժանիքները՝ ևնց-**

<sup>31</sup> Ղազար *Փարպեցոյ Պատմոթիւն Հայոց եւ Թուլք առ Վահան Մամիկոնեան*, աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչեան եւ Ստ. Մալիսասեանց, Տիգիս, 1904, էջ 14, տող 13-14:

<sup>32</sup> Նոյն տեղում, տող 32-33:

ո՞յն եւ շեշտածութիւնը են: Մինչդեռ Փարագեցին Դանիելին նկարագրում է «բարեպաշտ»<sup>33</sup> մակղիրով, այսինքն, հունարեն թարգմանությամբ, և նույնական է այս կամ ծույթունը: Եթե Փարագեցին եւ «Ընդարձակ Կորյունի» հեղինակը օգտվել են միեւնույն աղբյուրից, ապա նրանք պետք է տեսնեին և նույնին և նույնին է աղբյուրից ապա նրանք պետք է տեսնեին և նույնին և նույնին է աղբյուրից:

Բայց այս մակղիրներից մեկը<sup>34</sup>: ԵԿՍԵՎՀՀ-ի և ԵՄԵՆՀՀ-ի գծագրությունը տարբերվում է շատ չնշին, եթե նկատի առնենք, որ վաղ ձեռագրային «սիգման» հաճախ գրվել է ոչ թե  $\Sigma$ , այլ երկար երկանկյուն  $C$  ձեւով, իսկ  $B/N$  շփոթելի է միմիանց հետ, եթե վնասված են տառերի մեջտեղերը: Այնուամենայնիվ, թվում է, որ «բարեպաշտ»՝ և նույնին բնութագիրը հոգեւոր անձի նկատմամբ ավելի հարիր է:

## II

«Ընդարձակ Կորյունում» կարելի է մատնանշել հունարեն բնագրի եւս մեկ հետք: Խոսքս նույնպես հանրահայտ բնագրագիտկան առեղծվածի մասին է:

Խոսելով իր «Վարքի» աղբյուրների եւ շարադրության սկզբունքների մասին, «Ընդարձակ Կորյունի» հեղինակը հայտարարում է<sup>35</sup>:

Ոչ սուտապատում ճարտարախոս եղեալ առ ի մերոց բանից գհօրէն իմոյ կարգեցաք, այլ զաճախագոյնն թողեալ եւ ի նշանաւոր գիտակացն քաղելով գհամառօսու կարգեցաք, որ ոչ միայն մեզ, այլ եւ որ զմատեանս ընթեռնուն՝ յայտնի է:

Իրականում «ի նշանաւոր գիտակացն քաղելով գհամառօսու» բառախմբի փոխարեն բոլոր ձեռագրերում կարդացվում է «Փ նշանադիմակացն բակելով զհամատուր» կամ «զմատեանս», իսկ «զմատեանս» բառի փոխարեն՝ Ե ձեռագիրը տալիս «զյատեանս», ավ՝ «զատեանս»: Մ. Աբեղյանը, բնագիրը համարելով աղավաղված, շտկում է նախադասության խրթին տեղերը բայտ Կորյունի՝ իր կողմից ավելացնելով «քաղել» սրբագրությունը, որը, ինչպես կտեսնենք վարը, հուշվել է Ագաթանգեղոսի բնագրով: Այսպիսով միտքը, կարծես թե, պարզվում է, սակայն անմիջապես հակասություն է առաջանում ավելի խոշոր հատվա-

<sup>33</sup> Նոյն տեղում, տող 32:

<sup>34</sup> Թվարկած հունարեն ածականներից «Եպիկոպոս» (և «արթեպիսկոպոս») բառերի հետ կայուն կապակցություն է ստեղծում միայն ծույթ մակղիրը (ավելի քան 300 վկայված բնագրային օգտագործում, մեծ մասամբ՝ ախեղերական ժողովների կանոններում): Ինչպես ցույց է տալիս TLG տվյալների հեմքը, ցեռնայութեանը այս գոյականի հետ չի կապակցվում, և նույնին բնուրագրում է եպիկոպոսներին ընդամենք մեկ անգամ, երկու անգամ եպիկոպոսին շնորհվում է և նույնին մակղիրը:

<sup>35</sup> Կորյուն, 1981, էջ 146, տող 2-5 եւ տողատակ:

**ծում:** Պարբերության սկզբում Կորյունը հավաստիացնում է ընթերցողին, որ գրել է իր պատմությունը «ոչ եթե ի հին համբաւուց տեղեկացեալ..., այլ որոց մեր իսկ ականատես եղեալ ... եւ լսող, եւ...արբանեակ»<sup>36</sup>: Անմիջապես սրանից հետո խոստովանել, որ պատմության հիմնական աղբյուրն, այնուամենայնիվ, ուրիշների վկայություներն են (որքանով էլ հեղինակավոր եւ գիտուն լինեն այդ «ուրիշները»), նշանակում է ինչ-որ շափով նվազեցնել սեփական աշխատության արժեքը<sup>37</sup>: Եթե պատմագիրը իր նկարագրած անցուղարձերի ականատեսը չէ, ապա նա, բնականաբար, օգտվում է այլ անձանց բանավոր եւ գրավոր հուշերից: Այսպես, օրինակ, Սոկրատես Աքոլաստիկոսն իր «Եկեղեցական պատմության» առաջին գրքի նախաբանում ասում է. «Մենք կսկսենք այն [իրադարձություններից], որոնք նա [այսինքն՝ նախորդ պատմագիրը – Օ. Վ.] բաց է թողել, առանց ճոռոմաբանությունը հոգալու, այլ շարադրելով այն, ինչ գտել ենք գրավոր [ձետվ] կամ լսել ենք պատմողներից»<sup>38</sup>: Մինչդեռ ականատեսը դրա կարիքը չունի: Նա գրում է, գործածելով սեփական հիշողությունը կամ իր իսկ ձեռքով ժամանակին արած գրառումները:

«Հայկագեան» բառարանի հեղինակներին մեզ հետաքրքրող տեղին քաջ ծանոթ էր իր սկզբնական տեսքով: «Համատուրք» - գրում են բառարանագիրները, - «տուրք կամ ձիրք եւ հանգամանք համեմատ, եւ կամ աւանդեալք ի հասարակաց վկայութենէ»: Իսկ «նշանադիմակ՝ նշանաւոր եւ երեւելի դիմօք կամ դիմաց ամենեցուն ակներեւ, հոյակապ, հոչակաւոր (իբր. անցք)»: Եվ այստեղ գալիս է ամենահետաքրքիրը. «ի ... նշանադիմակաց քաղելով՝ զհամատուրսն կարգեցաք». Կորին ըստ Ագաթանգեղոսի, որ պակասի այժմ ի հ[ա]յ, այլ կայ ի յ[ոյ]ն ըստ իմաստից, որ ի լ[ա]տ[ին] պարզի այսպես. Զնշանաւորսն ի կիր արկաք յօրինուածով քաղեցելով՝ յօգտակարագունիցն»: Այս ամենը նշանակում

<sup>36</sup> Նոյն տեղում, էջ 145, տող 19 - 146, տող 1:

<sup>37</sup> Այդպես, ի դեպ, վարվում է հունարեն «Գրիգորի վարքի» հեղինակը (գլուխ 199, G. Garitte, Documents pour l'étude du livre d'Agathange, Citta del Vaticano, 1946, p. 116). «Իմ այս ամբողջ շարադրանքը հյմարիս է, հանզի ես դեպիելի մի մասի մասնակից եմ եւ ականատեսը: Մյուսների մասին լսել եմ վստանելի մարդկանցից» (քարզ. Հր. Բարբիկյան, անկանուն Հ. Մարքիլյան, Հայ-բուզանդական հետազոտություններ, հատ. I, Երևան, 2002, էջ 180): Նոյնը կարելի է տեսնել «Վարքի» արարական բարգմանության բնագրում (H. Mapp, Крещение Армян, Грузин, Абхазов и Алапов святым Григорием (Арабская версия), СПб, 1905, с. 148): Երկու բնագրերի զուգընթացը, ինչպես եւ դրա տարբերությունը Ագաթանգեղոսի մեզ հետաքրքրող աեղիից նկատել է Ա. Տեր-Ղետնյանը (տե՛ս Հ. Մ. Բարբիկյան, նոյն տեղում):

<sup>38</sup> Τὴν ἀρχὴν ἔξ ὅν ἐκεῖνος ἀπέλιπεν ποιησόμεθα, οὐ φράσεως ὅγκου φροντίζοντες, ἀλλ᾽ ὅσα ἦ ἐγγράφως εὑρομενή ἡ παρὰ τῶν ἴστορησάντων ἡκούσαμεν διηγούμενοι (Socr.I.3; **Socrates Scholasticus**, Kirchengeschichte, hrsg. von G.Ch.Hansen, mit Beiträgen von M.Schirinjan, Berlin, Akademie Verlag, 1995 (Die griechischen christlichen Schriftsteller der ersten Jahrhunderte: N. F., Bd. 1), S.1).

է, որ Կորյունի տեղիի իմաստը վերականգնելու համար մենք կրկին պետք է դիմենք Ազաթանգեղոսի հունարեն եւ հայերեն բնագրերի զուգադրությանը: Հայերենը<sup>39</sup> տարբերվում է Կորյունից նրանով, որ բացակայում է «զհօրէն իմոյ կարգեցաք» բառախումբը, առեղծվածային «ի նշանադիմակաց եւն» հատվածի փոխարեն առկա է Սուտ Կորյունի տարբերակը «ի նշանաւոր գիտակաց քաղելով զհամառօտս», իսկ նախադասության վերջը ուղղված է թագավորին. «որք ոչ մեզ միայն, ո՞վ թագաւոր, այլ յորժամ քո առաջի զմատեանդ ընթեռնուցուն, յայտնի է»: Հունարենը հետեւցալն է<sup>40</sup>.

... οὐ ψευδολογήσαντες μυθωδῶς ἐκ τῶν ἡμετέρων λόγων. Πλεῖστα δὲ καταλιπόντες τῇ συντομίᾳ, τοῖς ἐπισημοτέροις ἐχρησάμεθα, συλλέξαντες τῶν χρησιμωτέρων τὴν σύνθεσιν<sup>41</sup>. “Οπερ ὁῦχ ἡμῖν μόνοις, ὁ βασιλεὺς, ἀλλ ὅταν καὶ ἐπὶ τοῦ σοῦ κράτος τόμος ἀναγνωσθῇ, πάντα<sup>42</sup> ἔκδηλα<sup>43</sup> γενήσεται...

...առանց սուտ առասպելներ պատմելու մեր խոսքով: Թողնելով մեծ մասը համառոտված ձեւով՝ մենք օգտվեցինք ամենանշանավորներից, ամենաօգտավետներից հավաքելով շարադրությունը: Որն ոչ մեզ միայն, ո՞վ թագավոր, այլեւ երբ Քո հշանությանդ համար վերծանվի հատորը, ամեն ինչ պարզ կլինի...

**Մենք գիտակցաբար թարգմանում ենք հունարենը բառացի, փորձելով ցուց տալ, որ այս բնագիրը նույնպես կամ աղավաղված է, կամ կազմվել է հունարենից դժվարացող հեղինակի կողմից (կամ երկուսն էլ միասին): Բացի այդ, այս տարօրինակ հատվածը հայերենին համընթաց չէ. «թողնելով մեծ մասը համառոտված ձեւով, մենք օգտվեցինք ամենանշանավորներից, ամենաօգտավետներից հավաքելով շարադրությունը» նախադասությանը հայերենում համապատասխանում է «զյաճախագոյնն թողեալ, եւ ի նշանաւոր գիտակացն քաղելով զհամառօտս կարգեցաք» տեղին: Դժվար չէ տեսնել, որ «ի նշանաւոր գիտակացն» համապատասխանում է հունարենի «ամենանշանավորներից», «համառօտս» փոխում է իր տեղը, փոխարինելով «ամենաօգտավետին», «քաղել» բայի իմաստը ստանում է «օգտվեցինք ... հավաքելով» բայի եւ դերբայի կապակցությունը, իսկ «կարգել» բայի իմաստի մասնակի արտահայտությունը փոխանցվում է «շարադրություն» գոյականին: Հայերենի ընդհանուր տարբերությունը հունարեն բնագրից այն է, որ տրամաբանական շեշտը անցնում է**

<sup>39</sup> Ազաթանգեղոս, 897 (էջ 470):

<sup>40</sup> Agathange, p.172.

<sup>41</sup> Var. ll. և առաջարկած է տարբերակը հայերենում համապատասխան բառացի կամ աղավաղված մասը պահպանական առաջարկած է տարբերակը հայերենում:

<sup>42</sup> Var.l. πάντη.

<sup>43</sup> Var.l. ἔκδηλον.

«Համառոտի» վրա, իսկ «օգտավետը» իսպառ բացակայում է: Ահա այս բացի մասին են խոսում «Հայկազեան» բառարանի կազմողները, եւ դրան հավասարեցնում են Կորյունի «ի նշանադիմակաց քաղելով (իրականում՝ «քակելով») զհամատուրս» բառախումբը: Սակայն հավասարեցման հիմքը մնում է անհայտ:

Փորձենք թարգմանել Կորյունի հատվածը հունարեն: «Համատուրք» գոյականը բաղկացած է երկու մասից՝ «Համա-» նախածանցից, որը սովորաբար հունաբան թարգմանություններում համապատասխանում է συντ- նախածանցին եւ դրա սυμ-, սυλ-, սυ- տարբերակներին (օրինակ՝ σύμβουλος - «համախոհ»): «Տուր» արմատը սովորաբար, հատկապես անձնանուններում, համապատասխանում է ծար- արմատին (օրինակ՝ Θεόδωρος - Աստվածատուր), սակայն «տուրք» որպես առանձին բառ համապատասխանում է հունարեն ծ ֆόρօς բառին: Կապելով նախածանցներն արմատների հետ, մենք արդյունքում ստանում ենք միակ իմաստավորված բառը՝ σύμφօρος ածականը, որը եւ նշանակում է «հարմարավետ, օգտավետ, պիտանի»:

Ինչ վերաբերում է «նշանադիմակ» բառին, ապա նա բարդված է երկու արմատներից, որից երկրորդը նբշլ բացատրում է հետեւյալ կերպ. «դէմ, դէմք, երես, տեսիլ, կերպարան, տեսակ, կերպ. պատրուակ, առ երեսս ձեւացեալ կերպարան»: Այս բոլոր նշանակությունների իմաստային «կորիզը»՝ «որեւէ բան քողարկող եւ միաժամանակ բացահայտող մակերեսն» է: Ի՞նչ կնշանակի այդ գեպքում նշանների համար հատկացված, կամ նշաններ սքողող, կամ նշաններով պատած, կամ նշաններին որեւէ այլ կերպ առնշվող «երես»: Պարզ է, որ դա ինչ-որ հարթ առարկա է, որը հատկացված է գրելու համար՝ մոմապատկամ կամ կավե տախտակ, մագաղաթի, քարտիսի կամ թղթի կտոր, իսկ փոխաբերաբար՝ որեւէ գրառում առհասարակ: Հունարենում «գրառում» նշանակող բառերից կարելի է մատնանշել հատկապես τὸ σημεῖον «գրավոր նշում», ն ողմէնաσις «գրի առած դիտում, ծանոթագրություն, նշում», τὸ σχεδարιոն «նախնական գրառում, սեւագրություն»: Առաջին ու վերջին բառերը կարող են գործածվել միասին. այսպես, եպիփան կիպրացու «Հավատամքի բացատրություն» գործում<sup>44</sup> առկա է ծιած...սոյմէնաւ կած օրան...շրանաւ («գրել ... նշումներով եւ ուրվագիծ գրառումներով») արտահայտությունը: Գոյություն ունի նաև «մեղրամոմով պատած գրատախտակ»՝ ն ծէլտօս բառը, որը հաճախ գործածվել է նաև տարբեր «գրությունների» իմաստով «նամակ, հրովարտակ, կտակ, աշխատություն» եւ մի բանի այլ նույնիմաստ բառեր:

Վերջապես, «քակել» («քակտել, քայքայել, բաժանել, լուծանել, ցրել»)

<sup>44</sup> Epiphanius Expositio fidei, 25 (MPG 42. 832C).

բառի հունարեն համարժեքներից մի քանիսը բերում են իրենք՝ «Հայկագեան»-ի հեղինակները՝ կաթαιրέա, կատալնա, ծալնա, պարալնա: Այս շարքում լնա «լուծանել» բայի նախածանցված ձեւերից բոլորը նշանակում են «ավերել», մինչդեռ կաթαιրέա «ջարդել, ավերել» բայի հիմքում ընկած է անրέա, որի նշանակությունը բաղկացած է երկու ճյուղավորվող իմաստային շարքերից. առաջին՝ «հիմքից պոկել, ավերել, ջարդել», եւ երկրորդ՝ «քաղել, ընտրել»: Հետաքրքիր է նաեւ, որ անրέա բայի նախածանցված ձեւերից մեկը (ընդհանուր հաշվով դրանք տասնհինգ են), սυնաւրեա բայը ունի «հավաքել, միացնել, կապակցել», բայց եւ «համառոտել» իմաստը: Այսպիսով, «ի նշանադիմակացն քակելով զհամատուրս կարգեցաք» կարելի է մոտավորապես վերականգնել

ἀπὸ τῶν δέλτων (σημειώσεων, σημείων, σχεδαρίων) συνελόντες<sup>45</sup> τὰ σύμφορα κατετάξαμεν (συνέθεμεν)

Ճեւով եւ թարգմանել՝ «Նշումներից համառոտված ձեւով հավաքելով ամենապիտանին, շարադրեցինք»:

Աա իսկապես նույնիմաստ է Ագաթանգեղոսի վերոբերյալ տեղիի հետ, եւ կարող է ունենալ հետաքրքիր տարրերություններ շարունակության մեջ.

«որ ոչ միայն մեզ, այլ եւ որ զմատեանս ընթեռնուն՝ յայտնի է»:

«Որ» հարաբերական գերանունը այս նախադասության մեջ կարող է կապակցված լինել միայն «օգտավետի» հետ, այսինքն պետք է նույնպես դրվի չեզոք սեռի հոգնակի թվով. ՞:

«Միայն» բառը կարող է վերաբերել «մեզ» դերանվան. այս դեպքում նա թարգմանվելու է այնպես, ինչպես կա հունարեն Ագաթանգեղոսում. Դմիտրի Նուևի, ստանալով «միայն մեզ» իմաստը: Սակայն կարելի է, պահպանելով նաև հայերեն հատվածի շարադասությունը, կապել «միայն»-ը արգելական մաս-նիկի հետ՝ մի մօնօν «ոչ միայն»:

«Յայտնի է» ստորոգյալի համար Ազաթանգեղոսի բնագրում մենք տեսնում ենք բաղադրյալ ապառնի՝ ՇԿԾՈՒԱ: Սակայն ոչ սահմանական ներկան, ոչ էլ ապառնին նախադասության բավարար իմաստ չեն հաղորդում: Մինչեռ մեր վերականգնած լո՞յ արգելական մասնիկի առկայությունն մեզ հուշում է, որ «Կորյունում» շոշափվող հունարեն բնագրի թարգմանից պետք է տեսնէր «Հայտնել»՝ ծղլօն բայի ոչ թե սահմանական, այլ ըղձական կամ ստորադասական եղանակը: Եվ իսկապես ծղլօն բայի ներկա ժամանակի սահմանական եւ ստորադասական եղանակի երրորդ գեմքի ձևերը համանուն են ծղլօն, եւ այս պարագան կարող էր շփոթեցնել թարգմանչին:

<sup>45</sup> συναιρέω παյի αնցյալ կատարյալ ներգործական դերբայի ուղղական հոլովի հոգմակի թիվը:

ά μη μόνον ήμιν, ἀλλὰ καὶ ... δηλοῖ ῥωτψιαδρ, καպված լինելով τὰ σύμφορα «օգտավետή», «պիտանի»-ի հետ, նշանակում է «օգտավետր, որը պետք է ոչ միայն մեզ, այլեւ [ինչ-որ մեկի համար] ... հայտնի կամ պարզ լինի»: «Հայտնել» բայի իմաստը պահանջում է, որ նախադասության երկրորդ մասում բացը լրացվի «մեզ համար» կապակցությանը զուգահեռ տրականով: «Ընթեռնուն» բայի համարժեքը՝ անացիցնացուն ձեւն է (ներկայի ներգործականի հոգնակի թվի 3-րդ գեմք): Բայց այս նույն ձեւին համանուն է ներկայի ներգործական գերբայի արական կամ շեղոք սեփի տրական հոլովը, որը, գործող անձ նշանակելու համար, պետք է գործածվեր հոգով: Ուստի մὴ μόνον հմին, ալլա և ուստի այլուն պետք է հայտնի կամ պարզ լինի»:

<sup>46</sup> Αյսպէս վերականգված տեղին զուգընթաց է Ազարանգեղոսի վերջարանում (Ազարանգեղոս, 894) բերված Եսայիի և Ամրակիսի մարզակեռոյթանը. «Ը՛ն քարտեզ նոր մեծ և գեա՞ ի նմա գրչա գրչի նարտարի» (Ես. Թ.1) և «Գրեա՞ զտեսիլ ի տախտակի և ի զիր հաստատեա՞, զի որ ընթենուն համարձակ ընթենուցմուն» (Ամրակ. Բ, 2): Դա ավելի լավ է երեսում հունարեն բնագրից. λαβὲ σεαυτῷ τομὸν νέον μέγαν καὶ γράψον ἐν αὐτῷ γραφίδι γραμματέων և γράψον τὴν ὄρασιν ταύτην ἐν πλαξὶν καὶ ἐν βιβλίῳ ἵνα οἱ ἀναγιγνώσκοντες παρօսτία ἀναγιγνώσωνται.

<sup>47</sup> Σε ὑ. **Βιρτιγαλλησή**, Κυρικούν ψωτάκια τε και έντριχον ρωτρόμανικοιριβιέν. Οιρέ Μακαριστής περιπολη, Βιρτωτή Αγγλίανηρωσή, Άριαρωνδεληση και Φωτιστού θιρικώνη διαδίκτερα ηθωτηρη-ρελεαίρετ, υπέρεικουιτελαίρετ και ινισαρελάνικελαίρετ. Σήμερι, 1900, Ιγ 164-173:

<sup>48</sup> Մատենագրութիւնն եւբաղի. Քննություն և բնագիր. Յակոված Եւսեբեայ Կեսարացոյ թուրք առ Կարպիհանոս, Խառ. Ա. Վարդանեան, Վիճակ, 1930, էջ 87:

վում եւն]»: «Ջյատեանս» ընթերցվածը ավելի բարդ է եւ ավելի հարուստ իմաստ է հաղորդում, ուստի եւ նախընտրելի է: Ինչ վերաբերում է «զատեանս» ընթերցվածին, ապա նա անիմաստ է, եւ կարող է հաշվի շառնվել:

**Ամփոփելով, ստանում ենք հետեւալ հատվածը.**

άπο τῶν δέλτων (σημειώσεων, σημείων, σχεδαρίων) συνελόντες τὰ σύμφορα κατετάξαμεν (συνέθεμεν), ἃ μὴ μόνον ἡμῖν, ἀλλὰ καὶ τοῖς τὰ ἐπὶ τοῦ βήματος ἀναγιγνώσκουσι δηλοῖ.

**Պարզվում է,** որ երկրորդական նախադասության բայի ստորադասական եղանակը թելադրված է ստորադասական հատկացուցչական նախադասության լրացուցիչ՝ նպատակային երանգի հավելմամբ: Վերջնական թարգմանությունը սա է.

«Նշումներից համառոտված ձեւով հավաքելով պիտանին (օգտավետը), շարադրեցինք այն <այնպես>, որ պարզ լինի ոչ միայն մեզ, այլև նրանց <համար>, ովքեր վերծանում են ամբիոնում <հնչող բաներ>»:

Վերջին հայտարարությունը կարեւոր է նրանով, որ ցուց է տալիս «Հնդարձակ Կորյունում» հետք թողած բնագրի՝ մասնագիտացած վերծանողների կողմից հրապարակավ ընթերցանելու համար հատկացված լինելը: Այս առիթով նույնպես ուշագրավ է Փարպեցու վկայությունը «Կորյունի» մասին: Մաշտոցի վարքի եւ նշանագրերի գյուտի մասին դրվագի հավաստիությունը ստուգելու համար նա խորհուրդ է տալիս. «ի պատմութենէ գրոց ...Կորեան ... կարգացեալ տեղեկասցի»<sup>49</sup>. մի արտահայտություն, որ կարելի է հասկանալ որպես «թող կարգալով տեղեկանան Կորյունի գրերի պատմովյունից»: Այդ գեպքում հասկանալի է դառնում նաև Փարպեցու՝ իր իսկ մասին հաղորդածը. «ուստի եւ մեր բազում անգամ կարդալով տեղեկացեալ հաւաստեաւ»: Դժվար է պատկերացնել, որ փոքրիկ գրքույկից գրերի գյուտի մասին տեղեկություններ քաղելու համար հարկ է եղել կարդալ այն «բազում անգամ»: Եթե, սական, մենք հասկանանք «կարդալը» ոչ «ուամկօրէն», ինչպես հրահանգում են «Հայկագեան»-ի հեղինակները՝ Փարպեցու միայն այս նախադասության վերաբերյալ, այսինքն՝ ոչ որպես «անհատական ընթերցում», այլ ավելի ընդունված «վերծանության» իմաստով, ապա «բազում անգամ կարդալը» կհաստատի մեր՝ Կորյունի վերջին վերականգված հատվածի իմաստը: Ղազար Փարպեցուն ծանոթ բնագիրը պարբերաբար հնչում էր եկեղեցում եւ նրան կարելի էր ծանոթանալ՝ վերծանելով կամ ունկնդրելով այն տոնական օրերին:

<sup>49</sup> Ղազարայ Փարպեցոյ Պատմոթիւն Հայոց..., էջ 13, տող 21-22:

## ԱՐԱՄ ԹՈՓԶՅԱՆ

### ԱՐԴՅՈՒՔ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻՆ ՀԻՆ ԳԱՐԵՐԻ ՄԻԱԿ ՔՆՆԱԴԱՏՎԱԾ ՊԱՏՄԻՉՆ Է

Բոլորս գիտենք, որ միջնադարյան Հայաստանում Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» համարվել է բացարձակ ճշմարտապատռում եւ անզուգական հեղինակություն վայելող պատմագրական երկ։ Այս բացարձակացմանը, սակայն, տասնիններորդ դարի երկրորդ կեսից հետեւեց մեկ այլ ծայրահեղության՝ մերժողականության շրջանը, երբ գերմանացի արեւելագետ Ալֆրեդ ֆոն Գուդմիտը բոլորովին արժեզուրկ հայտարարեց Խորենացու հաղորդած տեղեկությունները<sup>1</sup>, իսկ այնուհետեւ, մոտ երկու տասնամյակ անց, ֆրանսիացի արեւելագետ Օգյուստ Կարիերն առաջ քաշեց Խորենացու ավանդական ժամանակի հինգերորդ դարի վերանայման անհրաժեշտությունը եւ նրան համարեց ավելի ուշ դարերի հեղինակ<sup>2</sup>։ Խորենացիագիտության հետագա ընթացքը հայտնի է. առանձին խոր ուսումնասիրություններին զուգահեռ գերիշխում էր նրա ժամանակի ու արժանահավատության շուրջը բուռն՝ երբեմն նույնիսկ հայրոյանքների հասնող բանավեճ, որի արձագանքները լսելի են նաև այսօր։

Հայաստանում Խորենացու հեղինակության դեմ ամեն մի ոտնձգություն շափազանց սուր է ընկալվում, բայց եթե փորձենք պատմական մի համառոտ անդրադարձ կատարել՝ համաշխարհային պատմագիտության եւ աղբյուրագիտության ընդհանուր համատեքստում դիտարկելով այն, ինչ տեղի ունեցավ Խորենացու հետ, ապա կհամոզվենք, որ նա ամենեւին էլ 19-րդ դարում եւ 20-րդ դարամկրին տարածված ծայրահեղ քննադատական մեթոդի միակ զոհը չէր։ Միայն նրան չէ, որ տրվեցին զանազան մերժողական ու ծաղրական որակումներ, եւ միայն նրա երկում չէ, որ բացահայտվեցին, նոր ժամանակների

<sup>1</sup> Տե՛ս A. von Gutschmid, "Über die Glaubwürdigkeit der armenischen Geschichte des Moses von Khoren," *Berichte über die Verhandlungen der königlichen sächsischen Gesellschaft der Wissenschaften zu Leipzig, Phil.-Hist. Klasse*, 28 (1876), էջ 1–43։ Նույն ուսումնասիրությունը լույս է տեսել նաեւ հետեւյալ գրենում։ A. von Gutschmid, *Kleine Schriften*, III, Leipzig, 1892, էջ 282–338։ Հայերեն թարգմանությունը տե՛ս – «Բագմավիկ», 1877, էջ 43–51, 110–116, 213–222, 289–302։

<sup>2</sup> Տե՛ս հատկապես A. Carrière, *Nouvelles sources de Moïse de Khoren*, Vienne, 1893; *Supplément*, Vienne, 1894։ Հայերեն թարգմանությունը՝ Ա. Կարիեր, Նորագոյն աղբերք Մովսեսի Խորենացոյ եւ Յաւելուած, Վիեննա, 1893 և 1894։

ուսումնասիրողի տեսանկյունից, «կեղծարարություններ»։ Նույնպիսի ճակատագրի են արժանացել անգամ հունա-հռոմեական պատմագրության մեծագույն ներկայացուցիչները։ Եվ սա միանգամայն բնական էր ակադեմիական ուսումնասիրությունների աննախադեպ վերելքի ժամանակներում, երբ 18-րդ դարի ուսցիոնալիզմից ծնունդ առած նոր դասական բանասիրությունն ու պատմագիտությունը բուռն զարգացում էին ապրում, եւ ավանդական արժեքներն ամենայն անողոքությամբ վերանայվում էին։

Ֆրիդրիխ Ավգուստ Վոլֆը (1759–1824) կյանքի կոչեց հանրահայտ «Հռմերույան խողիրը», որը նոր դարաշրջան էր նշանավորում<sup>3</sup>։ Նրա քննադատական միտքը ոգեշնչեց գիտնականների մի մեծ բույլ՝ խթանելով բազմաթիվ հիմնարար ուսումնասիրությունների ի հայտ գալը։ Բարիթոլդ Գեորգ Նիբուրն (1776–1831) առաջիններից էր, որ կրել էր Վոլֆի ազդեցությունը<sup>4</sup>, եւ նա էր, որ առաջին անգամ քննական, գիտական մոտեցում մշակեց Հռոմի պատմության հանդեպ՝ զարգացնելով, իր խոսքով ասած՝ «ավելի արժանավատ շարադրանք ստանալու նպատակով աղբյուրները քանդելու եւ վերակառուցելու վերլուծական մեթոդը»<sup>5</sup>։ Մյուս կողմից, սակայն, այդ նույն քննադատական ոգին էր, որ հետագայում, հատկապես 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբներին, վերափոխվեց ժխտողականության՝ որոշ գիտնականների մղելով ծայրահեղությունների։ Արդյոնքում, օրինակ, Հերոդոտոսը հայտարարվեց «ստերի հայր»՝ ի հակագրություն նրա «պատմահայր» մակդիրի։ Նման բնորոշումների դեմ պայքարելու նպատակով շափավորության կողմնակից պատմաբաններն ու բանասերներն այսօր անգամ քիչ զանքեր չեն գործադրում։ Ներկայիս ամերիկյան հայտնի մասնագետներից մեկը՝ Ջեյմս Լուսն, օրինակ, իր «Հույն պատմիչներ» գրքում էջեր է նվիրում «ստերի հայր» պիտակի քննադատության՝ հասկացնելու համար, որ, ի վերջո, «Հերոդոտոսի շատ քիչ սխալները հավասարակշռվում են ճիշտ հաղորդումների մեծ քանակով»<sup>6</sup>։ Արդարացված է արդյոք առաջին հայացքից պարզ ու հնացած թվացող հարցին այսօր այդպես լրջորեն անդրադառնալը։ Անկասկած այս, քանզի, որքան էլ տարօրինակ թվա, հին աշխարհի պատմագիրներին ծայրահեղ գնահատականներ տալը դեռևս հեռու է հեռավոր անցյալի պրակտիկա լինելուց։ 1993 թվականին Ամստերդամում լույս տեսավ Քենդրիք Փրիթչեթի «Հերոդոտոսի սուտասան

<sup>3</sup> Տե՛ս J. E. Sandys, *A Short History of Classical Scholarship (from the Sixth Century BC to the Present Day)*, Cambridge, 1915, pp. 305–309։

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 314։

<sup>5</sup> Տե՛ս այս մասին R. Mellor, *The Roman Historians*, London and New York, 1999, էջ 65։

<sup>6</sup> T. J. Luce, *The Greek Historians*, London and New York, 1997, p. 27 եւ հաջ։

դպրոցը» գիրքը<sup>7</sup>, որտեղ ի մի են բերվում ու քննադատվում 20-րդ դարի երկրորդ կեսում եւ նույնիսկ վերջին տասնամյակներում դեռ Հերոդոտոսին սուտասան հոշակող մի քանի աշխատովթյուններ:

Նման ճակատագրից շի խուսափել նույնիսկ սովորաբար անտիկ աշխարհի ամենից ճշմարտապատում պատմիչներից մեկը (եթե ոչ ամենաճշմարտապատումը) համարվող Թուկիդիտեսը: Հայտնի է 1907 թ. թվականին Լոնդոնում լույս տեսած՝ ֆրենսիս Կորնֆորդի «Թուկիդիտես առասպելների պատմիչը» գիրքը<sup>8</sup>, որտեղ նույն «սուտասան եւ ոչ սուտասան» հակադրության տեսանկյունից քննադատվում է «Պելոպոնեսյան պատերազմի պատմությունը» գլուխգործոցը՝ որպես առասպելների գիրք: Արեւմտյան պատմագիտության մեջ այս մոտեցման յուրատեսակ ամփոփում է համարվում նիկոլ Լողոյի՝ 1980 թվականին լույս տեսած «ողբածն ու այդ օղբածի վերնագիրը. «Թուկիդիտեսը մեր գործընկերը չէ»<sup>9</sup>, այսինքն՝ Թուկիդիտեսն, այնուամենայնիվ, պատմաբան չէ այսօրվա ընկալմամբ: Որպես Թուկիդիտեսի «Պատմության» ուսումնասիրության այս ուղղության ցայտուն արտահայտություն՝ հաճախ է հղվում նաև Վիկտորիա Հանթերի՝ 1973 թվականին լույս տեսած «Թուկիդիտես ճարտար վերապատմողը (կամ զեկուցողը)» գիրքը, որտեղ հեղինակը եզրակացնում է, թե Թուկիդիտեսը «պատմագիրներից ամենապակաս օբյեկտիվն էր», եւ որ անշուշտ «նա գիտնական չէր բառիս 19-րդ դարի իմաստով»<sup>10</sup>: Մնում է միայն տարակուսել, թե մ. թ. ա. 5-րդ դարի հեղինակն ինչո՞ւ եւ ինչպե՞ս պետք է գիտնական լիներ 19-րդ դարի նշանակությամբ:

Տուժածների թվում էր նաև անտիկ պատմագրության մեկ այլ խոշոր ներկայացուցիչ՝ Տակիտուսը: 1910 թվականին լույս տեսած Թոլֆ ֆոն Պյոլմաննի «Տակիտուսի աշխարհայացքը» ուսումնասիրության հիմնական եզրակացությունն այն էր, որ Տակիտուսի աշխարհայացքը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ «զտված եւ չհասունացած կարծիքների մի քառս, հակասությունների խառնաշփոթ»<sup>11</sup>: Ահավասիկ՝ մեկ այլ օրինակ, երբ 19-րդ դարի եւ 20-րդ դարասկզբի ուցիոնալիզմը կիրառվում էր որպես անտիկ հեղինակի մասին դատելու շափանիշ:

Հունա-հոռոմեական պատմիչների հանդեպ գերքննադատական վերաբերմունքը երբեմն-երբեմն դրսեւրվել է անգամ 20-րդ դարի՝ սովորաբար ոչ

<sup>7</sup> W. K. Pritchett, *The Liar School of Herodotus*, Amsterdam, 1985.

<sup>8</sup> F. M. Cornford, *Thucydides Mythistoricus*, London, 1907.

<sup>9</sup> Nicole Loraux, "Thucydide n'est pas un collègue", *Quaderni di Storia* 6 (1980), p. 55 և 81:

<sup>10</sup> V. J. Hunter, *Thucydides, the Artful Reporter*, Toronto, 1973, p. 184:

<sup>11</sup> R. von Pöhlmann, "Die Weltanschauung des Tacitus", *Sitzungsberichte der k. baye-rischen Akademie, Phil.-Hist. Klasse; Abhandlung I* (1910), p. 63:

«ծալրահեղական» համարվող կարկառուն մասնագետների կողմից, ինչպիսին է, օրինակ՝ Մովսես Ֆինլին (մահացել է 1986 թվականին): Նրա խոր ու հիմնարար աշխատությունները հաճախ են հղվում պատմագիտական գրականության մեջ, բայց, դրա հետ մեկտեղ, չի մոռացվում, ասենք, Քսենոփոնի «Հելլենիկայի» մասին նրա արտահայտած կարծիքը «Հույն պատմագիրները. Հերոդոտոսի, Թուկիտիգեսի, Քսենոփոնի ու Պոլիբիոսի էությունը» գրքում: Հստ այդ տեսակետի՝ «Հելլենիկան» մի արժեզուրկ գործ է, «խիստ անարժանահավատ, միտումնավոր, անազնիվ, ընթերցանության համար տաղտկալի եւ ավելի լայն հարցերի վրա շատ հազվագետ լուս սփռող»<sup>12</sup>: Սա ասվում է մի երկի մասին, որն անփոխարինելի աղբյուր է համարվում Պելոպոնեսյան պատերազմին հաջորդած իրադարձությունների համար:

Հաշվի առնելով այսօրինակ փաստերը եւ իսպառ բացակայությունը ուրեւէ գրավականի, թե նման՝ նոր ժամանակների եւ մերօրյա գիտության համար պարտադիր համարվող, սակայն Հերոդոտոսի եւ նրա հաջորդների աշխատաեղանակի հետ ոչ միշտ համատեղելի սկզբունքների վրա հիմնված տարօրինակ դատավճիռները դեռևս չեն բացառվում, գուցե եւ արդարացված են Աբրահամ Տերյանի՝ համեմատաբար վերջերս լուս տեսած հոդվածում մեկ անգամ եւս կրկնվող մի շարք պարզ ու հանրահայտ ճշմարտություններ. ասենք՝ որ «հին պատմիչները պատմաբաններ չեն բառիս ժամանակակից իմաստով»<sup>13</sup>, կամ էլ՝ որ «հարկավոր չէ տարակուսանքով վերաբերվել առասպեկների պատմական արժեքին», քանի որ «առասպելն ինքնին պատմական դեպքերի մասին չի պատմում», եւ այսպիսով՝ Մովսես Խորենացու «Պատմության» առաջին գրքին հիմնականում «պետք է վերաբերվել որպես գրականության եւ ոչ պատմության»<sup>14</sup>:

Պատմիչների արժանահավատության, աշխարհայացքի, աշխատանքային մեթոդների հարցերից բացի, հատկապես վերջինս հետ սերտորեն առնչվող աղբյուրների խնդիրը եւս ոչ միայն խորենացիագիտության, այլեւ առհասարակ դասական բանասիրության ու պատմագիտության գլխավոր թեմաներից մեկն է: Այստեղ պետք է շեշտել անկանխակալության եւ «հավասարակշռվածության» սկզբունքը, որը, սակայն, խախտվել է եւ շարունակում է խախտվել: Ինչպես որ ֆոն Գուգշմիտը մեկ առ մեկ քննել է Խորենացու՝ որպես իր աղբյուրներ մատնանշած գրվածքները՝ մեծ մասամբ չհավատալով, որ նա

<sup>12</sup> M. I. Finley, The Greek Historians: The Essence of Herodotus, Thucydides, Xenophon, and Polybius, New York, 1959, p. 14:

<sup>13</sup> A. Terian, "Xorenac'i and Eastern Historiography of the Hellenistic Period," *Revue des études arméniennes*, NS 28 (2001–2002), p. 101–141 (130):

<sup>14</sup> Նոյն տեղում, էլ 128, 130:

իրոք օգտվել է դրանցից, ճիշտ նույն եղանակով Դետլեւ Ֆելինգն իր «Հերոդուսուր եւ նրա «աղբյուրները» աշխատության մեջ քննադատել է Հերոդոտոսի՝ իր աղբյուրների վկայակոչումները։ Նրա ուսումնասիրության նպատակն էր ապացուցել, որ Հերոդոտոսի «Պատմության» մեջ աղբյուրներից մեջբերումները կեղծ են, եւ որ հեղինակը մոգոնել է դրանք՝ իր տեղեկություններն ավելի արժանահավատ դարձնելու համար<sup>15</sup>։ Ֆելինգի գրքի նման հետազոտությունները կարող են բազում հետաքրքիր դիտողություններ պարունակել, սակայն նրա այն նախապաշտական գործ, բնականաբար մասնագետների մեծ մասի բացասական գնահատականին է արժանանում։

Հին ժամանակների մատենագիրներից թերեւս ոչ մեկին խորթ չեն մարդկային այնպիսի թուլություններ, ինչպես «կեղծելն» ու հորինելը. նրանք հաճախ թաքցնում էին իրենց իրական աղբյուրները կամ գոյություն ունեցող փաստերը հարմարեցնում սեփական նպատակներին (հունա-հռոմեական պատմիչների «հերյուրանքների» եւ նրանց կիրառած հոետորական մեթոդների մասին գրքեր կան գրված. դրանցից հիշատակենք պատմագիտական գրականության մեջ հաճախ հղվող՝ Պիտեր Վայզմանի՝ առաջին անգամ 1979 թ. հրատարակված «Կլիոյի կոսմետիկան» (կամ, հայերեն ոչ այնքան հաջող բառով ասած «գեղարարությունը») գիրքը<sup>16</sup>: Կլիոն, ինչպես հայտնի է, պատմության մուսան էր. գրքի հեղինակը բնորոշ օրինակներով ցույց է տվել, թե ինչպես էին անտիկ պատմիչներն իրենց շարադրանքը կառուցում փաստերը զանազան «կոսմետիկ» մեթոդներով վերափոխումների ենթարկելով։ Պատմագրական երկերում հերյուրելը եւ հոետորական այլեւայլ մեթոդների դիմելը միանգամայն ընդունելի եւ սովորական երեւովթ էր համարում գեռեւս կրկերոնք՝ իր «Հոետորի մասին» երկխոսության մեջ (2.62–64) շեշտելով պատմիչների համար ḥονεντիօ-ի կարեւորությունը, ինչի տակ նա հասկանում էր «հնարամտություն» ու, շափի սահմաններում, «հորինելու ունակություն»։

Բերենք նաև «կեղծարարության» օրինակներ։ Հերոդոտոսը եգիպտացիներին է վերագրում տեղեկությունն այն մասին, թե իբր Քեմմիս կղզին լողում է. իր հաղորդումը նա սկսում է «ինչպես ասում են եգիպտացիները» բառերով, մինչդեռ իրականում նա այդ մասին գիտեր շնորհիվ ոչ թե եգիպտացիների, այլ իր նախորդ Հեկատեոս Միլետացու երկի<sup>17</sup>։ Կամ նույնիսկ Տակիտու-

<sup>15</sup> D. Fehling, *Die Quellenangaben bei Herodot*, Berlin, 1971.

<sup>16</sup> T. P. Wiseman, *Clio's Cosmetics*, Leicester, 1979. տե՛ս նաև A. J. Woodman, *Rhetoric in Classical Historiography*, London, 1988:

<sup>17</sup> Հմմտ. J. Marincola, *Greek Historians, Greece and Rome: New Surveys in the Classics*, № 31, Oxford, 2001, p. 33:

որ, որն, իր իսկ հանրահայտ խոսքով ասած (*Annales 1.1*), գրում էր «առանց զայրութի եւ կողմնապահության» (*sine ira et studio*), բնավ դեմ չէր հանգամանքների բերումով իր աղբյուրներն ու իրականությունը խեղաթյուրելուն, մի երեւութ, որը նրան նվիրված մի նշանակալից նորագույն ուսումնասիրության մեջ որակվում է որպես աղբյուրների «շարամիտ վերամեկնաբանություն» (*malicious reinterpretation*)<sup>18</sup>:

Այսպիսի «կեղծարարություններ», ավելի կամ պակաս շափով, կարելի է գտնել ցանկացած պատմագրական գրվածքում, ինչը շպետք է առիթ տա այս կամ այն հեղինակի պիտակավորման ու պարզունակ ընդհանրացումների, ինչպես, օրինակ, «ստերի հայր»՝ փոխանակ «պատմահայր», կամ Խորենացուն տրված «առաջին կարգի միստիֆիկատոր» հայտնի բնորոշումները<sup>19</sup>: Վաղ անցյալում պատմության ըմբռնումն ավելի լավ հասկանալու եւ արդյունավետ եղանակով գնահատելու համար նախընտրելի է հին ու միջնադարյան պատմագրության մեջ ինչպես առանձին հեղինակների անհատական, այնպես էլ ընդհանուր մեթոդների մանրակրկիտ եւ անկանխակալ քննությունը: Արդեն իսկ այս թեմային նվիրված ծավալուն գրականություն կա՝ Հերոդոտոսի, Պոլիբիոսի, Տիտուս Լիվիուսի եւ այլոց երկերին նվիրված<sup>20</sup>: Մեծ աշխատանք է կատարվել նաև Խորենացու մեթոդների եւ աղբյուրների ուսումնասիրության ուղղությամբ<sup>21</sup>, որը, սակայն, պետք է շարունակել:

Խորենացու եւ անտիկ պատմիչների միջեւ մեր անցկացրած գուգահեռը

<sup>18</sup> C. S. Kraus & A. J. Woodman, *Latin Historians, Greece and Rome: New Surveys in the Classics*, № 27, Oxford, 1997, p. 98:

<sup>19</sup> Moses Khoranats'i, *History of the Armenians*, translation and commentary on the literary sources by R.W. Thomson, Cambridge (Mass.), London, 1978, p. 56 (revised edition: Ann Arbor, 2006, p. 55):

<sup>20</sup> Տե՛ս, օրինակ, P. G. Walsh, *Livy: His Historical Aims and Methods*, Cambridge, 1961; P. Pédech, *La méthode historique de Polybe*, Paris, 1964; D. Lateiner, *The Historical Method of Herodotus*, Toronto, 1989. տե՛ս նաև հետաքրքր քննարկումներ հետևյալ աշխատություններում. T. J. Luce, *The Greek Historians*, p. 20–25, 60–79; R. Mellor, *The Roman Historians*, p. 43–47, 63–70, 88–94, 115–118; J. Marincola, *Greek Historians*, էջ 31–39, եւ ընդհանուր ակնարկ՝ C. W. Fornara, *The Nature of History in Ancient Greece and Rome*, Berkeley, Los Angeles, London, 1983, pp. 47–90 ("Research, Orientation, and Explanation in the Greek and Latin Historians" գլուխը):

<sup>21</sup> Տե՛ս օրինակ, Գ. Սարգսյան, «Աղբյուրների օգտագործման եղանակը Մովսես Խորենացու մոտ». – «Բանքեր Մատենադարանի», հ. 3, 1956, էջ 31–42 եւ Ա. Թոփչյան, Մովսես Խորենացու հունական աղբյուրների խնդիրը, Երևան, 2001. անգլերեն բարեփոխված հրատարակությունը՝ A. Topchyan, *The Problem of the Greek Sources of Movses Xorenac'i's History of Armenia*, Hebrew University Armenian Studies 7, Leuven–Paris եւ Dudley, MA, 2006: Խորենացու աղբյուրների ուսումնասիրության պատմության վերաբերյալ մանրամասն տեղեկությունների համար տե՛ս մեր նշված աշխատության առաջքանը:

պայմանական է: Թերեւս ավելի ճիշտ կլիներ զուգահեռներ փնտրել նրա եւ նրան ժամանակով ավելի մոտ, օրինակ՝ վաղ բյուզանդական հեղինակների միջեւ: Մեր համեմատությունը, սակայն, թուզ է տալիս համոզվել, որ դաժան քննադատությունից շեն փրկվել անգամ հունա-հռոմեական մեծագույն դասականները: Նրանց առիթով էլ, ինչպես Խորենացու դեպքում, բանավիճողներն ընկել են ծայրահեղությունների մեջ. միակողմանի խիստ քննադատություն, կամ, որպես դրա հակակշիռ, քննադատությունից խսպառ զուրկ, «հարյուր տոկոսանոց» վստահություն: Երկարատեւ իրարամերժ ելույթներից հետո, այնուամենայնիվ, անտիկ ու միջնադարյան պատմագրության վերաբերյալ այսօրվա արեւմտյան աշխատություններում ակնհայտորեն գերիշխում է շափակորությունն ու հավասարակշիռ մոտեցում մշակելու պահանջը<sup>22</sup>: Վաղուց արդեն ժամանակն է, որ այդ պահանջը սովորական դառնա նաեւ Մովսես Խորենացուն ուսումնասիրողների համար:

<sup>22</sup> Այդ պահանջը լավ է ձեւակերպված ջ. Մարինկոլայի արժեքավոր ուսումնասիրության մեջ (լրիվ հղումը տե՛ս ծնբ. 17-ում). J. Marincola, *Greek Historians*, p. 31:

## ԿԱՐԵՆ ՄԱԹԵՒՈՍՅԱՆ

### ԳՐԻԳՈՐ ԱՊԻՐԱՏ ՄԱԳԻՍՏՐՈՍԸ ԵՒ ՆՐԱ ՏՈՀՄԸ 11-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Բագրատունյաց ժամանակաշրջանի իշխանական տների պատմությունը դեռևս ամբողջովին չի ուսումնասիրվել: Առավել հայտնին Պահլավունիներն են: 11-12-րդ դդ. մեկ այլ իշխանական տան՝ Հասանյանների կամ Ապիրատյանների վերաբերյալ մինչեւ այժմ կատարված միակ ուսումնասիրությունը պատկանում է Ներսես Ակինյանի գրչին, զետեղված Ներսես Լամբրոնացուն նվիրված մենագրության Գ մասում, որը վերնագրված է «Ազգաբանութիւն Պահլաւունեաց, Հասանեանց, Թոռնիկեանց եւ Հեթումեանց»<sup>1</sup>: Զնայած այս ուսումնասիրության առկայությանը, հետագա շրջանի աշխատություններում Հասանյանները կամ Ապիրատյանները, որպես առանձին իշխանատո՞հմ, գրեթե անտեսվել են<sup>2</sup>: Որոշ դեպքերում նրանք նույնացվել են Պահլավունիների հետ<sup>3</sup>:

Ն. Ակինյանը վերնագրում իշխանական տունը Հասանյան կոչելով տեքստում եւ տոհմածառում նրանց անվանում է Ապիրատյաններ, թերեւս նկատի ունենալով մեծ իշխան Գրիգոր Ապիրատ Մագիստրոսի առանձնահատուկ գերը տոհմի հաստատման գործում: Սակայն բոլորովին վերջերս Գրիգոր Ապիրատի հոր եւ եղբոր մասին ի հայտ եկած մի տեղեկություն փոխում է իրավիճակը եւ թույլ է տալիս նոր մոտեցմամբ քննել ինչպես տոհմի հիմնադրման հարցը, այնպես էլ՝ Գրիգոր Ապիրատի վերելքի մասին Միհիթար Անեցու թողած հայտնի վկայությունը:

Միհիթար Անեցու Պատմությունից (ավարտվել է 1193 թ.), ցալոք, պահ-

<sup>1</sup> Ն. Ակինյան, Ներսես Լամբրոնացի, Վիեննա, 1956, էջ 327-457:

<sup>2</sup> Հայ Ժողովրդի պատմության ակադեմիական հրատարակության մեջ այս տոհմը հիշատակվում է միայն մեկ անգամ. «Աշոտ Գ-ից սկսած հայ թագավորները սկսեցին ազատների (մանր ազնվականության) միջավայրից առաջ բաղեց նոր իշխանական տներ: Աննշան դիրք ունեցող որոշ իշխանական տներ, օրինակ՝ Պահլավունիներն (Աբովյամբենի) ու մասսամբ Ապիրատյանները, շուտով բարձր դիրքի տիրացան» (Հայ Ժողովրդի պատմություն, հ. 3, Երևան, 1976, էջ 267): Հետագա շարադրանքում, սակայն, ոչնիշ չկա իշխանական տան մասին, չի հիշատակվում անգամ մեծ իշխան Գրիգոր Ապիրատի անունը:

<sup>3</sup> Ղ. Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873, Լ. Խաչենեան, Գրիգոր Պահլավունի Մագիստրոս, Լոս Աննելըս, 1987, էջ 20, Ա. Մաքետսյան, Բագրատունյաց Հայատանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Երևան, 1990, էջ 175:

պանվել է միայն սկզբնամասը<sup>4</sup>: 13-րդ դարում Մխիթարի երկից օգտվել են Վարդան Արեւելցին, Մխիթար Այրիվանեցին, Ստեփանոս Օրբելյանը: Հատկապես Վարդանը հրբեմն առանձին հատվածներ բառացի արտագրել է Մխիթար Անեցուց եւ այս ճանապարհով մեզ հասցրել այդ հետաքրքրական պատմության առանձին բեկորներ: Մխիթար Անեցու Պատմությունից քաղված հենց այդպիսի մի հատվածում պահպանվել է եզակի վկայություն Ապիրատ մեծ իշխանի մասին: Հատվածը վերաբերում է Գագիկ Ա. Բագրատունու (989-1020)<sup>5</sup> մահից հետո գահը ժառանգած նրա ավագ որդու՝ Հովհաննես Սմբատի (1020-1041) եւ վերջինիս կրտսեր եղբոր՝ Աշոտի միջեւ ծագած գահակալական կոիվից հետո տեղի ունեցած մի դեպքի: Խազմական բախումն ավարտվել էր 1021 թ., երբ Պետրոս Ա կաթողիկոսի (1019-1054)<sup>6</sup> եւ իշխանների միջնորդությամբ կայացած հաշտությամբ որոշվել էր, որ Հովհաննես Սմբատը պետք է թագավորի Անիում ու նրա շրջակայքում, իսկ Աշոտը՝ թագավորության մնացյալ տարածքներում, որը պատմիները կոչում են «Դրուց աշխարհ»:

Վարդան Արեւելցին Մխիթար Անեցուց օգտվելով պատմում է, որ Թալինի ստորոտում գտնվող իր զորակայանում հիվանդ ձեւանալով Աշոտը խարեռությամբ կանչում ու ձերբակալում է Հովհաննես Սաբատին, նրան տալիս Ապիրատ իշխանին, որ սպանի, իսկ սա հոժարակամ նրան տանում է Անիի իր աթոռը, ասելով, որ չի կարող Աստծո օծյալի վրա ձեռք բարձրացնել եւ նրա տեղը գնել մի խելագարի. «Ոյն այրն (իմա՞ Մխիթար Անեցին) ասէ եւ յաղագս թագաւորին Յովաննիսի, եթէ եղբայր նորա Աշոտ ի յոտս Թալնայ կեղծաւորեալ որպէս հիւանդ մերձ ի մահ, կոչէ զթագաւորն առ ինքն, փորելով ի սնարիցն կուսէ որոգալիս. եւ այնու ըմբռնեալ՝ տայ ի ձեռս մեծ իշխանին Ապիրատն կոշեցելոյ, սպանանել զնա. եւ նա յօժար կամօք յինքն առեալ տանի դնէ յաթոռ իւր յԱնի, ասելով. Զիա՞րդ ձգեցից զձեռս իմ յօժեալ Տեառն, եւ խելագար մի

<sup>4</sup> Մխիթար Անեցի, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, աշխատափրությամբ Հ. Մարգարյանի, Երևան, 1983 (այսուհետեւ՝ Մխիթար Անեցի):

<sup>5</sup> Ըստ Կ. Յովքաշյանի Գագիկ Ա.-ը մահացել է 1017 թ. (Կ. Յօնանյան, Արմանակը մասնակիության պատմություններ, Երևան, 1988, ս. 156).

<sup>6</sup> Գրականության մեջ ընդունված է Պետրոս Գետադրածի մահվան տարեթիվ համարել 1058 թ.: Այն գալիս է Մ. Օրմանյանից, որը տատանվելով տարբեր աղբյուրների հաղորդած 1053 կամ 1054 եւ 1058 թվականների միջև, ընտրել է վերջինը (Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, Ս. Էջմիածնին, 2001, էջ 1460): Սակայն 1053 կամ 1054 թվականի օգտին եղած կովաններն ավելի համոզից են (Տե՛ս Ռ. Վարդանյան, Հայոց տոնացույցը, Երևան, 1999, էջ 563, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ. աշխատափրությամբ Ա. Մաթեոսյանի, Երևան, 1988, էջ 100, 102): Սամվել Անեցու ժամանակագրության հնագույն օրինակում (1176 թ.) Պետրոսի տարիները հասնում են մինչեւ Հայոց ՇԳ (1054) թվականը (Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետեւ՝ ՄՄ), ձեռ. 5619, էջ 97ա):

եղից ի տեղւոց սորա»<sup>7</sup>:

Հաջորդ նախադասությունը վերաբերում է Ապիրատ իշխանի գորացմանը, Կեչառիսի վանքը կառուցելուն. «Զամանէ Ապիրատի մասին – կ. Մ.) ասեն յաննշանից մեծացեալ, եւ վասն խելացի եւ առատ ձեռացն մինչեւ լիներ տէր երկոտասան հազար հեծելոց, որ եւ շինեաց զառւրք ուստոն Կեշառուս, որպէս Վարհամ իշխանն՝ զՄարմաշն»<sup>8</sup> (այս եւ հաջորդ մեջբերումներում ընդգծումները մերն են - կ. Մ.): Անեցի պատմիչի Ապիրատ իշխանի մասին գրած «յաննշանից մեծացեալ» խոսքերը, ուսումնասիրողները, որպես կանոն, վերագրել են նրա տոհմական ծագմանը: Սակայն, ինչպես ստորեւ կտեսնենք, այդ խոսքերը վերաբերում են Գրիգոր Ապիրատին ոչ որպես տոհմապետ, այլ անհատ, որն իր հոր ավագ որդին ու նրա իշխանության ժառանգորդը Ախնելով, «ոչ նշանավորներից» առաջադիմել ու հաջողության էր հասել սեփական խելքով ու առատածեռնությամբ:

Թշնամացած Բագրատունի եղբայրների միջեւ հայտնված մեծ իշխան Ապիրատի արարքը թանկ է նստում իր վրա: Սակայն հետագա անցքերի մասին գրելուց առաջ տեսնենք թե ավելի վաղ շրջանի ինչ փաստեր են հայտնի նրա մասին: Այդպիսիք պահպանվել են վիմագիր արձանագրություններում, ուր իշխանն ի տարբերություն պատմիչների երկերի, հիշատակվում է Գրիգոր անունով եւ մագիստրոս պատվաստիճանով: Հնագույն վկայությունը պահպանվել է Արքականի Ս. Ստեփանոս եկեղեցու կառուցող Գորգ (Գէորգ) քահանայի 1001 թ. արձանագրության մեջ, որը 2002 թ. հրատարակել է Գ. Սարգսյանը: Արձանագրության սկզբում Գագիկ Ա. թագավորի անունից հետո հիշատակվում է Գրիգորը. «...ի ԹԱԳԱԼԻՈՐՈՒԹԵԱՆ ԳԱԳԿԱ ԱՇԽԱՐՁԱԿԱԼԻ, ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՅ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ...»<sup>9</sup>:

Երկրորդ արձանագրությունը գրված է հենց Գրիգորի կողմից, Կեչառիսի վանքի Ս. Գրիգոր մեծապիր եկեղեցու 1003 թ. շինարարական արձանագրության մեջ. «...ի ԹԱԳԱԼԻՈՐՈՒԹԵԱՆ ԳԱԳԿԱ ԵՒ Ի ՀԱՅՐԱՊԷՏՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԲՈՒՐԻ ՍԱՐԳԱՅԻ ԵՍ ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ, ՈՐԴԻ ՀԱՅԱՆԱԼ, ՇԻՆՔՅԻ ԶԼԿՅԱՅԻ ԻՆՉ Ի ԲԱՐԵԿԵՈՍՈՒԹ(ԻԻ)Ն ԵՒ ԻՄ ՊԱՏՐՈՒԻՆ ԵՒ ԻՄ ՈՐԴԵԱՅՆ. ՈՐՔ ԸՆԹՀՈՆՈՅՔ ԶԻՄ ՅԱՂԱԼԻԹՍ ՅԻՇՔՅԵՔ Ի Ք(ՐԻՄՏՈ)Մ ԱՂԱՋԵՄ»<sup>10</sup>:

<sup>7</sup> Վարդան Արեւելցի, Տիեզերական պատմություն, աշխարհաբար թարգմանությունը, Գ. Բ. Թոսունյանի, Երևան, 2001, էջ 102-103 (այսուհետեւ՝ Վարդան Արեւելցի):

<sup>8</sup> Վարդան Արեւելցի, էջ 102-103, աշխարհաբար՝ էջ 139-140:

<sup>9</sup> Գ. Սարգսյան, Գրիգոր-Ապիրատ Հասանյան. Հիմնադիր Կեչառիսի վանքի (վիմագրական նոր վկայություն), «Հին Հայաստանի մշակույթը» ժողովածու 12, Երևան, 2002, էջ 111:

<sup>10</sup> Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 259, Գ. Հովսեփյան, Խաղբակեան կամ Պողեանն Հայոց պատմութեան մէջ, Անրիլիսա, 1969, էջ 159: Արձանագրության թվականի, ինչպես և եկեղեցու պատմի Գրիգոր Մագիստրոս Պահլավունու անունով արձանագրության

Հավանաբար Կեշառիսի մոտերքում է եղել Գրիգոր Ապիրատի նստավայր ամրոցը: Վանքից ոչ հեռու, հարավարեւմտյան ուղղությամբ գտնվող «Խաչեր» անվանվող բարձունքի վրա (Կոտայքի թեմի այժմյան առաջնորդարանի շենքի մոտ) բոլորովին վերջերս բացվել են 11-12-րդ դդ. թվագրվող մի ամրոցի ավերակներ: Իսկ այդ վայրից շուրջ 2-3 կմ արեւելք, Թեղենիսի արեւմտյան բազուկներից մեկի հարթ գագաթին, որը տեղացիները կոչում են «Բերդի գլուխ», հայտնաբերվել են մեկ այլ ամրոցի ավերակներ<sup>11</sup>:

Գրիգոր (Ապիրատ) իշխանի մասին նշում է նաև Մխիթար Այրիվանեցին, որն հավանաբար օգտվել է Մխիթար Անեցուց, բայց նաև մի լրացուցիչ տվյալ է հայտնում. «Ապիրատ իշխան 12 000 հեծելի (տէր). սա շինեաց գԿեշուուս եւ եհան զառուն Երեւանայ»<sup>12</sup>: Այրիվանեցին ավելացնում է իշխանի շինարարական ձեռնարկների թիվը, նշելով Երեւանի ջրանցքի շինարարությունը: Այս տեղեկության հիման վրա Երեւանը համարվել է Գրիգոր Ապիրատի տիրուկիթը<sup>13</sup>:

Այսպիսով՝ Գագիկ Ա-ի ժամանակ նրա ստորակա գլխավոր իշխաններից մեկն էր Հասանի որդի Գրիգորը, որը մագիստրոսական պատվաստիճան ուներ արդեն 1001 թվականին: Հստ Հ. Բարթիկյանի, նշված ժամանակաշրջանում մագիստրոսը բյուզանդական արքունիքի կողմից օտարերկրացիներին տրվող ամենաբարձր պատվաստիճանն էր, որը կրողը նաև ամենամյա դրամական վարձատրություն էր ստանում<sup>14</sup>:

Ն. Ակինյանը ենթադրել է, որ Գրիգորը մագիստրոսի պատիվ ստացել է 1001 թ., երբ բյուզանդական Վասիլ Բ Կայսը (976-1025) Հայաստան է եկել<sup>15</sup>: Սա միանգամայն հավանական է, քանի որ Դավիթ Կուրապաղատի մահից հետո (1000 թ.) նրա տիրուկիթները ժառանգած կայսը, երբ եկավ Հայաստանի արեւմտյան շրջաններ, շրջակայքի մեծ ու փոքր իշխանավորները շտապեցին նրա մոտ եւ զանազան տիտղոսներ ու պատիվներ ստացան: Այս մասին հայտնում է դեպքերին ժամանակակից Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը, անվանապես նշելով առավել կարեւորներին<sup>16</sup>: Հավանական է, որ հենց այս ժամանակ է

Բննուրյունը տև՝ Կ. Մաթեոսյան, Հազարամյա Կեշառիսի հիմնադրման պատմությունից. – «Էջմիածին», 2004, Ա, էջ 77-91:

<sup>11</sup> Գ. Սարգսյան, Հ. Մելքոնյան, Երկու նորահայտ ամրոց Ծաղկաձորում. – «Հայ արվեստ», 2007, թիվ 3-4, էջ 32:

<sup>12</sup> Մխիթար Այրիվանեցի, Պատմություն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 58:

<sup>13</sup> Թ. Հակոբյան, Երեւանի պատմությունը, Երեւան, 1969, էջ 212-213:

<sup>14</sup> Հ. Բարթիկյան, Հայ-բյուզանդական հետազոտություններ, Երեւան, 2002, էջ 669:

<sup>15</sup> Ն. Ակինյան, Գրիգոր Ապիրատ, որդի Հասանայ, Մագիստրոս. – «Ակու», 1945, 9, էջ 12-13:

<sup>16</sup> Հստ պատմիչի՝ կայսեր մոտ է գալիս Նիւրկերտի ամիրան եւ ստանում «զմաժիստոսութեան պատին»՝ նոյնը ստանում է Վրաց Գուրգեն թագավորը, բայց դժոնի է մնում՝

մագիստրոսովթյան պատիվ ստացել նաեւ բազմաքանակ հեծելազոր ունեցող Գրիգորը: Բայց որպեսզի նա մագիստրոսովթյան պատվին արժանանար, պետք է ազնվատո՞մ լիներ եւ որոշակի դիրք ունենար: Ն. Ակինյանն այստեղ է փնտրում Գրիգորի նաեւ Ապիրատ անվան ծագումը, գրելով. «Անունս կարելի չէ ստուգաբանել հայերէն ապիրատ բառով: Թերեւս աղաւաղուած ձեւն ըլլայ ապիպատ պատուանունին, արտասանուած նախ ապիրպատ, ապա ապիրատ, որուն նպաստած կարող է ըլլալ ապիրատ բառը: Բայց թէ Ապիրատ ընդունա՞ծ էր Բիւզանդիոնի արքունիքէն «ապիպատ» տիտղոսը, չէ վկայուած: ... Գրիգոր եւ Ապիրատ մէկ անձնաւորութեան կրած երկանուններն են»<sup>17</sup>:

Հայկական աղբյուրներում Ապիրատ անունով հիշատակվող առաջին մարդը Գրիգոր իշխանն է, ուստի այդ տարօրինակ անվան ծագումը հավանաբար կապված է հենց նրա կենսագրության հետ, բայց առայժմ հիմնավոր բացատրություն չունի<sup>18</sup>: Ինչպես տեսանք Կեշառիսում նա իրեն կոչում է «Հասանի որդի Գրիգոր Մագիստրոս» (1003 թ.), Գորգ քահանան նրան անվանում է «Գրիգոր՝ Հայոց Մագիստրոս» (1001 թ.): Ստորեւ կտեսնենք, որ իշխանին Գրիգոր Մագիստրոս անունով է հիշատակում նաեւ նրա գուստը Տեկորի 1042 թ. արձանագրության մեջ:

Իշխանին միայն Ապիրատ անունով հիշատակող առաջին պատմիշները՝ Մատթեոս Ուռհայեցին եւ Միկիթար Անեցին, իրենց երկերը գրել են իշխանի մահից համապատասխանաբար շուրջ 110 եւ 170 տարի անց: Հնարավոր է, որ պատմիշները նախընտրել են իրեն Գրիգոր Մագիստրոս անվանող իշխանի երկրորդ՝ Ապիրատ անունը նշել՝ նույնանուն Գրիգոր Մագիստրոս Պահլավունի

---

«անարգանս իւր համարեալ զմամիստոսութեան պատին»: Գագիկ Ա.-ն կայսեր մոտ չի զնում «իբրեւ փոքրութիւն համարեալ զգնալն իւր առ նա», բայց նաեւ արգել չի հանդիսանում, որ իւր հպատակները գնան, ինչպես օրինակ իւր քողովունի Աբուսամիլը (Մտեփանոս Տարոնեցի Աստղիկ, Պատմութիւն ախեզերական, ՍՊԲ, 1885, էջ 276-278):

<sup>17</sup> Ն. Ակինյան, Ներեւս Լամբրոնացի, էջ 373:

<sup>18</sup> Հ. Անայյանը գրում է. «Ա.ՊԻՐԱ.Տ, արյոնք հայերեն ապիրատ «անարդար» բա՞ն է. եւ ինչպե՞ս կարող էր այսպիսի մի հոռի ածական մարդու անուն դառնալ: Այս անունը գործածական էր մեր մեջ ԺԱ-ԺԳ դարերում» (Հ. Անայյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երեւան, 1942, էջ 193): Հ. Անայյանը ավելացնում է, որ Ապիրատ անունը հանդիպում է նաեւ «Վրաց մեջ»՝ վկայակոչելով Վարդան Արեւելցու պատմության մի հատված, ուր գրված է, որ Գրիգոր Բշնեցին իւր հետ վերցնում է «Վրաց Ապիրատ իշխանին» ու երկու այլ մագիստրոսների եւ կոիվ մղում սեղուկների դեմ (Վարդան Արեւելցի, էջ 142): Սակայն շարունակության մեջ «Վրաց իշխանի» անունը կիպարիտ է: Սա հայտնի դեպք է, վկայված նաեւ այլ աղբյուրներում և վերաբերում է 1048 թ. Բասենի դաշտում տեղի ունեցած հակատամարտին, որին բյուզանդական կողմից մասնակցում էին Կատակալոն, Ահարոն, Գրիգոր մագիստրոսները եւ Վրաց կիպարիտ իշխանը (Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 449): Արեւելցու պատմության հրատարակության համար հիմք ծառայած ձեռագրերում գրշական սխալ է սպրեկ, եւ կիպարիտը դարձել է Ապիրատ, հետեւարաց «Վրաց մեջ» Ապիրատ անուն չկա:

(Բջնեցի) հանրահայտ իշխանի անվան հետ շփոթությունից խուսափելու համար:

Հետեւելով Ն. Ակինյանին՝ վիմագրերում Գրիգոր Մագիստրոս, իսկ պատմիչների մոտ Ապիրատ անվանվող իշխանին, սկզբնաղբյուրների ներդաշնակցման համար նպատակահարմար ենք գտնում կոչել Գրիգոր Ապիրատ:

### **Գրիգոր Ապիրատի հայրը եւ եղբայրը**

Ինչպես տեսանք կեշառիսի շինարարական արձանագրության մեջ Գրիգոր Ապիրատը հիշատակում է հորը՝ Հասանին: Մատթեոս Ուռհայեցին նույնպես նշում է նրա անունը. «Ապիրատ ոմն, որ էր մեծ իշխան Հայոց, որդի Հասանայ»<sup>19</sup>:

Ն. Ակինյանը գրում է. «Հասան, սա հայրն էր Ապիրատի. իր մասին աւելի բան չենք գիտեր»<sup>20</sup>: Բարեբախտաբար բոլորովին վերջերս Մատենագարանի ձեռագրերից մեկում (թիվ 3681) հայտնաբերվեց Հասանի անվան մեկ այլ հիշատակություն Հավուց թառի առաջնորդ նախանայելի (14-րդ դ.) Սամվել Անեցու ժամանակագրության մեջ կատարած հավելման շնորհիվ: Պարզվում է, որ Հասանի զավակն է եղել նաև Քեղի (Քեղի) ամրոցի տեր իշխան Գեւորգը, որը 1002 թ. կառուցել է Հավուց թառի Կաթողիկե եկեղեցին: Մինչեւ այժմ Միսիթար Այրիվանեցու կարճ հաղորդմամբ հայտնի «Շինի եւ Հաւուց թառն ի Գէորգեայ իշխանէն Քեղւոյ»<sup>21</sup> տեղեկությունը նախանայելը հարստացրել է Գեւորգ իշխանի ծագման մասին շափազանց արժեքավոր վկայությամբ՝ «Գէորգ իշխանց իշխանն, որդի Հասանայ, եղբար Ապիրատին...»<sup>22</sup>:

Գրիգոր Ապիրատի եւ Քեղի ամրոցի տեր Գեւորգ իշխանի եղբայրներ լինելու հանգամանքի բացահայտման շնորհիվ պարզ է դառնում, որ Հասանը նույնպես իշխան էր, եւ որ Միսիթար Անեցու Գրիգոր Ապիրատի վերաբերյալ ասած՝ «յաննշանից մեծացեալ», չի վերաբերում նրա տոռմի ծագմանը: Միաժամանակ, հիմնավորված են դառնում Հասանի որդիների զորության մասին վկայությունները: Մասնավորապես, պատմիչների հաղորդումները, թե Գրիգոր Ապիրատը տեր էր 12 000 հեծյալի, չափազանցություն էր թվում: Մինչդեռ այժմ պարզ է դառնում, որ Հասանի որդիների իշխանությունը տարածվում էր Վարաճնունիքից (Կեշառիս), մինչեւ Երեւան, որտեղ ջրանցք էր կառուցել Գրիգոր Ապիրատը, հասնում Հավուց թառ ու Քեղի, որը սահմանակից էր Դվինի

<sup>19</sup> Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն (աշխարհաբար թարգմանությունը եւ ծանոթագրությունները Հ. Բարթիկյանի), Երևան, 1991, էջ 16 (այսուհետեւ՝ Ուռհայեցի):

<sup>20</sup> Ն. Ակինյան, Ներսես Լամբրոնացի, էջ 373:

<sup>21</sup> Միսիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն Հայոց, էջ 57:

<sup>22</sup> ՄՄ, ձեռ. թիվ 3681, էջ 78ա:

ամիրայությանը: Այսպիսի տարածքի վրա իշխողները կարող էին նշանակալից զինուժ ունենալ: Համեմատության համար նշենք, որ Բջնիի տեր Վասակ Պահավունու (Գրիգոր Մագիստրոս Պահավունու հոր) մասին ասվում է, որ նա իր տրամադրության տակ ուներ «...արք իբրեւ հինգ հազար»<sup>23</sup>:

Գետրգի մասին ավելացնենք, որ նախանայել Հավուցթառեցու հայտնածի համաձայն իշխանը ոչ միայն կառուցել է Հավուց թառի ինը խորանով Կաթողիկե եկեղեցին (այժմ՝ ավերված է), այլեւ վանքին զգալի նվիրատվություններ կատարել, այդ թվում Գողթ գյուղը, որ նա գնել էր Գագիկ Ա. թագավորից ու նրա որդուց՝ Հովհաննես Սմբատից. «Գէորք իշխանաց իշխանն, որդի Հասանայ, եղբար Ապիրատին վերըստին նորոգեց զնախաղրական հոչակաւոր սուրբ ուխտն զՀաւուց թառ եւ շինեց զփառաւոր գհրաշալի Կաթողիկէն Թ. (9) խորանաւ: Եւ արար գանձագին զմերձակա գեղն զԿոխթ ի Գագիկ շահանշահէ եւ Յովանիսէ եւ ետ Հաւուց թառոյ Սուրբ Կաթողիկէին հայրենիք եւ ետ ի հայրենից(ա)ց իւր զԳետոց վանսն եւ զՀովայսն վանքագեղ եւ ժողովեաց Գձ. (300) կրաւաւոր»<sup>24</sup>:

Գետրգ իշխանի ժամանակ Հավուց թառի ծաղկման մասին նշում է նաև Մանուել Բջնեցին (15-րդ դ.), իր գանձում. «Ճմեծդ մենաստան, զոր կանգնեաց արքայն եւ Գէորգ իշխան...»<sup>25</sup>: Նրա մոտ բավական խառն են տեղեկությունները վանքի նշանավոր «Ամենափրկիշ» կոչվող սրբազն խաչի վերաբերյալ, որի կապակցությամբ նշում է բյուզանդական Վասիլ կայսեր եւ Գետրգ իշխանի անունները, բայց հիմնական գերը վերապահում է Գրիգոր Մագիստրոս Պահավունուն, որը հետագայում առաջացած ավանդության արդյունք է<sup>26</sup>:

Հնարավոր է, որ այդ ավանդության առաջացմանը նպաստել է Հավուց թառում «Գրիգոր Մագիստրոսի» անունով եղած 1013 թվականի արձանագրությունը (քարը կորել է, պահպանվել է միայն տեքստը), որը վերաբերում է «Ամենափրկիշ» նվիրատվությանը: Որոշ ուսումնասիրողներ այն կեղծված

<sup>23</sup> Ուսհայեցի, էջ 16:

<sup>24</sup> ՄՄ, ձեռ. հ<sup>մբ</sup> 3681, էջ 78ա, Կ. Մաքետսյան, Հավուց թառի վանքի եւ Ապիրատյան տոհմի պատմության նորահայտ տվյալներ. – «Բանքեր Մատենադարանի», հ. 17, Երեսան, 2006, էջ 147-167: Գանձագին արված Գողթից բացի իշխանն իր սեփականությունից վանքին է նվիրել Կոտայքի Ովա գյուղը (Հովհաննես Դ Ովայեցի կաթողիկոսի ծննդավայրը), որպես «վանքեղ»:

Նարանայելը Գետրգ իշխանի մասին բողել է նաև մի հիշատակում, ըստ որի Հավուց թառը «նորոգեաց սպարապետն Հայոց Գորք իշխանն» (Գ. Յովսեփեան, Յիշատակարան՝ ձեռագրաց, հ. Ա, Անրիլիսա, 1951, էջ 663):

<sup>25</sup> Գ. Հովսեփյան, Հավուց Թառի ամենափրկիշը եւ նոյնանուն հուշարձաններ հայ արվեստի մեջ, Նյութեր եւ ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Բ, Երեսան, 1987, էջ 92:

<sup>26</sup> Կ. Մաքետսյան, Հավուց թառի վանքի..., էջ 165-166:

արձանագրություն են համարել<sup>27</sup>: Արձանագրության տեքստը հավանաբար հետագայում միջամտության է ենթարկվել: Սկզբում ասվում է. «Թթիին նկԲ (1013) ի ԹԱԳԱՀՈՐՈՒԹԵԱՆՆ ԳԱԳԿԱՅԻ ԵՒ Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆՆ ՏԵԱՌՆ ՍԱՐԳՍԻ, ԵՍ ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ ՎԵՐՍԻՒՆ ՇԻՆԵՑԻ ԶԵԿԵՂԵՑԻ ՅԻՇԱՏԱԿ ԻՆՉ ԵՒ ԾՆՈՂԱՑՆ ԻՄՈՅ...»<sup>28</sup>, այնուհետեւ երկարաբան ոճով պատմվում է շրջակայքի «գանձագին» արվելու եւ վանքին նվիրաբերվելու<sup>29</sup>, ինչպես նաև Քրիստոսի՝ փայտից փորագրված «անձեռագործ սուրբ պատկերի» նվիրատվության մասին:

Գեւորգ իշխանի տոհմաբանության մասին նորահայտ տեղեկության շնորհիվ ակներեւ է, որ եթե Հավուց թառում եղել է 1013 թվականի մի արձանագրություն Գրիգոր Մագիստրոսի անունով, ապա նա վանքի հովանավոր իշխանի եղբայր Գրիգոր Ապիրատն է, որն ինչպես տեսանք, 11-րդ դարի աղբյուրներում հիշատակվում է միայն Գրիգոր Մագիստրոս անունով: Հնարավոր է, որ հենց այդ անունն էլ շփոթեցրել է հետագայի հեղինակներին, որոնց իմացած «Գրիգոր Մագիստրոսը» միայն Պահապանի (Քնեցի) իշխանն էր, ուստի «Ամենափրկիշին» վերաբերող պատմությունները «ծաղկեցրել են» հենց Պահապանի իշխանի կենսագրության տվյալներով:

Վերադառնալով Մանուել Բջնեցու հաղորդմանը՝ նշենք, որ թեեւ նա երկար բարակ պատմալով Գրիգոր Մագիստրոս Պահապանու մասին, այնուամենայնիվ գրում է, որ Ամենափրկիչն ընծայել են Վասիլ կայսրն ու Գեւորգ իշխանը («Մեզ տըւեալ ընծայաբայէն Վասլայ եւ Գորգ իշխանալ»): Բայց ավելի ուշագրավ է իշխանի ծագման մասին հեղինակի ակնարկը՝ «...Գէորգ իշխանի սստ Բագրատունի»<sup>30</sup>: Դժվար է ասել՝ արդյոք 15-րդ դարում ապրող հեղինակը որեւէ աղբյուր ունեցել է այդ արտահայտության համար, թե՞ այն պարզապես թելագրվել է շափածո ստեղծագործության գովաբանական ոճով:

Յավոք հայտնի չէ Հասանի հոր անունը<sup>31</sup>: Ինչ վերաբերում է տոհմանվա-

<sup>27</sup> Ա. Ակինյան, Գրիգոր-Ապիրատ, որդի Հասանա, Մագիստրոս, էջ 118, Գ. Սարգսյան, Հավուց թառի հիմնադրման վկայագրի շուրջ. – «ՀՀ ԳԱ. Լրաբեր հաս. զիտ.», 1988, № 4, էջ 70:

<sup>28</sup> Գ. Հովսեփյան, Հավուց Թափի ամենափրկիշը..., էջ 6:

<sup>29</sup> Արձանագրության շարունակությունը՝ «...գանձագին արարի զվայրս սորա լեռամբն եւ դաշտամբն եւ ամենայն կազմուրեամբն որ ի սմա», համեմատելի է Վահրամ Պահլավունու՝ Մարմաշնի 1029 թ. արձանագրության մի հատվածին՝ «...լիացուցաք ամենայն գոյիմ, լեռամբ եւ դաշտամբ, ասանդեցաք ի սա գեղս եւ ազարակս գանձագինս...» (Աբել Միիքարեանց, Տեղագրութիւն Մարմաշնոյ վանացն ի Շիրակ, Վաղարշապատ, 1870, էջ 10):

<sup>30</sup> Գ. Հովսեփյան, Հավուց Թափի ամենափրկիշը..., էջ 91:

<sup>31</sup> Հրապուրիշ է բվում ենթադրել, թե Հասանի նախնիներից էր Աշոտ Երկարի (914-929) հավատարիմ զորական, ականատես պատմիշ Հովհաննես Դրասիանակերացու բնու-

նը, ապա մինչեւ այժմ մասնագիտական գրականության մեջ հավասարապես կիրառվող «Հասանյան» կամ «Ալիքիրատյան» տարբերակներից պետք է ընտրել առաջինը: Բանն այն է, որ մինչ այժմ Գրիգոր Ալիքիրատն էր համարվում տոհմը բարձրացնող, հետեւաբար իշխանական տան հիմնադիր<sup>32</sup>, բայց այժմ, նրա եւ Գեւորգ իշխանի եղբայրներ լինելու հանգամանքի բացահայտմամբ մեծանում է Հասանի կշիռը, որպես տոհմապետ: Նշենք նաև, որ այս տոհմի կրտսեր ներկայացուցիչներին անդրադառնալիս՝ պատմիչները նրանց նախնիների թվարկումը հասցնում են մինչեւ Հասանի անունը: Օրինակ՝ Մատթեոս Աւոհայեցին Գրիգոր Ալիքիրատի թոռանը ներկայացնում է հետեւյալ կերպ. «...քաջ զորականն եւ մեծ հաւատացեալն Գրիգոր, որդի Վասակայ, որդի Ալիքիրատին՝ որդոյ Հասանայ, յազգէ քաջանց...»<sup>33</sup>: Պատմիչը եւ նրան հետեւելով Ամբատ Սպարապետը, նույն հետադարձ թվարկումն են անում այս Գրիգորի եղբորը՝ Քարսեղ Անեցի կաթողիկոսին ներկայացնելիս<sup>34</sup>:

Քեղիի տեր Գեւորգ իշխանի ժառանգների մասին մինչ այժմ ոչինչ հայտնի չէր, սակայն հոր անվան հայտնի դառնալով, այժմ հնարավոր է նրանց փնտրել հենց նույն Հավուց թառում: Վանքի տարածքում սելցուկյան տիրապետության շրջանից պահպանված միակ արձանագրությունը, որը խաչքարի վրա է, հետեւյալ բովանդակությունն ունի. «Յիշէ Քրիստոս զՀասան, զորդի Ամբատա, զծառա քո եւ ողորմեա նմա, ամեն, թվ. ՇԼ. (1081) էր»<sup>35</sup>: Եթե նկատի ունենանք հաճկական իշխանական տոհմերի մոտ ավագ թոռանը պապի անունով կոչելու կայուն սովորությունը<sup>36</sup>, ապա կարող ենք ենթադրել, որ Գեւորգ

թագրմամբ՝ թագավորի պատվավորներից («ուն ի պատուատրաց») Գեւորգը (հետագայում Մարզպետունի կոչված): Ուշագրավ է, որ նա հիշվում է հենց Քեղի ամրոցում, երբ մոտեցող արաբներին պարտության է մատնում բերդից դրս գալով ու համարձակուեն նրանց վրա հաճակվելով (Հովհաննես կաքողիկոս Դրախմանակերտացի, Հայոց պատություն, աշխարհաբար թարգմանությունը եւ ծանոթագրությունները Գ. Թոսունյանի, Երեսան, 1996, էջ 356-357): Սակայն այդպիսի ենթադրության համար լրացնիշ փաստարկներ են պետք:

<sup>32</sup> Կ. Մարեսոյան, Հազարամյա Կեշառիսի հիմնադրման պատմությունից, էջ 82:

<sup>33</sup> Ռոմեայեցի, էջ 288:

<sup>34</sup> Նոյն աելում, էջ 226, Սմբատայ Սպարապետի տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 82:

<sup>35</sup> Գ. Հովհաննես, Հավուց Թափի ամենափրկիշը..., էջ 17: Գ. Հովհաննեսը, որը վանքը Պահապանիներինն էր համարում, Հասանին եւ Սմբատին այդ ազնվականական տոհմի ներկայացուցիչներ է կարծում (նոյն աելում, էջ 20):

<sup>36</sup> Կիլիկյան հայկական ազնվական տոհմերին անդրադառնալով՝ Լ. Տեր-Պետրոսյանը գրում է. «Մեծ հոր եւ անդրանիկ թռոան անունների նոյնությունը խարցած ավանդույթը էր հայ միջնադարյան ազնվական գերդաստաններում: Համենայն դեպս Ռուբինյան եւ Հերումյան ընտանիքների ազգաբանությունն այս առումով համարյա բացառություն շի հանաշում. բոլոր այն դեպքերում, երբ հաստատված է, որ թռոն անդրանիկն է, նա անպայման կրում է պապի անունը...» (Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակրիները եւ հայերը, հ. Բ, Երեսան, 2007, էջ 79):

իշխանի որդին կրել է պապի անունը՝ Հասան, եւ նրա ժառանգներն են Սմբատն ու վերջինիս որդի Հասանը: Անուղղակիորեն այս ենթադրության օգտին է խոսում այն, որ Գրիգոր Ապիրատի երկու որդիները Ապլչահապ եւ Վասակ անուններն ունեին: Գրիգոր Ապիրատն իր զավակներից մեկին հոր անունով Հասան չի անվանակոչել ամենայն հավանականությամբ այն պատճառով, որ իր ավագ եղբոր՝ Գեւորգի որդին կրում էր այդ անունը:

Կարծում ենք, որ հենց այս համատեքստում պիտի որոնել Գրիգոր Ապիրատի մասին ասվածը, թե նա «յաննշանից մեծացեալ, եւ վասն իւելացի եւ առատ ձեռացն մինչեւ լիներ տէր երկոտասան հազար հեծելոց»: Հավանորեն նա Հասանի կրտսեր որդին էր եւ մինչ Գեւորգը ավագության իրավունքով ժառանգել էր հոր իշխանությունն ու Քեղի բերդը, իր որդուն էլ կոշել նրա անունով Հասան, կրտսեր Գրիգորն իր խելքով ու ձեռներեցությամբ «ոչ նշանավորներից», կամ «փոքրերից» բարձրացել ու տեր էր դարձել բազմաքանակ հեծելագորի:

Հավուց թառի խաչքարի առնչությամբ ավելացնենք, որ այն հավանաբար պատահականորեն չի կանգնեցվել հատկապես 1081 թվականին: Այդ տարի Գրիգոր Ապիրատի թոռը՝ Բարսեղը, Հաղբատում կաթողիկոս ձեռնադրվելով, մեծ շուրջով եկավ Անի, եւ ինչպես Մատթեոս Ռուհայեցին է գրում «...եղեւ օրն այն օր մեծ եւ ուրախութիւն ամենայն Տանն Հայոց, վասն զի տեսին նորոգեալ զաթոռ հայրապետութեանն ի քաղաքն յԱնի»<sup>37</sup>: Եթե Հավուց թառի արձանագրության մեջ հիշված Սմբատը Քեղիի տեր Գեւորգի թոռն էր, ապա նրա ու Բարսեղի պապերը, փաստորեն, եղբայրներ էին, եւ հավանական է, որ Սմբատի որդի Հասանը 1081-ին խաչքար կանգնեցնելով յուրովի արձագանքել է կաթողիկոսական աթոռի Անիում վերահաստատվելու տոնին, որի գլխավոր դերակատարն իր տոհմակիցն էր:

#### **Գրիգոր Ապիրատի վախճանը**

Ինչպես Մխիթար Անեցու հայտնածից իմացանք, Գրիգոր Ապիրատը Հովհաննես Սմբատ թագավորին Աշոտի դատաստանից ազատելով տանում է Անի: Աշոտի տեսանկունից՝ դավաճանական, իսկ Հովհաննես Սմբատի տեսանկունից վեհանձն այդ արարքից հետո Գրիգոր Ապիրատը հայտնվում է դժվարին կացության մեջ: Նա այլեւս չէր կարող վերադառնալ իր գերակացի մոտ (նրա կալվածքները գտնվում էին «Դրուց աշխարհում»), ոչ էլ կարող էր Անիում մնալ, քանի որ դրանից կարձ ժամանակ առաջ Աշոտի զորքի հետ ծանր կո-

<sup>37</sup> Ոտեայեցի, էջ 236-238:

րուստներ էր պատճառել անեցիներին<sup>38</sup>: Այս իրավիճակում, հատկապես Աշութի վրեժիսնդրությունից խուսափելու համար, Գրիգոր Ապիրատն ընտանիքով ու զորքով հանդերձ հարկադրված էր հեռանալ Բագրատունիների տիրությունից: Մատթեոս Ուռհայեցու վկայությամբ նա ապաստան է գտնում Դվինի ամիրա Ապուսուարի մոտ, որը Շագրադյան Աբովյանի ամիրան է: Հստ պատմիչի, սա սկզբում լավ է ընդունում Ապիրատին, սակայն շարախոս մարդիկ նրան զգուշացնում են, որ բազմաքանակ զորքով իր մոտ գտնվող իշխանը վտանգ է ներկայացնում, եւ նա գավադրաբար սպանում է Ապիրատին: Իշխանի զորավար Սարին վերցնում է Ապիրատի կնոջն ու երկու որդիներին գալիս Անի, ուր Հովհաննես Ամբատ թագավորը գրկաբաց է ընդունում նրանց եւ վերջիններիս գավառներ ու իշխանություն շնորհում: Պատմիչը գրում է. «Իսկ յայս աւուրս Ապիրատ ոմն, որ էր մեծ իշխան Հայոց, որդի Հասանյ, սա վասն Աշոտոյ միաբանութեանն, զոր ունէր յառաջագոյն, երկուդեալ ի թագաւորէն Յովհաննիսէ, ապստամբեալ փախեաւ ի նմանէ եւ գնաց ի Դուին քաղաք, առ Ապուսուար զօրաւարն Պարսից եւ երկոտասան հազար ձիաւորք լնդ նմա. Եւ Ապուսուար մեծաբեալ զնա բազում աւուրս: Յայնժամ մատեան առ Ապուսուար շարախուք ոմանք եւ ասէն, եթէ «Այսպիսի այր յաղթող եւ զօրաւոր եւ զօրօք բազմօք եկեալ է առ քեզ, կորուստ գործէ քեզ եւ ամենայն տանս Տաճկաց»: Յայնժամ ոխս առեալ ամիրային ի սիրտ իւր եւ գաղտ յայլ զօրացն ի զրոյց սիրոյ կոչեաց զԱպիրատն եւ ի ծածուկ կորոյս զայնպիսի այր քաջ, հզօր եւ անուանի ի մէջ ամենայն աշխարհին Հայոց:

Իսկ իշխան ոմն Սարի անուն, որ էր զօրավար մեծ իշխանին Ապիրատին, առեալ զկին եւ զորդիս նոցա եւ զհեծելագունդ զօրսն եւ գնաց ի քաղաքն յԱնի. Եւ թագաւորն Յովհաննէս կարի յոյժ ապաշտէր գանիրաւ մահն Ապիրատին Հայոց իշխանին: Եւ որդեաց նորա Ապլջահապայ եւ Վասակյ, եւ Սարէ եւ զմենայն զօրացն տայր թագաւորն Հայոց գաւառս եւ զիշխանութիւնս»<sup>39</sup>:

Եթե հայտնի շիներ Միխթար Անեցու պատճածը Թալինի դեպքի մասին, Ուռհայեցու հաղորդածի սկիզբն ու վերջը ոչ մի կերպ չէր կապակցվի: Այսինքն՝ եթե Ապիրատը ապստամբել ու փախել էր Հովհաննես Ամբատից, ինչու պիտի վերջինս այդպես ողբար իշխանի «անիրաւ» կորուստը եւ նրա գավակներին էլ կալվածքներ ու իշխանություն տար:

<sup>38</sup> Աշոտի հաղթանակի մասին Ոտիայեցին է գրում. «Եւ եղեւ յատու այնմիկ սաստիկ պատերազմ եւ դարձուցին զմաղաբն ի փախուստ, մինչ զի փախուցեալքն ոչ ժամանին մտանել ի բաղաբն, այլ յԱխուրան զետն անկանին, եւ դարձաւ Աշոտ մեծաւ յաղբութեամբ» (Ոտիայեցի, էջ 14):

<sup>39</sup> Ոտիայեցի, 1991, էջ 16-17: Ապիրատի հետ պատահածի մասին, Ոտիայեցուց օգտվելով, հակիրճ պատմում է նաև Սմբատ Սպարապետը (Սմբատայ Սպարապետի տարեգիրք, էջ 6):

Ուռհայեցին եւ Մխիթար Անեցին այս դեպքերի թվականը չեն նշում։ Բայց Ուռհայեցու մոտ այս տեղեկությունը գետեղված է մի հատվածում, ուր խոսվում է 1021 թ. տեղի ունեցեած անցքերի մասին։ «Թագաւորք վերջինք Բագրատունիք» բնագրի վերջում ավելացված անանուն հեղինակի փոքր ժամանակագրության մեջ արձանագրված է Ապիրատի մահվան թվականը. «ՆՀ. (1021) Թուրքն եհար զԱպիրատն»<sup>40</sup>։ Այս տեղեկությունը, նույն թվականով, մուծված է նաեւ Սամվել Անեցու ժամանակագրության այն օրինակում, որը շարունակել է Ստեփանոս Օրբելյանը. «Թուրքն էհար զԱպիրատն»<sup>41</sup>։

Հարկ է նշել, որ Աբովյանավար Շագդադյանի իշխանության սկիզբը Դվինում համարվում է 1021 կամ 1022 թվականը<sup>42</sup>։ Փաստորեն, Գրիգոր Ապիրատն Աբովյանավարի մոտ է գնացել նրա Դվինում հաստատվելու առաջին տարում<sup>43</sup>։

Գրիգոր Ապիրատի սպանության պատմության մեջ շատ պարզունակ է թվում պատմիչի բացատրությունը, թե Շագդադյան ամիրան իշխանին սպանում է «չարախոս մարդկանց» լսելով<sup>44</sup>։ Զի բացառվում, որ Աբովյանավարն Ապիրատին սպանել է Աշոտի գրդամբ կամ էլ վերջինիս հաճոյանալու համար։ Մի բան հստակ է, որ հետագայում նրանց հարաբերությունները սերտացել են այնքան, որ Աշոտն իր դստերը (որն իր մոր՝ Կատրամիդեի անունն էր կրում)<sup>45</sup>

<sup>40</sup> Մանր ժամանակագրություններ, 13-18-րդ դդ., հ. 2, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երեւան, 1956, էջ 502։

<sup>41</sup> Ժամանակագրութիւն Ստեփանմասի Օրբելյանի, հրատարակության համար պատրաստեց Ա. Աբրահամյանը, Երեւան, 1942, էջ 12։

<sup>42</sup> Մունաջջիմ Բաշիի վկայությամբ՝ Աբովյանավարը մահացել է 1067 թ. նոյեմբերին, իսկ նրա իշխանությունը տեսել է 46 տարի։ Այս մասին նշելով՝ Ա. Տեր-Ղետնյանը գրում է. «...ուստի 46 տարի ես գնալով կատանամ մոտավորապես 1022 թ., որպես Դվինում նրա իշխանության սկիզբը» (Ա. Տեր-Ղետնյան, Արարական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երեւան, 1965, էջ 209)։ Գոյզե մեկ տարվա տարբերությունն այստեղ այնքան էլ կարեւոր չէ, սակայն Աբովյանավարի մահվան թվականից նրա իշխանության տարիների թվով հետ գնալու դեպքում ստանում ենք 1021 թ. (1067-46=1021)։

<sup>43</sup> Աբովյանավարից առաջ Դվինում մի կարև շրջան անիշխանություն է եղել (Ա. Տեր-Ղետնյան, Արարական ամիրայությունները..., էջ 208)։

<sup>44</sup> Եթե Ապուտաւարի մտավախությունը Դվինում Քրիստոնյա զորքի ներկայությունը լիներ, ապա պիտի միայն Ապիրատի սպանությամբ շբավարավեր։ Սակայն ուրիշ զոհներ չեն եղել. Հաստ երեսույթին ժամանակակիցների համար պարզ եւ որոշ իմաստով հասկանալի է եղել, որ Գրիգոր Ապիրատն իր գերակային՝ Աշոտին դավանանելու համար վերջինիս վրեժինդրության զոհն է դարձել։ Իսկ իշխանի ընտանիքն ու զորքը անարգել հեռացել է Դվինից եւ գնացել այնտեղ, ուր նրանց (արդեն առանց Ապիրատի) պատրաստ էին գրկաբաց ընդունելու Անի։

<sup>45</sup> Նրա անունը հիշվում է Կատա կրնատ ձեւով (Վարդան Արեւելյի, էջ 126, Կ. Մաթեոսյան, Անի. Եկեղեցական կյանքը եւ ձեռագրական ժառանգությունը, Ս. Էջմիածին, 1997, էջ 347-348):

կնության է տվել Աբովյանավարին<sup>46</sup>: 1030-ականներին այս ամուսնությունինց ծնված նրանց որդին՝ Մանուչեն Անիի տերը դարձավ 1065-ին<sup>47</sup>: Հետաքրքիր է որ վերջինիս եւ Գրիգոր Ապիրատի զավակների միջեւ հետագայում թշնամություն չի եղել: Դվինում կատարված գեպքից շուրջ շորս տասնամյակ անց, երբ սեղուկների ձեռքն անցած Անին հանձնվեց Մանուչենին, վերջինս քաղաք հրավիրեց Գրիգոր Ապիրատի որդուն՝ տարեց Վասակին եւ նրա որդի Գրիգորին: Երիտասարդ ամիրան քաղաքից դուրս գալով եւ ընդառաջ գնալով դիմավորեց նրանց ու բերեց Անի: Իսկ վերջիններս, ընդունելով Մանուչենի գերիշխանությունը, հավատարմորեն ծառայեցին նրան:

### Գրիգոր Ապիրատի զավակները

Կեչառիսի 1003 թ. արձանագրության մեջ Գրիգոր Ապիրատը հիշատակում է իր որդիներին, հետեւաբար ենթագրելի է, որ Ապլշահապն ու Վասակն այդ ժամանակ արդեն ծնված էին (եթե ուրիշ զավակներ չի ունեցել): Դատելով Ռւոհայեցու մոտ նրանց անունների հիշատակման հերթականությունից, Ապլշահապն ավագն է եղել:

Սակայն նրանց անդրադառնալուց առաջ հիշատակենք Գրիգոր Ապիրատի գստերը, որն իր մասին հիշեցնում է Տեկորի 1042 թ. արձանագրության մեջ. «Ես Տիկ(ն)աց Տիկին, գուստը Քրգորոյ Մագիստրոսին եւ ամուսին Սարգսի Արեւելից Վեստիս...»<sup>48</sup>: Ուսումնասիրողները հաճախ նրա հորը թյուրիմացաբար նույնացրել են Գրիգոր Մագիստրոս Պահլավունու (Քնեցու) հետ<sup>49</sup>, մինչդեռ Պահլավունի իշխանը մագիստրոսի պատիվ ստացել է ավելի ուշ՝ 1045-ին:

Ոմանց կարծիքով արձանագրության մեջ բացակայում է իշխանուհու անունը, «Տիկնաց տիկինը» համարում են մեծարական դիմելածեւ, ինչպես օրինակ Գրիգոր Պահլավունու քույրն է Բագնայրի արձանագրություններից մեկում գրում. «Ես Սեղա տիկնաց տիկին»<sup>50</sup>: Սակայն կար նաև «Տիկնացտիկին» անձնանուն, կրծատ ձեւը՝ Տիկնաց<sup>51</sup>, եւ Գրիգոր Ապիրատի գուստրը, մեր

<sup>46</sup> Լաստիվեցի, էջ 62, Կ. Յօզբայն, Արմանական պատմություններ, մաս 1, 167-168.

<sup>47</sup> Հ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի եւ Վրաստանի ժամանակակից պատմության մի խանի հարցեր, Երևան, 1980, էջ 86:

<sup>48</sup> Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 135:

<sup>49</sup> Լեռ, Անի, Երևան, 1963, էջ 322-327, Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 148, Կ. Յօզբայն, Արմանական պատմություններ, մաս 1, 161, եւ այլն:

<sup>50</sup> Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 113:

<sup>51</sup> Հ. Անայիկանը «Տիկնաց» անձնանվան մասին գրում է. «անշուշտ տիկնաց տիկին ձեւից՝ կրնատմամբ» (Հ. Անայիկան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ե, Երևան, 1962, էջ 153):

կարծիքով, հենց այդ անվան կրողն էր:

Ն. Ակինյանը գրում է. «1021-ին երբ Ապիրատ սպանուեցաւ Ապուսուարէն, Վասակ եւ Ապլահապ վերադարձան Անի. Յովհ. Սմբատ սիրով ընդունեցաւ զանոնք եւ յանձնեց հաւանօրէն անոնց քրոջ, որ կինն էր Վեստ Սարգսի»<sup>52</sup>: Սակայն դժվար է ստույգ ասել, որ 1021-ին Տիկնացտիկինն արդեն Վեստ Սարգսի կինն էր: Գրիգոր Ապիրատի մահից հետո երբ նրա զավակներն Անի եկան, Հովհաննես Սմբատն իր խնամակալության տակ առավ նրանց եւ հնարավոր է, որ հենց այդ ժամանակ էլ իշխանագույն ամուսնացրեց Սարգսի հետ, որը մեկն էր «ի գլխաւոր ազատացն Հայոց»<sup>53</sup>:

Հովհաննես Սմբատի մահվան ժամանակ Վեստ Սարգսիը նրա հոգաբարձուն էր<sup>54</sup>: Նա տեր էր մի շարք բերդերի, կառուցել է Խճկոնքի վանքը, իսկ Ծառաբարի վանքը բերդի վերածել (բերդը հիշատակվում է նաև Մաղասբերդ անունով): Հովհաննես Սմբատի մահից հետո նա փորձեց գրավել թագավորական գահը, բայց անհաջողության մատնվեց: Հայտնի չէ, թե Անիի բյուզանդական նվաճումից հետո ինչ է եղել Վեստ Սարգսի հետ: Սակայն հետաքրքիր է, որ հետագայում Ծառաբար բերդն անցել է նրա կնոջ տոհմակիցներին<sup>55</sup>:

Այժմ տեսնենք թե ինչ ճակատագիր ունեցան Գրիգոր Ապիրատի որդիները՝ Ապլահապը եւ Վասակը:

1045-ին Անին ընկնում է բյուզանդական տիրապետման տակ, Մոնոմախ (1042-1054) կայսեր հրավերով Կոստանդնուպոլիս մեկնած երիտասարդ Քաղիկ Բ-ին արգելվում է Հայաստան վերադառնալ: Մեկ տարի անց բյուզանդացիները Անիից հեռացնում են նաև Պետրոս կաթողիկոսին եւ իրենց 19 ամյա տիրապետության ժամանակ ոչ նրան, ոչ էլ հաջորդ կաթողիկոս հաշիկ Անեցուն չեն թողնում քաղաք վերադառնալ:

Գրիգոր Պահապունին թեեւ նույնպես թողնում է հայրենի կալվածքը՝ Բջնին, սակայն մագիստրոսի պատվաստիճան է ստանում<sup>56</sup>, նշանակվում Տա-

<sup>52</sup> Ն. Ակինյան, Ներսես Լամբրոնացի, էջ 390:

<sup>53</sup> Արհստակիսի Լաստիվերցոյ Պատմություն (աշխատասիրությամբ՝ Կ. Յուղբաշյանի), Երևան, 1963, էջ 57:

<sup>54</sup> Արհստակիսի Լաստիվերցոյ Պատմություն, էջ 57:

<sup>55</sup> Անեցիների կողմից 1186 թ. Ծառաբարի գրավման առնչությամբ Վարդան Արեւելցին եւ «Պատմութիւն Բաղամին յԱնոյ» երկը նշում են, որ բերդը Անիի Սարգիս Բ եպիսկոպոսի տոհմի սեփականությունն էր. «ԶՃԼԵ. (1186)...ի սոյն բովս... հարեան զօրօֆ Բաղամացին յԱնոյ եւ գնացին ի վերայ ամուր բերդին, որ Ծառաբար անուանի, որ էր բնիկ սեփական եւ Ժառանգութիւն աեառն Բարսովի կարողիկոսին հարցն եւ եղբարցն...» (Միսիքար Անեցի, էջ 109-110, Վարդան Արեւելցի, էջ 136):

<sup>56</sup> «Գրիգոր որդիի բաջին Վասակայ... զնաց առաջի թագաւորին եւ... տայ զբանալին Բջնոյ զբագաւորն եւ զամենայն զիւր զիայրենի ժառանգութիւնն եւ... առնու զպատիւ մազիս-

րոնի ու Հայկական Միջագետքի կուսակալ եւ, փաստորեն, դառնում է Հայաստանում ամենաազգեցիկ հայագիտ գործիչը<sup>57</sup>:

Այդ շրջանում կայսրությունն ընդգծված պայքար էր սկսել Հայոց եկեղեցու դեմ<sup>58</sup>: Խաչիկ Անեցու մահից հետո (1065), երբ բյուզանդացիները փորձում էին արգելել նոր կաթողիկոսի ընտրությունը, հայության միասնական ջանքերով հնարավոր դարձավ հաղթահարել այդ արգելքը: Գրիգոր Մագիստրոս Պահլավունու Վահրամ որդին Գրիգոր անունն ընդունելով դարձավ Հայոց կաթողիկոս (Գրիգոր Բ Վկայասեր):

Այս շրջանում Գրիգոր Մագիստրոս Պահլավունին փորձել է արքունիքում ունեցած իր կապերն օգտագործելով արտօնություններ ստանալ նաեւ առանձին վանքերի համար: Այդ առանձնաշնորհին արժանանում են երկու վանք՝ Մարմաշենը, որ հիմնել էր իշխանի հորեղբայր սպարապետ Վահրամ Պահլավունին եւ Կեչառիսը<sup>59</sup>, որի հիմնադիր Գրիգոր Ապիրատի երկու զավակներն իր կեսաներն էին:

Գրիգոր Ապիրատի որդիների եւ Գրիգոր Բջնեցու դուստրերի ամուսնության մասին<sup>60</sup> ն. Ակինյանը գրում է. «Վկայուած է, թէ Վասակի կինը Գրիգորի դուստրն է, բայց լուած է պատմութիւնը ի մասին Ապլշահապի: Մինչ Վասակ մնաց Արեւելք (Անի, Խաչէնք), Ապլշահապ կերեւայ թէ 1045-ին իր աներոշ հետ գալթեց Միջագետք եւ տիրացաւ այնտեղ Ծովք ամուր բերդին»<sup>61</sup>: ն. Ակինյանի այն ենթադրությունը, որ հենց Գրիգոր Ապիրատի որդի Ապլշահապն է եղել Գրիգոր Բջնեցու դուստրերից մեկի ամուսինը, որից ծնվել են նրանց Ապիրատ, Գրիգորիս, Վահրամ, Վասակ զավակները, միանգամայն տրամաբանական է: Բնութագրական է հատկապես Ապիրատ հազվագյուտ անունով անդրանիկ որդու անվանակոչությունը, որի մասին նրա զավակը՝ Ներսէս Շնորհալին գրում է. «Զնախնական անուն առեալ, որ Ապիրատն էր յորչորչեալ»<sup>62</sup> («Նախնա-

**առօսութեան** եւ տեղիս բնակութեան ի սահմանս Միջագետաց...», Արիստակիսի Լաստիվեցոյ Պատմութիւն, էջ 62:

<sup>57</sup> Հետաքրից է, որ Միիբար Այրիվանեցին, այս իրավիճակն ընդհանրացնելով, գրում է. «Իսկ Եսուննմասին, որ կալաւ զ՞ազիկ բազատրն՝ ետ զիշխանութիւն երկրիս Գրիգորյ Մագիստրոսի...» (Միիբար Այրիվանեցի, էջ 58):

<sup>58</sup> Կ. Մաքետսյան, Անի, էջ 36-47, 193:

<sup>59</sup> Կ. Մաքետսյան, Հազարամյա Կեչառիսի հիմնադրման պատմությունից, էջ 77-91:

<sup>60</sup> Այդ ամուսնությունները տեղի են ունեցել առնվազն 1030-ական թվականներին, եթե նկատի ունենանք Գրիգոր Պահլավունու տարիքը, որը 1021 թվականին՝ Գրիգոր Ապիրատի ու նաեւ իր հոր՝ Վասակի մահվան ժամանակ, բավական երիտասարդ էր:

<sup>61</sup> Ն. Ակինյան, Ներսէս Լամբրնացի, էջ 379-380, Բ. Կիվեսէրեան, Ծովք (Ծովք-Տլու և Հոռմ-Կլայ), Վիեննա, 1904, էջ 10-16:

<sup>62</sup> Ներսէսի Շնորհալայ Բանի շափա, Վենետիկ, 1928, էջ 601:

կան», այսինքն՝ նախնյաց, հալրենի)՝<sup>63</sup>: Սակայն տարօրինակ է, որ Ապլշահապ անունն այս տոհմի սերունդների մեջ այլեւս չի կիրառվել: Ապլշահապին չի հշատակում նաեւ իր տոհմի անցյալը հանգամանորեն ներկայացնող ներսես Շնորհալին, որի պապն էր՝<sup>64</sup>:

Քանի որ կաթողիկոսական իշխանությունը շարունակելու տեսակետից Շնորհալու համար չափազանց կարեւոր էր իր եւ ավագ եղբոր՝ Գրիգորի՝ Պահլավունյաց (Ա. Գրիգոր Լուսավորչի) տոհմից սերված լինելն ընդգծելը, նա հատուկ տեղ է տալիս դրան՝<sup>65</sup>, սակայն նշում է, որ մայրական գծով են կապված եղել Պահլավունյաներին: Ինչպես երեւում է Գրիգոր (Հետագայում՝ Գրիգոր Գ Պահլավունի, նաեւ Փոքր Վկայասեր կոչված) եւ Ներսես Շնորհալին կաթողիկոսական բարձր գիրքի համար իրենց հոր՝ Ապիրատի մայրական պապին պարտական լինելով եւ հայրապետական աթոռի նկատմամբ իրենց ժառանգական իրավունքն անվիճարկելի պահելու մղումով, առանձնապես չեն անդրադարձել իրենց հայրական տոհմին: Պատմիչ Սամվել Անեցին, որ իր ժամանակագրությունը կազմել է Գրիգոր Գ-ի պատվերով, 1113 թ. տեղի ունեցած նրա աթոռակալությունը ներկայացնելով կաթողիկոսի ծագման մասին միայն նշում՝

<sup>63</sup> Նոր բառզիրք հայկակեան լեզուի, հ. Բ, Վենետիկ, 1837, էջ 401:

<sup>64</sup> «Վիպասանուրին նախնի ըստ Հոմերի սկսեալ ի վերսատ» երկում Ներսես Շնորհալին պատմում է իր տոհմի մասին, գովարանական ոնով անդրադառնում է Գրիգոր Մագիստրոս Պահլավունու գործունեությանը, նկարագրում նրա Վահրամ որդու կաթողիկոսանալը (Գրիգոր Վկայասեր), որի ժողովուն էր ինքը: Շնորհալին, որ այնքան սիրով է հիշատակում իր հոր՝ Ապիրատին, զարմանալիորեն չի տալիս նրա հոր անունը, եւ դա այն դեպքում, երբ հիշատակում է Ապիրատի մայրական գծով պապին՝ Գրիգոր Մագիստրոս Պահլավունուն ու անգամ վերջինիս հորը՝ Վասակին (Ներսեսի Շնորհալոյ Բանք շափա, էջ 587-588): Եթե մի պահ ենթադրենք, որ Գրիգոր Բջնեցու դստեր ամուսինը Ապլշահապը չէր, ինչն ակնարկում է Վ. Վարդանյանը («Ծովիթ Պահլավունիները դարաշրջանի որոգայթերում»). – ՀՀ ԳԱԱ. պատմության ինստիտուտ, Հայոց պատմության հարցեր, թիվ 8, Երևան, 2007, էջ 47-48), այլ մեկ ուրիշը, միեւնույն է, նրա անունը, փաստուեն, իր սերունդները մոռացության են մասնել, որի ստույգ պատճառն անհայտ է: Բայց, որ այդ մարդն Ապլշահապն էր, երեւում է ոչ միայն այն բանից, որ նա իր ավագ որդուն իր հոր հազվագյուտ անունով Ապիրատ է կրչել, այլև հարակից փաստերից: Ապլշահապի որդի Ապիրատի որդի Գրիգոր Գ կաթողիկոսը 1120-ական թվականներին մտադիր էր հաստատվել Անիում: Մինչ այդ Անիում արռողջապահ վերջին կաթողիկոսը Ապլշահապի եղբայր Վասակի որդի Բարսեղ Ա-ն է եղել (որն Անիից հեռացել է 1105-ին): Սամվել Անեցին գրում է, որ Գրիգոր Գ-ն Անիի, այսինքն՝ Բարսեղ Ա-ի արքող համարում է իր «սեփական» արքողը: Դա անհնարին կիներ, եթե նա Բարսեղի տոհմակիցը չիներ: Խոկ Ներսես Շնորհալին Բարսեղ Ա. Անեցուն համարում է իր նախնին եւ «արենառուն», այսինքն՝ արյունակիցը (Ներսեսի Շնորհալոյ Հայոց կաթողիկոսի բուղթ, էջ 8):

<sup>64</sup> Ռուհայեցի, էջ 238:

<sup>65</sup> Հատկանշական է 1166 թ. ապրիլի 17-ին Հռոմելայում կաթողիկոսական ձեռնադրության ժամանակ Ներսես Շնորհալու արտասանած նախի այն հատվածը, որը վերաբերում է նրա նախնիներին՝ Գրիգոր Լուսավորչից մինչեւ Գրիգոր Վկայասեր եւ Բարսեղ Անեցի (Ներսեսի Շնորհալոյ Հայոց կաթողիկոսի բուղթ, Վենետիկ, 1875, էջ 8):

է. «...Տէր Գրիգորիս մեծաշուրջ պատուով նստեալ յաթոռ վիճակի Սրբոյն Գրիգորի Հայաստանեայցս լուսաւորչի. որ յազգէ նորին հարազատութեան ճանաշի»<sup>66</sup>: Հետաքրիր է, որ «Պատմութիւն Սրբոց Հարցն մերոց» ուշագրավ բնագրում Գրիգոր Գ-ի հայր Ապիրատ իշխանը համարվում է ոչ թե Գրիգոր Վկայասերի քրոջ զավակը, այլ եղբորորդին<sup>67</sup>: Կաթողիկոսական իշխանության փոխանցումը այսօրինակ ուղիղ (արական գծով) ժառանգականությամբ շատ ցանկալի պիտի լիներ Գրիգոր Գ-ի եւ նրա եղբոր՝ Ներսես Շնորհալու, ինչպես նաև նույն տոհմից սերող մյուս կաթողիկոսների համար: Հարավոր է, որ նրանց ժամանակ էլ շրջանառվել է Գրիգոր Վկայասերի եւ Ապիրատի հոր եղբայրներ լինելու մասին կեղծ տեղեկությունը, որը տեղ է գտել վերոնշյալ (հավանաբար 12-րդ դարի վերջերի) բնագրում:

Զի բացառվում, որ իր հետնորդների կողմից մոռացության մատնված Ապլչահապը բավական վաղ է մահացել: Նման ենթագրության օգտին է խոսում այն, որ նրա կրտսեր եղբայր Վասակն իր ամենակրտսեր որդուն (դատելով Ուռհայեցու թվարկումից)<sup>68</sup> կոչել է Ապլչահապ, գուցե ի հիշատակ մահացած եղբոր:

Հավանաբար Ապլչահապի զավակները մանուկ հասակից մնացել են մայրական պապի՝ Գրիգոր Մագիստրոս Բջնեցու խնամքին: Մասնավորապես այդ իմաստը կարելի է տեսնել Ներսես Շնորհալու խոսքերում, որը Գրիգոր Բջնեցու՝ իր հոր՝ Ապիրատի նկատմամբ վերաբերմունքը բնութագրում է «Հօրն մերոյ նա հայր եղեալ, ըստ մայրականն մեջնորդեալ»<sup>69</sup> բառերով: Այսինքն՝ մայրական պապն է, որ հայրություն է արել իր հորը:

Հատկանշական է, որ Գրիգոր Բջնեցու որդին՝ Գրիգոր Վկայասերը, նույնպես շատ կապված է եղել հատկապես իր այս քրոջ ընտանիքի ու նրա

<sup>66</sup> Սամուկի բահանայի Անեցոյ Հաւամմունի ի գրոց պատմագրաց՝ յաղագս գիտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրամաղ արարեալ, յառաջաբանով եւ ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893, էջ 122, Հմմտ., ՄՄ, ձեռ. թիվ 5619, էջ 101թ-102ա: Անիկի պատմության դրվագները ներկայացնելիս Սամվել Անեցին ընդհանրապես չի նշում Գրիգոր Գ-ի արական գծով նախնիներից որեւէ մեկին: Հասանյանները շեն հիշատակվում նաև այլ առիթներով: Օրինակ, գրելով որ Մարմաշենը հիմնադրել է Վահրամ Պահլավունին, Բագնայրը՝ Միքատ Մագիստրոսը, Խծկոնքը՝ «Անձապատիվ» Վեստ Սարգիսը եւ այլն, Սամվել Անեցին ոչինչ չի գրում Կեշառիսի հիմնադրման կամ Հավոց բանի մասին: Հայտնի է, որ Ժամանակագրությունը կազմելիս Անեցին առաջնորդվել է պատվիրատուի նախամիքուրյուններով ու ցանկություններով (Կ. Մաքետսյան, Սամվել Անեցին Անիկի պատմության մասին. – «Եղմիածին», 2006, Բ-Գ, էջ 72-85):

<sup>67</sup> «Իսկ աէր Վահրամ (Գր. Վկայասեր – Կ. Մ.) եւ զմանուկն Գրիգորիոս, զորդի Ապիրատին եղօրուրդոյ իւր, յանձնեալ աէր Բարսի ուաման դպրութեան, զի ետ մահուան իւրոյ նստուցի արոռն» (Տէ՛ս Լ. Տէր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, հավելված 1, էջ 512):

<sup>68</sup> Ուսհայեցի, էջ 238:

<sup>69</sup> Ներսեսի Շնորհալոյ Բանի շափա, էջ 587-588:

շրու զավակների հետ: Վկայասերն էր, որ քրոջ զավակներից մեկին՝ Գրիգորիսին, իր հետ Կոստանդնուպոլիս տարավ, ապա կաթողիկոս դարձրեց Եգիպտոսում եւ շուտով պաշտոններ ապահովելով այնտեղ ուղարկեց նրա եղբայրներին՝ Վահրամին եւ Վասակին<sup>70</sup>, հոգ տարավ նաեւ եղբայրներից ավագի՝ Ապիրատի զավակների համար՝ կտակելով, որ նրա Գրիգոր որդուն (Գրիգոր Գ) փոխանցվի հայրապետական աթոռը: Ավելացնենք, որ երբ հանգամանքների բերումով այդ պատգամի կատարումը տեղի ունեցավ Գրիգորի համար շատ վաղ տարիքում, ժամանակակիցները շառարկեցին գլխավորապես այն պատճառով, որ նրան համարեցին «ընտրեալ ի սուրբ ազգէ»<sup>71</sup>, այսինքն՝ Ս. Գրիգոր Լուսավորչի տոհմից:

Ապլօահապի որդի Ապիրատից սկզբնավորված այս տոհմաճյուղի ներկայացուցիչները Հայոց կաթողիկոսական աթոռն իրենց ձեռքում պահեցին 90 տարի, մինչեւ Գրիգոր Զ Ապիրատի (1194-1203) աթոռակալությունը<sup>72</sup>: Նրանք իրենց համարում էին Ս. Գրիգոր Լուսավորչի տոհմակիցներ՝ Պահլավունիներ եւ հաջորդաբար բազմում կաթողիկոսական աթոռին տոհմական ժառանգականության իրավունքով: Կաթողիկոսական այս տոհմի անդամներին ն. Ակինյանն անվանում է «պատվաստված Պահլավունիներ»<sup>73</sup>:

Գրիգոր Ապիրատի կրտսեր որդին՝ Վասակն իր որդիների հետ առաջնակարգ դեր ստացավ Անիում հատկապես բյուզանդացիների հետանալուց հետո, Շաղդապյանների տիրապետության շրջանում: 1064 թվականին Անին գրավեց սելջուկ սուլթան Ալփասլանը եւ քիչ անց այն տվեց Արուլասվարի՝ Աշոտ Դ-ի աղջկանից ծնված որդուն՝ Մանուչեհն: Վերջինիս տիրապետության եւ Հասանյաններին քաղաք հրավիրելու մասին ուշագրավ տեղեկություն է պահպանվել Վարդան Արեւելցու պատճության մեջ: Նա գրում է, որ Մանուչեն «...յաւելոյր ի պարիսպն Անոյ եւ յամրութիւնս նորա. եւ ած ի քաղաքն զամե-

<sup>70</sup> Ն. Ակինյան, Ներսես Լամբրոնացի, էջ 380-385:

<sup>71</sup> Գ. Յովսիիեան, Յիշատակարանմ ձեռագրաց, էջ 422:

<sup>72</sup> Նախ հաջորդաբար Հայոց կաթողիկոս դարձան իշխան Ապիրատի որդիներ Գրիգոր Գ Պահլավունին 1113-1166 թթ. եւ նրա եղբայր Ներսես Դ Կայեցին (Նորհալի) 1166-1173 թթ.: Մրանց Վասիլ Եղբոր որդին էր կաթողիկոս Գրիգոր Դ Տղան (1173-1193), Վասիլի դուսեր որդին էր Գրիգոր Ե Քարավեծ (1194) կաթողիկոսը, իսկ Զորավար Եղբոր որդին էր կաթողիկոս Գրիգոր Զ Ապիրատը (1194-1203): Զորավարի դստեր՝ Նահանդուխարի և իշխան Օշինի որդին էր Կիլիկիայի հայտնի եկեղեցական գործիչ Ներսես Լամբրոնացին:

<sup>73</sup> «Պատուաստուած Պահլավունիներ» վերնագրի տակ ն. Ակինյանը գրում է. «Պահլաւունիներու արական զիձը շիշաւ Գրիգոր Մագիստրոսի թռոներու մէջ, որոնմ շրողուցին ժառանգք: Բայց պահլաւական արինը պատուաստուեցաւ ուրիշ իշխանական տուներու, որոնմ պարծեցան Պահլաւունի ծագումով: Այդ պատուաստումը կատարուեցաւ միջնորդութեամբ հշնեցի Գրիգոր Մագիստրոսի երեխ դրաստերու, որոնմ հարս գացին Ապիրատեանց և Թոռնիկեանց» (Ն. Ակինյան, Ներսես Լամբրոնացի, էջ 372-373):

նայն մնացեալ իշխանսն, որպէս եւ մեծաւ հանգեսիւ ընդ առաջ ելեալ մուծանէր ի ներքս զԳրիգոր զորդին Վասակայ, զթոռն Ապիրատին. զոր ասեն ունել ի գլուխ ազատականացն հինգհարիւր թագս երեւելիս. զի տէր էր մեծ զօրաց եւ բազում ազատաց: Եւ էր եղբայր տէր Բարսղի, որ զկնի Գէորգեայ ձեռնադրեցաւ ի Հաղբատ կաթողիկոս հրամանաւ եւ կամօք Մանուչէին եւ ամենայն Հայոց: Եւ շինեցաւ քաղաքն Անի ոչ ինչ պակաս քան զառաշինն»<sup>74</sup>:

Շատ հնարավոր է, որ այս հատվածը եւս Վարդան Արեւելցին քաղել է Մխիթար Անեցու պատմությունից: Այդ մասին է հուշում նախորդ հատվածի հետ համեմատությունը: Երկու դեպքում էլ պատմիչն օգտագործում է «ասում են թե» արտահայտությունը («զսմանէ ասեն», «զոր ասեն»), մեծարական խոսքերով է ներկայացնում Հասանյանների զորությունը (մի դեպքում նշելով տասներկու հազար հեծյալներին, մյուս դեպքում՝ հինգ հարյուր «թագակիր» ազատներին): Նկատենք, որ Մխիթարի ժամանակ Անիի եպիսկոպոսն այս նույն տոհմի ներկայացուցիչ Բարսեղ Բ Անեցին էր: Եւ վերջապես, Անիի կյանքի մասին Մխիթարի պատմությունն էր ամենահավաստի աղբյուրը, որին կարող էր վստահել Վարդան Արեւելցին: Հատվածի ավարտական նախադասությունն էլ դրա հավաստումն է: Մանուչէի ժամանակ Անիի վերաշինումը «ոչ պակաս քան նախակինը», մի պատասխանատու հայտարարություն էր, որ 13-րդ դարում ապրող Վարդան Արեւելցին դժվար թե իրեն թույլ տար, եթե լավատեղակ աղբյուրից չքաղեր այդ միտքը:

Հիշալ հատվածը մի շարք կարեւոր հանգամանքներ է պարզում: Նախ այն, որ բյուզանդական տիրապետության շրջանում եւ Ալփասլանի սելցուկան ներխուժումից հետո Վասակն ու նրա որդի Գրիգորը կարողացել են պահպանել իրենց զինական ուժն ու զորությունը<sup>75</sup>: Նրանք նոր պայմաններին հարմարվելով կարողացել են բանակցային ճանապարհով համաձայնության գալ Մանուչէի հետ եւ ընդունելով նրա գերակայությունը Անի վերադառնալ: Դա տեղի է ունեցել Մանուչէի իշխանության անցնելուց կարճ ժամանակ անց, քանի որ արդեն 1072 թ. Վասակի որդին՝ Բարսեղը, Անիում եպիսկոպոս է ձեռնադրվել:

Վկայությունից պարզվում է, որ Անի վերադառնալու ժամանակ թեեւ Վասակը ողջ էր, սակայն գուցե ծերության պատճառով, առաջնությունը զիշել էր ավագ որդուն՝ Գրիգորին: Նույն հատվածից երեւում է, որ Բարսեղի կաթողիկոսական ձեռնադրությունը (1081) տեղի է ունեցել նաեւ Մանուչէի կամքով

<sup>74</sup> Վարդան Արեւելցի, Էջ 108:

<sup>75</sup> Հայտնի է, որ Հայաստանում բյուզանդական տիրապետությունը հատկանշվում էր հայկական զինվորականության կազմալուծման բաղամականությամբ (Հայ ծողովրդի պատմություն, հ. 3, Էջ 434-435):

«Հրամանաւ եւ կամօք Մանուչին»:

Մինչեւ Վասակի որդիներ Գրիգորի ու Բարսեղի գործունեությանը ծանոթանալը անդրադառնանք Բաղաց (Սյունիքի) թագավորության վերջին գահակալներից մեկի՝ Սենեքերիմի սպանության մասին Վարդան Արեւելցու եւ Միթար Այրիվանեցու մոտ պահպանված մի տեղեկության, որն առանձին մեկնաբանության կարիք ունի:

Վերը նշված՝ Մանուչի ժամանակ Հասանյանների Անի գալու մասին հատվածից անմիջապես առաջ Վարդան Արեւելցու մոտ կարդում ենք հետեւյալը. «Ի հինգ հարիւր քառասուն եւ երեք (1094) թուին առաքեաց Փատլուն ամիրայն Գանձակայ զՎասակ Պահլաւ՝ որդի Գրիգորոյ Մագիստրոսի, ամենայն զօրօքն Առանայ յանառիկ յամուրսն Բաղաց եւ Կապանին, որ եւ խաբեութեամբ հնարեալ մտին անդր եւ սպանեալ զՍենեքերիմ արքայն Հայկագնի...»<sup>76</sup>: Սենեքերիմի սպանության մասին ավելի հանգամանորեն պատմում է Ստեփանոս Օրբելյանը, ըստ որի, այն տեղի է ունեցել ոչ թե Վասակի, այլ նրա որդու՝ Գրիգորի հարկադրական մասնակցությամբ (այդ մասին՝ քիչ հետո): Սակայն այս հատվածը հետաքրքրական է նրանով, որ այստեղ Վասակի հայր՝ Գրիգոր Ապիրատը, ներկայացվում է Գրիգոր Մագիստրոս անունով, ինչպես որ վերը նշված 11-րդ դարի արձանագրություններում: Այս տեղեկությունն Արեւելցին վստահաբար Միթար Անեցուց չի քաղել, քանի որ վերջինս, ինչպես տեսանք, իշխանին կոչում է Ապիրատ:

Գրիգոր Մագիստրոս անվան առկայությունն այս հատվածում ոմանց թյուրիմացության մեջ է գցել, ենթադրել տալով, որ խոսքը նույնանուն Պահլավունի (Բջնեցի) իշխանի մասին է, մանավանդ որ Վասակի անվան կից նշված է «Պահլաւ»: Սակայն Գրիգոր Մագիստրոս Պահլավունու Վասակ անունով որդին հեռավոր Անտիոքի դուքսն էր եւ դավադրաբար սպանվել է 1078 թվականին<sup>77</sup>: Հ. Մանանդյանը գրում է. «Վարդանը եւ Միթար Այրիվանեցին կարծում են սխալմամբ, որ այս արշավանքի ժամանակ Փատլունի գորավարն էր Գրիգոր Մագիստրոսի որդին՝ Վասակ Պահլավունին»<sup>78</sup>: Սակայն հիշալ պատմիչները շեն սխալվում, պարզապես նրանց ունեցած սկզբնաղբյուրը Գրիգոր Մագիստրոս նախնական անունով է կոչել Վասակի հորը՝ Գրիգոր Ապիրատին: Իսկ Վասակին նրանք իրավունք ունեին նաեւ «Պահլաւ» կոչելու, քանի որ վերջինիս մայրը Գրիգոր Բջնեցու դուստրն էր: Ախալմունքը միայն նրանում է, որ հիշալ դեպքերի մասնակիցը ոչ թե Վասակն էր (նա այդ ժամանակ առնվազն

<sup>76</sup> Վարդան Արեւելցի, էջ 108:

<sup>77</sup> Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Ա, Երևան, 2005, էջ 418-419:

<sup>78</sup> Հ. Մանանդյան, Երկեր, հ. Գ, Երևան, 1977, էջ 88, Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ե, էջ 50:

90-ամյա ծերունի կլիներ), այլ նրա որդին՝ Գրիգորը:

### Վասակի որդիներ՝ իշխան Գրիգոր եւ Բարսեղ Ա կաթողիկոս

Վասակը ունեցել է չորս որդի՝ Գրիգոր, Բարսեղ, Հասան, Ապլջահապ: Ինչպես վերը տեսանք, սրանցից առաջինը հիշվում է պատի անունով անվանակոչված Գրիգորը, որի գլխավորությամբ Հասանյանների այս ընտանիքը Անի է վերաբարձել Մանուչե ամիրայի հրավերով: Երկրորդ հիշատակվողը Բարսեղն է, որը Անիի եպիսկոպոս է դարձել 1072 թվականին, իր մորեղբոր՝ կաթողիկոս Գրիգոր Վկայասերի կամքով. «...Տէր Գրիգորիս (Վկայասերը – Կ. Մ.) գնացեալ ի մայրաքաղաքն Հայոց, որ կոչի Անի, եւ անդ ձեռնադրեաց եպիսկոպոս զԲարսեղն՝ զքեռորդին իւր՝ զորդի Վասակայ, որդւոյ Ապիրատին, որդւոյ Հասանայ»<sup>79</sup>:

Դրանից շատ շանցած՝ 1081 թ. Գրիգոր Վկայասերի համաձայնությամբ Բարսեղը Հաղբատում հանդիսավորապես ձեռնադրվում է Հայոց կաթողիկոս ու փառավոր երթով ուղեւորվում Անի, որի մուտքի մոտ նրան դիմավորում են իր ազգակիցներն ու ցնծացող ժողովուրդը. «...ի վանքն, որ կոչի Հաղբաթ, ձեռնադրեցին զտէր Բարսեղ կաթուղիկոս յաթոռ սրբոյն Գրիգորի՝ ի վերայ ամենայն աշխարհին Հայոց... Յայսմ ժամանակի նորոգեալ եղեւ աթոռ սրբոյն Գրիգորի ի քաղաքն Անի... Եւ Ելեալ գայր Բարսեղ կաթուղիկոսն Հայոց ի թագաւորաբնակ քաղաքն Անի, եւ Ելեալ ամենայն Տունն Շիրակայ գնալ ընդ առաջ նորա, եւ ահա գայր Վասակ՝ հայրն տէր Բարսեղ եւ Եղբարք նորա՝ Հասան եւ Գրիգոր եւ Ապլջահապ, արք քաջք եւ հօրք՝ հանդերձ եպիսկոպոսօք, եւ նստուցին զտէր Բարսեղ յաթոռ տեառն Պետրոսի: Եւ Եղեւ օրն այն օր մեծ եւ ուրախութիւն ամենայն Տանն Հայոց, վասն զի տեսին նորոգեալ զաթոռ հայրապետութեանն ի քաղաքն յԱնի»<sup>80</sup>:

Այստեղ ուշադրության է արժանի ոչ միայն Բարսեղի տոհմակիցների թվարկումը, այլեւ այն, որ պատմիչն Անիի աթոռը համարում է քաղաքից հեռացած վերջին կաթողիկոս Պետրոսի (Գետադարձ) աթոռը:

Մինչեւ Գրիգոր Վկայասերի մահը՝ 1105 թ., Բարսեղ Ա Անեցին համարվում է նրա աթոռակիցը, որից հետո՝ մինչեւ 1113 թ.՝ միանձնյա կաթողիկոս, թեեւ ձեռնադրությունից անմիջապես հետո նա իր ձեռքն է վերցնում կաթողիկոսական վարչական իշխանությունը:

Հայաստանյաց եկեղեցու ընդհանուր վիճակն այդ ժամանակ աննախա-

<sup>79</sup> Ոտհայեցի, էջ 226, Սմբատ Սպարապետ, էջ 82:

<sup>80</sup> Ոտհայեցի, էջ 236-238:

դեպ էր, առաջացել էին մի քանի հակաթոռ կաթողիկոսություններ<sup>81</sup>: Բարսեղ Անեցին Կաթողիկոսական աթոռն ամրապնդելու եւ եկեղեցու գրությունը բարձրվելու համար 1090 թ. մեծ պատվիրակությամբ ուղեւորվում է սելջուկան պետության տիրակալ Մելիքշահի մոտ, նրանից ստանում անհրաժեշտ արտոնություններ, որոնք շուտով գործադրում է հակաթոռ կաթողիկոսությունների դեմ<sup>82</sup>: Ինչպես Սամվել Անեցու ժամանակագրության լրացնողներից մեկն է գրում, Բարսեղը հնազանդեցնում է «զամենայն հակառակսն»<sup>83</sup>:

Բարսեղ Անեցու գործունեությունը բավական լավ է ուսումնասիրված<sup>84</sup>, ուստի այստեղ դրան չենք անդրադառնում: Նշենք միայն, որ մինչ Բարսեղը Անիում քայլ առ քայլ ամրապնդում է եկեղեցու դիրքերը, վերականգնում կաթողիկոսարանի դպրոցը, այն հանձնելով ժամանակի նշանավոր վարդապետ Հովհաննես Սարկավագին<sup>85</sup>, հոգ տանում ժողովրդի հոգեւոր կորովը պահպանելու մասին<sup>86</sup>, նրա եղբայր Գրիգոր իշխանն իր զինվորական ծառայությունն էր կատարում Շաղդաղյանների մոտ՝ երեսն հարկադրված լինելով գործել նաև իր հայրենակիցների դեմ:

Ստեփանոս Օրբելյանը Բաղաց թագավորության կործանմանն անդրադառնում է երկու անգամ, հակառակ հերթականությամբ: Նախ «Այունիքի թագավորները» բաժնում (գլ. Ծթ) պատմում է Սենեքերիմ թագավորի սպանության մասին (շուրջ 1094 թ.), իսկ ավելի ուշ, կապանի գրավման եւ թագավորության անկման բաժնում (գլ. ԿԱ) տեղեկացնում է, թե ինչպես էր Սենեքերիմը, մի հարցում խոստումնազանց լինելով, մահմեդականների թշնամությունը հարուցել<sup>87</sup>:

<sup>81</sup> Մ. Օրմանյանը գրում է «Այս շինք կացուրեան մեջ Բարսեղն էր միայն, որ իրաւ հայրապետական պաշտօն կը վարէր, իր հօափն հոգածութիւնն ունէր և անոր ներին եւ արտաֆին պիտիները լրացնելու կ'աշխատէր: ...Եր մօրեղօր (Գրիգոր Վկայասերի - Կ. Մ.) բարեացականուրենէն օգսուելով և անոր ձեռնբափ վիճակին դատարկը լրացնել փափաթիւվ, համարձակ կընդլայնէր իր ձեռնարկները...» (Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, Ա. կյմիածին, 2001, էջ 1536):

<sup>82</sup> Ռուբայեցի, էջ 256-258:

<sup>83</sup> Անեցի, էջ 117:

<sup>84</sup> Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 1506-1576, Կ. Մաթեոսյան, Անի, էջ 47-58:

<sup>85</sup> Կ. Մաթեոսյան, Հովհաննես Սարկավագի գործունեությունն Անիում. – «Փշմիածին», 2005, է-թ, էջ 59-72:

<sup>86</sup> Վարդան Արեւելցու վկայությամբ 1094 թ. մեծ հանդիսավորությամբ Անի է բերվում մի նշանավոր արքություն՝ նունեի խաչը, որը Հայաստան էր տեղափոխվել դեռեւ Սահակ Պարենի ժամանակ, պահվել տարբեր տեղերում: Այն Անի բերելով՝ Բարսեղ կարողիկոսն այստեղ դրա համար հատուկ տոն է սահմանում (Վարդան Արեւելցի, էջ 115):

<sup>87</sup> Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Տիգիս, 1910, էջ 332-333, Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, բարգմանությունը եւ ծանոթագրությունները Ա. Աբրահամյանի, Երևան, 1986, էջ 277-278:

Օրբելյանը գրում է, որ Մելիքշահի մահից հետո, Գանձակի ամիրան Սենեքերիմին պաշարում է բերդում: Ամիրայի հետ էր «Նիրակացն իշխանն՝ Գրիգոր Ապիրատեան»<sup>88</sup>: Տեսնելով բերդի անմատչելիությունը ամիրան Գրիգորին ուղարկում է Սենեքերիմի մոտ, համոզելու, որ իր մոտ գա, որից հետ նրան պարգևներով ազատ կարձակի, իհարկե, շմուանալով Գրիգորին սպառնալ, որ եթե Սենեքերիմին շբերի, կյանքից կզրկվի: Գրիգորը բերում է Սենեքերիմին, ամիրան դրժում է խոստումը, սպանում թագավորին եւ թողնում հեռանում է իր երկիրը: Սենեքերիմի որդիները, Սյունյաց մեծամեծերը գալիս սպում են թագավորի կորուստը եւ նրա դին տանում են հողին հանձնում Վահանավանքում<sup>89</sup>: Սյունյաց գահը ժառանգում է Սենեքերիմի որդի Գրիգորը:

Հասանյան Գրիգոր իշխանի վարքն այս պատմության մեջ պայմանավորված էր նրա ծառայության բնույթով: Նա իր զորականներով պետք է ծառայեր Անիի ամիրային, եւ հենց այդ պարտականությունը կատարելիս էլ, որոշ ժամանակ անց, զրկվեց կյանքից:

Վարդան Արեւելցին պատմելով Գրիգորի մահվան մասին (1099 թ.), նրան ներկայացնում է որպես քաջ պատերազմող, միաժամանակ ցուց է տալիս նրա վայելած մեծ հեղինակությունը: Արեւելցին, մեր կարծիքով, Միսիթար Անեցու պատմությունից օգտվելով, գրում է. «...ազգ մի սկիւթական, որ ի վաղեաց ժամանակաց զօղեալ կեալր առ Վրկանօք, անուն գլխաւորին Ելիսազի կոշեցեալ, որ եկն եօթն հազարաւ ընդ միջոցս աշխարհի մինչեւ յԱնի քաղաք պատերազմաւ, եւ մեռաւ անդ եղբայր նորա, որ նման էր Գողիադու հսկայի, ի Գրիգորոյ որդույ Վասակայ, թոռին Ապիրատին, որ զկնի աւուրց նահատակեցաւ ի Կաղզուանն, զերծուցեալ ի մահուանէ զամիրայն Անւոյ զՄանուչէ. եւ տարեալ թաղեցին զնա ի Կեշառուա. եղբայր Տէր Բարսղի կաթողիկոսի. եւ Մանուչէ եւ ամենայն զօր բանակին Հայոց զկնի դիոյն»<sup>90</sup>:

Գրիգոր իշխանի հանդիսավոր հուղարկավորությունը Կեշառիսում վկա-

<sup>88</sup> Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 320:

<sup>89</sup> Նոյն տեղում, էջ 320-321, Ստեփանոս Օրբելյան, Սյունիիի պատմություն, էջ 270:

<sup>90</sup> Վարդան Արեւելցի, էջ 113-114, աշխարհաբարը՝ էջ 153: Ներկայացնում ենք այս հատվածի մեր կատարած աշխարհաբար թարգմանությունները, քանի որ հրատարակության մեջ եղած թարգմանության մեջ կան իմաստային զգալի շեղումներ բնագրից (տե՛ս Կ. Մաքաւան, Վարդան Արեւելցին Անիի պատմության մասին. -«Էջմիածն», 2002, էջ 92-95). «...Մկութական մի ցեղ, որ վազ ժամանակներից աննկատ ապրում էր Վրկանից աշխարհի մոտ, որի առաջնորդի անունը Ելիսազի էր, յոթ հազար հոգով, պատերազմելով (Հայոց) աշխարհի միջով գալիս է մինչեւ Անի քաղաքը, եւ այդտեղ նրա եղբայրը, որ նման էր հսկա Գողիաթին, սպանվում է Վասակի որդի եւ Ապիրատի թոռ Գրիգորից, որը օրեր անց նահատակվում է Կաղզվանում, մահից փրկելով Անիի ամիրա Մանուչին, եւ նրան՝ Բարսեղ կաթողիկոսի եղբայրը՝ տանում թաղում են Կեշառիսում եւ դիակի հետեւից զնում էին Մանուչեն եւ Հայոց բանակի ամբողջ զորքը»:

յում է, որ Գրիգոր Ապիրատի հիմնադրած այդ վանքը նրա որդի Վասակի տոհմաճյուղի հանգստարանն էր:

Գրիգորի մահվան մասին փոքր ինչ այլ կերպ է պատմում Մատթեոս Ուռայեցին: Նախ իշխանին կոչում է «Գրիգոր կուրապաղատ արեւելից», ապա նշում, որ նա զորքով գնաց Կաղղվան, այնտեղ պարտության մատնեց թուրքերին, որից հետո Անի վերադառնալու ճանապարհին սպանվեց դրանակալ մի թուրքի արձակած նետից. «...դարձեալ գնալով ի քաղաքն Անի, յայնժամ մի ուն ի գարանի կայր ի թուրք զորացն ընդ ծառով միով, եւ գաղտ նետիւ հարեալ զնա ի բերանն եւ ի սաստիկ խոցոյն ի յերկիր անկեալ աւանդեաց գհոզին, եւ եղեւ սուզ մեծ Շիրակայ եւ ամենայն տանն Հայոց»<sup>91</sup>:

Այսպիսով Արեւելցին եւ Ուռհայեցին միմյանց լրացնելով ներկայացնում են Գրիգորի մահվան հանգամանքները: Զարմանալի է, բայց փաստ, որ Վասակի ավագ որդու՝ Գրիգորի սպանությունից շուրջ մեկ տասնամյակ անց (մոտ. 1110 թ), Վասակի եղբոր՝ Ապղաջապի ավագ որդու՝ Ապիրատ իշխանի սպանությունը տեղի է ունեցել ճիշտ նույն ձեւով դրանակալ թշնամուց նետահարությամբ, որը պատկերավոր կերպով նկարագրել է նրա որդին՝ ներսես Շնորհալին<sup>92</sup>:

Կարծես թե ճակատագրական մի բան կա այս տոհմի պատմության մեջ, սկսած Գրիգոր եւ միաժամանակ Ապիրատ առեղծվածային անունով անհայտ մեկի, միանգամից մագիստրոսի պատվաստիճանով պատմական թատերաբեմ իշնելուց, նրա եղերական մահից, մինչեւ նրա անուններով անվանակոչված ավագ թոռների՝ Գրիգորի եւ Ապիրատի նույնանման սպանությունը: Ակամա այդ տիսուր օրինաշափությունների շարունակողը եղավ նաև Գրիգոր իշխանի եղբայրը՝ Բարսեղ Ա Անեցին, որը կաթողիկոսի համար անսովոր վախճան ունեցավ: 1113 թ. մայիսին նա զո՞հ գնաց մի դժբախտ պատահարի, անսպասելիորեն փլած շենքում մահացու վիրավորվելով: Սակայն մինչեւ մահկանացուն կնքելը Բարսեղը հասցրեց կատարել 1105 թվականին մահվան մահճում գտնվող Գրիգոր Վկայասերին տված խոստումը<sup>93</sup> եւ Ապիրատ իշխանի որդուն՝

<sup>91</sup> Ուռհայեցի, Էջ էջ 288-289:

<sup>92</sup> Շնորհալին գրում է, որ այն օրը, երբ իր եղբայրը բահանայական ձեռնադրության արժանացավ, եւ իրենք ուրախության մեջ էին, գոյյժ ստացան իրենց հոր մահվան մասին, որը աելի է ունեցել Ծովք ամրցում, հետեւյալ կերպ. «Թագնաբար անդ դարանեալ, / Հազարացի ումն նստեալ, / Ըզլայնալինն ին բարչեալ, / Թէ երբ նայի դետակն առեալ: / Յորժամ եւես ունայնացեալ, / Ի վահանէն, որով ծածկեալ, / Երեմբեւեան եւարունեալ, / Յանկարծակի ըզնա հարեալ... / Եւ զյալբանդամն շախչախեալ...» (Ներսեսի Շնորհալոյ Բանի շափաւ, Էջ 602-603):

<sup>93</sup> Բարսեղն Անիից Քեսուն է գալիս Գրիգոր Վկայասերի կանչով, լսում նրա վերջին կամքը, ըստ որի Բարսեղից հետո Հայոց կարողիկոս պիտի ձեռնադրվեր Վկայասերի երոշ քորը՝ Գրիգորը, որն այդ ժամանակ մանուկ էր: Երբ 1105 թ. Բարսեղը դառնում է միանձնյա

15 կամ 17 ամյա Գրիգորին եպիսկոպոս ձեռնադրել: Բարսեղի մահից մի քանի օր հետո, նրա պատգամի համաձայն, Գրիգորը ձեռնադրվեց կաթողիկոս (Գրիգոր Գ Պահլավունի) եւ շարունակեց «Պահլավունյաց» կաթողիկոսական տոհմը:

Հասանյանները որպես աշխարհիկ եւ հոգեւոր առաջնորդներ լայն գործունեություն են ունեցել Անիում նաեւ 12-րդ դարում<sup>94</sup>, որն առանձին քննության նյութ է:

Ամփոփելով կարող ենք ասել, որ հայտնի եւ նորահայտ նյութերի շնորհիվ ուրվագծվում է Անիի Բագրատունյաց թագավորության իշխանական տներից մեկի սկզբնավորման պատմությունը: Քեղի ամրոցի իշխան Հասանի ավագ որդին՝ Գեւորգը ժառանգել է հոր իշխանությունը, միաժամանակ 1002 թ. կառուցել է Հավուց թառի Կաթողիկե եկեղեցին, իսկ կրտսեր որդին՝ Գրիգոր Ապիրատն իր խելքով եւ ձեռներեցությամբ կարողացել է ավելի մեծ դիրքի հասնել, արժանանալ մագիստրոսության պատվաստիճանի եւ «մեծ իշխան» հորջորջման: 1003 թ. Գրիգոր Ապիրատը կառուցել է Կեչառիսի Ս. Գրիգոր մեծագիր Եկեղեցին: 1021 թ. Բագրատունի Հովհաննես Սմբատ եւ Աշոտ Դ եղբայրների միջեւ ծագած գահակալական կոիվներից հետո, Աշոտի լարած խարդավանքի ժամանակ հրաժարվելով թագավորասպան դառնալուց, Գրիգոր Ապիրատն ընտանիքով ապաստանել է Դիլինի ամիրայի մոտ, սակայն այստեղ դավադրաբար սպանվել է: Նրա ընտանիքը տեղափոխվել է Անի, ուր Հովհաննես Սմբատ թագավորն ստանձնել է մահացած իշխանի զավակների խնամակալությունը: Գրիգոր Ապիրատի գուստորը կնության է տրվել Վեստ Սարգիս իշխանին, իսկ որդիները՝ Ապլչահապը եւ Վասակը կնության են առել Գրիգոր Պահլավունի (Բշնեցի) իշխանի երկու դուստրերին: Առաջինի ընտանիքը 1045 թվականից հետո բյուզանդական ծառայության անցած եւ մագիստրոս դարձած Գրիգոր


աթոռակալ, նրա առաջ բարձրանում է աթոռանիստ տեղի խնդիրը. վերաբառնալ Անի, թէ՝ մնալ Փեսունի շրջանում: Բարսեղը որոշում է մնալ, որից դժգոհ են մնում Հայաստանում: Գրիգոր Դարանաղեցին գրում է, որ «յորժամ հեռացա Տէր Բարսեղն... ի յԱնտյ», դրանից դժգոհեցին «մեծամեծ հոչակատր վանորեից եպիսկոպոսն»: Հետաքրքիր է, որ նրա թվարկած հինգ վաններից երկուը Հասանյան տան հոգեւոր կենտրոններն էին՝ Կեչառիսը եւ Հավուց թառը (ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցոյ, Երուսաղեմ, 1915, էջ 303):

<sup>94</sup> Անիի Հասանյանների մասին տես ն. Ալիքնյան, Ներսես Լամբրոնացի, էջ 394-397, Հ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի եւ Վրաստանի..., էջ 102, 120, 155-156, 166, Կ. Մաքետսյան, Անի, էջ 62-82, 116-120: Մեր կարծիքով՝ Հասանյանների տոհմից է եղել նաև Մաղարդավանքի առաջնորդ Գրիգորիսը, որը հիշվում է «էջմիածնի Ավետարանի» 1173 թ. հիշատակարանում եւ մեկ այլ ձեռագրի անթվական հիշատակարանում, ուր անվանվում է «Գրիգորէս, որդի Ապիրատին»: Հետաքրքիր է, որ այդ ձեռագիրը Մաղարդավանքին նվիրողը բնակվում էր «մերձ առ դղեկին Քեղայոյ» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դր., էջ 213, 312):

Պահավունու հետ տեղափոխվել է հարավի Միջագետք Հայոց, վայելելով նրա ու 1065-ին կաթողիկոս դարձած նրա որդու՝ Գրիգոր Վկայասերի հովանավորությունը: Այս ընտանիքի անդամներն ու ժառանգները մայրական գծով Պահավունի լինելու շնորհիվ Հայոց եկեղեցուն հաջորդաբար հինգ կաթողիկոս են պարգևել: Իսկ Վասակի ընտանիքը մնացել է Անիում եւ այստեղ առաջնակարգ դիրք գրավել Շաղդաղյանների տիրապետության շրջանում:

Վերջում զետեղում ենք Հասանյանների տոհմածառը, որը լրացնում է նախկինում ն. Ակինյանի կազմածը<sup>95</sup>:

<sup>95</sup> Ն. Ակինյան, Ներսես Լամբրոնացի, ներդիր 402-403 էլերի միջև։ Ն. Ակինյանը Հասանյանների տոհմածառի ստորին մասով զետեղել է 12-րդ դարի վերջերին եւ 13-րդ դ. սկզբում Շիրակում հայտնված մի տոհմի անդամների անունները, ոմն Ապուղամրի գլխավորությամբ, որի զավակներն իրենց համարում էին սպարապետ Վահրամ Պահլավունու սերունդ եւ այդ մասին արձանագրություն ունեն Մարմաշենում։ Այս տոհմը կապ չունի Հասանյանների հետ (Կ. Մաքետսյան, Ս. Ծի, էջ 76): Նոյն տոհմածառում որպես Ապշահապի որդի Վասակի որդիներ են նշվում Ապղատիքը եւ Լիկոսը (նոյն տեղում, էջ 384-385), որոնք իրականում Գրիգոր Մագիստրոս Բջնեցու Վասակ որդու զավակներն են (Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակրները եւ հայերը, հ. Ա, էջ 423): Մենք ավելացրել ենք տոհմապետ Հասանի որդի Գետրգ իշխանի նյութը, 12-րդ դարում ապրած Հասան Մագիստրոսի ես մի որդու եւ փեսայի անունները (Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 502), կիլիկյան տոհմանյուղում Գրիգոր Դ Տղա կարողիկոսի ժողովը, որի ամուսինն էր Կիլիկյայի Հայոց իշխան Մլեհը (Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակրները եւ հայերը, հ. Բ, էջ 152), միաժամանակ յուրաքանչյուր գործի անվանը կից նշել ենք նրա հիշատակության թվականները (կարողիկոսների դեպքում արոռակարության տարիները):



## ԶՈՒԼԻԵՏՏԱՆ ԷՅՆԱԹՅԱՆ

### ՀԱՅԿԱԿԱՆ ԶԵԽԱԳՐԵՐԻ ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ ԲՆԱԳՐԵՐԸ

Աստղագիտությունը դիտողական գիտություն է, նրա ուսումնասիրության առարկան ձեռքի տակ չէ, նյութը կուտակվում է երկար տարիների գիտումների արդյունքում: Հին աշխարհի ժողովուրդները, ընդհանրացնելով կուտակված նյութը, ստեղծել են երկնային մարմինների մասին գիտությունը: Ճշգրիտ գիտությունների եւ մասնավորապես աստղագիտության պատմության ժամանակակից հետազոտողների կարծիքով այժմ ձեւավորվել են ուսումնասիրության մի քանի ուղղություններ, որոնցում կիրառվում են պատմության վերականգման տարբեր մեթոդներ: Հիմնական երկու ուղղություններից մեկում՝ «ավանդական»-ում ուսումնասիրությունը կատարվում է առարկայի ներսում, այսինքն՝ մաթեմատիկական եւ աստղագիտական խնդիրների քննարկումը տարվում է ժամանակակից գիտական հիմքի վրա: Ենթադրվում է, որ, օրինակ, բարելացիները ստեղծել են կուսնի եւ մոլորակների շարժումների համար կուռմաթեմատիկական տեսություն, մինչդեռ գիտության պատմության մասնագետների մյուս մասի կարծիքով բարելոնում հանրահաշվի կամ երկրաշափության մասին գաղափար անգամ չունեին: Ուսումնասիրողները երկրորդ մեթոդը անվանում են «առարկայական-հումանիտար», որը հենվում է փիլիսոփայության, սոցիոլոգիայի, մշակութի վրա:

Ինչպես գիտության մյուս ճյուղերի, այնպես էլ աստղագիտության սկզբնավորումը եւ զարգացումը անմիջականորեն կապված են եղել մարդու կենսական պահանջների հետ: Աստղերի գիտումների արդյունքներն ամփոփող աղյուսակների օգնությամբ կատարվում էին տարվա եղանակների, ժամանակի ճշգրիտ շափի, ծովային ճանապարհորդությունների հաշվարկներ: «Որոշակի-որեն պետք է ասել, որ ճշգրիտ գիտությունների պատմությունը հումանիտար գիտության ճյուղ է այստեղից բխող բոլոր հետեւանքներով... Ուստի հումանիտար գիտության մեջ անթուլատրելի է մեկ, թեկուզ հիմնավորված եւ հեղինակավոր տեսական մտքի ծրագիր»<sup>1</sup>, - գրում է գիտության պատմության ուսումնասիրողներից մեկը:

<sup>1</sup> **Վ. Մ. Ռօզին**, К проблеме метода научной реконструкции истории точных наук, - Историко-астрономические исследования (ИАИ), 1989, с. 216.

Հին եգիպտական եւ շումերա-բարելոնյան մաթեմատիկական գիտելիքները պետք էին հողատարածքների վերականգման համար, որոնք խախտվում էին գետերի գարնանային վարարումների ժամանակ: Դրա համար կարեւոր էր ունենալ այդ տարածքների՝ թվերով արտահայտված գծագրեր, ինչպես նաև երկնային մարմինների պարբերական շարժումների աղյուսակներ: Այս ամենը դիտվում էր ոչ թե իբրեւ գիտելիք, գիտություն, այլ երկնային աստվածների կյանքի նկարագրություն<sup>2</sup>:

Ճշգրիտ գիտությունների ձեւավորման համար մեծ դեր խաղաց հունական փիլիսոփայական մտածողությունը, որը խիստ տարբերվում էր նրան նախորդող ինքնամփոփի գիտելիքներից: Եթե միջագետքի բնակիչները ուշադիր հետեւում էին կուսնի եւ մոլորակների շարժումներին, իսկ եգիպտացիները ավելի ուշադիր էին Սիրիոսի շարժմանը, չփորձելով մաթեմատիկական բացատրություններ տալ դրանց օրինաշափություններին, ապա հույները ավելի հակված էին տեսական բացատրությունների: Երկրակենտրոն արեգակնային համակարգության միտքը կապվում է հույն գիտնականների հետ. Պյութագորասը (6-րդ դար մ. թ. ա.) սովորեցնում էր, որ Երկիրը գնդաձեւ է, որը ազատ եւ անշարժ կախված է տիեզերքի կենտրոնում: Որքան էլ որ այդ կարծիքը ավելի առաջադիմական էր մյուսների համեմատ (12 ոտքերի վրա հենված սեղանի կամ երեք կետերի վրա կանգնած տեսքով), այն սուկ մտապատճեր էր, մտքի արդյունք, որը հիմնված չէր գործնական դիտումների վրա: Հստ այդ տեսության Երկրի շուրջը մոլորակները պտտվում են համակենտրոն շրջաններով, ընդ որում նրանց հեռավորությունների համար Պյութագորասն ընտրել էր այնպիսի թվեր, որի գեպքում ստացվում է հաճելի երաժշտություն: Այս մասին մեր ձեռագրերում կարդում ենք. «Զգայարանք առաջնոցն սուրբ էին եւ յստակ, նոքա զամենայն տարերս քննեցին, ոչ միայն զորպիսութիւն գնացիցն գիտացին, այլեւ զհնչումն ձայնից նոցա: Եւ ի նոցանէ գտաւ արուեստ երաժշտական ձայնից յաշխարհի եւ կարկաչք աստեղաց»<sup>3</sup>:

Պյութագորասի աշակերտներից Ֆիլոլայլ (5-րդ դար մ. թ. ա.) մտցրեց կենտրոնական կրակի գաղափարը, որի լուսը անդրադարձնում եւ մեզ է հասցնում Արեգակը: Մեր ձեռագրերը տեղեկացնում են Արփիի մասին, որից Արեգակը լուսը վերցնելով փոխանցում է Երկիր: Այսպես, Արեգակն «ցուրտ է բնութեամբ, զշերմութիւն եւ զլուսաւորութիւն յԱրփոյ առեալ, հեղու յօդս, որով լուսաւորի եւ զեռնու Երկիր ... որպէս առաջնոցն հաճոյ թուեցաւ ասել»<sup>4</sup>:

<sup>2</sup> Խոյն տեղում, էջ 224:

<sup>3</sup> ՄՄ, ձեռ. № 973, թ. 148:

<sup>4</sup> Անանիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն եւ տոմար, աշխատասիրությամբ Ա. Աբրահամյանի, Երեւան, 1940, էջ 47-48:

Երկրի շուրջը համակենտրոն շրջանային պտույտների փոխադարձ ազդեցությամբ ներկայացվող երկրաշափական մտահայեցողական տեսությունը առավել զարգացրին Հիպարքոսը (2-րդ դար մ.թ.ա.) եւ Պտղոմեոսը (մ.թ. 2-րդ դար): Գրեթե մինչեւ 17-րդ դարը երկնային համակարգը աստղագետների կողմից դիտվում էր իբրեւ իրական աշխարհի գեկորատիվ մաս: Տիեզերքը սահմանափակվում էր մոլորակների համակարգով, իսկ հիմնական խնդիրը երկրաշափականն էր՝ բացատրել նրանց շարժումները: Կոպենիկոսի պատկերացումները աստղային երկնքի մասին ոչնչով չեն տարբերվում իրենից առաջ եղածներից: Նա նույնպես համարում էր, որ աստղերը հավասարապես հեռու են մեզանից եւ դասավորված են գնդաձեւ հարթության վրա: Նրա կողմից կատարված հեղաշրջումը վերաբերում էր մոլորակների համակարգին, նա առաջարկեց երկրը գնել մոլորակների շարքը, որոնց բարդ շարժումները շատ ավելի դյուրին էին բացատրվում, եթե կենտրոնում դիտվում էր Արեգակը: Դիտումները թողնում են այն տպավորությունը, որ երկիրն անշարժ է, եւ Արեգակն է պտտվում նրա շուրջը: Եթե պատկերացնենք դիտողին Արեգակի վրա, ապա երկրի տարեկան շարժումը նրան կերեւա ճիշտ այնպես, ինչպես մեզ՝ Արեգակի շարժումը: Փաստորեն Արեգակի տեսանելի տարեկան շարժումը բացատրվում է երկրի համապատասխան շարժման անդրադարձումով:

Կոպենիկոսի իրական նախորդը Արիստարքոս Սամոսացին է (3-րդ դար մ.թ.ա.): Նա համոզված էր, որ մոլորակների կենտրոնում գտնվում է Արեգակը, այլ ոչ թե երկիրը, որ Արեգակը մյուս աստղերի նման անշարժ է տարածության մեջ, որ տիեզերքը չի սահմանափակվում աստղերի գնդով եւ անսահման հեռու է մեզնից: Անանիա Շիրակացին տեղակ է այդ տեսակետին. «Զարաց փիլիսոփայիցն... կէսքն ի նոցանէ երկինս բազումն եւ աշխարհս անհամարս ասացին... ինձ արդարեւ ծաղու եւ եպերանաց արժանի թուին, որք զանձինս առ իմաստունս ունէին եւ յիմարեցան, որք զերկին եւ զերկիր անսկիզբն եւ անկատար ասացին»<sup>5</sup>:

Հին Հունաստանի գիտության նվաճումները ժառանգեց Բյուզանդիան. Երկրի կրթական-գիտական կենտրոններում շատ գիտնականներ ընդունելով քրիստոնեություն, շարունակում էին մնալ հեթանոսական արժեքներին հետեւողներ<sup>6</sup>: Աշխարհի կառուցվածքի պատկերացումները զարգանում էին գիլիսոփայության եւ աստվածաբանության միահյուսված տեսության սահմաններում, քրիստոնեության վաղ շրջանում ստեղծված բազմաթիվ «Վեցօրեայքներ» չեն կորցնում իրենց նշանակությունը նաեւ կայսրության գոյության հե-

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 4-5:

<sup>6</sup> **Բ. Է. Լիպպի**, Очерки истории Византийского общества и культуры (8-первая половина 9-го века), М., Л., 1961, с. 359.

տագա դարերում<sup>7</sup>: Գիտությունը դիտվում էր իբրեւ միջոց, որը հիմնավորում էր կրոնական դոգմաները, օգնում հասնել ճշմարտության եւ քրիստոնյայի մտավոր ինքնակատարելագործմանը<sup>8</sup>:

Յոթերորդ դարում Բյուզանդիան ծանր ժամանակներ էր ապրում, տարածքներ կորցնում, դպրոցներ էին փակվում: Անտիկ գիտության գիտակները պակասում էին: Ուսումն ու գրագիտությունը զրկվելով պետական հովանավորությունից քաշվեցին վանքերը<sup>9</sup>: Տեղեկություններ կան այն մասին, որ Կ. Պոլոսի դպրոցի աշակերտները փիլիսոփայության դասընթացն ավարտելու համար դիմում էին Տրապիզոնի մինչ այդ անհայտ մի հոգեւորականի, «որը սովորել էր Աթենքում, եւ որի մասին հետաքրքիր տեղեկություն է հայտնում հայ մատենագիր Անանիա Շիրակացին»<sup>10</sup>: Հասկանալի է, որ խոսքը Ա. Շիրակացու ուսուցչի մասին է:

Գիտության անմիտիթար վիճակը երկար տեւեց, մինչեւ որ 9-րդ դարում գիտական միտքը վերածնվեց անհատական շանքերով եւ արժանացավ պետական հովանավորության. «Անդրանիկ գիտնականը եւ մեկենասը՝ երկուսն էլ հայ էին»<sup>11</sup>: Բանն այն է, որ Թեոդորա կայսրուհու քաջալերանքով նրա եղբայրը՝ Վարդ Մամիկոնյանը «մեկենաս հանդիսացավ գիտութեանց, պետական հովանավորությունը սփռեց գիտութեանց վրա, բաց անելով առաջին համալսարանը Մագնավրա կոչված պալատում: Այն գիտնականը, որը նորաբաց դպրոցի գլուխն անցավ Լեռն մեծ փիլիսոփան էր Մամիկոնյան տոհմից»<sup>12</sup>, գրում է Ն. Ադոնցը: «Վերահաստատվեց հելենական փիլիսոփայության եւ գիտությունների ուսուցումը՝ փրկելով հելեն մշակութը ընդմիշտ կորստից»<sup>13</sup>, գրում է Ս. Ճեղահիրճյանը:

Կրթության դասընթացը, որ թույլ էր տալիս ստանալ համակողմանի եւ ավարտուն գիտելիքներ, հետեւում էր ուշ անտիկ շրջանի պլանին, որը կազմված էր տրիպիտոմի (քերականություն, ճարտասանություն, դիալեկտիկա) եւ կվաղրիվիումի (թվաբանություն, երկրաշափություն, երաժշտություն, աստղագիտություն) առարկաներից: Ընդ որում առաջինը ենթադրում էր դասական գիտելիքներին ծանոթ. կրթված մարդու դաստիարակություն, իսկ երկրորդի

<sup>7</sup> О. Р. Бородин, Географические знания, - в кн. Культура Византии, (вторая половина 7-12 вв), М., 1989, с. 335

<sup>8</sup> З. Г. Самодурова, Школы и образования, в кн. “Культура Византии 7-12 вв.”, с. 370.

<sup>9</sup> Ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրություններ, Փարփ, 1948, էջ 502:

<sup>10</sup> Б. Э. Липшиц, նշվ. աշխ. էջ 362:

<sup>11</sup> Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 506:

<sup>12</sup> Նոյն տեղում:

<sup>13</sup> Ս. Ճեղահիրճյան, Թեոդորա Մամիկոնեան կայսրումի Բիզանտիոնի. – «Բազմավեպ», 1982, № 3-4, էջ 282:

ուսումնասիրությունը համարվում էր անհատների մենաշնորհը: Կվաղրիվիումի առարկաները յուրացնելուց հետո անցնում էին «մաքուր գիտելիքի» բարձրագույն տեսակին՝ աստվածաբանությանը, որը կարեւոր էր ճիշտ քրիստոնյա դաստիարակելու համար: Իր ժամանակի նշանավոր գիտնական կետն Մաթեմատիկոսը 9-րդ դարի 20-30 թթ զբաղվում էր գպրոցական առարկաների անհատական ուսուցմամբ, առաջնությունը տալով հատկապես մաթեմատիկային: Պատմական աղբյուրները տեղեկացնում են, որ կետն ուներ մի քանի օգնական՝ նրա աշակերտ Թեոդորոսը ղեկավարում էր երկրաշափության ուսուցումը, Թեոդեգիոսը՝ աստղագիտության, Կոմետասը՝ հունարենի քերականության<sup>14</sup>: Կետն Մաթեմատիկոսի գործերի ուսումնասիրությունը ցուց է տվել, որ 9-րդ դարի դասական հեղինակների գործերն ուսումնասիրելուց զատ նա ուներ ինքնուրույն բնագիտական ուսումնասիրություններ (մեխանիկա, մաթեմատիկա, դիտողական աստղագիտություն):<sup>15</sup> Ինչպես ն. Արոնցն է նշում, «Անանիա Շիրացին հայ դպրության մեջ նույն տեղն է գրավում, ինչ որ կետնը բյուզանդական»<sup>16</sup>:

Գիտության պատմության համար կարեւոր՝ սիրիացի միջնադարյան մատենագիրների պահպանված ձեռագրերից հայտնի է, որ նրանք հունական փիլիսոփաների աշխատանքներին ծանոթ էին արդեն 7-րդ դարից<sup>17</sup>: Երկիրը մուսուլմանների կողմից գրավելուց հետո արաբական լեզուն դարձավ գործածական՝ դուրս մղելով սիրիականը: Քրիստոնեական գրականությանը զուգահեռ ծաղկում էր արաբականը, ժամանակի կրթված մարդիկ ծանոթ էին ինչպես հին ասորական, այնպես էլ հունական, երբեմն նաև հրեական աղբյուրներին<sup>18</sup>: 13-րդ դարից պահպանված ձեռագրերում կան փիլիսոփայական, աստղագիտական-տիեզերագիտական աշխատություններ, որտեղ առկա են Արիստոտելի, Պտղոմեոսի, իբր Սինայի գործերից: Հին եւ նոր Կտակարանների մեկնություններում հաշվի էր առնված հրեական, հունական, սիրիական, նույնիսկ հայկական եւ զպտիական տեքստեր<sup>19</sup>:

Հին ուսուական մատենագրության մեջ պահպանված հուշարձանները նույնպես հանրագիտարանի տպավորություն են թողնում. «1073 թ. Սվյատությավի ժողովածու»-ում եկեղեցու հայրերի ուսմունքի հետ մեկտեղ կան հոգվածներ ինչպես տրամաբանության, ճարտասանության, իրավունքի, այնպես

<sup>14</sup> Բ. Է. Լիսոսիս, նշվ. աշխ. էջ 345:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 365:

<sup>16</sup> Ն. Արոնց, նշվ. աշխ., էջ 532:

<sup>17</sup> В. Райт, Краткий очерк сирийской литературы, С/Пб, 1902, с. 62-64.

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 97-98:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 197:

Էլ աստղագիտության, աշխարհագրության, մաթեմատիկայի մասին:<sup>20</sup> Անտիկ շրջանի եւ ալեքսանդրյան գիտնականներից փոխառնված բնափիլիսոփայական եւ մաթեմատիկական տեղեկությունների, կենդանաշրջանի, Արեգակի, Լուսնի շարժումների հետ մեկտեղ կան հոդվածներ Զատկի եւ տոմարական հաշիվների մասին:<sup>21</sup>

Գիտության պատմության համար կարեւոր է ոչ միայն անտիկ գիտնականների քրիստոնեության վաղ շրջանի թարգմանիչների եւ մեկնիչների վաստակը: Ինչպես գրում է գիտության պատմության ուսումնասիրողներից Ա. Գուրվիչը: «Միջնադարյան քաղաքակրթությունը ժամանակակից քաղաքակրթությանը նախորդող աստիճանն է: Միջդեռ միշտ չէ, որ այն պատշաճ ձեւով են ներկայացնում: Կա միտում կապել նոր ժամանակների մշակութը միայն անտիկ ժամանակաշրջանի հետ՝ հաշվի շառնելով միջնադարը, որը դրանք բաժանում է միմյանցից ոչ միայն ժամանակով, այլեւ ըստ էության»<sup>22</sup>:

Եվրոպայում 8-9 դդ արժանի է հիշատակության Կառլոս Մեծը, որը պայմաններ էր ստեղծում կրթության եւ գիտության զարգացման համար: Նրա ստեղծած դպրոցներում դասավանդում էին յոթ ազատ արվեստները՝ տրիվիումի եւ կվարիվիումի դասընթացները: Քրիստոնյա Եվրոպայում մեծ մտածողները աստվածաբաններ էին, օրինակ՝ Բեդա Հարգարժանը (7-8 դդ), Հերբերդը (10-րդ դար). Վերջինս նաև Հոռմի պապն է Եղել Սիլվեստր Երկրորդ անունով: 12-րդ դարից Եվրոպայում սկսում են թարգմանություններ կատարել արաբերենից լատիներեն: Գիտության պատմության մեջ արաբների հիմնական ծառայությունը կայանում է նրանում, որ նրանք արթնացրին հետաքրքրությունը դեպի գիտությունը, պահպանեցին իրենց հույն նախորդների հայտնագործությունները: 9-րդ դարում նրանք թարգմանեցին Ալմագեստը, կառուցվեցին աստղադիտարաններ Դամասկոսում, Բաղդադում, ուր տարվում էին մեծ ճշությամբ անընդհատ գիտումներ: Դրանց շնորհիվ հունական աստղագիտական ցուցակներում հայտնաբերվեցին թերություններ: Ժամանակակից առ ժամանակ գուրս էին գալիս նոր ցուցակներ նոր գիտումների հաշվումներով հագեցած: Սակայն այդ արվում էր հիմնականում գործնական, հատկապես գուշակողական նպատակներով: Բարձր գնահատելով արաբների գերը, աստղագիտության պատմության ուսումնասիրողները այնուամենայնիվ նշում են, որ աստ-

<sup>20</sup> И. В. Левочкин, О естественнонаучном и философском содержании Изборника Святослава 1073 г., - Памятники науки и техники (1982-1983 гг.), М., 1984, с. 116-117.

<sup>21</sup> Н. К. Гаврюшин, Первая русская энциклопедия, - Памятники науки и техники, М., 1984, с. 121-122.

<sup>22</sup> А. Гурвич, Что есть время?, - Вопросы литературы, 1968, № 11, с.153.

դագիտության բնագավառում «Ոչ մի արաբ մտածողի մենք պարտական չենք որեւէ խոշոր, ինքնուրուցն հայտնագործության համար»<sup>23</sup>:

12-րդ դարում Ելիոպայի վանական որոշ դպրոցներ վերաճեցին համալսարանների՝ եռյակ եւ քառյակ գիտությունների ավարտուն ծրագրերով: Դեռ երկար ժամանակ եկեղեցին ի դեմս իր հոգեւորականների «պահպանում էր ժամանակի գիտական կրթվածության մենաշնորհը: Գործնականում այդ կրթության շրջանակներում գիտական մակարդակը ցածր էր... աստղագիտությունը հիմնականում լուծում էր տոմարական հարցեր՝ հատկապես Զատկի ճշգրիտ հաշվարկի համար»<sup>24</sup>: Ըստ ուսումնասիրողի՝ միշնադարյան գիտությունն իրենից ներկայացնում էր հունական գիտության բյուզանդա-սիրիական-մուսուլմանական իրականության հետ հարմարվածության վերջին փուլը<sup>25</sup>:

Հայկական ձեռագերերը նույնպես հարուստ են բնագիտական բովանդակությամբ նյութերով: Իրանց մեջ իրենց կարեւոր տեղն ունեն աստղագիտական տեքստերը, որոնց զգալի մասը հրատարակված է<sup>26</sup>: Հայ գործիչները առաջնակարգ կրթություն ստանալով հելենիստական մշակույթի խոշորագույն կենտրոններում, ծանոթ էին եռյակ եւ քառյակ գիտություններին: Նրանք վերադառնալով հայրենիք, իրենց հետ բերեցին ոչ միայն գիտելիքներ, այլեւ գրանք ուսուցանելու ձեւերը: Հունարենից եւ ասորերենից հայերեն էին թարգմանվում Աստվածաշունչը, եկեղեցու սուրբ հայրերի աշխատանքները, ինչպես նաև աշխարհիկ գիտական երկեր: Օգտվելով սուրբ հայրերի եւ հուշն մտածողների գործերից՝ հայ թարգմանիչները փնտրում էին ուղիներ քրիստոնեական գաղափարախոսության եւ անտիկ գիտության հիմքերը հաշտեցնելու համար: Թարգմանությունները դպրում են դարձնելու գործում օգնում էին տարաբնույթ մեկնությունները: Իրանք միշնադարյան մտքի ձեւավորման կարեւորագույն աղբյուր են իրենց ուրույն տեղն ունեն հայ մատենագրության մեջ:

Մեկնողական գրականության շնորհիվ գարգանում էր ինքնուրուցն գիտական միտքը, իրականանում էր մի խնդիր, որը մինչեւ 12-րդ դար ծանոթ չէր արեւմտաելիոպական փիլիսոփաներին, որոնք մկնեցին նրանց ուսումնասիրել

<sup>23</sup> А. Берри, Краткая история астрономии, М.-Л., 1946, с. 80.

<sup>24</sup> Дж. Бернал, Наука в истории общества, М., 1956, с. 174-176.

<sup>25</sup> Նոյն անդում, էջ 181:

<sup>26</sup> Ա. Արանիամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, նոյնի Հովհաննես Խմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, Անանիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն եւ տոմար, Երևան, 1940, Բ. Թումանյան, Հայ աստղագիտության պատմություն, Գիրք 1, Երևան, 1964, Գիրք 2, Երևան, 1968 եւ այլն:

վաղ արաբական թարգմանություններից<sup>27</sup>, գրում է Ս. Ա. Արեւշատյանը: Հայաստանի վաղ միջնադարյան մատենագրության մեջ ուշագրավ գիտական փիլիսոփայական երկերից են Եզնիկ Կողբացու, Եղիշեի, Դավիթ Անհաղթի գործերը: 5-7 դարերի ինքնուրուց եւ թարգմանական գրականությունը վկայում է, որ մինչեւ Անանիա Շիրակացին առկա էր հետաքրքրությունը դեպի բնագիտական հարցերը: Եզնիկի «Եղծ աղանդոց»-ում լուսաբանվում են բնագիտական շատ հարցեր, Եղիշեի «Արարածոց մեկնութիւնը» իր բնագիտական բովանդակությամբ մեծ ազդեցություն է ունեցել հայ բնագիտական մտքի զարգացման վրա, Դավիթ Անհաղթի գործերում փիլիսոփայական հարցերի հետ մեկտեղ նշանակալի տեղ է հատկացվել նաև բնագիտական, մաթեմատիկական գիտեմբաներին: Ինչպես գրում է Լ. Խաչիկյանը՝ թարգմանությունները եւ մեկնությունները սպասարկելու էին ոչ թե ժողովրդի լայն շերտերի պահանջները, այլ զինելու էին մտավորականությանը ազգային շահերի համար մղվող գոտեմարտում<sup>28</sup>: Այսպես, Եզնիկը պայքարում է հանուն իր գավանած սկզբունքների, նա դեմ է քրիստոնեական գաղափարախոսությանը հակառակ բոլոր ուսմունքներին: Նա չի բնգունում, որ երկինքը պատվում է. «Եւ ոչ երկինք շրջին, զորմէ ասեն արտաքին իմաստունքն... Զի աստեղքն, որք զցայգ յերկինս են, ցցերեկ անդէն գտանին... յայտ է թէ նորքա գնան, եւ երկինք կան անշարժ ետեղակալք: Որպէս եւ աստուածատուր իսկ գիրք՝ հաստատութիւն կոչեն զերկինս: Եւ որ ինչ հաստատութիւն է, չէ շարժուն»<sup>29</sup>:

Երկրի անշարժության մասին խոսելիս նա գրում է. «Երկիր ասեն, ի միշոցի կայ... Ասեն օդս, որ ի մէջ գնդին երկնից՝ փակեալ կայ, եւ ունի զաշխարհս ի հասարակածի. ոչ ի վեր տայ վերանալ եւ ոչ ի խոնարհ հակել»: Իմանալով ժամանակի գիտնականների կողմից ընդունված վարկածը, նա այնուամենայնիվ պնդում է. «Որ զերկինս բանիւ հաստատեաց ի վերայ ոշընչի, նոյն եւ զերկիր կացոյց ի վերայ ոշընչի, եւ նորին հրամանն ունի եւ զերկոսին անշարժն եւ ետեղակալու»<sup>30</sup>: Նա մրցյունի օրինակը չի ընդունում, որով բացատրվում է մոլորակների եւ մասնավորապես Արեգակի եւ Լուսնի արեւմուտքից արեւելք (հակառակ երկնքի՝ արեւելքից արեւմուտք) շարժումը, այն անվանելով «ոչ նման»:<sup>31</sup> Ինչպես գրում է Վ. Զալյոյանը. «Եզնիկի եռանդուն մարտնչող ոգին հաճախ հաղթում է նրա քրիստոնեական մտածողությանը: Վերջին հաշ-

<sup>27</sup> С.С. Аревшатян, Формирование философской науки в древней Армении (5-6 вв), Е., 1973, с. 212.

<sup>28</sup> Լ. Խաչիկյան, Եղիշեի «Արարածոց մեկնութիւնը», Երեւան, 1992, էջ 163:

<sup>29</sup> Եզրնկայ վարդապետի Կողբացոյ «Եղծ աղանդոց», Թիֆլիս, 1914, էջ 129-130:

<sup>30</sup> Նոյն տեղում, էջ 132-133:

<sup>31</sup> Նոյն տեղում, էջ 139:

վով Եզնիկի պայքարը արտացոլում էր հայ ժողովրդի պայքարը իր ազգային գոյության, երկրի անկախության համար»<sup>32</sup>:

Հայաստանում գիտական մտքի պատմության մեջ իր հետքն է թողել նաև Եղիշեն: Բերենք մի քանի օրինակ նրա կողմից քննարկած բնագիտական հարցերից. լուսը, որ ըստ Ծննդոց գրքի՝ Աստված ստեղծեց, Եղիշեի կարծիքով նոր արարշություն չէ «արտաքոյ չորից տարերցն, այլ խզած ի հրեղէն երկնից, զստակութիւն լուսոյն յայրեցողութենէն ի վայր կորպելով... քանզի լոյսն ծնունդ է հրոյ, եւ այլ է ծնունդն եւ այլ է ծնաւլն»<sup>33</sup>: Հստ Եղիշեի՝ երկրի անշարժությունը հետեւանք է նրա, որ ծանրությունը չի թողնում վեր բարձրանալ, իսկ հողմերը ներքել<sup>34</sup>: Իսկ մոլորակները, ինչպես նաև անմոլար աստղերը սեփական լուսից գուրկ են, եւ լուսը միշնորդաբար ստանում են հրային կամարից, որը եւ կոչվում է Արփի<sup>35</sup>: Եղիշեն մերժում է գուշակությունները, սահավատությունները, դրանք համարելով հեթանոսներից մնացած սովորություն<sup>36</sup>: Լ. Խաչիկյանը գրում է, որ Եղիշեի Արարածոց մեկնությանը ծանոթ եւ նրանից օգտվող հնագույն հեղինակը 7-րդ դարի մեծագույն գիտնական Ա. Շիրակացին է, որ սխալ կիխնի կարծել, թե Շիրակացին իր գիտական, իմաստասիրական հիմնավոր գիտությունը ստացել է միայն հունական միջավայրից, հուն ուսուցչից: Ապացուցված է, որ նա բառացի օգտվել է Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայքի», Փիլոսի երկերի, Արիստոտելի «Յաղագս աշխարհի» եւ այլ աշխատությունների թարգմանություններից: Հայտնի է դրանց բառացի օգտագործման փաստը: Այդ շարքում է նաև Եղիշեն<sup>37</sup>:

7-րդ դարի կեսին արդեն կար ինչպես սեփական, այնպես էլ թարգմանական հարուստ փիլիսոփայական գրականություն, սակայն բնագիտական հարցերը փիլիսոփայական եւ աստվածաբանական հարցերից անջատելը կապված է Ա. Շիրակացու անվան հետ<sup>38</sup>: Զեռագրերում պահպանված եւ Ա. Շիրակացու վերագրվող աշխատությունների շուրջ եղել են գիտավեճեր<sup>39</sup>: Եթե Եզնիկը չի

<sup>32</sup> **Եզնի Կոխբացի**, Книга опровергений, перевод, предисловие и примечания *B.K. Чалояна*, Е., 1968, с. 28.

<sup>33</sup> Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 176-177:

<sup>34</sup> Նոյն տեղում, էջ 178:

<sup>35</sup> Նոյն տեղում, էջ 180:

<sup>36</sup> Նոյն տեղում, էջ 186:

<sup>37</sup> Նոյն տեղում, էջ 192-193:

<sup>38</sup> **Անանի Ռիրակացի**, Космография, перевод с древнесарменского, предисловие и комментарий *K. C. Տեր-Դավթյան և C. C. Արևոտյան*, Е., 1962, с. 5-6.

<sup>39</sup> Հ. Բարփիլյան, «Արարածու Սոլացու Յաղագս ամպոց եւ նշանաց» աշխատության հին հայերեն թարգմանությունը. – «Բանքեր Մատենադարանի», 1964, հ. 7, էջ 331-338, Գ. Արփարյան, Ա. Շիրակացուն վերագրված «Յաղագս ամպոց եւ նշանաց» աշխատության մասին. – «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1971, № 1, էջ 77-94, Հ.

ընդունում երկնքի շարժումը, ապա Ա. Շիրակացին կարծում է, որ «անշափ է երագութիւն շրջագայութեան երկնի»<sup>40</sup>: Բերելով մրցյունի հայտնի օրինակը, որը արագ շարժվող երկանի քարի վրա չընկնելու համար հակառակ ուղղությամբ է շարժվում, նա կարծում է, որ «թէպէտ եւ նման քաջ է օրինակս, սակայն մեզ անարգանք են ուսանել զընթացս լուսաւորաց ի փոքունց եւ ի մթին օրինակաց»<sup>41</sup>: Շիրակացին տեղյակ է նաեւ այն իրողությանը, որ լույսի արագությունը մեծ է ձայնի արագությունից. «մեք որ յառաջ հուրն տեսանեմք եւ ապա զորոտումն լսեմք, այս է պատճառն, զի թէպէտ եւ յամպոյն զոյգ ելանէ ձայնն եւ հուրն, այլ մեզ հուրն առաջոյ երեւի, վասն զի ակն երագ է քան զունկն, եւ ակն փոյթ կարէ տեսանել ի հնուին զհուրն, յորժամ յամպոյն ելանէ»<sup>42</sup>:

Տեղին է այն միտքը, թե «Շիրակացին հետեւելով Արիստոտելի Պտղոմեոսի ուսմունքին... շրջապատի երեւութների համար փնտրում է գիտական բացատրություններ»<sup>43</sup>: Լույսի եւ զերմության աղբյուրի մասին ասվում է. «Թողում զշար փիլիսոփայիցն ճառս, որ ասեն, թէ ի շինուած երագ ընթացիցն իւրոյ առնում զերմութիւն եւ օգոյս բերեալ տարածէ զաշխարհաւ: Բայց իմաստուն յայսոսիկ խորհողաց յայտնի է, թէ յԱրփոյ է եւ լոյսն եւ զերմութիւն որպէս առաջնոցն հաճոյ թուեցաւ ասել»<sup>44</sup>: Նա հայտնում է, որ որոշ եկեղեցական հայրերի կարծիքով Արեգակի լույսը արարչության առաջին երեք օրերի ցրված լույսն է, որ հավաքվել է Արեգակի ամանում<sup>45</sup>. «Արդ թէպէտ հոգեւորք են եւ սոքա, սակայն ես հաւանիմ սրբոց հարցն բազմաց միաբանելոյն, զոր եւ բարի փիլիսոփայքն արտաքնոցն համաձայնեն՝ յԱրփոյ ունել զլուսավորութիւն եւ զերմութիւն»<sup>46</sup>:

Հայտնի է, որ ըստ Արիստոտելի Արեգակը, Լուսինը, հինգ մոլորակները, անշարժ աստղերը ամրացված են ութ ոլորտների վրա: Շիրակացին գրում է. «Երկինքու եւթ պարունակք են, որ կոչին գաւտիք. սառնեղեալ գաւտին, որ կոչի

**Բարբիլյան**, Վերջին անգամ Արատոսի երկի հայերեն բարգմանության վերաբերյալ – ՊԲՀ, 1974, № 3, էջ 193-205, Գ. Աբգարյան, Կրկին Արատոս Սոլացու պոեմի մասին. – ՊԲՀ, 1974, № 3, էջ 206-218, Հ. Բարբիլյան, Արատոս Սոլացու և Պողոս Ալեմսանդրացու աստղաբաշխական երկերի հին հայերեն բարգմանությունը. – «Բանքեր Մատենադարանի», 1977, հ. 12, էջ 137-162:

<sup>40</sup> Տիեզերագիտություն եւ տոմար, էջ 48:

<sup>41</sup> Նոյն տեղում, էջ 49:

<sup>42</sup> Նոյն տեղում, էջ 36:

<sup>43</sup> Է. Դ. Դանիելյան, Արմանակական կոմպոզիցիան 7-րդ դարում. – Երևան, 1978, ս. 68-69.

<sup>44</sup> Տիեզերագիտություն եւ տոմար, էջ 48:

<sup>45</sup> Տես օրինակ՝ Բարսեղ Կեսարացի, Յաղագ վեցաւեայ արարշութեան, աշխատասիրությամբ Կ. Մուրագյանի, Երեւան, 1984, էջ 172: Կամ Մուրոյն Եփրեմի մատենագրութիւնի, հատ. սոսակին, Վենետիկ, 1836, էջ 5:

<sup>46</sup> Տիեզերագիտություն եւ տոմար, էջ 48:

Երկնից ցրտարնակ, այրեցանաւղ գաւտին, որ կոչի շարահիւսակ, մեծասիր գաւտին, որ կոչի անգոն կոռոնաւոր, խառնարան գաւտին, որ կոչի, որ եթերն բնակեալ է եւ արեգական, եւ նա ունի զ՞ոյլս ընթացից իւրոց, զի ի հինգերորդ գաւտաջն է արեգակն: Գեղեցկական գաւտին, որ կոչին, այս է, յորում է. (7) մոլորականացն առկայումն, եւ խոնարհ գաւտին, որ կոչի մերծ առ միւս գաւտին, որ միայն եթերն բնակեալ է, ուստի հրացանովիւն եւ փայլատակ-մունք լինին, խլուտմունք ամպոց, խոնարհմունք խոնաւոց, իշմունք ան-ձրեւաց... առաջին գաւտին հաստատովիւն ունի նովաւ, որ կոչի ութերե-ակ...»<sup>47</sup>: Քանի որ թվարկածներից բոլոր մոլորակների գոտին մեկն է «գեղեց-կականը», ապա ենթադրում ենք, որ այս շարքում են նաև այսպես կոչված «հատկական» գոտիները: Գրիգոր Տաթեւացին եւ Հակոբ Ղրիմեցին այդպես են անվանում երկիր-կուսին տարածության մեջ ընկած երկինքները, որոնք չորսն են՝ հրո վերին մասն՝ «հրեղեն երկին», հրո ներքին մասն՝ «օլոմբային երկին», քանի որ այն մոտ է Օլիմպիոս լեռանը, երրորդը՝ «եթերային» երկինն է, չոր-րորդը՝ «ներքին մասն օդոյն», որ կոչի «օդեղէն»<sup>48</sup>:

Երկիրն էլ, գտնվելով երկինքների կենտրոնում, ստացել է գնդի ձեւ. «ինչ միանգամ ի յերկնի է, ամենայն ինչ գնդացեալ է, կատարեալ ձեւոյն հա-սեալ, որպէս երկիր»<sup>49</sup>: Հայտնի է, որ հետագայում Արիստոտելի հետնորդները ավելացրին իններորդ ոլորտը: Ըստ այդ վարկածի անշարժ աստղերի ոլորտը կոչվում էր «հաստատութիւն», իսկ իններորդը՝ «առաջին շարժիչ»: 10-րդ դա-րում ավելացվեց էլի մեկ՝ տասերորդ ոլորտը<sup>50</sup>: Այդ ոլորտները պարզապես երկրաշափական արստրակցիաներ էին, որոնք ինչ-որ ճշտությամբ ներկայաց-նում էին մոլորակների եւ երկնակամարի օրական շարժումները:

Կարծիք կա, որ ըստ Հովհաննես Սարկավագի նույնպես «աշխարհի բնա-կան առաջացման սուբստանցիոնալ հիմքը «Արփին է»՝ «զանբաւ նիւթն»<sup>51</sup>: Ասենք, որ Հովհ. Սարկավագի բնագիտական, տիեզերագիտական հայացքները քննարկելիս ուսումնասիրողները հիմնվում են «կուծմունք եօթնից գրոցն Փի-լոնի» բնագրի վրա, որի հեղինակը ըստ նրանց՝ հենց Հովհ. Սարկավագն է<sup>52</sup>: Սակայն կա նաև տեսակետ. «Հիշյալ բնագիրը... Հովհաննես Սարկավագի գրչին պատկանել չէր կարող... եթե Հովհ. Սարկավագին ազատենք այս բնա-

<sup>47</sup> Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 325-326:

<sup>48</sup> Գրիգոր Տաթեւացի, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 183, Հակոբ Ղրիմեցի, «Մեկնութիւն տոմարի». – ՄՄ, ձեռ. № 1114, թ. 75ա:

<sup>49</sup> Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 332-333:

<sup>50</sup> Ա. Բերրի, նշվ. աշխ., էջ 85:

<sup>51</sup> Կ. Ա. Միրումյան, Հովհաննես Սարկավագի աշխարհայացքը, Ե., 1984, էջ 63:

<sup>52</sup> Նոյնը, Գ. Գրիգորյան, Փիլոն Ալեքսանդրացու աշխատությունների հայ մեկնություննե-րը. – «Բանքեր Մատենադարանի», 1960, հ. 5, էջ 95-110:

գրի հիման վրա արված բոլոր վերագրումներից, նա դարձյալ ամուր բազմած կմնա իր պատվավոր պատվանդանին»<sup>53</sup>:

Մենք չենք, որ պիտի գնահատենք աղբյուրագիտական ճշգրտումների բարդ եւ շնորհակալ գործընթացի նշանակությունը: Տվյալ դեպքում գիտության պատմության համար կարեւորն այն է, որ տարբեր դարերում հայ գիտական միտքը եղել է ժամանակի առաջավոր դիրքերում: Այդ մասին են վկայում նաեւ 14-րդ դարի աղբյուրները: Հայտնի է, որ 14-րդ դարի սկզբին հիմնվել էր Մարաղայի լատին եպիսկոպոսությունը, իսկ Քոնայում նաեւ միարարների հայկական միաբանությունը Բարդուղիմեոս Մարաղացու գլխավորությամբ, որտեղ ունիթոռները լատիներենից թարգմանում էին կաթոլիկական ոգով կրոնական գրքեր, հայերի մեջ տարածելով Արեւմուտքի սխոլաստիկական գաղափարները: Եթե ունիթոռական շարժման քաղաքական կողմնորոշումը սնանկ ու խիստ վնասակար հետեւանքներ կարող էր ունենալ հայ ժողովրդի համար, ապա ինչպես և Խաչիկյանն է գրում. «Ծրչահայաց պետք է լինել ու մեծ զգուշություն ցուցաբերել Քոնայում ստեղծված բարձրագույն դպրոցի շուրջ համախմբված եվրոպացի եւ հայ վարդապետների գիտական ժառանգությունը գնահատելիս», քանի որ «Նրանք շատ շուտով դուրս են գալիս անձուկ սահմաններից եւ տարածվում հայ լուսավորչական եկեղեցու գիտական-ուսումնական կենտրոններում»<sup>54</sup>: Կաթոլիկական միջավայրում ստեղծված այդ գրականությունը ըստ Ս. Արեւշատյանի՝ «հայկական միջնադարյան մատենագրության անկապտելի մասն է»<sup>55</sup>:

Այսպես, այն հարցին, թե ինչու է երկինքը գնդաձեւ, միջնադարում ելնում էին մի դրույթից, որ գալիս էր պյութագորականներից, իսկ հետո նաեւ Արիստոտելից. մարմնի ձեւերից ամենակատարյալը գունդն է<sup>56</sup>: Երկինքը բոլորակ է, որովհետեւ այն պարզագույն ձեւ է, մեկ գծից է բաղկացած, իսկ օրինակ եռանկյունին՝ երեք գծից, քառանկյունին՝ չորս, եւ այլն: Բոլորակ ձեւը բոլոր ձեւերի մեջ «պարունակող» ձեւն է, չունի անկյուններ, որ խանգարի, առավել սրագույն շարժվող մարմնին պատշաճ է այնպիսի ձեւ, որ հարմար է շարժման համար, քանի որ ոչինչ չի ավելանում, չի պակասում, չունի սկիզբ եւ կատարած: Եթե երկինքն ունենար չորեքանկյունի եւ տափարակ ձեւ, անպատշաճ կլիներ, քանզի կպատճեր, որ տեղը դատարկ կմնար, կամ հակառակը: Այդ

<sup>53</sup> Փ. Փ. Անքայլյան, Հովհաննես Սարկավագին վերագրված «Լուծմունք եօրնից գրոցն Փիլմի» բնագրի առնշուրյամբ. – ՊԲՀ, 1983, №.1, էջ 177:

<sup>54</sup> Յովհաննես Քոնեցի, Յաղագս Բերականին, բնագիրը հրատարակության պատրաստեց և. Խաչիկյանը, ներածությունը և. Խ. Խաչիկյանի եւ Ս. Ա. Ավագյանի, Ե., 1977, էջ 30:

<sup>55</sup> С. С. Аревшатян, К истории философских школ средневековой Армении, Е., 1980, с. 10.

<sup>56</sup> Аристотель, Физика, М., 1936, с. 165.

դեպքում երկնային մարմինները գալով երկնքի մեջտեղը, մեզ ավելի մոտ լինելով ավելի մեծ կերեւային: Այս միտքը գրեթե բառացի գտնում ենք ինչպես Բարդուղիմեոս Մարաղացու<sup>57</sup>, Հովհան Որոտնեցու<sup>58</sup>, Գրիգոր Տաթեւացու<sup>59</sup>, այնպես էլ Հակոբ Ղրիմեցու մոտ<sup>60</sup>:

Որքան էլ տարօրինակ է, 14-րդ դարում քննարկման առարկա էր նաև Լուսնի սեփական լուս ունենալու հարցը: Թվում է, թե հույն գիտնականները մեկընդիշտ պարզել էին այն: Սակայն ինչպես գրում է Արիստոտելի ուսումնամիրողներից մեկը, այդ հարցը մանրամասն քննարկվում էր միշնադարյան թե՛ արեւելյան, թե՛ արեւմտյան անթիվ մեկնաբանների կողմից ընդհուպ մինչեւ կեռնարդո դա Վինչին<sup>61</sup>: Տաթեւի դպրոցում ընդունված է եղել լուսնի թե՛ սեփական եւ թե՛ Արեգակից փոխառնված լուսի առկայությունը. «Ունի բնական լոյս եւ յԱրեգակն լոյս ընդունի»<sup>62</sup>, - գրում է Գ. Տաթեւացին: Հ. Ղրիմեցին նույնապես ընդունում է Գ. Տաթեւացու այս թեզը<sup>63</sup>, որը տարբեր էր նույն հարցի շուրջ գաղափարական հակառակորդների ունեցած կարծիքից<sup>64</sup>: Ասենք, որ նույն հարցի քննարկումը գտնում ենք 14-րդ դարի Փարիզի համալսարանի ոեկտոր Ժան Բուրիդանի մոտ. «Կա կասկած, թե արդյոք լուսինը, բացի Արեգակի լուսը անդրադարձնելուց, ունի՞ սեփական լուս»<sup>65</sup>:

Ուզում ենք մեր հոդվածն ավարտել և Խաչիկյանի բառերով. «Արեւելյան ժողովուրդներից հայերն առաջինն էին, որ հաղորդակից դարձան եվրոպական գիտության նվաճումներին եւ, ինչպես թարգմանություններ կատարելով, այնպես էլ ինքնուրույն երկեր շարադրելով հարստացրին հազարամյա հայ մատենագրությունը նոր արժեքներով»<sup>66</sup>:

<sup>57</sup> Բարդուղիմեոս Մարաղացի, Մեկնուրին վեցօրէից. – ՄՄ, ձեռ. 1659, թ. 101թ-103ա:

<sup>58</sup> Հովհան Որոտնեցի, Հաւամեալ ի բանից իմաստափրաց. – «Բանքեր Մատենադարանի», 1956, հ. 3, էջ 384:

<sup>59</sup> Գրիգոր Տաթեւացի, նշվ. աշխ., էջ 182-183:

<sup>60</sup> Հակոբ Ղրիմեցի, նշվ. աշխ., թ. 74ա-բ:

<sup>61</sup> Վ. Պ. Յուսով, Արիստոտել, Մ., 1963, ս. 100-101.

<sup>62</sup> Գրիգոր Տաթեւացի, Գիրք բարուրեան, որ կոչի Ամարան հասոր, Կ. Պոլիս, 1742, էջ 684:

<sup>63</sup> Հակոբ Ղրիմեցի, նշվ. աշխ., թ. 55ա:

<sup>64</sup> Լուսնի լուսը միայն Արեգակով պայմանավորված լինելու մասին խոսել են թե՛ Ալեքսանդր (անընդունակ աստղագիտական տեսանկարների մեջ) Մեծին Ալպերտի, Վենետիկի, 1715, էջ 89) եւ թե՛ Բ. Մարաղացին (ՄՄ, ձեռ. № 1659, թ. 155ա):

<sup>65</sup> Ի. Վ. Լուպանдин, Ջան Բուրիդան և սույն աշխատանքները աստղագիտության վերաբերյալ, - ԻԱԻ, Մ., 1989, ս. 159.

<sup>66</sup> Լ. Խաչիկյան, Հայ բնագիտական միտքը 14-18 դդ. – ՊԲՀ, 1971, № 2, էջ 34:

## ԱԵԼԻՏԱ. ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

### ԱՍՏՎԱԾԱՇՆՅԱՅԻՆ ՄԻ ՊԱՏԳԱՄԻ ԴՐՍԵՒՈՐՈՒՄԸ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՅՈՒ ԵՒ ՄԿՏՐԻԶ ՆԱՂԱՇԻ ՄՈՏ

Միջնադարյան հայ մատենագրությունը ներծծված է Աստվածաշնչի Հին և նոր կտակարանի գաղափարներով, պատգամներով, դեմքերով եւ դեպքերով: Հայ եկեղեցու առաջադեմ գործիչները ջանացել են աստվածային պատգամները ներարկել ժողովրդին՝ մարդու եւ ազգի հասարակական ու անձնական կյանքը առավել դյուրին եւ օրինակելի դարձնելու ազնիվ մղումով: Աստվածաշնչային պատգամները օրենքի ուժ պետք է ստանային մարդու համար, այդ դեպքում մարդը հեշտորեն կանցներ «վայրի ծաղկի նմանվող» իր կարճատեւ կյանքը եւ կարժանանար տենչալի հավերժությանը:

Ահա այդ դերն էր կատարում եկեղեցում հանապազօրյա ասվող քարոզը, որում մերժվում էին մարդու վարքագծի այնպիսի հոռի կողմերը՝ ինչպիսիք էին շարությունը, նախանձը, բամբասանքը, ագահությունը, ընշաքաղցությունը եւ սրանց հարակից արատները: Ահա այս առումով բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում 14-րդ դարի երկրորդ կեսի եւ 15-րդ դարասկզբի մեծ մտածող՝ փիլիսոփիա, աստվածաբան, մանկավարժ Գրիգոր Տաթեւացու «Քարոզգիրքը» իր երկու ծավալուն գրքերով «Զմերան» եւ «Ամարան»:

Մենք խոսելու ենք «Ամարան» հատորի մեջ եղած «Վասն ագահութեան» քարոզի մասին, որն իր օրինակներով զարմանալիորեն համընկնում է 15-րդ դարի մեկ այլ նշանավոր գործշի՝ Ամիդ քաղաքի հոգեւոր առաջնորդ Մկրտիչ Նաղաշի «Վասն ագահութեան» բանաստեղծության հետ:

Գրիգոր Տաթեւացու՝ ազգային գործշի նկարագրի մասին մեզանում ասված է. «Բայց ինչպես էլ լինի, այս շրջանի վարդապետների գրավոր երկերը մեծ մասամբ ունեն ոչ թե գրական-գեղարվեստական արժեք, այլ ընդհանրապես կուտուրական: Կարելի չէ, հարկավ, մեր ժամանակի շափանիշով վերաբերել նրանց գիտական գրվածքներին ու գործունեությանը: Առասպելներն ու գրուցները, սին դատողություններն անգամ պարզում են այն դարու ոգին ու հասկացությունները, կյանքն ու բարքերը, էլ չենք ասում կան նաեւ բազմաթիվ փայլուն մտքեր ու դատողություններ, որոնք այն ժամանակի համար ակնբախ են: Զպետք է մոռանալ, որ այն մարդիկը տքնել եւ հորինել են գործնական նպատակի համար, պատրաստել ըստ իրենց ժամանակի հասկացության գի-

տուն աշակերտներ, որ ընդունակ լինեին մաքառելու եւ ազգային անկման առաջն առնելու»<sup>1</sup>:

Գրիգոր Տաթեւացու «Քարոզգիրքը» պահպանված է բազմաթիվ ձեռագիր օրինակներով<sup>2</sup>: Մեծ փիլիսոփայի քարոզգրքերը, մատենագրի ապրած ժամանակներից սկսած եւ հետագայում, հայ հոգեւոր կյանքում ունեցել են լայն կիրառություն:

Քարոզի կենսական նշանակության վերաբերյալ բազմաթիվ օրինակներ են բերում «Նոր բառգիրք հայկագեան լեզուի» հատորների հեղինակները: Այդ օրինակները թե՛ Աստվածաշնչից են, թե՛ Հարանց վարքից եւ թե՛ հայ մատենագիրներից: Շատ դիպուկ է եզնիկ Կողբացուց բերված օրինակը. «Կրթեաց քարոզովք եւ մարգարեիւք իբրեւ կաթամբ: Եզնիկ»<sup>3</sup>:

«Ամարան հատորը», - ինչպես նշում է Գրիգոր Տաթեւացու փիլիսոփայական հայացքներն ուսումնասիրած ակադեմիկոս Սեն Արեւշատյանը, - ավարտվել է 1407-ին երկարամյա աշխատասիրությունից հետո»<sup>4</sup>:

Գրիգոր Տաթեւացին դեռ կենդանության օրոք հոչակ է վայելել: Այդ են վկայում նրան ժամանակակից եւ հետագա մատենագիրները: 1741-ին Կոստանդնուպոլսում լույս տեսած Գրիգոր Տաթեւացու «Գիրք քարոզութեան, որ կոչի Ամարան հատոր» աշխատությունը տպագրվել է Ղափանցի Մահական Շահնազարի ծախսով: Մատյանի «Նախագրութիւնք» հատվածը շարադրել է «տեառն Ղազար գերընատիր եւ սրբազն կաթողիկոսն ամենայն Հայոց»: Նա Գրիգոր Տաթեւացուն կոչում է Զորրորդ Լուսավորիչ ազգիս եւ հայ եկեղեցու պարծանք: Իր ասածը հաստատելու համար պատմում է մի մարգարեական երազ, որ տեսել է Գրիգոր Տաթեւացու մայրը: Երազում Սուրբ Լուսավորիչը ձեռքին բռնած կանթեղը, որի լույսը նվազած էր, տալիս է Գրիգորի ապագա մորը՝ ասելով. «Վերցրու եւ պահիր քեզ մոտ, որովհետեւ քեզնից ծնվելու է մանուկ, որը լուսավորելու է խավարած կանթեղը ուղղափառ դավանությամբ եւ ողջամիտ վարդապետությամբ»<sup>5</sup>:

Հոչակավոր փիլիսոփայի քարոզգրքերն, անշուշտ, արտագրվում, բազմացվում էին Հայաստանում, տարածվում նաև նրա սահմաններից դուրս գտնվող հայ եկեղեցիներում, օգտագործվում որպես ուսուցողական ձեռնարկ, ինչպես նաև քարոզի բնագիր:

<sup>1</sup> Մ. Արեւյան, Հայոց հին գրականուրյան պատմություն, հ. II, Երեւան, 1944, էջ 364:

<sup>2</sup> Տե՛ս Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ, Կազմեցին՝ Օ. Եղանյան, Ա. Զելթունյան, Փ. Անթարյան, Յանկերը եւ համեմատական տախտակները՝ Օ. Եղանյանի, Խմբագրությամբ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Երեւան, 1970, էջ 1290:

<sup>3</sup> Նոր բառգիրք հայկագեան լեզուի, հ. II, Երեւան, Հ-Ֆ, Վենետիկ, 1837, էջ 999:

<sup>4</sup> С. Аревшатян, Философские взгляды Григора Татевави, Ереван, 1957, с. 32.

<sup>5</sup> Գրիգոր Տաթեւացի, Գիրք խարոզութեան, որ կայ Ամարան հասոր, Կ.Պոլիս, 1741, էջ 4:

Մկրտիչ նաղաշի լավագույն տաղը կոչվում է «Խրատական բաներս ագահութեան եւ անընչութեան ի նաղաշ վարդապետէ ասացեալ»: Ինչպես Գրիգոր Տաթեւացին իր «Վասն ագահութեան» քարոզում եւ մյուս քարոզներում («Վասն նախանձու») հաճախ է հիշում Հին կտակարանի մարդարեներին ու Սողոմոն Իմաստունին<sup>6</sup>, առաքյալներին, այնպես էլ Մկրտիչ նաղաշն իր «Վասն ագահութեան» տաղի հենց սկզբում վկայում է Սողոմոն Իմաստունի խոսքերը.

Սողոմոն մայրն իմաստութեան առ մեզ խօսի բան խրատական,

Թ՛ որ յաւելու ի մեծութեան, նայ ցաւք անձինն բազմանան.

Լաւ է մի բուռն հանգստեան, բան երկու բուռն աշխատութեան,

Զոր առաքեալն վկայէ, թէ շափաւորն է բաւական<sup>7</sup>:

Թէ՛ Գրիգոր Տաթեւացու «Վասն ագահութեան» քարոզում եւ թէ՛ Մկրտիչ նաղաշի «Վասն ագահութեան» տաղում ագահության առաջին շար հետեւանքը Աղամի դրախտից վտարվելն է: Փիլիսոփան թվարկում է ագահության մյուս աղետալի հետեւանքները: Աղահության պատճառով ուրիշին զրկում ենք եւ հափշտակում, սուս ենք խոսում, սուս երդվում, նախանձում, հայհոյելով թշնամանում, պատերազմում ենք, հակառակվում, բռնանում ենք, սպանում: Եվ այդ բոլոր շարիքները եւ՝ խոռովությունները, եւ՝ թալանը, եւ՝ գերությունը, եւ՝ երկրի ավերումը ագահության պատճառով է: Հենց այդ ագահության պատճառով Աղամը դրախտից դուրս շպրտվեց, ուներ դրախտի բոլոր պտուղները, մեկն էլ ուզեց ունենալ, կինն ագահացավ, նախանձեց Աստծու փառքին, ուզեց աստվածորդի ծնել եւ կերավ արգելված պտուղը, եւ ագահության պատճառով մերկացան Աղամն ու եվան, զրկվեցին լուսից, ընկան ցավերով ու փշերով լի աշխարհը<sup>8</sup>:

Մկրտիչ նաղաշը գրում է.

Ի սկզբանէ մինչ ի վախճան ամէն շարիք, որ գործեցան,

Աղահութիւն եղեւ պատճառ, որ ի բարեացն զրկեցան.

Հայեաց եւ տես զնախնին Աղամ, որ ի դրախտին յադինական,

Աստուածային կերպարանօք պայծառանայր յարեւ նման,

Աղահութիւն եղեւ պատճառ, որ ցանկացաւ աստուածութեան,

Վասն այն էանց զպատուիրան եւ մերկացաւ զպատմուճան<sup>9</sup>:

Եվ Գրիգոր Տաթեւացու, եւ՝ Մկրտիչ նաղաշի մոտ հանդես են գալիս Կայենն ու Աբելը: Փիլիսոփան ասում է, թէ Կայենը սպանեց Աբելին ագահության

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 428:

<sup>7</sup> Մկրտիչ նաղաշ, Աշխատասիրությամբ էդ. Խոնդկարյանի, Երեւան, 1965, էջ 113:

<sup>8</sup> Գրիգոր Տաթեւացի, Գիրք բարոնութեան, որ կոչի Ամարան հատոր, էջ 255:

<sup>9</sup> Մկրտիչ նաղաշ, էջ 114:

պատճառով: Նա կամեցավ, որ միայն ինքը լինի Աղամի որդին եւ տիրի ամբողջ երկրին: Բայց երկրին տիրելու փոխարեն փախավ մարդկանցից եւ անասունների հետ էր շրջում: Եվ նրա կինը, զավակները կործանվեցին ու ջնջվեցին, թոռները ջրհեղեղի մեջ լնկան:

Տես զԿայէն եղբայրասպան, թէ զինչ գործեաց, որ չէր արժան,  
Նախանձեցաւ ագահութեամբ եւ սիրասնունդ եղբայրն եսպան...<sup>10</sup>:

Գր. Տաթեւացին հիշեցնում է, թե Աստված ապրեցրեց միայն նոյին, որովհետեւ նա սուրբ էր մնացել ագահության ու պոռնկության ախտից: Բանաստեղծը գրում է.

Որպէս յաւուրս ջրհեղեղին ագահութեամբ պոռնկեցան,  
Ջրհեղեղաւ կործանեցան, ամէնն վասն ագահութեան<sup>11</sup>:

Քարոզգրի համապատասխան հատվածում հիշատակվում են Հեսուն եւ Աքարը, Երիքով քաղաքին ուղղված անեծքը: Նույնը տեսնում ենք տաղի մեջ.

Նայեաց եւ տես զԱքար Ջարաեան, որ ի յաւուրս Յեսու նաւեան,

Որ էր իշխան երեւելի եւ չէր կարօտ նա մեծութեան.

Դողացաւ նա ի յանիծիցն Երիքովի, որ չէր արժան,

Նա տուն որդովք քարակործեցան, ամէնն վասն ագահութեան...<sup>12</sup>:

Գր. Տաթեւացին հիշեցնում է հայտնի առակը. «Ագահի աշքը կշտանում է գերեզմանում, երբ նրա աշքը լցվում է մի ափ հողով»<sup>13</sup>: Նա ագահների թվում է դնում նաև Սավուղին, որին Աստված պատվիրեց գնալ Ամաղեկ եւ վրեժինդրել Աստծու ժողովրդից: Տերը պատվիրեց, որ նա ավար չվերցնի, բայց նա ագահությունից լսեց Տիրոջը: Նույն դեպքերը Մկրտիչ նաղաշի մոտ ձեւակերպված են հետեւյալ կերպ.

Հայեաց եւ տես զՍաւուղ Կիսեայն, որ յԱստուծո էառ հրաման՝

Խնդրել զվրէժ ժողովրդեան եւ սպանել զԱգակ արքայն:

Ագահութեամբ նա կուրացաւ եւ մոռացաւ զՏեառն հրաման,

Վասն այն կորոյս զմեծութիւն եւ շար դիւաց եղեւ դարան<sup>14</sup>:

Գրիգոր Տաթեւացին հիշում է բորոտ նէմային, որ գալիս է Դամասկոսից, Եղիսէ մարգարեի ձեռքով մկրտվում Հորդանան գետում եւ ցավերից ազատվում: Նա մարգարեին ասում է. «Վերցրու իմ բեռներից ոսկի եւ արծաթ, որ քեզ եմ բերել, որովհետեւ դու ինձ բժշկեցիր»<sup>15</sup>: Եվ մարգարեն նրանից ոչինչ

<sup>10</sup> Նոյն տեղում:

<sup>11</sup> Նոյն տեղում, էջ 115:

<sup>12</sup> Նոյն տեղում:

<sup>13</sup> Գրիգոր Տաթեւացի, Գիրք Խարզութեան, որ կոչի Ամարան հատոր, էջ 255:

<sup>14</sup> Մկրտիչ նաղաշ, էջ 115:

<sup>15</sup> Գրիգոր Տաթեւացի, Գիրք Խարզութեան, որ կոչի Ամարան հատոր, էջ 256:

շի վեցնում՝ ասելով, թե Աստծու անունն է նրան ձրիաբար բուժել, ուրեմն ինքը ոչինչ շի կարող վեցրնել: Մկրտիչ նաղաշն ասում է.

Խարեաց, պատրեաց զնէեման, զարծաթն առեալ ի թագստեան,

Նա անիծիք բորոտեցաւ, ամէնն վասն ագահութեան<sup>16</sup>:

ԹԵՇ Գր. Տաթեւացին եւ թեՇ Մկրտիչ նաղաշը ագահության շարիքի բարձրակետը համարում են Հուդայի դավաճանությունը Հիսուս Քրիստոսին: Քարոզի հեղինակը ատենախոսական կետերով մեղադրական է կարդում. «...Յայտնի է ի Յուդայէ, որ վասն ագահութեան մատնեաց զփրկիչն աշխարհի եւ խաչել ետ: Եւ տես զմեծ վնաս նորա: Նախ, զի աշակերտ էր, զվարդապետն իւր մատնեաց եւ ոչ զօտար ոք: Երկրորդ՝ զի տեսեալ էր զամենայն սքանչելիսն Քրիստոսի եւ լւեալ զքարոզութիւն աւետարանին: Երրորդ՝ զի յընտրելոց կարգէն էր յերկոտասանիցն՝ ոչ յետին ոք կամ անպատիւ: Զորրորդ՝ զի զարկղ արծաթոյ ինքն ունէր եւ պահէր: Եվ ոչ էր կարօտ կամ աղքատ: Հինգերորդ՝ զի բազում անգամ զգուշացուցեալ էր զնա, թէ (վայ մարդոյն յոյր ձեռն գայցէ գայթակղութիւն որդի մարդոյ երթայ եւ լաւ էր, թէ չէր ծնեալ մարդն այն եւ թէ (մի ուն ի ձէնջ մատնելոց է զիս) եւ թե՝ (համբուրելո՞վ մատնես զորդի մարդոյ) այլ սէր արծաթոյն կուրացուցեալ էր զնա: Վեցերորդ՝ զի անմեղն մատնեաց, որ չէր ինչ մեղապարտ մահու՝ ոչ առ նա, եւ ոչ առ այլս»<sup>17</sup>:

Գրիգոր Տաթեւացին բացատրում է, թե Հուդան իր կամքով եւ ագահության համար ուրացավ: Այդ առավել ագահությունից նա հուսահատվեց ու իւեղդվեց, կործանվեց թե հոգով եւ թե մարմնով: Հուդայի վերցրած արծաթից նա չօգտվեց ոչ իրական կյանքում, ոչ մահվան ժամանակ: Նրա դիակն այնպես է գարշահոտում, որ դրանից գարշում են նույնիսկ Հիսուսին խաշողները:

Բանաստեղծը գրում է.

Այլեւ Յուդայ Մկրտիկովտացի որդի եղեւ նա կորստեան,

Զիւր վարդապետն ի մահ մատնեաց, յորմէ երկինք՝ և երկիր դողան:

Ագահութեան ախտն է դաժան, որ զաշկերտն արար գազան,

Զիւր վարդապետն ի խաչ եհան, ամէնն վասն ագահութեան<sup>18</sup>:

Հետաքրիր է, որ Գրիգոր Տաթեւացու «Քարոզգրի» մեջ եղած «Վասն ագահութեան» հատվածի սկիզբը Մկրտիչ նաղաշի մոտ տեղափոխված է քերթվածի համապատասխան հատվածի վերջը: Երկու հոգեւոր առաջնորդներն էլ կրկնում են ագահի եւ արյան ծարավ գալի համեմատությունը:

<sup>16</sup> Մկրտիչ նաղաշ, էջ 116:

<sup>17</sup> Գրիգոր Տաթեւացի, Գիրք բարոզութեան, որ կոչի Ամարան հասոր, էջ 256-257: Ուղարկույունը բերվում է ըստ բնագրի - Ա.Դ.:

<sup>18</sup> Մկրտիչ նաղաշ, էջ 116:

Գրիգոր Տաթեւացին որպես ագահ մարդու էության հինգերորդ հատկանիշ նշում է, թե նա նման է «քաղցեալ գայլի, որ ոչ հագե»<sup>19</sup>: Եվ հիշեցնում է սուրբգրային առակը. «Եռիւծ քաղցեալ եւ գայլ ծարաւի»: Մկրտիչ նաղաշը բանաձեւում է նույն միտքը հետեւյալ կերպ.

Ագահն գայլ է պատառող եւ ծարաւի արեան մարդկան,  
Խլէ, զրկէ, յափշտակէ, ոչ յագենայ արեամբ մարդկան<sup>20</sup>:

Այնուհետեւ թվարկվում են իրական կյանքում ագահության կործանիչ հարվածները: Գողություն, սուս երդում, բանտ ու կախաղան, արյունահեղություն, պատերազմներ, խոռվություն ու բաժանություն.

Որք կովին եւ վշտանան, որք նախանձին եւ գողանան...  
Որք հարկանան եւ գողանան, սուս երդնուն եւ ուրանան...  
Տեսայ զոմանս ի նեղ զնտան, այլեւ բազումս ի կախաղան...  
Զինչ թագաւորք եւ մեծ իշխան, որ հեծելով յիրաւ կոռւան,  
Զինչ որ արիւն յերկիր հեղան, ամէնն վասն ագահութեան,  
Զինչ որ քաղաք տապալեցան եւ ժողովուրդք որ գերեցան,  
Զինչ որ աւերք առ եւ թախտան, ամէնն վասն ագահութեան...<sup>21</sup>

Այս զուգահեռները երեւան են բերում հայ միջնադարի երկու երեւելի հոգեւոր գործիչների գրվածքների մտքերի ու օրինակների նույնականությունը, եւ հիմք են տալիս ենթադրելու, թե Մկրտիչ նաղաշը բանաստեղծորեն վերարտադրել է Գրիգոր Տաթեւացու «Քարոզգրքի» «Վասն ագահութեան» հատվածը՝ նույնքան կարեւորելով նրա ներգործուն ուժը հավատացյալ ժողովրդի վրա:

<sup>19</sup> Գրիգոր Տաթեւացի, Գիրք հարոզութեան, էջ 253:

<sup>20</sup> Մկրտիչ նաղաշ, էջ 116:

<sup>21</sup> Մկրտիչ նաղաշ, էջ 117:

## ՔՐԻՍՏԻՆԵ ԿՈՍՏԻԿՅԱՆ

### ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԱՀԵՐԻ ԵԽ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՂԱԶԱՐ ԶԱՀԿԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԶԵՌՔ ԲԵՐԱԾ ՇԱՀԱԿԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Իրանական տիրապետության շրջանում հայ ժողովրդի գոյատեւման համար կարեւոր նշանակություն ունեին Հայոց կաթողիկոսների կողմից իրանական իշխանությունների հետ դրական հարաբերությունների ապահովումը եւ իրանահպատակ հայության ու հայ եկեղեցու կենսական շահերի պաշտպանությունը շահական հրովարտակներով։ Ուստի հայոց կաթողիկոսների գործունեության գնահատման հարցում խիստ անհրաժեշտ է հաշվի առնել նաև նրանց ձեռք բերած իրավական փաստաթղթերն ու հրովարտակները։ Այս առումով գիտական մեծ արժեք են ներկայացնում Մատենադարանում պահպանված պարսկալեզու վավերագրերը, որոնցից սույն հոդվածի շրջանակներում կդիտարկվեն Ղազար Ջահկեցի կաթողիկոսի ձեռք բերած հրովարտակները՝ գնահատելու համար նրա գործունեության որոշ առանձնահատկություններ։

Երեւանի Մատենադարանում պահպանվել են S. Ղազար և Ջահկեցի (1737–1751 թթ.) Ամենայն Հայոց կաթողիկոսի ջանքերով ձեռք բերված 19 հրովարտակ, որոնցից 11-ը հրապարակվել են 1740–1743 թթ. Նադիր շահի եւ նրա որդի ու իրանի փոխարքա Ռեզա Ղուլի Միրզայի կողմից, իսկ 8-ը՝ իրահիմ շահի կողմից 1748–1749 թթ.։ Այս հրովարտակներն ի հայտ են բերում կաթողիկոսի ջանքերը հայ եկեղեցու ու հայ ժողովրդի իրավունքներն ու շահերը հարեւան քոչվոր բնակիչների, պետական պաշտոնյանների եւ մահմեդական հոգեւորականների, նաև կաթողիկ քարոզիչների ոտնձգություններից պաշտպանելու ուղղությամբ։

Հստ ժամանակագրական կարգի Ղազար կաթողիկոսի կողմից ձեռք բերված ու պահպանված պարսկալեզու հրովարտակներից առաջին երեքը հրապարակված են 1740 թ. հունվարին, այն ժամանակահատվածում (1738 թ. նոյեմբերի – 1740 թ. ապրիլ), երբ Նադիր շահը իրականացնում էր իր ուազմական արշավանքը դեպի Հնդկաստան, իսկ իրանը կառավարում էր նրա որդի Ռեզա Ղուլի Միրզան, որը նշանակվել էր փոխարքա։ Ուստի պատահական չէ, որ Ամենայն Հայոց կաթողիկոսի ձեռք բերած հիշյալ հրովարտակները հրապարակված են Ռեզա Ղուլի Միրզայի անունից։ Այս հրովարտակներն առանձնանում են նրանով, որ յուրաքանչյուրում շոշափվում են մի քանի խնդիրներ, եւ դրանց

վերաբերյալ կարգադրություններ են արվում, այն դեպքում, երբ այդ հարցերից ամեն մեկի առնչությամբ սովորաբար հրապարակվում էր առանձին հրովարտակ:

Այս հրովարտակներից մեկը<sup>1</sup>, ինչպես եւ *XVII* դարում Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի ջանքերով ձեռք բերված մի շարք այլ հրովարտակներ<sup>2</sup>, հենվելով նախորդ շահերի հրովարտակների ու մահմեդական բարձր հոգեւորականների կայացրած վճիռների վրա, արգելում է խոշոնդոտել հայերին իրենց եկեղեցիների վերանորոգման ու նորերը կառուցելու, եկեղեցական զանգերը հնչեցնելու ու ծիսական արարողությունները անցկացնելու հարցում:

Երկրորդ հրովարտակով<sup>3</sup> արգելվում են հետ պահանջել երեւանի նահանգից արտագաղթած քոչվոր ցեղերի կողմից հայերի մոտ թողնված գույքը, որ զավթել էին թուրքական զորքերը, նաև՝ իրենց քրիստոնյա ազգականների ունեցվածքի նկատմամբ նոր մահմեդականացած հայերի հավակնությունները: Երեւանի նահանգից հիշյալ քոչվոր ցեղերը գաղթեցվել էին *1730-1731* թթ. շահ Թահմասպ II-ի կողմից: Ինչպես նշվում է հրովարտակին կցված խնդրագրի տեքստում. «Օսմանցիների օրոք հանգուցյալ Թահմասպ Միրզան մտավ Երեւան եւ այնտեղի բոլոր ցեղերին գաղթեցրեց իրաքի կողմերը: Ցեղերի մարդկանցից յուրաքանչյուրն իր ունեցվածքն ու գույքը ժամանակավորապես թողեց գյուղերում հայերի տներում: Օսմանցիները այդ ամենը պարտադիր կերպով բոլոր տեղերից հավաքեցին ու զավթեցին՝ տանտերերին նույնպես վնաս հասցնելով»: Հետագայում այդ ցեղերի անդամները վերադառնալով սկսում են ետ պահանջել իրենց ունեցվածքը, որը բնականաբար մեծ նեղություն էր պատճառում այն հայերին, որոնց պահպանությանն էր հանձնվել այն, բայց խլվել հետագյում Երեւանի նահանգը իրենց ենթարկած թուրքական իշխանությունների կողմից: Այս խնդրի շուրջ նադիր շահից հրովարտակ էր ձեռք բերել նաեւ նախորդ կաթողիկոս Աբրահամ Կրետացին *1735* թ., որը սակայն շի պահպանվել<sup>4</sup>: Հաջորդ հարցը, որ բարձրացվում է այդ հրովարտակում, վերաբերում է իրենց քրիստոնյա ազգականների ժառանգության նկատմամբ նոր մահմեդականացած հայերի, այսպես կոչված ջադիդ-ուլ-իսլամների, հավակնությունների արգելմանը. մի հարց, որի դրական լուծումը խիստ կարեւոր էր իրանահպատակ հայության համար: Շիա մահմեդականների մոտ Աեֆյան ժամանակաշրջանում լայն կիրառություն ուներ այսպես կոչված իմամ

<sup>1</sup> Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 367:

<sup>2</sup> Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ III, Երեւան, 2005, վավերագրեր 28, 31, 33, 34:

<sup>3</sup> Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 1դ, վավ. 483:

<sup>4</sup> Աբրահամ Կրետացի, Պատմութիւն, Երեւան, 1973, էջ 52:

Ջահֆարի օրենքը, ըստ որի զիմմի<sup>5</sup> ույաթների<sup>6</sup> մահմեդականացած ազգականները իրավունք ունեին իրենց քրիստոնյա ազգականների ունեցվածքը ամբողջովին գրավելու եւ նրանց գրկելու ժառանգությունից: Այս առթիվ բազմաթիվ բողոքագրերի եւ դատական պրոցեսների ստվար գործեր կան պահպանված<sup>7</sup>: Հիշալ օրենքի կիրառությունը մեծ նեղություն էր պատճառում իրանահպատակ հայությանը՝ նպաստելով նրանց մահմեդականացմանն ու թույլ տալով անգամ ազգական շհանդիսացող մահմեդականացած անձանց հավակնություններ ունենալ մահացած քրիստոնյացի ունեցվածքի նկատմամբ<sup>8</sup> կամ էլ օտարման ոչ ենթակա վակֆային կալվածքները փորձել հափշտակել Մայր Աթոռ Ս. էջմիածնից<sup>9</sup>: Սեֆյան պետության անկման շրջանում հայոց կաթողիկոսներ Աստվածատուր Ա. Համադանցուն եւ Աբրահամ Բ Խոշաբեցուն հաջողվում է իրանի շահ Թահմասպ Բ-ից, որի իշխանությունը ավելի շատ ձեւական բնույթ էր կրում, այս հարցի վերաբերյալ ձեռք բերել հայերի համար նպաստավոր բովանդակություն ունեցող հրովարտակներ: Մասնավորապես, շահ Թահմասպ Բ-ի 1724թ. հրամանագրով մի շարք դատական ու վարչական ատյաններում իրենց իրավունքները հաստատելուց հետո միայն նոր մահմեդականացած հայերին իրավունք էր տրվում հավակնել իրենց ազգականների ունեցվածքին<sup>10</sup>: Այս հրովարտակը գործադրվելու դեպքում, փաստորեն, որոշ շափով պետք է դժվարացներ մահմեդականացած հայերի համար իրենց հեռավոր եւ մոտ ազգականների ունեցվածքին տեր դառնալը: Նույն գահակալի 1731 թ. հրովարտակը<sup>11</sup> հրահանգում է Զուխուր Սաադի (Երեւանի նահանգի) կառավարչին (չնայած, որ այդ նահանգը գեռեւս գտնվում էր Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ) արգելել նոր մահմեդականացած հայերին ժառանգության վեճ սկսել իրենց հարազատների հետ: Այս հրովարտակը փաստորեն բոլորովին արգելում է իմամ Ջահֆարի օրենքի կիրառությունը հայերի ժառանգական խնդիրներում: Այսպիսով, ամենայն հավանականությամբ, հենվելով վերը նշված հրովարտակների վրա, Դազար կաթողիկոսին հաջողվում է այս

<sup>5</sup> Զիմմի - այդպես էին կոչվում քրիստոնյա և հրեա հպատակները, որոնք ի տարբերություն մնաւովման հպատակների, բոլոր հարկերից ու պարապորություններից բացի, պարտավոր էին վճարել նաև հատուկ զիսահարկ՝ «զիզյա», որով իրավունք էին ստանում իրենց կրոնը դավանելու:

<sup>6</sup> Թայար - սկզբնաղբյուրներում գործածվում է հպատակ և հարկատու ժողովրդի, հատկապես նստակյաց, հողագործ զյուղացիության իմաստով:

<sup>7</sup> Հ. Փափազյան, Սեֆյան Երանի ասիմիլատորական բաղամականության հարցի շուրջը. – «Բանքեր Մատենադարանի», 1956, հ. 3, էջ 87-88:

<sup>8</sup> Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ III, Երեւան, 2005, վավ. 18:

<sup>9</sup> Նույն տեղում, վավ. 51:

<sup>10</sup> Նոյն տեղում, վավ. 86:

<sup>11</sup> Նոյն տեղում, վավ. 89:

հարցի առնչությամբ հայերի համար նպաստավոր կարգադրություն ստանալ իրանի փոխարքայից, ըստ որի. «Եթե հայերից որեւէ մեկը արժանանում է իսլամն ընդունելու պատվին, ապա այդ մահմեդականացածներից ոչ ոք չպետք է իր ազգականների հետ ժառանգության վեճ սկսի եւ հրամանին ու կարգին հակառակ անօրինականություն գործի»: Կարեւոր համարելով նշված խնդրի լուծումը հայ ժողովրդի համար՝ Ղազար կաթողիկոսը նույն բովանդակությամբ հրովարտակ է ձեռք բերում նաեւ իբրահիմ շահից 1748 թ.<sup>12</sup>:

Ոեզա Ղուկի Միրզայի երրորդ հրովարտակով<sup>13</sup> արգելվում է հայ եկեղեցու նվիրակներից ճանապարհները հսկող պահակային ծառայությունների կողմից հարկերի գանձումը, մի խնդիր, որին հայոց կաթողիկոսների խնդրանքով անդրադարձել են ինչպես նախորդ Սեֆյան շահերը, այնպես էլ ինքը՝ նադիրը՝ թույլ տալով հայ եկեղեցու ներկայացուցիչների ազատ շրջագայությունը նրանց ենթակա տարածքներում<sup>14</sup>: Այս խնդրի կապակցությամբ Ղազար կաթողիկոսը համանման բովանդակությամբ հրովարտակ է ձեռք բերել նաեւ իբրահիմ շահից 1748 թ.<sup>15</sup>:

Ուշադրության են արժանի այս հրովարտակի մյուս երկու մասերը, որոնցում հրահանգվում է երեւանի նահանգ մտնող բարձրաստիճան պաշտոնյաներին փիշքաշի<sup>16</sup> գանձման հարցում շարաշահումներ թույլ շտալ եւ կաթողիկոսից ապօրինաբար ձի ու այլ կենդանիներ չպահանջել: Ինչպես երեւում է, Ղազար կաթողիկոսը հրաժարվում էր հավելյալ նվերներով սիրաշահել պարսից իշխանավորներին, ինը բավական էր, որպեսզի վերջիններս վատ տրամադրվեին նրա ու հայ եկեղեցու հանդեպ: Եվ զարմանալի չէ, որ այս շրջանում Զամշանի վկայությամբ թշնամություն է ընկնում նրա եւ պարսից բարձրաստիճան իշխանավորների «Շահմահմուտի», այնուհետև նաեւ Աստապատի «Ֆեթալի նախարարի» միջեւ: Այս պատճառով Մայր Աթոռը հարկադրված է լինում ծանր տուգանքներ վճարել<sup>17</sup>: Ամենայն հավանականությամբ հենց այս Ֆաթհալի խանի կնիքն է դրոշմված 1744 թ. գեկտեմբեր ամսին կազմված մի փաստաթղթի վրա, որն իրենից ներկայացնում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կալ-

<sup>12</sup> Մատենադարան, կարողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 396:

<sup>13</sup> Մատենադարան, կարողիկոսական դիվան, թղթ. 1դ, վավ. 482:

<sup>14</sup> Հ. Փափազյան, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ II, վավ. 27, էջ 117–118: Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ III, Երեւան, 2005, վավերագրեա 9,

<sup>15</sup> Մատենադարան, կարողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 402:

<sup>16</sup> Փիշքաշ - զանազան առիքներով բնակչության կողմից ֆեռդալին կամ պետական պաշտոնյաներին նվերների անվան տակ հատուցվող տուրք, ինչպես նաեւ ստորադաս պաշտոնյաների կողմից իրենց վերադասին, կամ խոշոր ֆեռդալների կողմից՝ շահին մատուցվող նվեր:

<sup>17</sup> Մ. Զամշան, Հայոց պատմություն, հ. Գ, Երեւան, 1984, էջ 821:

վածքներից գանձվող հարկերի մի մանրամասն հաշվարկ, որի համաձայն վանքը պարտավոր էր վճարել նրան հատկացված մուաֆության<sup>18</sup> շափաբաժնը գերազանցող 212.200 դինարի<sup>19</sup> գումարը<sup>20</sup>: Փաստաթղթի հակառակ կողմում արձանագրվում է կաթողիկոսի կողմից այդ գումարի վճարված լինելու փաստը: Դեռևս 1735 թ. Աբրահամ Կրետացի կաթողիկոսի խնդրագրի համաձայն անց էր կացվել Մայր Աթոռի կալվածքներից գանձվող հարկերի մանրամասն հաշվարկ, որի վերջնական գումարի՝ 106.910 դինարի շափով հաստատվել էր նրա մուաֆության իրավունքը: Կաթողիկոսը միայն Երեւանի նահանգի 19 վանքերի համար ամեն տարի պետք է 175.000 դինար վճարեր շահին<sup>21</sup>: Վերը նշված 212.200 դինարի գանձումը 19 վանքերի համար վճարվող ամենամյա 175.000 դինարի հետ կազմում էր բավականին մեծ հարկաբաժին եւ թերեւս մեկն էր Մայր Աթոռից գանձված ծանր տուգանքներից:

Ծագումով լինելով Նախիջեւանի Ջահուկ գավառից, ուր հայ ունիթորների կենտրոնն էր՝ Ղազար Ջահկեցի կաթողիկոսը լավատեղյակ էր հայերի գավանափոխության ու կաթոլիկական քարոզության կործանարար հետեւանքներին, ուստի եւ «անզիջում դիրքորոշում» ուներ կաթոլիկ քարոզիչների եւ քարոզության հանդեպ, որը դրսեւորվել է ինչպես նրա գրչին պատկանող կրոնական գործերում ու քարոզներում, այնպես էլ նրան ձեռք բերած հրովարտակներում<sup>22</sup>: Կարմելյան միաբան Ֆիլիպ Մերիի վկայությամբ, իրենք 1739-1740 թթ. Ենթարկվում էին հալածանքների «ոչ կաթոլիկ պատրիարք Լազարի կողմից, որը պահանջում էր, որ բոլոր քարոզիչները իրանից դուրս քշվեն, եկեղիները կործանվեն»: Կաթողիկոսը հինգ անգամ այս հարցով դիմում է փոխարքա Ռեզա Ղուլի Միրզային, մեծ գումարներ ծախսում, որի արդյունքում շատ կաթոլիկներ բանտ են նետվում եւ շահական հրովարտակ է ձեռք բերվում<sup>23</sup>: Թեև Ռեզա Ղուլի Միրզայից ձեռք բերված այս հրովարտակը Մատենադարանի արխիվում չկա, սակայն կան կաթողիկոսի զանքերով նադիր շահից ձեռք բերված 1741 թ. երկու հրովարտակ<sup>24</sup> ուղղված կաթոլիկ միսիոներների քարոզության դեմ: Այդ հրովարտակներին կցված խնդրագրերում Ղազար կաթողի-

<sup>18</sup> Մուաֆություն - հարկերից ազատված լինելը, հարկային իմունիտետ վայելը. գործածվում է ինչպես անհատների, այնպես նաև օբյեկտների վերաբերյալ:

<sup>19</sup> Դինար - արծաթ դրամի միավոր: Խոշոր դրամական հաշվումները կատարվում էին «քումանով», որը հավասար էր 10.000 դինարի:

<sup>20</sup> Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 1q, վալ. 392:

<sup>21</sup> Նոյն տեղում, վավ. 354:

<sup>22</sup> Ա. Այվազյան, Հայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման հառուղիներում, Երեւան, 2003, էջ 141- 143:

<sup>23</sup> A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVII-XVIII centuries, v. I, London, 1939, pp. 632-633.

<sup>24</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթապահակ 1q, վավերագրեր 375ա, 380:

կոսը կաթողիկ քարոզիչներին մեղադրում է ոչ միայն «Հայերին մոլորեցնելու եւ նենգորեն կաթոլիկացնելու», այլև «լրտեսությամբ զբաղվելու» եւ երկրին վերաբերող «անհրաժեշտ տեղեկությունները իրենց միապետներին հասցնելու» մեջ՝ այն համարելով «պետական դավաճանություն»։ Այս պատճառով կաթոլիկ քարոզիչները մեծ գումարներ են ծախսում ու «իրենց բարեկամների» միջնորդությամբ հրովարտակ են ձեռք բերում, որպեսզի նորից ազատորեն գործեն<sup>25</sup>։ Նադիր շահը այնուհետեւ հաստատում է քարոզիչների նախկինում ունեցած արտոնությունները։ Կարմելյան միաբանների վկայությամբ՝ Ղազար կաթողիկոսի գահընկեց արվելը եւս կապված է կաթոլիկ քարոզիչներին վարկարեկելու նրա փորձի հետ<sup>26</sup>։

Թեեւ տարբեր են ժամանակակիցների մեկնաբանությունները Ղազար կաթողիկոսի գահընկեց արվելու պատճառների, սակայն բոլոր աղբյուրները միանշանակ պնդում են նրա օրոք Մայր Աթոռի կողմից պարսից արքունիքին մի քանի անգամ վճարված ծանր տուգանքների մասին<sup>27</sup>։

Այստեղ շահի անձնական վերաբերմունքը կաթողիկոսի նկատմամբ կարծում ենք խաղում էր երկրորդական դիր, նախ, որ ընդհանրապես նադիր շահի իշխանության տարիներին ժողովրդից գանձվող ծանր հարկերն ու տուգանքները հաճախակի էին. այդ էին պահանջում շահի կողմից իրականացվող բազմաթիվ ուազմական ձեռնարկումները<sup>28</sup>, երկրորդ, որ նադիրն արդեն չուներ Հայոց կաթողիկոսին սիրաշահելով նրա հպատակների օժանդակությունը ստանալու կարիքը, որը նա զգում էր Օսմանյան պետությունից հայկական տարածքները վերադարձնելու ժամանակահատվածում։

Ղազար կաթողիկոսին չի հաջողվում պահպանել բոլոր այն 7 գյուղերի (Վաղարշապատ, Օշական, Մաստարա, Ֆրանկանոց, Քիրազլի, Դիբաքլու եւ Հաւլաբիքենդ) պատկանելությունը Մայր Աթոռին, որոնց նկատմամբ սեփականության իրավունքը ամրագրել էր Աբրահամ Կրետացի կաթողիկոսը 1735 թ. նադիր շահի հրովարտակով<sup>29</sup>։

Արդեն 1741 թ. հրապարակված հրովարտակներում խոսքը երեւանի նահանգի Վաղարշապատ, Օշական, Ֆրանկանոց ու Մաստարա գյուղերի մասին

<sup>25</sup> A Chronicle of the Carmelites, v. 1, pp. 632-633.

<sup>26</sup> Նոյն տեղում, էջ 641-642։

<sup>27</sup> Խաչատոր Զուլյակեցի, Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 265։ Մ. Զամշան, Հայոց պատմություն, հ. Գ, էջ 821։ A Chronicle of the Carmelites, p. 642։ Յովհաննես Շահխարսունեանց, Ստորագրութիւն Կարուղիկէ Էջմիածնի և նինգ գաւառացն Արարատայ, հ. Ա, Ս. Էջմիածնին, 1842, էջ 227-228։

<sup>28</sup> Ann K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, London, New York, Toronto, 1953, p. 132։

<sup>29</sup> Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վալ. 976։

<sup>30</sup>: Այդ հրովարտակներից առաջինը, որ կարգադրում է շանհանգստացնել Օսմանյան Թուրքիայից կաթողիկոսի ջանքերով Երեւանի նահանգ գաղթեցված հայերին, վկայում է Մայր Աթոռի կալվածքները, ինչպես նաև իր՝ կաթողիկոսի ծննդավայր Ջահուկը շենացնելու ուղղությամբ Ղազար կաթողիկոսի ձեռնարկած գործնական քայլերի մասին. «Մշտապես շահանշահի արդարությունն ու կարգուկանոնը գովաբանելով [մարդիկ] եմ ուղարկում Օսմանցիների եւ Քուրդիստանի վիլայեթը, հուսադրելով ու հորդորելով գաղթեցնում, բերում եմ Երեւանի Վաղարշապատ, Օշական, Ֆրանքանոց, Մաստարա եւ Նախիջեւանի Ջահրիկ գյուղերում բնակեցնում, որպեսզի այդ մահաները<sup>31</sup>, որ քիչ են բնակեցված, շենանան»: Նույն թվականին հրապարակված մեկ այլ հրովարտակով կաթողիկոսը ջանում է ապահովագրել այդ գյուղերը անօրինական հարկապահանջությունից<sup>32</sup>:

Հստ Իբրահիմ շահից 1748 թ. Ղազար կաթողիկոսի ձեռք բերած հրովարտակի Մայր Աթոռին էին պատկանում Վաղարշապատը, Օշականը, Ֆրանկանոցն ու Մաստարան<sup>33</sup>: Պահպանվել է նաև Իբրահիմ շահի նույն թվականի հրամանագիրը որով հաստատվում է Էջմիածնի վանքի ու նրա կալվածքների մուաֆության իրավունքը<sup>34</sup>:

Հնդհանրապես, ինչպես երեւում է Ղազար կաթողիկոսի կողմից ձեռք բերված հրովարտակների ուղղվածությունից, վերջինս մեծ ուշադրություն է գարձրել հայ ժողովրդի իրավունքների պաշտպանությանը մահմեդական բնակչության ու պաշտոնյաների բռնություններից եւ անօրինական միջամտությունից: Մասնավորապես նագիր շահին 1741 թ. ներկայացրած իր խնդրագրում նշում է հետեւյալը. «Հայ կանանց իր հոժար կամքով կամ բռնի կնության առնելով՝ մահմեդական են դարձնում: Մահմեդականացնում են նաև նրա նախկին [ամուսնուց ունեցած] երեխաներին: Բացի այդ, որոշ մարդիկ որտեղ, որ հանդիպում են գեղեցկեամ ու հաճելի աղջկա կամ տղայի, բռնի մահմեդականացնում են»: Այս խնդրագրի հիման վրա 1741 թ. հրապարակված նագիր շահի հրամանագրով արգելվում է հայերին բռնի մահմեդականացնելը<sup>35</sup>: Մեծ կարեւորություն տալով հիշյալ խնդրի կարգավորմանը՝ նույն բովանդակությամբ հրովարտակ է ձեռք բերում նաև 1748 թ. Իբրահիմ շահից<sup>36</sup>:

<sup>30</sup> Նոյն տեղում, վավերագրեր 376, 379:

<sup>31</sup> Մահալ - շրջան, գավառ, XVII-XIX դարերում Անդրկովկասի վարչական բաժանման միավորներից է:

<sup>32</sup> Մատենադարան, կարողիկոսական դիվան, թղթ 1գ. վավ. 379:

<sup>33</sup> Նոյն տեղում, վավ. 398ա:

<sup>34</sup> Նոյն տեղում, վավ. 401:

<sup>35</sup> Նոյն տեղում, վավ. 370:

<sup>36</sup> Նոյն տեղում, վավ. 399:

1741 թվականի նադիր շահի մեկ այլ հրովարտակ արգելում է պետական պաշտոնյաների ու մահմեդական հոգեւորականների միջամտությունը հայերի հավատին վերաբերող խնդիրներին եւ նրանց կրօնական օրենքների խախտումը<sup>37</sup>: Մահմեդական հոգեւորականների անհարկի միջամտությունը հայ ժողովորդի կյանքին արգելելու նպատակով հրովարտակ է ձեռք բերվում նաեւ իբրահիմ շահից 1748 թվականին<sup>38</sup>:

Ղազար կաթողիկոսի կողմից են ձեռք բերվել առաջին հրովարտակները վաղարշապատում ճանապարհների վերահսկողությունն իրականացնող ու մաքսային հարկեր գանձող ծառայությունների (ուահդար) պահակակետի գոյությունն արգելող երկու հրովարտակները 1741<sup>39</sup> եւ 1743<sup>40</sup> թվականներին: Խնչպես նշվում է առաջին հրովարտակին կցված խնդրագրում «Հին ժամանակներում Ուչքիլիսա գյուղում ուահդար չի նստել. նրանք այլ վայրերում են նստել: Այժմ ուահդարը գալիս, հիշյալ գյուղում է նստում, Ուչքիլիսա գնացող եկողին եւ գյուղի մյուս ուայաթներին նեղում է»: Հաջորդ հրովարտակում էլ ավելի խտացնելով գույները՝ կաթողիկոսը նշում է, որ ուահդարները. «Գիշերցերեկ հարբեցողությամբ են զբաղվում, գնում են ուայաթների տները, զանազան անկարգություններ են անում անհանգստացնելով խեղճերիս տնեցիներին»: Եվ այնուամենայնիվ, ինչպես երեւում է հետագա շրջանի XIX դարի սկզբի հրովարտակների<sup>41</sup> ու այլ փաստաթղթերի<sup>42</sup> բովանդակությունից, չի հաջողվում մեկընմիշտ վերջ տալ այդ պահակակետի գոյությանը:

1747 թ. հունիսի 24-ին նադիր շահը սպանվում է իր դեմ կազմակերպված դավադրության հետեւանքով: Նույն թվականի հուլիսի 6-ին Մեշհեդում շահ է հոչակվում նրա եղբորորդի Ալի Ղուլին, որը հայտնի էր նաեւ Աղիլ շահ անվամբ: Նրա անունից հրապարակված որեւէ հրովարտակ Մատենադարանի արխիվներում չի պահպանվել: Սակայն իրանի այս տիրակալը իր կարճատեւ իշխանության ընթացքում որոշ ժամանակով իր տիրապետությունն է հաստատել Արեւելյան Հայաստանի շրջանների վրա եւ միջամտել Մայր Աթոռ Ա. Էջմիածնի խնդիրներին, մասնավորապես նաեւ Ղազար կաթողիկոսի գահընկեցությանը 1748 թ. գարնանը<sup>43</sup>:

1748 թ. գարնանը (մինչեւ մայիսի 20-ն ընկած ժամանակահատվածում)

<sup>37</sup> Նոյն տեղում, վավ. 377:

<sup>38</sup> Նոյն տեղում, վավ. 400

<sup>39</sup> Նոյն տեղում, վավ. 378ա:

<sup>40</sup> Նոյն տեղում, վավ. 378բ:

<sup>41</sup> Մատենադարան, կարողիկոսական դիվան, թղթ. 1դ, վավ. 550:

<sup>42</sup> Նոյն տեղում, վավ. 577:

<sup>43</sup> Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, Ս. էջմիածնին, 2001, էջ 3423-25:

Պետրոս Քյություրը կաթողիկոս է ընտրվում<sup>44</sup>: Նույն թվականի վերջին Ադիլ շահի դեմ ապստամբում է նրա հարազատ եղբայրը՝ իբրահիմ Միրզան եւ դեկտեմբերի 8-ին իրեն շահ հայտարարում: Ղազար կաթողիկոսի եղբայր Յովսեփ քահանան «պատշաճ ընծաներով ու միջնորդութիւններով յաջողեցաւ Ղազարի ազատութեան եւ կաթողիկոսութեան վերադառնալուն հրովարտակը ստանալ», որից հետո Ղազար կաթողիկոսը վերահաստատվում է Ամենայն Հայոց կաթողիկոսի գահին<sup>45</sup>:

Ղազարի կաթողիկոսական իրավունքները վերահաստատող հրամանագիրը, ինչպես նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի իրավունքներին վերաբերող մյուս հրամանագրերը, որ ձեռք են բերվել 1748 թ. դեկտեմբերին եւ որոնց մասին արդեն խոսեցինք վերը, պահպանվել են Երեւանի Մատենադարանում:

Այսպիսով, ի տարբերություն այլ կաթողիկոսների, որոնց ձեռք բերած հրովարտակների նպատակը հիմնականում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կալվածքների պաշտպանությունն էր ոտնձգություններից, Ղազար կաթողիկոսը, աչքաթող շանելով նաև այդ խնդիրները, իր ուշադրությունը կենտրոնացրել էր կաթոլիկ միսիոներական քարոզչությունից եւ մահմեդականների բռնություններից ու անօրինական միջամտությունից, ինչպես հայերի մահմեդականացմանը նպաստող հմամ ջահֆարի օրենքից հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության վրա, ինչը, կարծում ենք, հակառակ վաղ շրջանի որոշ պատմաբանների կողմից նրա վերաբերյալ արված բացասական արտահայտություններին, խոսում է նրա գործունեության դրական կողմերի ու հայրենասիրական շանքերի մասին:

<sup>44</sup> Նոյն տեղում, էջ 3426:

<sup>45</sup> Նոյն տեղում, էջ 3429-30:

## ՄԻՔԱՅԵԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ

### ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅ ՄԱՆՐԱՆԿԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՅԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ (համառոտ ակնարկ)

Հետազոտության գլխավոր նպատակն է ուսումնասիրել 17-րդ դարի նոր Զուղայի մանրանկարչական դպրոցի նշանավոր վարպետների կողմից գրված եւ պատկերազարդված Աստվածաշնչերը եւ Ավետարանները<sup>1</sup>: Նկատենք, որ նոր Զուղայի դպրոցն ընդգրկում էր մոտ 15 գրչության կենտրոն, որտեղ ստեղծվել են մեծ թվով մատյաններ: Պատկերազրությունը եւ ոճը, որոնք զարգացում են ապրել տվյալ տարածաշրջանում 17-րդ դարի առաջին քառորդից մինչեւ 1721 թ. (աֆղանների ներխուժման թվականը), պահպանում են այս դպրոցի բնորոշ առանձնահատկությունները:

Աշխատանքի ընթացքում ուսումնասիրվում են նոր Զուղայի մանրանկարչական դպրոցի զարգացման օրինաշափությունները, փոխադարձ կապերն ու հարաբերությունները հայ գրքարվեստի այլ կենտրոնների հետ, ինչպես՝ Կոստանդնուպոլիս, Վասպուրական, Ամիդ, Սեբաստիա, Ղրիմ, Լեռաստան եւ Ռումինիա: 16-17-րդ դարերի ընթացքում Հայաստանում մշակութային եւ տնտեսական կենտրոնների զարգացումը եւ հայ գաղութների երեւան գալը եվրոպայում նպաստել են հայկական վանքերում արվեստի վերածննդին: Ապահանը (կամ Խմբահանը)<sup>2</sup> Պարսկաստանի ամենանշանավոր կենտրոններից մեկը, այս բացառիկ երեւութիւն լավագույն օրինակն է: 1605-1607 թվականներից սկզբնավորվում է նոր Զուղայի հայկական գաղութը՝ որպես Ապահանի արվարձան<sup>3</sup>: Կառուցվում են նոր եկեղեցիներ գրչատներով<sup>3</sup>, որտեղ աստիճա-

<sup>1</sup> Դոկտորական աշխատանքիս թեման է «Նոր Զուղայի մանրանկարչական դպրոց (17-րդ դար)», որն իրականացնում եմ Երևանի Երայական համալսարանի հայագիտական ամբիոնին կից: Աշխատանքի ելակետային դրույթներն ել դարձել են սույն շարադրանքի նյութը:

<sup>2</sup> Տե՛ս Առաքել Գավրիմեցի, Պատմութիւն. Վաղարշապատ, 1896; V. S. Ghougassian, *The Emergence of the Armenian Diocese of New Julfa in the Seventeenth Century*. Armenian Texts and Studies 14, edited by M. E. Stone, Atlanta, 1998:

<sup>3</sup> Ինչպես օրինակ՝ Սուրբ Հակոբ Մօթեանցի Հայրապետ (1607 թ.), Սուրբ Նազարետ (1609 թ.), Սուրբ Գեւորգ և Սուրբ Սարգս (1611 թ.), Սուրբ Աստվածածին (1613 թ.), Սուրբ Ստեփանոս (1614 թ.), Սուրբ Հովհաննես Մկրտիչ (1621 թ.), Սուրբ Կատարինե (1623 թ.) եւ այլն՝ անհայտ եկեղեցիներ, ի. Ա., նոր Զուղայի եկեղեցիները, ի. Ա., նոր Զուղայի, 1992:

նաբար ձեւավորվում է «Նոր Ջուղայի մանրանկարչական դպրոցը» իր մի շարք այնպիսի տաղանդավոր վարպետ-նկարիչներով, ինչպիսիք են՝ Յակոբ Ջուղայիցին, Զաքարիա Վանեցին, Ստեփանոս Զիք Ջուղայեցին, Սարգիս Մոկացին, հաշատուր Իիզանցին, Մեսրոպ Իիզանցին (**նկ. 1**)<sup>4</sup>, հաշատուր վարդապետ Կեսարացին, Գասպար Երեցը (**նկ. 2**), Բարսեղ Կրոնավորը, Գրիգոր Համազապայանցը, Աստվածատուր Ջուղայեցին, Հայրապետ Ջուղայեցին (**նկ. 3**), Մարտիրոս Քահանան (**նկ. 4**), Բարդամը (**նկ. 5**) եւ ուրիշներ։ Արեւելյան եւ արեւմտյան գեղարվեստական ավանդությունների միաձուլումը դրսեւորվում է այս վարպետների ստեղծագործությունների մեջ (պատկերագրություն, գույն, հորինվածք եւ գծանկար)։ Աստիճանաբար առաջացել է էկլեկտիկ<sup>5</sup> յուրահատուկ նորօրդայական ոճը, որն էլ աստիճանաբար նկարագրում եւ վերլուծում եմ։ Մինչ օրս վերոհիշյալ մանրանկարիչների զանազան գործերը խոր ուսումնասիրության շեն արժանացել, եւ նոյնիսկ ոչ մի առանձին մենագրություն նոր Ջուղայի հայկական մանրանկարչության դպրոցին նվիրված չի եղել։

Ուշ միջնադարի հայ մանրանկարչության ընդհանուր անկման ֆոնի վրա, այդ դպրոցի ծաղկումը եւ ինքնատիպությունը կարելի է համարել վերջին վերելքը։

Միջնադարյան հայ գեղանկարչության հետազոտողներ Ջոն Կարսուելը, Սիրարքի Տեր-Ներսիսյանը, Ավետիս Մանջյանը, Հրավարդ Հակոբյանը ընդգծել են հայ նկարիչների ստեղծած բարձրարվեստ գործերը՝ նշելով եվրոպական կերպարվեստի ակնհայտ ազդեցությունը<sup>6</sup>։ Նոր Ջուղայի հայկական եկեղեցի-

<sup>4</sup> Սույն հոդվածում առաջին անգամ են տպագրվում նկարներ 1-5 եւ 7, որոնցից 1-4 լուսանկարել եմ բնագրերից Վենետիկի և Վիեննայի Միտրարյան միաբանության ու Մայր Արքու Սուրբ Էջմիածնի բույլտվորյամբ, որի համար խորին շնորհակալություն եմ հայտնում, հատկապես արքահայր Եղիշա Քիլաղպյանին, արքահայր Պողոս Գոնանյանին և պարոն Վարդան Դեւրիկյանին։ Նկար 5-ը, դոկտոր Ռայմոնդ Գետրլյանի աշակցությամբ, ստացել եմ Փարիզի ազգային գրադարանից։ Բայց վերջին երեք՝ 6, 7 եւ 8, վերատառապնում են պրոֆեսոր Միրարքի Տեր-Ներսիսյանի արխիվից (Մատենադարան, տուփ II/3) և իր հրատարակած ալբոնից՝ S. Der Nersessian, A. Mekhitarian, *Armenian Miniatures from Isfahan*, Brussels – Antilia (Lebanon), 1986, p. 165, fig. 97 and p. 182, fig. 114։

<sup>5</sup> Տե՛ս S. Der Nersessian, *The Chester Beatty Library. A Catalogue of the Armenian Manuscripts*, vol. I, Dublin, 1958, p. XL.

<sup>6</sup> J. Carswell, *New Julfa. The Armenian Churches and Other Buildings*. Oxford, 1968, pp. 21-24; S. Der Nersessian, “Western Iconographic Themes in Armenian Manuscripts”, in: *Byzantine and Armenian Studies*, vols. I-II (1973), pp. 611-630; Iden., *L'art arménien des origines au XVII<sup>e</sup> siècle*. London – Paris, 1977, pp. 233 and 236-237; A. K. Sanjian, *Medieval Armenian Manuscripts at the University of California, Los Angeles* (with contributions by Alis Taylor and Sylvie L. Merian and with the assistance of S. Peter Cowe), vol. 14, Berkeley – Los Angeles – London, 1999, pp. 26, 34 and 43; Հակոբյան, Հայոց տերունական սրբապատկերները. Երևան, 2003, էջ 147-149։

ների որմնանկարներն ու հաստոցային գեղանկարները պարունակում են արեւմտյան արվեստի տարրեր՝ Եվրոպական գեղանկարչությունը նույնպես ուրշ ազդեցություն է թողել նոր Ջուղայի դպրոցի մանրանկարի պատկերագրության վրա՝ թե՛ հաստոցային գեղանկարի, թե՛ տպագիր գրքերի միջոցով։ Վերջիններս 16-րդ դարում հրատարակվել են Վենետիկում, Նյուրնբերգում, Կոստանդնովում, Հռոմում եւ 17-րդ դարի առաջին կեսում Լեմբերգում, Միլանում, Փարիզում, Լիվոնոյում եւ Ամստերդամում, որոնք ներթափանցել էին Պարսկաստան Եվրոպացի եւ հայ առևտրականների միջոցով<sup>8</sup>։

Եվրոպական կերպարվեստի գործերի հետ ծանոթությունը ազդել է Մեսրոպ Խիզանցու (նկ. 6), Մինասի (նկ. 7), Սարգսի, Մարտիրոսի գործերի վրա։ Վերջինս նույնությամբ ընդօրինակում է փորագրություններ եւ օֆորտներ։ Միուրիշ օրինակ՝ Խաչատուր վարպետի վրձնով ստեղծված սյուժեն՝ «Թաղում»-ը, հավանաբար 17-րդ դարի Եվրոպական փորագրության պատճեն է<sup>9</sup> (նկ. 8)։ Սակայն նոր Ջուղայի մանրանկարիչները գլխավորապես շարունակել են ստեղծել մանրանկարներ հայկական ավանդական ոճով։

Վերջին տասնամյակների ընթացքում նոր Ջուղայի նկարիչ-վարպետների մի շարք մանրանկարներ քննության ենթարկվեցին Վրեժ Ներսիսյանի, Թոմաս Մեթյուսի, Հելմուտ Բուշհաուզենի եւ ուրիշների կողմից<sup>10</sup>։ Այդ ուսումնակրությունները գլխավորապես նկարագրական բնույթ են կրում եւ չեն պարունակում վարպետների ստեղծագործությունների գրեթե ոչ մի վերլուծություն։ Մինչդեռ անհրաժեշտ է նոր Ջուղայի դպրոցի մանրանկարչական գործերը համադրել գեղարվեստական այլ կենտրոնների համապատասխան պատկերների

<sup>7</sup> Տե՛ս J. Carswell, *Op. cit.*, pp. 21-26.

<sup>8</sup> Մանրամասն տե՛ս Հ. Տեր Յովհաննեանց, Պատմութիւն նոր Ջուղայու որ Ասպահան, հ. Ա. եւ Բ., նոր Ջուղա, 1880-1881, Գ. Լետնյան, Հայ գիրքը եւ տպագրության արվեստը. պատմական անհսություն սկզբից մինչեւ XX դարը, Երևան, 1946, էջ 43-122; E. Shütz, “The Evolution of Armenian Typographic Art in the West-European Period (16<sup>th</sup>-17<sup>th</sup> Centuries)”. Papers of the Fifth International Symposium on Armenian Art “Armenia, Crossroad of Civilizations”, Venice, 1992, pp. 449-460; B. Narkiss, M. Stone, *Armenian Art Treasures of Jerusalem*, Jerusalem, 1979, p. 94.

<sup>9</sup> Տե՛ս S. Der Nersessian, A. Mekhitarian, *Op. cit.*, p. 165; F. W. H. Hollstein, *Dutch and Flemisch Etchings, Engravings and Woodcuts, ca. 1450-1700*, vol. III, Amsterdam, 1951, p. 99.

<sup>10</sup> V. Nersessian, *Armenian Illuminated Gospel-Books* (Published on the occasion of an exhibition of the same title at the British Library, 11 December 1987 – 6 March 1988), London, 1987; T. F. Mathews, R. S. Wieck (eds.), *Treasures in Heaven: Armenian Illuminated Manuscripts*. The Pierpont Morgan Library, New York, 1994; H. Buschhausen, “Armenien: 5000 Jahre Kunst und Kultur/hrsg. vom Museum Bochum”, in: *Wiederentdeckung einer alten Kulturlandschaft*, Katalog. Ausstellung 14. Januar bis 17. April 1995, Tübingen, 1995.

Հետ, օրինակ՝ Վասպուրականի եւ Կոնստանդնուպոլսի:

Հետազոտության ընթացքում պարզվել են ձեռագրերի գտնվելու վայրերը (ընդհամենը 36 հավաքածուներ 16 երկրներում<sup>11</sup>): Բացահայտվել են ընդհանուր թվով 230 պատկերազարդ Աստվածաշունչ եւ Ավետարան<sup>12</sup>, որոնցից՝ 177-ը, համաձայն հիշատակարաններում առկա տվյալների, պատկանում են նոր Ձուղայի գլուխցին, իսկ մնացած 53-ը վերագրված են նրան: Անհրաժեշտ է նշել, որ 230-ից 63 ձեռագիր պահպամ է Մաշտոցյան Մատենադարանում, 12 մատյան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում<sup>13</sup>: Մեկ Ավետարան Հրազդան քաղաքի բնակիչ պարոն Շահմիրզա Կարապետյանի սեփականություն է<sup>14</sup>: Մնացած 154 միավորը օտար երկրների զանազան հավաքածուներում են, որոնցից՝ երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի մատենադարանում (14 ձեռագիր), Հալեպի Քառասուն Մանկունք վանքի մատենադարանում (1 Ավետարան), Պարսկաստանի Փերիա գավառի Հազարշրիբ, Խունգ եւ Սվարան գյուղերի Սուրբ Աստվածածին եւ երկու առանձին Սուրբ Գեորգ Եկեղեցիններում (3 ձեռագիր) ու նոր Ձուղայի Սուրբ Ամենափրկիչ վանքի մատենադարանում (76 մատյան), Թիֆլիսի Վրաստանի գիտությունների ակադեմիայի Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտում (2 ձեռագիր), Սանկտ Պետերբուրգի Ռուսաստանի ազգային գրադարանում (2 մատյան) եւ Ազգային ակադեմիայի արեւելագիտական ինստիտուտում (2 ձեռագիր), Մոսկվայի Ռուսական Ուղղափառ Եկեղեցու առաջնորդարանում (1 Ավետարան), Վիեննայի եւ Վենետիկի Միսիթարյան միաբանության մատենադարաններում (2 եւ 13 ձեռագիր), Վատիկանի առաքելական գրադարանում (1 Ավետարան), Լիսաբոնի Գալուստյան թանգարանում (2 ձեռագիր), Լիբանանի Համալսարանի գրադարանում (1 Ավետարան), Բելգինի Պրուսիայի պետական գրադարանում (5 մատյան), Փարիզի ազգային գրադարանում (1 Ավետարան) եւ Անտոնյան միաբանության մեջ (1 Ավետարան), Լոնդոնի բրիտանական մ (5 ձեռագիր) եւ «Աստվածաշնչի Տուն» գրադարաններում (1 Ավետարան) ու Մեծ Ֆոգդ մասնավոր հավաքածուում (1

<sup>11</sup> Հայաստան, Պարսկաստան, Սիրիա, Իւրայել, Վրաստան, Ռուսաստան, Հոլանդիա, Գերմանիա, Ավստրիա, Իտալիա, Վատիկան, Ֆրանսիա, Պորտուգալիա, Անգլիա, Իռլանդիա և Ամերիկայի Միացյալ Նահանգներ:

<sup>12</sup> Այսինքն՝ 30 Աստվածաշնչ և 200 Ավետարան:

<sup>13</sup> Հմետ. Ցուցակ Հայերեն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա. եւ Բ., կազմեցին Օ. Եղանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթրյան, Երեւան, 1965-1970, Գ. Տէր-Վարդանեան, նոր Ձուղայի եւ յարակից շրջանների հայկական ձեռագրական արուեստը. Նիրեր Մաշտոցեան Մատենադարանի եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ցուցահանդիսների, Յուիս – Օգոստոս, 2005, Երեւան, 2005, Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ., կազմեց Ա. Մալիսասեան, Երեւան, 2007:

<sup>14</sup> 1976 թ. տվյալների համաձայն, տե՛ս Բ. Զուգասպյան, «Ցուցակ հայերեն ձեռագրաց մասնավոր անձանց». – «Բանբեր Մատենադարանի», հ. 15, 1986, էջ 343-349:

Ավետարան), Օքսֆորդի Բողլեյան գրադարանում (1 Ավետարան), Քեմբրիջի համալսարանի գրադարանում (1 Ավետարան) եւ Թագուհու Քոլեջի Սըր Հարոլդ Ուոլտեր Բեյլի հավաքածուում (մեկ Ավետարան), Դուբլինի Զեստեր Բիտտի գրադարանում (3 մատյան). Ամերիկայի Միացյալ Նահանգների տասնմեկ տարբեր հավաքածուներում Սան Ֆրանցիսկոյի Ալբերտ Նալբանդյանի մասնավոր հավաքածուում (2 ձեռագիր), Բալթիմորի Ուոլտեր պատկերասրահում (2 մատյան), Զիկագոյի Համալսարանի գրադարանի է. ի. Գուգապիդի հավաքածուում (1 Ավետարան), Նյու Յորքի Փիրպոնտ Մորգան գրադարանում (3 ձեռագիր) եւ Վարդան Վարդանյանի մասնավոր հավաքածուում (1 Ավետարան), Լու Անչելեսի Ջոն Փոլ Գետտի թանգարանում (2 մատյան), եւ Փրինստոնի ու Լու Անչելեսի համալսարանների գրադարաններում (1 եւ 2 ձեռագիր)<sup>15</sup>:

- Այդպիսով, գիտական աշխատանքը կատարվում է հետեւյալ կարգով
- ճշտվում են նկարիչ-վարպետների հեղինակային պատկանելությունը, ինչպես նաև նրանց հետ աշխատող գրիչների, մանրանկարիչների, կազմողների, փերանորոգողների եւ պատվիրատուների անունները.
  - ուսումնասիրվում են վարպետների, նրանց ուսուցիչների, աշակերտների եւ պատվիրատուների կողմից գրված հիշատակարանները.
  - բացահայտվում են նոր ջուղայի հետ ունեցած մյուս մանրանկարչական դպրոցների փոխադարձ կապը, ինչպես նաև բյուզանդական, եվրոպական պատկերագրական սխեմաների եւ արաբա-պարսկական դեկորատիվ գեղանկարչության ազգեցությունը աշխատանքների վրա<sup>16</sup>.
  - հետազոտվում եւ դասակարգվում են պատմողական մանրանկարների, ավետարանիչների, սրբերի, անվանաթերթերի, խորանների եւ լուսանցագարդերի պատկերագրական համակարգերը.
  - քննության են ենթարկվում մանրանկարների ոճը եւ տեխնիկան:
- Այս ծրագրի իրականացումը պահանջում է նշված պատկերագրադարձ Ավե-

<sup>15</sup> Նպատակահարմար չէ այստեղ ներկայացնել վերոհիշյալ հավաքածուների մատենագիտուրյան ցանկը, շարադրանքի նյութի խտորյան պահպանման նպատակով, բացառորյամբ Հայաստանի Հանրապետությունում գտնվող հավաքածուների (տե՛ս ծնթ. 12 և 13): <sup>16</sup> Հիմնական գրականուրյուն՝ G. Schiller, *Iconography of Christian Art*, vols. I-II, London, 1971-1971; **В. Н. Лазарев**, *История византийской живописи*, т. I, Москва, 1986; *Lexikon der christlichen Ikonographie*, (Allgemeine Ikonographie, Bd. I-IV. Ikonographie der Heiligen, Bd. V-VIII), Rom – Freiburg – Basel – Wien, 1994; **Н. В. Покровский**, *Евангелие в памятниках иконографии, преимущественно византийских и русских*, Москва, 2001; **M. Arakelian**, “The Representations of Warriors, Their Costumes and Ornament in the Miniatures of the XVII<sup>th</sup> Century Armenian Artist Mesrop Xizanc‘i”. – *Revue des Études arméniennes*, Nouvelle serie 27 (Paris, 1998-2000), pp. 379-392, illus. 1-5.

տարանների ուսումնասիրությունն իրականացնել մի շարք եվրոպական, մի-  
ջինարեւելյան եւ ամերիկյան գրադարաններում եւ հետազոտել մասնագիտա-  
կան կարեւոր նյութեր, որոնք բացակայում են Հայաստանում եւ Խորայելում:

Նախնական ուսումնասիրությունը վերոհիշյալ մանրանկարիչների գոր-  
ծերի վերաբերյալ ակնհատ է դարձնում նոր Ջուղայի դպրոցի կարեւորությու-  
նը եւ թույլ տալիս մանրանկարիչների ստեղծագործական ոճի գործընթացի  
զարգացումը քննել նոր Ջուղայի դպրոցի ձեւավորման եւ զարգացման հար-  
թության վրա:



Նկ. 1


«Երկրորդ գալուստ»

Ավետարան, 1628 թ., նկարիչ՝ Մեսրոպ Խիզանցի  
Վենետիկ, Միխրաբյան միաբանություն (Զեռ. Գյուրյան № 154, էջ 16թ)



### Նկ. 2


«Իժոխի ավերումը»  
Ավետարան, 1650 թ., նկարիչ՝ Գասպար Երեց  
Վաղարշապատ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին (Զեռ № 38, էջ 7ա)



**Նկ. 3**


«Ղուկաս ավետարանից»

Աստվածաշունչ, 1648 թ., նկարիչներ՝ Հայրապետ Զուղայեցի  
Վենետիկ, Մխիթարյան միաբանություն (Ձեռ. № 623 (3), էջ 517թ)



**Նկ. 4**

«Մարկոս ավետարանից»  
Ավետարան, 1672-1674 թթ., նկարիչ՝ Մարտիրոս Բահանա  
Վիեննա, Միսիրարյան միաբանություն (Զեռ. № 978, էջ 91թ)




**Նկ. 5**  
«Խաչելորյուն»  
Ավետարան, 1639-1644 թ., նկարիչ՝ Բարդամ  
Փարիզ, Ազգային գրադարան (Ձեռ. Smith-Lesouff 252, էջ 193ա)



**Նկ. 6**

«Մողերի երկրպագությունը»  
Հայսմավոր, 1630 թ., նկարիչ՝ Մեսրոպ Խիզանցի  
Նոր Ջուղա, Սուրբ Ամենափրկիչ վանք (Զեռ. № 466 (241), էջ 270թ)



Նկ. 7

«Խաչելոքյուն»

Ավետարան, 1625-1629 թթ., ճկարիչ՝ Մինաս  
Երոսաղեմ, Սրբոց Հակոբյանց վանք (Ձեռ. № 2348, էջ 311թ)



### Նկ. 8

«Թաղում»

Ավետարան, 1605 թ., նկարիչ՝ Խաչատոր Բահանա  
Նոր Ջուղա, Սուրբ Ամենափրկիչ վանք (Զետ. № 670 (104), էջ 12թ)

## ԱՐՈՒՍՅԱԿ ԹԱՄՐԱԶՅԱՆ

### ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀՈԳԵԼՈՐ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ. ԵՕԹՆԱԳՐԵԱՆՔ

#### 1. ԵՐԱԺՄՈՒԹՅԱՆ Եւ հոգու կապը

«Ովինչ այնպես չի վեհացնում հոգին, ոչինչ այնպես թեւեր չի տալիս նրան, չի հեռացնում երկրից, չի ազատագրում մարմնական կապանքներից, չի սովորեցնում միջամտիպության եւ չի օգնում հասնել կատարյալ արհամարհանքի երկրային, կենցաղական ապարկաների հանդեպ, ինչպես ոիթմով կարգավորվող ներդաշնակ մեղեդին եւ աստվածային երգեցողությունը»<sup>1</sup>:

Արեւմտյան եւ արեւելյան քրիստոնեական բազմաթիվ ալյուրներում նշվում է, որ երաժշտությունը մի նախնական եւ ավելի սերտ կապ ունի մարդու հոգու հետ: Նրանով այն ճանաշում է իր շարժումները եւ չափում իր ներքին կշռույթները՝ բերելով դրանք ներդաշնակության:

«Մեր հոգիները գտնվում են ուղիղ հարաբերության մեջ մեղեդու էներգիաների հետ, ասես ճանաշելով սեփական պարունակության հարաբերությունների հարազատությունը եւ ձեւ տալով այս կամ այն շարժումներին, որ հատուկ է երգեցողության սեփական շարժուն կառուցվածքին»<sup>2</sup>:

«Մեր հոգու բոլոր շարժումները, իրենց ողջ բազմազանությամբ հանդերձ, ունեն իրենց սեփական արտահայտումները ձայնի եւ երգեցողության մեջ, որոնց նույնությամբ՝ հայտնի չէ, ինչ գաղտնիքով, նրանք արթնացվում են»<sup>3</sup>:

Հոգու ներքին հոսանքները, շարժումների ու անշարժությունների սրբագան բանաձեւերը ներդրված են երաժշտության մեջ եւ նրանով արթնացվում են:

«Պարզ է, որ չկա դեպի հոգին տանող ավելի հեշտ ճանապարհ, քան լողությունն է: Նրա միջոցով հոգու խորքն են թափանցում ոիթմերը եւ լաղե-

<sup>1</sup> **Иоанн Златоуст**, Толкование к надписаниям псалмов. – Музыкальная эстетика западноевропейского средневековья и Возрождения, Москва, 1966, с. 114.

<sup>2</sup> **Птолемей**, Гармоника, Античная музыкальная эстетика, Москва, 1960, с. 225.

<sup>3</sup> **Августин Блаженный**. "Исповедь". Собрание сочинений в четырех томах. Том 2, Санкт- Петербург, 2000, с. 647.

րը, կառուցելով եւ ուղղորդելով եւ՝ մարդու միտքը...

...Այստեղից պարզ է գառնում ինչու է ասել Պլատոնը, որ աշխարհի հոգին կազմավորել է երաժշտական համաձայնությամբ»<sup>4</sup>:

Գոյությունների տատանումները, դրանց երկխոսություններն ու արտացոլումները, բոլոր շարժումների կառավարում ընթանում են երաժշտության մեջ եւ նրա օրենքներով: Ըստ դրա այն եւ ավելի անմիջական ու առեղծվածային կապի մեջ է գտնվում հոգու հետ, որովհետեւ նրանք երկուսն էլ ընթանում են ձգողության ու վանողության նույն շառավիղներով: Այդ պատճառով երաժշտությունը կիրառվում էր բոլոր հոգեւոր դպրոցներում շատ խոր շերտերում, առաջին հերթին մաքրագործման, եւ ներքին փոխակերպման նպատակով:

Անտիկ աղբյուրներում նշվում էր, որ բոլոր զգայական ընկալումներից միայն լսողությունն ունի էթիկական հատկանիշ, որովհետեւ այն իր մեջ շարժում է պարունակում, ի տարբերություն, օրինակ՝ գույնի, համի, հոտի: Այստեղ, ինչպես նշվում է, խոսքն այն շարժման մասին է, որն ընկած է աղմուկի՝ հնչող երաժշտության հետեւում, ներքին էներգիաների այն հպումներն ու ներթափանցումները, որոնք ստեղծում են նրա արտաքին, հնչող շերտը<sup>5</sup>: Այդ նույն հոսքերն ընկած են եւ մարդու գոյության հիմքում եւ առաջնորդում են նրա մտքերն ու զգացողությունները: Այսպիսով էթիկական հատկանիշով օժտված են էներգիաները, որոնք շարժում ու գործողությունները, առաջնային համամասնությունները: Երկրորդ կարեւորագույն հանգամանքը, որ բխում էր հենց առաջինից այն էր, որ առավելագույն շարժում պարունակում է միաձայնությունը, որպես բարձրությունների ու սիթմերի անընդհատ հարաբերակցություն: Այդ պատճառով, ինչպես նշում է Արիստոտելը, սիմֆոնիաները՝ երաժշտական հնչունների համադրումները չունեն էթիկական հատկանիշ: Այս տեսակետից հասկա-նալի է միաձայնության բացարձակ գերակշռությունը նաև վաղ քրիստոնեական մշակութում: Սա բխում էր ոչ միայն այն գիտելիքից, ըստ որի երաժշտությունը պետք է միայնակ հոգու աղոթք լիներ, կամ մի խումբ աղոթողների կատարյալ միաբանություն<sup>6</sup>, այլ նաև առավելագույնս ապահովելու համար հոգու հետ

<sup>4</sup> **Боеций.** Наставление к музыке, Муз. эст. зап. евр. ср. и Возр, с. 155.

<sup>5</sup> **Аристотель.** Проблемы. – Античная музыкальная эстетика, с. 171-172.

<sup>6</sup> Բազմաձայնությունը, այնպես ինչպես կազմավորվում էր իր նախնական փուլում որպես ձայնի կրկնորդավորում, արձագանք այլ շերաերում, ավելի օնտողոգիական բնույթ էր կրում, այն ասես տարրալուծում էր իր շարժումները, ձուլում դրանք տարածության մեջ, շարժումը կանգ էր առնում արձագանքերով, ինքն իրեն ժիստելով, հայելանման անդրադանելով և ինքն իրեն հարաբերվելով: Այդպիսով այն ասես սփոված միաձայնություն

Նրա լիակատար սերտաճումը, նրա ուղղորդումն ու ինքնամաքրումը: Միաձայնությունը առավել նուրբ նյութից է հյուսված, այդ պատճառով այն բխեցվում է հենց հոգուց, նրա ամեն շարժման նրբագույն տատանումներից եւ ինքն էլ կարգավորում է դրանք:

Երաժշտության միջոցով հոգին հայում է մեղեդուն, որ կառուցվում է բնության համապատասխան, ոիթմին, որ կարգավորված շարժում է, ամեն ինչի սկիզբ եւ նրա բացակայությունը՝ բոլոր արատների եւ հիվանդությունների պատճառ, եւ վերջապես՝ ներդաշնակությանը, որ ցուցանում է հակոտնաւների հարաբերությունը<sup>7</sup>: Այսպիսով՝ երաժշտության մեջ ներդրված են կյանքի մեծագույն հայտնությունները՝ շարժման համընդհանուր օրենքները, ոիթմը, որ հոգու նախնական մի վերապրում է, եւ ներդաշնակությունը՝ առեղծվածներից ամենախորը, որի շնորհիվ միական արարշության մեջ ստեղծվում ու հանգչում է կյանքերի անվերջ բազմազանությունը:

Եվ եթե երաժշտությունն իրոք իրագործվում է ավելի անյութ մի տարածքում՝ որպես գիտակցության զեղում, ապա այն եւ արագորեն անհետանում է դարերում հոգեւոր դաշտի վերացման հետ:

## 2. Երաժշտության երեք ոլորտները

Միջնադարում երաժշտության մասին գիտելիքը պայմանավորվում էր առաջին հերթին միջնադարյան գիտակցության մեջ երաժշտության ընկալմամբ, եւ երկրորդ՝ այն ընդհանուր հոգեւոր դորձով՝ գիտելիքի դաշտով, որտեղ

լիներ: Այդտեղ վերանում էր նրա չոր, մերկացված կմախմը, ուղիղ նանապարհ՝ կարգավորված հոգու շարժմամբ, նրա մարմինը հայտնաբերում էր ինքն իրեն տարբեր շերտերում՝ իր արձագանքումներում: Բազմաձայնուրյան առաջացման վաղ շրջանում այն ընկալվում էր որպես միաձայնուրյունից բխած, նրա առանձին մասնիկները «բացատրող» հոսք, որի արմատները բաղված էին այն կետում, որտեղ բոլոր ձայները համընկնում են եւ վերադառնում իրենց միականուրյանը: Միջնադարում բազմաձայն հատվածները երգում էին մենակատաները, իսկ միաձայն հատվածները՝ ողջ երգախոսմբը: Սա հենց միաձայնուրյան վերապրման էական տարբերությունն է, որպես օրյեկտիվ սկիզբի, որը իրականում ոչ թե միաձայնուրյուն է, այլ բոլոր բազմաձայնուրյուններն իր մեջ ձուլած միակ ձայնը: Իսկ բազմաձայնը, տարանջատվողը, ծննդում է այդ միակից որպես նրա աղոտ ցոլք, ճյուղավորում, որ միշտ նայում ու արտացոլում է այդ միակին, ի վերջո վերադառնարով այդ ակունքներին: Բազմաձայնուրյան եւ միաձայնուրյան այս վերապրումը իրականում պայմանավորում է բոլոր պոլիֆոնիկ ձևերի առաջացումը միջնադարում: Միայն ժամանակի ընթացքում բազմաձայնուրյունը սկսեց ընկալվել որպես ավելի օրյեկտիվ, հարուստ հնշուրյունների դաշտ, իսկ միաձայնուրյունը որպես անհատական, միական երեսուրը: «Դիաֆոնիան սկսվում է միաձայն, այնումետեւ ընթանում է պարզ կամ բարդ ինտերվալներ կազմելով եւ վերջապես վերադառնում է իր սկզբին՝ տոնին, որի մեջ է նրա ուժը եւ նրա էությունը» (Էրիցեն. О разделении природы. – Муз. эст. зап. -евр. ср. и Возр. с. 298):

<sup>7</sup> Аристотель. “Проблемы”, с. 171-172.

շարադրվում էր եւ երաժշտությանը վերաբերող նյութը:

Երաժշտության ընկալումը միջնադարում ծայրահեղ տարբեր էր նրա այժմյան վերապրումից, հենց դրանից էլ բխում էր այն փաստը, որ այն սերտաճած էր այլեւայլ գիտելիքներին, եւ միայն նրանց ընդհանուր համատեքստում կարելի է հասկանալ այն երաժշտությունը, որ պատկերացվում էր ապագայում եւ հնչեցվում հանապազ:

Երաժշտագիտությունն իր այժմյան ընկալմամբ միջնադարում շատ փոքր տեղ էր զբաղեցնում ընդհանուր երաժշտական փորձի մեջ: Եվ այն, ինչ միջնադարում ընկալվում էր որպես երաժշտություն, այսօր մեզ համար զուտ վերացարկված մեռյալ մի շերտ է դուրս մեր գործնական փորձադաշտից: Այդ պատճառով երաժշտությունն ասես իր ստորին հատվածով միայն շոշափում է այն սահմանները, որ առնչվում են մեր աշխարհներին, նրա մյուս բոլոր շերտերը մնում են տեսադաշտից, ընկալունակությունից դուրս:

Մեզ չեն հասել, հակված ենք մտածելու, որ չեն էլ եղել, հայ միջնադարյան ավարտուն երաժշտագիտական աշխատություններ: Նրա առանձին հատվածներ «ցրված» շարադրվում են տարբեր աղբյուրներում, այն ժամանակ գոյություն ունեցած բոլոր ոլորտներում՝ սկսած տիեզերագիտությունից, մարդաբանությունից, որի հետ անմիջականորեն կապված էր եւ բժշկությունը, վերցացրած ծիսակիտությամբ ու քերականությամբ: Այդ տեղեկությունները թափանցում են գիտակցության, ընկալումների, լսողական փորձի շատ խոր շերտեր:

Դրանք համադրելիս պարզ է դառնում, որ միջնադարում գոյություն ուներ երաժշտության մասին համակարգված մի գիտելիք: Այն օգտագործվում էր հոգեւոր ընթացքի մեջ մեծ գուշությամբ՝ ներթափանցելով դրանց խորին շերտերը, ներհոսելով՝ հոգեւոր իրողությունների, գոյությունների նուրբ տարածքներ:

Երաժշտությունը, դեռևս հինավորց գիտելիքից ավանդված, ընկալվում էր որպես վիբրացիա, որ թաղված էր բոլոր գոյությունների թաղանթների տակ եւ միարժամանակ պարուրում էր նրանց իր ավելի նուրբ նյութեղեն ցանցով:

«Ես ապշահար նայում էի այդ երեւովթներին, եւ երբ վերագտա իմ հանդարտությունը, - ասում է Սցիպիոն կրտսերը, - հարցրեցի, ի՞նչ է սա, այս ի՞նչ հնչուն է, որ ես լսում եմ՝ այդքան ազդեցիկ եւ այդքան քաղցր»: «Դա ա՛յն հնչունն է, - պատասխանում էր նա՝ ավագ Սցիպիոնը, - որն առաջանում է անհավասարությունից՝ ինտերվալների թվային հարաբերություններին համապատասխան, արտածվում է ոլորտների հնշումից ու շարժումից, եւ ձուկելով բարձրը ցածրի հետ, կազմում է համաշափ հերթագայող ներդաշնակ համա-

դրություններ, քանզի նման արագ շարժումները չեն կարող լուսավան մեջ իրագործվել, եւ բնությունը պահանջում է, որպեսզի բեւեռները հնչեն մի կողմում ցածր, մյուս կողմում՝ բարձր: Այդ պատճառով բարձր՝ աստղային ոլորտը, որի պտույտն ավելի արագ է, շարժվում է ավելի բարձր հնչունով, իսկ լուսնայինը, ամենացածրը, ունի ամենացածր հնչունը: Երկիրը ձայն չի արձակում, որովհետեւ անշարժ է: Իսկ այն մյուս ութ ոլորտները, որոնց միջեւ երկուսի ուժը միանման է, արձակում են յոթ հնչուններ, տարանշատված ինտերվալներով: Սա այն թիվն է, որն ամեն ինչի հանգուցն է»<sup>8</sup>: Այնուհետեւ պատմվում է, ինչպես ուսյալ այրերը լսելով այդ հնչողությունները, վերարտադրեցին այն լարերով, մեղեդիներով (տե՛ս հայկական ձեռագրերի «Ճայնից» մեկնությունները, որտեղ թեռփիլյանները աստղերից են սովորում ճշմարիտ երաժշտությունը, եւ ստեղծում են երաժշտական գործիքները)<sup>9</sup>, նմանվելով մյուս բոլոր այն ուսուցիչներին, որոնք մշակում էին մարդու տարածքներում աստվածային իմացությունները: Այստեղ շեշտվում է այլ լարվածքների փոխադրումը ավելի թանձր նյութի աշխարհները, դրանց հնարավորինս մոտեցումը բարձր ոլորտների հնչմանը:

Ուսուցիչների մեծագույն առաքելությունը հենց փոխադրումն էր, «թարգմանումը» այլ աշխարհների, դրանց հնարավորինս համապատասխան վերաշարադրումը ավելի կոշտ նյութի աշխարհում, մարդու սահմանափակ մտածողական դաշտում: Այդպես ստեղծվել էր, ըստ հինավորց ուսմոնքի եւ երաժտությունը, որպես մեծ գոյությունների տատանումների երկխոսությունների ստվեր՝ աղոտ պատճեն: Պյութագորասն,օրինակ, ըստ մի շարք աղբյուրների. (տե՛ս Յամալիք. «Օ ուֆագօրեյսկոյ յէսին»: – Անտ. մուզ. էստ.. ս. 128) ստեղծում էր երաժշտական եղանակներն ըստ այն հնչումների, որոնք սփոված են տիեզերքում, բայց ինքը լսում էր անմիջականորեն հենց դրանք, հատուկ ձեւով լարելով իր լսողությունը: Նա կիրառում էր հատուկ լարեր, տարբեր խառնվածքի տեր հոգիների համար, բերելով նրանց ներքին շարժումները ներդաշնակության, բուժում էր հիվանդությունները, որոնք առաջանում էին նույն այդ ներքին շարժումների ներդաշնակության խախտումներից, սիսալ նյութափոխանակությունից, նրանց ավելորդ խցանումներից ու գոյացումներից: Բացի դրանից, հատուկ երաժշտություն էր հնչեցվում քնից առաջ, որն ապահովում էր հոգու ավելի ներդաշնակ հոսեցումը տիեզերքի բաց տարածություններ: Առավտայան հնչեցվում էին հատուկ լարեր, որ կարգավորում էին հոգու ճիշտ արթնացումը: Այդ ամենը կառավարվում էր համատիեզերական լարվածքների եւ ոիթմերի օրինաշափություններով:

«Երկնային գոտիների հնչումից եւ շարժումից ծնվում է քաղցր, համա-

<sup>8</sup> Կիցերոն, О государстве. – Ант. муз. էստ., с. 224.

<sup>9</sup>Տե՛ս Աննա Արեգակայանի «Հայ միջնադարյան «Զայնից» մեկնություններ» մենագրությունը հնանական բնագրերով, «Կոմիտաս», Երևան, 2003, Բնագիր Բ2, էջ 95 կամ Բ3, էջ 102:

շափությամբ, հմայիլ մեղեդայնությամբ լեցուն հնչուն. քանզի օդը՝ ճեղքված նման շարժումով, որ ճշգրիտ գտնում է բարձր եւ ցածր տոների համադրման հարաբերությունը, իր հերթին այնպիսի մի բազմազանություն է ծնում, որին զիջում է մարդկային ցանկացած երգեցողության քաղցրությունը»<sup>10</sup>:

«Այդ մեղեդին լսելի է այն գիտակցությանը, որը ոչնչով չի շեղվում, վերացարկվում է արտաքին զգացողություններից եւ լսում երկինքների երգեցողությունը: Այդպիսի ունկնդիր էր եւ Դավիթը, ըստ իս, երբ նա հետեւելով երկինքների համաշափ, բանական շարժմանը, լսեց՝ ինչպես են նրանք պատմում իրենց կարգավորողի՝ Աստծո փառքի մասին»<sup>11</sup>:

Տիեզերքի բոլոր շերտերն ու մարմինները ընթանում էին հավերժության մեջ՝ արձակելով իրենց մեղեդին:

Երաժշտության՝ որպես գոյություն—տատանման հետ են կապվում նրա միջոցով նյութի փոփոխության, տարերքների վրա ազդեցության հետ կապված բազմաթիվ հնագույն վկայություններն ու պատմությունները:

«Ամփիոն երաժիշտ յոյն՝ արքայ Թեքացւոց, որ եւ պարապեաց զթերէ, կամ որպես քերթողն առասպելեն, քնար յԱպողոնէ ընկալեալ. նորին նուագցն քաղցրութեամբ զքարինս շարժեալ ի շարգ եւ ի գետեղումն պարապացն ընթացուցանէր: Արիոն քերթող եւ երաժիշտ ի Մեթիմնա քաղաքէ Լեսբոսի՝ թովեալ, ասի քնարաւն դրվին մի, որ ապա ընդ աստեղունս դասեցաւ: Իսկ Որդիւս երգիշ կամ քերթող էր անուանի, յորոյ ի լուր ձայնին գազանի ամեհի ընթանային եւ կողերք ծառոց ծափ գծափին հարկանէին»<sup>12</sup>: Երաժշտությունը տիրապետում է մի նախնական լեզվի, որով կարող է խոսել տարերքների հետ եւ ուղղորդել նրանց:

Գոյության ավելի նուրբ շերտերի մեջ թափանցման ու նրա տատանումների ընկալման հետ են կապվում հրեշտակալին երգեցողության, հարաժամ աստվածային օրհներգության մասին տեսիլները: Դրանք անտիկ ոլորտների երաժշտության քրիստոնեական վերափառավորումն են:

«Քաջ գիտեմք, զի հոյլք ի հանդիսի հզօրք եւ փառացի եւ փարթամք, եւ վիճակելոց դասք ոսկեհուռ զարդիւք պարածածկեալք, սպիտակափառ եւ երաժշտական պարք գումարեալք դաստակերտացն տնօրենութեամբ, եւ ոտիւք հաքաւեալք, եւ հնչմանց երգ արտակիտեալ եւ փողեալ քնարական ներդաշնա-

<sup>10</sup> **Ամվրոսիй**, Толкование на Шестоднев. – Муз. эст. зап.-евр. ср. и Возр. с. 112.

<sup>11</sup> **Григорий Нисский**, Толкование к надписаниям псалмов. – Муз. эст. зап.-евр. ср. и Возр., с. 108.

<sup>12</sup> Տե՛ս Յովհաննէս Խմաստափիրի մատենագրությունը, Երեւան, 1956, էջ 322 (Ղ. Ալիշանի ծանոթագրությունը): Այս երաժիշտների մասին բազում վկայություններ կան հայկական աղբյուրներում, առաջնայինը՝ Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 123:

կապես, քանզի եւ այս ինքեանց սեպհական եւ հարազատապես ի Թրակիայ երեւեալ գիւտ մանաւանդ ի յարտանցն ներքինեաց մաքրագոյն եւ վճիտ քմազարդութիւն եւ բացագանչութիւն պատկանեալ եւ յարմարեալ ձայնիւ»<sup>13</sup>: «...զի զոր հրեշտակը բազում երկիւղիւ պաշտեն, եւ զերգսն զոր նոքա մեծավ ահիւ աղաղակեն, զայն մեզ համարձակապէս ընդ նոսին երգել շնորհեաց...»<sup>14</sup>: «Եւ որ անդ են կայանք ննջեցելոցն հոգիք ի զգայութեան եւ յանձառ փառաբանութեան հրեշտակային օրհներգութեամբք»<sup>15</sup>:

Ենթադրվում է, որ տիեզերական երաժշտության մասին ուսմունքը, որպես կենդանի փորձ, արդեն կորսվում էր միջնադարում, եւ հոգեւոր կենցաղավարության մեջ պահպանվել էին միայն այն նախնական հնչուններն ու մեղեդիները, որոնք, ըստ ավանդուցի, ներշնչված էին աստվածային ոլորտներից:

«Մրպիս գիտացին, թե թաւալի արեգակն: Զգայարանք առաջնոցն սուր էին քան զայժմուցմ՝ զոր վկայեն բազումք վասն որոյ ոչ միայն զարեգական գնացս կարացին նկատել, այլ եւ զբոլոր լուսաւորացս կարացին դրոշմել եւ ճանաչել: Եվ ոչ միայն զորպիսութիւն գնացիցն՝ այլ եւ զհնչումն ձայնից նոցաւ ի նոցանէ գտաւ արուեստ երաժշտականութեան աշխարհի»<sup>16</sup>:

Երկրորդ բաժինը՝ մարդկային երաժշտությունը՝ մարդու ներքին վիբրացիաների եւ արտաքին երաժշտության հետ նրանց կապի ոլորտն էր ընդգրկում, այն ամմիշականորեն կապվում էր տիեզերական երաժշտության հետ: Այս գիտելիքը կիրառվում էր եւ բժշկության մեջ, եւ հոգեւոր ներքին փոխակերպման համար, եւ արտաքին ծեսերը կարգավորելիս: Սա առաջին հերթին մարդու մեջ հնչող երաժշտությունն էր եւ նրա կապը տիեզերքի տարբեր գոտիների տատանում-հնչուցիթների հետ: Նա իր մարմնից ձգվող բազում թելերով կապված էր իրենից դուրս տարածվող աշխարհների հետ, որոնք պահպանում էին այն ճիշտ լարվածքի մեջ: Եթե անգամ ի նկատի էր առնվում հնչող, այսօրվա պատկերացմամբ, երաժշտություն, ապա միայն այն երաժշտությունը, որը մարդն ինքն էր իր մարմնով արտաքերում:

Ուզում ենք նշել, որ տարբեր դպրոցներում, տարբեր հոգեւոր փորձի հետ կապված տարբերվում էր եւ լսողական փորձը: Ըստ այդմ տարբեր կերպ էր վերարտադրվում մարդկային երաժշտությունը, այլ կերպ ընկալվում տիեզերական երաժշտությունը: Հավանաբար դա կարող էր կապվել նաև ժամանակի ընթացքում մարդու կառուցվածքի փոփոխության հետ: Տիբեթական «Մեռյալների գրքում» օրինակ նկարագրվում է հոգու ճամփորդությունը աշխարհներով, որտեղ իրեն ընդառաջ եկող ձշմարտության ձայնը, նման հազարավոր ամպրոպ-

<sup>13</sup> Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, էջ 222:

<sup>14</sup> Խոսրով Անձեւացի. Մեկնութիւն ալօթից պատարագին, Վեճեալիկ, 1869. էջ 24-25:

<sup>15</sup> Գրիգոր Լուսավորչի Յանախապատում նախ, նառ ԺԵ, Էջմիածն, 1894, էջ 184:

<sup>16</sup> Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն և տոմար, Երևան, 1940, էջ 83-84:

ների, հենց մարդու միջից գուրս եկող ուժերի արտահայտումն է: Մարդն ինքն իրեն ընկալում էր որպես էներգիաների հզոր, խտացված կուտակումների մի բնակատեղի, որտեղ կարող էին ընկնել եւ ահեղ աստվածների ստվերները: Հստ այդմ մեկնաբանվում էր եւ երաժշտությունը: Այն տարբերվում է անտիկ հավասարակշռված, հավերժ ներդաշնակ հնչողությունից, առավել եւս քրիստոնեական բացարձակ մաքուր, սերովեհների գրեթե աննյութ, աստվածային օրհներգումից: «... Նրանք լցնում են երաժշտությամբ բոլոր աշխարհները, որոնք ցնցվում են ու տատանվում հզոր հնչուններից բանականությունն ապշեցնող, նրանք պարում են տարբեր ութմերով...»<sup>17</sup>: Աշխարհները գողում էին էներգիաների հավերժ պայքարների ահեղ գոյացումներից եւ մարդն ինքը դրա թանձրացումներից մեկն էր: Տիրեթական ծեսի մեջ օգտագործվում էին յոթ երեմն ութ տեսակի երաժշտական գործիքներ, որոնք ըստ նրանց գիտելիքի առավել մոտ էին բնական հնչողությանը, որ արձակում է մարդու մարմինը: Այդ հնչողությունը կարող ես լսել, փակելով ականջները: Այն վերարտագրվում էր մեծ թմբուկների միջոցով, որ նմանակում էին մարդու մեջ հնչող խոռվ հարվածները, ցիմբալների՝ զնգոցները նմանակող: Մարդու մեջ հնչում է եւ շրջուն, նման տերեւնների հետ խաղացող քամու ձայնին, որ նմանակվում էր խխունջների միջոցով, զնգոց՝ նման զանգուլակների ձայնին, կտրուկ հարված, ինչպես դափի մոտ, տիտուր հառաջանքներ՝ նման եղչերափողի, ցածր խոխոց՝ նման մեծ թմբուկի, սուր, ծակող հնչուններ, որ ծեսերում վերարտագրվում էր մարդու ազդոսկրից պատրաստված սրճի միջոցով<sup>18</sup>:

Անտիկ երաժշտության մեջ այն ամեն ինչ ներդաշնակ էր եւ ճիշտ լարված, կառուցված էր ըստ գորիական լաղի, այդ լաղով էին լարված յոթ գոտիները, որոնք արձակում էին յոթ հնչուններ: Եվ վերջապես քրիստոնեության մեջ, որտեղ արդեն աստիճանաբար ավելի ու ավելի աննյութ դառնալով, միտքը վերածվում էր արստրակցիալի, երաժշտությունը եւս այնքան աննյութ ու եթերալին էր մտածվում, որ գրեթե վերածվում էր լուսվան: Քրիստոնեաբար ապրված կամքն արդեն մարդու մեջ հնչող կամ լոռող ճիշտ երաժշտություն էր:

Միջնադարում գոյություն ուներ մարդու մարմնի եւ նրանից արտաքերվող հնչեցման՝ որպես բանավոր զոհաբերության ուսմունք, որտեղ մարդու մարմինը վերապրվում էր որպես ներդաշնակութեն կառուցված երաժշտական գործիք: Մարդն ինքն իր մեջ կրում էր գոյության բոլոր գոների ու ճանաշողությունների բանալիները, նրա մեջ թաղված էր աստվածային հնչունը: Եվ հոգեւոր ծեսերում ներքին վերափոխման համար միստիկը կիրառում էր սեփական մարմինը, որպես Աստծո կողմից ստեղծված անոթ, որի մեջ կարող են թափանցել աստվածային հնչունները:

Քրիստոնեական պրակտիկայում տարբեր գործիքները նույնացվում էին մարդու մարմնի հետ: Բայց առավելագույն ոգեղենացման պահանջով, գրանք չէին հնչեցվում. արթնացվում էր հենց մարմինը, որի տարբեր հատվածները կառուցված էին տարբեր գործիքների

<sup>17</sup> Тибетская книга мертвых, Санкт-Петербург, 1999, с. 81.

<sup>18</sup> Նոյն տեղում, էջ 79-80.

համապատասխան, եւ այն հնչունը, որ թաքնված էր այդ կատարյալ գործիքի մեջ. «Փոխեցէք զմարմնաւոր թմբկա՞արութիւնս ընդ հոգեւորսն»<sup>19</sup>: Հայ միջնադարյան «Զայնից մեկնություններում» կոկորդը համեմատվում է սրբնի, փողկը (որպես փողք, շնչափող) փողի, կզակը՝ ծնծղայի, լեզուն՝ տնտղկոցի», ողջ մարմինը՝ թմբուկի եւ միաբան տաղի, ոգին՝ քնարի եւ զգայարանները՝ սաղմոսարանի հետ. «Զի եղիցի ամենայն մարմինդ քո գործի օրհնութեան»<sup>20</sup>: Մեկ այլ աղբյուրում<sup>21</sup> մարդը համեմատվում է քնարի հետ, բերանը համեմատվում է փայտի «փորոքության» հետ, լարը՝ ձայնի, իշուկը՝ ատամների, ներքին ցիցը՝ թռփի, բերանի, եւ «կնդկնդոցը» լեզվի, մատները՝ պոռնկների շարժման, «որի մասին էլ ասում է մարդարեն, թէ «Տասնադի սաղմոսարանով սաղմոս ասեմ քեզ»<sup>22</sup>:

<sup>19</sup> Երանելոյն Թէոդորոսի Միայնակեցի, Գովեատ ի սուրբ Կոյսն. Յովհաննու Խմաստասիրի Աւճնեցյ Մատենագրութիւնն, Վեճնետիկ, 1833, էջ 182:

<sup>20</sup> Տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. № 6962, էջ 50ր:

<sup>21</sup> Տե՛ս Առաքել Սիմեոնի, Յաղագ եւրականուրեան համառոտ լուծմունք, Լու Անջելես, 1982, էջ 91:

<sup>22</sup> Մարդու համեմատումը հնարի հետ գիտելիքի շատ հին ակունքներ ուներ: Պլատոնի «Ֆենոնում», հնարի եւ ներպահնակուրյան գուշակեռը բերվում է մարդու մարմնի եւ հոգու գոյուրյան հիմքերը բացատրելու համար, հ. 1, Երեան, Սարգիս Խաչենց, 2006, էջ 100): Նրա «Խնջույքի» մեջ, համաձայն հերակլիուրյան ուսմունքի, ներդաշնակուրյան օրենքներով դեկավարվող պառակտման ու համաձայնուրյան գոյաբանական հավերժ հոսքերը համեմատվում են աղեղի եւ հնարի հետ (էջ 165): Սյափիսով, հնարի օրինակի վրա բացատրվում էին ոչ միայն մարդու մեջ ներդրված ներպահնակուրյան ու ննջող հնչյունների խորին շերտաները, այլ նաև ողջ տիեզերքը, որովհետեւ մարդն է կառուցված է ըստ նրա պատկերի: «Ունիմիերսումը կառուցված է նոյն օրենքներով, որոնց ընդորինակելով ավելի շուտ ստեղծվել է հնարը: Այն հնչյուններ է արձակում ոչ այլ կերպ, իան այն տատանումների միջոցով, որոնք գտնվում են ոչ միաման հնչյունների համաձայնուրյան մեջ, որն անվանում են հարմոնիա» (տե՛ս նոյն Երկխոսուրյան հետ կապված ծանրագրությունը, **Պլատոն**, Соч. в трех томах, Москва, 1970, с. 523): Հունական մշակույթի մեջ այն, ի տարբերություն սրբնի, համարվում էր կատարյալ գործիք, որը նվագում էր Ապոլոնը՝ հաղբեկով Միդիասին: Սյա գործիքի համարումը մարդու մարմնի հետ որոշ հոգեւոր իրողությունների խոտացման խորհուրդ էր կրում: Այն բափանցեց եւ քրիստոնեական գնոսիսի մեջ, որուղ մարդը համեմատվում էր հնարի հետ, որը նվագում էր Ոգին: Ընդհանրապես բոլոր աւղիւրում, որուղ խոսվում է հոգու գոյուրյան ամենազաղտնի ակունքների, նրա եւ Աստծու հատման, համան խորհրդավոր տարածի մասին, միշտ բերվում է երածշուրյան, գոյուրյան եւ ներքին մարդու տատանումների խորհրդավոր մի համընկնումի օրինակը. «Ապա կարի զեղեցիկ մեր արարիչն զբնութիւն մարմնոյ հաստատեաց շինուած բաժանելի, եւ զգոյացութիւն հոգուս արար անբաժանելի բնորիմ. եւ միարանեաց իրուն հնարահար ընդ հնարի, զի շարժեսցի եւ շարժեսցէ զավսի ի տեսանե, զորնզուսի ի հոտոտե, զի իմսն ի հաշակել, զեզու ի խաւել, զի կը լիմանալ. Զայս ամենայն զբազմութիւն մասանց մարմնոյ շարժէ ի կենդանութիւն եւ ի գործառութիւն ցորքան ժամանակ միարանութիւն է շարժողին եւ շարժեցելոյն: Ապա երէ շրանեսցէ սա բակտեալ եւ նա ի բաց կացցէ, լուալ դադարեալ լինի ամենայն բազմութիւն արուեստիցն. սա դասնայ յիւր բնութիմս, եւ նա վերանայ յիւր կայանն. ինքն յինմեան իմանայ, ինքն յինմեան հանգչի, ինքն յինմեան առաւելու ... ինքն իւր բատկան իմբնապոյ իմացութիւն, ինքնալուր, ինքնատես» (Եղիշե, Վասն հոգու մարդկան թէ ուստի զան, եւ յետ ելանելոյ ի մարմնոց առ ով երթան, կամ թէ

Կիմենտ Ալեքսանդրացին համեմատում էր գործիքները նաև ընդհանուր հոգեւոր իրողությունների հետ. փողը՝ հարության, սաղմոսարանը՝ լեզվի, կիֆարան՝<sup>23</sup> շուրթերի, ծնծղաները՝ եկեղեցու, երգեհոնը՝ մարմնի, լարերը՝ երակների, կիմվալը՝<sup>24</sup> լեզվի հետ, ողջ մարդու կառւցված է խաղաղ երաժշտական գործիքի պես՝<sup>25</sup>: Եւ կատարյալ աղոթքի մեջ մասնակցում էին մարդու մարմնի բոլոր հատվածները, նրա բոլոր ոլորտները՝ բերվելով մի լարվածքի եւ ամբողջության, իր գոյության լրիվությամբ նվիրաբերվելով Աստծուն: Բայ հին ուսմունքների մարդու մարմինը մի լար էր: Եթե այն ճիշտ լարվածքի բերվեր, նրա վրա կարող էր նվագել Ոգին իր աստվածային հնչումները: Այսպես երիքովի դարպասների փլուզման պատմությունը բացի նյութի վրա երաժշտության վիրացիայի ազգեցությունից, ընկալվում էր շատ ավելի խորը, հոգեւոր ներքին իրողությունների շերտում: Բայ ներքին գիտելիքի, դարպասների շուրջ վեցօրյա լուր շրջելը կապվում էր վեց զգայարանների մաքրագործման հետ եւ յոթերորդ օրվա փողի աղաղակումը՝ մարդու ազատագրման, երբ փլուզվում էին դարպասները՝ մարդու նյութեղեն թաղանթները, եւ արթնանում էր նրա մեջ թաղված աստվածային հնչունը: Այս գիտելիքի արձագանքները պահպանվել են ծեսի կարգավորման մեջ, դրա մասին վկայություններ կան սաղմունների բազում մեկնություններում՝<sup>26</sup>: Հին ուսմունքների մեջ երաժշտությունը դիտվում էր որպես մեծագույն առեղծված, որ ընկած է մարդու եւ Աստծո, նրանց միջեւ նետված աշխարհների տատանումների անվերջ համընկնումների ու հատումների մեջ:

Երբ մարդու ամբողջ մարմինը բերվում էր ներդաշնակության, ինչպես ճիշտ լարված երաժշտական գործիք, հոգին ներթափանցվում էր աստվածային ոգով, զգայարանները, մաքրագործվելով հայելու պես, մաքուր ու վճիտ արտացոլում էին ոգեղեն իրողությունները, մարդն արթնացնում էր իր բոլոր տիրութները, գործի դնում բոլոր շերտերը՝ միեղեն հղացքի մեջ նվիրաբերվով իրեն Աստծուն: Այսպես բոլոր քրիստոնեական աղբյուրներում Սաղմունների մեկնություններում գործիքները այլաբանորեն բացատրվում են որպես մարդու գոյության, նրա կազմության տարբեր հատվածներ, հոգեւոր իրողություններ: Քրիստոնեական զգացողությունը պահանջում էր, որպեսզի երկխոսության մեջ լիներ միայն հոգու, Աստծո կողմից ստեղծված գործիքի եւ Ոգու ներկայությունը:

«Տանաղեաւ սաղմոսարանաւ ի ձայն օրհնութեան գովել»։ տասնադի տիրապես իմա-

առավել իմաստնայցեն, Մատենագիրք Հայոց. Ա. հասոր Ե. դար. Անթիլիաս- Լիբանան 2003):

<sup>23</sup> Քնարի տեսակ:

<sup>24</sup> Նոյն ցիմբալ. բազմապատճեն տափակ զանգակային նվազարան, սանթուր:

<sup>25</sup> Климент Александрийский. Педагог. – Муз. эст. зап.-свр., ср. и Возр., с. 98:

<sup>26</sup> Տե՛ս օրինակ՝ Յովհան Ա.ձնեցի, Մատենագրութիւն, Վեճետիկ, 1833, էջ 110. «Եօրն եօրն գուրզայիմ կարգեալ է կանոն ըստ եօրն դարու կենցաղոյս, եւ եօրն անզամ յատուն օրինի Աստծուած, եւ եօրն անզամ շուրջ գալն զերիքովիս, եւ յետ վեցիցն կատարելոյ, յեօրներորդին հնչեաց զիողն եւ ուժզին աղաղակել ըստ հրամանին Յետուայ ի կործանումն Երիքովի. ըստ այսմ օրինակի եւ մեմ վեցիմ գուրզայիմ շրջապատեմմ զմեթենայիմն սատանայի, ըստ հրամանի մերոյն զօրավարի Յիսուսի, եւ եօրն զոյեմմ գուրզայս բարձրահնչիմ բարբառով զկանոնազլուխսն ի բեկումն զօրութեան բանսարկուին»:

նամք զ՞ոգի եւ զմարմին ըստ վերագրելոցն, իւրաքանչիւրն հինգ զգայարանօք, որովք յայտ առնէ թէ այնքան առատացաւ շնորհք քո ի վերայ մեր՝ որ ոչ թե միայն հոգւով ստիպիմք գովել գրեզ ըստ նմանութեան հոգեղինացդ, այլ խառնեմք զլարս իմաստից սորա ընդ զգայարանս մարմնոյ, եւ որպես զտասնալի երգարան զոյգս արարեալ զհոգի եւ զմարմին տասն զգայարանքս, բարձրացուցանեմք զձայն՝ մարմնոցս ազգեցութեամբ եւ բանիւ հոգւոց...»<sup>27</sup>:

Եվ վերջապես երրորդ ոլորտը գործիքային երաժշտությունն էր, որ ամենաքիշն էր ենթագրում որեւէ ներքին գիտելիք կամ ճանաշողական փորձ՝ տիեզերքի հնչույթների մեջ թափանցման, մարդու ներքին ուժերի վերափոխման եւ այդ պատճառով շատ քիչ տեղ էր զբաղեցնում:

Դարերի ընթացքում համաքրիստոնեական աղբյուրներում ավելի ու ավելի նվազում էին տիեզերական երաժշտությանը հատկացված հատվածները, աստիճանաբար նաեւ մարդկային երաժշտության ավելի խոր՝ մարդու ներքին կառուցվածքի եւ դրանց ներդաշնակության մասին ուսմունքը: Փոխարենը անհամեմատ ընդլայնվում էին գործիքային երաժշտությանը նվիրված հատվածները: Ի վերջո երաժշտություն-օնթոսի հետ կապվող այս վերին երկու ոլորտների մասին վկայություններն անգամ անհետանում են, մինչեւ դրանք ի վերջո դառնում են լոռող շերտեր՝ կտրելով կապը կենդանի փորձի եւ կիրառության հետ:

Այսպիսով, միշնադարում երաժշտության մասին գիտելիքների կարեւորագույն մասը ծածկագրված էր գոյաբանության եւ մարդու մասին ուսմունքի մեջ: Այդ պատճառով մեզ կարող է թվալ, որ նրա «երեւացող» հատվածը շատ քիչ նյութ է ընդգրկում: Իրականում միշնադարում երաժշտությունն ավելի շուտ նույնացվում էր ոչ թե հնչող երաժշտության, այլ երաժշտության մասին գիտելիքի հետ՝ համընդհանուր համամասնությունների, դրանց ներդաշնակությունների, օրինաշափությունների եւ նրանց արձագանքների ու դաշվածքների հետ մարդու աշխարհներում, որի նպատակն էր դրանց գաղտնի կապերի բացահայտման եւ դրա ճիշտ կիրառման միջոցով մարդու ազատագրումը: Երաժշտության մասին նյութերը շարադրվում են կապված տիեզերագիտության, քերականության, բժշկության եւ աղոթքի տեսության հետ: Նրա մասին ուսմունքը ներառում էր վիբրացիայի, մարդաբանության, տիեզերական կշռութների ու ներդաշնակությունների խոր գիտելիք, որով կարգավորվում էր ծեսը, բժշկությունը եւ հոգեւոր ճանապարհը՝ հոգեւոր կենցաղավարության ամենաներքին դաշտը:

<sup>27</sup> Ներսէս Լամբրոնացի, Մելինութիւն խորհրդոյ պատարագին, Վենետիկ, 1847, էջ 286:

**Եօթնագրեանք.**  
**Լեզվի միջնադարյան ընկալումը**

Երաժշտության մասին հնագույն գիտելիքի աղբյուր են Եօթնագրեանք կոչվող գրչագրերը: Դրանցից ամենահին ձեռագրերը մեզ հասել են տասներեք-երորդ դարից (տե՛ս օրինակ՝ ձեռագիր № 1978), սակայն այս գիտելիքի մեջ կան շատ ավելի հինավուրց մի իմացության արձագանքներ՝ այստեղ խոսքը հատկապես պյութագորական ուսմունքի մասին է:

«Եօթնագրեանք». Համառոտ բովանդակություն: Այստեղ մենք այս ընդհանուր անվան տակ բերում ենք ամբողջական գիտելիքի բոլոր հատվածները, որոնք տարբեր ձեռագրերում շարադրվում են լրիվ եւ իրենց առանձին հատվածներով: Բուն յոթնագրեանք հասկացությունը ձեռագրերում անվանվում է արվեստ (յոթ ձայնավորների, որոնցով բացվում են արարշության խորհուրդների, մարդու կազմության եւ նրա հոգեւոր փուլերի գոները), որը շարադրվում է այս ընդհանուր գիտելիքի մեջ, օրինակ՝ նրա առաջին հատվածի ավարտին: Այստեղ այբուբենի տառերի հաջորդական խորհուրդների, նրանց հնչունաբանությանը վերաբերող հատվածներից հետո վերջում անդրադառնում է յոթ գրերին առանձին. «Խսկ ելթնագրենդ այսոքիկ, զոր տեսանես»<sup>28</sup>: Այստեղ տրվում են չորս ձայնավորները եւ նրանցից բխող չորս եղանակ-բանալիները, որոնք բոլոր եղանակների ու բարբառների մայրն են:

Հանդիպում է առանձին մի հատված, որ վերագրվում է Դավիթ փիլիսոփային եւ ոմն Փլունիկ վարդապետին. «Քերական կոչի է. (7)ագրեանք զուգեալ ի Դաւթէ փիլիսոփայէ եւ ի Հոռվամա վարդապետէ, կոչեցեալ անուն Փիւնիկ»<sup>29</sup>: Այս ավարտուն եւ առավել խորհրդավոր հատվածը շատ ձեռագրերում հանդիպում է առանձին, այն վերջանում է մի բոլորակով, որով որոշակի միստիկ ընթացք է նկարագրվում յոթ ձայնավորներով ժամանակների, բոլոր տառերի, շաբաթվա օրերի մեջ շրջագայման մասին: Զայնավորների մասին շարադրվում է եւ «Գիրք մանուշակի» կոչվող հատվածում, որտեղ ամեն ձայնավորը բացում է յոթ խորաններից մեկը:

Քանի որ այս գիտելիքն ընդհանրական էր եւ նրա հատվածները մեկը մյուսով են բացարկում, մենք բերում ենք ամբողջական գիտելիքի շարադրանքը՝ պայմանականորեն այն անվանելով Եօթնագրեանք, մինչդեռ այն ավելի շուտ արվեստ էր, ներքին գիտելիք, որ սերտաճած էր հոգեւոր տարբեր թանձրացումներ պարունակող այս ընդհանուր ուսմունքին:

Այսպիսով, առաջին հատվածը (ա.) վերագրվում է Դավիթ Անհաղթին, Մովսես Քերթողին, Հոմորիա Վարդապետին եւ Փիլիկին Հոռմից<sup>30</sup>: Այս հատվածը, որ կոչվում է «Յաղագս

<sup>28</sup>Տե՛ս ՄՄ, ձեռ. № 599, էջ 34թ (այսումեաւ տրվող մեջբերումները կան բոլոր ձեռագրերում, որոնք ընդգրկում են շարադրվող ամբողջական գիտելիքը եւ ոչ նրա առանձին հատվածները, հարմարության համար մենք այսուղ հնում ենք երկու ձեռագիր):

<sup>29</sup>Տե՛ս ՄՄ, ձեռ. № 599, էջ 47ա կամ № 6962, էջ 63թ:

<sup>30</sup>Ընդհանրապես Յոթնագրերն իրենցից ներկայացնում են օբյեկտիվ գիտելիքի որոշակի խոտցում: Դրանք ընդգրկում են մտածական կատեգորիաների, հոգեւոր փորձի, ներքին օծումների բոլոր շերտերի արձագանքները: Այդ պատճառով դրանք, ըստ մեզ, ավելի շուտ

քերդողական տառից» բացում է տառերի խորհուրդը՝ կապված արարշության օրերի հետ, երկրորդ անգամ անդրադառնում նույն Ա.-Թ տառերին՝ բացելով նրանց գոյաբանական ակունքները, ցուցադրելով այն երեւությները, որոնց հիմքում ընկած են միեւնույն թվերը: Այստեղ գլխավորապես արձագանքվում է նոր, պյութագորական ուսմունքը: Երրորդ անգամ խոսվում է տառերի արտաքին տեսքի եւ նրանց գույների կապի մասին այն երեւությների հետ, որ նրանք խորհրդանշում են: Սրանից հետո բերվում են ամեն տառով սկսվող անվանումներ եւ հոգեւոր խորհուրդներ՝ Ա.-Ք: Դրանք ազոթասացություններ են, որ ընթանում են այբուբենի տառերի հերթականությամբ, ընդգրկելով Աստծո բոլոր անուններն ու հոգեւոր խորհուրդները, բանալիբառերն ու բառակապակցությունները: Սրան հաջորդում են ըստ այբուբենի հաջորդականության շարադրվող ակրոստիքոսով պատկերներ: Այսպիսով տառերի խորհուրդը բացվում է մի քանի շերտերում՝ կապված արարշության ցիկլերի, ժամանակների իրագործումների, աշխարհների կառուցների հետ:

Դրանից հետո գալիս է հնչունաբանության հատվածը, որտեղ տառերը ստորաբաժանվում են: Դրանք տարբերվում են քերականների ստորաբաժանումներից, մեկնվում են նաև որպես թիվ (ա-Ճ-Ռ, բ-Ի-Ը-Ա, եւ այլն): Եվ այս առաջին ավարտուն հատվածի վերջում, որն անդրադառնում էր բոլոր տառերի խորհուրդներին՝ մեկ առ մեկ, մի քանի պատճենից, հնչունթիվ-կուն-պատկեր ամբողջության մեջ դիտարկելով, խոսվում է յոթ ձայնավորների մասին, որոնք ընկած են ամբողջ լեզվի հիմքում առհասարակ, եւ որոնցից ծնունդ են առնում բոլոր մյուս հնչունները: Այստեղ նշվում են չորս գլուխ՝ ա, է, ի, ո (երբեմն նաև՝ ու), որոնք եղանակների թագավորն են եւ բերվում են իրենց խազավորումով: Սրանից հետո բացատրվում է տարբեր երեւությների այլաբանական իմաստը, որով ավարտվում է առաջին մեծ հատվածը: Սովորաբար «իմաստութիւն քերթողական տառից» հատվածին հաջորդում է Մաշտոցի կողմից

---

կարող էին ոչ թե հորինվել մեկի կողմից, այլ շարադրվել իրենց ողջ խորությամբ: Նշված անձինք ավելի շուտ այդ գիտելիքի, նրա խորագոյն ներքին իմաստների կրողներն էին, որի միայն աղոտ արձագանքներն են պահպանվել Յորնագրերում: Հնիհանրապես նման կարգի ձեռագրեր, որոնք առավել կամ պակաս շափով պարունակում են գնասաթիկական տեխնիկա՝ սկսած այլեւայլ մոգական նյութերից, գուշակություններից, վերջացրած շատ խոր գաղտնագիտելիքի հետ կապվող երեսույթների փոխանցումով, մեծ տարածում են ստանում համարիստոննեական աղբյուրներում մոտավորապես այս դարաշրջանից: Մենք հակած ենք մտածելու, որ դրանք շատ ավելի հինավորց գիտելիքի արձագանքներն են կրում, որ գաղտնի հանապարհով փոխանցվել են սերնեն սերունդ և այդ պատճառով շեն գրառվել ավելի շուտ, քան թե չեն պահպանվել: Խնչվեն հայտնի է, գիտելիքի այն հատվածները, որոնք բափանցում էին խոր-գոյաբանական շերտեր, փոխանցվում էին բանավոր հանապարհով: Դրանք այլ ձեսով չեն էլ կարող փոխանցվել: Դրավոր տեխնոլոգիան կորչում է նրանց կենդանի փորձարկումը, տեսիլահնչողական այն դաշտը, որ կիրառվում էր հոգեւոր դպրոցներում: Այդ պատճառով գաղտնի գիտելիքները չեն կարող գրավոր փոխանցվել ոչ միայն իրենց գաղտնիության պատճառով, այլ առաջին հերթին անփոխանցելիության պատճառով: Նման դեպքում մեր կարծիքով գաղտնագիտելիքի գրառման ժամանակաշրջանն ավելի շուտ խոսում է ոչ թե գիտելիքի առաջացման, այլ նրա աստիճանական կորուսի մասին:

գրերի ստեղծման պատմությունը, որտեղ շեշտվում է նրա կողմից հատկապես յոթ ձայնավոր-ների ստեղծումը: Մեր կարծիքով, ենելով այս գիտելիքի ողջ կոնտեքստից, խոսքն այստեղ գաղտնապիտելիքի մասին է, որ ներդրված է հայոց այբուբենի հիմքում, եւ որին տիրապետում էին Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը: Արան հաջորդում է եւս մեկ լրիվ առանձին թվացող միավոր (գ.՝ «Զայնից» մեկնությունները:

Որոշ ձեռագրերում սրան անմիջապես հաջորդում է վերը նշված «Եօթնագրեանք» կոչվող հատվածը: Շատ ձեռագրեր պարունակում են միայն այս մի քանի էջ ընդգրկող մասը<sup>31</sup>: Ավելի ամբողջական գրչագրերում սրանից առաջ կա եւս մի հատված, որտեղ կան շատ կրկնություններ այս «Յոթնագրյանք» կոչվող հատվածի հետ<sup>32</sup>: Շատ ձեռագրեր սկսվում են հենց այս հատվածով, ընդգրկելով իրենց մեջ եւ Յոթնագրեանքը, գրանք հաճախ անմիջապես հաջորդում են Անանիա Շիրակացու հայտնի ինքնակենսագրությանը՝ վերագրվելով նրան<sup>33</sup>: Այս ծածկագրված տեքստերում անհասկանալի հաշվումներով ու հոգեւոր ընթացքներով ուղեկցվող, խոսվում է ճանաչողության յոթ փուլերի մասին, որով անցնելով հոգին հասնում է իմացության գոներին, բացելով դրանք եւ մտնելով այնտեղ, ուր «ի հայր Աստուած խաւահմ եւ հարցանեմ զամենայն զոր ինչ կամիմ»<sup>34</sup> յոթ ձայնավորներով, որոնք ամենայն գոյության սկիզբ են:

Այստեղ խոսվում է գիտելիքի մասին, որ Քրիստոսը ներդրել է մարդու մեջ: Այնուհետեւ տրվում է ինը փուլերի հայելանման անդրադարձումը, որ բացատրում է նախնական լուսի եւ նրա ներքընթացի առեղծվածային վայրէջը հիերարխիաներով: Բերվում են խորհրդավոր հաշվարկներ տարբեր անունների միավորման, գործարման, գործողություններ, օրինակ՝ «... եւ զի ձայնաւոր գիր ի հետ եւ կուլ տուր...»<sup>35</sup>, որոնք հիշեցնում են ներքին ալքիմիական պրոցեսներ, որ իրագործվում էին ձայնավորների միջոցով: Այդ հաշվումների արդյունքում հրեշտակները խաւին ընդ քեզ առանց հեքոյ (վանկի) զանձառելի բանս որոյ չես լսել խաւիս դու ի վրա գ գրի խաւիս դու ԼԶՓ. ճառս»<sup>36</sup>: Տրվում է գրերի բաժանումը ըստ տարերքների,

<sup>31</sup> Տե՛ս օրինակ՝ ՄՄ, ձեռագրեր ՆոՆ 699, 701, 7046 եւ այլն:

<sup>32</sup> Հանախ թվում է, որ Յոթնագրերը միայն հինավորց շատ խոր գիտելիքի դրոշմ կրող ցրված ու ցախուցրիվ շարադրանի են: Այնուամենայնիվ դրանց հաջորդման մեջ կարելի է գտնել որոշակի տրամաբանություն, կամ ավելի եիշտ, երբեմնի տրամաբանված ու համակարգված գիտելիքի հետեւ: Նրա որոշ հատվածներ շարադրվում են մի բանի անզամ: Երբեմն դրանք մտածված շարադրման սկզբում են նյութի անդրանումը մի բանի պատճեններից, ավելի խոր շերտեր բահանցելով ամեն անզամ: Երբեմն պարզապես նոյն երեսույթի շարադրումը ես մեկ անզամ այլ հատվածում, այլ հավելումներով, որոնք կարելի է վրադրել, կցել իրար, եւ մեկը մյուսով բացատրել:

<sup>33</sup> ՄՄ, ձեռ. № 511:

<sup>34</sup> ՄՄ, ձեռ. № 6962, էջ 54բ:

<sup>35</sup> Նոյն աելում, էջ 55 բ:

<sup>36</sup> Նոյն աելում, էջ 55: Այս ամենայն գրի վրա կառուցվող խորհրդավոր 12.000 կամ երեք գրի վրա 36.000 առանց վանկի ծավալող հառերի մասին հանդիպում է մի բանի տեղ, տարբեր վերաշարադրումներում: Տե՛ս նաև՝ էջ 65բ. «Տու՛ր զգիրն զիրում եւ բաժանեայ ի

ձայնավորների օգտագործումը ներքին օծումներում, որոնցով ընթանում է մարդու՝ ամեն հնչունով հարցնելով Հորը, Որդուն կամ Սուրբ Հոգուն՝ կապված շաբաթվա օրվա հետ: Բերվում են յոթ ձայնավորները եւ նրանց կապը արարշության տարբեր գոտիների այդ թվում եւ մարդու կազմության հետ եւ այն: Երանք առավելապես խորհրդավոր հաշվումներ են եւ միստիկ հոգեվերառաքման ուղիների նկարագրություն, որի արդյունքում մարդու հետ խոսում են երկնային արարածները, Աստված եւ մարդն ինքը՝ «աղբյուրանալով»: Հաշվումներն ուղեկցվում են հոգեւոր ընթացքի նկարագրություններով, ինչը ենթադրել է տալիս, որ գրանք ներքին ծեսի նկարագրություններ են, որոնց խորին իմաստները միգուցե արդեն գրառման ժամանակ իսկ կորսվում էին:

«Եօթնագրեանք»<sup>37</sup> կոչվող հատվածում կան նույնություններ եւ կրկնություններ: Այս-աեղ եւս առկա են հաշվումներ, որոնք համենայն գեսա, բարձր նպատակներ էին հետապնդում: Այդպես՝ առաջին հաշվումի արդյունքում մարդն իմաստում էր Աստծո Որդու անունները, երկրորդի արդյունքում՝ պատվիրանների ճշմարիտ խորհուրդը, կրկին խոսվում է խորհրդավոր յոթ փուլերի, 12.000 ճառի մասին, որ առանց վանկի կարելի է խոսել ամենայն գրի վրա, տառերի բաժանման՝ ըստ տարերքների, հաշվումներ, որոնց արդյունքում «որ գիրը մնա, այն էլ կիսուի»: Այսեղ խոսվում է արարշական երեք գրերի մասին, որ Աստծու հավերժ օրրանից են դուրս գալիս եւ, իշնելով շերտերով, տարբեր կերպեր ստանում: Այս արվեստն է, ինչպես նշվում է, որի մասին ասում էր Անանիա Շիրակացին. «Գանձ ծածկեալ էր յերկիրս հայոց եւ ակն թագուցեալ ի տոնն Թորքոմայ, զի մայր է ամենայն իմաստութեան: Այս է եւ թիզց աղբիւր ամենայն արհեստից, հանդերձ ամենայն բաժանմամբ եւ գրէ թէ տեսին ամենայն ճարտարքն յունաց մերում նահանգիս եւ զարմացան: Եթէ ոք իմանա զսա, նա գիտէ, թէ ինչ իմաստը են ի սմա ծածկեալ եւ թէ չէ ոք մտեալ ի սա, չի կարէ իմանալ կամ գրով բովանդակն լուլ, թէ զինչ առնէ, զի ամենայն մի գիր ժիթ. ճառս խաւսի»<sup>38</sup>:

Ավարտվում է այս հատվածը դարձյալ միստիկ ընթացքի նկարագրումով, որն անցնում է մարդը տառերով՝ կապված շաբաթվա ամեն օրվա հետ, եւ բերվում է բոլորակ՝ յոթ ձայնավորներով՝ կազմված, որտեղ «որ մտանէ լուսավորի եւ որ մտաւորե եւ իմաստուն՝ կարդայ զսայ»: Տառերով վերապրվող այս ընթացքները շատ ներքին ոլորտների են վերաբերում. «զի մի գիրն մասու ի լուծ յայթէն, մինչեւ ի քէ՛ լզ (գիրն), իւր բնութիւն շրջեցուցանէ եւ բանա զդրունս լզ. էակացն»<sup>39</sup>:

Որոշ ձեռագրերում կա եւ «Գիրք մանուշակի» կոչվող հատվածը, որ վերագրվում է եւ վերը շարադրված ամբողջ գիտելիքին: Դրան՝ այստեղ նկարագրվող ամբողջ նյութին, նման

շուր մասունս առանց հելոյ գիրն խասի բանս աննաս, որ պայծառացուցանեն զմիտս լսողաց ...եւ ամենայն գիր խասի ԲՇՌ. նառս...»:

<sup>37</sup> Նոյն տեղում, էջ 63թ-69ա:

<sup>38</sup> Նոյն տեղում, էջ 68ա:

<sup>39</sup> Նոյն տեղում, էջ 68թ:

ձեռագրերում տրվում է եւ «Վեցհազարյակ»<sup>40</sup> ընդհանուր անվանումը: Այս հատվածը շատ մոտ է «Խմաստութիւն քերթողական տառից»-ին: Այստեղ եւս մեկ առ մեկ շարադրվում են տառերի խորհուրդները, նրանց արտահայտումը երկրաչափական պատկերներով, օրինակ՝ դ-ք քառակուսի, զ-6 Սողոմոնի աստղը եւ այլն: Առաջին անգամ խոսվում է յոթ խորանների մասին, որոնք բացում են յոթ ձայնավորները: Այսպիսով յոթնագրերի ընդհանուր բովանդակությունը կարելի է ներկայացնել որպես գաղտնագիտելիք տառերի խորհուրդների, դրանց ներքին իմաստների, արարչական վիրացիաների, տառերի (թվերի) միջոցով իրագործվող, ժամանակների խորհուրդը բացահայտող այլեւայլ հաշվումների, ձայնավորների միջոցով հոգեւոր ներքին ընթացքների, օրերի ներքին կարգավորման, հոգեւոր գոների բացման, որոնցից հետո մարդը խոսում է անհայտ լեզվով, դրանց կապի հետ հոգեւոր, ժամանակային, տարածաշափական եւ ընդհանրապես մտածվող ու պատկերացվող ամենայն ինչի հետ: Այբուբենի ձեւը, տառերի գասավորությունն ու քանակը, ողջ այդ սիմետրիկ կառուցը բացելով, մարդը վերագտնում է իր խաղաղ երկխոսության տարածքներն իր Աստծո հետ այն աշխարհում, որտեղ ամեն ինչ միտք է եւ հնչում: Այբուբենի, հնչունների մեջ թաղված են մարդու և Աստծո միջեւ ընկած ընկալումների, անվանումների, ճանապարհների, գաղտնի գոների բոլոր բանալիները:

Յոթնագրերն իրենց մեջ ներառում են տարբեր շերտեր՝ ավելի արտաքին գիտելիքի եւ ներքին գոների, որոնցում տեղադրված գիտելիքը շարադրվում է ցրված, մի քանի անգամ: Լեզուն եւ գիրը կենդանի մի նյութ է, որն անդրադանում է գոյության բոլոր տարածական եւ ժամանակային շափումները, այն ներդրված է մարդու մեջ՝ որպես հնեցում, որի ճիշտ արտաքրումով նա հասնում է իմաստների սրբազն սկիզբերին:

**Պատկերացնելու համար Յոթնագրերի բնույթը, պետք է անդրադառնամք լեզվի՝ միջնադարյան ընկալմանը եւ երաժշտության հետ նրա կապին:** Լեզվի առաջացման ակունքները թաղվում են հեռավոր ժամանակների մեջ, երբ մարդն արծարծում էր իրեն շրջապատող աշխարհը ճշմարիտ հնչուններով, ճշմարիտ լուսի մեջ, որ նա կորցրեց:

«Խսկ ի յանցանելն զպատուիրանաւն կորոյս ընդ անմահութեանն եւ զբանին շնորհն, նոյնալէս եւ զայլ գործարանացն կատարեալ զաւրութիւնն»<sup>41</sup>:

**Այդպիսի ճիշտ գոյությունների ճշմարիտ հնչումներով էր օծված նախնական արարչությունը.**

«Ճմտաւ ածեալ յիշեին զվայրն վայելութեան եւ զդրախտն փափկութեան, զգեղեցկութիւն ծառոցն, եւ զուարճութիւն տնկոցն, զպայծառութիւն վարդիցն, եւ զանուշահութութիւն ծաղկանցն, զանթառամութիւն տերեւացն, եւ զքաղցր ճաշակումն պտղոցն, զբարի հնչմունս հրեղինացն, եւ զքաղցրանուագ

<sup>40</sup> Կան Վեցհազարյակ կոչվող այլ տեխներ, որոնք չեն համապատասխանում վերը նկարվող նյութին:

<sup>41</sup> Եսայի Նշեցի, Վերլուծութիւն Բերականութեան, Երեւան, 1966, էջ 55:

երգս հրեշտակացն, զախորժ բարբառ երկնաւորացն, եւ զհեշտալի եղանակս անմարմին զաւրացն։ Զայս ամենայն կորուսեալ Աղամայ...»<sup>42</sup>:

Այստեղ խոսվում է մի այլ լեզվի, մարդու եւ Աստծո միջեւ ընկած մի շնչող դաշտի՝ լեզու-երաժշտության մասին։ Ահա այս նախալեզու ներդաշնակ երաժշտական հնչման պայծառ ու բաց խորհուրդների ու իմաստների արտահայտման կորուստը բերում է եւ նախնական հնչման կորստին։ Եթե ճշմարտությունը մեկն էր, ապա այն կատարյալ արտահայտման՝ հնչեցման միայն մեկ ձեւ կարող էր ունենալ։ Եվ ամենածանրը միշնագարյան գիտակցության համար Բարելոնի աշտարակաշինության ժամանակ լեզուների բաժանման այլաբանական պատմությունն էր, որտեղ նախնական արմատները, ներքին գաղտնի իմաստներ պարունակող բառերն ու հնչովիները ցրիվ են գալիս լեզուների մեջ եւ կորսվում ժամանակի ընթացքում, մինչեւ աստվածաշունչ վանկարկումների վերջնական մթագնումն ու անհետացումը։ Բայց այնուամենայնիվ բոլոր լեզուներն իրենց գաղտնի շերտերում կրում են աստվածային գիտելիքի, աստվածային հնչունների կնիքը, ինչպես օրինակ ձայնավորները, որոնք բոլոր լեզուներում յոթն են եւ արտահայտում են յոթ գաղտնի խորհուրդները։ Յոթնագրերում միշտ նշվում է «Այս է գիր արարածոց երկնի եւ երկրի»<sup>43</sup>։ Այսինքն՝ մարդն է կորցնում լեզվի ճիշտ արտաքերման, նրա ավելի խոր շերտերի բանալիները։ Հնչունների մեջ թաղված են մարդու եւ Աստծո միջեւ ընկած ընկալումների, երկխոսությունների, անվանումների, ճանապարհների, գաղտնի դռների բոլոր բանալիները։

Լեզվի եւ երաժշտության նախնական կապի եւ դրանց՝ միմյանցից առաջացման հետ կապված խոր գիտելիքի արձագանքներ հանդիպում ենք քերականների մոտ։

«...վեցերորդ՝ թե յորո՞յ մակացութեանց ունի զիր սկիզբն քերականութիւնս. այսինքն յերաժշտականէն ունի զիր սկիզբն, զի գերկարն եւ զսուզն, զթաւն եւ զսուկն ի նոցանէ ունի. յերկար, որպես՝ էն եւ աւն, որով վարի երաժիշտն եւ սուլ՝ որպես ձայնաւորքն»<sup>44</sup>։ Հատկապես քերականներում շեշտվում է ութ ձայնավորների կապը երաժշտության ձայների հետ<sup>45</sup>։

<sup>42</sup> «Պատմորին ապաշխարութեան Աղամայ եւ Եւայի նախաստեղծի, թե ո՞րպես արարին» (Անկանոն զիրք Հին Կտակարանի)։ Տե՛ս Ա. Մարտյան, Առաքել Սյունեցու «Աղամզիրք» եւ անվալերականները, էջ 202. – «Բանքեր Երեւանի Համալսարանի», Երեւան 1970, № 3 (12):

<sup>43</sup> Զեռագիր № 6962, էջ 4ա:

<sup>44</sup> Առաքել Սիմեոնի, Յաղագս Եւրականութեան համառոտ լուծմունք, Լոս Անջելես, 1982, էջ 72:

<sup>45</sup> Տե՛ս օրինակ՝ Եսայի Նշեցի, Վերլուծութիւն Քերականութեան, էջ 83, Առաքել Սյունեցի, Յաղագս Եւրականութեան համառոտ լուծմունք, էջ 102:

Բայց դրանից, ինչպես նշվում է, երաժշտությունից են սովորել հնչունների բախունն ու թնդյունը, թե որ տառերն են ասվում լեզվի ծայրով, որոնք միջով եւ որոնք՝ շրթունքների հպումով: Որովհետեւ երաժիշտները ձայները ստեղծել են նրանցից, որ շրթունքների բախունից եւ հպումից են ծնվում, ստեղիներ եւ կողմեր նրանցից, որ լեզվի ծայրով են արտաքերվում<sup>46</sup>: Մեզ համար անհասկանալի արտաքերման գիտելիք է թաքնված ձայների զուգորդման մեջ շրթունքների բախումի, հպումն հետ եւ ստեղիների կապի մեջ լեզվի ծայրով արտաքերվող հնչունների հետ:

Այսպիսով երաժշտությունն ընկալվում էր որպես աստվածային օրինաշափություններով կառուցված հնչող մի դաշտ, որն ընկած էր բոլոր լեզուների եւ ընդհանրապես բոլոր արարածների արտաքերման հիմքում: Այն կարգավորում էր դրանք, եւ նախալեզվի մեջ երաժշտությունն ու լեզուն սերտաճած են իրար, եւ կատարելապես արտահայտում են իրերի էությունը եւ հնչեցնում այն: Որքան ավելի է նյութեղենանում, կարծրանում մարդն իր կազմությամբ եւ նրան շրջապատող աշխարհը, այնքան ավելի է թանձրանում, նյութեղենանում լեզուն, որ նա հնչեցնում է:

### 1. Ընդհանուր հնչունաբանություն Լեզուն որպես նյութի թանձրացում

Միջնադարյան հոգեւոր փորձի, գիտելիքի մեջ ձայնավորները կիրառվում էին տարբեր շերտերում սկսած հնչունաբանությունից եւ մարդու կազմության հետ նրա կապից մինչեւ խոր գոյաբանական ոլորտների հիմքում ընկած նախնական արարշական տատանումներ: Հստ դրա էլ նրանք մեկնաբանվում էին: Այսպես, մի տեղ ձայնավորներից մեկը այլ բաղաձայնների հետ միասին կարող է մտնել ինչ-որ ստորաբաժանման մեջ, մի ուրիշ տեղ համարվել արարշական եւ ընդհանրապես մնացյալ հնչունների առաջացման սկիզբ: Այստեղ կարեւոր է տարրորշել այն գոյաբանական դաշտը, որում խոսվում է տվյալ ձայնավորի մասին:

Որքան աշխարհներն են բազմազան, այնքան բազմազան, ավելի ու ավելի նրբացող հնչեցումներ ունեն այդ աշխարհները: Հստ այդմ միեւնույն հնչունը կարող է արտաքերվել, արթնացվել տարբեր գոյաբանական շերտերում տարբեր նշանակություն կրելով:

Ավելի նյութեղենացված ոլորտում ձայնավորները կապվում են մարդու մարմնի կազմության հետ: Դրանք մտնում են մարդու կողմից արտաքերվող մյուս հնչունների մեջ եւ հարաբերվում են դրանց հետ, ինչպես հոգին մարմնի հետ, կամ, ավելի միաժամկետ թանձր նյութի հնչողությունների աշխարհը, զգա-

<sup>46</sup> Տե՛ս օրինակ՝ Եսայի Նշեցի, վերը նշված աշխատությունը, էջ 89, կամ՝ Յովհաննես Երգնկացի, Հավաքումն մեկնութեան Եւրականի, Լոս Անգելես, 1983, էջ 173:

յարանները՝ մարմնի մյուս անդամների հետ:

Այսպիսի զուգահեռներ են բերվում քերականներում: Ամենապարզ ստորաբաժանումով ձայնավորները, ինչպես նշվեց, հոգին էին, իսկ բաղաձայնները՝ մարմինը, կամ ձայնավորները՝ միտքը, կիսաձայնները՝ զգայությունները, անձայնները՝ մարմինը եւ իր անդամները: Մեկ այլ ստորաբաժանում սկսում է համեմատությունը ավելի ցածր հատվածից՝ զգայություններից, փոխարենը ընդգրկելով մարդու կազմության բոլոր շերտերը: Հստ այդ բաժանման ձայնավորները զգայություններն են, թավ բաղաձայնները՝ ոսկորները, լերկերը՝ փափուկ մարմինները եւ մկանները, ինչպես նաև նյարդերը, միջակները՝ երակները եւ ջիլերը, իսկ ողջ գրականությունը, բովանդակ մարդուն է ընդգրկում<sup>47</sup>: Այսպիսով, անկախ իրենից, խոսելով մարդը շոշափում է ինքն իր մարմինը՝ նյութական դաշտի տարբեր խտացումները:

Արեւելցու մոտ նշվում է, որ յոթ ձայնավորները համապատասխանում էին յոթ զգայարաններին (հինգ զգայարանին նաև ավելացնում է հոգին եւ մարմինը, այսինքն՝ մարդն իր կառուցվածքի ամբողջությամբ) <sup>48</sup>: Քերականներում ընդհանրապես, ըստ հունական ավանդության, որպես աստվածային ու նախնական հնցուններ առավել շեշտվում են, է-ն եւ օ-ն: «Է-ն է աւրինակ, որ միշտ է Աստուած, եւ աւ-ն՝ գործոյն Աստուծոյ ի զարմացումն եւ ի տեսութիւն»<sup>49</sup>: Ավելի ուշ շրջանում բերվում էր արդեն ութ ձայնավորների ուսմունքը, ըստ գոյություն ունեցող ութ ձայնավորների: Սա բխում էր առաջին հերթին մտածողության փոփոխությունից: Քերականներում նշվում է, որ ոչ միայն մարդկանց, այլև բոլոր բանական արարածների մոտ ութ են ձայնավորները: Քանզի ութով է կարգավորվում ամեն ինչ, եւ ոչինչ երաժշտական արվեստի մեջ չի կարող դուրս գալ ութի ոլորտից եւ «որ արտաքոյ ութերեկիս անցանէ՝ զբոլորն ապականէ»<sup>50</sup>:

<sup>47</sup> Յովհաննես Երգնկացի, Հավաքումն մեկնութեան Քերականի, Լու Անշելես, 1983, էջ 100:

<sup>48</sup> Վարդան Արեւելցի, Մեկնութիւն Քերականի, Երեւան, 1972, էջ 85:

<sup>49</sup> Նոյն աեղում, էջ 86:

<sup>50</sup> Յովհաննես Երգնկացի, նշվ. աշխ., էջ 164: Յոր եւ ուր թվերը ունեն գոյարանական խոր ակունքներ: Տոքնագրերում ամեն ինչ կառուցված է յորի սկզբունքով, կապվելով արարշուրյան օրերի եւ նրան համապատասխանող մարդու հոգեւոր յոր փուլերի հետ: Եվ երաժշտության հնչյունները յորն են, որոնք, գետ անտիկ գիտելիքից եկող ավանդույթով առակում էին յոր մոլորակները, յոր ճայնավորները կապվում էին եւ շաբարվա յոր օրերի, հրեշտակապետերի հետ: Ութերորդ օրը ավելի միստիկ բնոյցք է կրում, որպես ութերորդ հազարամյակի, որի կայացումն ընկած է ժամանակների իրագործումներից անդին: Միաժամանակ այն արարշական առաջին օրվա լիակատար ունակության իրագործումն է նրա արդարացումը: Այդպես ութերորդ հնչյունը կրկնում է միենույն՝ առաջին հնչյունը այլ որակում՝ օկտավա վեր: Յոր եւ ուր համակարգի զուգորդումները կապվում են այս երկու ընկալումների հետ: Յոքնագրերում այս երկու թվերի խորհուրդը բացահայտվում է եւ Քերա-

Յոթնագրերում բերվում է թավ, լերկ, արական ու իգական հնցունների բոլորովին այլ բաժանում: Այստեղի հնցունների բաժանման եւ անվանման սկզբունքը ընդհանրապես չի համապատասխանում քերականների հնցունաբանովիանը: Դրանք բաժանվում են առաջական (ա, բ, գ, դ, թ), ներհական (ե, ի, ը), պայծառաբան (լ, ծ, խ), կակլաբան (ւ, որ որոշ ձեռագրերում բացակայում է, հ, կ), հորդորախոս (ձ, ղ, ճ), հոգնախորհուրդ, (յ, ն, շ, ռ) վայելաբան (պ, ս, վ), չար եւ ընդդիմաբան (շ, փ, ց), ոլորական (ռ, ր, ւ) հավասարական (զ, տ, ք) խմբերի<sup>51</sup>: «...էն գիրս, որ մտավ կրթին, եւ են որ լեզուաւ շարժին»<sup>52</sup>: Այստեղ բաժանումը, ըստ երեւովթին, ավելի շուտ վերաբերում է տառերի ներքին էությանը եւ ոչ նրանց արտաքին հնչողությանը: Քերականներում շեշտվում է նրանց բնուկթը՝ ելնելով արտաբերման ձեւից, այսինքն՝ այստեղ այն կապվում է մարդու մարմնի եւ արտաբերման տեսակների գաղտնիքի հետ: Յոթնագրերում հավանաբար դիտարկվում է հնցունի ազգեցությունը մարդու վրա հակառակ կողմից, երբ այն արգեն որպես հնցուն անդրագառնում է իր հոգու վրա, այսինքն՝ առավել շեշտվում է օդի մեջ նրա տարածվող տատանման բնությունը: Դրա շնորհիվ օրինակ ա եւ զ հնցունները արտաբերման տեսակետից, կարող են հայտնվել միեւնույն շարժում: Հավանաբար ինչ-որ համակարգում դրանք նույն զորությունն ու ազգեցությունը ունեն մարդու հոգու վրա: Այս մոտեցումը հնցունին՝ որպես հենց հնչում, զուտ երաժշտական է: Մեկ այլ բաժանում՝ ըստ տարերքների, բերվում է մի փոքր ավելի ուշ. ինը հնցուն՝ ա-թ, հրային բնություն ունեն, ինը՝ ժ-դ, ջրի, ճ-շ՝ հողի (որոշ ձեռագրերում՝ հողմի), եւ ո-ք՝ հողմի (որոշ ձեռագրերում՝ հողի)<sup>53</sup>: Այդպես արտաբերելով հնցունները՝ մարդը կապում եւ հարաբերում է իր մեջ եւ շորս տարրերը, որոնցից կազմված է ինքը:

Հնցունները մարդու մարմնով են արտաբերվում եւ կրում են իրենց մեջ նրա տարբեր հատվածների տարբեր թանձրացումները: Օրինակ՝ ձայնավորներն ավելի նուրբ խտացում են, որ բխում են մարդու հոգուց, իսկ թավ բաղաձայնները ձեւավորվում են նրա ամենակարծր շերտերում, նրանք համընկնում են նրա կմախքին: Այսպես մարդուց արտաբերվող հնցունները մի կողմից՝ կապվում էին իր ներքին կազմության հետ, մյուս կողմից գտնում իրենց համարժեքը արտաքին նյութի աշխարհում: Եվ խոսելով, բարբառելով, անկախ իր

կանական զուգահեռ անցկացնելով: Բոլոր ժամանակները, ինչպես նշվում է յոթնագրերում, «էին պարագային և ըլին տարրանան ընդ բնափին գոյս, ընդ հանուր եղեալս, ընդ ամենայն վայրս, ընդ ընթացս, ընդ շափիս: Վասն զի ասէ սահմանն որշափութեան է դարուցն կշռորդելով յառաջին միակէն մինչեւ ի կատարումն ունակութեան ութեկին»:

<sup>51</sup> Տե՛ս օրինակ՝ ՄՄ, ձեռ. № 6962, 40ա, № 1903, էջ 273, № 599, էջ 33ա, այս ստորաբաժանումները երբեմն խառնված են, մենք բերում ենք այստեղ ընդհանուր համեմատական բաժանումը:

<sup>52</sup> ՄՄ, ձեռ. № 6962, էջ 40բ:

<sup>53</sup> Այս բաժանումը եւս խառնված է որոշ ձեռագրերում, հիմնականում փոփոխվում են հողի և օդի՝ հողմի տեղերը, ՄՄ, ձեռ. № 6962 հուր տարերքին հաջորդում է օդը (էջ 66ա): Մենք բերում ենք ամենահաճախ հանդիպող ստորաբաժանումը: Տե՛ս օրինակ՝ ՄՄ, ձեռ. № 7046, էջ 276ա:

արտահայտած իմաստների, մարդն ընդգրկում էր իր մարմինն ամբողջությամբ եւ դրան արձագանքող արտաքին աշխարհի շերտերը:

«Բայց է տեսակ թաւութեանն յանզգայից՝ երկիր, եւ յըզգայականաց՝ անբան կենդանին անմիասահմանապես: Եւ լերկին բաժանողութիւն յանկենդանեաց անախտածին նիւթն, եւ ի շնչառաց՝ ախտախոնաւածինն այնմ զլուդակսն եւ որ ի մէջ սոցին համեմատին»<sup>54</sup>:

Յոթնագրերում մարդու մարմնի ավելի նյութական շերտերը կապվում են երկրագնդի տարբեր գոյացումների հետ, իսկ զգայարաններն ու ներքին օրգանները՝ հոգեւոր բարձր իրողությունների եւ տիեզերքի շերտերի հետ. «...ոսկերօքն վիմաց, անդամօքն լերանց, երակօքն գետոց, արեամբն աղբերաց, ծանրութեամբն սողնոց, յորովայնիցն անասնոց, խստութեամբն գազանաց, ցանկութեամբն թոշնոցն, հրովն գիտութեամբ լուսոյ, հոգովն հոգեղինաց, բանաւորութեամբն հրեշտակաց, մտօքն յԱստուծոյ, գլխովն յերկնից, վարսովն սերովքից թեւասգողութեան, աշքն Յոհանու եւ Քրիստոսի, ձախունկն յեւայի, աջ ունկն Աստուածածնի, երեսք յերկնից, հոտոտելիքն խաշին, շրթունքն առաքելոցն, ատամունքն մարգարէից, ծարկելիքն վարդապետաց, լեզուն գաբրիելան փողոյն, Բ. աղօրիքն երկրի բարզլնեացն, հին օրինացն կակուղութիւն փողիցն վարդապետութեան Քրիստոսի, ուսքն ուսուցն տեառն թեւքն խաշին, մեջքն երուսաղեմի, պորտն Սիոնի, ձախունկն Աղամա, գնալով ի ծառն, աջն Գալստեան Քրիստոսի ուղղելով զմեզ ի կեանս Բ. բացանցկութիւնք խափանեալ կենացն որ կերակրեացն եւ ըմպելեացն խափանումն լինի. սիրտն հանդերձեալ հարութեան, լեարթն արդարութեան, փայծաղն ճշմարտութեան, թոքն շարութեան բանսարկուին, երիկամունքն հաւատոյ, լեղին դժոխոցն»<sup>55</sup>: Մարդու մարմինը հոգեւոր խորհուրդների, իրագործումների, ապագայի կայացումների խտացում է: Այնտեղ, որպես վերջին հանգրվան հատվում են գոյության մեծ շերտերը: Իր մարմնի տարբեր հատվածներով նա շփվում է այդ իրողությունների հետ: Նրա շատ հատվածներ պատկանում են անցյալին, կրելով իրենց մեջ նրա փորվածքները, եւ միարժամանակ ապագայի շատ իրագործումների սաղմերը գտնվում են այնտեղ, բայց դեռեւս ննջող վիճակում: Մարմնի մեջ դրված են գոյությունների բոլոր բանալիները: Մարմնի հիմնական օրգանները կապվում էին յոթ մոլորակների, հրեշտակապետերի, շաբաթվա օրերի եւ վերջապես ձայնավորների հետ: Դրանք անկասկած կիրավում էին հոգեւոր կենցաղավարության մեջ:

<sup>54</sup> Յովիաննես Երգնկացի, նշվ. աշխ., էջ 173:

<sup>55</sup> ՄՄ, ձեռ. № 6962, էջ 82ա:

| Ա         | Ե          | Է         | Ը          | Ի         | Ո        | Ւ                    |
|-----------|------------|-----------|------------|-----------|----------|----------------------|
| կիրակի    | երկուշաբթի | երեքշաբթի | չորեքշաբթի | հինգշաբթի | ուրբաթ   | շաբաթ                |
| երիկամներ | սիրտ       | լարդ      | լեղի       | փայծաղ    | թռք      | միտք                 |
| Միքայել   | Գաբրիել    | Արիել     | Զիդայել    | Բաֆայել   | Օթայել   | Բովեակուել           |
| Արեգակ    | Լուսին     | Հրատ      | Փալածու    | Լուսնթագ  | Լուսաբեր | Երեւակ <sup>56</sup> |

Երիկամները, ինչպես տեսնում ենք, արտահայտում են հավատի սկզբունքը մարդու մեջ եւ անմիջականորեն կապվում են արեւի հետ, սիրտը, որ իր մեջ կրում էր ապագայի հանգերձալ հարության սաղմերը՝ և հնցունի եւ լուսնի հետ: Կարգը, որ արդարության սկզբունքի խորհրդանիշն էր մարդու մեջ, կապվում էր է հնցունի եւ Հրատի հետ, լեղին՝ դժոխքի հետքը մարդու մեջ՝ ը-ի, փայծաղը՝ ճշմարտության կարգավորողը՝ ի-ի հետ, թռքը, որի միջոցով մարդու կյանքում արտահայտվում էր բանսարկուի զորությունը՝ ո-ի եւ Լուսաբերի հետ, ու-ն արտահայտում էր միտքը, մարդու վերառաքման գործիքը: Զայնավորների երգեցողության միջոցով մարդն ապահովում էր ոչ միայն հոգեւոր ճանաշումների իր ծեսերը, այլ նաև կիրառում էր հավանաբար կոնկրետ նպատակներով, մասնավորապես բժշկության մեջ:

Մարդու մարմինը, զգայարանները եւ նրանից արտաբերվող հնցունները բացվում են տարբեր շերտերում: Ավելի ցածր պլանում դրանք այն պատրանքային շերտն են, որ սարդուստայնի ցանցի պես պահում են մարդուն նյութական կարծրացած ոլորտում՝ ծածկելով նրա հայացքն Աստծուց: Ներքին գիտելիքներում դրանք բանալիներ էին, որոնցով բացվում էին ճանաշողության գուներ՝ սպասավորներ, որ փոխանցում էին գիտելիքի սաղմերը հոգուն:

Մարդու մարմինը գառնում էր գործիք հոգու համար: Մաքրագործելով ու արթնացնելով այն, ազատագրելով իր զգայարանները ավելի թանձր նյութի աշխարհի ընկալում-անդրադարձումից, հոգին հոսում էր ավելի բարձր հոգեւոր ընկալումների դաշտ՝ բոլոր զգայարաններով ճաշակելով միայն հոգեւոր իրողություններ: Այստեղ հոսուելիքը կարող էր դառնալ խաչի ճանաշողության աղբյուր, լառությունը՝ արթնացնել նախնական հիշողությունը Աղամի ունկնդրումի, որ շարժվեց դեպի ծառը, ինչպես նաև Քրիստոսի ձայնի մասին:

Այդպես թանձրացել էր, ըստ մարդու նյութեղացման, եւ լեզուն: Հոգին արտաբերում էր հնցուններ, որոնք կապվում են իրեն շրջապատող նյութերի ու խտությունների հետ: Բայց այն նույնպես ներքին դաշտում կրում էր աստվածային հնչումների ու իմաստների սաղմերը: Նախնական աստվածակերպ ձայնավորների ու եղանակների ճիշտ հնչեցումով նա ներթափանցում էր դրանց դաշտը:

<sup>56</sup> ՄՊ, ձեռ. № 6962, էջ 58ա:

## 2. Խեղուն որպես լոգոսի բխում

Այս ձեռագրերում նկարագրվում է լեզվի առաջացման մի խորհրդավոր ընթացք, որը մարդու մեջ բացելով, բացվում են եւ ճանաշողության դռները: Այն, ինչպես կտեսնենք անմիջականորեն կապվում է ձայնավորների նախնական վիրացիաների հետ:

Սա յոթ դռներից բաղկացած գոյաբանական մի ընթացք է, որ նկարագրում է հավանաբար կյանքի, իմաստության նախնական սրբազան ակունքների ու դրանց իրավորման աստիճանական վայրէջքը տիեզերքի սանդուղքներու:

«Այժ-ն թագաւոր է, բեն-ն առաքեալ, գիմ-ն խրատատու է (գանձարան է), դայն՝ դռնապան է, եշ-ն խրատատու է, զ վաճառական է, է տնտես, ը ընդունակ է: Ի միտս մեր (շարադրեսցուք): Թագավորն առաքէ, առաքեալն կատարէ, գանձարանն բերէ, դռնապանն բանա, խրատատուն ցուցանէ, վաճառականն գնէ, տնտեսն առնու, ի սպասու կան ամենեքեան, սոքաւք թագաւորին»<sup>57</sup>:

Ասածո սաղմը, փոխանցվելով ձեռքից ձեռք, իշնում է հիերարխիաներով, սահելով նրա շերտերով, հասնում վերջին հանգրվանին՝ հավատարիմ տնտեսի հոգուն: Մարդու մեջ այն համընկնում է ճանաշողության դռների բացմանը՝ լուսի հայտնությանը, որ ընթանում է հոգում յոթ փուլերով<sup>58</sup>:

Հետո բերվում է անմիջականորեն սրա հետ կապված մի այլ բացատրություն. «Է վանկ են, զ պառ էն, ե տառ էն, դ սեռ էն, գ առաջք էն, բ դրունք էն, ա բանալի է եւ տեր պառիցն»<sup>59</sup>: Այս հատվածում կա մի խորհրդավոր հաշվում, որի արգյունքում «առանց հեքոյ գիրն խոսի բանս անձառս, որ պայծառացուցանէն զմիտս լսողաց, վասն որոյ վստահի են եւ ամենայն գիր խաւսի ժԲՌ. (12.000) ճառս: Այս լծակից բաժանմանց բանի երգոց դուռն լուսոյ: Այս է հմտութիւն քէրականութեան: Բանալիք քէրականի եւ բոլորակս եւ է որ ասեն գիրք է-անց բաղկանա արուեստ այսպէս: (Է որ անվանեալ է ց-եակ...)»: Սրա արդյունքում արթնացվում է անձառ, այլ տարածքներում, առանց վանկի ծավալվող լեզուն:

<sup>57</sup> ՄՄ, ձեռ. № 6962, էջ 41:

<sup>58</sup> Մեկ այլ հատվածում (էջ 55ա) այս տեմսար բերվում է ինը փուլով՝ կապվելով հրեշտակների ինը դասերի հետ, որոնք բաների տերն են: «Ա՛ բազավոր է, բ՝ սպասաւոր է, զ՝ գանձարան է, դ՝ դեսպան է, ե՝ խրատատու է, զ՝ վաճառական է, է կողող է, ը՝ ծանոր առնէ, թ տնտես է»: Այստեղ առայլալի փոխարեն նշվում է սպասավորը, որ սակայն նոյն ֆունկցիան է կատարում: Դ-ն նշվում է որպես դեսպան, ի տարբերություն դռնապանի, բայց երեկ ի նկատի ունենանք, որ դռները որոշակի անցում են մի աշխարհից մյուսը, նոյն՝ աշխարհների միջև փոխանցող- բարգմանչի դերն է կատարում եւ դեսպանը:

<sup>59</sup> ՄՄ, ձեռ. № 6962, էջ 65ա:

Այստեղ ավելի պայծառ լուս է սփովում այս փուլերի վրա՝ նշելով, որ յոթ վանկերը Աստծո յոթ ձայներն են, վեց բառերը՝ աշխարհի վեց անկյունները, հինգ տառերը՝ հինգ գգայարանները, չորս սեռերը՝ չորս բնությունները, երեք առաջքները՝ իմացությունները, երկու դուռը՝ արեւը եւ լուսինը, մեկ բանալին՝ Քրիստոսի խոսքն է եւ բոլոր կենդանի արարածների լեզուն, եւ օդը, որով խոսվում են ձայնավորները: Ձայնավորներին տրվում է արարչական նշանակություն՝ դիտելով նրանց որպես նախնական հնչում-վիբրացիա եւ միեւնույն ժամանակ իմաստության աղբյուր, որոնք անանջատ են: Այստեղ կան աղերսներ հնագույն հերակլիտեայան ուսմունքի հետ, որտեղ համընդհանուր կյանքը օդն էր՝ շունչը, որ ընդհանուր էր բոլորի համար եւ որը շնչվում էր ու արտաշնչվում: «Այսպիսով, ներքաշելով իր մեջ շնչառության միջոցով այդ աստվածային լոգոսը, մենք, ըստ Հերակլիտեսի, դառնում ենք բանական» (Մեքստ Էմպիրիկ) <sup>60</sup>: Աստվածային արարման սաղմերը ընկած են մարդու խոսքի մեջ, արարչական ձայնավորների եւ կյանքին օդում սփոված: Այն կապում է բոլոր կենդանի արարածներին իրար (նրանք նույն օդն են շնչում եւ իրար փոխանցում) եւ նրանց էլ՝ համասիցուռ Քրիստոսի (Հերակլիտեսի մոտ՝ լոգոսի) հոգուն եւ խոսքին: Այստեղ լեզուն բացարձակ նույնանում է Բանի՝ լոգոսի հետ, եւ մյուս կողմից հավերժ տատանման՝ բարձրագույն երաժշտության հետ: Ողջ օդը ներծծված է դրանով: Հատկապես շեշտվում է ձայնավորների՝ համընդհանուր վիբրացիաների դերը: Այստեղ նկարագրվում է լեզվի, որպես տիեզերքի սրբազն ակունքներում ծնված տարերքի, առաջացումը, որն ավարտվում է Քրիստոսի խոսքով: Աստվածային իմաստության սաղմերը, որ խորագույն գիտելիքով կապվում էին յոթ ձայնավորների վիբրացիաների հետ, հոսում էին հրեշտակների հրեղեն դասերով, ավելի նյութավորվելով: Խոսքի, վիբրացիայի խտացումը, նյութեղենացումը զուգահեռ է ընթանում աշխարհների արարչությանը:

Առաջին ընթացքը՝ թագավորից տնտես, վայրէջք է, երկրորդը, մեկնումից հետո, նույնպես թվում է վայրէջք՝ արարման, Աստծո յոթ վիբրացիաներից խտացող գոյությունների, մինչեւ մարդկային կյանքի ոլորտը, որտեղ օդի մեջ սփոված են նախնական իմաստների ներշնչումներն ու արտաշնչումները: Բայց միաժամանակ մարդու համար այս երեւութը վերընթաց է. «Ես վանկի վանկիմ, զտափից ի տառ կցիմ, եւ ի սեռից ի սեռ հպիմ, եւ առաջի առաջ մերձիմ, եւ բ դրանց ի դրունք մտեմ. եւ բանալեաւք բանիւն Քրիստոսիւ ի Հայր Աստուած խաւսիմ, եւ հարցանեմ զամենայն զոր ինչ կամիմ»<sup>61</sup>: Այն, ինչ տիեզերքի

<sup>60</sup> Досократики, Минск, 1999, с. 277.

<sup>61</sup> ՄՊ, ձեռ. № 6962, էջ 54ա:

մեջ դրված է որպես վարընթաց, մարդու մեջ հակառակ ճանապարհով դառնում է վերընթացի բանալի: Այսպես՝ եթե Աստծո յոթ ձայները, արարչական յոթ ձայնավորները ընկած են գոյության հիմքում եւ նրա բարձրագույն ու նրբագույն դրսեւորումն են, որ իջնելով ավելի ու ավելի նյութեղենանում են, ապա մարդու մեջ որպես բանալի դրված այդ նույն ձայնավորները (այստեղ՝ վանկերը) սկիզբն են իր արարման, որտեղ նույն «ոտնահետքերով» սահելով նա վերառաքվում է: Այդպես նա վանկարկում է, տառերն իրար կցում, սեռը սեռին հպում, առաջից առաջ մերձենում, երկու դռնից (մարդու գիտակցության երկու արթնության եւ քնի վիճակները) մտնում Քրիստոսի բանալիով Հայր Աստծո մոտ եւ խոսում նրա հետ:

Հոգու ճանապարհը սկսվում է յոթ ձայնավորների արտաքերումով, որոնք ամեն ինչ ստեղծում են, եւ որոնց միջոցով ամեն ինչ կարելի է իմանալ: Դրանց եղանակավորման ու արտաքերման մի ամբողջ ուսմունք գոյություն ուներ Հայաստանում: Դրանցով առաջին հերթին բացվում են տիեզերքի յոթ շունչերը՝ մարդու մեջ նետված: Արարշությունից անդին ընկած եւ իր մեջ թաղված յոթ անդեմ հնչույթներն արթնացնելով, մարդը դրանք թանձրացնում էր բառերի, իմաստների մեջ, եւ միակցում բնություններին (տարերքներին, որոնք կային եւ արտահայտվում էին նաև տառերի մեջ): Բանը թափանցում էր անձեւ նյութի մեջ եւ երեք իմացությամբ անցնում էր երկու դոմերով իր ոգեղեն ակունքներին: Այսպես, ինչպես Աստծո խոսքն է արարում, իջնելով եւ իր տառանումների տարբերությամբ ավելի ու ավելի խտացող հիերարխիաներ գոյավորելով, այնպես մարդու խոսքն է արթնացնում բոլոր հիերարխիաները, արձագանքվում այնտեղ: Նա իր ճշմարիտ խոսքի մեջ օգտագործում է դրանց բոլորի գորությունները: Իմաստը, հնչեցումն ու գոյությունը (լրիվ նույնացումը նրա հետ, ինչ անվանում ես) այստեղ բացարձակ աղեկվատ են եւ համընկնում են, ըստ այդմ, հոգեւոր ընթացքին:

Ինչպես տեսնում ենք, սա բազմաշերտ մի ընթացքի նկարագրում է, որի ամենավերին հատվածները շոշափում են լեզվի արարման, որպես գաղտնի իմաստների ծննդի, խորհուրդը: Լուսի օրբանում ծնվում են այդ իմաստների սաղմերը եւ խտանալով գոյությունների մեջ՝ նետվում են մարդու հայացքի առաջ: Եվ նա անցնում է հակառակ ճանապարհ, բացելով իր մեջ նախնական հնչույթները, աղբյուրանում է անվանելով իրերի էությունն ու հնչողությունը: «Աննյութ», եթերային տարածքում արծարծվող խորհրդավոր լեզվի մասին է խոսվում նաև ամեն գրի 12.000, առանց վանկի ճառելու մասին բազմաթիվ վերը նշված հիշատակություններում:

Նման շերտավորումը, որը գիտելիքի կորստի հետ վերածվում էր իրթնաբանության, առհասարակ բնորոշ է միջնադարին: Այստեղ առկա են բա-

գում՝ հատվածներ լեզու-երաժշտության առաջացման խորհրդավոր ակնարկների: «Այս այս մեկն է առանձինն, հեքն (վանկ) բանս ծնանի, խաղն ելանէ ի տառս»<sup>62</sup>: Այն կրում է արտաքերման հնագույն խորհրդի արձագանքները, որտեղ լեզուն եւ երաժշտությունը անանջատ են:

**Այսպիսով հնչյունը մեկնվում էր՝**

1. որպես սիմվոլ, ճանաչողության աղբյուր-բանալի. այս ուսմունքը հատկապես կապվում էր նորավութագորականության հետ.
2. որպես հեղում, անվերջ արարում, որտեղ բարբառների հինքում ընկած են նախնական ճիշտ արմատները. սա կրում էր շատ հեռավոր արձագանքը անտիկ գիտելիքի, մասնավորապես Պլատոնի ուսմունքի հետ<sup>63</sup>.

3. հնչյունը որպես գոյաբանություն- վիբրացիա.

4. որպես արարշական վիբրացիա՝ մարդու կազմության եւ ավելի բարձր շերտերի հետ կապվող, դրանց գոյության հիմքում ընկած եւ ըստ այդմ դրանք վերափոխող:

Այս վերջին երկու շերտերը շատ հին՝ հատկապես արեւելյան գիտելիքների ակունքներ ունեն: Այս բոլոր շերտերը սերտաճած են իրար մեջ եւ իրարով են ճանաչում՝ ունենալով անվերջ աղերսներ եւ մեկը մյուսով բացատրվելով: Այդպես եւ ցանկացած նկարագրվող պրոցես, մաթեմատիկական հաշվարկ գուգա՞եռ ընթացող շատ խոր գոյություններում եւ ճանաչողությունների ինքնասուզումներում իրագործվող օծում է: «... տեսանես զլուսագոյն մարգարիտն, զոսկեգոյն արեգակն, զարծաթագոյն աստեղաց զճաճանճն եւ զակունս պատուականս եւ զգունագեղս, որ զտաճարին փակեալ ուներ անտեսողական արուեստին, յորում վանկն եւ շեշտն եւ տրոքն միաւորի, զի այս ուսմունս վարդապետութեան իմաստութեամբ է, զի որք ուսանին սա, ճոխացուցանէն զանձինս իւրեանց, առաւել քան զարեգակն լուսաւորին...»<sup>64</sup>:

### Զայնավորներ

Զայնավորների տեսությունը շարադրվում է հոգեւոր տարբեր խոտացման շերտերում: Այստեղ տրվում են նրանցից ծնվող բանալի եղանակները եւ գոյացյալ եղանակները, նրանց կապը մարդու ներքին կազմության եւ տիեզերքի գոտիների հետ, շատ ներքին շերտերում նրանցով իրագործվում են հոգեւոր ծեսեր եւ ճանաչումներ, ներքին ալքիմիական ընթացքներ: Այստեղ ձայնավորներն արդեն ընկալվում եւ հնչեցվում են որպես արարշական վիբրացիաներ, որոնց տատանումները մարդուն միակցում են բարձր գոյություններին: «Եւ

<sup>62</sup> ՄՄ, ձեռ. № 599, էջ35ա, 6962, էջ 42ա:

<sup>63</sup> Տե՛ս Պլատոն. “Կրատիլ”, սոչ. в трех томах, том 1, Москва, 1968.

<sup>64</sup> ՄՄ, ձեռ. № 6962, էջ 90բ:

Աստուծոյ է ձայնաւոր գիրս, զամենայն ստեղծանէ եւ տա Աստուած խաւսիլ ամենեցունց առ ի գիտունսն եւ իմանան զոր ինչ կամին...»<sup>65</sup>:

Բատ իրենց կիրառության ձայնավորները տարբեր ներգործություն էին թողնում: Մեր կողմից պայմանականորեն առանձնացված առաջին շերտում դրանք մարդուց արտաքերվող տատանումներ էին, որ կապվում էին նրա մարմնի ամենաոգեղեն հատվածների հետ: Դրանք ստեղծում էին խոսքը եւ երաժշտությունը:

Ավելի բարձր որակներում դրանք վերափոխում էին մարդու ներսը, համապատասխանեցնելով այն իրենց նուրբ նյութին, երգեցողության միջոցով առաջացնում էին գիտակցության որոշակի փոփոխություններ: Այստեղ մենք ընդհուպ մոտենում ենք այն ամենախոր շերտին, որտեղ նրանք արարշական վիբրացիաներ էին՝ ընկած բոլոր գոյությունների հիմքում:

\*\*\*

Յոթնագրերում առաջին խոշոր, ավարտուն հատվածի (ա.) վերջում, խոսվում է բուն յոթ գրերի մասին. «Խակ եւթնագրերդ այսոքիկ են զոր տեսանես. ա, է, ե, ը, ի, ո, ւ: Սոքա են աղխեալ եւ փակեալ տաճարք, որով զծաղիկս համապայծառ եւ զփական դպրութեան ճանաչէն: Սոքա են ծննդականք բանից առ ի պէտս յորդորմանց, որով տքնեալ եւ վաստակեալ ջանիւ զհետ սորա բազում աշխատութեամբ յանհնարինս հնարաւոր լիցի, եւ գծուարինքն՝ դիւրին, զոր աւրինակ որպես թշուն, որ զթանձր աւդն հատանէ եւ չէ ինչ, որ արգելու զնա, ո՛չ ի վերանալն եւ ո՛չ ի խոնարհելն՝<sup>66</sup>: Այսպէս եւ իրակերտութիւնս այսոքիկ ընդ նեղ եւ ընդ նուրբ գուռն գիտութեամբ անցնել: Այսր աղագաւ ո՛չ արգելին իմաստասէրքն զարուեստս զայս եւ այսպէս ասացին թէ որ գնա զհետ սորա հոգովն Աստուծոյ, ո՛չ զայթակդի ինչ, այլ զաւրանա յոյժ ավելի յամենայն դպրութիւն իմաստութեան»<sup>67</sup>:

Վերը նշված՝ լեզվի առաջացման խորհրդավոր ընթացքը նկարագրելուց հետո, բերվում են չորս ձայնավորները, որպես չորեքնյությա աշխարհի մեջ թափանցվող աստվածային սաղմեր՝ Ա, Է, Ի, Ո: Դրանք բացում էին չորս ներքին գուները: Սրանցից բիւել են նախնական եղանակները: Ենթադրվում է, որ սրանք որոշակի տատանում էին առաջացնում, որ միջնադարյան գիտակցության ասոցիատիվ համակարգում մոտ էին աշխարհի արարման վիբրացիային: Դրանք բոլոր եղանակների թագավոր են: Չորս ձայնավորներն ուղեկցվում են

<sup>65</sup> ՄՊ, ձեռ. № 6962, էջ 54р:

<sup>66</sup> Այստեղ խոսքը գոյության տարբեր՝ վերին եւ ստորին շերտերի մեջ հոգու ազատ նամփորդության մասին է:

<sup>67</sup> ՄՊ, ձեռ. № 599, էջ 34р:

խազային նշաններով, որոնք հիմնականում բոլոր ձեռագրերում համապատասխանում են:

Դրանք որոշակի բանալի-բանաձեւեր են, առավել անդեմ ու նախնական, որոնք ըստ միջնադարյան պատկերացման ընկած են մյուս բոլոր եղանակների հիմքում: Եվ քանի որ դրանք ավելի շատ են կապվում մարդու աշխարհի, նրա մեջ ներդրված տատանումների, դրանց փոխակերպումների հետ՝ չորսն են (ի տարբերություն երեք արարշական գրերի, որոնց մասին դեռ կխոսվի): Զորս թիվը, ի տարբերություն երրորդության երեքի, կապվում է մարդու աշխարհի հետ: Նյութական շերտում մարդն ընդգրկում է նրա բոլոր չորս տարերքները: Ինչպես հայտնի է, ձայները նույնպես կապվում էին չորս տարերքների հետ:


Սա տառի, Հնչողության խորքային արտաքերման, եղանակավորման դպրոց է: Բերում ենք, օրինակ՝ «ա»-ից հորդացող եղանակի զուտ հնչունային պատկերը, առանց խազերի. ա՛, հուն, հա՛, հուն, հա՛, հուն, հա՛, հու, ա: Ինչպես երեւում է այս օրինակից, խոսքն այստեղ տատանում-արտաքերման այնպիսի մի փորձի մասին է, որն ամենաքիշը կապ ունի ներկայիս կոնկրետ հնչունի արտաքերման հետ: Գոյաբանության ավելի խոր շերտերում այս ձայնավորներից արտահոսող լարվածքը պատկերացվում էր նման ազատ վանկարկումով (հուն հա՛, հուա...):

Ինքնակենտրոնացման մեջ դրանք երգելով, մարդն իրագործում էր որոշակի ներքին ճանաշումներ: Այստեղ կարեւորագույն պահը ոչ թե մեղեդու բանաձեւն էր, այլ նրա ճիշտ արտաքերումը, որ մի ամբողջ դպրոց էր երգեցողության եւ աղոթքի տեսության, մարդու վիրացիաների եւ ինքնակենտրոնացման ու փոխակերպման:

Դրանք աշքի շեն ընկնում հարուստ խազավորումով, ինչը խոսում է այս բանալի-եղանակների ընդհանուր բնույթ կրելու մասին: Ընդհանուր առմամբ շարադրման սկզբունքն էլ է պահպանվում: Այն ունի իր ներքին բանաձեւային, մարդաբանությունից բխող տրամաբանությունը: Շատ ձեռագրերում բերվում է միայն վանկարկումն առանց խազային նշանների<sup>68</sup> (ա՛, հուն հա՛, ա՛ հուն հա՛ հուն հա՛, եւ այն կամ ի յ յ յ յ վանկերի քանակը) ինչը եւս մեկ անգամ հավաստում է, որ դրանք որոշակի բանալի-հնչումներ էին հոգեւոր կենցաղավարության ներքին դաշտում, բանաձեւեր, որոնք բացվում էին մարդու մեջ հոգեւոր ճանապարհին զուգահեռ եւ որոնցից, ըստ միջնադարյան գաղտնի եւ այժմ մեզ համար անհասկանալի գիտելիքի, առաջացել էին ընդհանրապես բոլոր հնչումներն ու երաժշտական եղանակները:

<sup>68</sup>Տե՛ս ՄՄ, ձեռ. № 1267, էջ 340ա, № 6369, էջ 43բ:

Նշվում է՝ «այս է տառիս գիրն եւ եղանակն», դրանք իրարից անբաժանելի են: «Եղանակս եւ տրոպս եւ վանգս եւ ոլորակս ի սոցանէ կապին»<sup>69</sup>:



(Ձեռ. № 599, էջ 37ա)


Ա -ի երգեցողությունը բաղկացած է տասներեք «մասնիկից», Երաժշտական տեսակետից այն բաժանվում է երեք մասի, որոնց մեջ կա ընդհանուր շարադրման նույնություն՝ հուն վանկերի, ա-ի վրա, բացի դրանից կրկնվում են երեք վանկերը, ինչը գարձյալ խոսում է ավելի կենտրոնացած, ինքն իր առանցքի շուրջը պտտվող հնչույթի մասին: Հետաքրքիր է, որ ընդհանուր առմամիք, տարբեր ձայնավորների խազերն իրարից շատ չեն տարբերվում: Օրինակ՝ ա, է, ի ձայնավորների սկզբնաբանաձեւը՝ առաջին շրու վանկերը, նույնն են (վանկի եւ երկարի համագրում). այստեղ բերվում է ձայնավորը՝ «Երկարով» եղանակվելով, այնուհետեւ երեք անգամ այն կրկնվում է նույն դարձվածքը պտտելով: Սա ինչ-որ բանաձեւային մուտք էր ըստ երեւույթին: Ու ձայնավորը եւս կրկնվում է երեք անգամ, բայց քաշ խազով: Բացի դրանից ծավալման ընդհանուր կազմությունը չի փոխվում միշտամասում եւ վերջնաձեւերում: Օրինակ՝ «ու» եւ «ի» հնչունների երգեցողության խազային պատկերները գրեթե նույնն են՝ աննշան փոփոխություններով: Բոլոր ձայնավորների միշտամասերը հյուսվում են տրոպի տարբեր տեսակներով (քմատրոպ, առանձնատրոպ, ծանրատրոպ եւ այլն):

Հնդհանրապես այստեղ հիմնականում առկա են քաշ խազը, որ կապվում է «Ա» հնչունի հետ (տե՛ս խազերի տախտակներ), ծանրատրոպը, որ կապվում է «Ու» հնչունի հետ, եւ վանկը: Մրանք այն գրերն էին, որոնք ձայնավորների եւ եղանակների թագավոր էին, «որ զայլ գիրսն յինքեան քարշեն եւ կապեն զեղանակս ձայնիցն»<sup>70</sup>:

Այս նախնական կառուցներից բխում էին մնացյալ շորս՝ գոյացյալ եղանակները, որոնք երգվում են գլխով, լեզվով, քիմքով եւ խռչակով (մեծ շնչափող): Գլխի տարբեր հատվածներով երգվող երաժշտությունը կիրառվում էր տարբեր շերտերի, զգացողական փորձի արթնացման համար: Այս գիտելիքների վրա էր հիմնված զգայարանների, դրանց մաքրագործման ուսմունքը եւ կիրառումը հոգեւոր կենցաղավարության մեջ:

<sup>69</sup> ՄՄ, ձեռ. № 599, էջ 37բ:

<sup>70</sup> Նոյն տեղում՝ էջ 37ա:




(Գեռ. № 599, էջ 37թ)

Այս մյուս շորս եղանակների խազային պատկերն ավելի հարուստ է: Այս-  
տեղ գլխային երգեցողությունը սկսվում է «ա» ձայնավորով, հետո շարունակ-  
վում փակ բերանով «բ» հնչունի վրա, լեզվով երգեցողությունը կատարվում է  
«ա» հնչունով, քիմքով երգեցողությունը՝ բերանը փակ, առանց հնչունի, եւ  
վերջապես կոկորդային երգեցողությունը «է» կամ «է, ո» հնչուններով: Սա մի  
անհասկանալի կապ ունի այն ուսմունքի հետ, ըստ որի երաժշտական ձայներն  
առաջացել են այն հնչուններից, որ շրթունքների հպումից են ստեղծվում, իսկ  
ստեղիներն ու կողմերը՝ նրանցից, որ լեզվի ծայրով են արտաքերվում<sup>71</sup>: Սա  
եւս երաժշտության ու լեզվի նախնական կապի կորսված արձագանքներ են  
հավանաբար: Զայնավորների տեսությունն ու դրանց հետ կապված արտաքեր-  
ման դպրոցը կիրառում էր նրանց որպես վիերացիաներ եւ արարշական սկիզբ-  
երը բացող բանալիներ: Զայնավորներն ու օդը, որի մեջ դրանք արտաքերվում  
էին հնագույն գիտելիքներից եկող կյանքի ու կոգոսի արտահայտումն էին<sup>72</sup>:

Միջնադարյան խազերի անվանումների ցուցակում նշվում է, որ գլխա-  
վոր խազերը յոթն են, որոնք կապվում են յոթ ձայնավորների հետ: Դրանք մի  
քանի տարրից բաղկացած խազեր են՝ հավանաբար 3-4 հնչունից բաղկացած  
դարձվածքներ:

Ստորեւ բերում ենք խազերի եւ ձայնավորների համադրումը ըստ 605  
ձեռագրի (էջ 47թ):



<sup>71</sup> Տե՛ս Գրիգոր Մագիստրոսի Մելնուրին Քերականին. Յ. Ա. Ածոնց, Դիոնիսի Փրակիյան և արմանական տոլկության մասին (Երևան, 1915), ս. 234:

<sup>72</sup> Զայնավորները վերապրվում էին եւ գոյնի մեջ: Օրինակ՝ նշվում է այլ հատվածներում, որ այբ-ը կարմրաքել է եւ սեւակուց (այստեղ խոսքը հավանաբար վերաբերում է նրա արտաքին տեսքին): Կարմիրն ըստ նույն յոթնագրերի Քրիստոսի գոյնն էր, իսկ սեւը, որն այստեղ կտուցն է՝ Աստծո, որին ոչ ոք չի տեսել: Այսպես հավանաբար այս տառերը ոչ մի-  
այն հնչեցվում էին իրենց նախնական լարվածքի մեջ, այլ նաեւ զուգահեռ վերապրվում  
որպես գոյն:

Միջնադարյան ողջ հոգեւոր պրակտիկան կառուցվում էր ըստ ներքին մի վերապրման՝ աստվածային սաղմի, որ թաղված էր մարդու մեջ եւ կորսված նրա կողմից: Մարդու ձայնը եւ նրա ճիշտ՝ նախնական լարվածքի մեջ հնչեցումը, ազատագրված նյութի ծանրությունից, արթնացնում է Ոգու ձայնը՝ կարծր շերտերի մեջ խլացված: Զայնը վերապրվում էր եւ՝ որպես լոգոս, եւ՝ որպես հենց ձայն, հնչուն, ուղիղ իմաստով: Նրա ազատ հեղումը, ըստ քրիստոնեական պատկերացման, պետք է դաշեր նախնական դրախտային հնչումների ու տեսիլների պատկերները, որով ինքն առաջին անգամ անվանեց իրերը: Ճիշտ արտաքերումը, ճիշտ վիբրացիայի արթնացումն արձագանքում է իրարով ներթափանցված նուրբ նյութեղեն ցանցերում փոխելով նրանց ընթացքը, խոնարհեցնելով նրանց դեպի նախնական հնչումը:

«... եւ այսպէս ասես, թէ զամենայն ինչ արհամարհեմ զկենացս, եւ զշորեքնիւթեա զաւրութիւն հողոյս պատրաստել հերկեմ, բանականաս զտառս՝ որ կարծր է քան զքար, եւ քան զերկաթ, եւ զորում եւ զփուշն հանեմ եւ զտունկս աստուածային իմաստից ի նմա արկանեմ, եւ զցայգ եւ զցերեկն վաստակեմ, ապա ի հասանել այգոյն վայելեմ, հատանեմ զերեքունեան խնծորն, յորդորութեանց զմայրն ամենայն մրգոց, եւ ճաշակեալ լնում ամենայն իմաստութեամբ եւ հանձարով, քաղեմ զծաղիկս համապայծառ վարդից յաստուածային մատենիցն եւ ի հոտոյ աստուածային իմաստիցն թրմբրեալ հեռանամ յամենայն կենցաղական պատաւմանց ստորնայնոցս: Զի ծանր եւ դժուարին է ի Դ տաճարս մտանել, բանալ զախեալ եւ զկոպղայիցն փականս, զոր բացին իմաստասրքն այս խորհրդովս, զոր ասացաք»<sup>73</sup>:

Հոգեւոր գիտության մեջ հաճախ օգտագործվում է այգու սիմվոլը՝ որպես հոգու սենյակի խորհրդանիշ, եւ հողը մշակելը համարվում էր մարդկային արարչության սիմվոլը, որն ազատորեն փոխակերպում էր իրեն տրամադրված տարածքը՝ դարձնելով այն աստվածակերպ:

Այս տեքստը ցուց է տալիս նաեւ ձայնավորների երգեցողության հինավուրց պրակտիկայի կիրառումը, դրանց միջոցով մարդկային նյութի վրա ազդեցությունն ու փոխակերպումը: Նյութի մեջ ընկղմված մարմնի խորհրդանիշն է չորեքնյությա հողը՝ մարդու մարմինը, որ բաղկացած է չորս տարերքներից, այնուհետեւ նկարագրվում է, ինչպես մարդը բանական տառերով (խոսքն այստեղ առաջին հերթին ճիշտ արտաքերված, աստվածային ձայնավորների մասին է) հանում է այդ հողից որոմը եւ փուշը: Եվ ողջ օրն աշխատելուց ու աստվածային իմաստների տունկը այնտեղ նետելուց հետո, այգու հասնելուն պես քաղում է երեքգույնյա խնձորը, ճաշակում այն իմաստությամբ եւ հան-

<sup>73</sup> ՄՎ, ձեռ. № 599, էջ 36թ:

Ճարով: Խնձորը ծառի վրա խորհրդանշում էր Քրիստոսի գնդաձեւ երեւումը խաչի վրա, երեք գույնը՝ երրորդության խորհրդանիշը: Քրիստոնեական միստիկ փորձի մեջ ներքին փոխակերպումների վերջին՝ ամենախոր ու ներքին փուլը համարվում էր Քրիստոսի կենդանի մարմնի ճաշակումը: Երբ մարդու շորս նյութի շերտով կարգավորվող հոգու մեջ ներքին օծումով ծնվում էր Քրիստոսը: Այս տաճարի շորս գոները բացվում են շորս ձայնավորներով:

Եվ վերջապես բուն Յոթնագրեանք կոչվող հատվածում նորից անդրադառնում է յոթ ձայնավորներին, նշելով, որ նրանցով բոլոր ժամանակները կարող են իմանալ «Աղամա ի Մովսէս, ի Մովսեսա Դաւիթ, Դաւիթա ի Քրիստոս, Քրիստոսէ ի միւս անգամ գալուստն կարէ գիտել է գրովս»<sup>74</sup>: Այստեղ նրանց տրվում է ընդհանրապես ամենավերին՝ արարշական նշանակություն: Ըստ դրա աստվածային են երեք տառերը՝ ա, ե, է, որոնք դուրս են գալիս երրորդության լուսեղեն օրրանից եւ թափանցում են քառակերպ՝ ը,ի,ո,ւ, շերտով փոխանցվելով ավելի ցածր աշխարհներին: «Որ են /այբն/ Հայր, /եշն/ Որդի, /է/ Հոգի /սուրբ/, որ անձայն բառագոյն յաշխարհս տպավորեն, վասնզի ելանէ ի հայրական ձայնիցն գիտութիւն եւ իշանէր շնորհս աշխարհս թէ եւ գոշեն շորեքերպեանն. ը՛, ի՛, ո՛, ու՛ աթոռքն ի հայրական ձայնիցն նւազեալ գտանին...»<sup>75</sup>:

Այս տեքստը կարելի է հասկանալ որպես նախնական վիբրացիայի հեղում, որ իշնելով գոյաբանական շերտերով, աստիճանաբար թանձրանում է եւ այլ հնչողություններ ստանում: Ծնդ որում, ինչպես տեսնում ենք այս շերտում դրվում է տարբերակում երկու «ե» եւ «է» հնչունների միջեւ:

Այդպես նախնական հնչունները գոյաբանական շերտերի արձագանքների հայելանման անդրադարձումներում վերածվում են բազում ոիթմերի ու հնչողությունների<sup>76</sup>: Այս տեսակետից իհարկե խոսվում էր բոլորովին ուրիշ ձայնավորի մասին, որի վիբրացիան առավելագույնս մոտ է նրան, ինչ մարդու կողմից արտաքերվում է որպես «ա» հնչուն: Ծնդհանրապես նման գիտելիքը

<sup>74</sup> ՄՄ, ձեռ. № 6962, էջ 63բ:

<sup>75</sup> Նոյն տեղում՝ էջ 67ա:

<sup>4</sup> Ա. Ակինյան, Եղիշէ, բննական ուսումնասիրութիւն. – «Հանդէս Ամսօրեայ», 1905, ԺԹ. տարի, էջ 332:

<sup>5</sup> Բնագրագիտական բննությանը կանդրադառնանք շիրապարակված պատառիկների լոյս ընծայումից հետո:

<sup>6</sup> Հայր Յ. Վարենեան, Պատարագամատուցք Հայոց, «Քննական հրատարակութիւն մատենագրութեան և թարգմանութեան նախնեաց հայոց», հ. Ա., Վիեննա, 1897թ.: Լիոնի թիվ 17 ձեռագիր Պատարագամատուցի նկարագրությունը տե՛ս էջեր 82-84:

<sup>7</sup> Ցուցակը կազմելիս՝ Ֆրեդերիկ Մակերը բնկալ ձեռագիրը նկարագրել է, իսկ պահպանակները ոչ, արձանագրել է սույլ պահպանակների գոյության փաստը: Frédéric Macler, Notices de manuscrites Arméniens ou relatifs aux Arméniens..., Revue des études Arméniennes, Tome II, Fascicule 2, Paris-1922: Ցուցակում պատառիկի նկարագրությունը գանվում է 282 էջում և ընդգամենք մեկ նախադասություն Է “Deux feuillets de garde en parchemin au début, et deux à la fin, recouverts d’écriture erkataqir” (բառացի թարգմանությամբ՝ «Երկու պահպանակ մազաղարյա սկզբում, և երկուսը վերջում, երկարագիր գշուրդյամբ»): Ֆ. Մակերը ըստ երեսութիւն ծանոթ չի եղել ոչ Հ. Գաթրճյանի «Պա-

գրի նկարագրությունը կատարել ենք Մատենադարանի գրսի ժապավենների հավաքածուում պահպանվող կիոնի թիվ 17 ձեռագրի միկրոֆիլմից<sup>8</sup>: Մտեպստեա, որոշ անհրաժեշտ նկարագրական տվյալներ քաղել եւ համադրել ենք Հ. Հ. Գաթրճյանի եւ Ֆ. Մակերի նկարագրություններից:

### Նկարագրություն բնկալ ձեռագրի

Պատարագամատույց: 1314 թ.: Վայրը՝ Անարգարա: Գրիչ՝ Նիկալյայոս: Կազմող, ստացող՝ անհայտ: Թերթեր՝ 212<sup>9</sup>: Նյութը՝ թուղթ: Մեծություն՝ 17x12: Գրություն՝ միայնուն: Գիր՝ բոլորգիր: Գրության տող՝ 20: Կազմ՝ ?: Աստան՝ ոսկեթել կտավ: Մանրանկար, զարդագրեր, լուսանցագարդեր՝ չին:

Գրչուրյան հիշատակարան՝ 208ար – «Փառք ամենաս[ուր]թ երրորդութեան հակը և որդուոյ և հոգուոյն սրբոյ ամեն:

Աստանաւր կամաւք և խնամաւք ամենազարին Ա[ստուծոյ]յ, յանկ ելեալ ս[ուր]թ մատեանս պատարագամատուցի, որ ունի ի յինքն բովանդակեալ զաղաւթս սուրբ քահանայապետից Ա[ստուծոյ]յ, զոր յիւրաքանչիր ժամանակս արարեալ են խորհուրդ պատարագի: Արդ, եղկ սա գրեալ ձեռամբ մեղաւոր եւ անարժան քահանայի նիկալյայոսի, միշտակ ինձ, և ծնողացն իմոց, եւ եղբաւրն մերոյ Յովաննիսի բահ[անայ]ի, ի թուականիս Հայոց ԶԿԳ (1314), ի դղեակս Անարգարա, ընդ հովանեաւ սրբոյ մաւրս լուս//208թ//ոյ տիրուհոյ եւ միշտ կուսին Մարիամու Ա[ստուա]ծածնիս, ի թագաւորութեանն Աւշինի, եւ ի քահանայապետութեան]ն տ[եառ]ն Կոստանդեա, եւ ի մերոյ եկեղեցոյս յառաջնորդութեան տ[եառ]նը մերոյ Յոհաննիսի եպ[իսկոպոս]ի, որոյ Տ[է]թ Ա[ստուա]ծ պահեսցէ զսա հանապագ: Յիշեսչիք աղաւթիւք զսպասաւորս սրբոյ եկեղեցոյս եւ զքահանայս սուրբս, զկոստանդին և զմիւս Կոստանդին, և զԱնդրոնիկոս, և զԲասիլիոս, և զմիւս Բասիլիոս, և զՍտեփաննոս, և զսարկաւագունս՝ զՎասիլ, և զԹէոդորոս, և զՎարդան Սեպենցի, և զՅակոբ, և զամենայն հաւատացեալս Սրբոյ երրորդութեան, որում փառք և զաւրութիւն] այժմ և յաւի-

տարագամատույցից Հայոց» արժեմավոր ուսումնասիրությանը, ոչ էլ Ֆ. Կ. Կոնիքերի հրապարակմանը: Լիոնի բաղաբային գրադարան իր մի այցելուրյան ժամանակ (հավանաբար 1970-ական թվականներին) պատառիկը տեսել եւ գրադարանի համար մեկ անգամ ես բովանդակուրյունը պարզել է Մատենադարանի փոխանօքեն, Երշանկահիշատակ Բ. Զուգասյանը: Այս մասին ձեռագրի կազմի Ա. Վեղկի կազմաստանին սոսնձված թղթի վրա գրված է “Les fragments coolés sur les plats de ce manuscrit sont partie de l’Histoire d’Elysée, chroniqueur arménien du V-eme siècle. D’après B. Tchoukaszian. Sous-directeur de l’institut des manuscrits anciens de Matenadaran, à Erevan (Arménie).”

<sup>8</sup> Մատենադարան, Դրսի ժապավեն 483:

<sup>9</sup> Տեղ-տեղ թերթակալումը խառնած է:

տեանս յաւիտենից, ամէն: Յիշեսչիք ի Ք[րիստո] և կ զթորու երեց, որ փոխեցաւ առ Ք[րիստո] ս: Եւ որ յիշէ զմեզ աղաւթիւք եւ զնա յիշեսցէ Ք[րիստո] և Ա[ստուա] ծ ի յիւր միւսանգամ գալուստն, որ է աւրհնեալ յաւիտեան»<sup>10</sup>:

Հիշատակագրություններ գրչի՝ 28թ – «Ողորմելայլ ի գերիս Նիկավայոս յերեսս անկեալ աղաչեմ զձեզ յիշեսչիք ԽΩ(Քրիստոս) ըզմեզ ի ս[ուր]թ և ի մաքրափայլ աղաւթս ձեր և զծնողմն մեր և Ա[ստուա] ծ զձեզ»:

39ա - «Բարեխաւսութ[եամ]թ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ողորմեա Ք[րիստո] և Ա[ստուա] ծ գրողի սորա Նիկ[ավայոսի] և ծնօղացն մերոց և որ զամենն ասէ»:

64թ - «Բարեխաւսութ[եամ]թ Ս[ուր]թ հաւրս մերոյ Բարսղի ողորմեա՛ Ք[րիստո] և Ա[ստուա] ծ գրողի սորա Նիկ[ավայոսի] և ծնօղացն մերոց. ամէն»:

76ա - «Ողորմեա՛ Ք[րիստո] և Ա[ստուա] ծ գրողի սորա մեղաւորի»:

105ա - «Բարեխաւսութ[եամ]թ տիեզերաքարոզ հաւրլս մերոյ սըրբոյն Յոհաննու Ոսկիբերանին ողորմեա՛ Ք[րիստո] և Ա[ստուա] ծ ամենայն հաւատացելոց և գրողի սորա և ծնօղացն իմոց և ամենայն եղբարց անապատիս. ամէն»:

141թ - «Ոլ ս[ուր]թ քահանայք որք աղաւթեք ի ս[ուր]թ մատեանս յայս յիշեսչիք զարտասուաց արժանիս զնիկօլ և դուք յիշեալ լիշիք ի Ք[րիստո] ս»:

Հիշատակագրություններ հետագայի՝

1ա, էջի եզրերը խիստ քայքայուած – Յունարէն:

Բոլորգիր, «Հոգին ս[ուր]թ ի հօրէ և յորդոյ ոչ արարելայլ, ոչ ստեղծելայլ, այլ բխելայլ»:

Բոլորգիր, «Ամենայն] իրաւունք»:

Եղագիր, «Երանեալ է՞ այր որ ոչ գնաց ի խորհուտ:

Երկինք պատմեն զփառս Ա[ստուծո]յ և զարարածսն:

Ես Խ[ա]յլապատութիւն սարկաւաք է, իմ հարն զնեց զայս զն[...]

Աստուածատուր երեցն [զհայրն ...]»:

Պահպանակների վրա՝

Աս – հիշատակագրություններն ու գրչափորձերը վերից վար.

Զախ անկունում - «Հ<sup>մթ</sup> 17»;

Զանազան բոլորգիր եւ շղագիր գրչափորձեր, մի մասը ջնջված՝ «ա», «անպ», «Սարսեց», «Ասացան» եւ այլն: Ստորեւ ներկայացնում ենք դրանց ավելի

<sup>10</sup> Հիշատակարանը հրատարակել է նաև Մատենադարանիս երախտավոր տնօրեն, ակադեմիկոս Լ. Ս. Խաչիկյանը «ԺԴ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» հատուրում, էջ 109-110: Լ. Ս. Խաչիկյանը հիշատակարանը նախընտրել է հոդել Հ. Հ. Վրդ. Գարենյանի նկարագրությունը: Զնայած՝ ըստ ամենայնի օգտագործել է Մատենադարանի «Դրսի ժապավենների» հավաքածուում պահպանվող կիոնի թիվ 17 ձեռագիր Պատարագամատուցի միկրոֆիլմը (ԳՓ 483):

ընդարձակ մասերը:

Ար – «Ես առ Ալսուայ] ծ կարդացի և *S[է]ր լուաւ ինձ, ընդ երկ», «Հաստեցա, հաստատեցաւ» եւ այլն:*

Բա – «Եւ մի ունի ի զինուորացն տիգաւ խոցեաց զնա և ել վաղվաղակի արիւն և չուր և որ ետեսն վկայեաց և ճշմարիս է վկայութիւն նորա»:

«Սարսեցին անասեղեն բնութիւնքն ի քէն և անխրամատելի պահեցին զսահմանս պոմանի իւրեանց»:

«Երկինք պլա» եւ այլն:

Բր – «Շատ մարդ կա ի ք[ա]հ[ա]ն[այացն] որ զպատարագն սուտ կուայնէ զքարոզնին կու ասէ ու զպօթնին ի տեղն կու թողու ու զԱլսուայ] ծ կու խաբէ ու զմարդ»:

«Ես առ Ալսուայ] ծ կարդացի և *S[է]ր լուաւ] ինձ, [ընդ ...?]»:*

Գա – «Երանեալ է այր որ ոչ գնաց ...?» (տե՛ս նաեւ 1ա):

Գր – «Երկինք պատմեն...?» (տե՛ս նաեւ 1ա):

Դր – «Ես հաշատուրս սարկաւաք զայս [...] Ալսուայ] ծատուր» (տե՛ս նաեւ 1ա):

Կնիք 1ա – Շրջանաձեւ, “BIBLIOTEQU DE LA VILLE DU LYON”:

Պահպանակ - Եղիշէ, «Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին»: Մասն՝ Ե-Զ եղանակներից: Ժամանակը՝ Ը-Թ դարեր: Պահպանված հատվածները կարդալ՝ Դր-Գա (1ա)` Ե. 1-3; 146-148: Գա-Դր (1թ)` 148-150; 153-159: Աա-Բր (2ա)` 159-168: Ար-Բա (2թ)` Ե. 169-171; Զ. 7-11; 42-43: Թերթեր՝ 4 (Ա.Բ+Գ.Դ), մեկական թերթեր լայնենվ ծալված: Կտրատված՝ Ա.ԲԳ.Դ-նվերին եզրով, մեկ տող պակաս, սյունակներից մեկը վնասուած, մեկում աջը, մյուսում ձախը: Պրականիշեր՝ չեն պահպանվել: Նյութ մագաղաք: Գրություն՝ երկսյուն: Գիր՝ ուղղագիծ երկարագիր: Տող՝ Աար10; Բար9; Գար9; Դա10; Դր9<sup>11</sup>:

Համառոտ ներկայացնենք պատառիկի առ այսօր հայտնի բնագրային կարևոր ընթերցումներն ու ֆ. կ. Կոնիբերի հիմնական դիտարկումները՝

ա) Պահպանակները հատվածներ են պարունակում Եղիշեի «Վարդանանց պատերազմի» Ե. և Զ. եղանակներից: Ալելի ստուգ՝ Ե. եղանակի 146-

<sup>11</sup> Զեռագրի եւ ձեռագրում պահվող պահպանակի բնօրինակը չենք տեսել, ուստի եւ մանրամասն ձեռագրագիտական տվյալներ չենք բաղել: Մեր նկարագրության մեջ պակասում են ձեռագրագիտական տվյալների այնպիսի մանրամասներ, ինչպիսիք են լրաանցների, գրույան դաշտի, տողերի բարձրության, միջտողային հեռավորության եւ այլ ոչ պակաս կարեւոր նկարագրական հարցագրումներ, որոնք օգնում են կ ավելի ստույգ եւ համակողմանիորեն ներկայացնել թե երեմնի ձեռագրից մնացած մասումները՝ պատառիկ-պահպանակները եւ թե վերականգնել այդ ձեռագրի մոտավոր պատկերը:

171 և Զ. 7-ի 11-րդ նախադասությունները<sup>12</sup>:

- թ) Աս. թերթի ձախ սյունակը վնասված է, եւ յուրաքանչյուր տողում պահպանված 1-5 գրերով հնարավոր չի լինում պարզել Ե. եղանակի 146-րդ նախադասությանը նախորդող հատվածը: Սակայն, ինչպես հրատարակիչն է պնդում, Մոսկվայի 1892 թվականի հրատարակության իր համեմատած օրինակը թույլ չի տալիս վերականգնել այդ հատվածը: Այսպիսով անվերծանելի է մնացել Աս. թերթի ձախ սյունակն ամբողջությամբ, չնայած պահպանված գրերի մի մասը ընթերցվել է: Հեղինակը վրիպել և չի արձանագրել պահպանակի ընդլայնակի ծալքի հետեւանքով բնկալ ձեռագրի մեջքին կարված մեկ տող, ուստի 20 տողի փոխարեն նշել է 19:
- դ) Աբ. էջում պակասում են 151-152 նախադասությունները՝ «Եւ քանզի գարնանային ... զվայ եւ զաւաղ բարեկամացն»:
- թ) Բբ. էջում պակասում է Ե. եղանակի 171-րդ նախադասությունից «բեկաւ անկաւ զաւորին ուժոյն իւրոյ, ...» մինչեւ Զ. եղանակի 7-րդ նախադասության կեսը «...հրամայեաց սպանանել ի նոցանէ...»: Այս ամբողջի փոխարեն Ե. եղանակն առանց Զ.-ի վերնագրի, միմյանց է կապվում հետեւյալ հատվածով «...իսկ (՝) ի գնդին Հայո՞ցսն ինչ յամրցի, եւ երթեալ զաւան պարսից գալ ի խաղաղութիւն, որոյ եկեալ...»: Բբ. էջում չեն վերծանվել երկրորդ սյունակի վերջին երկու տողերը:
- ե) Որոշ հատվածներ վերծանել է վերապահումով: Դժվարընթեռնելի հատվածներում դրել է հարցականներ, կամ կասկած հայտնել իր ընթերցման վերաբերյալ<sup>13</sup>:

Վերոշարադրյալ ընթերցումները տարաբնույթ մեկնաբանությունների հիմք դառնալուց բացի երբեք բնօրինակի հետ չեն համեմատվել: Անընթեռնելի կամ անվերծանելի համարված հատվածների վերականգնման մի նոր փորձ մեզ հայտնի չէ: Լիոնի Քաղաքացին գրադարանի կողմից մեզ տրամադրված

<sup>12</sup> Ինչպես նախորդ (տե՛ս ծնթ. 1), այնպես կ ներկա հոդվածում օգտագործել ենք «Մատենագիրք Հայոց» մատենաշարի նախադասությունների համարակալումը: «Մատենագիրք Հայոց», հ. Ա. Ե. Դար, Անքիլիաս-Լիբանան, 2003 թ.: Եղիշեի «Պասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» երկը գտնվում է 521-764 էջերում:

<sup>13</sup> Կոնիբերը Բբ. Էջի վերծանության համար նշում է. «...10-րդ տողին համար՝ պիսի է կրկին անգամ համեմատել հատակոտորը, վասն զի գոյցէ տառեւէն մէկ քանին սխալ կարդացած ըլլամ»: Նույնպես Բբ. Էջի երկրորդ սյունակի 18-19 տողերը: Իսկ որոշ տեղերում էլ, կարծում ենք, սխալ է վերծանում: Ինչպես օրինակ՝ նոյն Բբ. Էջի վերջին տողում «զի մինչ» բառակապակցությունը կարդացել է «զի մի ոչ»:

թվային բարձրորակ պատկերը<sup>14</sup> բավարարում է պատառիկի տեքստը վերծանելուն, սակայն պատկերներից ձեռագրագիտական-հնագրագիտական տվյալներ քաղելով և դրանցով մայր ձեռագրի շափերի մասին դատողություններ անելով վրիպումներից ապահովագրված չես կարող լինել: Ուստի հեռու ենք մնում պատառիկի մայր օրինակ ձեռագրի մատյանի վերակազմության թեական եզրակացություններից, որը կօգներ որոշ պատկերացում կազմել այդ մատյանի բնույթի մասին (Ճառընտիր է այն, Պատմագիրք, թե Հայսմավուրք):

Վերծանությունների տարբնթերցումներում փակագծերի մեջ օգտագործել ենք ե. Տէր-Մինայանի կազմած գիտական հրատարակության բնագիրը եւ նրա տարբնթերցումները<sup>15</sup>: Այն դեպքում, երբ ԳՀ բնագիրը կամ տարբնթերցումը լրացնում է պատառիկի վնասված հատվածները, դրել ենք ուղիղ գրանցաններով: Զենք վերցրել ԳՀ-ում օգտագործված ձեռագրի եւ տպագիր օրինակների տարբերանշանները, քանի որ սույն հոդվածի շրջանակներում դրանք չեն կարող դույզն ինչ պատկերացում տալ ձեռագրերի միջև եղած աղերսների և ընտանիքների մասին: Դյուրության համար տարբնթերցումները տրված են նախադասությունների հերթական համարներով: Պատառիկի վերծանությունում առկա լուսանցային գրերը իրենց տեղում դրված են տողից վերընթեր: ԳՀ-ի կետագրության հետ զուգահեռ վերարտադրել ենք նաև երկաթագիր պատառիկին հատուկ կետագրությունը, այն նշելով քառակուսի միջնակետով:

Կոնիբերի վերծանության մեջ տեղ գտած վրիպումներից ամենաէականը պատառիկի առաջին թերթի ձախ սյունակի վերծանությունն է, որը մեծանուն հայագետը ե. եղանակի 146-րդ նախադասությանը նախորդող հատվածով շի կարողացել վերականգնել: Ուստի պատառիկի 1ա էջի (պահպանակի ԴԲ-Գա էջերի)<sup>16</sup> ձախ սյունակի վերծանության մեջ տեղ գտած վրիպումներին կանդրադառնանք առավել հանգամանորեն:

**Ստորև ներկայացնում ենք պատառիկում վերծանված ամենակարևոր գրչության նմուշների պատկերները:**

<sup>14</sup> 2007-ի սկզբին Մատենադարանի ֆրանսահայ բարեկամ, հայագետ Արմեն Մուրաֆյանի միջոցով եւ աջակցությամբ, ինչպես նաև Լիոնի Քաղաքային գրադարանի հին շրջանի ֆոնդի գլխավոր ավանդապահ Պիեռ Գովինարի բարյացակամ օժանդակությամբ ստացանք պահպանակների բարձորակ պատկերներ, առանց որոնց անհանար կիներ այս աշխատանքը կատարել, եւ որի համար հայտնում ենք մեր երախտագիտությունը:

<sup>15</sup> «Եղիշեի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին», ի լրյա ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց, աշխատութեամբ եր. Տէր-Մինասեանի, Երեւան, 1957 թ. (այս հրատարակության համար այսուհետ «գիտական հրատարակություն» կամ «ԳՀ» ձեռով):

<sup>16</sup> Այսուհետ պահպանակները հղում ենք ըստ վերականգնված էջեր՝ ԴԲ-Գա-ն 1ա, Դա-Գբ-ն 1թ, Աս-Բթ-ն 2ա, Աթ-Բթ-ն 2թ: Վերծանություններն ու պատառիկների պահպանակները համապատասխանաբար տե՛ս հավելվածում:



Պատառիկ 1ա (Գբ-Գա) - Զախ սյունակ՝ տող 13 - «ընդ Ալսուտուծոյի», տող 16 - «քն», տող 17 - «զեցեա», տող 19 - «պա»; Ազ սյունակ՝ տող 12 - «անդ», տող 14 - «մա», տող 13 - «ար»:



Պատառիկ 1բ (Գա-Գբ) - Զախ սյունակ՝ տող 3 - «ապ», տող 9 - «որ», տող 10 - «նց», 19 «լիս»



Պատառիկ 2ա (Ա.ա-Բ.բ) - Զախ սյունակ՝ տող 20 - «ութսուն»; Ազ սյունակ՝ տող 3 - «ցան», տող 12 - «որք», տող 14 «մի»:



Պատառիկ 2բ (Ա.բ-Բ.ա) - Զախ սյունակ՝ տող 5 - «ացն» տող 6 - «ոյժ» :

Ներկայացված գրանշանների խումբը ցույց է տալիս, թե գրիչը ինչպիսի բժախնդրությամբ է հետևել գաղափար օրինակին: Հարազատ մնալով գաղափար օրինակի տողացի ընդօրինակման իր որդեգրած սկզբունքին, ընդօրինակման ընթացքում տողում շտեղավորված գրերը նա կամ կցագրել է, կամ ավելի մանր գրով գրել տողի վերին, ստորին կամ կից լուսանցքում: Հնագրագիտության տեսանկյունից շափազանց ուշագրավ են 1ա էջի ձախ սյունակի 19-րդ տողում «պա» և 1բ էջի ձախ սյունակի 9-րդ տողում «որ» գրերի կցագրումները, որոնք ավելի հատուկ են արձանագրություններին: Զի բացառվում, որ գրիչը պահպանել է նաեւ գաղափար օրինակի արտաքին պատկերը՝ ձեռագրի շափերը, գրատեսակը և այլն:

Վերադառնալով պատառիկի 1ա էջի ձախ սյունակին, նախ պետք է նկատենք, որ «Հանդէսում» հրատարակված վերծանության համապատասխան էջը, ի տարբերություն մյուսների, ունի 19 տող, մինչդեռ մյուսներն ունեն 20 տող: Պահպանակի 11-րդ տողը ընկել է բնկալ ձեռագրի մեջքին կարված ընդլայնակի ծալքի տակ և գրեթե չի երևում: Ուստի հրատարակված վերծանության 10-րդ տողից հետո պետք է նկատի ունենալ ևս մեկ տող, իսկ 11-րդ տողը խմբագրել 12, 12-ը՝ 13 և այդպես շարունակ մինչև 19-ը 20:

Սյունակի նոր վերծանությունը<sup>17</sup> ևս (որի ստույգ լինելու մեջ որևէ կասկած չունենք), թույլ չի տալիս ձախ սյունակի տեքստը վերականգնել ե. եղանակի 146-րդ նախադասությանը անմիջապես նախորդող հատվածով: Ուստի պետք է դիմենք նման դեպքերում ընդունված տեքստերի վերծանության մեթոդներից մեկին, այն է՝ պահպանված գրանշանների կամ բառակապակցությունների միջոցով նախորդող ամբողջ տեքստում գտնենք այնպիսի մի հատված, որտեղ նկատի ունենալով յուրաքանչյուր տողի գրերի քանակը, հաջորդ տողերում ճշգրտորեն կհամապատասխանեն պահպանված տառակապակցություններն ու բառակապակցությունները: Այսինքն՝ եթե երկրորդ տողում պահպանվել է «...ԳԱՄ Ի» գրերը, ապա նկատի ունենալով, որ տողում կարող են տեղափոխել առավելագույնը 18-20 գիր, ընտրված հատվածի տողատման արդյունքում երրորդ տողի վերջավորությունը պետք է լինի «...ՈՎՆ», իսկ շրրորդինը՝ «...ՈԵԱԼՓ» և այլն: Ինչ խոսք ավելի դյուրին է որոնումներ կատարել պահպանված ամբողջական բառերի կամ բառակապակցությունների միջոցով: Այդպիսիք այս սյունակում երկուսն են՝ 13-րդ տողում «ընդ Աստուծոյ» բառակապակցությունը, իսկ 18-ում «Քրիստոսի» բառը<sup>18</sup>:

<sup>17</sup> Ամբողջ սյունակի վերծանությունը ան և Հավելվածում, որտեղ Կոնֆրերի աղյուսակաձև վերծանություններին զուգընթեր ներկայացված են նոր ընթերցումները:

<sup>18</sup> Կարելի է նաև ամբողջական բառ համարել 17-րդ տողի «ղեցեա» տառակապակցությունը, եթե համարենք, որ այն «եղեղեցեա» բառն է: Ի դեպ, Կոնֆրերն այս գրանշանների

Եղիշէի «Վարդանանց պատերազմ»ում Ե. Եղանակի 146-րդ նախադասությունից առաջ «ընդ Աստուծոյ» բառակապակցությունը հանդիպում է Բ. Եղանակի 286-րդ, Ե. Եղանակի 2-րդ, 3-րդ և 90-րդ նախադասություններում: Այս բառակապակցությամբ և տողում միջինը 20 գիր հաշվարկով տրոհված փնտրելի հատվածին համապատասխանում է Ե. Եղանակի 2-րդ նախադասությունը: Ընդ որում, ինչպես վերը նշեցինք, նկատի է առնված, որ «ընդ Աստուծոյ» բառակապակցությունը գտնվում է 13-րդ տողում, իսկ տրոհման ընթացքում 1-12-րդ տողերի վերջավորությունները համապատասխանում են պատառիկում պահպանված տողերի վերջավորություններին:

Ստորև՝ ձախ սյունակում պատառիկի վերծանությունն է, իսկ աջում ԳՀ-ի համապատասխան տողը: Միշին սյունակում նշված է պատառիկի տողում հնարավոր գրերի քանակը.

## Պատառիկ

## Գիտական հրատարակություն

- |  |   |
|--|---|
| 1. <sup>1</sup> [ի սկզբանէ է տեսանել]              | 16 [ի սկզբանէ է տեսանել]  |
| 2. [զբազումս բազում ան]ԳԱՄ Ի                       | 20 զբազումս բազում անգամ ի  |
| 3. [բազում տեղիս: <sup>2</sup> որ սիր]ՈՎՆ          | 19 բազում տեղիս: ( <sup>&gt;</sup> Մարդիկ,) որ<br>սիրովն  |
| 4. [Ա[ստուծոյ] իբրեւ զինու վա]ՌԵԱԼՔ▪               | 19 Աստուծոյ իբրեւ զինու վառեալք   |
| 5. [ոչ ինչ զանգիտելով ի] ՄԱ.ՀՈՒ                    | 21 ( <sup>&gt;</sup> էին) ոչ ինչ ( <sup>&gt;</sup> ինայեցին)<br>զանգիտելով ( <sup>&gt;</sup> իբրեւ զանարի՝<br>գոլով վատասիրտք, կամ) ի մահ |
| 6. [անէ անձանց, կա]Մ Ի ՅԱ.                         | 15 անձանց, կամ [ի] յա   |
| 7. [փշտակութիւնէ ըն]ԶԻՑ▪                           | 17 փշտակութիւն ընչից,   |
| 8. [կամ ի խողխողումա]Յ ՍԻՐԵ                        | 19 կամ ի խողխողումն սիրե  |
| 9. [լեաց, կամ ի գեր]ՈՒԹԻՒՆ                         | 17 լեաց, կամ ի գերութիւն  |
| 10. [է ընտանեաց, առ ո]ԶԻՆԶ                         | 16 ընտանեաց, ( <sup>&gt;</sup> ելանել ի հայրենի<br>երկրէն եւ անկանել ի ստրկութիւն<br>յաւտարութեան.) առ ոչինչ                              |
| 11. [համարեցան զայս ամենայն]                       | 20 [համարեցան զայս ամենայն]   |
| 12. [անցս չարշարանաց,]ԱՅՆ                          | 17 անցս չարշարանացն. Այն  |
| 13. [միայն միաբան կալ, ԸՆԴ <sup>Ա[ստուծոյ]3,</sup> | 19 միայն միաբան կալ ընդ Աստուծոյ,   |

Խմբի առաջին գիրը կարդացել է «Ո», «լեցեա», կարող իննի ենթադրել, որ այն բառի վերջավորություն է «լեցեալ» ձեւով: Սակայն ոչ «լեցեալ» վերջավորությամբ, ոչ իսկ «լեցեա» մասնիկով որեւէ բառ ողջ «Վարդանանց պատերազմի» բնագրի մեջ չկարողացանք գտնել: Ուստի միակ հավանական տարբերակը մնում է «լեցեա» ընթերցումը «Եկեղեցեա» ձեւով:

Այսպիսով, ինչպես նկատելի է տողերի մեծ մասը՝ 2-4-ը; 6-9-ը և 12-13-ը, իրենց վերջավորություններով համընկնում են: Գոյություն ունեցող աննշան տարբերությունները, ինչպես կտեսնենք ստորև, առկա են նաև ԳՀ տարընթերցումներում: Տողերի վերջավորությունների համընկումները անառարկելիորեն հավաստում են, որ պատառիկի 1ա էջի (պահպանակներ՝ Դբ-Գա) ձախ սյունակը «Վարդանանց պատերազմի» Ե. եղանակի սկզբից է: Հինգերորդ և տասներորդ տողերում առկա տարբերությունները մեկնաբանելի են տեքստաբանական, շարահյուսական քննությամբ: Հիմնավորենք մեր դիտարկումները:

Պատառիկի առաջին տողը չի պահպանվել, այն վերականգնել ենք ԳՀ բնագրով: Երկրորդ տողի «զամ ի» գրերի խումբը համապատասխանում է առաջին նախադասության «զբազում» բազում անգամ ի» (20 գրանշանով) հատվածին: Երրորդ տողում մենք հակված ենք զեղչել «մարդիկ» բառը, քանի որ՝ նախ այս բառի հետ տողում գրերի քանակը դառնում է 25, ինչը հնարավոր չէ, և երկրորդ՝ այն բացակայում է նաև ԳՀ բնագրի համար օգտագործված ձեռագրերից մեկում<sup>19</sup>: Վերջապես առաջին և երկրորդ նախադասությունները արհեստականորեն, թերևս փոքր-ինչ շեշտադրմամբ (առաջին նախադասության մէջ այս բառը մեկ անգամ արդեն օգտագործվել է), տարանջատում և երկրորդ նախադասություն են ստեղծում: Այս բառի զեղչումով նախադասությունների իմաստային շարահարությունը չի խաթարվում, այլ միավորվում է «որ» շաղկապով և հիմք տալիս ենթադրելու, որ առաջին և երկրորդ նախադասությունները նախկինում մեկ նախադասություն են եղել, և որ հետագա խմբագրման ընթացքում ներմուծված «մարդիկ» բառի շնորհիվ տրոհվել, երկու՝ մեկը մյուսին հաջորդող նախադասություններ են դարձել:

(1) «[Մեծ է սէրն Աստուծոյ քան զամենայն մեծութիւն երկրաւոր. Եւ այնպէս աներկեւս առնէ զմարդիկ՝ իբրեւ զանմարմին զարս հրեշտակաց, որպէս անդստին ի սկզբանէ է տեսանել զբազումս բազում ան]ԳԱՄ ՚ ի [բազում տեղիս], (2) (>մարդիկ) [որ սիր]ՈՎՆ [Աստուծոյ զինու վա]ՈՒԵԱԼՔ• (>էին,) [ոչ ինչ] (>ինայեցին) զանգիտելով (>իբրեւ զանարի՝ գոլով վատասիրոք կամ) [ի] ՄԱՀՈՒ...»<sup>20</sup>:

<sup>19</sup> Ոչագրավ է, որ «մարդ» բառի հոգնակի «մարդ» և «մարդիկ» ձեւերը զուգահեռաբար կիրառված են պատմության ամբողջ բնագրում:

<sup>20</sup> Առաջին նախադասության վերջում ԳՀ բնագրի համար օգտագործված վեց ձեռագիր և երկու տպագիր օրինակներ առհասարակ շունեն «զբազում» բազում անգամ» բառակապակցությունը, իսկ հինգ այլ ձեռագրեր և երկու նաողնտիր շունեն «զբազում» բառը:

Պատառիկի շորրորդ տողն, առանց «փրեւ» բառի համապատասխանում է ԳՀ բնագրին<sup>21</sup>:

Հինգերորդ տողում պատառիկը պետք է որ չունենար «Էին» օժանդակ բայլ, քանի որ «վառեալֆ» բայից հետո տողավերջում միջնակետ է դրված, իսկ գրերի քանակը տողում առանց այդ էլ արդեն 19 է: Ավելի ուշագրավ է «...զանգիտելով իրեւ զանարի՝ գոլով վատասիրտֆ...» միջանկյալ նախադասությունը: Այն գտնվում է 4-րդ տողի «ուեալֆ» և 5-ի «մահու» վերջավորությունների միջև: Նկատի ունենալով, որ տողում արդեն ունենք հինգ գրանշան՝ «մահու», վերականգնվող հատվածի գրանշաների թիվը չի կարող անցնել 15-ը: ԳՀ բնագրի այս հատվածում առկա են 55 գրեր, որոնցով կազմված են «...Էին, ոչ ինչ խնայեցին...» (16) և «...զանգիտելով իրեւ զանարի՝ գոլով վատասիրտֆ, կամ ի...» (39) միջանկյալ նախադասությունները: Գրչական վրիպակի կամ տողի անկման մասին խոսք լինել չի կարող: Անհրաժեշտ է պարզապես երկու վերոհիշյալ նախադասություններից մեկը հիմնավորելով տեղադրել տողում: Նախընտրելի համարված միջանկյալ նախադասությունը թե գրերի քանակով, թե իմաստով ու շարադրությամբ պետք է ամբողջացնի ոչ միայն տողը, այլև ողջ նախադասության տրամաբանական հորինվածքի մեջ հարազատորեն ընկալվի:

Ինչպես վերը նշել էինք՝ «Էին» օժանդակ բայլ պատառիկը կարող էր և չունենալ: Իր բնույթով «...ոչ ինչ խնայեցին...» բառակապակցություն-միտքը կարծես հարազատ է հաջորդող «զոհողություններ-զրկանքներ» թվարկվող մտքերի ոճին: Մինչդեռ «...զանգիտելով իրեւ զանարի՝ գոլով վատասիրտֆ...» հատուածը բացատրական նշանակություն ունեցող մի միջանկյալ նախադասություն է, որ լրացնում-բացատրում է «ոչ ինչ խնայելու» միտքը, ուստի ավելի նման է հետագա մի հավելման և ամենայն հավանականությամբ պատառիկում այն չէր կարող լինել<sup>22</sup>: Ի դեպ ԳՀ բնագրում «...ոչ ինչ խնայեցին զանգիտելով իրեւ զանարի՝ գոլով վատասիրտֆ, կամ...» հատվածը ըստ երևությին հենց հավելման շնորհիվ, փոքր ինչ խրթին շարադասություն ունի, որի հետևանքով տուժել է նաև բնագրի աշխարհաբար փոխադրությունը<sup>23</sup>: Աշխարհաբար հրատարակության տեքստում այն հաջորդող «կամ ի

<sup>21</sup> Վեց ձեռագիր և երկու տպագիր օրինակներում չկա «փրեւ» բառը:

<sup>22</sup> Նոյն այս տողում պատառիկն ունի «մահու» փոխարեն «մահ», իսկ տարբերցումներում «խնայեցին» անցյալ կատարյալ բայլ շունեն վեց ձեռագիր: Ձեռագրերի մի զգակի մասը չունի «գոլով» բառը:

<sup>23</sup> Տե՛ս Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, թարգմանությունը, ներածությունը և ծանոքրությունները ե. Տեր Մինասյանի Երեւան, 1971 թ.: Նոյնը վերահրատարակած Երեւան, 1989 թ.:

մահ անձանց»<sup>24</sup> հատվածի հետ միասին փոխադրվել է «ամենելին շխնայեցին և անարի վատասիրտների նման շվախեցան մահից» ձեւով: Սակայն «կամ ի մահ անձանց» միջանկալ նախադասությունը իր «կամ» կապով կարծես թե նախորդի պարզ շարունակությունը չէ:

Եթե, ԳՀ տարբնթերցումները նկատի ունենալով, դուքս հանենք «խնայեցին» և «գոլով» բայերը, որոնք որոշ ձեռագիր և տպագիր օրինակներում շկան, ապա կունենանք հետևյալ պատկերը «...ոչ ինչ զանգիտելով իրեւ զանարի՝ վատասիրտ, կամ...»: Աւշագրավ է, որ գրեթե նույն ձևով նախադասության այս հատվածը հանդիպում է Բ. եղանակի 242-րդ նախադասությունում «...ոչ ինչ զանգիտելով իրեւ զանարի վատասիրտս...»: Պատառիկի 5-րդ տողում առանց դժվարության տեղափորվում է նախադասության «...ոչ ինչ զանգիտելով...» մասը և «մահու» վերջավորության հետ տողում կազմում 21 գրանշան:

Բնագրի նախնական պատկերն էլ ավելի է պարզվում, եթե տողում պահպանված «մահու» գրանշանների խմբով վերծանում ենք «ի մահուանէ» բացառական հոլովով բառը: Տողի վնասված մասում համապատասխանաբար տեղադրելով «...ոչ ինչ զանգիտելով...» մասը՝ ստանում ենք նախադասության տրամաբանությանը ավելի հարազատ շարադասություն՝ «ոչ ինչ զանգիտելով ի մահուանէ անձանց» (պեղված է «իւրեանց» դերանուն՝ «անձանց իւրեանց»), որ աշխարհաբար լինում է «չվախենալով իրենց անձերի մահից»:

Բացառելով տողում «իին» օժանդակ բայը, ապա «...խնայեցին...» բայն ու «...իրեւ զանարի՝ գոլով վատասիրտ, կամ...» բառերը, և վերջապես հոլովված բառերը համաձայնության բերելով<sup>25</sup> վնասված սյունակի 5-րդ տողի «ոչ ինչ» բառից մինչև 10-ի «առ ոչինց» բառերի միջև կունենաք՝

«...ոչ ինչ զանգիտելով ի մահուանէ անձանց, կամ ի յափշտակութիւնէ ընչից» կամ ի խողխողումաց սիրելեաց, կամ ի գերութիւնէ ընտանեաց, առ ոչինչ...»:

Հաջորդ ընդարձակ հատվածի սրբագրումն հենց 10-րդ տողում է, որտեղ պատառիկը չունի ԳՀ բնագրում առկա «...ելանել ի հայրենի երկրէն եւ անկանել ի ստրկութիւն յատարութեան...» հատվածը: Այս նախադասությունը, իր բնույթով նման լինելով նախորդ սրբագրված նախադասությանը,

<sup>24</sup> Երկու ձեռագիր և մեկ տպագիր օրինակ շունեն «կամ ի մահ անձանց»

<sup>25</sup> ԳՀ բնագրը փոխարեն պատառիկի եզակի բացառական հոլովով «ի մահուանէ անձանց»ի ունի եզակի տրական հոլովով «ի մահ անձանց»: Նմանապես 6-րդ տողում պատառիկն ունի «կամ ի յափշտակութիւն ընչից» (պետք է լինի «կամ ի յափշտակութիւնէ ընչից») փոխարեն «կամ յափշտակութիւն ընչից»: Նույն ձևով նաև 8-րդ տողում պատառիկն ունի «ի խողխողումաց սիրելեաց» փոխարեն «ի խողխողումն սիրելեաց»:

գտնվում է 9-րդ տողի «...ութիւն» և 10-ի «...շինչ» վերջավորության միջև։ Բավարար է միայն ասել, որ այս հատվածը իր նախորդ «ի գերութենէ ընտանիք» նախադասության բացատրությունն է, որ կարծես ձեռագրի լուսանցքից ներս է սպրդել և, ըստ ամենայնի, բնագրի մեջ կատարված հետագա ներմուծում է։

Տասնմեկերորդ տողը պատառիկում չի երևում, քանի որ ընդլայնակի ծալքով կարված է բնկալ ձեռագրին։ Սակայն ինչպես այս տողի տեքստը, այնպես էլ հաջորդող երկուսը (12-13-ը) առանց որևէ դժվարության տեղակայվում են տողերի վրա, համընկնում տողում գրերի քանակով, իսկ 13-ը նաև տողերի վերջավորությամբ։

Այսպիսով պատառիկի ձախ սյունակի 1-13 տողերի վերականգնված տեքստն ունի հետևյալ պատկերը՝

«1. Մեծ է սէրն Աստուծոյ քան զամենայն մեծութիւն երկրաւոր եւ այնպէս աներկեւզա առնէ զմարդիկ՝ իբրեւ զանմարմին զաւրս հրեշտակաց, որպէս անդստին [ի սկզբանէ է տեսանել զբազում բազում անգամ ի բազում տեղիս, 2. որ սիրովն Ա[ստուծոյ] իբրեւ զինու վառեալք ու ինչ զանգիտելով ի մահուանէ անձանց, կամ ի յափշտակութիւնէ ընչից կամ ի խողխողումաց սիրելեաց, կամ ի գերութիւնէ ընտանեաց, առ ոչինչ համարեցան զայս ամենայն անցս շարշարանաց։ այդ միայն միաբան կալ ընդ Ա[ստուծոյ] ...]»<sup>26</sup>։

Ամփոփենք կատարված աշխատանքն ու արդյունքները։

Ա. Վերծանության համար որդեգրված մեթոդով, այն է պահպանված գրերի, տողում գրերի մոտավոր քանակի և ԳՀ բնագրում հայտնաբերված համապատասխան հատվածի համագրությամբ ու տողերի վերջավորությունների համընկումով, տեքստն անառարկելիորեն ճիշտ է վերծանված։ Բանավեճի առարկա կարող են լինել միայն մեր կողմից առաջարկված քերականական և ուղղագրական միջամտությունները։

Բ. Մեր կարծիքով հետագա խմբագրման արդյունքում ներմուծվել-հավելվել, կամ անձանաշելիորեն վերաշարադրվել են «...մարդիկ...», «...ոչ

<sup>26</sup> Ուղիղ փակագծերի մեջ են առնված պատառիկում առկա տեխնան ու վերծանությունը։ Ընդզգած են նաև պատառիկի վնասված հատվածների տեսանելի գրերն ու մեր ժերականական խմբագրումները։ Նոյնը տես նաև հավելվածում զետեղված պատառիկների վերծանության տեխնանում եւ պատկերներում։ Երկրորդ նախադասությունը հետավոր նմանություն և աղերսներ ունի Գ. եղանակի 52-րդ նախադասության հետ՝ «Մարդ», որ ոչ ի կապանաց զանգիտեն, եւ ոչ ի տանջանաց երկնչին, եւ ոչ ի ստացուածոց պատկառին, եւ որ յետին շար է բան զամենայն շարիս՝ զմահ բան զիեանս ընտրեն, ո՞վ է, որ կարէ նոցադիմակաց լինել։»

ինչ խնայեցին զանգիտելով իրեւ զանարի՝ գոլով վատասիրտք, կամ...» և «...եղանել ի հայրենի երկրէն եւ անկանել ի ստրկութիւն յատարութեան...» հատվածները: Մրանք չեն կարող ձեռագրի ընդօրինակման ընթացքում գրշի կողմից վրիպում համարվել: Պատառիկի բնագիրը չի կարող նաև կրծատված համարվել, քանի որ վերոհիշյալ հատվածներն իրենց բնույթով շատ ավելի հավելագրման նման են:

Գ. Ապացուցված համարելով, որ ձախ սյունակը սկսվում է Եղիշէի «Վարդանանց պատերազմի» Ե. եղանակի առաջին և երկրորդ նախադասություններով, նկատի ունենալով, որ մնացած ութ տողերում կարող է տեղափորվել առավելագույնը երկու նախադասություն, իսկ աջ սյունակը սկսվում է 146-րդ նախադասությամբ՝ միանգամայն պարզ է դառնում, որ պատառիկն առհասարակ չունի Ե. եղանակի շուրջ 141 նախադասություն:

Ինչպես տեսնում ենք առաջին երկու նախադասությունները միասին պատառիկում մի ամփոփի միտք են արտահայտում, և կարող էին լինել մեկ նախադասություն: Ավելի ջանք է պահանջում 14-20 տողերի, ինչպես նաև աջ սյունակի առաջին տողի վերծանումը: Մինչ հաջորդող ութ տողերի (յոթը ձախ, մեկը աջ սյունակում) վերծանությանն անդրադառնալը, վերադառնանք երկրորդ նախադասության վերջին: ԶԷ՞ որ «ընդ Աստուծոյ» բառերով այն չի ավարտվում, այլ շարունակվելով որևէ կերպ չի համընկնում 14-20 տողերի վերջավորություններին, ըստ այդմ և պատառիկում այն չի կարող լինել: Ահա պատառիկում պակասող երկրորդ նախադասության հատվածը.

«... զի ի նմանէ միայն մի՛ գերի ելցեն. եւ ամենայն երեւելի մեծութեանս զնա բաւական համարեցան՝ ընտրեալ ի միտս իւրեանց»:

Նույն հատվածի ոճով գրված 3-րդ նախադասությունը ևս թույլ չի տալիս վերականգնել 14-20 տողերը:

3 «Եւ զուրացութիւնն մեռելութիւն վարկանին, եւ զման վասն Աստուծոյ՝ անանց կենդանութիւն, եւ ծառայել յերկրի՝ ազատութիւն կենաց իւրեանց, եւ ընկենով զանձինս յատարութիւն՝ ընդ Աստուծոյ գիտից»:

Ինչ վերաբերում է 4-րդ նախադասությանը, ապա այն իր բնույթով շարադրանքի մեջ մի միշտակություն է:

4 «Որպէս յայսմ ժամանակի տեսաբ աշամ մերով, զի զնոյն

նահատակութիւն նահատակեցաւ եւ աշխարհս Հայոց»<sup>27</sup>:

Ուստի խնդրելի հատվածը պետք է փորձել վերականգնել 5-146 նախադասությունների միջակայքում: Փորձենք այն վերականգնել վերջից՝ 146-րդ նախադասության միջոցով: Այն՝ պատառիկ ԳՀ բնագիր համադրությամբ հետևյալ պատկերն ունի:

| Պատառիկ                    | ԳՀ բնագիր   |
|----------------------------|---|
| 146 [...]                  | 146 Իսկ կորովին Վարդան իւրովք քաջ<br>նիզակակցաւքն |
| 1. [...]                   | 1. [...]  |
| 2. ԲԱԶՄԻՆ ՈՉ ՍԱԿԱԽ ՆԱԽ     | 2. ոչ սակաւ նախ                                   |
| 3. ՃԻՐՄ Ի ՏԵՂԻՈԶԵ ԳՈՐԾԵՐ Ի | 3. ճիրս ի տեղուցն գործեաց,                        |
| 4. ՄԵՇ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ, ՅՈՐ     | 4. յոր  |
| 5. ՈՒՄ ԵՒ ԻՆՔՆ ԱՐԺԱՆԻ ԵՂԵՒ | 5. ում տեղուց եւ ինքն իսկ արժանի եղեւ             |
| 6. Ա.ՈՆՈՒԼ ԶԿԱՏԱՐԵԱԼ ՆԱՀԱ  | 6. առնուզ զկատարեալ նահա                          |
| 7. ՏԱԿՈՒԹԻՒՆՆ:             | 7. տակութիւնն:                                    |

Այս համագրությունից պարզ երևում է, որ 146-րդ նախադասությունը իմբագրված է, և նախորդող «Իսկ կորովին Վարդան իւրովք քաջ նիզակակցաւքն» հատվածը չի կարող նույնությամբ պատառիկում լինել: Առկա տարբերություններն են՝

- «Իսկ կորովին Վարդան իւրովք քաջ նիզակակցաւքն...» - Պատառիկում առաջին տողը, որտեղ կարող էր լինել այս նախադասության մասը չի երևում<sup>28</sup>:
- Պատառիկի երկրորդ տողի սկզբում առկա է «բազմին» գրանշանների խումբը, որն ԳՀ բնագիրը չունի: Հստ ամենայնի՝ նախորդ տողի վերջում պետք է լինի «պատե» գրերի խումբը, հաջորդ տողի սկզբի գրերի խմբի հետ կազմելու համար «պատերազմին» բառը: Սակայն, ինչպես տեսնում ենք, 146-րդ նախադասությունը ԳՀ բնագրում առհասարակ չունի «պատերազմին» բառը:<sup>29</sup>
- Հաջորդող «ոչ սակաւ նախնիրս» հատվածը նույնությամբ կրկնվում է թե պատառիկում, թե ԳՀ բնագրում:
- Վերջին «ի տեղուցն գործեաց» բառակապակցությունը ԳՀ բնագրում

<sup>27</sup> Այս նախադասությունը ոչ այն է Եղիշինն է, ոչ այն է խմբագրի կողմից իր ժամանակների իրադարձություններն ակնարկող դիտարկում-մեջբերում:

<sup>28</sup> ԳՀ բնագրի տարբերություններում կան երկու մեկական ձեռագրերով վկայված ոչ էական տարբերություններ՝ «իսր» կամ «իւրով» փոխարեն «իւրովք»:

<sup>29</sup> Պատառիկի բնագրում այս բառը կա երկու տեղում: Այլ ձեռագրերով այսպիսի տարբերություն նկատված չէ:

- ունի մի շարք տարրնթերցումներ<sup>30</sup>:
- Միայն պատառիկն ունի «ի մեծ պատերազմին» բառակապակցությունը:
  - Պատառիկն ունի «յորում եւ ինքն» փոխարեն «յորում տեղտղ եւ ինքն իսկ»<sup>31</sup>:
  - Մնացած «արժանի եղեւ առնով զկատարեալ նահատակութիւնն» հատվածը նույն է թե պատառիկում և թե ԳՀ բնագրում<sup>32</sup>:

Նախադասության այսօրինակ մանրամասն համադրումը ցուց է տակիս, որ մենք գործ ունենք նույն հատվածում, նույն միտքը արտահայտող սակայն էական նրբերանգներով մեկը մյուսից տարբերվող երկու տարբեր բնագրերի հետ: Պատառիկի ձախ սյունակում վնասված յոթ տողերի և աջ սյունակի առաջին տողի տեքստը վերականգնելու համար մենք ունենք երկու հնարավոր փնտրութիւն «բանալի» բառեր: Դրանք են «Քրիստոսի» բառը ձախ սյունակի 18-րդ տողում և «բազմի» անհայտ բառի (ենթադրաբար՝ «պատերազմին») վերջակայքում «Քրիստոսի» բառը գործածված է վեց անգամ, իսկ «բազմին» վերջակայքում «Քրիստոսի» բառը միայն «պատերազմին» բառն է և գործածված է հինգ անգամ: Իր հերթին «պատերազմ» բառը այլ հոլովմամբ և այլ վերջակայքում գործածված է ևս վեց անգամ:

«Քրիստոսի» բառով հնարավոր չեղավ որևէ փոքր ի շատէ համընկնող հատված հայտնաբերել: Իսկ «պատերազմ» բառն այդ հնարավորությունը ընձեռնեց: Այն զանազան հոլովումներով հանդիպում է 14-րդ նախադասությունում «պատերազմուն», 22-ում «պատերազմին», 47-ում «պատերազմական», 106-ում «զպատերազմն», 107-ում «պատերազմի» և «պատերազմ», 121-ում «պատերազմին» ձևերով: Իսկ «պատերազմին» ձևով ինչպես արդեն նշել էինք հանդիպում է հինգ տեղում՝ 8-րդ, 10-րդ, 12-րդ, 50-րդ և 73-րդ նախադասություններում: Մեր պրատումների ընթացքը ավելորդաբար շարադրելու համար, միանգամից ներկայացնենք 5-10-րդ տողերի միջակայքը, որով հնարավոր է վերականգնել պատառիկի պակասող հատվածը:

Այս դեպքում բավարար չէ այն սկզբունքը, որ մինչ հիմա գործածում էինք: Խմբագրված տեքստը եթե պարզապես ներմուծված կամ կրծատված

<sup>30</sup> Մասնավորապես տասը ձեռագիր, երկու տպագիր և չորս ձառընտիր օրինակներ ունեն պատառիկի հետ նույն «գործեց» ձևը, իսկ յոթ ձեռագիր և մեկ տպագիր օրինակ ունեն ԳՀ բնագրի հետ նույն «գործեց» ձևը:

<sup>31</sup> Ինը ձեռագիր, մեկ տպագիր եւ մեկ ձառընտիր չունեն վերջին «իսկ» բառը:

<sup>32</sup> ԳՀ բնագրի տարբերցումներում միայն մեկ ձեռագիր ունի «նահատակութեանն պատկան» ձևը:

հատվածներ ունի, ապա շատ ավելի դյուրին է տողում եղած գրերի քանակով և պահպանված գրերի համընկումով վերականգնել տեքստը: Իսկ եթե տեքստը անձանաշելիորեն աղճատված է կամ վերաշարադրված, ապա մնում է պատառիկում պահպանված ընդհանուր բովանդակությանը իր շարադրանքով առավելապես մոտ հատվածում փնտրել-գտնել այնպիսի բառեր, որոնք կարող են ունենալ պատառիկում պահպանված տողերի վերջավորություն-գրանշանները: Ազատ խմբագրված տեքստում կարող են լինել նաև բառերի հետևառաջումներ: «Անհայտ խմբագրելը» կարող էր դուրս թողնել որևէ հատված և տեղը նույն միտքը վերաշարադրել այլ կերպ, կամ ընդարձակելով շարադրած միտքը հավելեր և անձանաշելիորեն ճոխացներ այն: Սակայն նախնական տեքստի ինչ-ինչ բառեր ու արտահայտություններ նոր շարադրանքում իր իսկ խմբագրման մեջ, անպայմանորեն պետք է որ օգտագործեր:

Վերծանության համար ընդունելով նախնական այսօրինակ շափանիշներ՝ փորձենք մեր ունեցած գրանշանների խմբերով վերականգնել վնասված տողերը: Հստ այդմ 5-10-րդ տողերի միջակայքում մենք փնտրելու ենք «...անոչ...», «...վ անե...», «...երովֆ...», «...դեցեա...», «...Քրիստոսի... յո...», «...շափ պա...», «...ու...» և «...րազմին...» վերջավորություններով կամ մասեր ունեցող բառեր, որոնց համադրմամբ ոչ միայն տողերի վերջավորությունները պետք է համընկնեն, այլև 3-րդ նախադասությունը 146-ին պետք է կապեն տրամաբանական շարաժարությամբ: Իսկ վերջավորությունների կամ բառերի մասերի կուտակումները շարադրանքի մեջ մեկը մյուսին կամ պետք է հաջորդեն, կամ իրար շատ մոտ լինեն:

Վերջից՝ աջ սյունակի առաջին տողից գալով նախ տեղադրենք «պատե» մասնիկը որպեսզի երկրորդ տողի «բազմին» մասնիկի հետ կազմի «պատերազմին» բառը: Նկատենք, որ տողի առավելագույնը 20 գրանշաններից չորսն արդեն հայտնաբերված են: Ազա հաշվի առնելով, որ ձախ սյունակի վերջին 20-րդ տողը վերջանում է «ու» գրով՝ փորձենք տեղադրել 10-րդ նախադասության «պատերազմին» բառից հետընթացով «համագունդի հասանինի ի գործ պատե-բազմին»: Ճիշտ 20 գրանշանով այս հատվածը համընկնում է աջ սյունակի առաջին տողին, իսկ ձախ սյունակի վերջին տողից ունենում ենք «համագու» գրանշանների խումբը, ընդամենը յոթ գրանշան: Մնում է գտնել շուրջ 13 գրանշան այս տողի համար: Զախ սյունակի 19-րդ տողը վերջանում է «...շափ պա...» գրանշանների խմբով: Բառի սկզբում «պա» մասնիկն ունեցող ամենահարմար բառը 8-րդ նախադասության «պատրաստութեամբ» բառն է, որ իր տեղը դրվելով կազմում է 20-րդ տողը՝ «պա – տրաստութեամբ համագու», նորից ճիշտ 20 գրանշանով: Նախընթացի տրամաբանությամբ 18-րդ տողում ունենք «...Ք[րիստոս]ի... յո...»: Վերջին «յո» մասնիկը բառա-

սկզբում ունեցող որևէ բառ չունի, թեև ամենայն հավանականությամբ այն «յորում» հարաբերական գերանունն է: Հատկապես որ այն կրկնված է նաև նախադասության շարունակության մեջ՝ աց սյունակի չորրորդ տողում և շարահյուսական նույն տրամաբանության մեջ է գտնվում: Ընդ որում «պատրաստութեամբ» բառին նախորդում է «ամենայն» բառը, որի տեղը հանգիստ կարող էր լինել «անշափ»: Ուստի կիսով շափ վերականգնված 19-րդ տողը կունենա հետեւյալ պատկերը՝ «Ք[րիստոս]ի ▪ յո - րում ... անշափ պա...»: «Քրիստոսի» բառի հետ միասին այս հատվածի ընդհանուր տրամաբանությունը հուշում է, որ պակասող բառը 6-րդ նախադասությունում երկու անգամ օգտագործված «Քաջալերեալ» բայն է<sup>33</sup>, որի հետ միասին տողում գրերի քանակ հասնում է ճիշտ 20-ի: Ի մի բերենք ձախ սյունակի այս հատվածի վերականգնված պատկերը: Ահա այն.

- |                                 |                                |
|---------------------------------|--------------------------------|
| 18. [...] Ք[րիՍՏՈՍ]ի.30         | 2. [նդի հասանելով ի գործ պատե] |
| 19. [րում քաջալերեալ, ան]ԶԱՓ ՊԱ | 3. ԲՍ.ԶՄԻՆ ՈՉ ՍԱԿԱՒ ՆԱԽ...     |
| 20. [տրաստութեամբ համագ]ՈՒ      |                                |

Մնում է վերականգնել 14-18 տողերը, որտեղ 18-րդ տողում ունենք չորս գիր՝ «...Քի» յո...»<sup>34</sup>: Նախորդող 17-րդ տողը վերջանում է «...դեցեա...» գրանշաններով, որտեղ դ-ն երեսում է ե-ի տակ իր ելուստով: Այս մասնիկով միայն «եկեղեցի» բառն է որ զանազան հոլովումներով օգտագործված է բնագրում: Արևէ այլ բառ «...դեցեա...» մասնիկով հայտնաբերել հնարավոր չեղավ: Ենթադրում ենք, որ պատառիկում այն օգտագործված պետք է լինի գործիական հոլովով «եկեղեցեաւ»:

16-րդ տողի «ելովին» վերջավորությունը ինքնին կարող է լինել նաև բառի վերջավորություն և ոչ թե պարզապես մաս: Այսպիսի վերջավորությամբ ամենահարմար բառը 6-րդ նախադասությունում գործածված «միաբանեալք» բառն է, միայն թե «միաբանելովին» ձևով: «Միաբանելովին» բառի և 17-րդ տողավերջի «եկեղեցեաւ» բառերի միջև տեղադրում ենք 7-րդ նախադասության «յԱրտաշատ ընդ» բառերը, բացատրությունը թողնելով փոքր ինչ վերջում: 15-րդ նախադասության «...վ անե...» գրանշանների խումբը առավելագույնս կարող է համապատասխանել 7-րդ նախադասության «ժողովել» բառին, միայն թե «ժողով անել» ձևով: Իսկ 14-ի «...ան» ոչ...» գրանշանների խումբը համընկնում է 5-րդ նախադասության «իբրեւ ետես մեծն Վարդան» և նույնի «ոչ ինչ թերահաւատութեամբ զանգիտեաց» բառերին:

<sup>33</sup> 6-րդ նախադասությունում այն հետևյալ տեսքն ունի «...քաջալերեցաւ յանձն իւր եւ քաջալերեաց...»:

<sup>34</sup> «Քրիստոսի» բառը պատվո նշանով է:

Միայն թե անհրաժեշտ է պատառիկից բացառել «մեծն» ածականը և «քերահավատությամբ» մակբայը։ Վերականգնման համար առանձնացված այս բոլոր բառերը հերթականությամբ տեղադրելով ստանում ենք հետեւյալ պատկերը։

- |                                     |                                |
|-------------------------------------|--------------------------------|
| 14. [Իբրեւ Ետես Վարդ]ԱՆ.ՈՉ          | 2. [նդի հասանելով ի գործ պատե] |
| 15. [ինչ զանգիտեաց, այլ ժողով]Վ.ԱՆԵ | 3. ՐԱԶՄԻՆ ՈՉ ՍԱԿԱԿ ՆԱԽ         |
| 16. [լով ամենայն միաբան]ԵԼՈՎՔՆ      | 4. ՃԻՐՍ Ի ՏԵՂԻՌՁՆ ԳՈՐԾԵՐ Ի     |
| 17. [յԱրտաշատ ընդ Եկեղ]ԵՅԵԼ.        | 5. ՄԵՇ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ, ՅՈՐ         |
| 18. [և սրբոյ ովատին Յի]ՔԻՆ ՅՈ       | 6. ՈՒՄ ԵՒ ԻՆՔՆ ԱՐԺԱՆԻ ԵՂԵՒ     |
| 19. [բում բաջակերեալ ան]ԶԱՓ ՊԱ.     | 7. ԱՌՆՈՒԼ ԶԿԱՏԱՐԵԱԼ ՆԱՀԱ       |
| 20. [արաստորեամբ համագ]ՈՒ           | 8. ՏԱԿՈՒԹԻՒՆՆ:                 |

**Փորձենք հիմնավորել մեր կատարած ընթերցումները մի այլ մեթոդով։** Նախ կատարված աշխատանքի ամբողջական պատկերն ունենալու համար միահար շարադրանքով ներկայացնենք պատառիկի վերծանված տեքստը։ Այնուհետև համադրելով ԳՀ բնագրի հետազոտվող հատվածի հետ փորձենք երկրորդական նախադասությունների տարանջատմամբ վեր հանել հիմնական մտքերը, և տեսնենք արդյոք վերծանված տեքստի շարադասությունը շի՞ տուժում և հաղորդում է ԳՀ բնագրի հիմնական ասելիքը։

« 1. Մեծ է սէրն Աստուծոյ քան զամենայն մեծութիւն երկրաւոր եւ այնպէս աներկեւլս առնէ զմարդիկ՝ իբրեւ զանմարմին զաւրս հրեշտակաց, որպէս անդստին [ի սկզբանէ է տեսանել զբազումն բազում անգամ ի բազում տեղիս, 2. որ սիրովն Ա[ստուծոյ] իբրեւ զինու վառեալք • ոչ ինչ զանգիտելով ի մահուանէ անձանց, կամ ի յափշտակութիւնէ ընչից • կամ ի խողխողումաց սիրելեաց, • կամ ի գերութիւնէ ընտանեաց, • առ ոչինչ համարեցան զայս ամենայն անցս շարշարանաց.՝ այդ միայն միաբան կալ ընդ Ա[ստուծոյ]:»

5-10. Իբրեւ Ետես Վարդան. ոչ ինչ զանգիտեաց, այլ ժողով ամենայն միաբանելովքն յԱրտաշատ ընդ Եկեղեցեաւ սրբոյ ուխտին Յ[իսուս]ի Ք[րիստոս]ի՝ յորում բաջակերեալ անշափ պատրաստութեամբ համագունդք հասանելով ի գործ պատե(146.)րազմին ոչ սակաւ նախնիրս ի տեղուցն գործէր ի մեծ պատերազմին, յորում եւ ինքն արժանի եղեւ առնով զկատարեալ նահատակութիւնն»։»

**Ստորև ԳՀ բնագրի քննվող հատվածում ընդգծել եւ ապա առանձնացրել ենք այն բառերն ու բառակապակցությունները, որոնք համարել ենք տվյալ նախադասություններում վերծանության համար օգտակար։ 9-րդ նախադասությունը ճակատամարտին մասնակցած զորավարների անվանացանկն է, որ**

պատառիկի պակասող հատվածի լրացման համար նշանակություն չունի, ուստի և նկատի չենք առել:

- 5 «Քանզի իրեւ ետես մեծն Վարդան զերկպառակութիւն աշխարհին իւրոյ, ոչ ինչ թերահաւատութեամբ զանգիտեաց», - իրեւ ետես Վարդան ոչ ինչ զանգիտեաց:
- 6 «Թէպէտ և ստուգեալ գիտաց զբազմաց ալլոց ևս զերկմտութիւն, որ դեռ ևս ընդ նմա միաբանեալք էին, բաջալերեցաւ յանձն իւր և քաջալերեաց զզաւրսն իւր. քանզի ինքն իսկ բռնացեալ ունէր զթագաւորանիստ տեղիսն միաբանութեամբ նախարարացն, որ ոչ քակեցան ի սուրբ ուխտէն». - բաջալերեցաւ ի սուրբ ուխտէն:
- 7 «Հրաման տուեալ ամենայն զաւրացն ժողովել յԱրտաշատ քաղաք, փոխանակ յետս կացելոցն որ ելին զհետ իշխանին Սիւնեաց, գեղբարս կամ զորդիս կամ զեղբարցն որդիս ի տեղի նոցա մատուցանէր, և զիւրաքանչիւր զաւրս տայր նոցա, զի դեռ ևս ինքն ունէր զամենայն աշխարհն», - ժողովել յԱրտաշատ:
- 8 «Եւ փութով ամենեքեան ի տեղի պատերազմին եկեալ հասանէին իւրաքանչիւր զաւրաւք եւ ամենայն պատրաստութեամբ, նոքա եւ որ բռնքն հաստատուն կացեալ էին ի տեղուցն». - ամենայն պատրաստութեամբ:
- 10 «Առքա ամենեքեան համագունդք հասանէին ի գործ պատերազմին ի դաշտն Արտագու եւ լինէր հանդէս համարուն վաթսուն եւ վեց հազար այր ընդ հեծեալ եւ ընդ հետեւակ». - համագունդք հասանէին ի գործ պատերազմին:

Ուշագրավ է, որ ընտրված գլխավոր նախադասությունները մեկը մյուսին կցելով, կապելով միմյանց «ալլ» և «եւ» շաղկապներով ստանում ենք համահունչ, կանոնավոր մեկ նախադասության ուրվագիծ «...իրեւ ետես Վարդան ոչ ինչ զանգիտեաց - [այլ] բաջալերեցաւ ի սուրբ ուխտէն - [եւ] ժողովել յԱրտաշատ - ամենայն պատրաստութեամբ համագունդք - հասանէին ի գործ պատերազմին»:

**Պատառիկում Եղշեի պատմության բնագիրը համառոտված՝ թե՛ բուն բնագիրն է, ԳՀ բնագիրն է, ԳՀ բնագիրն է հետագա խմբագրման-հավելման արդյունք, թե պատառիկը համուստման: Այս հարցերի պատասխանը տեքստաբանական մանրակրկիտ ուսումնասիրությունը կարող է միայն տալ: Առաջիմ հեռու մնալով նման վարկածի քննարկումից, փորձենք հնարավոր բոլոր փաստարկներով հիմնավորել պատառիկի վերծանությունը:**

Բովանդակային իմաստով ինչպես տեսնում ենք վերծանված հատվածը սահուն շարադասությամբ կապվում է թե նախորդող նախադասություններին և թե հաջորդող: Ինչը այնքան էլ սահուն չէ ԳՀ բնագրում: Ինչպես նկատել էինք, 4-րդ նախադասությունը առհասարակ մի միջանկյալ նախադասություն

է, որ անցյալում և «Հեղինակին» կամ «խմբագրին» ժամանակակից իրադարձությունների գոհերին «նահատակություն» բնորոշումն է տալիս: 5-րդ նախադասությանը նախորդող նախադասություններում ոչ մի խոսք չկա «իր աշխարհի» երկպառակության կամ թերահավատության արժանի որևէ բանի մասին: Այն ավելի շուտ կարող էր կապվել Դ. եղանակի բովանդակության հետ: Հակառակ դեպքում պետք է ենթադրել, որ, ի հակադրություն «զբագում բազում ի բազում տեղիս» գոհողության պատրաստ նախնիների, հեղինակի ժամանակակիցները նույն տոգորումով պատրաստ չէին պատերազմի: Իսկ ահա նախադասության ընդգծված գլխավոր անդամներով այն լիովի կապվում է առաջին երկու նախադասությունների հետ: Այսինքն՝ տեսնելով հերոսական գոհողությունների ու գրկանքների պատրաստ զինակիցներին, որ նկարագրված են առաջին երկու նախադասություններում, նա՝ վարդանը, ոչնչից չի վախենում. - «Թիրեւ եաես Վարդան ոչ ինչ զանգիտեաց»: Ասել է, թե առաջին երկու նախադասություններում բերված գոհողության օրինակները վերաբերում են ոչ թե հեռու անցյալին, այլ հեղինակին ժամանակակից իրադարձություններին, որոնց մասին նա պատմել է կամ պատրաստվում է պատմել առաջիկա շարադրանքում:

Բնագրի այսօրինակ քննությունը ցուց է տալիս թե որքան տարբեր է պատառիկի և ԳՀ բնագրի նույն հատվածի բովանդակության տրամաբանությունը: Այստեղ ոչ միայն կարեոր են առկա բնագրային տարբերցումները, այլև իմաստային, պատմության նկարագրության և մեկնաբանման ոճերը, դեպքերի, իրադարձությունների ներկայացման տրամաբնությունն ու դրանց հաջորդականությունը: Այսօրինակ ակնբախ տարբերությունները թույլ չեն տալիս մեզ պատառիկի բնագրիր համարել պարզ համառոտում: Ավելի շուտ հուշում են, թե մենք գործ ունենք «Վարդանանց պատերազմի» մի նոր, մինչ այժմ հայտնի բնագրից տարբեր բնագրի հետ:

Կարելի է թերեւս շարունակել և նոր փաստարկներ բերել հօգուտ մեր վերծանության, սակայն, բերված փաստարկները բավարար համարելով, պարզապես արձանագրենք, որ քանի դեռ նոր, մի այլ ավելի համոզիլ վերծանության տարբերակ չի առաջարկվել, սույն վերծանությամբ պետք է համարենք, որ 1ա պատառիկի ձախ սյունակը սկսվում է «Վարդանանց պատերազմի» ե. եղանակի 1-2 նախադասությունների մասերով, այնուհետև շարունակվում 5-10 նախադասությունների միջոցով վերականգնված մի նոր հատվածով և ապա միանում է 146-րդ նախադասությանը ԳՀ բնագրից տարբեր մի բոլորովին այլ նախադասությամբ:

Պատառիկի 1ա էջի աջ սյունակն այնուհետև դյուրընթեռնելի է: ԳՀ բնագրի հետ 146-րդ նախադասության տարբերություններն իր տեղում նշել ենք,

ուստի հերթականությամբ, ըստ նախադասությունների նշենք պատառիկի բնագրում առկա էական տարբերությունները<sup>35</sup>:

**147-ում** պատառիկն ունի «մայրաւորաց երեւելին», ԳՀ բնագիրը չունի «երեւելին»:

**148-ում** «զբեկորս նիզակացն» ] «զբեկումն նիզակացն»:

**149-ում** «վանեալ» ] «վատնեալ»; «դարձեալ զմիմեանս» ] «դարձեալ միաանգամ զմիմեանս»:

**150-ում** պատառիկն ունի «մինչեւ ի մուսս արեգանն» ] «Եւ մինչեւ ի մուսս արեգականն անդադար լիներ գործ դառնութեանն»: Պատառիկում այս նախադասությունը նախորդի շարունակությունն է «դարձեալ զմիմեանս սատակէին մինչեւ ի մուսս արեգանն»:

**151-152 – Պատառիկը չունի այս նախադասությունները:**

**153-** Պատառիկն ունի միայն նախադասության կեսը՝ «Քանզի ոչ եր կողմն որ յաղթեաց, եւ կողմն՝ որ պարտեցաւ»: Զունի «այլ բազի ընդ բազս ելեալ երկոնին կողմանքն ի պարտութիւն մատնեցան»:

**154-155-ը** նույն են երկուսում էլ:

**156-** Պատառիկում չկա «որ անդէն ի տեղտջն կատարեցան» մասը:

**157-167** նախադասությունները մանր տարբերություններով նույն են:

**168-ում** Պատառիկն ունի, իսկ ԳՀ բնագիրը ոչ՝ «որք մեծաւ ճգնութեամբ վասն սուրբ հաւատոց ի վերայ սուրբ եկեղեցւոյ պատերազմեալ կատարեցան ի Ք[րիստո]ս» հատվածը:

**169-ի** սկիզբը՝ որ պատառիկի առաջին տողում պետք է լիներ, չի պահպանվել: ԳՀ բնագրի «Խսկ ի կողմանէ ուրացելոցն» փոխարեն վերականգնել ենք «Փսկ ի կողմանէ հեթանոսաց» ձևով: Նկատի ենք առել ԳՀ բնագրի տարընթերցումներից մեկը՝ «ուրացելոցն եւ հեթանոսաց»: Քանի որ պատառիկի տողում կարող էր տեղավորվել այս բառերից միայն մեկը, նախընտրեցինք «հեթանոսաց» բառը, նկատի ունենալով, որ պարսից բանակի զոհված զինվորները չէին կարող «ուրացողներ» կոչվել, այլ միայն «հեթանոսներ»: Հակառակ դեպքում ճակատամարտը պետք է տեղի ունեցած լիներ հայերի և հայերի միջև:

**170-ում** էական տարբերություն չկա:

**171 - Պատառիկն ունի** «զի ետես երնապատիկ զհարուածս» փոխարեն ԳՀ-ի «Մանաւանդ իբրեւ ետես զանհնարին հարուածսն»: Այնուհետև պատառիկը չունի «...բեկա անկա զարութիւն ուժոյն իւրոյ...» մինչև

<sup>35</sup> Ոչ էական տարբերությունները տե՛ս հավելվածում վերծանությունների տարընթերցումներում:

**Զ.** Եղանակի 7-րդ նախադասության «...իրեւ ոչ կամաւ իջեալ կացին առաջի,...»: *Փոխարենը այս ամբողջ հատվածի ե. եղանակը, առանց Զ.-ի վերնագրի, միմյանց է կապվում հետևյալ հատվածով «...իսկ եփն ի զնդին Հայոց մասն ինչ յամրոցի, եւ երթեալ զաւըն պարսից զալ ի խաղաղութիւն, որոց եկեալ...» այնուհետև ինչպես ԳՀ բնագրում:*

**Զ.** Եղանակի 8-10-ը նախադասությունները պատառիկում և ԳՀ բնագրում քերականական մանր տարբերություններով նույնն են:

*Պատառիկի 2թ էջի աջ այունակը ավարտվում է 10-րդ նախադասությանը հաջորդող երեք տողերով, որտեղ պահպանվել են 10-րդ նախադասության վերջին բառի մասը՝ 18-րդ տողում «Երեքտա-սանին», 19-րդ տողում «յանին» և 20-ում «գտեալ» գրերը: 11-րդ նախադասությամբ այս տողերը հնարավոր շեղավ վերականգնել: Դիմելով արդեն փորձված մեթոդին 11-րդ նախադասությունից հետո մինչև վերջ ընկած ողջ միջակայքում «յանին» մասնիկ և «գտեալ» բառն ունեցող հատվածներ գտանք 42-43 նախադասություններում «գտեալ»ը՝ «գտին» ձևով, իսկ «յանին»ը՝ «յանինայ» ձևով: Այս նախադասությունների միջոցով էլ փորձել ենք վերականգնել 18-20-րդ տողերը: ԳՀ բնագրում այս նախադասություններն ունեն հետևյալ պատկերը՝*

**42** «Եւ գտին անդ գունդ բազում ի զաւացն արենմի, որ գերի առնու կամէին զամբականս աշխարհին. դարձեալ եւ կարծէին եւս, եթե գանձք նախարարացն անդ իցեն, զասն այնորիկ եւ յանինայ յուզէին զվայրսն:

**43** Նա եւ տեսին եւս անդ ի գեսլս երկուս, որ գեկեղեցիսն այրեցեալ էր. առաւել եւս վասն այնր ի նախանձ բարկութեան բրդեցան»:

*Նախադասությունների ընդգծված հատվածներով վերականգնվում է պատառիկում պակասող հատվածը, որոնց համարությամբ, նախադասության հիմնական միտքը, ասելիքը, սահուն շարադասությամբ կարող էր լինել՝*

*«[...Եւ գունդ մի արքունի] յանին[այ յուզէր զվայրսն,] գտեալ [ անդ ի գեւզս երկուս...]»:*

*Ստորև ներկայացվող ազգուսակը պատառիկի վերականգնված 2թ էջի աջ այունակի վերջին երեք տողերն են: Ինչպես և նախորդներում, նշված են՝ ձախ կողմում տողերի հերթական համարները, իսկ աջում՝ տողում գրերի հնարավոր քանակը:*

18. «ԱԱՆՔՆ: [42-43....Եւ գունդ մի արքունի] 21

19. ՅԱՆԻՆ[այ յուզէր զվայրսն,] 20

20. ԳՏԵԱԼ [ անդ ի գեւզս երկուս]» 20

Ամբողջացնելով պատառիկի վերծանությունը, ստորև, ըստ գիտական հրատարակության, ներկայացնում ենք Եղիշեի «Վարդանանց պատերազմի» ե. եղանակը, նախադասություն առ նախադասություն, նկարագրված իրադարձությունների սղագրությամբ, դրվագ առ դրվագ նշելով իրադարձությունների առկայությունը պատառիկում:

Ինչպես իր տեղում նշել էինք, պատառիկի 1ա էջում պահպանված երկրորդ տողը (առաջին տողը վնասված է) «Վարդանանց պատերազմի» առաջին նախադասության վերջից է՝ «զբազում բազում անգամ ի բազում տեղիս», որին միանում է երկրորդ նախադասությունը որոշ կարեւոր տարբնթերցումներով<sup>36</sup>: Այնուհետև 3-4 նախադասությունները չկան պատառիկում: 5-10 նախադասությունները այլ շարադասությամբ՝ առանց ճակատամարտին մասնակցած նախարարների անունների թվարկման (9-րդ նախադասություն), հիմնական միտքը արտահայտում են: Որից հետո չկան ճակատամարտին Հովսեփ և Ղևոնդ երեցների, ինչպես նաև այլ քահանաների ու պաշտոնյաների մասնակցության մասին դրվագը (11-12), Վարդան Մամիկոնյան սպարապետի զորքի առջև արտասահած ճառը (13-43), զինվորների նկատմամբ նրա տածած հոգատարության, խնամքի, նրանց զինելու, ոգևորելու, Մակաբայեցոց գրքից հատվածներ կարդալու, այնուհետև զորքը ճակատամարտի դաշտում դասավորելու նկարագրությունը (44-51): Այնուհետև պարսկական զորքի Հեր և Զարեան համելը, որտեղ սրանք բանակում և ամրություններ են կառուցում, ապա ասպատակում շրջակա գավառները (52-54), իսկ հետո Առանձնար Ամատունու գլխավորությամբ հայոց զորքի հարձակվելը և պարսից ասպատակող զորաբանակի շախօշախվելը (55-57), Վասակ Սյունի մարզպանի բանագնացներ ուղարկելը հայոց բանակ (58-59), Ղևոնդ երեցի պատասխան խոսքը բանագնացներին (60-111), Ղևոնդի խոսքից հետո պատարագ անելն ու երեխաներին մկրտելը, որից հետո Հայոց զորք երդվում է (112-114): Ապարդյուն բանագնացությունից հետո պարսիկների հայոց ռազմավարության մասին հարցուփորձ անելը մարզպանին և հետո մարտական փղերը ըստ գնդերի տեղաբաշխելը (115-116), մարզպանի պարսիկ զորավարներին ուղղված խոսքը, որից հետո նա պարսից զորքին տարբերանշաններ ու դրոշներ է տալիս ու դասավորում զորքը (117-126): Իսկ նույն ժամանակ սպարապետը մարտական դիրքերով դասավորում է Հայոց զորքը (127-132), այնուհետև պատմում է ճակատամարտին կողմերի պատրաստության ու զորքերի նկարագրության մասին (133-136), և հետո ճակատամարտի նկարագրությունը, սպարապետի ներխու-

<sup>36</sup> Երկրորդ նախադասությունում չկան «մարդիկ», «իման», «խնայեցին», «փրեւ զանարի», «զորով վատասիրտմ»՝, «կամ» բառերն ու «զի ի նմանէ միայն ... ի միտս իւրեանց» հատվածը:

Ժելը պարսից բանակի աջ թեր (137-141), պարսից հակահարվածն ու սպարապետի շրջապատման մէջ ընկնելը (142-145):

Հաջորդ 146-րդ նախադասությունում որը մասմբ կա պատառիկում խոսվում է սպարապետի «ոչ սակաւ նախնիրս» գործելու և ապա զո՞վելու մասին: Այստեղ մինչև «գործեաց» բառը պատառիկը չունի, այլ 5-10 նախադասությունների միջոցով վերականգնվելով կապվում է նախադասության «յորում եւ ինքն...» մասին և սահուն շարունակվում ինչպես ԳՀ-ում: Ապա ճակատամարտի նկարագրությունն ու ճակատամարտից հետո մինչև ուշ երեկո կոտորածը, մանր խմբագրումներով պատառիկում կա (147-150)<sup>37</sup>: Ճակատամարտից հետո Ավարայրի դաշտի արյունոտ տեսարանի նկարագրությունը պատառիկում չկա (151-152): Արան հաջորդում է Եղիշեի ճակատամարտին տված գնահատականը (153-156)<sup>38</sup>: Մանր տարբերություններով նույնն է ԳՀ-ում և պատառիկում զո՞ված նախարարների թվարկումն (157-167) ու վասն հավատո նահատակվածների թիվը՝ 1036 հոգի (168)<sup>39</sup>: Այնուհետև պատառիկում հաղորդվում է պարսից բանակի զո՞ված զինվորների և ազնվական ծագում ունեցողների թիվը, ապա Մուշկան նյուսալավուրտի սրտնեղելու մասին (169-171)<sup>40</sup>:

Շարունակությունը՝ որը նկարագրվում է Մուշկան նյուսալավուրտի հոգեկան ապրումները, պատառիկը չունի (172-176)<sup>41</sup>: 173-րդ նախադասությունում Մուշկան նյուսալավուրտը ճակատամարտի նման ելքի համար երկուղում է թագավորին տեղեկացնել: Այնուհետև Վասակի մասին է, թէ ինչպես է նա ամրություններում ապաստանածների դեմ ծրագրում մարտնչել, խոստումներով հորդորում հանձնվել, իսկ զորքն Հայոց շի հավատում տրված խոստումներին: Զ. Եղանակի 1-7 նախադասությունները, որ նույնպես պատառիկում չկան, ամրոցում ապաստանածների վրա Մուշկան նյուսալավուրտի

<sup>37</sup> 150-րդ նախադասությունում պատառիկը չունի «միւսանգամ», «անդադար լինէր գործ դասութեանն», մնացածը մանր տարբերություններով նույնն է:

<sup>38</sup> 153-ում պատառիկը չունի «այլ բացի ընդ Էազս Եկեալ՝ Երկրին կողմանն ի պարտութիւն մատնեցան», 156-ում չկա «որ անդէն ի տեղտօն կատարեցան» մասը:

<sup>39</sup> Պատառիկն ունի շարունակություն, իսկ ԳՀ-ն ոչ՝ «որք մեծաւ նզնութեամբ վասն տուրք հաւատոց ի վերայ սուրբ Եկեղեցոյ պատերազմեալ կատարեցան ի Ք[րիստո]ս» հատվածը:

<sup>40</sup> 171-ից պատառիկն ունի «զի ետես երնապատիկ զիարուածս» փոխարեն ԳՀ-ի «Մանաւանդ իբրեւ ետես զանհնարին հարուածսն»: Այնուհետև պատառիկը չունի «...բեկաւ անկաւ զարութիւն ուժոյն իւրոյ...» մինչև Զ. Եղանակի 7-րդ նախադասության «...իբրեւ ոչ կամաւ իշեալ կացին առաջի,...»: Փոխարենը այս ամբողջ հատվածի ե. Եղանակը, առանց Զ. ի վերնագրի, միմյանց է կապվում հետևյալ հատվածով «...իսկ եին ի զնդին Հայոց մասն ինչ յամրոցի, եւ Երթեալ զաւրն պարսից գալ ի խաղաղութիւն, որոց Եկեալ...» այնուհետև ինչպես ԳՀ բնագրում:

<sup>41</sup> 172-րդ նախադասությունը կարծէս 171-ի ավելի ընդարձակ տարբերակը լինի:

դրդմամբ պարսից զորքերի հարձակման, ձախողման, նորից՝ մի քանի անգամ երդումներով ամրոցում ապաստանածներին հանձնվելու հորդորների և նրանց շավատալու մասին է: Այնուհետև Բակ անունով զորականի բերդից դուրս գալու, Վասակին ամբաստանելու և գիշերով, յոթ հարյուր զինակիցների հետ միասին բերդից դուրս գալու և փախուստի դիմելու մասին է:

Երկու հարյուր նահատակների վերջին խոսքը պատառիկում և ԳՀ բնագրում քերականական մանր տարբերություններով նույնն են (8-10):

Պատառիկն այնուհետև չունի Հովսեփի և Վեռնդ երեցների ու նրանց ընկերակիցների հանձնվելու, արքունիք բողոքելու, նրանց գերեվարման մասին պատմությունը: Մյուսները շավատալով և պարսից խոստումները մերժելով մեկը մյուսին քաջալերում են, թողնում իրենց տները, ապաստան գտնում լեռներում և անտառներում, ապավինում Խաղաղիքի, Տմօրիքի, Արցախի ամրոցներին: Պարսիկները օգնության եկած զորքերով արշավում են երկրի խորքերը, ճակատ տալիս Կապոյս լեռան ամրություններում ապաստանածներին: Իսկ Արշեն անունով մի քահանա հավատալով իշխում է ամրոցից, սակայն նրան եւ նրա ընկերակիցներին գերեվարում են: Իսկ Տմօրիքում ապաստան գտածները իշխելով ամրություններից հարձակվում են պարսից զորքերի վրա և ջախշախում: Նույնպես և Խաղաղիքում ապաստանածները հարձակվում և ջախշախում են Տայքում գտնվող պարսից զորքերը: Այս ամենը պատառիկը չունի (11-41): Եւ վերջապես պատառիկն ընդհատվում է արքունի զորքերի հետապնդումների, ավարառությունների, հայոց հակահարված տալու ու երկու հրկիզված եկեղեցիների մասին դրվագով (42-43)<sup>42</sup>:

Մնում է պատասխանել ամենակարենոր հարցին՝ պատառիկը ճառնտիրի, Հայսմավուրքի, Պատմագրքի մաս է, թե խմբագրված, համառոտված «Վարդանանց պատերազմի» հնագույն, նախնական օրինակի մասունք:

Պատառիկի բնագրում ե. եղանակի 176 նախադասություններից շուրջ 148-ը (3-4, 5-10, 11-145, 151-152, 172-176), իսկ Զ եղանակի 1-43 նախադասությունների միջև շուրջ 41-ը (1-7; 11-43) այսպիսով պակասում են<sup>43</sup>: Գիտական հրատարակության բնագրի համար օգտագործված ձեռագիր և տպագիր օրինակներից և ոչ մեկը այսօրինակ տարբնթերցում չունի: Միայն Զ. եղանակի համար ԳՀ ծանոթությունում նշված է, որ 18 ճառնտիրներ «լրիվ տեքստ չեն տալիս, այլ վերապատմում են, մասամբ կրծատում», բոլորովին չունեն 1-104 (կամ 107) նախադասությունները և դրանցում նկարագրված իրադարձու-

<sup>42</sup> Այս երկու նախադասություններով վերականգնվել են պատառիկի 2ր էջի վերջին երես տողերը:

<sup>43</sup> Պակասող նախադասություններից վեցը մասնակիորեն կամ ամբողջովին ձեւափոխված են պատառիկում ե. եղանակում 4-ը, իսկ Զ.-ում 2-ը:

թյունները: Համառոտելու կամ վերապատմելու իմաստով ինչ որ հարմար է Զ. եղանակին, որի հիմնական նյութը կարող ենք համարել Տիգբոնի դատավարությունը, բոլորովին անմեկնելի է Ե. եղանակի համար, որը գրեթե ամբողջությամբ ներկայացնում է Ավարայրի ճակատամարտի նկարագրությունը: Անիմաստ է անգամ այս ճակատամարտի համառոտելը: Իրադարձությունների ողջ շղթայի մեջ այն ամենակարևորն ու հիմնական դրվագն է:

Իսկական համոռոտագրումը Հայսմավուրքում «Արաց Բ., Օգոստոսի Է. Նահատակութիւն Սրբոց Վարդանանցն ի պատերազմն Պարսից» վերտառությամբ վկայաբանությունն է, որ պատառիկի հետ բաղդատելի չէ: Այն արդեն հայտնի «Վարդանանց պատերազմի» բնագրի մի պարզ սղագրություն է:

Եթե պատառիկի բնագիրը ծառընտիրի կամ Հայսմավուրքի անհայտ մի խմբագրություն չէ, ապա կարող ենք արդյոք համարել, որ պատառիկը «Վարդանանց պատերազմի» մի նախնական բնագրի մասունք է, ինչպես ենթադրում էր Գ. Խալաթյանը: Այս ենթադրությունը հեռու չէ իրական լինելուց, եթե ընդունենք, որ նախնական բնագրում չեն եղել Ե. եղանակի Ավարայրի ճակատամարտի, ինչպես նաև Զ. եղանակի տիգբոնյան դատավարության բնդարձակ նկարագրություններն ու Ե. եղանակում Ղեռնդյանց վկայաբանությունն ամբողջությամբ: Հնարավո՞ր է արդյոք, որ հետագայում Եղիշեի բնագրին նախ Ավարայրի ճակատամարտին նվիրված մի ինչ-որ ճառ հավելված լինի, ապա ավելի ուշ տիգբոնյան դատավարությունն ու Ղեռնդյանց քահանայից վկայաբանությունը: Այս տեսակետի օգտին չե՞ն արդյոք խոսում «Վարդանանց պատերազմի» եղանակների վերնագրերում հայտնի խճողումների փաստը: Զէ՞ որ մեր ճանաշած «Վարդանանց պատերազմի» բնագրի նախադրությունում հեղինակի կողմից շարադրված եղանակների վերնագրերից միայն առաջին երեքն են նույնանում, իսկ Դ. եղանակը փոքր-ինչ տարբերությամբ է միայն համապատասխանում բնագրում եղած համապատասխան եղանակների վերնագրերին: Մնացած Ե.<sup>44</sup>, Զ.<sup>45</sup> և Է.<sup>46</sup> եղանակները նախադրությունում շարադրված

<sup>44</sup> Նախադրությունում Ե. եղանակն ունի «զՅարձակումն արեւելեայց», իսկ բնագրում «Կրկին անգամ ընդդիմ կալ հայոց պատերազմաւ թագատրին պարսից» ձեր: ԳՀ-ի համար օգտագործված ձեռագրերից և ոչ մեկում չկա «զՅարձակումն արեւելեայց» ձեւով վերնագիր, ծառընտիրնեռում հայտնի է նաև «Վկայաբանութիւն սրբոց Վարդանանց» կամ «Պատմութիւն պատերազմին սրբոց Վարդանանցն» ձեւով:

<sup>45</sup> Նախադրությունում Զ. եղանակն ունի «զԲնդդիմանալն Հայոց պատերազմաւ», իսկ բնագրում «Յորում կարգագիր դարձեալ առամինութիւնն հայոց Եւ շարագոյն Եւ Երեւի անաւրէնութիւնն Վասակայց»: Միայն մեկ տպագիր՝ Անձեւացոց օրինակն ունի «յԵրկարումն իրացն խոռվութեան» ձեր, որը սակայն որպես Զ. եղանակ ընդունված բնագիրը նանաշում է որպես Ե. եղանակ, իսկ որպես Զ. եղանակ՝ «Պատերազմ հայոց» վերնագրով, նանաշում է Ե. եղանակի 115-րդ նախադրությունից մինչև վերջ ընկած հատվածը:

վերնագրերից բոլորովին տարբեր վերնագրեր ունեն բնագրում:

Ասպարեզում այս հարցերին նվիրված բազմաթիվ հետազոտություններ ու տեսակետներ կան, որոնք կարող են լրացնել կամ ընդհակառակը հերքել առաջ քաշված վարկածները: Նոր վերծանության առաջ քաշած հարցադրումներին պետք է պատասխանել ոչ միայն պատառիկում պահպանված բնագրի տեքստաբանական-բնագրագիտական քննությամբ, այլև գիտական հրատարակության համար օգտագործված բոլոր տարբերակներումները, ինչպես նաև «Վարդանանց պատերազմի» ուսումնասիրմանը նվիրված գիտական հարուստ ժառանգությունը նկատի ունենալով:

Ներկա հրապարկման հիմնական նպատակն իրականացրած համարելով, թողնելով Եղիշեի «Վարդանանց պատերազմի» համակողմանի ուսումնասիրությունը եւ մեզ հայտնի «Վարդանանց պատերազմի» մասեր ունեցող պատառիկների հրապարակումը ապագային, ամփոփելով՝ ասենք, որ կոնի քաղաքային գրադարանի համար 17 ձեռագրում պահպանվող պատառիկն իր առաջին՝ 1893 թ-ի հրապարակումից 115 տարի հետո էլ, նոր վերծանությամբ, էլ ավելի է արժելորվում: Այն հնագույնն է Եղիշեի «Վարդանանց պատերազմի» մասեր պարունակող մեզ հայտնի բոլոր պատառիկներից: Հնագրական տեսանկյունից շափականց ուշագրավ է և կարող է թվագրվել Է-Ը դարերով: Ամենայն հավանականությամբ՝ պատմագրքի մաս է, և ևս մեկ անգամ փաստում է Ե. Տեր-Մինասյանի այն միտքը, թե «Եղիշեի «Վարդանանց պատմության» սկզբնագիրն անկասկած ե դարի երկրորդ կեսի 460-464 թվականների գործ է», որ գրված է ականատես մարդու կողմից, և որ հետագայում «կարող է մասնակի կետերում ենթարկված լինել որոշ խմբագրման»<sup>46</sup>:

<sup>46</sup> Նախադրությունում է-ն ունի «զՅերկարումն իրացն խոռվութեան», իսկ բնագրում «Դարձեալ վասն նորին պատերազմին եւ շարշարանաց սուրբ բահանայից» ձեր, որն այլայլ ձեռագրերում ծանոթ է նաև «Արտամոյ եւրն յեղանակին ուրերորդ վասն շարշարանաց սուրբ բահանայիցն եւ նահատակութեան» վերնագրով, իսկ ձառընտիրների մեծ մասում «Վկայարանութիւն սրբոց Ղետնդեանցն» վերտառությամբ:

<sup>47</sup> Տե՛ս Եղիշե, Վարդանի եւ հայոց պատերազմի մասին, աշխարհաբար թարգմանություն, էջ 16:

### ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

| Կոնֆրերի վերծանությունը | Նոր վերծանություն                   |
|-------------------------|-------------------------------------|
| 1. Ջնջուած              | [...]                               |
| 2. [՞] ՞ Մի             | [...]ԳԱՄԻ                           |
| 3. [՞] ԱՐՍ              | [...]ՈՎՆ                            |
| 4. [՞] ԵԱԼՔ             | [...]ՈԵԱԼՔ▪                         |
| 5. [՞] ՄԱՀՈՒ            | [...]ՄԱՀՈՒ                          |
| 6. [՞] ՄԻՅԱ             | [...]ՄԻ ՅԱ                          |
| 7. [՞] ԶԻՑ              | [...]ԶԻՑ▪                           |
| 8. [՞] ՑՍԻՐԵՒ           | [...]Ց ՍԻՐԵ                         |
| 9. [՞] ՞ ի              | [...]ՈՒԹԻՒՆ                         |
| 10. [՞] ՞ ԵՆ            | [...]ԶԻՒԶ                           |
| 11. [...]               | [...]                               |
| 12. [՞] ԱՅ              | [...]ԱՅՂ                            |
| 13. [՞] ԼԲՆ ՞ Յ         | [...]Լ ԲՆՊ <sup>Ա[սոուծոյ]Յ</sup> , |
| 14. [՞] ԱՆ.ՈՉ           | [...]ԱՆ▪ ՈՉ                         |
| 15. [՞] ՎԱՆԵ            | [...]Վ. ԱՆԵ                         |
| 16. [՞] ԵԼՈՎՔ           | [...]ԵԼՈՎՔ▪                         |
| 17. [՞] ԼԵՅԵԱ           | [...]ՂԵՅԵԱ                          |
| 18. [՞] ՔԻ. ՅՈ          | [...]ՔԻ▪ ՅՈ                         |
| 19. [՞] Ա.ՔՊԻ           | [...]ԶԱ.Ք ՊԱ,                       |
| 20. [՞] ՈՒ              | [...]ՈՒ                             |

1. Համեմատական աղյուսակ  
պատառիկ 1ա (Դր-Գա) էջի ձախ սյունակի հին ու նոր վերծանությունների

## Վերծանություն - 1ա (Թբ-Գա)

- |   |  |
|---|--|
| <p>Թբ</p> <ol style="list-style-type: none"> <li>1. <sup>1</sup>[ի սկզբանէ է տեսանել]</li> <li>2. [զբազում բազում ան]ԳԱՄ Ի</li> <li>3. [բազում տեղիս: <sup>2</sup> որ սիր]ՈՎՆ</li> <li>4. [Ա/ստուծոյ] զինու վա]ՈՒԵԼՔ-</li> <li>5. [ոչ ինչ զանգիտելով ի] ՄԱՀՈՒ</li> <li>6. [անէ անձանց, կա]Մ Ի ՅԱ</li> <li>7. [փշտակութիւնէ ըն]ԶԻՑ-</li> <li>8. [կամ ի խողխողումա]Յ ՍԻՐԵ</li> <li>9. [լեաց, կամ ի գեր]ՈՒԹԻՒՆ</li> <li>10. [է ընտանեաց, առ ո]ԶԻՆԶ</li> <li>11. [համարեցան զայս ամենայն.]</li> <li>12. [անցս շարչարանաց,]ՅՅՅ</li> <li>13. [միայն միաբան կա]Լ, ԸՆԴ <sup>Ա/ստուծոյ</sup>,</li> <li>14. <sup>5-10</sup> [իբրեւ ետես Վարդ]ԱՆ ՈԶ</li> <li>15. [ինչ զանգիտեաց, այլ ժողով]Վ, ԱՆԵ</li> <li>16. [լով ամենայն միաբան]ԵԼՈՎՔ-</li> <li>17. [Արտաշատ ընդ եկեղ]ՊԵՑԵԱ.</li> <li>18. [ւ սրբոյ ուխտին Յր]Ք [ԻՍՈՏԱՅ]Ի- ՅՈ</li> <li>19. [բում քաջալերեալ ան]ԶԱՓ ՊԱ</li> <li>20. [տրաստութեամբ համագ]ՈՒ</li> </ol> | <p>1. <sup>146</sup>[նդք հասանելով ի գործ պատե]</p> <p>2. ՌԱԶՄԻՆ ՈԶ ՍՍԿԱԽ ՆԱԽ</p> <p>3. ՃԻՐՍ Ի ՏԵՂԻՈԶՆ ԳՈՐԾԷՐ Ի</p> <p>4. ՄԵՇ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ, ՅՈՐ</p> <p>5. ՈՒՄ ԵՒ ԻՆՔՆ ԱՐԺԱՆԻ ԵՂԵՒ</p> <p>6. ԱՌՆՈՒԼ ԶԿԱՏԱՐԵԱԼ ՆԱՀԱ</p> <p>7. ՏԱԿՈՒԹԻՒՆՆ: <sup>147</sup> ԵՒ ՅԵՐԿԱ</p> <p>8. ԲԵԼ ԳՈՐԾՈՅ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ՝</p> <p>9. ԱԻՐՆ ՏԱՐԱԺԱՄԷՐ, ԵՒ ՄԱ</p> <p>10. ԻՏ ԱՌ ԵՐԵԿՍ ԿԱՐՃԱՏԵՐ, •</p> <p>11. [բազմաց աւրհասք մա՞]</p> <p>12. ՈՒ ՀԱՍԱՆԵՐ, ՄԱՆԱԿԱՆԴ</p> <p>13. Ի ԹԱՆԶՐՈՒԹԵՆՔ ԱՆԿԵ</p> <p>14. ԱԼ ԴԻԱԿԱՆՅՆ ՄԱԻՏ ԱՌ Մ</p> <p>15. ԻՏ ԽԱՆՑԵԱԼ ԻԲՐԵՒ ԶՓԱ,</p> <p>16. ՏԱՀԱՐՍ ՄԱՅՐԱԿՈՐՍՅ ԵՐ</p> <p>17. ԵՒԵՒՆ: <sup>148</sup> ԱՆԴ ԷՐ ՏԵՍԱՆԵԼ</p> <p>18. ԶԲԵԿՈՐՍ ՆԻԶԱԿԱՅՆ ԵՒ ԶԽ</p> <p>19. ՈՐՏԱԿՈՒՄՆ ԱՂԵՂԱՆՅ</p> <p>20. ՎԱՍՆ ԱՅՆՈՐԻԿ • ՈԶ ԿԱՐԵՒՆ</p> |
|---|--|

<sup>1</sup> >զբազում; >զբազում բազում անգամ:

<sup>2</sup> մարդիք; >մարդիկ; իբրեւ զինու; բազում անգամ զինու: >իբրեւ; վառեալք էին; եւ ոչինչ; >խնայեցին; խնայեցին զանգիտելով իբրեւ զանարի (անարի) գոլով (>գոլով) կամ վատասիրտք (վատասաիրտս); >կամ ի մաշ անձանց; ի յափշտակութիւն; կամ ի խողխողումն սիրելեաց; ընտանեաց + ելանել ի հայրենի երկրէն եւ անկանել (անկանիլ) ի ստրկութիւն (ի ստուգութիւն) յաւտարութեան; համարեցան զայս; զայն; համարելով զայն; շարչարանացն; միաբանեցան; միաբանեալ; ընդ աստուծալ +զի ի նմանէ միայն մի՛ գերի ելցեն. եւ ամենայն երեւելի մեծութեանս զնա բաւական համարեցան՝ ընտրեալ (ընտրել ընդրեալ) ի միտս իւրեանց:

<sup>3-10</sup> Այս հատվածում պակասում է 8 տող՝ 7-ը ձախ սյունյակի ներքեւում եւ մեկ տող աջ սյունյակի վերեւում: Պակասող հատվածը վերականգնվել է 5-10-րդ և 146-րդ նախադասությունների միջոցով:

<sup>146</sup> գործեաց; գործեաց; >ի մեծ պատերազմին; ինքն + յորում տեղուց եւ ինքն իսկ; >իսկ; նահատակութեանն պսակ:

<sup>147</sup> յերկարեալ; երկարեալ; յերկարիլ գործոյ; տարաժամիւր; >մօս; առ ընդերեկս; առ երեկոյ; կարճէր; օրահանք; օրինահանք; >հասանէին; >անկեալ դիականացն; ~ դիականցն անկելոյ; անկեալ դիակացն; խթացեալ; >իբրեւ; զփայտահայրս (!); մայրեւորաց; >երեւեին:

<sup>148</sup> զբեկորս; զբեկումն; նիզակաց; իսկ ] եւ; >եւ; ~ զբեկումն աղեղանց եւ զխորտակումն նիզակաց; աղեղանցն; եւ ոչ իսկ; >կարէին; կարէին իսկ:

## Վերծանուրյուն - 1ր (Գա-Գը)

- |   |  |
|---|--|
| <p>Գա</p> <ol style="list-style-type: none"> <li>1. <sup>148</sup>[կալ ճշմարտիւ ի վերայ]</li> <li>2. ՍՈՒՐԲ ՄԱՐՄՆՈՅ ԵՐԱՆԵԼԵ</li> <li>3. ԱՅՆ. ԵԽ ՍԱՍՏԻԿ ԽՈՒՃԱ.Պ</li> <li>4. ՏԱԳՆԱ.ՊԻ ԷՐ ԿՈՂՄԱՆՅՑՆ</li> <li>5. ԵՐԿՈՅՑՈՒՆՅ ԱՆԿԵԼՈՅՑՆ:</li> <li>6. <sup>149</sup>ԵԽ ՈՐ ՄՆԱՅԵԱԼՔՆ ԵԽՆ՝ ՎԱ</li> <li>7. ՆԵԱԼՔ ԵԽ ՑՐՈՒԵԱԼՔ ԼԻՆԵԻՆ</li> <li>8. Ի ԼԵՌՆԱԴԱՇՏՄՆ • ԵԽ</li> <li>9. ՅԱՄՈՒՐՍ ԶՈՐՈՅՆ. ԵԽ ՅՈՐ</li> <li>10. ԺԱՄ ՊԱ.ՏԱՀԵԻՆ ՄԻՄԵԱՆ<sup>3</sup>:</li> <li>11. [ԴԱՐՁԵԱԼ ԶՄԻՄԵԱՆՆ ՍԱ.]</li> <li>12. ՏԱԿԵԻՆ: <sup>150</sup>ՄԻՆԶԵԻ Ի ՄՈՒՏՍ</li> <li>13. ԱՐԵԳԱՆՆ. <sup>151-152 153</sup>ՔԱՆԶԻ ՈՉ ԷՐ</li> <li>14. ԿՈՂՄՆ՝ ՈՐ ՅԱ.ՂԹԵԱՅ.՝ ԵԽ</li> <li>15. ԿՈՂՄՆ՝ ՈՐ ՊԱ.ՐՏԵՅԱ.՝ <sup>154</sup>ԲԱ</li> <li>16. ՅՅ ՔԱՆԶԻ ԱՆԿԵԱԼ ԷՐ ԶԱ.Ի</li> <li>17. ԲԱՎԱՐՆ ՀԱՅՈՅ Ի ՄԵՇ ՊԱ.</li> <li>18. ՏԵՐԱԶՄԻՆ.՝ ՈՉ ՈՓ ԳՈՅՅԻ</li> <li>19. ԱՅՆՈՒՀԵՏԵԻ Ի ՄԵԶ ԳԼԽ</li> <li>20. Ա.ԽՈՐ.՝ ՅՈՐ ՅԵՅԵԱԼ ԺՈՂՈՎ</li> </ol> | <p>1. [ԵԽՆ ԳՈՒՆԴՔ ՄՆԱԳԵԼՈՂՆ:]</p> <p>2. <sup>155</sup>ԹԵՊ[էտ եւ բազում այն էր]</p> <p>3. ՈՐ Ա.Պ[րեցան՝ քան թէ]</p> <p>4. ՈՐ ՄԵ[ուանն, սակայն]</p> <p>5. ՅԱՆԵ[ալ ցրուեցան, եւ]</p> <p>6. ՀԱ.ՍԵ[ալ անկանէին ի տե]</p> <p>7. ԿԻՍ ՏԵ[դիս յամուրս աշ]</p> <p>8. ԽԱ.ԲՀ[ին, եւ բռնանայ]</p> <p>9. ԻԽ Ի Վ[երայ բազում գաւ]</p> <p>10. Ա.Ո.Յ.Յ [եւ բերդից, զոր եւ ոչ]</p> <p>11. ՈՓ ԿԱ[րէր առնով իսկ:]</p> <p>12. <sup>156</sup>ԵԽ Ա[յս անուանք են քաշ]</p> <p>13. ՆԱ[հատակացն]</p> <p>14. <sup>157</sup>ՅԱ.Զ[գէն Մամիկոնէից]</p> <p>15. ՔԱ.ՁՆ [Վարդան Հարեւր եր]</p> <p>16. ԵՍՈՒ[ն եւ երեք արամբք.]</p> <p>17. <sup>158</sup>ՅԱ.Զ[գէն հորխոռունեաց]</p> <p>18. ԽՈՐԵ[նն կորովի ինն եւ]</p> <p>19. ՏԱ.Յ[ան արամբք.]</p> <p>20. <sup>159</sup>ՅԱ.Զ[գէն Պալունեաց]</p> |
|---|--|

<sup>148</sup> >սուրբ; մարմնոցն; մարմնոց; մարմնոյն; երանելոյն Վարդանայ] երանելեացն; երանելոյն; >սաստիկ; ի սաստիկ; >էր; տագնապի երկոցունց կողմանցն անգելոց; կողմանց; անկելոցն; անկանելոց:

<sup>149</sup> որք; եւ որ; էխն; վատնեալ; լինէին; ի լեառն եւ ի գաշտս; լեռնագաշտսն; լեառնագաշտսն; լեռնագաշտս; ի լեռն եւ ի գաշտս; ամուրս ձորոցն; ձորոյն; պատաճէին; դարձեալ + միւսանգամ; դարձեալ անդէն; սաստակէին:

<sup>150</sup> եւ մինչեւ ի մուտ; ցմուտս; ցմուտ; արեգականն; արեւուն; - Բոլոր ձեռագրերն այնուինեաւու ունեն՝ արեգանն + անդգամքար լինէր զործ դառնութեանն (դառնութեան): Այս նախադասուրյունը նախորդ 149-ի շարունակուրյունն է:

<sup>151-152</sup> >151-152 նախադասուրյունները:

<sup>153</sup> ոչ + եթէ; ~կողմ էր; եւ կողմ էր; եւ կամ կողմն; եւ կամ կողմ էր որ պարտեցաւ; պարտասորեցաւ; Բոլոր ձեռագրերն այնուինեաւու ունեն՝ պարտեցաւ + այլ քաջք ընդ քաջս ելեալ՝ երկորին (երկորեան) կողմանքն (կողմանք) ի պարտութիւն մատնեցան:

<sup>154</sup> մեծ սպարապետն ] զօրավարն; >մեծ; >ի մէջ; ի միշի; ի մէջ; ~ գլխաւոր ի մէջ; գունդք; գունդն:

<sup>155</sup> ապրեցան; ապրեցաւ; ապրեցանն; քան թէ (>թէ); քան որ եթէ; մեռան; ցրեցան; հասեալք; ի յամուրս; բազում քաղաքաց; գաւառաց եւ բերդաց; ամուր լ բազում; բերդաց; առնով իսկ ոք կարէր; առնով իսկ կարէր; զոր ոչ առնով կարէր; >եւ բերդից, զոր եւ ոչ առնով իսկ ոք կարէր; >զոր եւ ոչ առնով իսկ ոք կարէր:

<sup>156</sup> եւ այս եւ անուանք; եւ այս էր; նահատակացն+որ անդէն ի տեղուզն կատարեցան.; >որ անդէն ի տեղուզն կատարեցան; որք:

<sup>157</sup> Մամիկոնենից; Մամիկոնենից; Վարդան քաշ; եւ երեսուն; հարիւր եւ յսուն (յիսուն) եւ երեք; արամբ:

<sup>158</sup> հորխոռունեաց; հորէն; տասնեփնն; արամբ >Յազգէն հորխոռունեաց հորենն կորովի իննեւսասն արամբք:

## Վերծանություն - 2ա (Ա-Բա)

|     |  |   |
|-----|--|---|
| Ա.ա | 1. <sup>159</sup> [արին Արտակ յիսուն]        | 1. [եւ եւթն նահատակք, ընդ]                    |
|     | 2. [եւ եւթն արամբք.]                         | 2. Ինն ՄԵԾ ՆԱԽԱՐԱՐՍՆ ԱՆ                       |
|     | 3. [ <sup>160</sup> Յազգէն Գնթունէ]Ա.Յ ԶԱ.Ր  | 3. Դէն ի ՏԵՂԻՈԶՆ ԿԱՏԱՐԵՑԱՒ:                   |
|     | 4. [մանալին Տաճատ] ԻՆՆ ԵՒ                    | 4. <sup>167</sup> ԵՒ ՅԱ.ՐՔՈՒՆԻ ՏԱ.ՆԿ ԵՒ Ի     |
|     | 5. [տասն արամբք.]                            | 5. ՏԱ.ՆԿՆ Ա.ՐԾՐՈՒՆԵԱ.Յ ԵՒ                     |
|     | 6. [ <sup>161</sup> Յազգէն Դիմաքսէ]ՆԻՅ Ի     | 6. ՅԻՒՐԱՔԱՆՁԻԻՐ ՅԱ.ՅՈՅ ՆԱ.                    |
|     | 7. [մաստունն Հմայէ]Ա.Կ ՔՍԱՆ                  | 7. ԽԱ.ՐԱՐԱՅՆ ՏԱ.ՆԿ, ԹՈՂ ԶԱ.                   |
|     | 8. [եւ երկու արամբ:]Ք.Բ.                     | 8. ՅԱ ԵՐԿԵՐԻԻՐ ՈՒԹՍՈՒՆ ԵՒ                     |
|     | 9. [ <sup>162</sup> Յազգէն Քաշքերու]ՆԵԱ.Յ    | 9. ԵԿԹՈՆՍ, Ա.Յ ԵԽՍ ԵԿԹՆ ՀԱ.                   |
|     | 10. [Հրաշակերտն ներ]ՄԵՀ ԵՒ                   | 10. ԲԻՒՐ ԵՒ ՔԱ.ՈԱ.ՍՈՒՆ Ա.ՅՐ, ՈՐ               |
|     | 11. [թն արամբք.]                             | 11. ՈՅ ԶԱ.ՆՈՒԱՆՍ ԳՐԵԱԼ ԵՆ Ի                   |
| Բ.Բ | 12. [ <sup>163</sup> Յազգէն Գնունեա]Յ ՄԱՆ    | 12. ԴՊՐՈՒԹԵԱՆՆ ԿԵՆԱ.Յ • ՈՐՔ                   |
|     | 13. [ուկն Վահան երիւք] Ա.ՐԱ.ՄԲՔ.             | 13. ԿԱ.ՏԱ.ՐԵՅԱՆ Ի ՆՄԻՆ Ա.ԽՈՒՐ                 |
|     | 14. [ <sup>164</sup> Յազգէն Ընծայ]ՆԻՈՅ Ա.Ր   | 14. Ի ՄԵԾ ՊԱ.ՏԵՐԱ.ԶՄԻՒՆ: <sup>168</sup> ԵՒ ՄԻ |
|     | 15. [դարն Արսէն եւթ]Ն Ա.ՐԱ.ՄԲՔ.              | 15. ԱՀԱ.ՄՈՒԻՒ ԼԻՆԻ ՀԱ.ԶԱՐ ԵՒ Ե                |
|     | 16. [ <sup>165</sup> Յազգէն Սրուանձ]ՏԱ.Յ ՅԱ. | 16. ՐԵՍՈՒՆ ԵՒ ՎԵՅ Ա.ՅՐ: ՈՐՔ ՄԵ                |
|     | 17. [ուաշադէմն Գար]ԵԳԻՆ ԵՐ                   | 17. ԾԱ.Ի ՃԳՆՈՒԹԵԱՄԲ ՎԱ.ՍՆ                     |
|     | 18. [կու հարագատաւք]Ն ԵՒ ՈՒԹ                 | 18. ՍՈՒՐԲ ՀԱ.ԽԱ.ՏՈՅԱ Ի ՎԵՐԱ.Յ                 |
|     | 19. [ուտասն արամբ:]Ք.Բ:                      | 19. ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱ.ՏԵՐ                    |
|     | 20. [ <sup>166</sup> Այս երկերիւ]Ր ՈՒԹՍՈՒ    | 20. Ա.ԶՄԵԱԼՔ ԿԱ.ՏԱ.ՐԵՅԱՆ Ի ՔՍ-                |

<sup>159</sup> Տե՛ս հաջորդ տողի ընթերցումները:<sup>159</sup> տասնեւեթն ] յիսուն եւ եւթն; արամբ:<sup>160</sup> Քնթունեաց; Գթունեաց; «Դիմաքսէնից, Քնթունեաց, Գնունեաց, Անձեւացեաց, Արուանձ-տառ»: >Քաշքերունեաց; տասնեւինն; արամբ:<sup>161</sup> >իմաստունն; քսան ] քսան եւ երկու; արամբ:<sup>162</sup> արամբ;<sup>163</sup> Երեք ] Երիւք); արամբ:<sup>164</sup> Անձեւացեաց (Անձաւացեաց) ] Ընծայնոց; Ընծայնոց; Ընծայնուց; Ընծանոց; արամբ:<sup>165</sup> Սրուանձտեա; Սրուանձտաց; Սրաւածտա; Սրաւանձտաց; առաջադէմ; հարագատօք; ութեւտասն; տասնեւութն; արամբ:<sup>166</sup> ութսուն եւ ինն; հինգ ] եւթն; մեծամեծ; ընդ նմին եւ մեծամեծ նախարարքն; ընդ մեծամեծ նախարարքն որ անդէն; ընդ նմին ինն այր ի մեծամեծ նախարարքն որ անդէն; >ինն:<sup>167</sup> տանէն; >եւ ի տանէն; տանէ; >եւ յարքունի տանէն; եւ յարքունի տանէն Արծրունեաց; յալլոց; ալլոց; >յալլոց; նախարարաց; տանէն; եւթն; եօթն; հնգեանս ] եւթնս; եւ այլ եւս; >եւ; հարեւը; հարիւք ] եւթն հարիւք; որք; որ; զանուանս իւրաքանչիւր ի գպրութիւն կենաց գրեցին (գրեցան) ի նմին աւուր ի մեծ պատերազմին (ի մեծ պատերազմին կատարեցան):<sup>168</sup> միահամուռն լինի; լինին; + ամենայնն; + ամենեքեան; ո. եւ լդ. (=1034); - Բոլոր ձեռագրերում >որք մեծաւ ճգնութեամբ վասն սուրբ հաւատոց ի վերայ սուրբ եկեղեցւոյ պատերազմեալք կատարեցան ի քա:

## Վերծանություն - 2բ (Աս-Բբ)

- |  |  |
|--|--|
| Աբ <ul style="list-style-type: none"> <li>1. [<sup>169</sup> Իսկ ի կողմանէ հեթանոսաց մե] 1. [գեռ շէն են եկեղեցիք եւ]</li> <li>2. ՈՒՆ ՅԱՅՆՄ ԱԿՈՒՐ • ԵՐԵՔ 2. ԱՆՔԱ[Կ տաճար վկայից]</li> <li>3. ՀԱՅԱՐՔ ՀԻՆԳ ՀԱՐԻՒՐ ՔԱ 3. ԵԻ ՄԻ[ԱԲան սուրբ ուխտ]</li> <li>4. ՌԱՍՈՒՆ ԵԻ ԶՈՐՔ ԱՐՔ: • <sup>170</sup> ԻՆՆ 4. ԵԿԵՂ[Եցոյ առաքինա]</li> <li>5. ԱՅՐ Ի ՄԵԾ ՊԱՏՈՒԱԽՈՐԱՅ<sup>3</sup> 5. ՑԵԱԼ, Ա[րժանի արարել զմ]</li> <li>6. ԷՌ, • ՎԱՍՆ ՈՐՈՅ ԿԱՐԻ ՅՈՅ<sup>4</sup> 6. ԵԶ ԿՈԶ[մանդ երկնաւորի:]</li> <li>7. ԽՈՐ ԽՈՅԵՅՅԱԼ ՄՈՒՇԿԱՆՆ 7. <sup>9</sup> ՀԱԻԱՍ[արեցի մահս մեր]</li> <li>8. ՆԻՒԱՅԱՂԱԿՈՒՐՏ: • <sup>171</sup> ԶԻ ԵՏԵՍ 8. ԸՆԴ ՄԻ[Հ քաջ նահատակա]</li> <li>9. ԵՒԹՆԱՊԱՏԻԿ ԶՀԱՐՈՒԱԾՍ 9. ՑՆ, • Ե[Ի խառնեցի արիւ]</li> <li>10. ԳՆԴԻՆ ԻՒՐՈՅ ՔԱՆ ԶՀԱՅՈՅ 10. ՆՍ ՄԵՐ[ընդ արին անկն]</li> <li>11. <sup>171-7</sup> ԻՍԿ ԵԻՆ Ի ԳՆԴԻՆ ՀԱՅՈՅ ՄԱ 11. ԱԼ ՎԻՐ[աւորացն, եւ հաճ]</li> </ul> | Աբ <ul style="list-style-type: none"> <li>12. ՄՆ ԻՆԳ ՅԱՄՐՈՅՅ, • ԵԻ ԵՐ 12. ԵՎՅԻ ՏԵՐ [ընդ եկեղեցիս իւր:]</li> <li>13. ԹԵԱԼ ԶԱՒՐԻՆ ՊԱՐՍԻՅ ԳԱԼ 13. ԲԱՅՄՈ[Իթեամբ կամաւոր]</li> <li>14. Ի ԽԱՅԱՂՈՒԹԻՒՆ, • ՈՐՈՅ Ե 14. ԶՈՒԱՐԱ[կացա, որ ելանեն ի]</li> <li>15. ԿԵԱԼ, • <sup>7</sup> ՀՐԱՄԱՅԵԱՅ ՍՊԱՆԱ 15. ՎԵՐԱՅ Մ[ուրբ սեղանոյա]: 10<sup>10</sup> Զայս]</li> <li>16. ՆԵԼ Ի ԽՈՅԱՆէ ԵՐԿԵՐԻՒՐ 16. ԱՍԵԼՈՎ[ի տեղուղն կատարե]</li> <li>17. ԵԻ ՏԱՄՆ ԵԻ ԵՐԵՔ ԱՅՐ, <sup>8</sup> • ՈՐՔ 17. ՑԱՆ ԵՐ[Կերիւրքն եւ երեքոտա]</li> <li>18. ԱՎԱՅԱԿԵԻՆ ԱՄԵՆԵՔԵԱՆ 18. ՍՍՆՔՆ: <sup>11</sup>[<sup>42-43</sup> Եւ զունդ մի արքունի]</li> <li>19. ԵԻ ԱՄԵԻՆ. • «ԳՈՀԱՆԱՄՔ 19. ՑԱՆԽՆ[այ յուզէր զվայրան, եւ]</li> <li>20. ԶՔԷՆ Տ[Է]Ր Ա[ստուա]Յ. • ԶԻ ՄԻՆՉ 20. ԳՏԵԱԼ [անդ ի զիւս երկուս]</li> </ul> |
|--|--|

<sup>169</sup> ուրացելոցն; ուրացելոցն եւ հեթանոսաց; չորք արք; չորս:

<sup>170</sup> այր+ի նոցանէ; ի մեծամեծ; պատուաւորաց; վասն որոյ եւ; վասն այնորիկ եւ; >եւ; >ի; >ի խոր; Մուշկիան; Մուշկան; Նիսալաւորա; Նիսալաւորա; Նիսալաւորա:

<sup>171</sup> զի ետես երճապատիկ զհարուած ] Մանաւանդ իբրև ետես զանհնարին հարուածն; զհարուածս անհնարին; անհնարինս; >անհնարին; Եւթնապատիկ; Եռապատիկ; զիւրոյ զնդին քան զշայոցն; խորոյ զնդին եւթնապատիկ քան զշայոց; զիւրոց; զշայոց),

<sup>171-7</sup> իսկ եին ի զնդին Հայոց մասն ինչ յամրոցի, • եւ երեալ զաւըն պարսից զալ ի խաղաղութիւն, • որոց եկեալ, ] 171 «...քեկաւ անկաւ (անկաւ բեկաւ) զաւութիւն (ուժոյ նորա; ուժոյ իւրոյ; ուժոյ) ուժոյն իւրոյ, եւ ոչ հանդարտէր կալ ի վերայ խորհրդոց մտացն (եւ ոչ կարէր յանդարտէր; կարէր ] Հանդարտէր; խորհրդոց իւրոց; մտաց իւրոց). հանզի ոչ (>ոչ) որպէս կարծէր զայտերազմն՝ (պատերազմն) կատարեցաւ» - Զ.7 «...իբրև ((>իբրեւ) ոչ կամաւ իշեալ կացին առաջի, ...»:

<sup>7</sup> Հրամայեաց (եւ Հրամայեաց) սպանանել ի նոցանէ երկերիւր եւ երեքոտասան (տասնեւերեք) այրը):

<sup>8</sup> միաբան եւ ասեն ամեներեան; >տէր; մեր; >մեր; որ մինչեռ; եկեղեցիքս; տաճարք; տաճար; աղօթից մերոց ] վկայից; տաճար վկայից մերոց; եկեղեցոյս; >եւ; >զմեզ:

<sup>9</sup> Հաւասարեցից; Հաւասարեցց; ընդ մահու; ընդ արիւս; ընդ արեան; >արիւն (անկեալ) վիրաւորելոցն; Հաճեցի տէր կամարար; եկեղեցի; մեր]իւր; զուարակացն; սեղանոյս քո; սրբոյ սեղանոյ քո; սրբոյ սեղանոյ քո; սրբոյ սեղանոյ:

<sup>10</sup> եւ զայս ասացեալ; կատարեցան ի տեղուղն; երկերիւր եւ երեքոտասանքն; երեք տասնաք; երկու հարիւր տասներեքն:

<sup>11</sup> >11-42 նախաղասութիւններ:

<sup>42-43</sup> Այս երկու տողերը հնարաւոր եղաւ վերականգնել միայն Զ. եղանակի 42 եւ 43 նախաղասութիւնների միջոցով:

Եղիշե, Վասն Վարդանայ և հայոց պատերազմին

Հատվածներ՝ Ե. 1-3, 146-150, 153-171, Զ. 7-11, 42-43<sup>48</sup>:

1. «Մեծ է սէրն Աստուծոյ քան զամենայն մեծութիւն երկրաւոր. եւ այնպէս աներկեւզ առնէ զմարդիկ՝ իբրեւ զանմարմին զաւրս հրեշտակաց, որպէս անդստին //1ա՝ Դր-Գա// [ի սկզբանէ է տեսանել զբազումս բազում ան]զամ ի[բազում տեղիս,

2. որ սիր]ովն [Ա[ստուծոյ]յ զինու վա]ուեալֆ [ոչ ինչ զանգիտելով ի] մահու[անէ անձանց, կա]մ ի յա[փշտակութիւնէ ըն]շից [կամ ի խողխողումաց սիրելեաց, կամ ի գեր]ութիւնէ ընտանեաց, առ ո՛շինչ [համարեցան զայս ամենայն.] [անցս շարշարանաց, Այդ [միայն միաբան կա]լ ընդ Ա[ստուծոյ]<sup>3</sup>,

<sup>5-10</sup> [իբրեւ ետես Վարդ]ան ոչինչ զանգիտեաց, այլ ժողով անելով ամենայն միաբան]ելովն [Արտաշատ ընդ եկեղ]ղեցեաւ[ւ սրբոյ ուխտին Յիսուս]ի Փ[րիստոս]ի յո[րում քաջալերեալ ան]շափ պա[տրաստութեամբ համագ]ու 146. [նդք հասանելով ի գործ պատե]րազմին ոչ սակաւ նախնիրս ի տեղուցն զործէր ի մեծ պատերազմին, յորում եւ ինքն արժանի եղեւ առնով զիատարեալ նահատակութիւնն:

147. Եւ յերկարել զործոյ պատերազմին՝ աւճն տարածամիր, եւ մաստ առ երեկս կարճատէր. [բազմաց աւրհասք մահ]ու հասանէր մահաւանդ ի թանձրութենէ անկեալ դիականցն մաստ առ մաստ խտացեալ իբրեւ զիաւտահարս մայրաւորաց երեւեին.

148. Անդ էր տեսանել զբեկորս նիզակացն եւ զիտրտակումն աղեղանց. վասն այնորիկ ոչ կարեին //1բ՝ Դր-Գր// [կալ ճշմարտիւ ի վերայ] սուրբ մարմնոց երանելեացն. եւ սաստիկ խունապ տագնապի էր կողմանցն երկոցունց անկելոցն: 149. Եւ որ մնացեալֆն եին՝ վանեալֆ

<sup>48</sup> Սկզբում և վերջում Գի-ից հավելել ենք նախադասությունների պակասող հատվածները, որոնք ըստ ամենայնի պես է լինեին պատառիկի նախորդող և հաջորդող էջերում: Ուղիղ գրերով ընդգծված են պատառիկում երևացող հատվածները:

<sup>5-10</sup> Այս հատվածում պակասում է 8 տող՝ 7-ը ձախ սյունակի ներբեռում եւ մեկ տող աջ սյունակի վերեսում: Պակասող հատվածը վերականգնվել է 5-10 և 146 նախադասությունների միջոցով:

եւ ցրուեալք լինեին ի լեռնադաշտսն ։ Եւ յամուս ձորոցն։ Եւ յորժամ պատահեին միմեան<sup>49</sup>՝ [դարձեալ զմիմեանս սա]տակեին։ 150 Մինչեւ ի մուսս արեգանն<sup>49</sup>՝<sup>151-152</sup> 153. Քանզի ոչ էր կողմն՝ որ յաղթեաց, եւ կողմն՝ որ պարտեցաւ։

154. Բայց բանզի ամկեալ էր զարավարն Հայոց ի մեծ պատերազմին, ոչ ոք գոյր այնումետեւ ի մեջ զլիսաւր, յոր յեցեալ ժողով[ եին գունդք մնացելոցն:] 155. Թեպէտ եւ բազում այն էր] որ ապ[րեցան՝ քան թէ] որ մե[ուանն, սակայն] ցանե[ալ ցրուեցան, եւ] հասե[ալ անկանէին ի տե] յիս տե[դիս յամուրս աշ]իարին[ին, եւ բռնանայ]ին ի վ[երայ բազում գաւ]առաց [եւ բերդից, զոր եւ ոչ]ոք կա[ու առնուլ իսկ:]

156. Եւ ա[յս անուանք են քաշ] նա[հատակացն]

157. Յազ[գէն Մամիկոնէից] Քաջն [Վարդան հարեւր եր]եսու[ն եւ երեք արամբք.]

158. Յազ[գէն Խորխոռունեաց] Խորե[նն կորովի ինն եւ] տա[սն արամբք.]

159. Յազ[գէն Պալունեաց (2ա՝ Աբ-Բա) արին Արտակ յիսուն եւ եւթն արամբք.]

160. [Յազգէն Գնթունեաց զար[մանալին Տաճատ]] ինն եւ [տասն արամբք.]

161. [Յազգէն Դիմաքսէ]նից ի[մասսունն Հմայէ]ակ բասն [եւ երկու արամբք.]ք։

162. [Յազգէն Քաջերու]նեաց [Հրաշակերտն ներ]սեմ եւ[թն արամբք.]

163. [Յազգէն Գնունեա]ց ման[ուկն Վահան երիւք] արամբք։

164. [Յազգէն Ընծայ]նոց ար[դարն Արսէն եւթ]ն արամբք։

165. [Յազգէն Սրուանձ]տայ յա[ուաշադէմն Գար]եզին եր[կու հարազատաւք]ն եւ ուր[ուտասն արամբք]ք։

166. [Այս երկերի]ր ուրսուն՝ [եւ եւթն նահատակք, ընդ] ինն մեծ նախարարսն անդին ի տեղոցն կատարեցան։ 167. Եւ յարքունի տանէ եւ ի տանէն Արծրունեաց եւ յիւրաքանչիւր յայլոց նախարարացն տանէ, թող զայս երկերիւր ուրսուն եւ եւնս, այդ եւս եւն հարիւր եւ բառասուն այր, որոց զանուանս գրեալ են ի դպրութեանն կենաց ։ որք կատարեցան ի նմին ատուր ի մեծ պատերազմին։ 168. Եւ միահամուռ

<sup>49</sup> Նախորդ 149 նախադասության շարունակությունն է։

<sup>151-152</sup> Զկան 151-152 նախադասությունները։

լինի հազար և երեսուն և վեց այր<sup>▪</sup>, որք մեծաւ ճգնութեամբ վասն սուրբ հաւատոյս ի վերայ սուրբ եկեղեցոյ պատերազմեալ կատարեան ի Ք[րիստո]ս<sup>▪</sup>

//2ր` Աա-Բբ// 169. [իսկ ի կողմանէ հեթանոսաց մե]ուան յայնմ ատու • երեւ հազարք եկնգ հարիւր քառասուն եւ չորք արք: • 170. Ինն այր ի մեծ պատուատրաց<sup>6</sup> էր, • վասն որոյ կարի յոյ<sup>7</sup> խոր խոցեցաւ Մուշկանն Նիսաղատուրտ: • 171. զի ետես երթապատիկ զհարուածս զնդին իւրոյ քան զշայոց, •


<sup>171-7</sup>իսկ եփն ի զնդին Հայոց մասն ինչ յամրոցի, • եւ երթեալ զաւըն պարսից գալ ի խաղաղութիւն, • որոց եկեալ, • 7. հրամայեաց սպանանել ի նոցանէ երկերիւր եւ տասն եւ երեւ այր, 8. • որք աղաղակեփն ամենեթեան եւ ասեփն. • «Գոհանամբ զբէն Տ[է]ր Ա[ստուա]ծ. • Զի մինչ[դեռ շէն են եկեղեցիք եւ] անքա[կ տաճար վկայից] եւ մի[աբան սուրբ ուխտ] եկեղ[եցոյ առաքինա]ցեալ, ա[րժանի արարեր զմ]եզ կոչ[մանդ երկնաւորի]: 9. Հաւաս[արեսցի մահս մեր] ընդ մա[հ քաջ նահատակա]ցն, • եւ[ խառնեսցի արիւ]նս մեր [ընդ արիւն անկե]ալ վիր[աւորացն, եւ հաճ]եսցի Տիր [ընդ եկեղեցիս իւր] բազմութեամբ կամաւոր] զուարա[կացս, որ ելանեն ի] վերայ ս[ուրբ սեղանոյս]: 10. Զայս] ասելով[ի տեղւոշն կատարեցան եր[կերիւրքն եւ երեքտա]սանքն:

11.<sup>11</sup> [<sup>42-43</sup> Եւ գունդ մի արքունի] յանխսն[այ յուզէր զվայրսն, եւ] գտեալ [անդ ի գիւղս երկուս, որ զեկեղեցիսն այրեցեալ էր. առաւել եւս վասն այնր ի նախանձ բարկութեան բրդեցան]»:


<sup>171-7</sup> իսկ եփն ի զնդին Հայոց մասն ինչ յամրոցի, • եւ երթեալ զաւըն պարսից գալ ի խաղաղութիւն, • որոց եկեալ, ] 171 «...քեկաւ անկաւ (անկաւ բեկաւ) զաւութիւն (ուժոյ նորա; ուժոյ իւրոյ; ուժոյ) ուժոյն իւրոյ, եւ ոչ հանդարտէր կալ ի վերայ խորհրդոց մտացն (եւ ոչ կարէր յանդարտէր; կարէր յանդարտէր; խորհրդոց իւրոց; մտաց իւրոց). հանզի ոչ (<sup>></sup>ոչ) որպէս կարծէր զպատերազմն՝ (պատերազմն) կատարեցաւ» - Զ.7 «...իբրււ (<sup>></sup>իբրէւ) ոչ կամաւ իշեալ կացին առաջի, ...»:

<sup>11</sup> Զկան 11-42 նախադասութիւնները:


<sup>42-43</sup> Ամբողջ Զ. Եղանակում փնտրելով «յանխս» գրերը եւ «գտեալ» բառը պարունակող բառեր եւ նախադասութիւններ, այս երկու տողերը հնարաւոր եղաւ վերականգնել միայն 42 եւ 43 նախադասութիւնների միջոցով:




Պատառիկ 1ա (Դր-Գա)



Պատառիկ 1թ (Դաս-Գլ)



Պատառիկ 2ա (Ա.ա-Բ.թ)



Պատառիկ 2թ (Աբ-Բա)

## ԱՐՄԵՆ ՄԱԼԻԱՍՅԱՆ


### ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԶԵՌԱԳՐԵՐԻ ԿԱԶՄԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Զեռագրերի կազմերի արձանագրությունները բաղկացուցիչ մասն են կազմում արձանագրագիտության<sup>1</sup>, որի նպատակն է ուսումնասիրել քարի, մետաղի, կաշվի, փայտի եւ այլ նյութերի վրա փորագրված, դրոշմված կամ դաշված, ինչպես նաև հատուկ մելանով (կամ այլ ներկանյութով) մակագրված արձանագրությունները։ Ակադեմիկոս Հ. Օրբելին, արձանագրությունները բնութագրելիս նկատում է, թե՝ «Զկա համարյա ո՞չ մի հայկական մոնումենտալ հուշարձան, տաճար, մատենադարանային շենք, գավիթ ու այլ եկեղեցական կառուցվածք, պալատ, բերդաշտարակ, վերջապես գերեզմանային կոֆող, սահմանաբաժան քար, որ իր վրա չունենա արձանագրություն, որը համարյա միշտ թվագրված է եւ շատ հաճախ պատմում է այդ հուշարձանի կառուցման կամ կանգնեցման մասին։ Ճիշտ այդպես էլ արձանագրված է կիրառական արվեստի եւ գեղարվեստական արդյունագործության ստեղծագործությունների մի զգալի մասը, հատկապես եկեղեցականը, ինչպես՝ մատյանների կազմերը, խաչերը, գավազանները, սկիհները, նշխարատուփերն ու տապանակները եւ այլն։ Այսպիսով, հայկական հուշարձանների ճնշող մեծամասնությունը անվիճելիորեն թվագրվում է այդ արձանագրություններով, եթե ոչ ստույգ նշելով տարին, գոնե այն որոշելով մոտավորապես. դրա շնորհիվ վերանում է լոկ հնագիտական տվյալների հիման վրա հուշարձանի անստույգ եւ կասկածելի թվագրությունը։ Խսկ այն հուշարձանները, որոնք իրենց վրա թվական չունեն, թվագրվում են շրջապատում եղած այլ բազմաթիվ թվագրվածների օգնությամբ, որով եւ որոշվում են նրանց ժամանակագրական սահմանները։ Համապատասխան արձանագրությունների հետագա ուսումնասիրությունը հայկական արվեստի պատմության մի էջը չի, որ բացելու է»<sup>2</sup>։

Զեռագրերի կազմերի արձանագրությունները եւս հավաստի սկզբնաղբյուրներ են եւ նրանցից տարբերվում են միայն նյութով, որի վրա գրվել են։ Զեռագրի կազմերի արձանագրությունների ուսումնասիրությունը, վիմագրության համեմատությամբ, ունի որոշ դյուրություններ։


<sup>1</sup> Միջազգային տերմինաբանությամբ՝ Էպիգրաֆիկա (հուն. ἐπί- մακτή վրա, երես եւ գրաֆիկա (գրություն), որ թարգմանաբար նշանակում է մակագրություն). տե՛ս Գ. Գրիգորյան, Հայկական վիմագրություն, Երևան, 2000, էջ 9։

<sup>2</sup> Դիվան հայ վիմագրության, պր. I, Երևան, 1966, էջ IX (այսուհետև՝ Դիվան)։ Ընդգծումները մերն են - Ա. Մ.։



Նկ. 1

Զեռ. 10998, Ա. Կեղկ. 1691 թ., նոր ջուղա: Կազմող՝ Ազարիա Գալիր:



Նկ. 2  
Զեռ. 451, Ա. փեղկ. 1692 թ., նոր Զուղա: Կազմող՝ Ազարիա դպիր:


**Այսպես.** կազմարար վարպետներն իրենց՝ տարբեր ժամանակներում պատրաստած կազմերի արձանագրությունների համար օգտագործել են շարադրանքի միեւնույն կաղապարային ձեւը՝ փոփոխելով միայն կազմի ստեղծման թվականը: Օրինակ՝ նոր Զուղայի կազմարվեստի դպրոցի հիմնադիր Ազարիա դպիրը № 3194, 10998, 451 (նկ. 1 եւ 2) ձեռագրերի կազմերին թողել է արձանագրության միեւնույն շարադրանքը. «Գրեցաւ եւ կազմեցաւ ձեռամբ Ազարիէ», համապատասխանաբար՝ 1676, 1691, 1692 թթ.: Զեռագրերի գրչության հիշատակարանների կամ հիշատակագրությունների բաղդատությամբ եւս կարելի է լրացնել կամ վերականգնել արձանագրության վնասված եւ պակասող բառը կամ բառակապակցությունը: Այսպես. 1585 թ. Վանիկ գյուղի Սր. Թեոդորոս վանքում Փիլիպոսի պատրաստած № 4812 Ավետարանի Ա. փեղկի ներքեւում պահպանվել է վնասված արձանագրություն. «ՅՆՔՔՏՐ///Վ//» (նկ. 3): Զեռագրի 212ա թերթում կարգում ենք հետեւալ հիշատակագրությունը. «Զվերջին կազմոխս զսուրբ Կարմիր Աւետարանիս յիշեցէք ի Քրիստոս զտէր Յովանէս, զոր տեսեալ զսուրբ Կարմիր Աւետարանս ի յայտեն հնացեալ էր, զոր վերեստին նորոգել ետուր հոգոյ իւր... ես, սուտանուն Փիլիպոս, որ կազմեցի զսուրբ Աւետարանն ի թվ(ակա)ն(ի)ս Հայոց ՈՒՂԻ. (1585), ի գեաւզն որ կոչի Վանիկ, ի գուռն Սուրբ Թէոդորոսին...»: Հիշատակագրության շնորհիվ վերականգնվել է արձանագրության վնասված անձնանունը. «Յ(հ)ՇԷՔ Տ(է)Ր [ՅՈ] Վ-[ԱՆՔՄԻՒՆ]//»: Մեկ այլ՝ № 9841 ձեռագրի կաշեկազմը նույն Փիլիպոսը կազմողը պատրաստել է 1586 թվականին Խաչգլուխ լեռան Սր. Սահակ վանքում: Զեռագրի Ավետարանի երկրորդ փեղկի մեջտեղում կա «//Խ//ՏԻՄԵՒԴԱՄ//ՅՆՔ» արձանագրությունը (նկ. 4), որի ամբողջացմանն օգնում է ձեռագրի 293ա թերթին առկա հետեւալ հիշատակագրությունը. «Զվերջին կազմողս սուրբ Աւետարանիս յիշեցէք ի Քրիստոս՝ զխոցայ Աւետիսն, զոր տեսեալ զսուրբ Աւետարանս ի ձեռն անաւրինաց ազատեաց եւ վերեստին նորոգել ետուր հոգոյ իւր... եւ եղբարն՝ խոչայ Ամիրաղին... ես, սուտանուն Փիլիպոս, կազմեցի զսուրբ Աւետարանս ի լեառն սուրբ, որ կոչի Խաչգլուխ, ի վանքն, որ կոչի Սուրբ Սահակ... ի թուակ(ան)ութիւն Հայոց ՈՒՂԵ (1586)...»: Հետեւապես, արձանագրությունը կարդացել ենք այսպես «[Ձ]Խ[ՈՉԱՅ ԱՒԵ]ՏԻՄԵՒԴԱՄ//ՅՆՔ» Յ-(հ)ՇԷՔ[Ք]»:

Արձանագրություններն այլ փաստաթղթերի նման պահանջում են ուշադիր եւ զգուշավոր վերաբերմունք: Հ. Օրբելին նկատում է, որ. «Եթե ոչ մեկի մտքով չի անցնում վիճարկել թղթերի վրա գրված հրովարտակների, վավերագրերի եւ նույնիսկ ձեռագրի հիշատակագրությունների պատճենահանման հնարավորությունը, արտադրության ընթացքում նրանց աղավաղման եւ, վերջապես, կեղծման հնարավորությունը, ապա, երբ խոսքը վերաբերում է վիմական արձանագրություններին, մեզ հասած եւ քարերի վրա փորագրված բոլոր ակտերը, չգիտես ինչու, բացարձակ հավաստի են համարվում, եւ այդպիսի վավերագրերի հավաստիության նկատմամբ ամեն մի երկբայցություն առաջ է բերում տարակուսանք եւ թերահավատություն:



Նկ. 3

Զեռ. 4812, Ա. փեղկ. 1585 թ., Սբ. Թեոդորոս վանք (Վանիկ գյուղ): Կազմող՝  
Փիլիպոս Հիգանցի:



Եկ. 4

Զեռ. 9841, Բ փեղկ. 1586թ., Սբ. Սահակ վանք (Խաչգլուխ լեռ): Կազմող՝  
Փիլիպոս Հիգանցի:

Մինչդեռ վիմական արձանագրությունների հետ էլ անհրաժեշտ է առանձնապես զգուց լինել, քանի որ այդ վավերագրերը, ձեռագիր արձանագրություններից տարբերվելով միայն այն նյութով, որի վրա նրանք գրվել են, ձեռագրերի նման նույնպես արտագրվել են եւ ընդումին երբեմն ենթարկվել գանազան փոփոխությունների»<sup>3</sup>: Մաշտոցյան Մատենագրանի № 2673 ձեռագիրը (բովանդակությամբ՝ Խորհրդատետը) գրված է 1679 թ.: Կազմի Ա. Փեղկին կա ստացող տեր Աղեքսանդր վարդապետի արձանագրություն-Հիշատակարանը. «Յ[Ե] Շ[Ա] Տ[Ա] Կ է ԱՂ[Ե] ՔՍ[Ա] ՆԴՐ Վ[Ա] ՐԴԱ/Պ[Ե] ՏԻՒ ԵՒ ԵՒ ԾՆ-[Ո] Վ[Ա] ՑԸՆ, Ի ԹՎԻՆ ԽՃՇԸ (1679)» (նկ. 5): Ինչպես երեւում է արձանագրության թվականից, կազմը գրչությանը ժամանակակից է: Եթե արձանագրությունում եւ ձեռագրի 16ա, 20թ թերթերի հիշատակարաններում նշված Աղեքսանդր վարդապետը նույն Աղեքսանդր Ջուղայեցին է, ենթադրելի է, որ կազմը պատրաստված է նոր Ջուղայում: Մակայն նոր Ջուղայի կազմարվեստի դպրոցի մեկ ուրիշ նման կազմ մեզ ծանոթ չէ: Զեռագրի 17ա (1866 թ.) եւ 2ա (1880 թ.) հետագա հիշատակարաններում նշվում է Սբ. Ստեփանոս Նախավկա վանքը, իսկ առաջին պահպանակի վրա մատիտով նշված է նույն վանքին պատկանելը: Այս ամենից պարզ է դառնում, որ, թեեւ կազմին արձանագրված է Աղեքսանդր վարդապետի անունը եւ նշված է կազմի պատրաստման (1679) թվականը, ներկայիս կազմը պատրաստված է ավելի ուշ, ժմ դարում Ս. Ստեփանոս Նախավկա վանքում<sup>4</sup>: «Նման պարագաներում, - նշում է Հ. Օրբելին, - արձանագրությունների արժեքը մասսամբ նվազում է այն բանով, որ նրանք մեզ են հասել ոչ թե բնագրով, այլ ընդօրինակված, այնուամենայնիվ նրանք չեն կորցնում իրենց նշանակությունը, քանի որ նրանց բովանդակության իսկությունը չի կարելի կասկածել, այդ առթիվ որեւէ հիմք չունենալու պատճառով»<sup>5</sup>: Հետագայում<sup>6</sup> 1713 թ. արդեն, կաթողիկոս Աղեքսանդր Ջուղայեցին Սբ. Էջմիածնում կառուցում է սեղանատուն, որտեղ արձանագրում է. «Ի թուին ԽՃԿԲ ես Ջուղայեցի Աղեքսանդր կաթողիկոս ամենայն Հայոց, շինեցի սեղանատունս ի վայելումն սրբոյ Էջմիածնի միաբանից վասն ձմռան»<sup>6</sup>: Այսուղ հարկ համարում նշել, որ մի շարք վիմագիր եւ ձեռագրերի կազմերի արձանագրություններ պատվիրվել են միեւնույն մարդկանց կողմից:

<sup>3</sup> Դիվան, պր. I, էջ IX-X: Այնումեան Հ. Օրբելին բերում է Մարմաշենի կառուցման մասին արձանագրությունը. տե՛ս նոյն աեղում, էջ X:

<sup>4</sup> Կազմողը եղել է անփորձ մեկը, որը, բարեբախտաբար, նոր կազմը պատրաստելիս փորձել է ընդօրինակել ձեռագրի նախնական, նավանաբար, վնասված կազմը՝ պահելով նաև վրայի արձանագրությունը:

<sup>5</sup> Դիվան, պր. I, էջ X:

<sup>6</sup> Կ. Կոստանեանց, Վիմական տարեգիր - Յուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 204, № 1713:



Եկ. 5

Զեռ. 2673, Ա փեղկ. ԺԹ դ., Եր. Ստեփանոս Նախավկա վանք:



նկ. 6  
Զեռ. 7690, Ա. փեղկ. 1255 թ., Հռոմեական:

Այսինքն՝ կազմերին արված արձանագրությունները եւս լրացնում, ամբողջացնում են վիմագիր աղբյուրներում եղած տեղեկությունները, ինչպես նկատել է Կ. Ղաֆադարյանը, երբ Հաղբատի ու Սանահնի համար նշում է. «Պատմաբանն այդ երկու վանքերը պետք է ուսումնասիրի միասնաբար, որովհետեւ մեկը լրացնում է մյուսին, մեկը շարունակում է մյուսի նախաձեռնությունը»<sup>7</sup>: Բերենք նմանօրինակ մի քանի արձանագրություններ: Կոստանդին կաթողիկոսը Արցախի Ամենաափրկիշ վանքի 1246 թ. վիմագիր արձանագրություննում նշում է. «Աստուծոյ շնորհիւն ես Կոստանդին կաթողիկոս ամենայն Հայոց, միաբանեցայ եպիսկոպոսարանիս ի ձեռն հոգեւոր որդույ իմոյ տէր Մարգարէին, յիշանութեան մեծի ջալալ Դաւիխ եւ առաջնորդութեան սորա տեառն Ներսիսի Աղուանից կաթողիկոսի. եւ այլ սպասաւորք սուրբ ուխտիս հաստատեցի Գ. (3) պատարագ ի տանի Տեառնընդառաջի, Բ. (2) ինձ, Ա. (1) տէր Մարգարին. կատարիչքն աւրհնին յԱստուծոյ. ով հանէ զաւետարանս յեպիսկոպոսարանէս, ինքն եղիցի որոշեալ եւ հանեալ ի փառացն Աստուծոյ. ի թվիս ՈՂԵ (1246) էր», իսկ Հռոմելայում 1255 թ. պատրաստել է տալիս հմը 7690 ձեռագրի արձաթե հանրաճանաշ կրկնակազմը, որի վրա արձանագրված է. «Ք[ՐԻՍՏՈ] Ս Ա[ՄՍՈՒԱ] Ծ ՈՂՈՐԾԻՒԱ Տ[ԵԱԹ] Ն Ա(Կ)ՈՍՏ/ԱՆԴԵԱՅ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ[Ն] ԵՒ ԾՆԱԿՂԱՅԻ ԻՒՐՈՅ, ԵՂԲԱՐՅՅԻՐ(Ի) ԵՎ/ԲԱԿԻՐՈՐԴԵԱՅ, ԱՄԷՆ: ԹՈՒ[ԻՆ] ԶԴ (1255)» (նկ. 6): Հետաքրքրական է նաեւ Անիի 1909 թ. պեղումների ժամանակ գտնված Առաքելոց եկեղեցու դրսի արեւելան պատի՝ Կոստանդին կաթողիկոսի 1251 թ. հրամանագրած առաքելական կանոնը եպիսկոպոսներին եւ առաջնորդներին. «ԹՈՒՂԿ[ԱՆԻՆ] /Զ: /ՇՆՈՐՀԻՒՆ Ա(ՄՍՈՒԾ)Յ. ԵՒ ՀՐԱՄԱՆԱՐ Տ(ԵԱԹ)Ն ԿՈՍՏԱՆԴԵԱՅ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻ[Կ]/ՈՍԻ ԵՒ ՄԵԾԻՆ /ԱՄԻՒՄՊԱՍԱԼԱՐ ՇԱՀՆՇԱՀԻ ԱՐՁԱՆԱԳՐԵՑԱՒ /ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԿԱՆՈՆՔՍ, ՈՐ Թէ ՈՔ ՅԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ ԿԱՄ ՅԱՌԱՋՆ/ՈՐԴԱՅՅ ԿԱՇԱՌԱԿԻՔ ԿԱՄ ԱՆՄԻՐՈՒ ԵՐԵՅ ԱՌՆԷ ԿԱՄ ԱՌԱՆ/Յ ՃՇԴԻՒ ԵՒ ՅՈՅԺ ԸՆՏՐՈՒԹԵ(ԱՆ) ԴԱՏԻ ՅԱ(ՄՍՈՒԾՈ)Յ, ԵՒ ԸՆԴ ՆԶՈՎԱԿԻՔ /ԼԻՆԻ ՅԵՐԻՍ Ս(ՈՒՐ)Բ ԺՈՂՈՎՈՅՆ, ՄԱՍՆ ԶՅՈՒԴԱՅԻՒՆ ԵՒ ԶԿԱՅԵՆԻՆ /ԱՌՅԷ, ԿԱՏԱ-ՐՈՂՔՆ ԱԿՐՀՆԻՆ ՅԱ(ՄՍՈՒԾՈ)Յ»<sup>8</sup>:


Ղարաբուալ գյուղի Գյուղամիջի եկեղեցու խաչքարին արձանագրված է. «Ս(ՈՒՐ)Բ Խ[Ա] ԶՍ /ԲԱՄ/Բ/Խ/ԱԷ] Ս /ՇԱ/ՏԼԽ/ԵՅ/Ի Տ(Է)Ր ԴԱԼԹ[ԻՆ]»<sup>10</sup>, իսկ Մատենագրանի № 6316 Ավետարանի՝ 1617 թ. պատրաստված կազմի երկրորդ փեղկին արձանագրված է. «ԴԱԼԻԹ /ԷՐէՅՍ [Յ]/ԻՇ Տէ՛, Տ(Է)Ր, Տ(Է)Ր» (նկ. 7): Զեռագրի 190ա թերթի հիշատակարանից տեղեկանում ենք, որ Շատախեցի

<sup>7</sup> Կ. Ղաֆադարյան, Հաղբատ. ճարտարապետական կառուցվածքները եւ վիմական արձանագրությունները, Երևան, 1963, էջ 5:


<sup>8</sup> Կ. Կոստանդեանց, նշվ. աշխ., էջ 89, արձ. № 1246: (Դիվանի Վ պրակում ունի՝ յառաջնորդութեան սորայ. տես Դիվան, պր. V, Արցախ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1982, էջ 114, արձ. № 377): Նշենք, որ Կոստանդին կաթողիկոսը հիշատակվում է 1243 թվակիր վիմագրում. տես Կ. Կոստանդեանց, նշվ. աշխ., էջ 86, արձ. № 1243:

<sup>9</sup> Դիվան, պր. V, Արցախ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1982, էջ 242, արձ. № 871:

<sup>10</sup> Դիվան, պր. V, Արցախ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1982, էջ 242, արձ. № 871:



Նկ. 7  
Զեռ. 6316, Բ փեղկ. 1617 թ., Համասրա-Բակ գյուղ (Գանձակ):



Նկար 8.  
Զեռ. 6781, Ա. փեղկ. 1769 թ., Սբ. Էջմիածին:

Դավիթ Երեցը ձեռագիրը նորոգել եւ կազմել է 1617 թ. Գանձակի Համասրաբակ գյուղում. «Զնորակքաւղ սուրբ Աւետարանիս Դաւիթ սուտանուն Երէց... ի Երկիրս Գանձակոյ, ի ձորս Գանձոյ, գաւղս Համասրայ-Բակ կոչի, ի դրան սուրբ Հստանոս (Ստեփանոս) յեկեղեցոյն: Թուայկանութիւն Հայոց ՈՒԿՅ. (1617)... Յիշեաջիք ի մաքրայի այլ ի մեղսայքափշ աղաւթս ձեր սուրբ Աւետարանիս կազմող Շատախեցի Դաւիթ Երէցս...»: Բերվածից կարելի է եզրակացնել, որ Դավիթ Երեցի վիմագիր խաչքարը պատրաստվել է Ժէ դ. առաջին քառորդում:

Գրիգոր Վրդ. Եղվարդեցին 1769 թ. Էջմիածնում արձնապատել է տալիս № 6781 Ավետարանի կազմը, որի առաջին փեղկի սպիտակ ակի տակ թողնում է հետեւալ մակագրությունը. «ԳՐԻ ԳՈՐ/Վ(Ա)ՐԴ(Ա)Պ(Ե)Տ ԵՂՎԱՐԴԵ/ՑԻ» (նկ. 8), իսկ 1771 թ. վիմագիր արձանագրությունից տեղեկանում ենք, որ Էջմիածնի լուսարար Գրիգոր վարդապետի աշխատասիրությամբ վերանորոգվել են Մայր տաճարի բոլոր տանիքները. «Աստուծով վերանորոգեցաւ բոլոր տանիք սրբոյ տաճարիս եւ Երկուց խորանացն իսկ ի ներքուստ եւ արտաքուստ հոգաբարձութեամբ տեառն Սիմէռնի սրբազն կաթողիկոսին Երեւանցւոյ եւ աշխատասիրութեամբ լուսարար Գրիգոր վարդապետի Եղվարդեցւոյ ի ՈՒՄԻ. թուին մերոյ: Վարդապետ Գասպար»<sup>11</sup>:

Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերի կազմերի արձանագրություններում կիրառված տառատեսակների ուսումնասիրությունները ցուց են տալիս, որ արձանագրությունները մեծ մասամբ, ինչպես վիմագրերում<sup>12</sup>, փորագրված կամ դրոշմված են Երկաթագիր կոչվող տառատեսակով: Սակայն հանդիպում են բոլորգիր տառատեսակով (№№ 982, 3350, 4083, 4467, 4929, 4968, 5549 և 7014), երկաթագրի մեջ առանձին բոլորգիր տառերի (Յ Նո 157), ինչպես նաև Երկաթագրի մեջ առանձին բոլորգիր տառերի (Յ Նո 226, 253, 982, 3305, 3350, 10704, Չ Նո 157, 214, Մ Նո 157, Բ Նո 920) կիրառմամբ արձանագրություններ: Կ. Ղաֆարյանը նկատում է, որ «... դրանք բոլորն էլ փորագրիչների անվարժության արդյունք են՝ ճիշտ այնպես, ինչպես այժմ գրվող գլխագիր ցուցակների եւ այլ նման տեքստերի մեջ ՈՒ գրելու փոխարեն գրում են ՈՒ, Յ-ն գրում են յ ձեւով եւ այլն»<sup>13</sup>:

Ինչպես ձեռագրերի գրչությունում եւ վիմագրերում, կազմերին արված արձանագրություններում եւս տեղ խնայելու նպատակով մի շարք բառեր, հատկապես սուրբգրային բառերը, կիրառված են հապալված ձեւով: Հապալ-

<sup>11</sup> Կ. Կոստանեանց, նշվ. աշխ., էջ 213, № 1771a:

<sup>12</sup> Վիմագիր արձանագրությունների գրչության տեսակների, օգտագործված համառոտագրությունների (հապալմամբ գրվող բառեր, կցագրություններ, փակագրեր, ծածկագրություններ), վիմագիր բանաստեղծությունների մասին տե՛ս Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 44-78 և 84-87:

<sup>13</sup> Կ. Ղաֆարյան, Հայկական գրի սկզբնական տեսակները, Երեւան, 1939, էջ 21 (հիշատակում է 1. Ուխտատուր վանականի արձանագիրը 783 թ., 2. Մարիամ Սյունյաց իշխանություն 874 թ., արձանագրությունը Սեւանում, 3. Սենեներիմ բազալորի 992 թ., վիմագիրը Սարիդամիշում):

ված բառի վրա դրվում է պատվի նշան (հորիզոնական գծիկ): Հապավմամբ առավել հանդես են գալիս տերունական հետեւյալ բառերը (հապավումը պահպանվում է նաև բառաթեքման ժամանակ):

|            |   |
|------------|---|
| <b>ԱԾ</b>  | — Աստուած ( <u>№№ 157, 5638, 5647, 6504</u> ),  |
| <b>ՏՐ</b>  | — Տէր ( <u>№№ 5437, 5638, 5647, 6747</u> ),     |
| <b>ՅՍ</b>  | — Յիսուս ( <u>№№ 5437, 5638, 5647, 5757</u> ),  |
| <b>ՔՍ</b>  | — Քրիստոս ( <u>№№ 5437, 5638, 5647, 5649</u> ), |
| <b>ՍԲ</b>  | — Սուրբ ( <u>№№ 2582, 3238, 3528</u> ),         |
| <b>ԵՂԱ</b> | — Երուսաղէմ- ( <u>№ 3009</u> ):                 |

Արձանագրություններում կիրառվում է նաև կցագրություն կամ կապգիր, որը հապավման կամ սղման այն ձեւն է, երբ տարբեր տառերի անհրաժեշտ ստեղներն իրար ձուլվելով՝ գործածվում են իբրեւ լնդհանուր: Կցագրություններով են հանդես գալիս բազմաթիվ տառակապակցություններ<sup>14</sup>.

|   |  |
|---|--|
|   | (ԱԲ) - ԶՈՀՐԱԲ, ԲԱԽՇԻԶԱԲԵՆ ( <u>№ 7775</u> ),   |
|  | (ԱԿ) - ՅԻՇԱՏԱԿ ( <u>№ 7603</u> ),  |
|  | (ԱՄ, ԱՄԱԲ, ԱՄԲ) - ԱՄՍՈՅ ( <u>№ 61</u> ), ԱՎԱՄԱԼԻՆ ( <u>№ 200</u> ), ՄԱՐԻԱՄ ( <u>№ 200</u> ), ԶԵԽԱՄԲ ( <u>№№ 1935, 2625, 3036</u> ), ՀԱՄԱԲԵՏԱՆԻ ( <u>№ 7775</u> ), ԶԵԽԱՄԲ ( <u>№ 10859</u> ), |
|  | (ԱՒ) - ՄԱՐԻԱՆԻ ( <u>№ 54</u> ), ՅՈՀԱՆՆԻՍ ( <u>№ 1935</u> ), ԱՏԵՓԱՆՆՈՍ ( <u>№ 3032</u> ),   |
|  | (ԱՆԻ) - ՈՎԱՆՆԻՍԻՆ ( <u>№ 7979</u> ),   |
|  | (ԱՆԻ) - ԹԵՎԱՆԻՆ ( <u>№ 9319</u> ),   |
|  | (ԱՄԻ) - ՂՈՒԿԱՄԻ ( <u>№ 8694</u> ),   |
|  | (ԱՐ) - ԱԻԵՏԱՐԱՆՍ ( <u>№ 332</u> ), ԱԶԱՐԻԿ ( <u>№№ 3036, 10998</u> ), ՄԱՐԿՈՍԻՆ ( <u>№ 3408</u> ), ԿԱՐՄԻՐ ( <u>№ 5140</u> ), ԿԱՐՄԻԼԱՆ ( <u>№ 5158</u> ),                                       |
|  | (ԱԻ) - ԱԻԵՏԱՐԱՆՍ ( <u>№№ 2399, 3033</u> ), ՕՂԻՏԱԿԻՆ ( <u>№ 5639</u> ), ՅԱՐԻԱԼԻ ( <u>№ 7634</u> ),  |

<sup>14</sup> Կցագրություններով տառակապակցություններն արտահայտված են ընդգծված:



(Ահե) - ԱհեՏիլին (№ 7920),



(ԲԱ) - ԱՄԲԱՏ (№ 4919),




(ԳԻ) - ՅԱԿՈԲԻՆ (№ 5965),



(ԳԻ) - ԳԻՐՊԳԱԼԻՆ (№ 7634), ԱԼՐԳԻՈ (№ 8433),



(ՇՈ) - ԶԵԽՈՅՑԳՈՐԾ, ԳՈՀԱՐ (№ 8187),



(ՒԻ) - ՈՒՐԴԻ (№ 7640, 8940), ԶՈՐԴԻՆ (№ 10411),



(ՎԻ) - ԵՎԵՒ (№ 2582),



(ՖԼ) - ՄԻՔԱՅԼԻՆ (№ 7602),



(ՇՈՒ) - ԹԻՇՈՐՈՍԻՆ (№ 7750),



(ՇՎ) - ԹՎԻՒ (№ 205, 4658, 5633, 5638),



(ՌԻ) - ԳԱՐՊԻՌԻ (№ 7088),



(ՌԻ) - ԲԱԲԻՒ, ԱԱՐԱԻՆ, ՅԱԿՈԲԻՆ (№ 7239), ՇԻՒԵՅԱԻ (№ 9269),



(ՌՈԼ) - ԽՈԼԶԻՒՅԻ (№ 8960),



(ՌԵ) - ԿԵԶԼԻՎՅՅԻ (№ 7576),



(ՌԵ) - ՅԻՇԱՍԱԿԻ (№№ 157, 6748, 7239, 7598),



(ՌԻ) - ԿՈՂԱԿԻՅ (№ 7239),



(ՌՈՒ) - ՆԻԿՈՂՈՍԻՆ (№ 7602), ՄԱՐԿՈՍ (№ 9422),



(ՌՈՒ) - ԲԱՌՈԱՍԱՐԻՆ (№ 9693),



(ՌՈՒ) - ՄԱՐԼՈՎԻ (№ 7603),



(ՄԻ) - ՄԱՐԻԱՆԻ (№ 54), ԽՈԽՈՄՄԻՄԱՅ (№ 253), ՄԱԱՄՊՈՒ-  
ՌԻՆ (№ 2399), ՄԱՐԻԱՄ (№ 3716), ՄԱՐԳԱՐԻՆ (№ 5140),



(ՄԱՐ) - ՄԱՐԳԱՐԱՅԻՆ (№ 5653), ՄԱՐԹՈԼՅԻՆ (№ 10832),



(ԵՒ) - ԵՒՔԱԽԻ (№ 7639),



(ՅԻ) - ՅԻՇԱՏԱԿԻ (№№ 4919, 7603),



(ՒԼ) - ՄԻՆԱՅԻՆ (№ 5499), ՆԱԶԼՈՒՒՆ (№ 5649), ԳՈՒՆԱԶԱՐԻՆ (№ 6360),



(ՐԻ) - ՄԵՎԵՐԻԱՆԻՆ (№ 4060), ՆԻԿՈՂԱՅՈՍԻՆ (№ 7856),



(ՈՐ, ՈՐՈ) - ԼԵԼԻԵՐՈՐԱ, ԳՐԻԳՈՐԻՆ (հմ<sup>ր</sup> 2399), ՈՐԴԻ (№ 2399, 5633), ՈՐ (№№ 6771, 6780), ՆՈՐՈԳԵՑԱՀ (№ 7920),



(ՇԻ) - ՀԱՆԳՈՅՑԵԱԼ, ԳԱԼՈՒՏ, ՎԱՅԵԼՈՒՄԻՆ (№ 205), ՆԱԶԼՈՒՆ (№ 253), ՄԵԼՔՈՒՄԻՆ (№ 3033),



(ՊԱՐ) - ՆՈՒՊԱՐԻՆ, ՀԱՆՊԱՐԻՆ (№ 8960),



(ՊԵ) - ԿԱՐԱՊԵՏԻՆ (№ 5639, 5653),



(ՊԵ) - ԻՈՒԹԼՈՒՊԵԼԻՆ (№ 7570),



(ՊԻ) - ԱՆԱՊԻՔԵԼԻՆ (№ 7597),



(ՊՈ) - ՊՈՂՈՍ (№ 239, 7598),



(ԾԻ) - ԲԱՐԵԿՈԾԻ (№ 7858),



(ՎԻ) - ՊՈՂՈՍԻՆ (№ 200, 1978), ՄԱՀՏԵՄԻ (№ 5650),



(ԱԼ) - ԱԱՂԱՏԱՏ (№ 1679),



(ՌԻ) - ՄԱՖԱՐԻՆ (№ 5736),



(ՔԻ) - ԱԻԵՏԻՆ (№ 7640), ԶՄԵԼՔԻՄԵԹ (№ 9422):

Արձանագրություններում կիրառվում է նաև համառոտագրության փակագիր (լիգատուրա) տեսակը: Մեկ (սակավ դեպքերում երկու կամ երեք) մայր տառի (տառերի) հիման վրա այլ տառերի անհրաժեշտ ստեղների միակցմամբ կազմվում է ամբողջական բառամաս արտահայտող անուն կամ որոշ խմբաքանակի բառակապակցություն: Ի տարբերություն կցագրի, փակագիրը գրվում է

առանձին եւ վերծանելու համար երբեմն ջանքեր են պահանջվում<sup>15</sup>: Փակագրերով աչքի են ընկնում Արցախ-Ռւտիքի դպրոցում պատրաստված կաշեկազմերին արված արձանագրությունները, որոնք փակագրված անձնանուններ են: Ձեռագրերի կազմերի արձանագրություններում հանդիպում են հետեւյալ փակագրերը.



— ԿՐԻԳՈՐ (№ 2678, 2783, 4626, 9067),



— ԵՐԵՅ (№ 3479, 3525),



— ԹՎԻՆ (№ 3032, 2582, 5653, 7576),



— ԿԱԶՄԵՅԱԼԻ (№ 1809),



— ԿԱՐԱՊԵՏ ԱԲԵՂԱ (№ 9422),



— ԿԱԶԱՐ (№ 38, 330, 1078, 2546, 3685),



— ՄԵԽԹԱՐ (№ 2389, 3971, 4422, 6427, 7633),



— ՎԱՐԴԱՊԵՏԻՆ (№ 982):

Պետք է նշել, որ ձեռագրերի կազմերի արձանագրություններում նույնպես հանդիպում են «ա» երկբարբառի՝ վերջավանկի «ա»-ի փոխարեն «օ»-ի կիրառումը՝ ԸՆԿՂՄԵՅ (№№ 7607, 7856):


<sup>15</sup>Տե՛ս Գ. Գրիգորյան նշվ. աշխ., էջ 51:

**Զեռագրերի կազմերի** արձանագրությունները նույնպես դրոշմված կամ փորագրված են միջնադարյան եւ բարբառախառն գրաբարով: Միջնադարյան գրաբարով արձանագրություններ կան Կիլիկիայում, Կ. Պոլսում, Լիճ անապատում, նոր Ջուղայում պատրաստված կազմերին, թեեւ դրանցում եւս նկատելի են բարբառային ներթափանցուներ: Բարբառային արձանագրություններն արտացոլում են տեղական խոսվածքների բնորոշ, յուրատիպ նրբերանգներ եւ որոշակի պատկերացում են կազմել տալիս հայոց լեզվի բառապաշտի ու գարգացման առանձին փուլերի մասին: Օրինակ՝ 1723 թ. Կեռովովում (Եվպատորիա) պատրաստված խաչին (ձեռ. № 8087) արձանագրված է, «Յիշ(Ա)-Տ(Ա)Կ է /Ս(ՈՒՐ)Բ ՆՇԱՆՍ /ԵՒ ԲԱՐԵ/ԽՕՍ, ՕՐ Ի ԵՎ/ԵԱԼ ԵՐԹԵՒԿՈՂ ՎԱՃ/ԱՌԱԿԱՆԱՅՑՆ, Ի ԴՈՒ/ՌՆ ՕՐ Ի ԵՎԵԱԼ Ս(ՈՒՐ)Բ Ա(ՍՏՈՒԱ)Ծ/ԱԾՆԻ ԵԿԵՂԵ/ՅԻՆ, ԹԸ/ՎԻՆ ԻՒՃ/ՀԲ (1723)-ԻՆ» (նկ. 9): ԺԸ դարում պատրաստված մեկ այլ խաչի վրայի արձանագրությունից տեղեկանում ենք, որ ոմն Ղուկաս Կուչս Մարիամին է նվիրաբերել մի ավետարան (ձեռ. № 8694). «Յիշ(Ե)Ա(3) ԳԵՐ ԾԱ/ԻԱ[ՅԻՆ] ՔՈ ՂՈՒԿԱՍԻՍ, ԼՈ/ԻՍԱՎՈՐԵԱ ԾՆՈՂԱՅՅՈ /ԻՄ ԱՌԱՔ(Ե)ԼԻՆ Եւ /ՄԱՆԱԽԱՆԱՄՆԵՐՆ, //ՎԱ-ԱՐԸ /ՀՈՔՈ ԾՆՈՂԱՅՅՈ /Ս(ՈՒՐ)Բ ԱՎԵԴԱՐԱՆՍ ԸՆԾ/ԱՅԵՑԻ ԿՈՒ(Յ)Յ ՄԱՐԻԱՄԻՆ, /ՈՐ ՈՒՐ ՈՒՐԵՔ ԿՈՒ(Ս)Ա/ՆՔ/Ն ԲՆԱԿԻՆ ԱՆ Ֆ ՅԻՇԱԳԱԿԵՆ»<sup>16</sup> (նկար 10):

Արձանագրություններում կիրառված են բարբառային ձեւեր ունեցող միշտարք անուններ ու բառեր. ԱԲԿԱՐ (№ 1987), ԱՐԾԱԴԱՎԱԼՏ (№ 2582), ԱՎԵՏԻԿ (№ 284), ԳԱՐՊԻԿ (№ 7088), ԳՈՒՐՔ (№ 5646), ԳՈՒԼՈ (№ 5430), ԳՐԻՂՈՐ (№ 7603), ԳԱԴԵՍ (№ 4240), ԳԱԻՈ (№ 3717), ԽԱՅՐ (№ 6420), ԽԵՐԱՅՊԵՏ (№ 5201), ԽԼԽԱԹ (№ 157), ԽՈԽՈՄՄԻՄ (№ 253), ԿԱՐԱԲԵԴ (№ 4276), ԿԱ-ԴԱՊԷՏ (№ 10687), ԿՈՂԱԿԵՅԻ-ԿՈՂԱԿԻ (№ 7646), ՄԵՅՐԻՄ (№ 5159), ՅՈՒԱՆ (№ 5430), ՊՈՒԳՈՒՄ (№ 157), ԼՍՏԸՓԱՆՈՍ (№ 3862), ՓՈՂԵՅԻՔՄ (№ 3829), ՔՈՒՐՈՉՆ (№ 3528) եւ այլն: Երբեմն հանդիպում է Յ կիսաձայնի անհարկի կիրառում, այսինքն՝ բառի քմայնացման (պալատիզացիայի) երեւություն<sup>17</sup>. ԱՂԱՅ-ԲԵՔ (№ 10522), ԶԵԽԱՅԳՈՐԾ (№ 8187), ՂԱԶՈՅՐ (№ 8888), ՅԻՇԱՅՏԱԿ (№ 6748, 9658), ՆԱԽԱՅՎԿԱՅ (№ 7237), ՇՈՅՂԱՅԿԱԹ (№ 5159), ՍԱՅ (№ 7642, 7842, 7857):

<sup>16</sup> Երկու արձանագրություններում կ նկատի շունենք փորագրիչների սխալները:

<sup>17</sup> Տե՛ս Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, նշվ. աշխ., էջ 54:



Ակն. 8087, Բ կեղկ. 1723 թ., Սբ. Աստվածածին (Կեռողակ):



Նկ. 10  
Զեռ. 8694, Բ փեղկ. ԺՌ դ.:

հնչպես իրավամբ նշում է Գ. Գրիգորյանը. «Պատմական յուրաքանչյուր ժամանակաշրջան իր կնիքն է դրոշմել հայոց անուն-ազգանունների վրա»<sup>18</sup>: Բուն Հայաստանում եւ նրա սահմաններից դուրս հայկական անունների կողքին սկսում են կիրառվել եւ ճանաչում ստանալ օտարամուտ բազմաթիվ անուներ: Առանձնակի հիշատակելի է ԺԵ-ԺԷ դդ. Պարսկաստանում կիրառված անձնանունները, որոնց վրա, բնականաբար, մեծ է տեղական լեզվամտածողության ու սովորությների ազդեցությունը: Այդ անուններից են՝ Լիլիթը, Իֆրիթէ, ՄԱԱՍՊՈՒԽ, ԴՇԽՈՒՆ, ՍՈՒԼԹԱՆՈՒԽ, ՄԱՄ, ՎԱԼԱԹ (№ 2399, 1657 թ.), Ա-ՂԱՄԱԼ, ԶԻՔ ՊԵՏՐՈՍ, ՄԵՐՏԱՏԻԿ (№ 200, 1658 թ.), ԽԱԹԱՅ (№ 347, 1668 թ.), ԱՍԼՉԱՏԻ (№№ 577, 1679, 1696-98 թթ.), ՅՈՒԴԻՑ (№ 4017, 1684 թ.), ՔԱԼԱՆԹԱՐ ԽՕՋԱՅ ԱՎԵՏ (№ 4941, 1692 թ.), ՅԱՐՈՒԹԵՆ (№ 577, 1696 թ.), ԱՂԱԹԵՂ (№ 8110, 1698 թ.), ԲՈՆԻՖԻՆԹՈՒՐ (№ 2034, 1703 թ.), ՍԱՎԱՐ (№ 10704, 1710 թ.) եւ այլն: Հայոց անձնանունների խայտաբղետ պատկերի ենք հանդիպում ԺԶ-ԺԹ դարերում ստեղծված խաչերի եւ մետաղե ժապավենների վրայի արձանագրություններում: Նրանցում հիշատակվում են՝ ՓԻՐԱՍ ԱՂԱՅ (№ 316, ԺԶ դ.), ԵԱԽՉԵՊԻ (№ 7679, 1607 թ.), ՄԵՐԵԹ (№ 959, 1634 թ.), ՓԻՐԲԱԲ (№ 237, 1653 թ.), ՄՈՊԱԽ (№ 157, ԺԼ դ.), ՊԱԼԻ (№ 214, ԺԼ դ.), ԷՊՐԵՍԻՄԱՅ (№ 3335, ԺԼ դ.), ԿՈՒՏՐԱԹ (№ 5594, ԺԼ դ.), ԽԱԶԼՈՒՆ (№ 253, ԺԼ դ.), ՇԱՀՑԻ (№ 357, ԺԼ դ.), ՈՒՂՈՒՄՈՒԹԱՆ, ՄԵՎՐԱԱՆ, ՕՂԱՆՓԱՇԱՅ (№ 4060, ԺԼ դ.), ԵՂԱԱՆ (№ 3238, 1838 թ.), ԱՍԼԻԱՆ, ԽՔՐԱԹ (№ 3716, ԺԹ դ.) եւ ուրիշներ: Տեղային բնորոշում ունեցող (օրինակ՝ ԿԵՅՋԱՎՅՅԻ ԶՄՐՈՒԹ № 7576, ՎԱՆԵՑԻ ԱՄԱՆ № 6748) եւ այլ (օրինակ՝ ԱՄԻՒՄԱՎԱՅ № 9841, ԽԱԹՓԱՇԱՅ № 7756) մականուններից բացի արձանագրություններում հիշատակվում են՝ ԶԻՔ ՊԵՏՐՈՍ (№ 200), ԿԾԻԿԵՆՅ ՍԱԼԳԻՍ (№ 10848), ՈՒՍՏԱ ՄԱՐՏԻՐՈՍ ՂԱԶԱՐ (№ 6766), ՔԱԼԱՆԹԱՐ ԽՕՋԱՅ ԱՎԵՏ (№ 4941):

Ուշ միջնադարյան արձանագրություններում օտարազգի անձնանուններին գուգահեռ կիրառվել են մի շարք արտահայտություններ, որոնք կենսունակ են առ այսօր. դրանցից են՝ ՀԱԼԱ-արդար (№№ 205, 3848), ՏՈՍՏԻ-բարեկամ (№ 3867), ՈՒՍՏԱ-վարպետ (№ 5580, 6766)<sup>19</sup>:

Արձանագրություն-հիշատակարանները երբեմն գրված են չափածո: Այդպիսին է 1821 թվականին Եղվարդում պատրաստված № 10379 ձեռագրի (Ռ. Մարկոսյան հավաքածու) արծաթակազմի արձանագրությունը<sup>20</sup> (նկ. 11).

<sup>18</sup> Տե՛ս Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 56:

<sup>19</sup> Հմմտ. նոյն տեղում, էջ 54:

<sup>20</sup> Զափածո արձանագրությունների մասին մանրամասն տե՛ս Ս. Գետրզյան, Հայ վիմագիր բանաստեղծությունը, Երևան, 1989: Հեղինակն արձանագրությունները բնութագրելիս նկատում է. «... որ հայ վիմագիր շափածո ստեղծագործությունները, լինեն դրանք պատմական եւ մշակույթի հոլորձաններին փորագրված հիշատակարաններ, թե տապանագրեր, դարերի ընթացքում պարզ հիշատակագրություններից վեր են ածվել բովանդակալից և գեղարվեստական մարմնացում եւ կանոնիկ ձեւ ստացած ուրույն ստեղծագործությունների, որոնք միաժամանակ, ինչպես առհասարակ վիմագիր արձանագրությունները,

«Ահե՛ՏԱՐԱՆԸՆՔՍ ՓՐԿՉԱԿԱՆ,  
ԱՐԾԱԹԱՊԱՏ ՈՍԿԵԶՕԾՄԱՆ,  
ՈՐՔ ՀԱԻԱՏՈՎ ԻՆԴՐԵՆ ՀԱՄԱՅՆ  
ԲՈԼՈՐՈՎԻՄԲ ԲՈՅՃ ԱՍՏ ԳԼՏԱՆ:  
ԱՅՐ ՏԵՐ ՅԱԿՈԲ ՈՐԹԵԳԻՐԵԱՆ  
ՅԵՏ ՎԱՂՁԱՆԻՆ ԶՍԱ ԸՆԾԱՅՄԱՆ  
ԵՏ ՅԻՇԱՏԱԿ ԶԱՐՄԻՅՆ ՀԱՄԱՅՆ  
ՅԱՇՏՈՒԼԸ)ԾԱԾՆԱՅ ՄՐԲՈՅ ԻՈՐԱՆ  
ՈՐ Ի ԵԶՋԱՏ ԲԼՆԱԿԱՐԱՆ,  
Ի ԹԻՒ ՓՐԿՉԻՆ ՄԵՐՈՅ ԼՀՐՄԱՆ  
ՀԱԶԱՐ ՈՒԹ ՀԱՐԻՒՐ ԻԱ. (1821) ԼՀՄԱՆ,  
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՀՆԳԵՏԱՍԱՆ»:

**Զափածու է նաև 1704 թ. Կեսարիայում պատրաստված № 10411 Սաղ-  
մոսարանի առաջին փեղկի՝ Դավիթ մարգարէի բարձրաքանդակի ներքեւի ար-  
ձանագրությունը (նկ. 12).**

«Գ(Ք)ՆԱՐ Ի ԶԵԽԻՆ ԴԱՀԻԹ ՄԱՐԴՎԱՐՔ,  
ԶԵՐԳ Ա(ՈՒՐ)Բ ՍԱՂՄՈՍԻՆ ՀՈԳԻՈՎ ԶԱՐԴԱՐՔ»:

---

կարեւոր ու հավաստի սկզբնաղբյուրներ են հայ ժողովրդի պատմության տարբեր կողմերի լուսաբանման գործում» (տե՛ս նոյն տեղում, էջ 53):



Նկ. 11  
Զեռ. 10379, թիկունք. 1821 թ., եղաղատ:



Նկ. 12.  
Զեռ. 10411, Ա. փեղկ. 1704 թ., Կեսարիա:

## ԱՐՏԱԿ ՄԱՂԱԼՅԱՆ

### ԱՌԱՔԵԼ ԿՈՍՏԱՆՅԱՆՅԻ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԳՏՉԱՅ ՎԱՆՈՒՅ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Առաքել վարդապետ Կոստանյանցի «Պատմութիւն Գտշայ վանուց» աշխատության ձեռագիրը պահպում է Երեւանի Մաշտոցի անվան Մատենադարանում, 3966 թվահամարի տակ<sup>1</sup>: Ինչպես երեւում է ձեռագրի տիտղոսաթերթի վրա առկա «Ե. վարդապետ» մակագրությունից եւ Հ. Թոփչյանի կազմած ձեռագրացուցակից, սույն ձեռագիրը, նախքան Մատենադարանի սեփականությունը դառնալլ, պատկանել է Հայտնի Հնագետ ու բանահավաք Խաչիկ ծայրագույն վարդապետ Դադյանին<sup>2</sup>:

Այս աշխատության հեղինակ Առ. Կոստանյանցի պատմագրական ժառանգությունը վաղուց իր վրա է հրավիրել հետազոտողների ուշագրությունը: Արցախի պատմությամբ զբաղվողներին նա առավելապես հայտնի է իր «Պատմութիւն Արցախի» Երկինատոր աշխատությամբ<sup>3</sup>, որը հանդիսացել է Բաֆֆու «Խամսայի մելիքությունները» ուսումնասիրության աղբյուրներից մեկը: Այդ առումով ավելորդ չէ այստեղ բերել Բաֆֆու խոսքը այս Երկի մասին, մասնավանդ որ այն չափազանց բնութագրական է նաեւ սույն աշխատության համար. «Առաքել վարդապետը, իրավ է, իր պատմության մեջ ժամանակագրական կարգ չէ պահպանել, նյութերը իրանց տեսակի համեմատ չէ դասավորել, եւ նրա աշխատությունը ավելի մի անկապ հավաքածու է, քան թե պատմություն, այսուամենայնիվ նրա գրքերը բովանդակում են իրանց մեջ թեեւ անմշակ, բայց բավական առատ նյութ պատմության համար: Երկու հատորները բաղկացած են 75 ընդարձակ գլուխներից եւ 428 երեսներից... Առաքել վարդապետի Երկու հատորների մեջ կան եւ այնպիսի գլուխներ, որ կարող են ծառայել իրեւ աղբյուր Ղարաբաղի մելիքների պատմության համար... Իսկ որ ամենից հետաքրքիրն է, դա է մի ժամանակագրական ցուցակ Ղարաբաղի նշանավոր անցքերի մասին, սկսյալ 1721 թվականից մինչեւ 1813 թվականը: Այդ ժամա-

<sup>1</sup> Մատենադարանի ձեռագրացուցակում սույն ձեռագիրը ներկայացված է այսպես. «1884թ.: Թերթ՝ 11: Թուղթ: 21,5x16: Միասյուն: Նոտրգիր: Տող՝ 20-27: Կազմ՝ ստվարաբուղբ: Հիշատակարան հիեղինակի՝ 1ա» (Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, Երեւան, 1965, էջ 1120):

<sup>2</sup> Յ. Թօփենան, Ցուցակ ձեռագրաց Խ. Վրդ. Դադեանի, հ. Ա, Վաղարշապատ, 1898, էջ 102:

<sup>3</sup> Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. 7822, 7823:

նակագրությունը, հեղինակի ասելով, դուրս է բերել նա մի ձեռագիր Մաշտոցից, որը գրված է եղել տեր-Գասպար քահանայի ձեռքով»<sup>4</sup>:

Վերջին տողերի հիման վրա Բ. Ռկուբայանը սխալմամբ ենթադրել է, որ եթե «նրա ժամանակագրությունն սկսվում է 1721 թվականից եւ ավարտվում 1813-ին, ուրեմն ինքն ապրել է XIX դարի առաջին կեսին»<sup>5</sup>: Մինչդեռ, «Պատմութիւն Արցախի» երկի առաջին հատորի հիշատակարանում Առ. Կոստանյանցը պարզ գրում է. «Ի թուականիս փրկչական 1858ին սկսեալ եւ ի 1868ին աւարտեալ յաղակս շգտանելոյն տեղեկութեանց»<sup>6</sup>: Նույն երկի երկրորդ հատորի հիշատակարանում արդեն կարդում ենք. «Նաեւ յիշել խնդրեմ զանպէտ բանասէր աշխատահրող գրքոյս՝ Առաքել վարդապէտ Կոստանեանց, միաբան սրբոյ վանիցն Գտշոյ. ի թուականիս փրկչական 1870 ամի սկսեալ եւ ի 1880 ամի աւարտեալ»<sup>7</sup>, այսինքն՝ սույն աշխատությունը գրվել է 1858-1880 թթ. ընթացքում:

Բացի այդ, երբ այս երկի ձեռագրերը վերադարձնելու առթիվ Բաֆֆու շարակամները մամուլում բանավեճ են սկսել նրա դեմ, մեծ գրողն իր գրչի ողջ գորությամբ նրանց պատասխանել է. «Եթե արժանապատիվ հայր սուրբը կամենում է ետ ստանալ յուր տետրակները, մենք մեծ ուրախությամբ կվերադարձնենք իրան՝ հայր սուրբին (ընդգծումը Բաֆֆունն է - Ա. Մ.), բայց ուրիշի ձեռքը չենք տա: Միայն մեզ պետք է նախ բանակցություններ անել նրա հետ, եթե նա չի ցանկանում յուր տետրակների այն տեղերը, որ պատմական նշանակություն ունեն, տպված տեսնել, այն ժամանակ ետ կուղարկենք»<sup>8</sup>: Վերոբերյալ տողերից պարզ երեւում է, որ Առ. Կոստանյանցը XIX դարի երկրորդ կեսի հեղինակ է Բաֆֆու ժամանակակիցը, ինչն ամենեւին էլ չի նսեմացնում նրա պատմագրական երկի արժեքը: Առանց այս երկի մենք առհասարակ չենք ունենա Դիզակի մելիքության պատմությունը: Թերեւս, դա էլ ի նկատի ունենալով Հայոց ազգագրական ընկերությունը Առ. Կոստանյանցի աշխատության այդ հատվածը հրատարակել է որպես «Նիւթեր հայ մելիքութեան մասին» մատենաշարի Ա պրակ<sup>9</sup>:

<sup>4</sup> Բաֆֆի, Խամսային մելիքությունները, Երկերի ժողովածու, հ. 9, Երեւան, 1987, էջ 609-610:

<sup>5</sup> Բ. Ռկուբայան, Հայոց Արեւելից կողմանց եկեղեցին եւ մշակույթը, Երեւան, 1998, էջ 351:

<sup>6</sup> ՄՄ, ձեռ. № 7822, էջ 6բ:

<sup>7</sup> ՄՄ, ձեռ. № 7823, էջ 8ա:

<sup>8</sup> Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 12, Երեւան, 1999, էջ 15-16:

<sup>9</sup> Առ. Կոստանյանց, Դիզակի մելիքությունը, «Նիւթեր հայ մելիքութեան մասին», պր. Ա. Վաղարշապատ, 1913:

\* \* \*

Առաքել Կոստանյանցը, որը երկար տարիներ եղել է Գտշավանքի վանահայրը, այդ վանքի պատմությանը նվիրված սույն երկը գրել է 1884 թ., երբ արդեն լույս էր տեսել Բաֆֆու «Խամսայի մելիքությունները» աշխատությունը (Թիֆլիս, 1882), ուստի այն, ի տարբերություն հեղինակի վերոհիշյալ ձեռագրերի, չի օգտագործվել Բաֆֆու կողմից: Ավելին, Առ. Կոստանյանցն այս տեսքը գրել է որպես իր «Պատմութիւն Արցախի» երկհատորյակի պակասների լուսացում: «Յայսմ հատորի պատմագրութեան ցանկամ բովանդակել զայն ամենայն թերութիւնս, որ յետոյ շրջելով ընդ ամենայն անոտնակոխ տեղիս... աստի եւս արտագրեալ զպակասութիւնս անցեալ երկուց հատորոց պատմագրութեանց»<sup>10</sup>: Այդ առումով սույն ձեռագրի հաղորդումները որոշակի հետաքրքրություն են ներկայացնում:

Անցնելով հրապարակվող աշխատության ներկայացմանը, նախ հարկ է նշել, որ «Պատմութիւն Գտշայ վանուց» խորագիրը հեղինակային չէ. ձեռագիրն այս վերտառությամբ նախ ներկայացվել է Խ. վրդ. Դադյանի ձեռագրացուցակում<sup>11</sup>, իսկ հետագայում՝ նաեւ Մատենադարանի ձեռագրաց ցուցակում<sup>12</sup>, ուստի մենք եւս նպատակահարմար գտանք պահել արդեն ավանդականացած վերնագիրը:

Առաքել Կոստանյանցի «Պատմութիւն Գտշայ վանուց» աշխատությունն, ըստ բովանդակության, պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի: Այդ մասերից առաջինում՝ հեղինակը ներկայացնում է Գտշավանքի իրեն նախորդած վանահայրերին՝ սկսած 1723 թվականից, երբ Դիզակ գավառի տիրակալ Մելիք-Եգանի կամքով այդ վանքի վանահայր դարձավ Մեսրոպ Եպիսկոպոսը (մահ. 1747)<sup>13</sup>: Այնուհետեւ Առ. Կոստանյանցը հակիրճ ներկայացնում է նրան հաջորդած վանահայրերի՝ Տեր Սիմեոն Եպիսկոպոսի եւ Հովհաննես վարդապետի պաշտոնավարության ընթացքում Գտշավանքի հետ կապված հիշարժան իրադարձությունները: Այս մասում (3ա) իր օգտագործած աղբյուրներից հեղինակը հիշատակում է Սարգիս Ջալալյանցի «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» աշխատությունը (Տիֆլիս, հ. 1, 2, 1842-1858):

Երկի երկրորդ մասում հեղինակը, ավանդագրուցների հիման վրա, ներկայացնում է Անտոն մանկան նահատակության սրտառուց պատմությունը, որը

<sup>10</sup> ՄՄ, ձեռ. № 3966, կամ այսուել՝ Բնագիր, էջ 1ա (հրապարակմանս մեջ ձեռագրի էջահամարները նշված են, ուստի նույն համարներն այսուհետև նշելու ենք շարադրանքի մեջ):

<sup>11</sup> Յ. Թօփենան, Յուցակ ձեռագրաց Խ. վրդ. Դադեանի, հ. Ա, էջ 102:

<sup>12</sup> Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, էջ 1120:

<sup>13</sup> Դիվան հայ վիմագրության (այսուհետեւ՝ Դիվան), պր. V, Արցախ, կազմեց Ա. Բարխուդարյան, Երևան, 1982, էջ 185:

տեղի է ունեցել Լենկ Թեմուրի աշխարհավեր արշավանքների ժամանակաշրջանում: Լենկ Թեմուրն արցախյան բանահյուսության մեջ ամենատարածված պատմավիպական կերպարներից մեկն էր, որի ասպատակությունների հետ կապված բազմաթիվ ավանդություններ է պահպանել Արցախի ժողովուրդը: Իսկ նրա ժամանակաշրջանի հետ կապված այս ավանդությունը, որն, անտարակույս, գուրկ չէ պատմական իրողության տարրերից, Առ. Կոստանդնուպոլիսում շնորհիվ փրկվել է կորստից եւ հասել մեր օրերը:

Գրված լինելով հիմնականում ավանդագրուցների հիման վրա եւ հայ միջնադարյան «Վանից պատմութեանց» ոգով<sup>14</sup>, այնուհանդերձ սույն երկը, հատկապես՝ հեղինակի ապրած ժամանակաշրջանի մասով, պարունակում է մի շարք ուշագրավ տեղեկություններ, որոնց վավերականությունն ապացուցվում է այլ սկզբնաղբյուրներով: Մասնավորապես, չափազանց կարեւոր նշանակություն ունի Գտշավանքի հողային սեփականության սահմանների մասին Առաքել Կոստանդնուպոլիսը: Այդ տեղեկության իսկությունը հաստատվում է իր իսկ կողմից Գտշավանքի ընդարձակ կալվածքների վերաբերյալ 1856 թ. դեկտեմբերի 1-ին Ղարաբաղի կոնսիստորիային ուղղված տեղեկագրով, որտեղ ներկայացված են գրեթե նույն սահմանները: «Պատիւ ունեմ յայտ առնել ամենայարգոյաբար Վիճակային Կանսիստորիիդ Ղարապաղու, - կարդում ենք այդ տեղեկագրում, - թէ՛ մնալով իմ յընթաց այսքան միջոցի ի վանսն Գտիշոյ՝ ես ինքնին որշափ նկատեցի եւ որքան ստուգեցի յարժանահաւատ անձանց, կալուածք յիշեալ վանից պարունակին ի սահմանս յայսոսիկ՝ ի հիւսիսային կողման Փարախներն, անտի սկսանի գէպ յարեւմուտս ընդ մեծ գետովն մինչեւ ցնոխուտթուբուլաղն, անտի գնայ գէպ հարաւ ի Տամզլուբուլաղն, եւ անտի գնայ զառ ի վայր մինչեւ ի հին վանքական ջրաղացն, որ գտանի ի ներքոյ ջրաղացն Մոխրենիս գիւղականաց, եւ անտի գայ մինչեւ Ապաշխարողաց անուանեալ աւերակ ջրաղացն եւ այգին, եւ անտի ընդ կատար լերինն գնայ մինչեւ ցմեծ գետն Թաղլարու, որ կոչի Ղօռուշայ»<sup>15</sup>: Մեզ է հասել նաեւ Հովհաննես արքեպիսկոպոսի կողմից 1818 թ. հունիսի 16-ին կազմված Արցախի առաջնորդական վանքերի մի ուշագրավ ցուցակ, ըստ որի «Դուզաղու Գտիշավանքին թէմի» մեջ են մտել Տող, Քարագլուխ, Յոր, Հադրութ, Մոխրենիս, Տու-

<sup>14</sup> Այդ պատմությունների առանձնահատկությունների մասին տես Ա. Խաչիկեան, Հայ միջնադարեան «Վանից պատմութեանց» գնահատման հարցի շուրջ. – «Հայկագեան հայագիտական հանդէս», 1982-1984, հ. Ժ, էջ 9-19, վերահատարակությունը տես Ա. Խաչիկեան, Աշխատութիւններ, հ. Ա, Երևան, 1995, էջ 108-114:

<sup>15</sup> ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 182, վավ. 449, նաեւ՝ Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, Հայ Առաքեական եկեղեցու Արցախի թեմը (1813-1933 թթ.), Երևան, 2001, էջ 253:

մի, Ազոխ եւ այլ, թվով 33 գյուղ<sup>16</sup>: Բերված տեղեկություններից երեւում է, որ Գտշավանքն իր ընդարձակ կալվածքները պահպանել է մինչեւ XIX դարի երկրորդ կեսը: Այնուհետեւ, ինչպես նշում է Հ. Ռուբանը, այդ կալվածքներն «ամբողջապէս իրմէ յափշտակուած» են<sup>17</sup>: Մասնավորապես, «Արձագանք» շաբաթաթերթի 1886 թ. նոյեմբերի 30-ի համարում հրապարակված մի թղթակցության մեջ կարդում ենք, որ Գտշավանքն «ունի վարելահողեր վէճի տակ արքունի գանձարանի եւ բէկերի հետ»<sup>18</sup>: Կարծում ենք, այս ժամանակաշրջանին է վերաբերվում Մատենադարանում պահվող «Անուանք կալուածոց վանից Ղարաբաղու» վերտառությամբ մի անթվակիր վավերագիր, որտեղ որպես Գտշավանքին պատկանող վարելահողեր նշված են Փարախը, Քոտանոցը եւ Եկեղեցածորը, որոնք՝ «վասն ծածկեալ լինելոյ վարելահողոցն մացառօք շերեն զարդիւնս»<sup>19</sup>:

Այս երկից ակնհայտ է դառնում նաև Դիզակի մելիքների մշտական հոգատար վերաբերմունքը Գտշավանքի եւ նրա սպասավորների նկատմամբ, ինչն, անտարակուս, Մելիք-Եգանի հաջորդներին էր փոխանցվել իրենց մեծանուն նախնուց: «Հայաստանն այսու եղանակաւ ընդ նմին ժամանակի ծաղկեալ պահէին՝ իւրաքանչիւր գաւառ զվանս իւրեանց. ամենայն անձն ջանայր տալ յիշատակս. եւ մեծամեծ իշխանք եւ որք ունեւորք են եւ հարստացեալք՝ նոցա առաջին հոգս այն էր, զի թողցեն յայսմ աշխարհի զբարի անուն եւ ազնուագոյն յիշատակ» (Յա), — գրում է Առ. Կոստանյանցը: Այս տեղեկությունները որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև Արցախի մելիքությունների ներքին կյանքի լուսաբանման համար:

Սակայն, հայտնի է, որ հետագայում XVIII դարի վերջին եւ XIX դարի սկզբին, Շուշիի իբրահիմ խանի (մահ. 1806) կողմից Մելիք-Եգանյանների տոհմի մի մասը բռնությամբ մահմեդականացվեց, իսկ այդ ճյուղի ներկայացցիչները սկսեցին կրել Մելիք-Եգանով եւ Մելիք-Ասլանով ազգանունները: Այդ առումով, ուշագրավ է Առ. Կոստանյանցի մի տեղեկությունը Մելիք-Եգանյանների տոհմի մահմեդականացված ճյուղի իր ժամանակակիցների մասին. «Դարձեալ ի դէսս Մահմետի, այնպէս պնդութեամբ պահեն գօրէնս նորա, կարծեմ թէ Մահմետն բնաւին չէ այնու հոգւով պահպանեալ» (Յա): Այս տպավորությունն, անտարակուս, ձեւավորվել է նրանց հետ ունեցած բազմաթիվ շփումների ընթացքում եւ համահունչ է Մելիք-Ասլանովների մասին կեոյի բերած հայտնի տեղեկությանը. «Կրոնը մոռացնել է տվել հայ մելիքների այդ

<sup>16</sup> ՄՄ, Կարողիկոսական դիվան, թղթ. 32, վավ. 219, թ. 1:

<sup>17</sup> Հ. Ռուբան, Արցախի վանեւրը, Վիեննա, 1953, էջ 16:

<sup>18</sup> «Արձագանք», 1886, 30 նոյեմբերի, թի 44, էջ 578:

<sup>19</sup> ՄՄ, Կարողիկոսական դիվան, թղթ. 246, վավ. 459, թ. 2:

հեռավոր ժառանգներին ազգային ամեն մի պարտավորություն։ Թեև նրանք շատ լավ գիտեն, որ հայեր են, բայց մահմեդական կրոնին պատկանող, այնուամենայնիվ այնքան ենթարկված են ամբոխային հասկացողության, որ կրոնն են համարում ազգության նշան, ուստի եւ ձուլվում են թաթար մահմեդական-ների հետ՝ հաճախ իրենց ազգակից հայերի դեմ գնալու համար»<sup>20</sup>։ Ահա թե դավանափոխությունն ուր էր հասցրել հայ մելիքների այս շառավիղներին։

Վերջում նշենք, որ կարեւոր նշանակություն ունեն նաև հեղինակի հաղորդած ինքնակենսագրական բնույթի տեղեկությունները, որոնք լույս են սփոռում նրա գործունեության նախնական շրջանի վրա։ Հստ այդ տեղեկությունների՝ տասնհինգամյա Առ. Կոստանյանցը, ցանկանալով «մտանել ի կարգ կուսակրօնութեան» եւ նվիրել իր անձը «ի վանս միոյ աւերակի» (Եթ), Գտշավանքում սկսել է իր ուսումնառությունը։ Եվ հենց միջնադարյան հայ մշակույթի այդ հայտնի կենտրոնն էլ դարձավ այն վանքը, որի հետ ընդմիշտ իր կյանքը կապեց Առ. Կոստանյանցը։ Պահպանվել է Արցախի թեմի առաջնորդ Բաղդասար արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանի 1853 թ. սեպտեմբերի 2-ի մի գրություն՝ ուղղված Դիզակի ազգաբնակչությանը, որով հայտնում է, թե դպիր Առ. Կոստանյանցին կարգել է Գտշավանքի կառավարիչ եւ բարեկարգիչ։ «Յանկալով ըստ սեպուհ պարտաւորութեան իմում շէն եւ ապատ առնել զերեւելի վանօրայս թեմիս Ղարապաղու, - գրում է նա, - ամայացեալս յերեսաց զանազան խոռովութեանց եւ անհանգստութեանց կողմանցս այսոցիկ, եւ հաստատել յիւրաքանչիւրումն ի նոցունց զմիաբանութիւն՝ նշանակեցի այժմէն զգպիր Առաքել Առագեանն Կոստանեանց ի վանսն սրբոյն Կտիչոյ, զի մնասցէ նա անդր եւ ունիցի ի վերայ վանքապատկան կալուածոցն զկարեւորն նկատողութիւն մինչեւ ցստանալ իմ ի ծայրագոյն Հոգեւոր իշխանութենէ զհրաման ձեռնադրելոյ զնա ի կարգ վարդապետութեան»<sup>21</sup>։ Նույն փաստաթղթից տեղեկանում ենք, որ Առ. Կոստանյանցը կոչված էր նաև հայոց լեզու եւ կրոն դասավանդելու տեղի մանուկներին։

Հարկ է նշել, որ նա իր եւ իր ծնողների մասին որոշ տեղեկություններ էլ թողել է «Պատմութիւն Արցախի» աշխատության առաջին հատորի հիշատակարանում, որտեղ մասնավորապես կարդում ենք. «Ընթերցողք պատմութեան՝ խնդրէմ յիշել ի խնկանուէր ազօթս ձեր զծնողս իմ Մարիամ եւ զԱւագ, եւ զհոգեւոր ծնողն իմ ճգնազգեաց զՅակոր վարդապետն, նաև զմիաբանութիւնս սրբոյ վանիցն Գտշոյ, որ եւ վասն օգնականութեան նոցա միայնութեանս գործն յաւարտ ընթացաւ։ Հուսկ յետոյ եւս աշխատող մատենագրութեանս նու-

<sup>20</sup> ԱՅԱ, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, Երևան, 1973, էջ 364։

<sup>21</sup> ՄՊՄ, Կաքողիկոսական դիվան, թղթ. 168, վալ. 41։

աստ ծառայիցն Քրիստոսի ծառայ Առաքել վարդապետ միաբան նոյն վանիցն, եւ որք զիս յիշէք ի յաղօթս ձեր, Տէր յիշեսցէ զձեզ յաւուրն այցելութեան»<sup>22</sup>: Նույն ձեռագրում մեկ այլ, ավելի ընդարձակ տեղեկություն էլ Առ. Կոստանյանցը նվիրել է իր մորը՝ Մարիամին: Նկատի ունենալով այդ հիշատակարանի կարեւորությունը, այն բերում ենք ամբողջությամբ. «Արժան է իրաւ յիշել զմայրն իմ Մարիամ, որ քառասուն եւ հինգ ամ այրի նստաւ անարատութեամբ, արդարեւ չկարաց բերան մարդոյ բանալ բնաւին առ նա, զի դնել զբարուրանս ի վերայ նորա: Ի վերջին ժամանակս ի 1853 ամի եկն ի սուրբ վանս Գտիշոյ յօդնութիւն միայնութեանս՝ ծառայեալ զերմեռանդ սրտիւ եւ սրբամաքուր հոգւով շորեքտասան ամ, եւ ապա՝ մերձեցաւ ժամանակ վախճանման նորա, ուստի լայր եւ ողբայր անմիմիթար հոգւով, ասելով որդեակ, զի ահա՛ ժամանակ է մահուան իմոյ, զիա՞րդ կարիցես կեալ միայնակ, ցաւ է ինձ, որդեակ: Վասն որոյ բազում միսիթարական բանս խօսելով խաղաղացաւ ի ծփանացն բազմահոգ, եւ ապա՝ աւանդեալ հոգին՝ թողելով զիս ի մեծի սգաւորութեան եւ տրտմութեան: Ժողովեալ բազմութիւնք արանց եւ կանանց՝ տարեալ ամփոփեցին ի յարեւելեան կողմն արտաքոյ սրբոյ վանիցն Գտշոյ, ի տափարակ ինչ տեղւոշ. ի Տէր. ամէն»<sup>23</sup>: Այստեղից ակներեւ է դառնում, որ Առ. Կոստանյանցն իր հորը կորցրել է վաղ հասակում, իսկ մայրը մահացել է 1867 թ., տասնչորս տարի Գտշավանքում որդու մոտ անցկացնելուց հետո: Առաքել Կոստանյանցը եւս իր մահկանացուն կնքել է այնտեղ եւ թաղվել Գտշավանքի գավթում:

Ամփոփելով նշենք, որ Առաքել Կոստանյանցի «Պատմութիւն Գտշայ վանուց» երկը, չնայած իր առասպեկտախառն եւ կցկտուր բնույթին, Արցախի պատմության նկատմամբ օրավոր աճող հետաքրքրության պայմաններում կարող է առանձին արժեքավոր տեղեկություններ տալ պատմաբաններին, ուստի որոշեցինք այն հանձնել ընթերցողների դատին:

Հրապարակելով սույն աշխատությունը՝ փակագծերում նշել ենք ձեռագրի էջահամարները, բացել ենք հապավումները, իսկ բաց թողնված տառերը լրացրել ուղղանկուն փակագծերի մեջ, ինչպես նաև անտեսել ենք «ի» նախդիրից առաջ դրված ապաթարցները եւ կետադրությունը սրբագրել ըստ արդի հայերենի կանոնների: Զփոխելով ձեռագրի ուղղագրությունը, տառասխալները նշել ենք սովորականից տարբերվող տառատեսակով: Որոշ գեպքերում, ընթերցողների շահերից ելնելով, միջամտել ենք նաև հեղինակի պարբերաբաժանմանը՝ մեծ պարբերությունները տրոհելով ավելի մանր հատվածների:

<sup>22</sup> ՄՄ, ձեռ. № 7822, էջ 156ր, տես նաև՝ ձեռ. № 7823, էջ 117ա:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 157ա:

**ԱՌԱՔԵԼ ԿՈՍՏԱՆԵԱՆՑ**  
**[ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԳՏՉԱՅ ՎԱՆՈՒՑ]**

(1ա) Յայսմ հատորի պատմագրութեան ցանկամ բովանդակել զայն ամենայն թերութիւնս, որ յետոյ շրջելով ընդ ամենայն անոտնակոխ տեղիս գաւառաց գաւառաց եւ գիւղերէից եւ յանծանօթ վայրս բնակութեան Հայոց կամ այլասեռից ազգաց եւ ազանց. էր, որ տակաւին թարմ եւ ի բերանս ծերունազարդ, չերմագոյն եւս անձանց արժանահաւատից պատմեն ի լսելիս հնասէր անձանց, եւ էր, որ ի տան ռամիկ եւ անգրագէտ արանց գաղեալ ի կորուստ մատնեն, որպէս թէ նովաւ ունին զնոր իմն զիեանս ստանալ: Արդարեւ թովշութեամբ համոզելով զայնպիսինս, հազիւ հազ կարացեալ հանել ի գաղեալ դարանէ, յայսպիսեաց աստի եւս արտագրեալ զպակասութիւնս անցեալ երկուց հատորոց պատմագրութեանց<sup>24</sup>, յորոց մեծ մասն վերաբերելով առ հայրն մեծի մելիք Եկանայ՝ Ղուկաս վարդապետն<sup>25</sup>, հայր Մեսրովը Եպիսկոպոսին, որ ամփոփեալ կայ ի վանս Գտշոյ, առ դրան հին Լուսաւորչի Եկեղեցւոյն<sup>26</sup>, կացեալ ի պաշտօնի հովուապետութեան ի Դիզակ նահանգի՝ ի ՌՃՇ. (1747) թուականին Հայոց ըստ հաստատուն վկայութեան (1բ) տապանաքարի նորին, որ գրի, թէ. քսան եւ հինկ ամ կացեալ ի հովուապետութեան, ձեռամբ Մելիք Եկանայ, եւ ապա մեռանի աստ՝ ի սուրբ վանս եւ դնի ի տապանիս: Նաեւ իմ կացեալ աստանօր ի սուրբ վանս Գտշոյ եւ միշտ պարապեալ ի յազգային ինչ պատմագրութեան. սոյն վանից հնական անցս եւ պատահեալ ժամանակաւոր գործողութիւնս այլազգաց, կամ բարեգործութիւնս պայզատազարմ գաւառապետաց եւ Պարսից մեծամեծ թագաւորաց եւ նախարարաց թողեալ մինչեւ յայս յետին ժամանակ՝ մինչեւ ցաւարտումն կենաց մերոց, զի ժամ է արդէն, մինչ կենդանի եմ, սկզբնաւորել թուականիս փրկչական 1884-ին զորքանեաց անցելոց պատահարաց եւ զաստանօր նախկին բնակողաց, թէ ո՞յք են ի նոցունց երեւելի, եւ արարեալ ընդդէմ բնական թշնամեաց մերոց քաջութիւնս՝ թէ Պարսից եւ թէ

<sup>24</sup> Հեղինակն ի նկատի ունի վերը հիշատակված՝ 1858-1880 թթ. իր գրած «Պատմութիւն Արցախի» երկինաւոր աշխատությունը (Մատենադարան, ձեռ. 7822 և 7823):

<sup>25</sup> Ըստ տապանագրի՝ Ղուկաս վարդապետը վախճանվել է 1715 թ. (տե՛ս Դիվան, պր. V, էջ 178):

<sup>26</sup> Այս Մեսրոպ վարդապետը, իրով, պատմական անձնավորություն է եղել: Իսկ վերոնշյալ տողերը գրելիս Առաքել Կոստանյանցը աշխի առաջ է ունեցել Գտշավանդի զավթի հարավային պատի տակ գտնվող նրա շիրմախարի սույն արձանագրությունը. «Այս է տապան աւր Սիմեոնի որդի Մեսրոպ վարդապետին. թվին ՌՃՇ. (1723) լուահնոցի Մելիք Եկանն ձեռնադրել տուավ Եպիսկոպոս, կարգեց Կտիչայ վանիցն առաջնորդ. որ եկի հաստատեցի սուրբ արքուն. ի թվին հայոց ՌՃՇ. (1747)-ին առ Աստուած փոխեցաւ. ով որ կարդայ մէկ բերան ողորմի ասեն» (տե՛ս Դիվան, պր. V, էջ 185):

այլասեռից: Տէր տացէ մեզ կարողութիւն գրելոյ եւ վաստակելոյ եւ ի Հոգոյն Արբոյ շնորհ պարգեւելոյ, զի մի՛ մնասցէ ի թերութեան եւ ի յանկատարութեան:

(2ա) Թէ Ո՞վ ՅԱԶՈՐԴԵԱԼ ԶԿՆԻ ՄԵՄՐՈՎՔ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Գրէ այսպէս Յօհան վարդապետ՝ միաբան սրբոյ Աթոռոյս Գոչոյ, ընդ ժամանակի իւրում, թէ զկնի վախճանելոյ Մեսրովքայ ձեռնադրեալ եղեւ որդի նորա Տէր Սիմէօն եպիսկոպոս, ձեռամբ դարձեալ Մելիք Եկանայ<sup>27</sup>: Սա արիաջան աշխատասիրութեամբ լուսաւորէաց մեծ իմն պայծառազարդութեամբ զսուրբ վանս եւ վերստի[ն] իսկ հաստատեաց զմերձակայ կալուածս, զջրաղացս, որ ի ներքոյ Մոխրենիս գեղջ<sup>28</sup>, ի վերայ երկուց վտակաց ջրոց, որք խառնին ընդ միմեանց, եւ զայգիս խաղղոյ ի ներքոյ առուաց, որ գնայ եւ ոռոգէ զբոլոր այգէստանս Դող գեղջ բնակչաց: Նաեւ հաստատեաց զտասանորդս քըսան եւ երկուց այգեաց հասարակութեան Դողու գեղջ, ձեռամբ մեծի Մելիք Եկանայ: Դարձեալ սահմանադրեալ վարելահողոց, ներքին սահմանն Ղուչայ գետն<sup>29</sup> մինչեւ Նօխոդլուպուղաղն<sup>30</sup> եւ անտի ի վեր՝ մինչեւ եւ իսկ Ջրկրուատափ, եւ ի վայր գալով ջրովն ձորակի մինչեւ Մ[ո]խրենիսոյ մեծ յառուն, եւ անտի մինչեւ ի գագաթ Դողու լերինն<sup>31</sup>, զայսքանս վերստին առեալ հաստատեաց ի վերայ վանիցս<sup>32</sup>:

<sup>27</sup> Այստեղ ծողովրդական հիշողությունը որդու կատարած գործը վերագրել է հորը, այսինքն՝ Մելիք-Եգանյանների տոհմի առավել անվանի ներկայացուցիչ Մելիք-Եգանին: Մինչդեռ, տապանագրեալից հայտնի է, որ Մելիք-Եգանը վախճանվել է 1744 թ., իսկ Մեսրոյ վարդապետը՝ 1747-ին: Դա նշանակում է, որ նրա որդի Տեր Սիմէօնը կարող էր եպիսկոպոս ձեռնադրվել Մելիք-Եգանի որդի Մելիք-Եսայու աջակցությամբ, որը նադիր շահի հրովարտակով Դիզակի մելիք էր նշանակվել 1746 թվականից (տե՛ս Թ. Պողոսյան, Խամսայի մելիքների իրավունքներն ու պարտականությունները. – «Բանքեր Հայաստանի արխիվների», 1966, թիվ 1, էջ 204):

<sup>28</sup> Մոխրենիս - գյուղ ԼՂՀ Հադրութի շրջանում, Տողից 4 կմ հարավ: Անցյալ դարում կոչվել է նաեւ Մոխրաններ կամ Մուսանին: Եկեղեցին՝ Ս. Սարգիս: Գյուղի մոտ է գտնվում Զովա վանքը (տե՛ս Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, Երեւան, 1998, էջ 712, Յակոբեան Ա., Գոշավանի շինարարական արձանագրութիւնը եւ հարավային Արցախի եպիսկոպոսութեան սահմանները. – «Հանդէս ամսօրեայ», 1999, թիւ 1-12, էջ 274):

<sup>29</sup> Դուրուցայ - գետ Արաքսի ավազանում, կազմվում է Թաղլար եւ Դողա վտակների միախառնվերոց: Հոսում է Իջևանասարի ստորոտով եւ վերին հոսանքում կոչվում է նաեւ Իշխանագետ: Դուրուցայ է կրչվել ամռանը շրանալր պատճառով (տե՛ս Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., հ. 3, Երեւան, 1991, էջ 594):

<sup>30</sup> Նոխուտու - գյուղ կա նաեւ Մեծ Հայքի Սյունիք նահանգի Կովսական գավառում (տե՛ս Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., հ. 4, էջ 11):

<sup>31</sup> Տող - լեռ Արցախում, Հադրութի շրջանի Տող գյուղի մոտ: Այս լեռան կատարին է գտնվում Քթիշ ավերակ բերդը:

<sup>32</sup> Գոշավանի հողային սեփականության վերաբերյալ Ա. Կոստանյանցի տեղեկությունների իսկությունը հասաւառվում է իր իսկ կողմից նոյն վանի կալվածների մասին 1856

Նաեւ մնայ ինձ ասել, որ գնաց առ թագաւորն Պարսից: (2բ) Սոյն սա երանելի արիազան եպիսկոպոսն Սիմէօն, ձեռամբ մեծի Մելիք Եկանայ, գնայ ի Շահաստան քաղաք՝ առ Պարսից թագաւորն Սիլեհման շահ, որ է նադիր շահն<sup>33</sup>, ընդ իւր ունելով զարձանագիր վանից՝ զնախկին հաստատեալ սահմանս կալուածոց, նաեւ բաց ի նմանէ գրելով ի վկայագրի անդ եւ տայ կնքել մեծամեծ իշխանաց Դիզակ նահանգի, զայլ եւ զանազան տեղիս եւ զանուանս կալուածոց եւ սահմանաց՝ աստանօր խաբս արկանէ, ընդ իւր առեալ զայն հաստատագիր, եւ քանի իմն պատուաւոր անձամբք գնայ առ Շահն Սիլեհման: Եւ անդանօր զկնի աւուրց ինչ անցանելոյ՝ մեծ իմն պատուով կոչէ ի սենեակ իւր, առանձանաբար նախ հարցաքննեալ վասն գալստեան նորա, ասելով, թէ ընդէ՞ր յայսքան հեռի ճանապարհս աշխատեալ եկիր ի տեսութիւն մեր: Եպիսկոպոսն յառաջ յուղարկեալ զծանրագին պարգեւս թագաւորութեան արժանի, աստանօր պատասխանէ եպիսկոպոսն, թէ ունիմք մեք ի նախնեաց մերոց սովորութիւն, եթէ նախ շտեսանիմք զերեսս երկրաւոր թագաւորի ընծայիւր եւ պատուօք, զիա՞րդ կարիցէմք հոգւով տեսանէլ զերեսս երկնաւոր թագաւորին. զի գրեալ է ի գիրս մեր, թէ իշխանութիւն եւ պետութիւնն ո՛չ ուստեքէ է, եթէ ո՛չ յԱստուծոյ<sup>34</sup>, վասն որոյ եւ հնազանդէլ պարտեմք նախ մարմնաւորին եւ ապա երկնաւորին:

(3ա) Շահն հաւանեալ բանից նորա, եւ ապա սկսեալ Հայրն Սիմէօն թէ բանիւր եւ թղթով բացեալ զամենայն զիւր խորհուրդս առաջի նորա, ասելով, թէ մեք նախքան զամենայն պարտաւոր եմք միշտ աղօթել վասն յաղթութեանց եւ զօրութեանց թագաւորացն բարէպաշտից գո՞հացողական բանիւր եւ զանգակահարութեամբ ի մէջ եկեղեցւոյ, զի մնալ անլինաս եւ հաստատուն եւ ձեռամբ երկնառաք անմահ թագաւորին միշտ եւ հանապազ ի մարտի յաղթող գտանիլ, եւ աթոռ իշխանութեան յարատեւեալ յաւիտենական կենօք մնալ յորդւոց յորդիս բազմաժառանգ սէրնդովքն ապագայից. եւ զմեզ պահպանեսցէ խաղաղութեամբ: Եւ ապա սկսեալ զինդիր իւր ճոփ բանիւր յառաջարկել. նախ բերելով յառաջ զնախկին Պարսից թագաւորս, որք եւ իսկ զբազում բարեգործութիւնս եւ զերախտաւորութիւնս արարեալ են վանորէից եւ կալուածաթղթով հաստատեալ եւ նզովեալ են օրինօք Մահմետի, թէ մի՛ որք վստահանալ ընդ տիրապետութեամբ իւրով նուաճել զայս եւ զայն սահմանս կալուածոց վանից պար-

թ. դեկանմբերի 1-ին Ղարաբաղի կոնսիստորիային ուղղված աեղեկագրով (անս Մատենադարան, Կաթողիկոսական դիման, թղթ. 182, վավ. 449, թ. 1):

<sup>33</sup> Նադիր շահի անոնը ոչ թե Սովեյման էր, այլ Թահմազ-Ղուլի խան:

<sup>34</sup> Հմմտ. Կող. Ա, 16:

գեւելոյ ի Պարսից արքայէն, որպէս տեսանի ի կազմեալ մատենի<sup>35</sup> սրբոյն Ստաթէի առաքելոյն ի Սիւնեաց վիճակի<sup>36</sup>, եւ ի մատենադարանի սրբոյ Գանձասարայ վանիցն ըստ արտագրելոյ Սարգսի արքեպիսկոպոսի Զալալեանց եւ տպեալ ի Տփիսիս քաղաքի<sup>37</sup>: Այսպէս այլոց ամենայն վանորէից արարեալ բարերարութիւնս եւ թողեալ զիւրեանց ազգացն եւ սերնդոց զյիշատակս երգանկութեան:

Զայս ամենայն արարեալ բարեգործութիւնս թագաւորացն Պարսից յառաջադրելոյ նմա, հանեալ զթուղթն գրեալ պարսից լեզուաւ եւ ետ նմա ընթերցեալ եւ զամենայն գրեալսն ընդ մտօք փակելով, մնաց ի վաղիւն քննել եւ (Յթ) տեսանել, թէ ո՞ր գործ է առնելի եւ որն խափանելի: Նոքա արարեալ խորհուրդ ինքեանք եւ դարձեալ առաւտեան նստեալ յաթոռ դատողութեան, եւ ըստ սովորութեան իւրեանց ժողովեալ յատեան անթիւ բազմութիւնք յամենայն կողմանց արանց եւ կանանց կամ օտարականք, եւ առնէր ուղիղ դատողութիւն. մինչեւ անգամ զարմանալ եպիսկոպոսին, թէ փառք ամենակալին Աստուծոյ, որ եւ իսկ սոքա անհաւատ գոլով օրինօք՝ այսպէսի ուղիղ հոգւով առնեն եւ քննութեամբ դատաստան, եւ էր, որ գնէին արդարութեամբ զմեղս եւ զյանցանս առաջի իւր՝ աւազակն կայր եւ մնայր լուսութեամբ իբրեւ արձան քարի կորագլուս առաջի ատենին, եւ էր, որ եւ հրամայէր ի բանտ արկանել, եւ ոմանք ի վաղ ժամանակաց անտի բանտարկեալ ի տանջանս ի գետնափոր մթին վայրս կացեալ, ոմանց զգլուխն բարձեալ ի մարմնոյն, եւ ոմանց ծայրատելով զմատունսն ձեռաց եւ ոտից եւ զականջմն հատանելով արձակէին, եւ այլ բազում յոլովատեսակ մահապարտութեամբ դատեալ, եւ ամբոխն ցրուեալ անտի, եւ գնացին իւրաքանչիւր ոք ի տունս իւրեանց:

Իբրեւ ժամ եղեւ պարապ իմն դադարման, դարձեալ կոչեցին ի յը[ն]թրիս զսրբազան հայրն Ախմէօն, ըստ օրինի Հայոց պատրաստեալ զկերակուր ամենատեսակ բարելի եւ քաղցրահամ. թէ եւ եպիսկոպոս յոյժ ունէր մաքրութիւն եւ անարատութիւն՝ մինչեւ ցան ժամանակ բնաւին չէր ձեռնամուխ լիեալ ի կերակուր անօրինաց, սակայն տեղի իրացն պահանջէր՝ յայնպէսի մեծի իմն հանդիսի նախարարաց եւ հազարապետաց, նաեւ առաջի գլխաւորին իւրեանց, զի մի յապաղեսցէ ի յուտելոյ, եւ գնիցէն զբարուրանս ի վերայ նորա, մտօքն խաչակնքեալ զկերակուրսն եւ սկսաւ (4ա) ուտել եւ ըմպել. ի նմին ժամանակի ամենեքեան ի գործ գնէին զգինին, չկայր խորութիւն պարսից եւ հայոց:

<sup>35</sup> Ենթադրում ենք, որ հեղինակն ի նկատի ունի 1781 թ. Տարեսամ կազմված «Պատմագիրք Սիւնեաց» ժողովածուն, որն այժմ 1488 համարի տակ պահվում է Մատենադարանում:

<sup>36</sup> Խոսքը Տարեւի վանի մասին է, որը կոչվել է Թաղեսս առաջյալի աշակերտ Եվստարեսսի (Տարես) անունով: Էստ ավանդության վերջինս քրիստոնեություն է քարոզել Սյունիքում եւ այնտեղ նահատակվել:

<sup>37</sup> Խոսքը Ա. Զալալյանցի «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» աշխատության երկրորդ հատորի հավելվածի մասին (Տփիսի, 1858, էջ 480-501):

**Թէ ՈՐԾՎ ԲԱՆԻԻ ՎՃԻՌ ԿՏՐԵՅԻՆ ԵՒ ԱՐՁԱՆԱԳԻՐՆ ՀԱՍՏԱՏԵՅԻՆ,  
ՈՐ ԱՅՀՄ ԳՏԱՆԻ Ի ԲՆԱԿՈՒԹԵԱՆ ԱԶԳԻՆ ՄԵԼԻՔ ԵԿԱՆԱՅ,**  
**ՈՐ ԴԱՐՁԵԱԼ ԵՆ Ի ԿՐՈՆ ՄԱՀՄԵՏԱԿԱՆԻ Ի ՅԱԽՈՒՇ ԻՓՐԱՀԻՄ ԽԱՆԻՆ<sup>38</sup>**

Ի թուականին Հայոց Ոճ՛ՀԲ. (1723)<sup>39</sup> զայն կարգեալ եպիսկոպոսն, որ գնացեալ էր ի տեսութիւն նադիր շահին, զինի ճաշակման յաւուրս ջատկի սկսան դնել պայման ի վաղիւն երեքաբթի ժողովեալ յատեան դատաստանի եւ հանեալ գհին թագաւորաց պատմութիւնս. թէ զի՞նչ իշխանութեամբ եւ որպէսի՞ հոգւով են պահպանեալ զազգս հայոց. նախ զպատմութիւն Մեծին Արշակուակայ, որ ամս ԾՊ. (54) թագաւորեաց հաշտութեամբ ընդ Հայոց եւ օգնութեամբ միմեանց. եւ ապա Արշական ամս Լե. (31), եւ միւսն Արշակ ամս Լ. (30), Արտաշէս ամս Ի. (20), Արշակուր ամս ԽԶ. (46): Ի սորա Ի. (20) ամին՝ ծնունդն Քրիստոսի: Արտաշէս ամս Լե. (35): Դարեհ ամս Լ. (30): Արշակ ամս Ժէ. (17): Արտաշէս ամս Ի. (20): Պերող ամս ԼՊ. (33): Վաղարշ ամ[ս] Ժ. (10): Արտաւան ամս Լե. (31)<sup>40</sup>: Սոքա ամենեքեան ընդ միմեանց օգնութեամբ Հայոց եւ Պարսից արարեալ են թագաւորութիւն եւ նիզակակից լինելով իրերաց: (4բ) Այսքանեաց թագաւորաց պատմութիւնս կարգալով տեղեկացան, որ միշտ պահպանեալ են զազգս մեր, երբեմն անկեալ հակառակութիւն, երբեմն հաշտութիւն, զի ի հին ժամանակաց անտի կայր առ եպիսկոպոսն կալուածաթուղթ հաստատեալ ի հայասէր թագաւորէն Շահ Ապասայ՝ նա հանեալ եւ եցոյց նոցա. նոքա առաւել եւս կամեցան զամենայն սահմանս վանիցն հաստատել: Իւրեանց օրինօքն կարգեցին եւ գրեցին եւ կնքահարեալ ի վերայ մաքաղաթ թղթոյ. եւ ամենայն մեծամեծք նոյնպէս կարգաւ հաստատեալ ետուն Սիմէօնի եպիսկոպոսին: Նաեւ այլ ինչ թանկագին ընծայս եւ ծանրագին պարգեւա: Նաեւ պատուելով թագաւորն Պարսից զեպիսկոպոսն մեր, դնելով ընդ նմա երեսուն հեծեալմ՝ բերել ի սահմանաց իւրեանց անցուցանել՝ թերեւս անվնաս գալ հասանիլ ի գաւառս եւ ի վանս մեր Գտշոյ:

Հստ հրեշտակի խաղաղութեան եւ առաջնորդութեան եկեալ եւ հասեալ ի վանս, եւ ժողովեալ յամենայն կողմանց բեկազնեայք եւ կառավարիչք գիւղա-

<sup>38</sup> Խոսքը Մելիք-Եզանյանների տոհմի մահմեղականացված նյուղի շառավիղների մասին է (նրանց մահմեղականացման մասին տես Առ. Կոստանեանց, Դիզակի մելիքութիւնը, էջ 81-82):

<sup>39</sup> Այստեղ հեղինակն ակնհայտուեն շփռում է թվականը: Այդ հանդիպումը կարող էր տեղի ունենալ 1747 թ. սկզբին, բանի որ նոյն թվականի հունիսին նադիր շահը Խորասանում դավադրաբար սպանվեց իր մերձավորների ձեռքով (այդ մասին տես Ս. Կիոմիլև, Պոходы Надир-шаха в Герат, Кандагар, Индии и события в Персии после его смерти, Тифлис, 1889, с. 216-217):

<sup>40</sup> Սոյն արքայացանկը հանգում է Մովսես Խորենացուն:

կանաց, եւ գործակատարք եւ հոգեւորականք՝ տեսանել արդեօք զի՞նչ գործ եւ զի՞նչ սահմանս են հաստատեալ վասն լուսաւորութեան սրբոյ վանիցս մերոյ: Եպիսկոպոսն հանեալ զթուղթն երկու կանգուն երկարութիւնն եւ լայնութիւնն նոյնչափ հաստատեալ ամենայն զգուշութեամբ, զի մի՛ ոք վստահանալ ձեռնամիսցէ: (5ա) Ի կալուածս վանքական կրկին հաստատեցին մեծամեծ բեկազ-նեայք, իւրաքանչիւր ոք ըստ արժանաւոր ընդունակութեան իւրոյ ընծայեցին այգիս եւ վարելահողս, ջրաղացս, պղնձեղէնս, մահճաւ, եւ զպատկանեալ վա-նիցս կահուկարասիս, նաեւ՝ ոմն զծի եւ եզն եւ ոմն զկով, զի այնպէս եղեւ մին-չեւ անգամ աղքատքս եւս ըստ շափոյ կարողութեան իւրեանց պարզեւս ետուն: Թո՛ղ զզարդս վանիցն, զի այսու եղանակաւ վերստին ճոխացուցին եւ զարդա-րեցին, եւ հաւաքեալ զմիաբանս երկուտասան. վասն որոյ բազմացան ծառայք եւ խոհարարք, նաեւ լուսարարս եւ ժամահարս, ընդ նմին զամենայն գաւա-ռային հոգեբաժինս եւ զաթոռահասս եւ անյիշատակ արանց եւ կանանց տան կահուկարասիս, հանգուցեալ քահանայից կողոպուտսն, զայս ամենայն ընդ այն ժամանակս բերէին ի վանս. ո՛չ միայն] յայս մերս՝ այլեւ յամենայն վանո-րայս: Հայաստանն այսու եղանակաւ ընդ նմին ժամանակի ծաղկեալ պահէին՝ իւրաքանչիւր գաւառ զվանս իւրեանց. ամենայն անձն ջանայր տալ յիշատակս. եւ մեծամեծ իշխանք եւ որք ունեւորք են եւ հարստացեալք՝ նոցա առաջին հոգս այն էր, զի թուղեն յայսմ աշխարհի զբարի անուն եւ ազնուագոյն յիշա-տակ. արդարեւ երանական կեանս ունէին:

(5բ) Սոյն սա Սիմէօն Եպիսկոպոսս վարելով զհովւապետական կեանս իե. (25) ամ կնքէ զցանկալի կեանս, թողելով զիշխանութիւն վանիցս Յօհան վարդապետի: Թէեւ յառաջ քան զնոսա նստեալ են բազում Եպիսկոպոսք, բայց նոցա վարուցն չունիմ կատարեալ տեղեկութիւն<sup>41</sup>: Վասն զի կառուցեալ է վանս

<sup>41</sup> Մեզ հաջողվել է ճշտել XVI-XVII դդ. Գոշավանմի մի հանի Եպիսկոպոսների անուները: Ստորև հրատարակում ենք Մատենադարանում 6834 թվահամարի տակ պահվող Մաշտոցի հիշատակարանը, ըստ որի 1575 թ. Գոշավանմի վանահայրը Գալոս Եպիսկո-պոսն էր. «Քրիստոս Աստուած մեր, քո սուրբ ծննդեամբը եւ յայտնութեամբդ, եւ մկրտու-թեամբդ, բաղմամբդ եւ յարութեամբդ ողորմա՛ ըստացողի գրոյս Բէկու, եւ իւր ննջեցեղոցն, եւ զծողիւ՝ Պետրոս անուամբ արեղայի, եւ ծնողաց իմոց՝ հատն իմոյ Մումոն, եւ մատ իմ Թէզային, եւ եղբաց իմոց եւ բվերաց իմոց. եւ ամենայն յարեան մերոց կենդանեաց եւ հանգուցեոց, ով որ կարդաֆ կամ արինակամ, Աստուած ողորմի ասէվ լի բերանով. ամէն: Փառք Ամենայսուր Երրորդութեան եւ մի աստուածութեան՝ Հայր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ այժմ եւ միշտ, որ ես կարողութիւն տկարիս եւ փծուն անիմաստիս հասանել ի աւարտ եւ ի կատարումն զծիս: Արդ, անկեալ սուրբ տասոս, որ կրչի Մաշտոց, գրեցաւ ձեռամբ ան-իմաստ եւ անարուեաս զծողի՝ Պետրոսի սուտանուն կրամատորի, յանուամբ միայն արե-դայի, ի դառն եւ ի շար ժամանակի, ի թիւականութեան հայոց ՌԻՒ. (1575). ի դանութեան Շահ Թահմանին, ի երկիրս Դիզակ, ի զեղս Պատկայթադ, ի վանս Քրիշու Սուրբ Աստու-ածածնիս եւ ամենայն սրբոց. եւ Եպիսկոպոսութեան տեղոյս տէր Գալոս Եպիսկոպոսի: Եւ Երեսս անկեալ աղաշեմ զուրբ ընթերցողս Աստուածաշունչ կտակին՝ յիշեցէ՛ ըստացող

ի գալստեան ազգին թաթարաց. ի թուականին Հայոց ՈՂ. (1241)<sup>42</sup>, անտի մինչեւ ցոյն անցեալ թիւն ՌՃՇԲ. (1723) շարունակ նստեալ են վիճակաւոր եպիսկոպոսք: Թողելով զնախկին առաջնորդաց մասնաւոր տեղեկութիւնս յայլում տեղւոց, անցեալ թուականիս տեղեկութիւնս որշափ յայտնի է զայն պատմեսցուք:

### ՅԱՂԱԳՍ ՎԱՐՈՒՅ ԵՒ ԲԱՐՈՒՅ ՎԱՆԱՀՅՐ ՎԱՆԻՅՆ ԳՏՉՈՅ

#### ՅՈՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՀՄՈՒՏ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Ի ժամանակս սորա սակաւ[ա]թիւ էր միաբանութիւնն եւ բազումք ցրուեցան ի վանորայս, եւ սկսաւ նուազիլ, բայց տակաւին աղբիւրք արդեանց ճոխ եւ առատք էին, բայց պահպանելն յառաջ է եւ քաղցրաբանութիւնն, նաեւ սիրայորդոր խօսելն եւ միսիթարութեամբ սիրելն, քան զկերակուրս եւ ըմպելին:

(6ա) Ի սորա ժամանակին տակաւին կենդանի էր Մալիք Եսային՝ որդի Մելիք եկանին, ունէին բարեկամութիւն ընդ միմեանց: Երեք ամ շանցեալ սպանին Մելիք Եսային<sup>43</sup>. վանքն աստանօր տկարանայ եւ սկսեալ նուազի օր լստ օրէ: Յետ այսորիկ անկանի սով սաստիկ յերկիրս Աղուանից<sup>44</sup>. այնուհետեւ

զաստուածասէր եւ հաւատարիմ զԲԷլին, որ բստացաւ զուտր տասո ի հայու արդեանց եւ ես գրել յիշատակ իւր եւ բարի ծնողաց իւր՝ հաւրն իւրոյ Համզայի եւ մարն Խոնարհայ, եւ Թամասայ, եւ Արուսայ, եւ Վարդումայ, եւ իւր որդոցն Յոհաննէին, Ադայնանին եւ Աքամին եւ դուչսյոր իւր Շահումին, Խանումին, եւ Տաւոքին, եւ յարեան մերձաւորաց՝ կենդանեաց եւ մեռելոց. Քրիստոս Աստուած քաղցր ակամբ հայեսցի ի տառապեալիս, եւ լսել տացէ զձայնն երանական բարբառն, որ ասէ եկայիք աւ[ր]են[ն]եալ Հաւր իմոյ, ժառ[ան]զեցէք զպատրաստեալ [արք]աութիւնն Աստուծոյ, յափեանս...» (էջ 187-189ա):

Խսկ ըստ Դ. Ալիշանի՝ Գոշավանի միաբան է եղել նաև 1653-1675 թթ. Աղվանից կարողիկոս Պետրոս Խանճեցու եղբայր Մատթեոս Քահանան, որի համար 1668 թ. Ավետարան է ընդորինակվել (տե՛ս Դ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 270):

<sup>42</sup> Սյատել հեղինակն աշիք առաջ է ունեցել Գոշավանի շինարարական արձանագրույթան հետեւյալ տողերը. «Յանուն Աստուծոյ, Հաւր եւ Ռոդ եւ Սուտր Հոգոյն, ես՝ Տէր Սարգիս եւ Տէր Վրաննէս, Ամարասա իշխանապոս, հիմնեցան զեկեղեցին ի թվիս ՈՂ. (1241)...» (տե՛ս Ա. Յակոբեան, նշվ. աշխ., էջ 260, հմմտ. Դիվան, պր. V, էջ 182):

Գավթին կից կա մի կիսափոռ եկեղեցի, որը կառուցվել է ավելի վաղ: Ըստ Մովսես Կառանկատվացու՝ VIII դ. սկզբին տեղի ունեցած Պարտավի եկեղեցական ժողովին մասնակցել է նաև «Գոտայ վանաց տանուտերը» (տե՛ս Մովսես Կառանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, բննական բնագիրը եւ ներածությունը՝ Վ. Առաքելանի, Երեւան, 1983, էջ 300, Ա. Հակոբյան, Եղիա Արենիցեցի կաթողիկոսի նորահայտ թուղթը. – «Պատմաբանագիրական հանդես», 1981, № 4, էջ 150):

<sup>43</sup> Մելիք-Եսային սպանվել է 1781 թ., Շուշիի Իրահիմ խանի կողմից (տե՛ս Դիվան, V, Արցախ, էջ 179, նաև՝ Բաֆֆի, Խամսայի մելիքուրյունները, հ. 9, էջ 469): Մատենադարանում 3881 թվահամարի տակ պահվող Առաքել Կոստանյանցի պատմական նյութերի մեկ այլ ժողովածուում կարդում ենք. «Փ 1230. (1781) թոփն Դողու Մալիք Սային սպանեցին» (էջ 86բ):

<sup>44</sup> Խոսքը Աղա Մոհամմադ խանի Անդրկովկասյան արշավաններից հետո 1797-1798 թթ. Արցախում բռնկված սովի եւ մահտարաժամի մասին է (այդ մասին տե՛ս Յովեան Ռու

շմնայ մարդ եւ բնակովիւն ցանուցիր լինին, որպէս պատմեալ եմ յառաջին հատորի պատմագրութեանս զամենայն տեսակս կոտորման<sup>45</sup>: Ընդ այն ժամանակս սկիփ առաւել եւս նուազիլ վանքն յամենատեսակ կառավարութենէ, մինչեւ անգամ կերին զամենայն անասունս թէ սուրբ եւ թէ անսուրբ. մնաց մի հատեղն, մնացեալսն ծախսս արարին. մասնաւոր ինչ մնաց ի ձեռս վանահօրն՝ նաբարձաւ ի վերայ եղին եւ գնաց թէ յո՞ր, ոչ ոք գիտէ զտեղին:

Այնուհետեւ բոլոր գրեանքն եւ կալուածաթուղթքն անկանին ի ձեռս ազգին Մելիք Եկանայ, անտի մինչեւ ցայսօր կայ եւ մնայ անդ<sup>46</sup>. քանիցս անգամ ինդրեցի՛ ո՛չ ետուն, վասն զի չեն հաւատակից այժմ. դարձեալ ի դէնս Մահմետի, այնպէս պնդութեամբ պահէնն զօրէնս նորա, կարծէմ թէ Մահմետն բնաւին չէ այնու հոգւով պահպանեալ<sup>47</sup>, որպէս նոքա կամին զո՞ել զիրարս եւ զորդիս իւրեանց:

Դարձուք ի կարգ բանից մերոց: Բարձաւ միաբանութիւնն միանգամայն եւ մնաց անասնաբնակ, այնուհետեւ պահէին ի նմա խոզս եւ զայլ անասունս, ածեալ ի մէջ տաճարին եւ պահպանողքն ի դրան տաճարին ննջէին եւ ես իս-

---

**Կերշեան.** Յիշատակարան ազգային արդեան պատմութեան համար. – «Կոումկ Հայոց աշխարհին», 1862, թի 4, էջ 287-288, Հայկական աղբյուրները Աղա Մոհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին (1795-1797 թթ.), աշխ.՝ Ա. Տիտանյանի, Երեան, 1981, էջ 103):

<sup>45</sup> Հեղինակն ի նկատի ունի իր «Պատմութիւն Արցախի» աշխատության առաջին հատորի «Յաղագս սովուն, որ եղեւ յերկրին Արցախու զինի Աղամահմատ խանին» եւ «Յաղագս ժանտախս բորսութեան» գլուխմերը (տե՛ս ՄՄ, ձեռ. № 7822, էջ 102թ-109ա):

<sup>46</sup> Այս տեղեկության իսկուրյունը հաստատվում է Առ. Կոստանյանցի կողմից 1856 թ. դեկտեմբերի 1-ին Ղարաբաղի կոնսիստորիային ուղղված մեզ նախածանոր տեղեկագրով, որտեղ մասնավորապես կարդում ենք. «Ուրակա յայտնեն ինձ հասարակութիւնն Հայոց Տող գեղջ, վասն վերոյիշեալ կալուածոց եւ սահմանաց, որպէս եւ այլոց իսկ կալուածոց յիշեալ վանիցն, զտանի կալուածարուղը առ Փարհատ բէկին՝ որույ Մէկի Ասլանին, բնակչի Տող գեղջ» (տե՛ս ՄՄ, Կարողիկոսական դիվան, թղթ. 182, վալ. 449, թ. 1թ):

<sup>47</sup> Մելիք-Եզանյանների տոնմի մահմեդականացված նյութի շառավիղների մասին Առն գրում է. «Այդ մահմեդականացած հայերն այժմ Տող զյութի բէկերն են եւ կրում են Մելիք-Ասլանով եւ Մելիք-Եզանով հայկական ազգանունները: Բայց կրոնը մոռացնել է տվել հայ մելիքների այդ հեռավոր ժառանգներին ազգային ամեն մի պարտավորություն: Թեև նրանք շատ լավ զիտեն, որ հայեր են, բայց մահմեդական կրոնին պատկանող, այնուամենայնիվ այնքան ենթակված են անբոխային հասկացողության, որ կրոնն են համարում ազգության նշան, ուստի եւ ծովովում են քարար մահմեդականների հետ՝ հանախ իրենց ազգակց հայերի դեմ գնալու համար: 1904-1906 թվականների հայ բռնբարությունների ժամանակ այդ Մելիք-Ասլանովներից մեկը, որ պրիստավի պաշտոն էր կատարում Զանգեզուրի գավառում, անորակելի զազանություններ կատարեց հայերի նկատմամբ: Բարձագոյն ուսումն էլ չի կարողանում ազգության մասին ուղիղ գաղափար տալ Տողի երեմնի հավատուացների այժմյան սերնդին: Նույն Մելիք-Ասլանովներից մեկը, կրթությամբ ինժեներ, մինխառ էր 1918 թվին Ադրբեյջանի մոսավարական կառավարության մեջ, երբ Բաքվում, այդ կառավարության կարգադրությամբ, կոտորեցին մոտ 30 հազար հայեր» (տե՛ս Առ, Երկրի ժողովածու, հ. 3, գիր 2, էջ 364):

կութեամբ ականատես եմ այսմ անկարգութեան:

(Եր) Մնաց այն պայծառազարդ տաճարն աւերակ մինչեւ ՅՂ (390) ամ. ի յետին ժամանակս եկի ի տեսութիւն սրբոյ տաճարին, տեսին զիս արք այնուքիկ, որք պահէին զկովս եւ հաւաքել զկիթս եւ միւս տաւարեղէնս. այնքան աղք են կուտակեալ՝ միոյ մարդաշափ, ի նմին ժամանակի էի 15 ամաց. եւ նոր ուսանէի զեղանակ ժամասսցութեան: Սակայն ուխտադիր էի մտանել ի կարգ կուսակրօնութեան, բայց զուրկ եւ դատարկ էի ի գիտութենէ Սուրբ Գրոց, կամ ի շարադրութենէ քերականական շարուածոց: Ի մտի եղի, եթէ ըստ կարօտութեան իմոյ սուրբ Տիրամայրն մասնաւոր տացէ զկաթ շնորհաց՝ իմն բանից գիտութեան. ընդունիմ զաստիճան կուսակրօնութեան, տամ զանձն իմ ի վանս միոյ աւերակի<sup>48</sup>: Թերեւս իմոյ անձին օգնականութեամբ եւ ամենակալին յաղթող զօրութեամբն եղից պատճառ լուսաւորութեան, զի այս բան կարի իմն երկարագոյն ձգի, թէ յորքան տեղիս եւ ի վանորայս եմ շրջեալ, զիմ կենսագրութիւնն ունիմ առանձնակի պատմաբանել<sup>49</sup>:

Դարձուք ի կարգ ճառագրութեան մերոյ: Նոյն վանսն մնաց յայնպիսի խաւարային տիրութեան. ո՛ռ մտանէր ի տաճարն, արտասուաթոր ելանէր, որպէս այր մի կիսամահ անկեալ ի ճանապարհի ակնարկէր այնպիսի ուրուք, որ կարող իցէ բուռն հարել զնմանէ եւ յարուցանել: Առ այս արժան է պատմել, զի շրջան ժամանակին քաղցրութեամբ բերի առ վիպասանութիւնն եթէ կարող իցէ համառօտ զճառն զարդարել՝ ո՛չ ծաղկօք, այլ պտղօք:

(7ա) Ի ԹՈՒԱԿԱՆԻ ՊԼԲ. (1383) ԵԼ ԹԱՄՈՒՐՎԱՆԿՆ Ի ՍԸՄՄՎԱՆԴ ՔԱՂԱՔԵ,

ԼՅԵԱԼ ԱՄԵՆԱՏԵՍԱԿ ԶԱՐՈՒԹԵԱՄԲ. ԶՍՈՐԱ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆ

Ի ՅԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ ՅԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄԱԿՐՈՒԹԵԱՆՄ<sup>50</sup> ԳՐԵԱԼ ԿԱՅ,

ԲԱՅՅ ԶԹՈՒԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿՆ ՅԱՅՏՆԵԼ ԿԱՄԻՄ

Սա իբրեւ զկատաղեալ շարագոյն գագան պատառող արձակէ ի վերայ աշխարհիս, վեր ի վայր տապալէր զամենայն գաւառս եւ գիւղէրայս եւ զամրագոյն դղեակս եւ բերդորայս:

<sup>48</sup> Առ. Կոստանյանցին հաջողվել է իրականացնել իր մտադրույթունը: Նա Արցախի թեմի առաջնորդ Բաղդասար արքեպոս. Հասան-Զալալյանի կողմից 1853 թ. սեպտեմբերի 2-ին կարգվել է Գոշավանի վանահայր եւ իր գործունեությամբ մեծապես նպաստել հայ մշակույթի այդ հայտնի կենտրոնի շենացմանը (տե՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 168, վավ. 41):

<sup>49</sup> Առ. Կոստանյանցն ի նկատի ունի իր այն ժողովածուն, որն այժմ 3881 թվահամարի տակ պահվում է Մատենադարանում (էջ 91ա եւ հա.):

<sup>50</sup> Հեղինակն ի նկատի ունի իր «Պատմութիւն Արցախի» աշխատության երկրորդ հատորի «Յետ այնորիկ երեւցաւ Թամուրանկն» սկզբնատողով սկսվող գուխը (տե՛ս Մատենադարան, ձեռ. № 7823, էջ 11ա-22թ):

Ի սմին վերոյ գրեալ ՊլԲ. (1383)<sup>51</sup> թուականիս, թէ հացն սղեալ ի մարախահարութենէ ներքին կողմն Պարսից տէրութեան, Արտավուլ կոչեցեալ քաղաքի սահմանսն՝ ունի գաւառ մի, որոյ անունն կոչի Շաղախ. ի սաստկանալ սովուն<sup>52</sup> ի նահանգէ աստի հաւաքեալ եւ ժողովեալ խորհուրդ արարին կապեալ եւ կազմեալ կարաւանս յուղի անկեալ գան ուղղակի ի յարմար ժամանակի գարնանային յԱմարէն ինչ քաղաք, որ է Ամարաս, ի կալուածս սրբոյն Գրիգորիսի<sup>53</sup>: Իշեւանեալ անդ առընթէր քաղաքին եւ մտեալ ի ներքս բնակութեան՝ մուրանալով հայթայթեն ապրուստ կերակրոյ: Սակայն ի նմին ժամանակի վանքն Գրիգորիսի մերձ լինելով քաղաքէն վասն ահի եւ երկիւղի թշնամեաց, այր մի յազգէն մահմետական Դառլթ անուն ի նմին կարաւանի, որոյ ունէր որդի մի երկուտասանամեայ, որ գաղտ անկեալ զկնի իւրեանց եկեալ էր յորդորանօք մօրն իւրոյ, թերեւս մայրն իցէ ի քաղաքէն յայնմանէ եւ գաւակ քրիստոնէի եւ նա բանս եղեալ ի բերան որդւոյն, զի մի անդրէն (7թ) գառնալ յերկիրն եւ ի բնակութիւն իւրեանց եւ մի՛ մնալ ի դէն մահմետականի: Զի կինն ուխտեալ էր յառաջան քան ծնուիլն, եթէ չկարիցեմ գնալ եւ գտանել զկորուսեալ հաւատս, թէրեւս Արարիշն ընկալցի յաշացս իմ արտասուս ի գաւակացս զառաջին ծնունդն հնարիւք իմն կարիցեմ գոնեա՞յ ի կրօնս հայրենի հաւատոյս իմոյ գարձուցանել. այսու բանիւ յորդորեալ էր եւ յուղարկեալ:

Դարձուք ի կարգս մեր: Մարդիկ կարաւանի յոյժ բազմաթի՛ ընդ առաւտն յարուցեալ մտին ի քաղաքն որոնել եւ գտանել զցորեան գնելոյ. կայր այր մի մեծանուն, որոյ անուն կոչի Աղծայ. նա խոստացաւ ամենեցունց լրացուցանել միայնակ ինքն՝ զբեռնիս ցորենոյ նոցա, որպէս խոստացաւ, այնպէս կատարեաց: Մնացին անդ յերիս աւուրս: Մանուկն Անտոն<sup>54</sup>, որ զկնի աւազանին մկրտութեան կոչեցաւ Անտոն-Անտոփ էր նախնական անունն. նա գնայր յամենայն աւուրս ի սուրբ վանս Գրիգորիս, նկատէր սուրբ պատարագին եւ ամենայն արարողութեանց ժամերգութեան. ընդ նմին ժամանակի յոյժ գեղ[եց]կագոյն էր շինուածս տաճարին եւ պատկերագարդ. մանկանն ուշ անկաւ եւ ծագեցաւ ի կրօնապաշտութիւնս մեր՝ խօսէր եւ հարցանէր զհաւատոյս բանս

<sup>51</sup> Լենկ Թեմուրը առաջին անգամ Հայաստան է արշավել 1386 թ. գարնանը:

<sup>52</sup> Լենկ Թեմուրի առաջին արշավանի հետեանենով անբերրիուրյուն եւ սաստիկ սով է եղել 1388 թ. (տես Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Երևան, 1972, էջ 27):

<sup>53</sup> Ամարաս - զյուլաքաղաք Մեծ Հայքի Արցախ նահանգի Մյուս Հաբանդ գավառում: IV դ. սկզբին Գրիգոր Լուսավորիչն այստեղ հիմնել է Ամարասի վանքը, որի կառուցումն ավարտել է նաև բոռ Գրիգորիս եպիսկոպոսը: V դ. սկզբին Մեսրոպ Մաշտոցն Ամարասում բացել է Արցախի առաջին դպրոցը: Վաղ միջնադարում հայկական մշակույթի կարեւոր կենտրոնն էր:

<sup>54</sup> Սույն անունը հեղինակի ձեռագրում հանդիպում է նաև Անտօն ձետվ: Միակերպության համար պահում ենք Անտոն ձեւը:

առանց յայտնելոյ գներքին խորհուրդս իւր, սակայն նշմարէր եւ ստէպ ստէպ գնայր եւ գայր տեսանիշ՝ արդեօ՞ք չուեալ են մարդիկ կարաւանի, թէ դեռ անդ կան: Քանզի յոյժ ջերմացեալ եւ սէր կաթոփին վառեալ առ հաւատս քրիստոնէից, բայց չկարէր (8ա) տակաւին ի յայտ անել, վասն որոյ գնաց յուզելով եւ որոնելով գտեղի մի գտեալ թագոյց զինքն յայնպիսի ամրագոյն ինչ խրամս դաշտավոր եմուտ անդ անդ, որ չէ հնար պատահել մարդոյ տեղւոյն այնմիկ, կացեալ անդանօր յաւուրս երիս, բայց յերեկոյեան ժամուն գայր ի միաբանէ յումեմնէ, տանէր զմասնաւոր զուտելիս, այնքան՝ պահել զկեանս կենդանի մինչեւ անցցէ տարակուսանք սրտի իւրոյ: Գնալ հայրն՝ թերեւս բարեյաջողութեամբ զկամս իւր կատարեսցէ: Իբրեւ չուեալ գնացին կարաւանն եւ ամենայն մարդիկ, մանկան հայրն թագեալ անդանօր ի բնակութեան եւ ի գաւթի ուրումն իշխանի անձին միոյ, թէ կարիցէ ծածկաբար հարցման գտանել, բայց որդի նորա քան զնա փութով էր գիտացեալ. ոչ կամեցաւ երբէք անտի ելանել մինչեւ հրաժարեալ գնացէ իւր հայրն, զոր ինչ կատարեցաւ: Գնաց հայրն՝ չկարաց գտանել: Մանուկն իբրեւ ետես ընդարձակութիւն կենացն, եթէ ի կասկածանաց երկիւղէ ազատեցաւ անձն իւր, նախ նստեալ մտածէր յետագայ վիճակ գալոյ յիւր վերայ՝ կենացն, թէ արդեօ՞ք կարիցեմ զմօրն իմոյ դաշնադրութիւնս յաւարտ ածել: Գնալով գնացից առ միաբանս վանիցն, կամ առ վանահայր նոցա՝ յայտնել զցաւս եւ զներքին խորհուրդս, թերեւս զերծանելոյ զիս հնարս գտանել եւ զանհանգիստ խիզճս իմ դադարացուցանել, վասն որոյ յարուցեալ տրտմութեամբ գնաց ի վանս Ամարասայ, սակայն ոմանք ճանաչէին, որ յառաջ քանիցս անդամ գնացեալ էր ի մէջ նոցա եւ ի տեսութիւն տաճարին:

#### (8բ) ՅԱՂԱԳՍ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ԲԱՆԻՑ ԵՒ ԽՈՐՀՄՈՅՑ ՄԱՆԿԱՆՆ

Իբրեւ եմուտ ի վանս, պատահեալ վարդապետի միոյ եւ նստեալ ընդ նմա՝ խոստովանաբար սկսեալ պատմեաց զամենայն խորհուրդս իւր: Իբրեւ լուաւ վարդապետն, յարուցեալ գնաց առ երջանիկ սուրբ Ստեփաննոս հայրապետն, զբանս եւ զգործս յայտնեաց նմա: Եւ վաղվաղակի նա հրամայեաց ածել առ ինքն, եւ նա եկեալ՝ զաջս նորա խոնարհեալ երկրպագութեամբ համբուրէր: Խոնարհաշունչ սուրբ հայրապետն նստոյց առընթեր իւր, երկայնմտութեամբ լսելով զբանս նորա հարցանէր. եւ նա մօրն քրիստոնեայ լինելն եւ ի գերի վարելն եւ նորա արարեալ զովստադրութիւնն եւ թագչիլն իւր ի հօրէ իւրմէ. եւ յօժարութիւնն իւր ընդունել զհաւատս մեր՝ զամենայն կարօտութիւնս լցուցանել թերեւս: Իբրեւ ծանոյց զջերմեռանդութիւնս իւր. եւ ապա հայցէր ըստ սովորութեան օրինաց մերոց մկրտել եւ ուսուցանել զկրօնապաշտութիւնս հայոց: Սուրբ հայրապետն կամէր ըստ կանոնաց նախահարցն նկատել եւ ընդ փորձութեամբ անցուցանել եւ զհամբերութիւնն նորա տեսանել, զվարս եւ բարս նորա

քննել, զետագայիցն տեսանել եւ այլ պատահմունս ծագեսցէ յետին գործողութիւնն շարագոյն լինիցի քան զառաջինն փութանակի ուխտակատարութիւնն: Առ բան հայրապետին միաբանք սուրբ վանիցն չկամեցան ընդունել, թէ տակաւին մանուկ է, գուցէ միտք նորա փոփոխեսցէ յայլ իմն էութեան. թոյլ տու՛ք երախայացուցանել արդէն եւ ի տալ ձեռս նորա զտառս հայոց եւ ուսուցանել զգիրս եւ զհաւատոյ բանս եւ կրթել ի կրօնապաշտութեան: (9ա) Ընդ յայսմ բանի միաբանաց համոզեալ սուրբ հայրապետն առ ի կատարել ի վաղիւ անդր. ընդ առաւոտն սկսան պաշտօն մատուցանել հանդերձ զանկագահարութեամբ առ ի ժողովել զբոլոր իշխանս եւ ժողովրդականս<sup>55</sup>. սկիզբն արարին կատարել զիսորհուրդ մկրտութեան մինչեւ ցվերջ պատարագին եւ ապա հաղորդեցին ի կենարար մարմնոյ Տեառն եւ յարենէ փրկչին Յիսուսի Քրիստոսի: Զիհակատար պատմութիւն սորին գրեալ եմ յերկրորդ հատորի պատմագրութեանս իմում<sup>56</sup>. անդանօր սիսալեալ եմ գրեալ զանուն մանկանս Գրիգոր<sup>57</sup>, ո՛չ այլ թէ Անտոն:

Նպատակ մտացս այն է համառօտ գրել, զի զնախկին գրեալսն վերստին աստանօր զնորոգել: Ի վերջոյ այս Անտոն մանուկ այնքան մտօք լուսաւորէր, մինչեւ անգամ ընթացս եօթն ամաց կրթեալ յամենատեսակ գիտութիւնս ներքին եւ արտաքին գրեանց Հայոց լեզուի: Զանուն սորա մինչեւ անգամ հոշակեալ յայտնեցին ընդ ամենայն տեղիս՝ ի քաղաքս, ի գաւառս եւ ի գիւղս: Համբաւ սորա անկաւ յերկիրն իւրեանց. եւ լուաւ հայր նորա: Կամէր գալ եւ առնուլ զրոդին իւր եւ տանել, սակայն կինն արգելուր, թէ փառք Աստուծոյ, ունիմք հինկ որդեակս արու՛ թոյլ տո՛ւք գնալ ի ճանապարհս Աստուծոյ մերոյ, բայց նա երբեմն դադարէր եւ երբեմն շարժէր զգութ ծնողական. չկարաց գտանել հանգիստ մտացն՝ ուստի յարուցէ յաւուր միում կազմեալ (9բ) զերիվարն, եւ առեալ զգէնս իւր կամէր գնալ. կինն գիտէր զվարս նորա եւ զքաջութիւն նորա, թէ կամ պարտ է բերել, կամ սպանանել, վասն որոյ ասաց, եթէ չկարիցես բերել՝ միայն զմի նշան յորդոյ իմմէ ընդ քեզ բերել: Բայց այրն նորա յոյժ սիրեր զկին իւր, վասն զի չէր հաւատակից ընդ նմա. ուստի ի յուղի անկանելն զամենայն ինչս իւր կնոշն աւանդեաց. թէ ահա՛ ես գնամ, դու գիտես այդ տուն եւ ամենայն շարժական եւ անշարժականք, զոր ինչ կամիս, կարող ես առնել. թերեւս անդ անտանելի ցաւոց եւ մահու պատահիցեմ, չկարիցեմ վերադառնալ

<sup>55</sup> Զեռագրում նախապես գրված է եղել իշխանք և ժողովրդականք:

<sup>56</sup> Հեղինակն այս մասին գրել է «Պատմութիւն Արցախի» աշխատուրյան ոչ թե Երկրորդ, այլ առաջին հատորում՝ «Յաղագս Մրգոյն Խաչագործ նահատակին Շախկախու» անվանումը կրող զիշում (տե՛ս ՄՄ, ծեռ. 7822, էջ 18ր-23ա):

<sup>57</sup> Այնտեղ Առ. Կոստանյանցը գրում է, որ վանահայրը «հրամայեաց միաբանացն երախայացուցանել զմանուկն. եւ կոչել զանուն նորա Գրիգոր ըստ անուանն Գրիգորոսի կաքուդիկոսին. միաբանին ըստ հրամանին կատարեցին մեծ հանդիսաւոր մկրտութիւն նորա» (տե՛ս նոյն տեղում, էջ 19բ):

ի տեսութիւն ձեր եւ մանկանց: Վասն որոյ կին նորա քաջալերեաց, թէ մի՛ երկնչիր, միայն զբարիս գործեա՛ վասն մանկանն: Այրն ըստ ծնողական գթոյն շարժման մտրակեալ գերիվարն արագառու զընթացս ճանապարհին կատարէր: Եկն եւ էանց յերասխ գետն եւ ուղղեաց զսանձ երիվարին առ յԱմարէն քաղաք, եկեալ եւ եհաս անդ՝ ի վասն Գրիգորիսի: Զճանաշելով զնա՝ սիրով ընկալան հիւրասիրական եղանակաւ, յերեկոյին ի ժամ ճաշու պատրաստեցին զկերակուր եւ բերեալ եղին առաջի նորա: Առեալ եւ եկեր եւ էարբ զգինի. ընդ այն ժամանակս անխտիր ազգն պարսից ընդ ազգիս մերոյ ուտէին եւ ըմպէին, յոյժ սիրէին զմիմեանս, զի մի էր թագաւորութիւնն:

**(10ա) ՅԱՂԱԳՍ ՏԱԼՈՅ ԶԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ ՀՕՐ ՄԱՆԿԱՆ ԱՆՏՈՆԻ**

Ի սոյն ինչ ժամանակի տակաւին եւս Ստեփաննոս սուրբ հայրապետն կենդանի էր եւ ծերացեալ, ըստ խնդրանաց հօր Անտոնի առ ի տանելոյ ի տեսութիւն հայրապետին, ըստ նորին հրամանի տարեալ ի ներքս սենեկին եւ նստեալ սկսան բանալ զգրոյցս եւ խօսել՝ երկաքանչիւր զերկրէ զիւրմէ պատմել. մինչեւ անգամ ի յետին խօսակցութեան ետ ծանօթս այր այն, թէ վասն որո՞յ իրաց եմ եկեալ, քանզի կորուսեալ եմ զիմ որդին, եւ այժմ գտեալ, եւ դուք զայսմանէ զի՞նչ ունիք կարգադրել շգիտեմ, զոր ինչ ունիք ի մտի ձերում՝ կարող էք յայտնել: Ի նմին ժամու կոչեցին զԱնտոն ուրարակիրն՝ գալ տեսանել հայրն զի՞նչ կամի առնել, ինքն տացցէ պատասխանի: Եկեալ որդին ի ներքս՝ նշմարէր հայրն դիմացն գեղեցկագոյն եւ ի ծաղկահասակ՝ բարձր շափաւորութեանն. ունէր զարմանալի իմն տեսարան՝ ծիծաղադէմ, սեւաշեայ, լայնաձակատ եւ կարմրայտ եւ քաղցրախօս եւ քաջասիրտ, աներկիւղ, թեթեւամարմին եւ արագընթաց եւ մտասուր, զայս ամենայն տեսանելով, զի ո՛չ յաշս իր երեւէին որդիքն հինկեքեան: Ակսան հայր եւ որդի բանալ զխօսակցութիւն, թէ ընդէ՛ր զիս թողեալ աստ ի քաղաքիս ի կարաւանի, եւ դու փախուցեալ յինչն՝ ու՞րէք գնացեր, շրջեցայ ի բոլոր քաղաքմ՝ հարցանելով՝ (10բ) եւ ո՛չ կարացի գտանել: Իբրեւ գնացի ի տուն, մայր քո ո՛չ դադարէր յարտասուաթոր հարցանելոյն՝ նաեւ շտայր թոյլ ննջել սակաւ իմն հանգստութեամբ, զի ահա շափահաս էք եւ գիտես զգիրս, զօրէնս աշխարհի, եւ զերախտաւորութիւն ծնողաց, եւ զգութս, զկսկիծս վշտակրութեան: Արդարեւ երբէք չկարի հանդարտութիւն գտանել, վասն որոյ քանի ամք են ահա անցանեն, եւ նա միշտ թախանձէ զիս պաղատանօք թերեւս կարիցեմ եւ իսկ գալ եւ շրջիլ, զքեզ գտանել եւ տեսութեան մօրդ արժանացուցանել: Զայս ամենայն վերին երեսօքն պատրանօք խօսէր՝ գոնէ հնարիւք իմն կարիցէ խարուսիւք բանիւ յիմարացուցանել զորդին եւ դիւրութեամբ տանել, բայց կնճիւն անիրաւութեան ծրարեալ ի ներքս առագաստէր, զի ո՛չ գիտէր, թէ Տէրն ասէ ի նմին ժամու, զոր ինչ տացցէ զայն

իսուսեղիք, զի ո՞չ դուք էք, որք իսոսիք, այլ հոգին Հօր ձերոյ<sup>58</sup>: Սկսաւ որդին այլ իմն բանիւք պատասխանել, թէ մեր Արարիշն Աստուածն՝ մարդն, որ անձնիշ-իսան է ստեղծել, թէ ի՞նչ որ կամենայ կարող է առնել, մի՞թէ մարդս առաւելա-գոյն է քան զԱստուած, զոր ինչ կամի՞ կարէ առնել մարդս. եթէ զիս ակամայ յօժարութեամբ տանիցես՝ մի՞թէ անասնոց հաւասար զիս կարող էք կապել եւ պահպանել, զի այդ ձեր արարեալ խորհուրդն մարդկային տկարութեամբ է եւ ո՞չ Աստուածային խորին գիտութեամբ: Եթէ կամիս կատարեալ լինիլ, լուս-թեամբ պարտէս վերայ դառնալ ի բնակութիւնս եւ ժողովել զամենայն շար-ժական եւ անշարժական գոյս, հաւաքել աստ ի քաղաքս, եւ (11ա) դուք մկրտիլ սուրբ աւազանաւ յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Լինիլ մարդ Աստուծոյ, եւ ո՞չ մարդասպանին: Եթէ ծնող ես իմոյ անձին՝ ընկալ զբանս իմ եւ առանց յապաղանաց կատարեա՛, զի այս է առաջի Աստուծոյ հաճելի, քան զգանձս բազումս եւ զականս պատուականս: Հայրն զիմաստ բանին հա-ւաքելով ի միտս իւր՝ այնպէս երեւէր, զի ո՞չ բարեհաճէր հօրն բանից՝ չունէր բնաւ յօժարութիւն զկամս ծնողին կատարել:


Հայր նորա գնայ ուղղակի ի Տավրէծ քաղաքն եւ առեալ զհրովարտակ, վերադառնայ ի սուրբ վանս Գրիգորիսի եւ ցուցանէ զհրովարտակն միաբանաց եւ որդւոյն. յոյժ սաստկութեամբ գրեալ: Քանզի անդ խոստացեալ է ընծայել որդին քաղաքապեաին, զոր եղեալ էր Թամուրլանկն: Աստանօր զբազում բանս մնաց գրելոյ, զի եւ ես գրեալ եմ յանցեալ հատորի: Վասն հրովարտակին խոր-հուրդ արարին. որդին ասէր՝ բնաւին չունիք ինչ բանս ասելոյ եւ խօսելոյ, միայն զիս օրհնութեամբ արձակեցէք, ես գիտեմ, թէ զինչ արժան է ինձ առնել. ընկալաւ յամենեցունց օրհնութիւնն եւ համբուրեալ զտապան սրբոյն Գրիգորի-սի<sup>59</sup>: Ընդ այս ժամանակս եկեալ՝ բազում ասպատակաւորք ի դաշտային տեղիս շրջէին եւ անկեալն ի ձեռս իւրեանց մերկ եւ սրախողիսող արձակէին, վասն որոյ լեռնային ճանապարհաւ գնացին մինչեւ ի գագաթ լերինն, որ հայի յերասխ գետն եւ վերին կողմն Տիզափայտ<sup>60</sup>:

<sup>58</sup> Հմմտ. Մատթ. Ժ, 19, 20, Մարկ. ԺԳ, 11, Ղուկ. ԺԲ, 11:

<sup>59</sup> Խոսք Գրիգոր Լուսավորչի թոռ Մանուկ Գրիգորիսի տապանի մասին է: Վերջինս Վաս-նյան դաշտում 331/332 թ. նահատակվել է մազքբաց Սանեսան թագավորի հրամանով: Նրա աշակերտները իւենց ուսուցչի դին բերել են Արցախի Մյուս Հարանդ գավառ եւ ամ-փոփել Ամարավի վանի բակում: Գրիգորիսի գերեզմանի վրա 489 թ. Վաշազան Բարե-պաշտ թագավորը դամբարան է կառուցել, որը գտնվին է ներկա եկեղեցու բեմի տակ:

<sup>60</sup> Գրիգափայտ – լեռնաշղթա եւ լեռնազագար Արցախում: Կազմում է շրբաժան Հակարի գետի եւ Իշխանագետի միջեւ, այժմյան ԼՂՀ Հարուրի շրջանում, բարձրուրյունը՝ 2380 մ: Հստ Մովսես Կաղանկատվացու՝ այս լեռան զագարին են նահատակվել մազքբաց Սա-նեսան թագավորի որդիները եւ բազմաթիվ հավատացյաներ, որոնց երիստոնելության էր դարձրել Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիս: Սանեսանի զինվորները նրանց դիակները դիզել են ինչպես փայտը եւ այրել: Այդ օրվանից լեռը կոչվել է Դիզափայտ (տե՛ս Մովսես Կաղանկատացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 119), իսկ զավար՝ Գրիգափ:

(11թ) Յառաջագոյ զվիճակ իւր ինքն ընտրեալ էր, թէ որո՞վ մահուամբ փափագէր յաստի կենացս վերափոխել ի քաղաքն կենդանեաց. նաեւ գիտէր զկամս հօրն՝ եթէ շարժիցէ յաջ կամ յահեակ, իսկոյն ունի մահացուցանել զորդին, քանզի բարկութեամբ լցեալ էր: Զայս ամենայն գիտելով, կամէր արդարեւ իւրովին զինքն մատնել ի մահ, զի մի՛ կրկին անկանիցէ ի պիղծ դենս այլազգացն: Մինչ ելին ի գագաթ լերինն, անդանօր խաշակնիքեալ ի դէմս իւր. եւ ասաց. Տէ՛ր Յիսուս Քրիստոս, յառաջագայ ի մարգս դալարիս եւ տափարակ տեղին ընկա՛լ զ՞ոգի իմ, զի մի՛ անցանիցեմ ի Հայաստանէ. ասաց զայս բան եւ սկսաւ արագառոն գնալ՝ զառ ի վայր, ի նոյն նշմարեալ տեղին նպատակ կալեալ, փոքր փոքր սաստկացուցանէր զփախշիլն: Գիտաց հայրն, որ կամի ազատութիւն, գոշեաց զկնի նորա՝ թէ խաղաղ գնա՛յ, եւ նա կամէր բարկացուցանել զ՞այրն, ասաց՝ ո[ր] սորդին շունն արագ կարող է զկնի տեառն իւրոյ գնալ, ընդէ՞ր ծլութեամբ ընթանաս: Զինչ եղանակաւ իցէ անդանօր վկայելոց էր նահատակութեամբ, ասաց՝ մի՞թէ ես շուն իցեմ. ասաց՝ վատթարագոյն էս քան զշուն, եւ կատարեա՛ զկամս հօր քո սատանայի: Ի նմին վայրկենի մերկացուցեալ սուրն ի ձեռին, եհաս եւ եհար ուժին զգագաթն, զերկու մասուն արար գլուխն. եւ իսկոյն աւանդեաց զ՞ոգին առ Արարիչն իւր:



Առաքել Կոստանդնուպոլիսի «Պատմութիւն Գտշայ վանուց» աշխատության  
առաջին էջը

# ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ, ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ա.ԶԱ.Տ ԲՈՋՈՅԱՆ

Լեիզն Տեր-Պետրոսյան, ԽԱԶԱԿԻՐՆԵՐԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ,  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, Հ. Ա. ԵՐԵՒԱՆ 2005,  
552 Էջ, Հ. Բ, ԵՐԵՒԱՆ 2007, 672 Էջ (ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ ԳԱԼՈՒՍ  
ԿԻՒՊԵՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ)\*

Մերձավոր Արեւելքի եւ Կիլիկյան Հայաստանի անցյալն ընկալելու, համաշխարհային առաջընթացի ուղիներն հասկանալու համար պատմագրության մեջ կարեւոր նշանակություն է ձեռք բերել խաչակրաց ուազմարշավների ու Միջերկրականի արեւելյան ափերին ԺԱ-ԺԴ դդ. գոյատեւած քրիստոնյա պետությունների պատմության հետազոտությունը: Խաչակրաց ուազմարշավների, Հայաստանի պատմության վրա այդ իրադարձության թողած քաղաքական եւ մշակութային հետեւանքների մասին հայագիտության մեջ բավական գրվել է: ԺԹ դարում, երբ հ. Ղետոնդ Ալիշանը ձեռնամուխ եղավ Կիլիկիայի հայկական պետության պատմության համակողմանի հետազոտությանը<sup>1</sup>, եվրոպայում նոր էին սկսել Խաչակրաց դարաշրջանի սկզբնաղբյուրների հատորավոր հրատա-

\* Համառոտ տպագրված տե՛ս Պատմա-բանասիրական հանդես, 2006, № 1, էջ 309-319, 2007, № 3, 220-230:

<sup>1</sup> Սիսուան. համագրութիւն հայկական Կիլիկիոյ եւ Լետն Մեծագործ, հաւաքեալ ի Ղետնդեայ վ. Մ. Ալիշան, Վենետիկ, 1885.

բակությունը<sup>2</sup>: Այդ ժամանակ, ֆրանսիացի գիտնականներ Վիկտոր Լանգլուայի<sup>3</sup> եւ Էդուարդ Դյուլորիեյի<sup>4</sup> ջանքերով հիմք դրվեց խաչակրաց դարաշրջանի հայկական սկզբնաղբյուրների հրատարակությանն ու Եվրոպական լեզուներով թարգմանությանը: Ի դարի ընթացքում, Եվրոպայում այդ ուսումնասիրությունները ավելի խորացվեցին, գրվեցին համակողմանի հետազոտություններ խաչակրաց ուազմարշավների վերաբերյալ, որոնց մեջ նյութն ընդհանրացնելու տեսանկյունից շրջադարձային է Ք. Սեթոնի խմբագրած վեցհատոր «A History of the Crusades» հետազոտությունը<sup>5</sup>: Եթե համեմատենք համաշխարհային պատմագրության նվաճումների հետ, ի դարի հայագիտությանն նվաճումներն այս բնագավառում բավական համեստ են<sup>6</sup>, թեպետ խաչակրաց ուազմարշավների պատմությունը ուղղակիորեն է կապված Հայաստանի, հատկապես Կիլիկիայի հայկական պետության անցյալի եւ հայլեզու սկզբանաղբյուրների հետազոտության հետ: Այդ բացը հավանաբար գալիս է նրանից, որ Մերձավոր Արեւելքում տեղի ունեցած Խաչակրաց ուազմարշավներին անդրադառնում են ժամանակակից լատին (ֆրանսիական, գերմանական, իտալական, անգլիական, իսպանական եւն.), բյուզանդական, արաբական, հայկական, ասորական, պարսկական, թյուրքական, եբրայական, վրացական, դպտական, եթովպական, սլավոնական սկզբնաղբյուրները, որոնցից շատերը մեզանում այդ բնագավառների պատմության եւ սկզբնաղբյուրների մասնագետների բացակայության պատճառով համապատասխան ուշադրության չեն արժանացել: Խաչակրաց շրջանի պատմության խնդիրների շուրջ ի դարում ստեղծվել է ծովածավալ մի

<sup>2</sup> Կարեւորագոյն շարթերից արժե բվարկել երկուար. Recueil des Historiens des Croisades (REC) եւ Archives de l'Orient latin (1881-1884, երկու հատոր): Հիշատակվածներից առաջնը հրատարակվել է 1841-1906 թթ. ընթացքում: Այստեղ հինգական հատոր հատկացված է արեւմտյան եւ արեւելյան (արաբական) սկզբանաղբյուրներին, երկուական հատոր՝ հունարեն, հայերեն վավերագրերին ու խաչակրաց իրավունքի հուշարձաններին: Խաչակրաց պատմության սկզբնաղբյուրների ֆրանսիական նոր շարքի հրատարակությունը շարունակվում է մինչեւ այսօր, տե՛ս Documents relatifs à l'Histoire des Croisades publiés par L'Academie des Inscriptions et Belles-Lettres, որի 18-րդ հատորը հրատարակվել է 2003 թ.: Վերջին հատորի վերաբերյալ մեր գրախոսականը տե՛ս. – «Պատմանասիրական հանդես», 2004, № 3, էջ 289-293:

<sup>3</sup> Le Trésor des chartes d'Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Roupéniens.../ Recueillis, mis en ordre et publiés pour la première fois avec une introduction historique par V. Langlois, Venise, 1863.

<sup>4</sup>Տե՛ս REC, Documents Arméniens, t. I, 1869.

<sup>5</sup> Գիրքն հրատարակվել է 1955-1989 թվականներին:

<sup>6</sup> Կատարված աշխատանքների մեջ հիշատակելի են Կ. Բամաշյանի, Գ. Միքայելյանի, Ս. Բոռնազյանի, Ծ.-Ե. Քասունու, Ա. Սոնիհայանի, Հր. Բարթիկյանի, Մ. Զովալյանի, Կ. Մուրաֆյանի, Ժ. Գեղեցյանի, Ա. Բողոքանի և այլոց հետազոտությունները:

գրականություն<sup>7</sup> աշխարհի գրեթե բոլոր լեզուներով, որն էլ դժվարացրել է Հայաստանում բնագավառի հետազոտությունն ու մասնագետների պատրաստումը: Այդ դժվարությունների մեջ կարեւոր խնդիրներից է նաև համապատասխան գրականության պակասը Հայաստանում, առանց որի հայթայթման հնարավոր չէ բնագավառի համակողմանի հետազոտությունը: Այս բացն հաղթահարելու ճանապարհին հայագիտության համար բացառիկ նշանակություն է ստանում խաչակրաց շրջանի սկզբնաղբյուրների<sup>8</sup>, մասնագիտական հետազոտությունների թարգմանությունն ու մատուցումը<sup>9</sup> Հայաստանի գիտական հասարակությանը, ուսանողությանն ու ընթերցողին: Հայագիտության համար այդ պատասխանատու բնագավառում իր լուման է ներկա գրքով մատուցում կետոն Տեր-Պետրոսյանը, հայագետների ուշադրությունը հրավիրելով ի դարի համաշխարհային պատմագրության մեջ Մերձավոր Արեւելքի քաղաքական փոխհարաբերություններում Կիլիկիայի հայկական պետությանը հատկացված դերին:

Երկու խոսքում հեղինակն անդրադառնում է գրքի առաջին հատորի հետապնդած նպատակին՝ հայ ընթերցողին ներկայացնել «Եվրոպական միջնադարագիտության ականավոր ներկայացուցիչների մի շարք հանրահայտ աշխատություններ, որոնք, նվիրված լինելով Բյուզանդիայի կամ խաչակրաց արշավանքների պատմությանը, միաժամանակ բազմաթիվ արժեքավոր տեղեկություններ ու վերլուծություններ են պարունակում խաչակիրների եւ հայերի հարաբերությունների մասին» (էջ 3): Գրքում թարգմանված են համաշխարհային պատմագրության դասականներ Ֆերդինանդ Շալանդոնի, Խրնե Գրուսեի, Ստիվեն Ռանսիմենի, Քենեթ Սեթոնի (Միրարքի Տեր-Ներսեսյանի հեղինակած մա-

<sup>7</sup> Յավո՞ այդ գրականության միայն փշրանքներն են հասնում Հայաստան: Այս առումով հատկանշական է վերջերս լույս տեսած Ժերար Դեղեյանի գրքի մատենագիտությունը (Les Arméniens entre Grecs, Musulmans et Croisades: Etude sur les pouvoires Arméniens dans le Proche-Orient Méditerranéen (1068-1150), Volume 2, Lisbonne 2003, p. 1341-1417), ուր բերված է հարցի պատմությանը վերաբերող գրականությունը:

<sup>8</sup> Այս տեսանկյունից 1930-ական թվականներին շափազանց կարեւոր նախաձեռնություն էր իրականացնում Հովհաննես Հակոբյանը, որը եվրոպական «Մոլեգրություններ»-ի իր թարգմանած Ա. հատորում (Երևան, 1932) ներկայացնում է Խովրոնի, Մարկո Պոլոյի եւ այլոց Հայաստանի նկարագրությունները: ԺԳ դարի ասորական սկզբնադրյուններից մեծ կարեւորաբան ունի Լ. Տեր-Պետրոսյանի կողմից Անանուն Եղեսացու Ժամանակագրության ծանոթագրված բարգմանությունը (Երևան, 1982), իսկ արարական սկզբնադրյուններից իրն ալ-Ասիրի երկի Ա. Տեր-Ղետնդյանի թարգմանությունը (Իրն ալ-Ասիր / թարգմանություն բնագրից, առաջարան եւ ծանոթագրություններ Ա. Տեր-Ղեւոնդյանի, Երևան, 1981):

<sup>9</sup> Ո. Գրուսեի եռահատոր «Խաչակրաց պատմության» Կիլիկյան Հայաստանին առնչվող դրվագների վերապատման արդյունք է Ս. Պապիկյանի «Հայերը եւ խաչակիրները» հոդվածաշարը, որը հրապարակվել է «Հանդես Ամսօրեայ»-ի 1961-63 թթ. համարներում:

սը) խաշակրաց արշավանքներին վերաբերող աշխատությաններից Կիլիկյան Հայաստանի պատմությանն առնչվող հատվածները, քանի որ «այս հրատարակությունները մինչ այժմ դուրս են մնացել Հայաստանի ընթերցող լայն հասարակության, ինչպես նաև պատմաբաններից շատերի ուշադրությունից» (էջ 4): Գնահատելով թարգմանությամբ ներկայացված հեղինակների ավանդը Կիլիկիո Հայոց թագավորության պատմության հետազոտության գործում, հեղինակն ընդգծում է Ռ. Գրուսեի բացառիկ առաքելությունը:

Ակնարկելով, որ թարգմանված հետազոտությունները ժամանակի առումով դույզն-ինչ հնացած են եւ չեն ներկայացնում գիտության վերջին խոսքն այս բնագավառում, և Տեր-Պետրոսյանը տեղեկացնում է, որ Փրանսերենից եւ անգլերենից կատարված ներկա թարգմանությունները օժտել է գիտության ժամանակակից վիճակը ներկայացնող ծանոթագրություններով, որոնք հիմնականում խարսխված են հայկական սկզբնաղբյուրների եւ նորագույն գրականության հաշվառման վրա:

Ներածությունն անվանված է «Խաշակրաց արշավանքները եւ Արեւելքում հիմնված լատինական պետությունները», ուր հեղինակն ընդհանուր գծերով անդրադառնում է Ֆրանսիայի Կլերմոն քաղաքում 1095 թ. սկզբնավորված շարժման գիտական բնութագրմանը, շրջանառության մեջ եղած եղբերի (խաշակրաց ուազմարշավները բնորոշող) ճշգրտմանը, ուազմարշավների ժամանակագրության հստակեցմանը: Այնուհետեւ առանձին հատվածներում անդրադառնում է խաշակրությունը ծնող պատճառների եւ նախադրյալների բնութագրմանը, մասնակիցների շահագրգություններին, համաշխարհային քաղաքանության մեջ այդ երեւությունը ծնող դրդապատճառներին ու խթաններին, եվրոպայում շարժումը նախաձեռնողների մտադրություններին: Լեռոն Տեր-Պետրոսյանի նպատակակետերից մեկն էլ ուազմարշավների նախօրյակին եւ ընթացքում Մերձավոր Արեւելքում ստեղծված քաղաքական իրադրության բացահայտումն է խաշակրաց պետությունների պատմության լայն ֆոնի վրա: Այնուհետեւ հեղինակն ընդհանուր պատկերացում է տալիս Առաջին խաշակրաց ուազմարշավի բանակների սոցիալական կազմի, ղեկավարների ու աշխարհագրական միջավայրի վերաբերյալ, շարժում, որի ընթացքում խաշաձեւվել են Մերձավոր Արեւելքի տարրեր ժողովուրդների ճակատագրերը: Առանձին-առանձին անդրադառնում է այդ ուազմարշավի ընթացքում Մերձավոր Արեւելքում ստեղծված հիմնական պետական միավորումների (Եղեսիայի կոմսություն, Անտիոքի իշխանապետություն, Երուսաղեմի թագավորություն, Տրիպոլիի կոմսություն, ինչպես նաև հետագայում ստեղծված Կիպրոսի թագավորություն) պատմությանը, իսկ վերջում փորձում է ի մի բերել «խաշակրաց արշավանքների արդյունքները»:

Ներածությունը հայերենով գրված առաջին մատչելի շարադրանքն է Կիլիկյան Հայսատանի հարեւանությամբ գործած խաչակրաց պետական միավորների պատմության, ուր բազմակողմանի անդրադարձ կա նաեւ մուսուլմանական տերությունների եւ հարեւան քաղաքական միավորումների քաղաքական փոխհարաբերությունների վերաբերյալ: Առանձնահատուկ ուշադրության է արժանացել Կիլիկյան Հայսատանի եւ խաչակրաց պետությունների ամուսնական կապերը, որոնք այդ երկրների արտաքին քաղաքականության կարեւոր որոշիչներն են եղել: Այստեղ Լեւոն Տեր-Պետրոսյանը քայլ առ քայլ հիմնական գծերով ներկայացնում է Եղեսիայի կոմսության շուրջ կեսդարյա պատմությունը՝ անդրադառնալով այդ տարածքում ծվարած հայկական իշխանությունների (Թորոս Կուրոպաղատ, Գող Վասիլ, Վասիլ Տղա, Դավթուկ, Գաբրիել, Ապլղարիբ եւ այլն) եւ հարեւան սելչուկյան պետական միավորումների, լատին իշխանությունների, Բյուզանդական կայսրության միջեւ ծավալված պայքարին: Նույն շափորշիչներով (պարամետր) հեղինակն անդրադառնում է նաեւ խաչակրաց մյուս պետությունների պատմությանը, ընդգծելով հայկական քաղաքական միավորների հետ նրանց փոխհարաբերությունների առանձնահատկությունները: Հեղինակն ուշադրություն է դարձնում հայկական սկզբնաղբյուրներում եւ գիտական գրականության մեջ Անտիոքի իշխանապետությունը բնորոշող տերմինների վրա (էջ 54-55), հպանցիկ անդրադառնում է Դաշտային Կիլիկյայի նկատմամբ Անտիոքի իշխանապետության հավակնություններին (էջ 60, 66), Անտիոքի եւ Կիլիկյայի իշխանությունների միավորման նպատակ հետապնդող Լեւոն Ա (1198-1219) Ռուբինյանի քաղաքականությանը (էջ 66-68): Հատկանշական է խաչակրաց պետությունների հետ փոխհարաբերություններում ամուսնական կապերի դերի բացահայտման գործում Լեւոն Տեր-Պետրոսյանի ջանքերը: Հատկապես կարեւոր է Կիլիկյան թագավորության անկման ժամանակաշրջանի պատմության անդրադարձը, քանի որ այդ կղզու միապետներն իրենց տիտղոսաշարի մեջ էին ներառել նաեւ «Հայոց թագավոր» անվանումը, որը հետագայում փոխանցվեց Սալոյայի, ապա՝ հարավային Խոտիայի կառավարող տներին:

Ներածության վեջում Լեւոն Տեր-Պետրոսյանն անդրադառնում է խաչակրաց ուազմարշավների արդյունքներին եւ համաշխարհային պատմագրության մեջ այդ դարաշրջանի գնահատականներին, ընդգծելով Մերձավոր Արեւելքի ժողովուրդներին հասցված մշակության, քաղաքական եւ բարոյական վնասի ահոելիությունը: Այստեղ կարելի էր նաեւ ընթերցողի ուշադրությունն հրավիրել խաչակրաց ձեռնարկին մասնակցած եվրոպական պետական միավորների քաղաքական եւ տնտեսական հակամարտության վրա, որը սկզբից ի վեր ներսից շլաշտում էր առաջ քաշված «վեհ» գաղափարը: Հատկանշական է հատկա-

պես զենովական եւ վենետիկյան առեւտրական հանրապետությունների անզիցում մրցակցությունը, որի հետեւանքները հատկապես ճակատագրական եղավկիլիկիայի եւ Կիպրոսի թագավորությունների պատմության համար: Խաչակրաց ուազմարշավների պատմությունը «լուսանցալին» համարելով «պատմական հեռանկարի տեսանկյունից», Լեռոն Տեր-Պետրոսյանը կարծես թե զանց է առնում Մերձավոր Արեւելքում տեղի ունեցող այսօրվա տեղաշարժերը: Եերածության մեջ, ԺԲ դարի 60-ական թվականներին Երուսաղեմի թագավորության կողմից եգիպտոսար նվաճելու ձեռնարկների մասին խոսելիս (էջ 85), կարծում ենք, արժեր անդրադառնալ Բյուզանդիայի կայսր Մանուկ Ա. Կոմնենոսի եգիպտական քաղաքականությանը, որին բավական տեղ է հատկացնում իր աշխատանքում Ֆ. Շալանդոնը<sup>10</sup>: Ավելին, գրքում պետք էր ընդգծել Բյուզանդական կայսրության արտաքին քաղաքական շահագրգոռությունների խաղացած դերը, մանավանդ՝ Դեաբոլի հաշտության պայմանագրում (1108 թ.) արձանագրված կետերի նշանակությանը տարածաշրջանի հետագա պատմության վրա:

Այստեղ իհարկէ կարելի է անդրադառնալ և. Տեր-Պետրոսյանի մի քանի սրտացալ մոտեցումներին, որոնց նկատմաբ հայագիտությունը հետայսու պետք է ավելի հետեւողական դիրքորոշում որդեգրի: Խոսքս հիմնականում վերաբերում է տերմինների օգտագործման՝ հատկապես Սիրիա, Թուրքմեն, Թուրք: Միջնադարյան հայկական սկզբնաղբյուրները Սիրիայի փոխարեն օգտագործում են Ասորիք<sup>11</sup> եզրը, որը կարծում եմ ավելի ընտանի է մեր ականցին եւ հետեւողականորեն կիրառված է հայ միջնադարյան պատմագրության մեջ, իսկ ինչ վերաբերում է Թուրքմեն տերմինին, որով անվանվում է սելջուկ, Մերձավոր Արեւելքի նախաօսմանյան քաղաքական միավորների բնակչությունը, ԺԴ-Ջէ դարերում տարածաշրջան ներխուժած ցեղախմբերից տարբերակելու համար կարելի էր օգտագործել թյուրք ձեւը, որը կիրառված է ի դարի հայ պատմագրության մեջ եւ համահունչ է ոռուս եւ օտար պատմագրության մեջ շրջանառության մեջ դրված եզրին: Հայերենին հարիր չէ նաեւ «Զանգիդյան», «Լեւանտ» ձեւերը: Մի շարք տեղանունների եւ անձնանունների օգտագործման դեպքում կարելի էր ընթերցողի ուշադրությունն հրավիրել դրանց միջնադարյան հայկական տարբերակների վրա. օրինակ «Տյուրոս»=«Մուր»<sup>12</sup>,

<sup>10</sup> F. Chalandon, Les Comnenes, t. II, p 535-553.

<sup>11</sup> Գրեսում օգտագործվում է նաև Զաղիրա (էջ 79 ևմ.) տերմինը: Կարծում են՝ այս եզրերի իմաստները պետք է բացվեն ընթերցողի համար:

<sup>12</sup> Ելնելով և. Տեր-Պետրոսյանի տեղանուններից ազգանուն կազմելու սկզբումից (Պուտատիեցի, Կուրտենեցի, Սենժիլցի, Մոնֆերատցի, Շամպայնացի, Իբելինացի)՝ պետք էր Վիլելմ պատմիշին անվանել Տյուրոսի: Եյուրացի: Օգտվելով հայերենի ընձեռած հնարավորությունից՝ կարելի էր գրել նաև Կուրտենցի, Շամպայնցի, Իբելինցի և այլն:

«Ըեյնալդ»=«Ըլընաղտ» եւ այլն: Հեթում Կոռիկոսցու գործունեությանն անդրադարձած հեղինակներին հիշատակելիս Լ. Տեր-Պետրոսյանի ուշադրությունից վրիպել է Գոհար Կարագյոզյանի հոդվածը<sup>13</sup>:

Գրքում Հայ ընթերցողին են ներկայացվում ֆրանսիացի բյուզանդագետ Ֆերդինանդ Շալանդոնի «Les Comnene: Etudes sur l'empire Byzantin aux XIe et XIIe siecle» մենագրության երկրորդ հատորի «Հայկական իշխանությունների կազմավորումը Կիլիկիայում. հայերը, խաչակիրները եւ Բյուզանդական կայսրությունը, Հովհաննես Կոմնենոսը եւ հայոց իշխան Լեռնը. Կիլիկան արշավանքը» (II, էջ 93-118): «Հունական կայսրությունը եւ նրա արեւելյան հարեւանները. Թորոսի ապստամբությունը. Փոքր Ասիայի մահմեդականների առաջինադայցումը. Ըեյնալդ Շատիլոնցին Կիպրոսում. Մանուելը Կիլիկիայում եւ Անտիոքում (1159 թ.). պայքար Փոքր Ասիայի մահմեդականների դեմ (1159-1164 թ.)» (II, էջ 417-455) հատվածները: Ֆ. Շալանդոնի մոտեցումներն ավելի ամբողջական կլինեին, եթե թարգմանվեր նաեւ ֆրանսիացի պատմաբանի գրքի 527-533 էջերը, ուր խոսվում է Բյուզանդիայի եւ Կիլիկան Հայաստանի 1159-1180 թթ. փոխարարերությունների վերաբերյալ:

Իլնե Գրուսեի «Histoire des croisades et du royaume France de Jérusalem» եռահատոր մենագրությունից թարգմանված են Բագրատունյաց թագավորության անկումից հետո Փոքր Ասիայում եւ Հյուսիսային Ասորիքում ստեղծված հայկական ուսումնաքաղաքական միավորումների (Ֆիլարտոս, Թորոս Եղեսացի, Գող Վասիլ, Տղա Վասիլ եւ այլն), Հայոց կաթողիկոսության, Խուրբինյան իշխանության եւ թագավորության ժեղ-ժեղ դդ. պատմությանն առնչվող հատվածները (I, էջ XL-XLIV, LVIII-LX, 43-68, 378-381, 388-394, 435-439, 442-443, 454-456, 472-476, 489-494, 589-594, 671-673, II, էջ 50-53, 86-88, 176-178, 195-196, 198-201, 291-292, 305, 332-335, 399, 408-410, 474-475, 566-569, 580-583, 602-604, 683-684, 696-697, III, էջ 15-16, 127-133, 194-195, 246-270, 363-366, 515-516, 526-529, 611-637, 695-696, 699-701, 726-727), ուր համաշխարհային պատմության հետնախորքի վրա լուսաբանվում են Մերձավոր Արեւելքի իրադարձությունները:

Իլնե Գրուսեի «L'empire du Levant: histoire de la question d'Orient» գրքից թարգմանվել է Փոքր Հայաստանը (Կիլիկիա) հատվածը (էջ 385-416), որը բաղկացած է երկրի քաղաքական պատմությանն (Տավրոսի բնակեցման սկիզբը, Խուրբինյան տոհմի սկզբնավորումը, բյուզանդացիների

Կարծում ենք՝ անձնանունների եւ տեղանունների հայացման այս ուսանելի մոտեցումը կշարունակվի նաեւ հետազոտում:

<sup>13</sup> Գ. Կարազյողյան, Հեթում պատմիշը եւ միջնադարյան ֆրանս-հայկական գրական կաւերը. – Հայ գրականության միջազգային կապերը, 2, Երևան, 1987, էջ 5-20:

վերջնական վտարումը, կետնի գահակալությունը, Հեթումյան դինաստիա, կուսինյան հարստություն) ու հաստատություններին եւ քաղաքակրթությանը (Հայոց թագավորթյունն ու ֆրանկների ազգեցությունը, Հայկական հակագեցությունը ֆրանկականացման դեմ, Հայոց եկեղեցին Ծուբինյան շրջանում, Հայոց եկեղեցին, Բյուզանդիան եւ Սուրբ Աթոռը, Կիլիկիո Հայոց թագավորությունը եւ Աւետարի առեւտուրը) նվիրված բաժիններից:

Ստիվեն Ուենսիմենի քաջածանոթ «*A History of the Crusades*» եռհատոր մենագրությունից թարգմանվել է «Հայկական միջնաբերդ» հատվածը (Հ. Ա., էջ 195-212), իսկ Քենեթ Սեթոնի «*A History of the Crusades*» գրքից Սիրարդի Տեր-Ներսեսյանի «Կիլիկյան Հայաստանի թագավորությունը» հոդվածը:

Թարգմանությունների արժեքը մեծացնում են Լ. Տեր-Պետրոսյանի ծանոթագրությունները, ուր հայկական սկզբնաղբյուրների ու նորագույն գրականության օգտագործմամբ վերանայված են դարաշրջանի պատմության մի շարք դրվագներ եւ հայագետների ուշագրությունն է հրավիրված Ժե.-ԺԴ. դդ. Մերձավոր Արեւելքի պատմության նորովի մեկնաբանության արժանի խնդիրների վրա:

Գիրքն ունի երկու հավելված, որոնցից մեկն անվանված է «Որոշ նկատառումներ Սամուել Անեցու ժամանակագրության վերաբերյալ», իսկ մյուսը ներկայացնում է «Սամուել Անեցու մի նորահայտ շարունակողի ժամանակագրական ցանկը»: Աշխատանքի այս հատվածը եւս ուշագրավ է, քանի որ հրապարակվում է Կիլիկիայի պատմությանը վերաբերող նոր սկզբնաղբյուր:

Վերջում բերվում է օգտագործված գրականության, անձնանունների եւ տեղաննունների ցանկեր, լատին Արեւելքի, Եղեսիայի, Անտիոքի, Տրիպոլիի, Երուսաղեմի, Կիպրոսի եւ Կիլիկիայի պետությունների պատմական քարտեզներ:

Գրքի ցանկերը կատարված են արտակարգ խնամքով, թեպետ կարելի էր ավելի ուացիոնալ դրանել դրանք: Նույն անվանման առանձին տարրերակները ցանկում երբեմն առանձին միավոր են, երբեմն՝ տարրեր: Օրինակ՝ Գաստոն (Գաստին, Գաստոն)-ը մեկ միավոր է, իսկ Գամասակոս (Ղմշկ, Ղմլշխ), Հոռմելլա (Կլայ, Խանկուլաթ) տեղանունները նաեւ առանձին միավորներ են: Պետք է հատուկ ընդգծել Լ. Տեր-Պետրոսյանի մեծ ներդրումը հայագիտության մեջ խաչակրաց ժամանակաշրջանի անձնանունների եւ տեղանունների ունիթիկացված տարրերակներ ստեղծելու գործում:

Աշխատանքն աշքի է ընկնմում պարզ, սակայն հագեցված շարադրանքով: Լեզվի առումով այն լավ խնամված է:

\*\*\*

Եւսոն Տեր-Պետրոսյանը կատարում է երկու տարի առաջ տված խոստումը եւ հայագիտության դատին է հանձնում «Խաչակիրները եւ հայերը» ընդհանուր խորագրով հետազոտության երկրորդ հատորը:

Եթե գրքի առաջին հատորում հիմնականում ներկայացված էին ի դարի Արեւմտյան գիտական գրականության մեջ Կիլիկիայի հայկական պետության պատմությանը անդրադարձած հեղինակների հայերեն թարգմանված երկերը, ապա ներկա աշխատությունը ներկայացնում է մի համապարփակ հետազոտություն, ուր հեղինակն իր առջեւ խնդիր է գրել հետազոտել բազմաբնույթ սկզբնաղբյուրների տեղեկությունները Կիլիկյան Հայաստանի պատմության ուսումնասիրության երկու հիմնական բնագավառներում. գահաժառանգության կարգ եւ իշխանության «լեզվահիմության» (օրինականության) դրսեւումներ:

Առաջաբանում հեղինակն ընդգծում է կիլիկյան Հայաստանի եւ Արեւելքում հիմնված խաչակրաց պետությունների տիպաբանական ընդհանրությունները, փորձում է բնորոշել «միջազգային իրավունք» հասկացությունը ԺԱ.ԺԴ գարերի ընկալումներով: Անդրադառնում է տարածաշրջանում հավակնություններ ունեցող գերատերությունների ու քաղաքական գործոնների (Բյուզանդիա, Արեւմտյան Եվրոպա, Խոլամական հասարակապետություն, մոնղոլներ) հավակնություններին եւ քաղաքական նկրտումներին: Լ. Տեր-Պետրոսյանը Բյուզանդիայի աշխարհակալական ձգտումները համադրում է Արեւմտահռոմեական (այս է Գերմանական) կայսրության նմանատիպ դիրքորոշմանը: Այս երկու տերությունները վիճարկում էին «հռոմեական կայսրության ժառանգորդն ու քրիստոնյա աշխարհի գերական» լինելու մենաշնորհը: Այդ իսկ պատճառով հեղինակը բանաձեւում է հիշատակված երկու կայսրություններում եկեղեցու կարգավիճակը մինչեւ ԺԱ. դարը եւ դրանից հետո, անդրադառնում է Հռոմի պապական աթոռի նկրտումների նկատմամբ հայկական սկզբնաղբյուրների վերաբերմունքին: Տարածաշրջանի քաղաքական պատկերն ամբողջացնելու տեսանկյունից ներկայացնում է նաև իսլամական հասարակապետության դիրքորոշումը եւ գործելակերպը Մերձավոր Արեւելքում, սովորականի ու խալիֆի ինստիտուտների փոխհարաբերությունը, անդրադառնում է սրբազն պատերազմի (Զիհար) նշանակությանը մուսուլմանի առօրյա կյանքում, Զիմմի ազգաբնակության (քրիստոնյա եւ հրեա) կարգավիճակին, իսլամական աշխարհակալության սկզբունքներին ու ընկալմանը: Մոնղոլների «տիեզերակալական

գաղափարախոսությունը»<sup>14</sup> հեղինակը համարում է «գործնական առումով» ամենահիմնավորվածը. «Եյսպիսի պատկերացման շրջանակում չէր տեղափորվում ոչ միայն թշնամական, այլև նույնիսկ դաշնակից պետությունների գոյությունը, քանի որ դաշնաքը կողմերի հավասարություն էր ենթադրում» (Էջ 19), հանգամանք, որը նկատել է նաև միջնադարյան հայ պատմագրությունը: Ահա նման միջազգային ուժերի եւ քաղաքական դաշտի ազգեցության ներքո էր գոյատեւում Մերձավոր Արեւելքը ԺԱ-ԺԴ դգ., երբ տարածաշրջանում իր պատմական դերն էր ստանձնել Կիլիկիայի հայկական պետությունը: Գրքի այս մասում փոքր ինչ բացարձակացված է այն հանգամանքը, որ թե՛ խաչակիրները, եւ թե՛ հայերը իրենց պետությունները ստեղծել են «օտար ժողովուրդներից նվաճված տարածքներում» (Էջ 5): Եթե այս դրույթը հիմնավորված է խաչակրաց պետությունների պարագայում, ապա Կիլիկիայի հայկական պետության դեպքում այդ մոտեցումը, կարծում եմ, իրեն չի արդարացնում. Կիլիկիային տեր դարձած հայկական զինվորական ուժերը նվաճողներ չեն, նրանք տարածաշրջանում հայտնվել էին պատմական անհրաժեշտության բերումով, Բյուզանդիակայի եւ սելջուկյան ուազմարշավների ուազմաքաղաքական ճնշման հետեւանքով: Ակսած ժարից Բյուզանդիան բռնության եւ դիվանագիտական համոզման ճանապարհով Մեծ Հայքի տարածքից տեղահան էր անում հայկական բնակչության մի նշանակալի զանգված իր քաղաքական եւ եկեղեցական կառուցներով ու բնակեցնում Կապաղովկիայում, Կիլիկիայում, Հյուսիսային Ասորիքում: Մի կողմից կայսրությունը փորձում էր օգտագործել նրանց ուազմական ուժը ոչ վաղ անցյալում վերագրաված սահմանների ամբողջականությունը պաշտպանելու համար, մյուս կողմից էլ ԺԱ դ. երկրորդ կեսին սելջուկ-թյուրքերի ուազմարշավների հետեւանքով նույն Բյուզանդիայից նվաճված փոքրասիական նահանգներում եւ Հյուսիսային Ասորիքում, հրոսակների տարերային ներխուժումների հետեւանքով ստեղծվել էր անիշխանական վիճակ, քաղաքական վակուում եւ քառու, որը կարողացան իրենց օգտին աշխատեցնել Բագրատունյաց Հայաստանի կործանումից հետո Կիլիկիայում եւ Հյուսիսային Ասորիքում հաստատված հայկական ուազմաքաղաքական ուժերը<sup>15</sup>: Այս առումով անհնար է հավասարման նշան դնել խաչակիրների եւ Կիլիկիայի հայկական իշխանությունների գործելակերպերի ու քաղաքական նպա-

<sup>14</sup> Մոնղոլական հսկայածավալ կայսրությունում իշխանության լեզվիմության խնդիրը բննարկում է նաև գերմանացի հնտագուտող Թ. Նագելը տե՛ս **Тильтман Нагель**, Тимур-завоеватель и исламский мир позднего средневековья / Перевод с немецкого Ясинской Л. И., Ростов-на-Дону, 1997, с. 65-74, 87-96.

<sup>15</sup> Այդ մասին տե՛ս նաև Ա. Ա. Բողոքան, Բյուզանդիայի արեւելյան բաղադականությունը եւ Կիլիկիան Հայաստանը ԺԲ դարի 30-70-ական թվականներին, Երեսան, 1988, էջ 52:

տակադրումների միջեւ: Այլ բան է, որ Կիլիկիայի հայկական պետությունը հետզհետե երկրի կառավարման համակարգը նմանեցրեց Խաչակրաց պետությունների կարգավիճակին: Անդրադառնալով Կիլիկիայի հայկական պետության քաղաքական դաշտում իրար հաջորդող 13 հարեւաններին (էջ 21-22) կարելի էր նաև հիշատակել Օշինյան իշխանության, Եղեսիայի Թորոս իշխանի, Արտուրյան ամիրայության, Մեծ Մոնղոլների խանության, Երուսաղեմի եւ Կիպրոսի խաչակրաց թագավորությունների անունները, որոնք կարեւոր գերակատարություն են ունեցել Ծուբինյանների ստեղծած պետության քաղաքական կյանքում իրրեւ սահմանակից երկրներ: Հիշատակված պետությունների եւ քաղաքական միավորումների հոսունությունը, ինչպես արդարացիորեն նկատում է հեղինակը, «անհնար էր դարձնում քաղաքական հաշվարկների վրա կառուցված երկարատեւ ուազմավարության գործադրումը» (էջ 22): Դրանով է բացատրվում այն պարագան, որ «Հակամարտող կողմերի երկարատեւ շահերը կարձատեսորեն ստորադասվում էին պահի թելադրանքով ակնկալված ձեռքբերումներին», որով միջակետական փոխհարաբերություններում տիրապետող էր դառնում «ջունգիների օրենքը» (էջ 22): Մեծ տերությունները կիրառելով «բաժանիր, որ տիրես սկզբունքը», փորձում էին փոքր պետություններին պահել իրենց սատելիտների ծիրում, տարածաշրջանում չէր գործում նույնիսկ «կրոնական համերաշության գիտակցությունը» (էջ 25): Խոսելով քառային թվացող այս վիճակի մասին, Լ. Տեր-Պետրոսյանը տարածաշրջանի փոքր պետությունների երկարակեցության պատճառը տեսնում է «գերտերությունների հակասությունների եւ ապա՝ փոքր պետությունների հավասարակշռության ոլորտում» (էջ 27): Կիլիկիայի հայկական պետության կենսունակության վճռորոշ գործոն համարելով հայկական բնակչության միատարր լինելը եւ մեծամասնություն կազմելը (էջ 29)<sup>16</sup>, ի տարբերություն խաչակրաց պետությունների, հեղինակը իրավամբ մեծ տեղ է տալիս Կիլիկան պետության մեջ ազգային ինքնագիտակցության դրսեւորման փաստերին (էջ 30-31), հիմնախնդիր՝ որի բազմակողմանի հետազոտությունը կարող է նոր հորիզոններ բացել տարածաշրջանի պատմության ուսումնասիրության ասպարեգում: Բազմաթիվ հարցադրումների այս նոր ու թարմ հոլովով լուսաբանում է Հետ-Պետրոսյանը կարեւոր տեղ է հատկացնում գահաժառանգման հստակ կարգի առկայության հետազոտությանը: Մանավանդ, որ հեղինակն իրեն հետաքրքրող դարաշրջանի մասին խոսող սկզբնաղբյուրների բազմաշերտ հանքում հայտնա-

<sup>16</sup> Յավոք, Կիլիկիայի հայկական իշխանության եւ պետության սահմաններում դեմոգրաֆիկ գործընթացների հետազոտությունը դուրս է մնացել հայագետների ուշադրությունից: Լ. Տեր-Պետրոսյանի գիրքը նոր խրան կարող է հանդիսանալ հարցի հետեւղական ուսումնասիրության համար:

բերել է դեռեւս անմշակ մի շերտ, որը ցայսօր չի արժանացել միջնադարագետ-հետազոտողների ուշադրությանը: Պիտի շեշտել ներկա ուսումնասիրության հատկապես քաղաքագիտական նշանակությունը, որը բխում է հեղինակի փորձառության հսկայական պաշարից եւ ուղեկցվում է աղբյուրագիտական նուրբ կառուցումներով:

Բուն աշխատությունն անվանված է «Գահաժառանգության իրավունքը եւ իշխանության „լեգիտիմությունը” Կիլիկյան Հայաստանում»: «Նախագիտելիքին» հաջորդում են առանձին գլուխներ, որոնք նվիրված են Կիլիկյան Հայաստանում գահակալած բոլոր Ռուբինյան իշխաններին եւ թագավորական գահին բազմած միապետներին: «Նախագիտելիք»-ում բերվում են մերօրյա պատմագրության կողմից արծարծված նկատառումներն ու առաջարկված լուծումները, Սմբատ Սպարապետի «Դատաստանագրք»-ում առկա գահաժառանգման եւ գահազրկման խնդիրներին վերաբերող համապատասխան դրույթներն ու կանոնները, ներկայացնում է միջնադարյան սկզբնաղբյուրներում հարցի քննարկման հիմնական հայեցակարգը: Լ. Տեր-Պետրոսյանը գրքի հետապնդած հիմնական նպատակը ձեւակերպում է հետեւյալ նախադասությամբ. «Մեզ հետաքրքրողը տվյալ դեպքում ոչ թե գահաժառանգման իրավունքի տեսությունն է, այլ նրա գործնական կիրառումը Կիլիկյան Հայաստանում, ինչը բնականաբար պահանջում է առանձին-առանձին դիտարկել Կիլիկիո բոլոր իշխանապետերի եւ թագավորների գահակալման հանգամանքները» (էջ 44): Այս բացատրությունից իսկ հստակ է դառնում, թե որքան կարեւոր է խնդիրը Հայոց պետական իրավունքի հետազոտության տեսանկյունից, մի նոր հարցադրում, որը առաջ է քաշում միջնադարագետ աղբյուրագետամբանը, հետազոտության ծիրի մեջ ներքաշելով ոչ միայն հայոց իրավունքի, այլ նաև քաղաքական մտքի ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետներին: Այնուհետև հեղինակը ներկայացնում է թագավորի ինստիտուտի էության խնդրին անդրադարձած կիլիկյան շրջանի կարեւորագույն սկզբնաղբյուրները. Վահրամ Բաբունու «Բան ի Յայտնութիւն Տեառն» եւ Հովհաննես Երգնկացու «Ի բանն առաքելոյ» ճառերը, որոնց հետազոտությունը նոր ուղիներ է մատնանշում զարգացած միջնադարի հայոց պետական իշխանության եւ նրա ինստիտուտների ուսումնասիրության բնագավառում: Հետազոտության այս մասում հաճախ հիշատակվող Հովհաննես Երգնկացու երկը դեռեւս հրատարակված չէ, եւ Լ. Տեր-Պետրոսյանը, օգտագործելով ձեռագիր ընդօրինակությունը, կարծես մղում է բնագրագետ-աղբյուրագետներին ձեռնամուխ լինել այդ երկի բնագրի հրապարակմանը:

Անցնելով իրեն հետաքրքրող բուն նյութի քննարկմանը՝ հեղինակը լայն աղբյուրագիտական հենքի վրա ուշադրություն է հրավիրում Կիլիկիայի հայ-

կական իշխանության կառավարողների՝ Ծուբինյան իշխանական տան անդամների կողմից գահին տիրելու օրինաշափությունների (լեզիտիմություն, ժառանգի ընտրություն) վրա: Անդրադառնալով Ծուբեն Ա-ի գործունեության մասին խոսող սկզբնաղբյուրների վկայությունների եւ մասնագիտական գրականության մեջ առկա տեսակետների քննարկմանը, հեղինակը վերստին անդրադառնում է Ծուբինյան առաջին իշխանի պատմականության խնդրին: Այս առումով ուշագրավ է հեղինակի այն պնդումը, որ Սամուելի հրապարակված «Ժամանակագրության» բնագրում առկա տեղեկությունների մի մասը հետևածուտ են եւ քաղված են ԺԴ դարի յուրահատուկ շրջանակի աղբյուրներից (Վահրամ Մաքունի «Ոտանաւոր պատմութիւն Ծուբինեանց», Հեթում արքայորդու Ճաշոցի հիշատակարան, Հեթում Կոռիկոսցու «Պատմութիւն ազգին Ծովբինանց» եւ Հեթում թագաւորի «Պատմութիւն»): Այստեղ, իհարկե պետք է շեշտվեր նաեւ, որ ԺԲ դարի բազմաթիվ իրադարձությունների համար Սամուելի երկը կա եւ մնում է տարածաշրջանի պատմության կարեւորագույն սկզբնաղբյուր, զորօրինակ՝ Գրիգոր Գ Պահլավունու կողմից Կաթողիկոսական աթոռը Անի տեղափոխելու մասին ծրագիրը: Սամուել Անեցու երկում Ծուբեն և իշխանի եւ առաջին կիլիկյան իշխանների մասին տեղեկությունների հետևածուտ լինելը կարծում եմ գեռեւս չի նշանակում, որ մենք առասպել պետք է համարենք Ծուբենի պատմական անձնավորություն լինելու ԺԲ-ԺԴ դարի հայալեզու եւ օտար հեղինակների վկայությունները: Ծուբենի եւ Կոստանդինի գործունեությանը անդրադարձած ԺԲ դ. սկզբնաղբյուրների աղքատությունը առաջին հերթին խոսում է այն մասին, որ ԺԲ դարի սկզբին գեռեւս ձեւավորված չի եղել Ծուբինյան պաշտոնական պատմագրական ավանդույթը, քանի որ հայկական օյկումենեյում բազմաթիվ իշխանություններ էին հավակնում առաջինը լինելու պատվին: Այդ է նաեւ պատճառը, որ Հայոց կաթողիկոսարանը ազգային ուժերը շշլատելու միտումով խուսափում էր աթոռը հաստատել որեւէ հայկական իշխանության տարածքում:

Հեղինակը շեշտում է, որ Կոստանդինի ինքնության վերաբերյալ թեպետ հայկական սկզբնաղբյուրները պնդում են Ծուբենի որդին լինելու հանգամանքը, այնուամենայնիվ Մատթեոսի եւ Մմբատի պատմագրական երկերում, ասորական պատմագրության մեջ ու հունարենով պահպանված կնիքների վրա Թորոսն ու Լեւոնը եւս անվանվում են Ծուբենի որդիներ (կամ Ծուբինյաններ): Այս փաստերից ելնելով Լեւոն Տեր-Պետրոսյանը գալիս է այն համոզման, որ արդեն ԺԱ. դարի վերջին եւ ԺԲ դարի սկզբին Ծուբեն անունն արդեն դիտվում էր իրբեւ տոհմանուն, իսկ քանի որ հայտնի է, որ Կոստանդինի մեծ որդու անունը Թորոս է, հետեւելով ն. Ադոնցին եւ Ծուբինյան ու Հեթումյան ընտանիքների տոհմագրությանը, ենթադրում է, որ Կոստանդինի հոր անունը եւս կարող էր Թորոս

լինել: Խնդիրը թեպետ մնում է կնճռոտ, սակայն մեծ կարեւորություն ունի Խուբինյան իշխանության պատմության ուսումնասիրողների համար: Նկատելով, որ «Խուբինյանների կիլիկիա մուտք գործելու պահին այդ երկրի մի զգալի մասին *de jure* Քյուզանդական կայսեր անունից, բայց *de facto* լիովին անկախ, տիրում էր Փիլարտոս անունով հայ զորավարը», հեղինակը կատարում է քաղաքագիտական հետաքրքիր դիտարկում. «Քյուզանդիան հանգուրժում էր իրերի այդ գորությունը, քանի որ մի կողմից՝ կարողություն չուներ միջամտելու հեռավոր այդ երկրամասի գործերին, մյուս կողմից՝ թերեւս սպասելով բարեպատեհ ժամանակների, միաժամանակ իրեն բավարարված էր ձեւացնում Փիլարտոսի թեկուզ ձեւական հպատակության ցուցադրությամբ: Բացառված չէ, որ առկա էր նաև քաղաքական հաշվարկը. Փիլարտոսի պետությունն այնուամենայնիվ ինչ-որ շափով թուլացնում էր թուրքերի ճնշումը կայսրության փոքրասիական տիրույթների վրա» (Էջ 83): Կիլիկիայում լեգիտիմ իշխանություն հաստատելու տեսանկյունից, կարծում եմ, կարելի էր նաև քննարկել սկզբնաղբյուրների վկայությունները Փիլարտոսի կողմից իսլամի ընդունման եւ սելջուկյան պետության գերակայությունն ընդունելուն նպատակառության քայլերը, մանավանդ այն բանից հետո, երբ Իկոնիայի սուլթան Սուլեյման իբն-Կութումիշը սկզբում ամբողջովին շրջափակման մեջ առավ, իսկ ապա նվաճեց տարածաշրջանը: Պակաս ուշագրավ չէր լինի նաև Ալղարիպ Արծրունու եւ նրա փեսա Օշին Հեթումյանի իշխանությունների լեգիտիմության քննարկումը Խուբինյան հայկական իշխանության քաղաքական կայացման տեսանկյունից, քանի որ Օշինի հետնորդները եւս կիլիկիայի պատմության ողջ ընթացքում փորձում էին լեգիտիմացնել սեփական իշխանությունը: Այս առումով հայագիտության մեջ դեռեւս հստակ չէ սկզբնաղբյուրներում հիշատակվող նախայնայլան եւ Հայկազունի տների գերակատարությունը հիշյալ գործընթացում, ինչպես որ Բագունիների պարագայում իրավացիորեն մատնանշում է և. Տեր-Փետրոսյանը (Էջ 85): Մեր կարծիքով այստեղ պետք է կարեւորվեր նաև այն հանգամանքը, թե ֆեոդալական մրցակցության ինչպիսի՞ պայմաններում էին Խուբինյանները կերտում իրենց պետության հիերարխիկ եւ վարչակառավարման համակարգերը, ԺԱ. դարի վերջում կիլիկիայում եւ Հյուսիսային Ասորիքում ստեղծված ժամանակավոր քաղաքական վակուումը ինչպե՞ս էր նպաստում կամ խանգարում կիլիկիայում հայկական միասնական իշխանության ստեղծմանը:

**Թորոս Ա-ի (1100-1129)** իշխանության ժամանակաշրջանից սկսած սկզբնաղբյուրների վկայությունները հետզհետե ավելի ստուգ են դառնում եւ թույլ են տալիս հետազոտողին իր տեսակետները կառուցել տեղեկությունների ավելի ամուր հողի վրա: Այստեղ հեղինակն իրավացիորեն ընդգծում է, որ

ժամանակի բազմալեզու սկզբնաղբյուրները Կոստանդինի մահից հետո իբրեւ հավասարագոր իշխաններ են համարում Թորոս Ա-ին եւ Լեռն Ա-ին (էջ 88-91): Մեր կարծիքով նման կացությունը *de jure* բնույթ կարող էր ստանալ միայն Դեպոլի պայմանագրից հետո: Լեռնի նկատմամբ Թորոսի գերակայության մասին փաստարկները կարող են խոսել այն մասին, որ թեպետ բյուզանդական իշխանությունները ճանաչել են երկու եղբայրների հավասարագորությունը իրենց պետության առջեւ, սակայն ըստ հայկական ժառանգական իրավունքի գործել է նաև Թորոսի առաջնաձնության գաղափարը: Հոր կողմից երկու որդիների միջեւ իշխանության բաժանման վարկածը առկա սկզբնաղբյուրների վկայություններով անհնար է հիմնավորել, այլ բան է, եթե ենթադրենք, որ տվյալ պարագայում գործում է «բաժանիր, որ տիրես» դարերի մեջ փորձված բյուզանդական քաղաքական գիծը: Այս տեսանկյունից հատկանշական է, որ ժբ դարի 50-ական թվականներին բյուզանդացիները «սեբաստոս» պատվանունով պատվում էին ոչ միայն Խուրինյան իշխան Թորոս Բ-ին, այլ նաև Հեթումյան իշխան Օշինին<sup>17</sup>: Թորոսի կողմից սեբաստոս տերմինի օգտագործումն իսկ արդեն ցուց է տալիս, որ նա իր իշխանությունը պատկերացնում է բյուզանդական քաղաքական ազդեցության ծիրում: Ինչ վերաբերում է Աննա Կոմնենի երկում օգտագործված ճնջորապոս տերմինին, ապա այն ժամանակի սկզբնաղբյուրներում անկասկած կախվածություն է մատնանշում<sup>18</sup>:

Իրավացի է Լ. Տեր-Պետրոսյանը, երբ հակադրվում է Վ. Խուրդ-Կոլենբերգի տեսությանը, ըստ որի իշխանության անցումը Թորոս Ա-ից Լեռն Ա իշխանին «մահմեդական սովորութիւն ազգեցության արտահայտություններից է հայ իրականության մեջ» (էջ 101-105): Օրինական ժառանգի բացակայության պայմաններում իշխանության անցումը մերձավորագույն արյունակցին ընդունված պրակտիկա է թե՛ մուսուլմանական եւ թե՛ քրիստոնեական աշխարհում: Սակայն այստեղ Լ. Տեր-Պետրոսյանը, հակադրվելով իր իսկ կողմից հմտությամբ շրջանառության մեջ դրված փաստին<sup>19</sup>, այնուամենայնիվ հարցականի տակ է դնում ակնհայտը՝ Թորոս Ա-ի Կոստանդին որդու սպանության պարագան (էջ 102-104): Զեմ կարծում, թե թագավորական իշխանության լեգիտիմությունը շեշտող եւ ջատագովող ժբ դարի երկրորդ կեսի հեղինակները փերե-

<sup>17</sup> Հեթումյաններին սեբաստոս տերմինով պատվելու վկայությունները հայտնի են նաև Լ. Տեր-Պետրոսյանին (էջ 99, ծան. 59): Ժբ դարի ընթացքում Կիլիկիայի թե՛ Խուրինյան եւ թե՛ Հեթումյան իշխանները կարեսրում էին սեբաստության պատվի ստացումը բյուզանդական իշխանությունների կողմից (էջ 100):

<sup>18</sup> Տե՛ս Ա. Կաժդանի հանրագիտարանային հոդվածը (The Oxford Dictionary of Byzantium, volume 1, New York, Oxford, 1991, p. 111):

<sup>19</sup> Նկատի ունեմ Դ. Ալիշանի («Սիսուան», էջ 239) հրապարակած Անավարզայի եկեղեցու արձանագրությունը:

ին, որոնք, շհամապատասխանելով պատմական իրականությանը, ակամա հակասեին իրենց իսկ ստեղծած քաղաքագիտական տեսությանը եւ կառուցումներին:

Քննարկելով Լեւոն Ա.-ի իշխանավարության շրջանում՝ 1136/7 թ., նրա որդիների միջեւ ծագած գժության դեպքին՝ և. Տեր-Պետրոսյանը շարունակում է հավատարիմ մնալ իր որդեգրած սկզբունքին. Ճշտել սկզբնաղբյուրների վկայությունների հավաստիությունը, անդրագառնալ մերօրյա պատմագիտական գրականության հիմնական մոտեցումներին եւ լուծումներին, փորձել ինդիրը պարզաբանել գահաժառանգման կարգի իրավական դաշտի պատմաքաղաքագիտական շրջանակներում: Այստեղ կարելի էր արձանագրել Կիլիկյան Հայաստանում լեգիտիմության համար պայքարի մի կարեւոր արձագանք եւս. Եւ՝ Թորոս Ա.-ը, եւ՝ Լեւոն Ա.-ը իրենց որդիներին կոստանդին անունն են տվել: Արդյոք սա չի նշանակում, որ երբայրների միջեւ իշխանության համար պայքարը սկսվել է շատ վաղուց եւ իներցիայով անցել է նրանց հետնորդներին<sup>20</sup>: Անցնելով Լեւոն Ա.-ին սկզբնաղբյուրներում տրված բյուզանդական տիտղոսների նշանակության բացահայտմանը՝ հեղինակն իրավացիորեն ենթադրում է, որ մինչեւ Թորոս Ա.-ի մահը Լեւոն Ա.-ը «թեկուզ ստորակայի կարգավիճակով, կիսել է իշխանությունը իր եղբոր հետ» (էջ 110): Ընթերցողն ակնկալում էր, որ և. Տեր-Պետրոսյանը կանդրադառնա Հովհաննես Ա. Կոմնենոսի կիլիկյան ուազմարշալի կազմակերպմանը առիթ ծառայած բյուզանդական կողմի առաջ քաշած ամենածանրակշիռ մեղադրանքին՝ Լեւոն Ա.-ը մերժել է Բյուզանդական կայսրության գերակայությունը եւ իրեն թագավոր է հոչակել<sup>21</sup>: Ինդիր, որն առաջին հերթին պահանջում էր քաղաքագիտական լուծում եւ պահանջում է միջազգային փոխհարաբերությունների ու հայկական իշխանության կայացման կամ լեգիտիմության տեսանկյունից նորովի քննարկում:

Թորոս Բ.-ի կողմից Կիլիկիայի հայկական իշխանության վերականգնման պատմական սկզբնաղբյուրների աղբյուրագիտական հետազոտությունը մեր կարծիքով թույլ է տալիս նրա քաղաքական ակտիվ գործունեությունը տանել

<sup>20</sup> Այս առումով, մեր կարծիքով, ուշագրավ է, որ Սմբատի տարեգրության համառոտ տարբերակներուն եւ Սամուելի ժամանակագրության մեջ Կոստանդին Ա.-ի կրտսեր որդու՝ Լեւոն Ա. իշխանի (1129-1137) զավակներից մեկի անունը ես Կոստանդին է (տե՛ս Ա. Բողոքան, Բյուզանդիայի արևելյան ..., էջ 95), թեպես սկզբնադրյութները մատնանշում են նրա անօրինական ամուսնության պատու լինելու հանգամանքը: Պատմագրության համար պակաս կարեւոր չէ նաև այն հանգամանքը, որ Թորոս Ա. իշխանի միակ ժառանգին Վահրամ Շաբունին անվանում է Կոստանդին (տե՛ս Ա. Բողոքան, Բյուզանդիայի արևելյան ..., էջ 80): Այս հանգամանքը ես մեկ փաստարկ կարող է լինել երկու եղբայրների ժառանգական մերժակցության մասին, որին անդրադառնում է և. Տեր-Պետրոսյանը (էջ 88 եւ հետ.):

<sup>21</sup> Հր. Բարթիկյան, Միհայել Խոալիկոսի «Ներքողյանը» եւ Կիլիկիայի հայոց առաջին քավորի ինդիրը. – «Պատմա-բանասիրական հանդես», 1984, № 4, էջ 216-220:

Երկրորդ խաչակրաց ռազմարշավի ժամանակները: Դրա համար կարող է ան-ուղղակի փաստ ծառայել նաեւ այն հանգամանքը, որ ինաբի ճակատամարտին (1149 թ.) եւ նրան հաջորդող իրադարձություններին, որին մասնակցում են Փոքր Ասիայի եւ Հյուսիսային Ասորիքի գրեթե բոլոր շահագրգիռ քաղաքական ուժերը, կիլիկյան հայկական իշխանության գոյության մասին սկզբնաղբյուր-ներում (հատկապես Գրիգոր Երեցի մոտ) ակնարկ չկա<sup>22</sup>: Թեպետ Թորոս Բ-ի բուռն քաղաքական գործունեությունը եւ հատկապես Անտիոքի իշխան Ռեյ-նալդ Շատիլոնցու հետ Կիպրոսի գրավումն ու ավարառումը կարող էին լուրջ առիթ ծառայել Մանուել Ա. Կոմնենոս 1158/9 թթ. ռազմարշավի համար, սակայն այդ ձեռնարկի հիմնական պատճառը, մեր կարծիքով, Բյուզանդական կայսրության ուժի ցուցադրումն էր Հալեպի աթաբեկությանը եւ Մերձավոր Արեւելքի քաղաքական ուժերին: Այդ է պատճառը, որ արշավանքի ընթացքում լուրջ գործողություններ չարձանագրվեցին Կիլիկիայի հայկական իշխանության եւ Անտիոքի լատին իշխանությունների նկատմամբ: Բյուզանդական մեծաթիվ բանակի առկայության պայմաններում այդ իշխանություններն ընդունեցին կայսրության գերակայությունը: Հատկանշական է, որ Գրիգոր Երեցի դեպքերին ամենամոտը կանգնած ժամանակագրի վկայությամբ, Թորոս Բ-ը բյուզանդական հիշյալ ռազմարշավից հետո է միայն հիշատակվում «պան-սեւաստիոս» տիտղոսով<sup>23</sup>:

Մուբեն Բ եւ Մլեհ իշխանների բաժնում հայագիտության տեսանկյունից էական նվաճում է հեղինակի անդրադարձը կիլիկիայի հայկական իշխանության միջավայրում խնամակալության ինստիտուտի առաջացմանը<sup>24</sup> եւ Մլեհի կողմից իշխանության զավթման ու օրինականացման հիմունքներին (էջ 129-136, 141-143): Լ. Տեր-Պետրոսյանը ելնելով այն փաստից, որ Մերձավոր Արեւելքի խաչակրաց իշխանություններում խնամակալ էր նշանակվում անշափահաս գահաժառանգի մերձավորագույն ազգականը, այդ իսկ պատճառով Մլեհ իշխանը, ըստ Լ. Տեր-Պետրոսյանի, փորձում է իրագործել սեփական իրավունքը: Մլեհի մասին սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների աղբյուրագիտական եւ պատմագրության մեջ հայտնված տարամետ կարծիքների մանրամասն քննությամբ հեղինակը վեր է հանում Մլեհի, իբրեւ քաղաքական գործի հակասականությունը. փաստորեն ցուց է տրվում, որ նրա իշխանապետության շրջանը կիլիկյան պետության լեզիտիմության ձեռք բերման ճանա-

<sup>22</sup> Ա. Բողոքյան, Բյուզանդիայի արեւելյան..., էջ 158-163:

<sup>23</sup> Ա. Բողոքյան, Բյուզանդիայի արեւելյան..., էջ 203:

<sup>24</sup> Այս ինսախտուտին ժամանակին անդրադարձը է նաեւ Ս. Բոռնազյանը (տե՛ս Ա. Վ. Բոռնազյան, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան հայկական պետությունում XII-XIV դարերում, Երևան, 1973, էջ 67-70):

պարհին կարեւոր հանգրվան է եղել, թեպետ իշխանության անցումը Մլեհին ժամանակակիցների տեսանկյունից օրինական չի ճանաչվել: Խաչակրաց պետությունների օրինակով, հեղինակն անդրադառնում է նաև Կիլիկյան Հայաստանում բարոնների (ներկա դեպքում իշխանների) ժողովի առկայության փաստին<sup>25</sup>, վերլուծում է այդ հաստատության գործունեության մի կարեւոր բնագավառ՝ խնամակալության ինստիտուտի նկատմամբ նրա վերահսկողությունը (Էջ 140-142): Այս հատվածում կարելի էր մասնագետների ուշագրությունը հրավիրել նաև այնպիսի մի կարեւոր խնդրի վրա, ինչպիսին մահվանից առաջ Թորոս Բ-ի վանական դառնալու մասին Միքայել Ասորու<sup>26</sup> վկայությունն է: Նման պրակտիկայի էին հետեւում Բյուզանդիայի կայսրերը, Արեւմտաելքոպական եւ խաչակրաց պետությունների բազմաթիվ տիրակալներ, վերջապես իրերի նման դրություն է արձանագրված Կիլիկյան Հայաստանի Հեթում Բ արքայի (1289-1293, 1295-1297, 1299-1301) իշխանության ընթացքում<sup>27</sup>: Այս խնդիրը եւս, մեր կարծիքով, անուղղակիորեն կապ ունի Թորոս Բ-ի եւ Ռուբինյան իշխանության լեգիտիմության հարցի հետ:

Իրավական առումով արդարացնելով Մլեհի նկատմամբ հաշվեհարդարը եւ իշխանության անցումը Ռուբեն Գ-ին (Չրչանցելով առաջինի ժառանգներին)<sup>28</sup> սկզբնաղբյուրները այնուամենայնիվ փորձում են արդարացնել վերջինիս, որից և Տեր-Պետրոսյանը կատարում է բավական նուրբ քաղաքագիտական հետեւություն. «...Ռուբենը, կարծես թե, այնուամենայնիվ սեփական մեղքը քավելու եւ իր մասին նպաստավոր հասարակական կարծիք ձեւավորելու խնդիր ուներ» (Էջ 152): Հեղինակն իրավացիորեն նկատում է, որ բյուզանդիայից վասալական կախման անհրաժեշտությունը վերանում է Միրիոկեֆալոնի ճակատամարտում (1176 թ.) բյուզանդական բանակի պարտությունից հետո<sup>29</sup>, իսկ Ռուբեն Գ-ը փորձում է իրեն հպատակեցնել երկրում մնացած կայսրության վերջին բաստիոնը՝ Հեթումյան իշխանությունը, որն էլ իր հերթին դիմում է Անտիոքի լատին իշխանության օգնությանը: Ռուբեն Գ իշխանի գերությունը Անտիոքում նոր փոխհարաբերությունների սկիզբ են դնում Անտիոքի եւ Կիլի-

<sup>25</sup> Իշխանների ժողովին հեղինակն անդրադառնում է նաև Ռուբեն Գ-ի իշխանության դարաշանի սկզբնաղբյուրները վերլուծելիս (ան էջ 153-155):

<sup>26</sup> Cf. Chronique de Michel le Syrien, patriarche jacobite d'Antioch (1166-1199); éd. et trad. franç. par J.-B. Chabot, Paris 1905, t.III, p. 331.

<sup>27</sup> Իշխանությունից հրաժարվելուց հետո վանական մեմ է ընդունել նաև Ռուբեն Գ-ը (Էջ 163):

<sup>28</sup> Լ. Տեր-Պետրոսյանի ուշադրությունից վրիպել է բյուզանդագետներ Կլ. Շենեփ (J. Cl. Cheynet, Manzikert: Un désastre militaire – Byzantion, 50, 1980, p. 410-438) եւ Ե. Այլոֆի (E. Eichhoff, Der Ort der Schlacht von Myriokephalon, VIII. Türk Tarih Kongresi, vol. 2, Ankara, 1982, p. 679-687) հոդվածները Մանազկերտի (1071) եւ Միրիոկեֆալոնի ճակատամարտերի մասին:

կիայի իշխանությունների միջեւ։ Միայն Լեւոն Բ իշխանի ջանքերի գերլարման հետեւանքով Կիլիկիայի հայկական իշխանությունը կարողանում է հետզհետե հետ բերել կորցրածը, թեպետ դեռեւ երկու տասնամյակ միջազգային հանրության կողմից դիտվում է իբրեւ Անտիոքի իշխանության վասալը (էջ 160-163): Այստեղ հետաքրքիր է հեղինակի անդրադարձը 1185 թ. հետո Լեւոն Բ իշխանի կարգավիճակին, իբրեւ Կիլիկյան պետության խնամակալի (էջ 159-160):

Կիլիկիայի հաջորդ տիրակալի գործունեությանը Լ. Տեր-Պետրոսյանն անդրադառնում է գրքի հաջորդ երկու բաժիններում (էջ 164-209). «Լեւոն Բ ինամակալ-իշխան (1187-1198)» եւ «Լեւոն Բ (I) թագավոր Հայոց (1198-1219 թթ.)»։ Առաջին բաժնում հեղինակը սկզբնաղբյուրների քննությամբ կարողանում է ցուց տալ, որ Լեւոնն իր գործունեության առաջին շրջանում իշխանությանը տիրացել է իբրեւ Խուրեն Գ-ի դատրերի խնամակալ։ 1194 թ. Բոհեմունդ Գ-ի հետ կնքած պայմանագրով, որի բովանդակությունը վերականգնվում է սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների ամփոփումով, Լեւոն Բ իշխանը, օգտվելով քաղաքական նպաստավոր պայմաններից, կարողանում է փոխել Կիլիկիայի հայկական պետության քաղաքական կարգավիճակը եւ Անտիոքի իշխանության ստորակայից վերածվում է այդ իշխանության գերակայի։ Այստեղ հայագիտության մեջ առաջին անգամ քննության է առնվում Զորտվանել Սասունցու որդի Հեթումի (Եւ նրա եղբայր Շահնշահի) ողբերգական ճակատագիրը, որը 1188/9 թ. ամուսնացել էր Խուրեն Գ-ի ժառանգ-դուստր Ալիսի հետ (էջ 177-179, 506)։ Երկու եղբայրների համաժամանակա մահը 1193 թ. Լ. Տեր-Պետրոսյանը իրավացիորեն բացատրում է Լեւոն Բ իշխանի քաղաքական նկրտումներով (էջ 178-179), որն այդ նույն թվականին Անտիոքի իշխանության հետ կնքած պայմանագրով լուծեց իր «լեգիտիմությանն» առնչվող երկու իրավական խնդիր։ «...թոթափեց իր վասալական կախվածությունն Անտիոքի իշխանապետից... հնարամտորեն երկարածեց խնամակալի կարգավիճակով երկիրը կառավարելու իրեն վերապահված ժամկետը...» (էջ 179)։ Խնամակալի կարգավիճակից երկրի օրինական տերը դառնալու Լեւոնի մտահոգության հետ է կապում հեղինակը նաև 1189 թ. Լեւոնի սկսած բանակցությունները Արեւմուտքի տիրակալների եւ Բյուզանդական կայսրության հետ թագավորի տիտղոս ստանալու համար, ձգտելով օծման շնորհիվ Հայոց գահին տիրելու ցմահ իրավունք ստանալ (էջ 180-182, 184-185)։ Այստեղ իհարկե հեղինակի ուշադրությունը պետք է հրավիրել այն փաստի վրա, որ Ներսես Լամբրոնացին իր «առ Լեւոն» թղթում, որը գրվել է մինչեւ Լեւոնի օծումն իբրեւ թագավոր՝ նրան Կիլիկիայի «քրիստոնա-

գոր իշխող», ինքնակալ է կոչում<sup>29</sup>: Լեռնի թագադրությամբ, ըստ հեղինակի, լուծվում է ոչ միայն նրա անձնական «լեգիտիմության», այլ նաև Հայոց պետության միջազգային իրավական կարգավիճակը (Էջ 186): Աղբյուրագիտական քննության ենթարկելով Լեռն Ա. Խուբինյանի թագադրության մասին սկզբնաղբյուրների տեղեկությունները (Էջ 186-195) գալիս է այն համոզման, որ «...Ճանաչվելով միաժամանակ Գերմանական ու Բյուզանդական կայսրերի, ինչպես նաև Հռոմի պապի կողմից, Կիլիկիո Հայոց թագավորությունը, ժամանակակից քաղաքագիտական լեզվով արտահայտված, դարձել էր միջազգային իրավունքի լիարժեք սուբյեկտ, որի հետ հարկադրաբար հաշվի պիտի նստեին նաև մահմեղական երկրները, իսկ հետագայում անգամ մոնղոլները» (Էջ 194-195): Պատմագրության համար չափազանց արժեքավոր է հեղինակի անդրադարձը Լեռն Ա.-ի եւ նրա հետնորդների կողմից շրջանառության մեջ դրած «Ամենայն Հայոց թագավոր» տիտղոսին (Էջ 196-201), Խուբինյանների արքայական ծագման մասին լեզնդի հորինմանը եւ Բագրատունիների իրավահաջորդը լինելու մտքի տեսականացմանը (Էջ 202-204): Խուբինյան պետության «լեգիտիմության» ամրապնդմանն ուղղված այս հնարանքների կարեւորության եւ սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների համապարփակ քննությանն են նվիրված բաժնի հաջորդ էջերը (Էջ 206-209): Այստեղ պետք է միայն հիշեցնել, որ ժամանակակից պատմագրության մեջ հարցականի տակ է գրվում Լեռն Ա.-ի «Կաթողիկե եկեղեցու գերիշխանությունը ընդունելու» (Էջ 191) հանգամանքը<sup>30</sup>: Գրքի այս հատվածում կարող էր քննարկման առարկա դառնալ Ամենայն Հայոց կաթողիկոսի գերը թագավորի օծման գործընթացում, որը թագավորական իշխանության լիգիտիմությունը ապահովելու կարեւորագրուն պայմաններից մեկը պետք է համարել հայկական ողջ օյկումենիում: Հեղինակը հայ պատմագրության ապագայի ներկայացուցիչներին է թողնում «լեգիտիմությանը» վերաբերող այնպիսի խնդիրների հստակեցումը, ինչպիսիք են Լեռնի ստեղծած պետության տեղը աշխարհի տիրակալների ընտանիքում: Լեռն Ա.-ի մահից հետո նոր փորձությունների ենթարկվեց Կիլիկիայի հայկական պետությունը, այդ իսկ պատճառով և. Տեր-Պետրոսյանը մանրամասնորեն անդրադառնում է Կիլիկիայի առաջին թագավորի իշխանության տարիներից մինչեւ Հեթում Ա.-ի գահաժառանգության հանգամանքներին վերաբերող

<sup>29</sup> Տեսն Ներսեսի Լամբրոնացոյ Տարտոնի եպիսկոպոսի Ատենարանութիւն եւ քույր եւ նաոն, Վենետիկ, 1865, Էջ 203-242:

<sup>30</sup> P. Halfter, Das Papstum und die Armenier im frühen und hohen Mittelalter: von den ersten Kontakten bis zur Fixierung der Kirchenunion im Jahre 1198, Köln; Weimar; Wien; Böhlau Verlag, 1996, p. 265-269; Հմմա Ա. Բողոքան, Պապությունն ու հայերը վաղ և զարգացած միջնադարում. – «Էջմիածին», 1996, ԺԲ, Էջ 124-125:

սկզբնաղբյուրների վկայությունների մանրամասն քննությանը: Ուշագրավ է հեղինակի անդրադարձը Ծուրեն-Ռայմոնդի անվան մասին սկզբնաղբյուրների քննությանն ու պարզաբանմանը, որին հետեւում է հստակ եզրակացությունը. «...Ծուրենը եղել է մանկան մկրտության անունը, որը նրան տրվել է նշանավորելու համար իր պատի ուղիղ շառավիղն ու այդուշ Հայոց գահի ժառանգորդը լինելու նրա հանգամանքը» (էջ 212-213): Այնուհետև հեղինակը հանգամանորեն անդրադառնում է Ծուրենի գահաժառանգության հետ կապված պատմական սկզբնաղբյուրների եւ այդ խնդրի հետ կապված կետոն Ա-ի կողմից Անտիոքի իշխանության նկատմամբ ձեռնարկված ուղղարշավների (1201, 1203, 1208, 1216 թթ.) հանգամանքների պատմաբանասիրական եւ քաղաքագիտական նուրբ խնդրիների քննությանը (էջ 213-225): Հեղինակն այս կապակցությամբ անդրադառնում է նաեւ Մլեհի որդի Գեորգի կուրացման հետ կապված կետոն Ա-ի ձեռնարկած քայլերի բացատրությանը (էջ 219-220), չի անտեսում նաեւ Կիլիկիայի պատմության այս փուլում կետոնի ձեռնարկած քաղաքական ամուսնությունների նշանակության բացահայտմանը (էջ 223), որոնք կարող են ավելի ամբողջական պատկերացում ստեղծել կետոնի ստեղծած պետության միջազգային ճանաշման եւ «լեզիտիմության» աստիճանի մասին: Այս տեսանկյունից քննության նյութ է դարձել նաեւ կետոն Ա-ի եւ Ծուրեն-Ռայմոնդի հակամարտությունը, վերջինիս հեռացումը ոչ միայն Կիլիկիայի հայկական իշխանության, այլ նաեւ Անտիոքի կառավարումից (էջ 225-227), վերլուծում է նաեւ 1221 թ. Ծուրեն-Ռայմոնդի կողմից Կիլիկիայի հայկական իշխանության բոնազավթման անհաջող փորձը (էջ 227-229): Պատմագրության համար կարեւոր նշանակություն ունի Կիլիկիայի եւ Անտիոքի միացյալ պետություն ստեղծելու կետոն Մեծագործի նպատակների քննումը՝ ըստ սկզբնաղբյուրների եւ ժամանակակից պատմագրության տեսական քննարկումների (էջ 230-235): Շետադրումների մեջ պետք էր ընթերցողին հիշեցնել Ծուրեն Գ իշխանի դուստր Ալիսի գերակատարությունը գահաժառանգության խնդրների հետ կապված իրադարձությունների հորձանուտում: Մեր կարծիքով՝ թե՛ Ալիսի եւ թե՛ հետագայում կետոնի դուստր Զապելի պարագայում նրանց ժառանգ ժառանգական իրավունքները շարունակվել են նաեւ ամուսնությունների կամ արու ժառանգ ունենալու գեպքում, այդ իսկ պատճառով նրանց պետք է համարել համահավասար գահականեր Ծուրեն Ռայմոնդի, Փիլիպոսի եւ Հեթում Ա-ի հետ միասին, հանգամանք, որին համապատասխան ուշադրություն չի դարձվել կետոն Ա թագավորի վերջին տարիների եւ մահից հետո ընկած ժամանակաշրջանը նկարագրող գլուխներում:

Ծուրեն-Ռայմոնդից երես թեքելուց հետո կետոն Ա-ը 1216 թ. իր իշխանության օրինական ժառանգ է հաստատում իր դուստր Զաբելին: Լ. Տեր-Պետ-

բոսյանն անդրադառնում է Կիլիկիայի հայկական իշխանության ժառանգման հետ կապված կետն Ա-ի ծրագրերին. չորսամյա Զաքելի եւ Հունգարիայի թագավառան Անդրաշ կրտսերի ամուսնական ծրագրին (էջ 236-239), Սիր Աստանի խնամակալության շրջանին (էջ 239-242, 243-244), Երուսաղեմի թագավոր Հովհաննես Բրիենացու Ակրտումներին (էջ 242), Կոստանդին պայլի խնամակալության առաջին շրջանին եւ Փիլիպոս Անտիոքացու հետ Զաքելի քաղաքական ամուսնությանն ու այդ գործարքի խափանմանը (էջ 244-253): Պատմաբանի համար հատկապես հետաքրքիր են քաղաքական կոնյուկտուրայի փոփոխությունները, որոնք հիմք են դարձել Կոստանդին պայլի համար իշխանությունը իր ձեռքում կենտրոնացնելու խնդրում: Այս հատվածում և Տեր-Պետրոսյանը քաղաքագետ-պատմաբանի հոտառությամբ եւ սկզբնաղբյուրների հայտնած տեղեկությունների նուրբ քննարկումով մեկը մյուսի հետեւից լուսաբանում է կետն Ա-ի վերջին տարիներից Կիլիկիան Հայաստանի իշխանությունների առջեւ կանգնած դժվարությունները, որոնք կապված էին գահաժառանգման կարգի եւ իշխանության «լեգիտիմության» խնդիրների հետ:

Հեթում Ա-ի եւ Զաքելի իշխանության, Կոստանդին պայլի խնամակալության շրջանին է նվիրված գրքի հաջորդ բաժինը (էջ 254-296): Այստեղ հեղինակն անդրադառնում է Կոստանդին խնամակալի գործունեության նոր շրջանի գահաժառանգման կարգի եւ իշխանության «լեգիտիմության» խնդրի հետ առնչվող հիմնական սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների հետազոտությանը: Խոսվում է Կիլիկիայում արդեն կայացած «Արքունի ատյանի» գյուղելիքներին, որը 1226 թ. որոշում ընդունեց Զապելին ամուսնացնել Կոստանդին պայլի զավակ Հեթումի հետ եւ վերջինիս օծել Հայոց թագավոր: Այդ ինստիտուտի եւ նրա կողմից խնամակալ նշանակելու գործառնության մասին և. Տեր-Պետրոսյանը խոսում է ավելի վաղ ժամանակներից (Մեծի մահից հետո)՝ այն նույնացնելով խաչակրաց արեւելքի պետությունների համանման ինստիտուտների հետ (էջ 131-135): Փիլիպոս Անտիոքացուց իշխանության անցումը Հեթում Ա-ին և. Տեր-Պետրոսյանն անվանում է «պետական հեղաշրջում» (էջ 257), որը, մեր կարծիքով, ճշգրիտ է արտահայտում իրերի վիճակը, եթե նկատի ունենանք, որ իշխանության լծակները անտիոքյան կողմնորոշման կողմանակիցներից կրկին անցնում է հայ իշխանների ձեռքը: Կարծում ենք հիմնավորված չէ դա «պետական հեղաշրջում» կոչել այն իմաստով, որ «Կիլիկիո թագավորության գահն անցավ Խուրինյանների երբեմնի ախոյանների՝ Հեթումյան գերդաստանի ներկայացուցիչների ձեռքը» (էջ 258): Տվյալ պարագայում, կարծում եմ Խուրինյան-Հեթումյան հակամարտության մասին խոսելն արդարացված չէ, քանի որ Կոստանդին պայլի կողմից ներկայացվող Հեթումյանների պապեռոնյան ճյուղը վաղուց էր բաժանվել Լամբրոնի ճյուղից եւ

Ելեհի մահից հետո միշտ գտնվում էր Ռուբինյանների իշխանության ներքո, ճանաշում էր վերջինիս գերակայությունը եւ համախոհ էր վերջիններիս ձգտումներին: Այս տեսանկյունից կարեւոր է եղրակացությունը. «...Հեթումի գահակալումը շնախտեց նաեւ Ռուբինյանների հաստատած ամենահիմնական քաղաքական ավանդությը, այն է Լամբրոնի Հեթումյանների դեմ պայքարի շարունակականությունը...» (էջ 261): Այս տեսանկյունից հատկանշական է, որ թագավորահայր Կոստանդին պայլի կողմից Լամբրոնի Հեթումյաններին տրված բարձր պատիվներից հետո էլ, նրանք շարունակում են պահել իրենց ըմբոստ կեցվածքը (էջ 266-267): Հեղինակն անդրադառնում է նաեւ Զարելի ապստամբությանը վերաբերող սկզբնաղբյուրների հաղորդած վկայությունների քննարկմանը (էջ 255-257), ինչպես որ իր տեղում անդրադարձել էր Ռուբեն-Ռայմոնդի եւ նրա մայր Ալիսի բարձրացրած խոռվությանը (էջ 227-229), հատկանշական է որ երկու խոռվությունների օջախն էլ եղել է Սելեսկիա քաղաքը, որը գտնվում էր Հիվանդախնամ ասպետների կարգի իշխանության ներքո: Պատմագրության համար կարեւոր ներդրում է նաեւ Լ. Տեր-Պետրոսյանի դիպուկ դիտողությունը. Կիլիկիայի հարստությունների բաժանումը Ռուբինյանների եւ Հեթումյանների (այնուհետեւ՝ Լուսինյանների) արհեստական է, քանի որ պաշտոնական հրովարտակներում նման բաժանման որեւէ հետք չկա (էջ 258-261): Դահաժառանգման խնդիրներին վերադառնալով Լ. Տեր-Պետրոսյանը պարզում է, որ ինչպես Փիլիպոսը, այնպես էլ Հեթում Ա-ը երկրի կառավարման դեկը ստանձնել են «ոչ թե լիիրավ թագավորի, այլ թագավիր-գործակցի (prince consort) կարգավիճակով» (էջ 268): Այնուամենայնիվ, շեմ կարծում, որ պետք է բացարձակացնել միայն Զարելի իրավական կարգավիճակը (էջ 268-269), քանի որ դրան մոտ է եղել նաեւ Ռուբենի դուստր Ալիսի ստատուսը, թեպետ նրա անունով դրամ մեզ չի հասել: Զարել թագուհու կարգավիճակի հաստատունության մասին են խոսում ԺԴ դարի առաջին կեսի բազմաթիվ վկայություններն ու հիշատակարանները, որոնք բերվում են գրախոսավող գրքում (էջ 269-272): Հեղինակն այստեղ անդրադառնում է նաեւ Կոստանդին պայլի քաղաքական կարիերային Լեւոն Ա թագավորի արքունիքում, թագի հավակնորդների նկատմամբ նրա սառնասիրտ հաշվարկներին, որով վերջիվերջո պետության կառավարման բոլոր լծակները կենտրոնանում են նրա ընտանիքի անդամների ձեռքում (էջ 273-277): Հեղինակը չի զլանում ներկայացնել նաեւ այն բոլոր տիտղոսներն ու պատվանունները, որոնցով Կոստանդին պայլ-թագավորահայրը պատվել է սկզբնաղբյուրներում (էջ 277-283): Իհարկե, կարծում եենք դույզն-ինչ բացարձակացված է Կիլիկիայի նման փոքրիկ պետության առաջին դեմքի մասին խոսելիս, սկզբնաղբյուրներում նրա նկատմամբ տածած հարգանքի եւ գովաբանության վկայու-

թյունները համարել երկրում Կոստանդինի «անձի պաշտամունքի» վկայություն (էջ 282-287): Գուցե տերմինը լավ չէ ընտրված, քանի որ Կոստանդինի խնամակալության շրջանը կ. Տեր-Պետրոսյանը համարում է «Հայոց թագավորության համար երկնաշնորհ բարեբախտություն» եւ գահաժառանգության «ինստիտուտի ամենալուրջ քննության» շրջան ոչ միայն «Կիլիկիո, այլև համաշխարհային պատմության մեջ»: Հեթում Ա.-ին անդրադառնալիս հեղինակը հարկ է համարում շեշտել. «...երկրի կառավարման գործում Կոստանդինն ու Հեթումը, որքան էլ խառնվածքով ու գործելակերպով տարրեր, շահեկանորեն լուացնում էին միմյանց՝ առաջինը լինելով պետության ուժի եւ կարգավորիչ դերի մարմնավորումը, իսկ երկրորդը՝ նրա բարոյական արժեքների կրողը» (էջ 287), ուշադրություն է հրավիրում Կիլիկիայի արտաքին քաղաքական կյանքում Մեծ Հայքի իշխաններին հատկացված կարեւոր գերի վրա (էջ 291-292): Հատվածի վերջում հեղինակն անդրադառնում է Մասիի ճակատամարտում Եղիպատոսի մամլյուկներից կրած պարտության հետեւանքներին (էջ 292-296): Այստեղ եւս, ինչպես Թորոս Բ.-ի դեպքում սկզբնաղբյուրները հայտնում են, որ երկրի ղեկավարը կրոնավորական կարգ է մտել: Այս հանգամանքը խոսում է հոգեւոր եւ աշխարհիկ իշխանությունների միացման սկզբունքի մասին, թագավորի հոգեւոր դերի բարձրացման եւ լեգիտիմության ապահովմանը նաև հոգեւոր բնագավառում:

Գահաժառանգության եւ «լեգիտիմության» հարցերին ավելի մասնագիտական պատասխան տալու ակնկալությամբ, հեղինակն անդրադառնում է Կիլիկիայի միջազգային իրավական կարգավիճակին ժֆ դարի ողջ ընթացքում. Խումի սելջուկյան սուլթանության գերակայության ճանաչումից (1218/9 թ.) անցումը Մոնղոլների մեծ խանությունից վասալական կախվածությանը (էջ 297-315): Խոսվում է սելջուկներին տարեկան 300-400 զինվոր տալու եւ հարկ վճարելու պարտականության, համատեղ դրամ հատելու փաստի մասին: Հայսելջուկյան դրամների մասին խոսելիս հեղինակի ուշադրությունից վրիպել է դրամագետ Յ. Տեր-Ներսիսյանի հետազոտությունը<sup>31</sup>: Դրամի հատման խնդիրը բացի վասալական կախվածության փաստարկ լինելուց կարող էր նշանակել նաև համատեղ շուկա, տնտեսական գործունեության դաշտ ստեղծելու երկու պետությունների մտահոգության մասին, խնդիր, որը կարող է նոր հետազոտությունների գույք բացել: Քյուսե-Դաղի ճակատամարտում (1243 թ.) Խումի սուլթանության պարտությունից հետո, Կիլիկիան կախվածության մեջ է ընկնում մոնղոլների տիրակալությունից, ընդգծելով, որ պատմագրության մեջ

<sup>31</sup> Y. T. Nersessian, Attribution and dating of Armenian Bilingual Trams, Los Angeles, 1983.

Հաճախ օգտագործվող «դաշինք» տերմինը ճիշտ չի արտացոլում իրերի վիճակը, քանի որ մոնղոլներն իրենց իշխանությունը ճանաչած երկրները եւս համարում էին պետության անքակտելի մասը: Այդ մասին են վկայում տարեկան հարկի վճարման, թանկարժեք ընծաների մատուցման, մոնղոլների ուազմարշավներին մասնակցության, պաշտոնյաների երթեւեկի ծախսերը հոգալու պարտավորությունները, որոնք ստանձնել է Կիլիկյան Հայաստանը: Այնուամենայնիվ Լ. Տեր-Պետրոսյանն ընդգծում է, որ «...Կիլիկիո Հայոց թագավորության վասալական կախվածությունը Մոնղոլական խանությունից առանձնապես չէր սահմանափակվում նրա անկախությունը, մանավանդ ներքին քաղաքականության բնագավառում» (էջ 311): Ըստ հեղինակի՝ այդ հարաբերությունների լավագույն գնահատականը տվել է Գրիգոր Ակներցին, անվանելով այն «դաշինք սիրոյ եւ հնագանդութեան»<sup>32</sup>: Հեղինակը չի անդրադառնում Հայթոնի (Հեթում Կոռիկոսցի) «Արեւելքի պատմության ծաղկաբաղ» գրքում բերված «հայ մոնղոլական պայմանագրին», քանի որ այն որոշ պատմական ճշմարտություն պարունակելով, այնուհանդերձ «ընդհանուր առմամբ արդյունք է հեղինակի անսահման երեւակայառության եւ հետապնդում է զուտ քարոզական նպատակներ» (էջ 315): Վերագառնալով Լեռոն Բ-ին՝ հեղինակը կարողանում է ցուց տալ, որ թեպետ նրա հայր Հեթում Բ-ը (մահ 1270 թ.) հրաժարվել է իշխանությունից թողնելով գահը որդուն, այնուամենայնիվ վերջինս անմիջապես չի օծվել թագավոր: Այդ իրադարձությունը տեղի է ունեցել 1271 թ. հունվարի 6-ին, Ս. Ծննդյան եւ Աստվածահայտնության օրը: Հեղինակը խնդրին անդրադառնում է նաեւ Մոնղոլական խանության նկատմամբ Կիլիկիայի ունեցած պարտականությունների տեսանկյունից՝ ընդգծելով, որ մոնղոլական տիրապետության շրջանում իշխանության «լեգիտիմությունը» ապահովվում էր մոնղոլների կողմից ճանաչման փաստով: Այդ երեւութը նմանեցնելով Եվրոպական ստանդարտներին, անվանում է «ինվեստիտուրա» (իշխանության տվյալներ), բացատրում է, որ մոնղոլները սոսկ «վավերացնում էին Հայոց օրինակն թագաժառանգի գահակալման իրավունքը... ընդգծելու մոնղոլ խաների գերակա լինելու հանգամանքը» (էջ 323): Հետաքրքիր կլիներ ներկա դեպքում նաեւ նկատի ունենալ, որ նույն կարգին ենթարկվում էր նաեւ հոգեւոր իշխանությունը սկսած Սասանյան տիրապետությունից, եւ հարցը քննել ամբողջական տարողությամբ: Մոնղոլական շրջանում Կիլիկիո Հայոց թագավորության միջազգային իրավական կարգավիճակի էությունն ըմբռնելու տեսանկյունից ուշագրավ անդրադարձ է Հեթում Կոռիկոսու «Արեւելքի պատմու-

<sup>32</sup> Գրիգոր Ակներցի, Պատմութիւն, էջ 31: Հմմտ. նաեւ՝ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 285:

թյան ծաղկաբաղ» գրքում պահպանված այն վկայությունը, ըստ որի Աբաղա խանն առաջարկել է Լեւոնին՝ նրա իշխանությունը տարածել նաեւ Ռումի (Իկոնիայի) սովորականության վրա: Քաղաքագետի տեսանկյունից մոտենալով խնդրին և Տեր-Պետրոսյանն այսպես է մեկնաբանում Լեւոնի մերժումը. «...եթե սեղուկյան սովորականության կառավարումը ծանր բեռ էր Մոնղոլական խանության համար, ապա ավելի ծանր բեռ պիտի լիներ Հայոց թագավորության համար... Ուստի Լեւոնը, ճիշտ գնահատելով իր երկրի հնարավորությունները, հրաժարվեց ընդունել Աբաղայի առաջարկը...» (էջ 324): Մոնղոլական գերակայության ընդունումը քննարկվում է նաեւ համահայկական շահերի տեսանկյունից, ընդգծվում է. «Մոնղոլական տիրապետության շրջանում Հայաստանը եւ Կիլիկիան, թեպետ տարբեր կարգավիճակներով, առաջին անգամ հայտնվել էին մեկ տերության կազմում: Այս հանգամանքը հեշտացնում էր հայության երկու հատվածների հաղորդակցությունը եւ ամրապնդում նրանց ընդհանրության գաղափարը: Լեւոնն իր կողմից անում էր ամեն ինչ՝ ավելի եւս ամրապնդելու այդ գիտակցությունը եւ արդարացնելու ամենայն Հայոց թագավորի իր կոչումը» (էջ 325): Հեղինակն այնուհետեւ սկզբնաղբյուրներից վկայություններ է բերում Մեծ Հայքի հոգեւոր կենտրոնների նկատմամբ Լեւոն Բ-ի տածած հոգածության մասին (էջ 325-327), այդ տեսանկյունից դիտելով Կիլիկիայի թագավորության եւ Ամենայն Հայոց կաթողիկոսության փոխարարերությունները Սյունյաց աթոռի հետ, թափանցում է դրանց քաղաքական օգտակարության ոլորտը (էջ 327-332): Այստեղ հեղինակն անդրադառնում է նաեւ Կեռան թագուհու «պաշտամունքի» խնդրին, շեշտելով. «Կեռան թագուհու «պաշտամունքի» ձեւավորումն, անտարակուս, տեղի էր ունեցել Զաքել թագուհու մեծարման ավանդութիւն հետեւողությամբ, թեեւ վերջինիս պարագան... բոլորովին այլ էր՝ պայմանավորված նրա առանձնահատուկ կարգավիճակով ու քաղաքական կշռով» (էջ 332-333): Լեգիտիմության տեսանկյունից կարեւոր է այն հանգամանքը, որ Կեռանը Լամբրոնի Հեթումյանների դուստրն է: Անցնելով Լեւոն Բ-ի «լեգիտիմության» խնդրին՝ ճշտում է նրա երեխանների քանակը (շուրջ 18) ու ծննդյան թվականները, լրացնելով Ռուդ-Կոլենբերգի ցանկի տվյալները (16), ստուգում նրա մահվանից հետո կենդանի մնացած զավակների անունները, որոնց մեծ մասը հետագայում իրենց գերակատարությունն են բերել «Հայոց գահի ճակատագրի տնօրինման գործում» (էջ 333-336):

Հեթում Բ-ի գահաժառանգման դեպքը մինչ այս քննվածներից ամենադասականն է միջնադարյան հայ իրավունքի տեսանկյունից, քանի որ նա ժա-

ռանգել է գահը ավագագույն որդու<sup>33</sup> հանգամանքով ստանալով «Հայոց արքունի ատյանի»<sup>34</sup> հավանությունը, ինչպես այդ մասին պատմում է Քրանսագիր Հայթոն պատմիչը՝ Հեթում Կոռիկոսցին: Հեթումի իշխանության կարեւորագույն առանձնահատկություններից էր նաև այն, որ նա երբեք չամուսնացավ եւ լթագագրվեց<sup>35</sup>: Այդ իսկ պատճառով պատմաբանների ուշադրության առարկան է դառնում այն հանգամանքը, որ սկզբնաղբյուրները նրան պատվում են միայն «թագապահ»՝, «թագակալ» եւ «աթոռապահ» տիտղոսներով (էջ 339): Գահաժառանգման իրավունքի տեսանկյունից՝ հեղինակն անդրադառնում է նաև Հեթումի բազմակի հրաժարականներին, փորձում պարզել դրանցից յուրաքանչյուրի պատճառը (էջ 341-343): Միայն իր եղբայր Թորոսի օգտին, ինչպես պարզում է, Հեթում Բ-ը հրաժարվել է երիցս: Գահաժառանգության տեսանկյունից՝ այստեղ «էականը... իշխանության փոխանցման եւ վերստանձման... փաստն է» (էջ 345) ծննդյամբ Հեթում Բ-ից անմիջապես հետո ծնված եղբորը, պահելով գահաժառանգության իրավունքի գլխավոր սկզբունքը՝ Արքունի ատյանի<sup>36</sup> հավանությամբ իշխանությունը հանձնել եղբայրներից ավագագունին (էջ 346): Հետաքրքիր է, որ Թորոսի իշխանությունը սկզբնադրյուրներում անվանվում է «պարոնություն»: Այդ իսկ պատճառով, Լ. Տեր-Պետրոսյանը՝ հետեւելով Մ. Օրմանյանին եւ Կ. Մութաֆյանին, ենթադրում է. «...Թորոսն իսկապես Կիլիկիան կառավարել է թագավորից տարբեր իրավական կարգավիճակով...», որը նմանվում է Կոստանդին պայլի ստատուսին (էջ 346-348): Հետագա հետազոտության նյութ կարող է դառնալ Հեթում Բ-ի եւ Թորոսի կարգավիճակների տարբերությունը: 1296 թ. Հեթում Բ-ը եւ Թորոսը Կիլիկիայի կառավարումը հանձնում են իրենց կրտսեր եղբորը՝ Սմբատին եւ մեկնում Կոստանդնուպոլիս: Վերջինս նույն թվականին կաթողիկոսի եւ իշխանների խորհրդով թագավոր է օծվում, մեկնում է Ղազան խանի մոտ եւ «տվշություն» ստանում նրանից (էջ 350-351): Հեղաշրջումը տապալելու հուսով Կ. Փոլիս մեկնած եղբայրները 1297 թ. վերադառնում են եւ ձերբակալվում Սմբատի կողմից: Թորոսը խեղդամահ է արվում, իսկ Հեթումը՝ կուրացվում: Իշխանության անօրինական բռնազավթումը, ավագ եղբայրների նկատմամբ բանեցված վայրագությունը եւ վերջապես 1298 թ. մամլյուկներից կրած պարտու-

<sup>33</sup> Հեթումի անդրանիկ որդի Կոստանդինը մահացել է մանուկ հասակում (էջ 333, 338):

<sup>34</sup> Տերմինը հանախ է օգտագործում Լ. Տեր-Պետրոսյանը՝ օգտվելով խաչակրաց արեւելիի պաշտոնեարյան անվանացանկից: Սկզբնադրյուրներում, հանախ դրա փոխարեն հիշատակվում են Երկրամասի գորավարներն ու իշխանները, այլ կերպ ասած՝ պարոնները:

<sup>35</sup> Սկզբնադրյուրներն այդ հանգամանքը բացատրում են կրոնական կյանին նվիրվելու կամ երկնայն բազավորությանն արժանանալու ցանկությամբ (էջ 339):

<sup>36</sup> Հիշարժան է, որ արքունի ատյանի կազմում Հայքոնը հիշատակում է նաև կաթողիկոսին (էջ 346, նաև ծան. 41):

թյունը նրա գեմ են հանում Կիլիկիայի իշխաններին՝ արքայազն Կոստանդինի գլխավորությամբ եւ տապալում են Սմբատին: Թինելով սկզբնաղբյուրների հակասական վկայությունները և Տեր-Պետրոսյանն ենթադրում է, որ բանտից ազատված Հեթում Բ-ը Կիլիկիայի կառավարումը 1298 թ. հանձնել է Կոստանդինին, որն էլ բոնազավթելով իշխանությունը թագավոր է օծվել, գրամ հատել (էջ 355-356): Հեղինակը բացատրում է նաեւ այն փաստը, որ Հեթում Բ-ը մոնղոլներից տվշություն (ինվեստիտուրա) ստացած Սմբատի հեռացումն ու իր վերադարձն օրինականացնելու համար 1299 թ. երկրորդ անգամ է այցելել Ղազանին ու օրինականացրել իր իշխանությունը (էջ 360): 1301 թ. Հեթում Բ-ը «գահակցի» (կամ խնամակալի) հանգամանքով Կիլիկիայում իշխանությունը կիսում է Թորոսի անշափահաս որդի Լեւոնի հետ, որի պաշտոնական թագադրումը կատարվում է 1306 թ. հունիսի 30-ին (էջ 361-374): Ըստ հեղինակի «...Լեւոնի գահակալումը թե՛ բովանդակության, թե՛ արարողակարգի իմաստով լիովին համապատասխանում էր գահաժառանգության կիլիկյան իրավունքի սկզբունքներին, որոնց սահմանմամբ՝ Հեթումի անզավակության պատճառով Հայոց գահը պետք է փոխանցվեր նրա եղբայրներից ավագագույնին, իսկ վերջինիս մահվան դեպքում՝ ոչ թե՛ հաջորդ եղբորը, այլ հանգուցյալի որդուն» (էջ 367): 1307 թ. թագավորի եւ նրա խնամակալի սպանությունը համարելով ծայրագավառային մոնղոլ պաշտոնյայի ձեռնարկած ինքնագլուխ քայլ (էջ 368-374) քաղաքագետ-պատմաբանը մեղադրում է Հեթում Բ-ին այն բանում, որ նա իր գործունեության ընթացքում շկարողացավ կողմնորոշվել կրոնավորական սքեմի եւ թագի միջեւ:

Հիշատակված քաղաքական հաշվեհարդարից հետո Կիլիկիայի գահն անցնում է Հեթում Բ-ի կրտսեր եղբայրներից Օշինին<sup>37</sup>: Հեղինակը բացահայտում է կիլիկյան գահաժառանգության կարգի եւս մեկ առանձնահատկություն. այդ իրավունքը չէր տարածվում դավաճանի (իմա՞ բոնազավթչի) վրա, անգամ նրա ավագ լինելու պարագայում (էջ 386): Հետաքրքիր է նաեւ Օշինին մոնղոլների կողմից իշխանության տվշության հարցը: Սկզբնաղբյուրները ոչնչ չեն հաղորդում Օշինի այցի մասին մոնղոլների արքունիք, քանի որ մոնղոլները իշխանության յառլիսը (տվշություն, ինվեստիտուրա) հանձնում էին անձամբ գահակալին, այդ իսկ պատճառով և. Տեր-Պետրոսյանը ենթադրում է. «Թեպետ

<sup>37</sup> Սկզբնաղբյուրների համարությամբ և. Տեր-Պետրոսյանը փորձում է ցույց տալ, որ սկզբնաղբյուրներում շփոք գոյություն ունի այս հարցի կապակցությամբ: Այս առումով հատկապես հետաքրքիր է 1308 թ. գրված հիշատակարանի տեղեկությունը. «...ի պարոնութեան Հայոց Ալճի եւ եղբար իւրոյ Ալճնախի», եւ 1310 թ. գրված հիշատակարանը. «Ի բուականիս Հայոց ԶՄԹ, յաշխարհակարութեան ազգին նետողաց Ղարպանտա դանին, եւ Հայոց բազավորութեան] Ալճնախին» (էջ 383-384, ծնք. 14 եւ 15):

բացառված չէ նաեւ, որ Օղելքթուն իշխանության տվյալությունն Օշինին փոխանցած լիներ Ալինախի միջոցով, այն պայմանով, որ «Ետագայում նորընծա թագավորն անձամբ ներկայանար իրեն եւ ստանար գահին տիրելու իրավունքը» (Էջ 387-388):

Լեռն Դ-ի ծննդյան եւ օծման թվականները պարզելուց հետո (Էջ 394-395), հեղինակը ձեռնամուխ է լինում նրա իշխանության նկատմամբ Օշին թագավորի կողմից մի քանի խնամակալների հաստատման փաստի քննարկմանը (Էջ 394), ենթադրելով, որ «... նա ուզում էր խնամակալների միջեւ փոխադարձ վերահսկողության մեխանիզմ ստեղծել՝ բացառելու համար նրանցից մեկի կողմից իշխանության բոնազավթման հնարավորությունը» (Էջ 397)՝ թեպետ սկզբնաղբյուրներից պարզ երեւում է, որ Օշին պայլը հետզհետեւ իր ձեռքն է վերցնում իր խնամարկայալի վրա ողջ իշխանությունը եւ սկսում է անօրինությունների մի անվերջանալի շղթա, որի նպատակն է ոչնչացնել գահի նկատմամբ հավակնություն ունեցող յուրաքանչյուր անձի (Էջ 400-401): Զափահաս դառնալու նախօրեին, Լեռն Դ-ը եւս 1329 թ. հաշվեհարդար է տեսնում իր երկու խնամակալների (Օշին պայլի դուստր Ալիս) հետ, որոնք ըստ երեւութին փորձել էին գահընկեց անել օրինական գահաժառանգին (Էջ 401-404): Լեռն Դ-ի իշխանության տարիներին փոխվում է Կիլիկիայի Հայոց թագավորության իրավական կարգավիճակը. իշխանության քայլայումով թեպետ Կիլիկիան ազատվեց մոնղոլների գերակայությունից, սակայն մեն-մենակ մնաց Եգիպտոսի մամլուկների գեմ պայքարում (Էջ 405): 1337 թ. Լեռնը ստիպողական պայմանագիր կնքեց Եգիպտոսի հետ, որով իր երկրի մի մասը Ալիսի հետ միասին զիշեց Եգիպտոսին՝ պարտավորվելով Խաքել հարաբերություններն Արեւմուտքի հետ: Չունենալով արու ժառանգ՝ Լեռն Դ-ը գահը կտակում է հորաքրոջ որդուն, որը Բյուզանդական կայսրությունում հասել էր բարձր հասարակական դիրքի (Էջ 410-411):

Գի (Կոստանդին) Լուսինյանի թագադրումը տեղի է ունեցել 1342 թ.: Մինչեւ նրա վերադարձը, երկրի խնամակալությունը (պայլությունը) մեկ տարի ստանձնում է կրտսեր եղբայրը՝ Հովհաննես-Ջուանը<sup>38</sup>: Հովհաննելով, որ «...գործ ունենք Կիլիկիո պատմության մեջ իգական գծով գահաժառանգության չորրորդ գեպքի հետ... Իրավական առումով Գիի գահակալումն ամենեւին թագավորական հարստության փոփոխություն չէր նշանակում, ինչպես ներկայացնում են հետազոտողներից շատերը՝ Լուսինյաններին համարելով Կի-

<sup>38</sup> Քննարկելով Զամշյանի եւ Օրմանյանի թույլ տված սխալը՝ Լ. Տեր-Պետրոսյանը ցույց է տալիս, որ նա երբեմ չի թագադրվել (Էջ 414-415):

լիկիո երրորդ արքայատոհմ՝ Խուբինյաններից եւ Հեթումյաններից հետո: Նման դատողությունն արդյունք է քարացած այն պատկերացման, որ թագավորական հարստությունը կարող էր շարունակվել միայն արական գծով» (էջ 415-416): Զափազանց կարեւոր է նաև հեղինակի բերած ապացուցները, ըստ որի Գին կրել է նաև Կոստանդին անունը (էջ 416-417) կամ հրաժարվել է գահակալման առիթով նվերներ մատուցել եղիպտոսի սուլթանին (էջ 418-419): Քննելով հայ իշխանների կողմից Գիի սպանության պատճառները՝ Լ. Տեր-Պետրոսյանը կարծում է, որ գրանք սովորական պատրվակներ են (նույնիսկ լատինակարության մեջ մեղադրանքը). «...պարզապես հայտնվել էին ուժեր՝ հանձինս Կոստանդին նղիրցու եւ իր կողմնակիցների, որոնք պետական հեղաշրջման միջոցով տիրել էին Հայոց թագավորությանը» (էջ 420-424):

Կոստանդին Գ-ին թագավոր է ընտրում Հայոց իշխանների խորհուրդը, Կիլիկիայի Հայոց պետության Գերագույն Ատյանը (էջ 425-426): Լ. Տեր-Պետրոսյանը, հակադրվելով ժան Դարդելի հաղորդած տեղեկությանը, ցուց է տալիս, որ Կոստանդինի հայր Պաղտին մարաշախտը կետն Գ-ի չորս խնամակալներից մեկն է եւ արյունակցական հարազատություն ունի Կոստանդին թագավորահոր (մահ. 1263) հետ (էջ 426-432): Այնուամենայնիվ, ընդգծվում է, որ Կոստանդին Գ-ի «լեգիտիմությունը» խոցելի էր, քանի որ կենդանի էին «Հայոց արքայատոհմի թեկուզ իգական գծով ուղիղ շառավիղները՝ Հովհաննես-Ջիվան Լուսինյանի որդիներ Բոհեմունդը եւ Լեւոնը» (էջ 433-434), որոնցից փորձում էր ազատվել թագավորը: Հետեւողական է նաև հեղինակի այն մոտեցումը, որ Կոստանդինի օրոք Հայոց պետության տարածքային կորուստները չեն բխում թագավորի անձնական արժանիքներից, այլ ժամանակի միջազգային-քաղաքական իրավիճակից, այն «...երկրի ռեսուրսների սպառման եւ քաղաքական մեկուսացման հետեւանք էր» (էջ 436):

Հեղինակը հիմնվելով Բրիտանական թանգարանի *Or 5458-Arm. 116* ձեռագրում գտնվող մի վկայության վրա, կարողացել է պարզել, որ 1362-1364 թթ. Կիլիկիայի գահն անցել է Կոստանդին Գ-ի այրուն՝ Լամբրոնի Հեթումյան տնից սերող Մարիոն թագուհուն, որը, ըստ այդ սկզբնաղբյուրի, իշխել է մեկ տարի ամուսնու մահից հետո, մեկ տարի էլ Կոստանդին Գ-ի *de facto* իշխանության առաջին տարում, որին 10 ամիս հաջորդել է Հովհաննես-Ջիվան իշխանի որդի Լեւոնը (էջ 437): Դ. Աղիշտանը, հիմնվելով Ժ. Գ. Ժամանակագիր Ավետիք Ամդեցու եւ ԺԵ դարի կիպրացի տարեգիր Լեւոնակոս Մախերասի պատմական երկերի վրա, ենթադրում է, «որ 1363-1365 թթ. միջեւ ընկած խառնակ ժամանակահատվածում Հայոց գահին տիրել է մի այլ թագավոր՝ Լեւոն անունով» (էջ 438): Լ. Տեր-Պետրոսյանը պարզում է, որ կիպրացի պատմագրի մոտ առկա է ժամանակագրական շփոթ, եւ նրա մոտ խոսքը Կիլիկիայի

վերջին արքա Լեւոնի մասին է: Ժամանակագրությունն ավելի է խճճվում նրանով, որ 1363-1365 թթ. միշեւ դրամագետ Պ. Պտուկյանը առանձնացնում է շուրջ 41 դրամ, որոնք վերագրում է այսպես կոչված Լեւոն բռնազավթին: Քննելով սկզբնաղբյուրների տեղեկությունները՝ հեղինակը եկել է հետեւյալ համոզման. «Քանի որ Կոստանդին Դ (III) որդիները մահացած էին... Հայոց գահը ժամանակավորապես անցել է Մարիոն թագուհուն, 1363 թվականին Կիլիկիո Արքունի ատյանը որոշում է կայացրել գահակալելու հրավիրել երկրի միակ օրինական թագաժառանգ Լեւոն Լուսինյանին... Սակայն Լեւոնն ինչ-ինչ պատճառներով հրաժարվել է դրանից, եւ Հայոց իշխաներն ստիպված են եղել որոշ ժամանակ համոզել ու սիրաշահել նրան՝ այդ նպատակով նույնիսկ նրա անունով դրամ հատելով» (Էջ 442): Անբացատրելի է մնում այն հանգամանքը սակայն, թե ինչպես կարելի էր *de jure* թագավորելով դրամ հատել: Կոստանդին Դ-ը նույնպես ուղղակի ժառանգ չէր թագավորական գահի, նա էլ Լեւոն Դի չորս խնամակալներից մեկի՝ Հեթում սենեկապետ Նղիրցու որդին էր, Կոստանդին Գ-ի հորեղբօր որդին (Էջ 443) եւ արյունակցական կապի մեջ էր Կիլիկիայում գահակալող ընտանիքի հետ: Փաստ, որը փորձում է ժխտել ժան Դարդելը: Հեղինակն ուշադրություն է հրավիրում վերջին երկու Կոստանդին թագավորների նկատմամբ ժան Դարդելի թշնամական վերաբերմունքի վրա, անդրագաւում է Կիպրոսի թագավոր Պետրոս Ա-ի հետ մշակած համատեղ ծրագրին (Էջ 445-55): Դարդելը Կոստանդին Նղիրցուն է վերագրում իր թագավորությունը մամլուկներին հանձնելու մտահղացումը, որի պատճառով էլ իբր Հայոց իշխանները սպանել են նրան: Ուշ շրջանի ժամանակագիրներից մեկը կարծում է, որ նա շարունակել է թագավորել Լեւոն Ե-ից հետո, սակայն Լ. Տեր-Պետրոսյանը փաստում է, որ 1373 թ. հետո նրա անունն այլեւս չի հիշատակվում հայկական ձեռագրերի հիշատակարանների թվագրման բանաձեւերում:

Կիլիկիայի վերջին գահակալ Լեւոն Ե-ի գահակալմանն մասին խոսելիս՝ հեղինակն իր պարտքն է համարում անդրադառնալ ժան Դարդել պատմիչի երկին եւ նրա կողմից վերջին կիլիկյան թագավորի կենսագրության, Կիլիկիա ժամանման<sup>39</sup> եւ թագադրման մանրամասների բացահայտմանը: Բնդգծելով, որ Կիլիկյան թագավորության կործանումը եւ Սիս մայրաքաղաքի անկումը թույլ արձագանք են գտել դեպքերին ժամանկակից հայկական սկզբնաղբյուրներում,

<sup>39</sup> Հատկապես Կոստանդին Գ-ի կնոշ՝ Մարիոն թագուհու 1373 թ. խնամակալ դառնալու փաստը, Լեւոն Ե-ի նշանակած խնամակալների խորհրդի նշանակմանը: Հեղինակը մասնավորապես շեշտում է, որ Կիլիկիայում բացառիկ երեսով է կին խնամակալի նշանակումը, որը Լ. Տեր-Պետրոսյանը բացատրում է վերջինիս օջալ լինելու հանգամանենով եւ արեւմտաեվրոպական թագավորական լնտանիքների հետ ազգակցական կապերով (Էջ 437-438, 455):

Հեղինակն անդրադառնում է Լեւոն Ե-ի հետագա ճակատագրին, եվրոպական արքունիքներում նրա դեգերումներին, Հայոց պետականության վերականգնման նրա երազային ծրագրերին: Լեւոն Ե-ի մահից հետո (1393 թ.), «Հայոց թագավոր» տիտղոսն անցնում է Կիպրոսի թագավորներին, նրանցից էլ Սավոյայի դուքսերին, Պիեմոնտի եւ Խոտալիայի թագավորներին: Այս թագավորությունից մնացած «գործող հաստատություն» է համարում նաեւ Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսարանը (էջ 465):

Եզրափակման մեջ հեղինակը կետ առ կետ ընդհանրացնում է հետագոտության բոլոր հիմնական դրույթները. 1. գահաժառանգության կարգում ավագության սկզբունքի կիրառումը, 2. զավակների միջեւ ընտրություն կատարելու գահակալին վերապահված իրավասությունը, 3. որդիների միջեւ երկիրը բաժանելու իրավասությունը, 4. թագավորն երկիրը կարող էր կտակել ցանկացած մեկի, 5. որդիների նկատմամբ եղբայրներին նախապատվություն տալու իրավունքը, 6. արական գծով ժառանգի սպառման դեպքում գահն անցնում էր դատերը, 7. թագադրված արքայադատեր ամուսնու կարգավիճակին եւ նրանց զավակների ժառանգական իրավունքին վերաբերող հարցեր, 8. հարձորդիները զրկված էին գահը ժառանգելու իրավունքից, 9. թագավորի կողմից գահակից նշանակելու սովորույթը, 10. թագավորի ընտրության իրավունքը, 11. իշխանության բոնազավթման փորձերը, 12. Արքունի Ատյանի դերը, 13. խնամակալի գործակալությունը, 14. գահաժառանգությունն ապահովել է սովորութային իրավունքով, 15. «Լեգիտիմության» պահպանումը:

Ինչպես գրախոսվող գրքի առաջին հատորում, այնպես էլ ներկա մենագրության հավելվածում հրապարակվում են Կիլիկիայի պատմության մինչ օրս չհրապարակված սկզբնաղբյուրներ: Յուրաքանչյուր բնագրի ուղեկցում է պատմաղբյուրագիտական ուշագրավ հետազոտություն, պատմաբանասիրական եւ աղբյուրագիտական մանրակրկիտ ուսումնասիրությամբ եւ ծանոթագրություններով: Այս հատորի հավելվածները շորսն են. 1. Անանունի «Պատմութիւն սրբոց հարցն մերոց» աշխատությունը (էջ 495-526), 2. Հեթում Նղիրցու պատմությունը (էջ 527-553), 3. Անանուն ժամանկագրական գրառումներ (XIV դ.) (էջ 554-558), 4. Ավետիք Տիգրանակերտցու գավազանագիրքը (էջ 559-573):

Առաջին հավելվածը ժԱ-ԺԲ դդ. Փոքր Ասիայի, Հայաստանի եւ Հյուսիսային Ասորիքի պատմության շափազանց կարեւոր սկզբնաղբյուր է: Երկի եզակի ընդօրինակությունը պահպանվում է Մաշտոցի անվան Մատենադարանի հմ<sup>ր</sup> 7620 մատյանում, ԺԲ դարի գրչական ընդօրինակությամբ: Հրատարակիչն իր գրած առաջաբանում անդրադառնում է այս հուշարձանում տեղ գտած կարեւորագույն պատմական տեղեկություններին, մասնավորապես հայագի-

տությանը քիչ հայտնի Սեւերակի Պողոսակյան իշխանության պատմությանը եւ թվագրում է Հուշարձանը 1248-1275 թթ.։

Հաջորդ մատենագրական երկը հրատարակվում է Բրիտանական գրադարանի *Or.5458-Arm.116* մատյանից եւ հեղինակի կողմից վերագրվում է Հեթում Նղիբուն: Բնագիրն ընդգրկում է 1099-1344 թթ. իրադարձությունների նկարագրությունը, որի ժարն ընդգրկող հատվածը «Հուշագրական նոթագրություն է հիշեցնում» (էջ 528), ուր նկարագրված են միջնադարյան հեղինակի դիվանագիտական այցելությունները: Լ. Տեր-Պետրոսյանն անդրադառնում է Կիլիկիայի թագավորության պատմության մեջ Նղիրի եւ այնտեղ կառավարող իշխանական ընտանիքի անդամների, մասնավորապես՝ Հեթումի խաղացած գերին, վերջինիս բացառիկ դիվանագիտական գործունեությանը: Ելնելով բնագրի ժանրային պատկանելությունից՝ այս երկը, կարծում ենք, պետք է անվանել ժամանակագրություն:

Երրորդ հավելվածը եւս հրատարակված է Բրիտանական գրադարանի նույն ձեռագրից եւ կարեւոր ժամանակագրական տեղեկություններ է պարունակում ժամանակագրության ժամանակագրական բնույթը եւ նրանում պարունակող տեղեկությունների այլ սկզբնալրեյուրներից հայտնի լինելը՝ բնագրի հրատարակիչը խնդիր է դրել երկի հրատարակմամբ ուղղել կետոն Եվրոպի թագավորի գահակալման թվականների հետ կապված մի թյուրիմացություն, որը շրջանառության մեջ է ժամանակակից պատմագրության մեջ:

Գրքի վերջին հավելվածում հրատարակված է ԺԷ-ԺԸ դ. հեղինակ Ավետիք Տիգրանակերտցու (նաեւ Ամիդեցի կամ Եվդոկացի) Գավազանագրքի (կամ ժամանակագրության) Կիլիկիային վերաբերող հատվածը ըստ Մաշտոցի անվան Մատենագրարանի հմար 1492 ինքնագիր մատյանի: Ընդգծելով այս ժամանակագրության քաղագրական բնույթը եւ նրանում պարունակող տեղեկությունների այլ սկզբնալրեյուրներից հայտնի լինելը՝ բնագրի հրատարակիչը խնդիր է դրել երկի հրատարակմամբ ուղղել կետոն Եվրոպի թագավորի գահակալման թվականների հետ կապված մի թյուրիմացություն, որը շրջանառության մեջ է ժամանակակից պատմագրության մեջ:

Աշխատանքի բարձր որակի մասին են խոսում նաեւ հեղինակի կազմած մանրակրկիտ ցանկերը (էջ 575-667), որոնք կարեւոր բանալի են գրքի օգտագործման համար:

Մեր առջեւ է հսկայածավալ մի հետազոտություն, ուր միջնադարակետապատմաբանի, աղբյուրագետի եւ քաղաքագետի տեսանկյունից վերարծարձված են Կիլիկիայի հայկական պետության պատմության բազմաթիվ խնդիրներ առաջարկված թեմայի շրջանակներում, քննարկված են մինչ այս ուշագրության շարժանացած հարցեր: Մեր կողմից աշխատության մարամմասների քննարկումը նպատակ ուներ հետազոտողների ուշագրությունը գրավել առանձին հարցերի լուծումների վրա: Կատարված դիտողությունները վերաբերում են աշխատության դետալներին եւ ցուց են տալիս այն հսկայածավալ աշխատանքի կարեւորությունը, որով կետոն Տեր-Պետրոսյանն իր լուման է դնում

Կիլիկյան Հայաստանի պատմության քննարկված հիմնախնդիրների պարզաբնաման մեջ: Աշխատության յուրաքանչյուր տողում իրար են լրացնում վաստակաշատ աղբյուրագետ-պատմաբանն ու հսկայական փորձ ունեցող քաղաքագետը՝ հեղինակին հատուկ բյուրեղացած հայերենով ու հատու գրչով:

## ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

### ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԵԲՐԱՅԵՐԵՆ ԶԵՐԱԳՐԵՐԻ ՀԻՆ ՀԱՎԱՔԱՆՈՒԻ ՀԱՄԱՌՈՑ ՆԿԱՐԱԳԻՐ

Մաշտոցի անվան Մատենադարանում, ի թիվս օտարալեզու այլ ձեռագրերի, պահպում են նաև եբրայերեն ձեռագրեր՝ հին եւ նոր հավաքածուներով, որոնցից առաջինի մեջ մտնում են էջմիածնից 1939-ին տեղափոխված ձեռագրերը, իսկ երկրորդում՝ 1980-ականներին Ուկրաինայից բերված ժմիջամատական փաթեթավոր մագաղաթյա ավելի քան 100 ձեռագրերը:

Հին հավաքածուն համարվել ու հարստացել է 1920-50-ականներին՝ հիմնականում անհատների եւ մի քանի հաստատովթյունների նվիրատվությունների շնորհիվ: Դրա մեջ ընդգրկված 21 ձեռագրերի համառոտ նկարագրությունն առանց բովանդակային նշումների գրանցվել է ձեռագրատան գույքամատյանում:

Խորհրդային տարիներին եբրայերեն ձեռագրերով հետաքրքրվել են Մոսկվայի եւ Պետերբուրգի եբրայագետները, որոնցից մեկը՝ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի արեւելագիտության ինստիտուտի դոկտոր Իոսիֆ Ամուսինը, 1969-ին ուսումնասիրելով 13 ձեռագիր № № 2, 3, 4, 5, 6, 7, 24, 37, 58, 62, 70, 71, 118), կազմել է գրանց համառոտ ցուցակը, նշելով, թե տվյալ ձեռագիրը Հին կտակարանի որ գրքից է ընդօրինակված:

Գույքամատյանում ավելի ուշ՝ 1970-ականներից ընդգրկված № № 132, 136, 138, 139, 141, 148, 195 ձեռագրերի բովանդակության մասին մեր հետագոտությունից առաջ որեւէ նշում չի եղել, ինչը թույլ է տալիս ասելու, որ այդ ձեռագրերը երբեւէ չեն ուսումնասիրվել:

Մանրամասն ուսումնասիրելով հին հավաքածուի մեջ մտնող բոլոր 21 ձեռագրերը, նկատեցինք, որ գրանցից № 137-ը՝ ստացված 1967 թ. Վարուժան Մալաթյանից, եբրայերեն չէր, այլ՝ սանսկրիտ: Անընթեռնելի էին № № 139 եւ № 132 (եբրայերեն գրությամբ կավե թաս) ձեռագրերը: Բոլորովին անսպասելի էր № 148 ձեռագրի բովանդակությունը, որը ի տարբերություն մյուս ձեռագրերի, ոչ թե ընդօրինակություն էր Ծննդոց, Թվոց, Ելից, Երկրորդ օրինաց, Եսթեր գրքերից, այլ Սուրբ Կրոց մեկնություն էր՝ բաղկացած է 25 մասից, գրված մանրատառ եւ յուրատիպ ձեռագրով:

Հին կտակարանի տեքստեր պարունակող ձեռագրերը եբրայերեն բնա-

գրի հետ մեկ առ մեկ համեմատելով նկատեցինք, որ ի. Ամուսինի եւ մեր նշումներում կան որոշակի տարբերություններ: Օրինակ՝ № 24 ձեռագրի երկրորդ մասը ոչ թե երկրորդ օրինացի գլուխ ժից է, այլ ժիշտ, № 6 ձեռագրի վերաբերյալ նշված չէր, թե ելից գրքի Դ գլուխ որ ենթագլխով է ավարտվում ձեռագրը, № 70 ձեռագրի բովանդակության մասին նշված էր միայն, որ այն անեծք է:

**Այսպիսով,** կարող ենք արձանագրել, որ երրայերեն հին հավաքածուի մեջ ընդգրկված ձեռագրերն ունեն հետեւյալ բովանդակությունը.

**Թիվ 2 – Ծնունդք, Ա. 2-Ժ. 13՝** եւ խցան աղբիւրք անդնդոց եւ սահանք երկնից, եւ արգելաւ անձրեւ յերկնից եւ զիշանէր տակաւ, եւ երթայր ջուրն եւ թուլանայր յերկրէ եւ նուզէր ջուրն յետ հարիւր եւ յհիսուն աւուր ... եւ ասէ Տէր ցԱբրաամ. Զի՞ է զի ծիծաղեցաւ Սառա ընդ միտս իւր եւ ասէ, թէ արդարեւ ծնանիցի՞մ, զի ահա ես պառավեալ եմ: Տեղեկություն - նյութը՝ կաշի, թերթ՝ 1, Աշխարհբեկ Քալանթարի ձեռագրերից, ստացված 1937 թ.:

**Թիվ 3 – Ծնունդք, Ա. 1-Ժ. 20՝** ի սկզբանէ արար Աստուած զերկին եւ զերկիր: Եւ երկիր էր աներեւոյթ եւ անպատրաստ... Սոքա են որդիք Քամայ յազգս իւրեանց, ըստ լեզուս իւրեանց յաշխարհս իւրեանց եւ ի տոհմս իւրեանց: Տեղեկություն - նյութը՝ կաշի, թերթ՝ 1, Աշխարհբեկ Քալանթարի ձեռագրերից, ստացված 1937 թ.:

**Թիվ 4 – Ծնունդք, Ժ. 14-Ի. 35՝** եւ եղեւ իբրեւ եմուտ Աբրամ յԵգիպտոս, եւ տեսեալ Եգիպտացոցն զկինն զի գեղեցիկ էր յոյժ... Տէր օրհնեաց զտէր իմ յոյժ, եւ բարձրացաւ. Եւ ետ նմա արջառ եւ ոշխար եւ արծաթ եւ ոսկի, ծառայս եւ աղախնայս: Տեղեկություն - նյութը՝ կաշի, թերթ՝ 1 Աշխարհբեկ Քալանթարի ձեռագրերից, ստացված 1937 թ.:

**Թիվ 5 – Ելք, Ա. 25–Լ. 15՝** եւ ետես Մովսէս եթէ յանցեաւ ժողովուրդն, քանզի յանցոյց զնոսա Ահարոն յոտնհարութիւն թշնամեաց իւրեանց... եւ զսեղանն խնկոց, եւ զլծակս նորա, եւ զիւղն օծութեան, եւ զխունկսն հանդերձանաց, եւ զվարագոյր դրան խորանին: Տեղեկություն - նյութը՝ կաշի, թերթ՝ 1:

**Թիվ 6 - ա) Ծնունդք, Շ. 13–25՝** Բարձին զնա եւ թաղեցին զնա անդ՝ եւ տարան զնա որդիքն իւր յերկիրն Քանանացոց, եւ թաղեցին յայրին կրկնում, զոր ստացաւ Աբրամամ ի ստացուածս շիրմի յԵփրոնէ Քետացոյ յանդիման Մամբրէի.... եւ վախճանեցաւ Յովսէփ ամաց հարեւր եւ տասանց, եւ թաղեցին զնա, եւ եղին զնա ի տապանի յԵգիպտոս:

**բ) Ելք, Ա. 1–Դ. 8՝** Այս են անուանք որդւոցն իսրայելի մտելոցն յԵգիպտոս հանդերձ Յակոբաւ հարբն իւրեանց. իւրաքանչիւր ըստ համօրէն

տանց իւրեանց մտանէին... Եւ ասէ, Արկ զձեռն քո ի ծոց քո; Եւ արկ զձեռն իւր ի ծոց իւր, եւ եհան զնա ի ծոցոյ իւրմէ, եւ դարձեալ անդրէն ի նոյն հաստատեցաւ ի գոյն մարմնոյ իւրոյ: Տեղեկություն - նյութը՝ մագաղաթ, թերթ՝ 1, Ստ. Լիսիցյանի արխիվից, ստացված 9 ապրիլի, 1958թ.:

**Թիվ 7 – Թիւք, իջ. 15–իջ. 14՝** Եւ որդիք Գաղայ՝ լսու գնդից իւրեանց, Սափոն, եւ գունդ մի Սափոնայ. Անդի, եւ գունդ մի Անգեայ .... Եւ նուէր նոցակէս դորակին գինուոյ լիցի առ զուարակ մի, եւ երրորդ դորակին լիցի առ խոյ մի, եւ չորրորդ դորակին լիցի առ զառն մի: Տեղեկություն - նյութը՝ մագաղաթ, թերթ՝ 1:

**Թիվ 24 – Հմայիլ՝ ա) ելք, ժկ. 1–9՝** Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ, Սրբեա դու ինձ զամենայն անդրանիկ նախծին որ բանայ զամենայն արգանդ ի մէջ որդւոցդ հսրայելի, ի մարդոյ մինչեւ յանասուն, քանզի իմ է .... Եւ եղիցի քեզ նշան ի վերա ձեռին քոյ, եւ յիշատակ առաջի աշաց քոց, զի լինիցին օրէնք Տեառն ի բերան քում, զի հզոր ձեռամբ եհան զքեզ Տէր յեգիպտոսէ:

բ) **Ելից, ժկ. 11–16՝** Եւ եղիցի յորժամ տանիցի զքեզ Տէր Աստուած քո՝ յերկիրն Քանանացտոց, որպէս երդուաւ քեզ եւ հարցն քոց, եւ տացէ զնա քեզ.... Եւ եղիցի նշան ի վերա ձեռին քոյ, եւ անշարժ առաջի աշաց քոց. քանզի հզօր ձեռամբ եհան զմեզ Տէր յեգիպտոսէ:

գ) **Երկրորդ օրէնք, Զ. 4–10՝** Լուր հսրայէլ, տէր Աստուած մեր՝ Տէր մի է. Եւ սիրեսցես զտէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ եւ յամենայն անձնէ քումմէ եւ յամենայն զորութենէ քումմէ... Եւ արկցես զոսա նշան ի ձեռին քում, եւ եղիցի անշարժ առաջի աշաց քոց . Եւ գրեսցես զնոսա ի վերայ սեմոց տանց քոց եւ ի դրունս քո:

դ) **Երկրորդ օրէնք, ԺԱ. 13–22՝** Եւ եթէ լսելով լուիցես ամենայն պատուիրանաց նորա զոր ես պատուիրեմ քեզ այսօր, սիրել զտէր Աստուած քո եւ պաշտել զնա յամենայն սրտէ քումմէ, եւ յամենայն անձնէ քումմէ... Եւ աւուրք որդւոց ձերոց ի վերայ երկրին՝ զոր երդուաւ Տէր հարցն քոց տալ քեզ՝ լսու աւուրք երկնից ի վերայ երկրի: Տեղեկություն - նյութը՝ մագաղաթ, թերթ՝ 4, տեղավորված ստվարաթղթե փոքր տուփի մեջ, գնված Գարեգին Մկրտչի Հակոբյանից, 26 հունիսի, 1948թ.:

**Թիվ 37 - ա) Թիւք, լե. 2–լջ. 10՝** Եւ եթէ ելանելով ելանիցէ սպանօղն լսու սահմանս քաղաքին յոր ապաւինեցաւն, եւ գտցէ զնա մերձաւոր արեանն արտաքոյ սահմանաց քաղաքին ապաստանի իւրոյ... Եւ որպէս հրաման ետ Տէր Մովսիսի, այնպէս արարին դստերքն Սաղպաադու:

բ) **Երկրորդ օրէնք, Ա. 1–Բ. 23՝** Այս են պատգամք՝ զոր խօսեցաւ Մովսէս ընդ ամենայն հսրայելի յայնկոյս Յորդանանու յանապատին յարեւմուս՝ մերձ

ի ծովն կարմիր... եւ խեւացիքն որ բնակեալ էին յԱսիրովթ մինչեւ ցԳազա. եւ Գամիրքն՝ որ ելեալ էին ի Գամրաց՝ սատակեցին զնոսա, եւ բնակեցան փոխանակ նոցա: *Տեղեկություն - նյութը՝ մագաղաթ, թերթ 1:*

**Թիվ 58 - Երկրորդ օրէնք, լթ. 27-լթ. 12՝ Ասացի՝ բամ ցրեցիր զնոսա, դադարեցուցից ի մարդկանէ զլիշատակս նոցա. թէ ոչ վասն բարկութեան թշնամեաց, զի մի երկայնակեացք լինիցին, եւ զի մի բարձրասցին հակառակորդքն եւ ասիցեն, թէ ձեռն մեր բարձր՝ եւ ոչ Տէր արար զայս ամենայն... եւ յամենայն երկիր նորա զնշանս մեծամեծս, զձեռն հզօր եւ զբազուկ բարձր՝ զոր արար Մովսէս առաջի որդւոցն հսրայելի: *Տեղեկություն - նյութը՝ կաշի, թերթ 1:***

**Թիվ 62 - Երկրորդ օրէնք, իկ. 9-իկ. 59՝ եւ խօսեցաւ Մովսէս եւ քահանայքն եւ ղեւտացիք ընդ ամենայն հսրայելի եւ ասեն. կուր լեր եւ լուր հսրայէլ.... եւ եթէ ոչ լուիցէք առնել զամենայն բանս օրինացս այսոցիկ, զգրեալս ի գիրս յայսմիկ, երկնչել ի պատուական եւ սքանչելի անուանէ տեառն Աստուծոյ քոյ, նորանշան արասցէ Տէր զհարուածս քո եւ զհարուածս զավակի քոյ, զհարուածս մեծամեծս եւ զարմանալիս, եւ զցաւս շարաշարս եւ զկարեւորս: *Տեղեկություն - նյութը՝ կաշի, թերթ 1, գնված երեւանաբնակ Գրիգոր Հովսեփի նազարյանից, 25 օգոստոսի, 1958 թ.:***

**Թիվ 70 - Հմայիլ՝ հմացեք երկրի բոլոր ազգեր, որ Եհովայի անունը ձեզ լրա է... Հրեշտակներ պահպանող, փրկող եւ պաշտպանող՝ Պրիդոն, Ամրիդոն, Նատրիդոն, Ազրայել... պահպանեք եւ փրկեք այս Հմայիլը բոլոր շարիքներից, վնասներից, կորուստներից, նիզակներից, զենքերից.... (այնուհետեւ նշվում են երայերեն ալբուբենի 22 տառերի հերթականությամբ անուններ՝ Այա, Բայա, Գայա, Դայա, Հայա, Վայա, Զայա.... Տայա: Հմայիլը ավարտվում է մեզ համար անհասկանալի անունների թվարկումով): *Տեղեկություն - նյութը՝ մագաղաթ, թերթ 1, զարդարություն կարմիր թանաքով, ստացված գրականության թանգարանից, 4 փետրվարի, 1961 թ.:***

**Թիվ 71 - Հմայիլ՝ ա) Ելից, ժկ. 1-16՝ Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ. Սրբեա դու ինձ զամենայն անդրանիկ նախծին որ բանայ զամենայն արգանդ ի մէջ որդւոցդ հսրայելի, ի մարդոյ մինչեւ յանասուն, քանզի իմ է... եւ եղիցի նշան ի վերայ ձեռին քոյ, եւ անշարժ առաջի աշաց քոց. քանզի հզօր ձեռամբ եհան զմեզ Տէր յեգիպոսէ:**

**բ) Երկրորդ օրէնք, զ. 4-10՝ կուր հսրայէլ, տէր Աստուած մեր՝ Տէր մի է. եւ սիրեացես զտէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ եւ յամենայն անձնէ քումմէ եւ յամենայն զորութենէ քումմէ... եւ արկցես զսոսա նշան ի ձեռին քում,**

Եւ եղիցի անշարժ առաջի աշաց քոց. Եւ գրեսես զնոսա ի վերայ սեմոց տանց քոց Եւ ի գրունս քո:

գ) Երկրորդ օրէնք, ԺԱ. 13-22` Եւ եթէ լսելով լուիցես ամենայն պատուիրանաց նորա զոր ես պատուիրեմ քեզ այսօր, սիրել զտէր Աստուած քո Եւ պաշտել զնա յամենայն սրտէ քումմէ... Եւ դրեսչիք զսոսա ի վերայ սեմոց տանց ձերոց Եւ ի գրունս ձեր, զի բազմօրեայք լինիցիք, Եւ աւուրք որդւոց ձերոց ի վերայ երկրին՝ զոր երգուաւ Տէր հարցն քոց տալ քեզ՝ ըստ աւուրց երկնից ի վերայ երկրի: Տեղեկություն՝ նյութը՝ մագաղաթ, թերթ 1, հանված հմայիլների ֆոնդից:

**Թիվ 118 – Ծնունդք, ԻԲ. 4-ԻԷ. 29`** Եւ եկն ի տեղին զոր ասաց նմա Աստուած, Եւ յաւուրն երրորդի համաբարձ Աբրամամ զաշս իւր Եւ ետես զտեղին ի հեռաստանէ... Եւ ծառայեսցեն քեզ ազգք, Եւ երկիր պազցեն քեզ իշխանք. Եւ եղիցես տէր եղբօր քում, Եւ երկիր պազցեն քեզ որդիք հօր քոյ: Տեղեկություն - նյութը՝ մագաղաթ, թերթ 2, գնված 14 փետրվարի, 1967թ. Երեւան քաղաքի բնակիչ Հակոբ Երիցյանից:

**Թիվ 132 Կավե թաս՝ ծիսական գրությամք՝ անընթեռնելի:** Տեղեկություն-նվիրատվություն Զիբրայել Այլազի Խուդավերդյանից, 21 հունիսի, 1971 թ., Աբագան, Իրան:

**Թիվ 136 - Գիրք Եսթերի, Ա. 1-Բ. 9`** Եւ եղեւ յետ բանիցս այսոցիկ յաւուրս Արտաշէսի, որ Եւ այս Արտաշէս կալաւ ի Հնդկաց աշխարհէն մինչեւ յեթովպիհա հարիւր քսան Եւ եօթն գաւառ... Եւ յորժամ լու Եղեւ հրաման թագաւորին, ժողովեցան աղջկունք բազումք ի Սիսան քաղաք, որ էր ընդ ձեռամք Ովգեայ: Տարան գեսթեր առ Ովգա, որ էր ներքինի ի վերայ կանանց: Տեղեկություն - նյութը՝ մագաղաթ, թերթ 2, նվիրատվություն բեյրութաբնակ կեսարացի Պերճ Մելիքի Կարապետյանից, 22 հունիսի, 1972 թ.:

**Թիվ 138 - Երկրորդ օրէնք, Զ. 4-10`** Լուր Խորայէլ, տէր Աստուած մեր՝ Տէր մի է. Եւ սիրեսցես զտէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ Եւ յամենայն անձնէ քումմէ Եւ յամենայն զորութենէ քումմէ... Եւ արկցես զսոսա նշան ի ձեռին քում, Եւ եղիցի անշարժ առաջի աշաց քոց. Եւ գրեսես զնոսա ի վերայ սեմոց տանց քոց Եւ ի գրունս քո: Տեղեկություն - նյութը՝ մագաղաթ, թերթ 1, ստացված իրանահայ ներգաղթողից 4 հոկտեմբերի, 1972 թ.:

**Թիվ - 139 - Անընթեռնելի:** Տեղեկություն - նյութը՝ մագաղաթ, թերթ 1, կոտրված ապակա գլանի հետ, բերված լվովից, Վարդան Գրիգորյանի միջոցով, 6 դեկտեմբերի 1962 թ: Գտնվել է ավերակ շենքի հիմքի միջից:

**Թիվ 141 - ա) Երկրորդ օրէնք, Զ. 4-10`** Լուր Խորայէլ, տէր Աստուած

մեր՝ Տէր մի է. Եւ սիրեսցես զտէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ եւ յամենայն անձնէ քումմէ եւ յամենայն զորութենէ քումմէ... Եւ արկցես զսոսա նշան ի ձեռին քում, եւ եղիցի անշարժ առաջի աշաց քոց. Եւ գրեսցես զնոսա ի վերայ սեմոց տանց քոց եւ ի դրունս քո:

**բ) ԺԱ. 13-22՝** Եւ եթէ լսելով լուիցես ամենայն պատուիրանաց նորա զոր ես պատուիրեմ քեզ այսօր, սիրել զտէր Աստուած քո եւ պաշտել զնա յամենայն սրտէ քումմէ... Եւ գրեսչիք զսոսա ի վերայ սեմոց տանց ձերոց եւ ի դրունս ձեր, զի բազմօրեայք լինիցիք, եւ աւուրք որդւոց ձերոց ի վերայ երկրին՝ զոր երդուաւ Տէր հարցն քոց տալ քեզ՝ ըստ աւուրց երկնից ի վերայ երկրի: Տեղեկություն - նյութը՝ մագաղաթ, թերթ 1, նվիրատվություն թիֆլիսաբնակ Ռաֆայել Մարգարի Միքայելյանից Բ. Զուգասպյանի միջոցով, 9 մարտի, 1978 թ.:

**Թիվ 148 - Սուրբ գրոց մեկնություններ՝** բաղկացած 25 մասից՝ Ծնունդք, Ելք, Ղեւտական, Նոյ, Խսահակ, Ընծա (Տէրումա), Ութերորդ (Նմինի), Մահվանից հետո (Ախարեյ մավես), Սրբություններ (Կողաշիմ) եւ այլն: Տեղեկություն - նյութը՝ թուղթ, թերթ 185, կազմը՝ դրոշմազարդ կաշի, գնված երեւանաբնակ Խուբեն Լիպարիտի Շահբազյանից, 19 ապրիլի, 1975 թ.:

**Թիվ 195 - Գիրք Եսթերի, Ա. 1-Ժ. 3՝** Եւ եղեւ յետ բանիցս այսոցիկ յաւուրս Արտաշէսի, որ եւ այս Արտաշէս կալաւ ի Հնդկաց աշխարհէն մինչեւ յեթովպիա հարիւր քսան եւ եօթն գաւառ... Եւ իբրեւ առնոցը Մուրթքէ զթագաւորութիւնն յԱրտաշէսէ, եւ էր մեծ ի թագաւորութեանն իւրում, եւ փառաւորեալ եւ սիրեցեալ էր ի Հրէից անտի, եւ պատմէր զիրսն եղեալսն ամենայն ազգատոհմին իւրում: Տեղեկություն - փաթեթային, նյութը՝ մագաղաթ, թերթ 1, ստացված 18 մարտի, 1987 թ.:

Հավելենք նաեւ, որ այս ձեռագրերը տեսնելու համար 2005-ին Մատենադարան է այցելել Խորայելի գլխավոր ութիր Յոնա Մեցգերը, Մատենադարանի տնօրեն Սեն Արեւշատյանի ուղեկցությամբ իշել է ձեռագրատուն եւ կարճատեւ հայացք նետելուց հետո ասել, որ դրանք արժեքավոր են գիտական ու հոգեւոր առումներով:

## **ՄԱՇՏՈՅԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԸՆԹԱՅԻԿ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ**

(Մատենադարանի տնօրեն Հ. Թամրազյանի ամփոփիչ գեկուցումը  
մեկ տարվա աշխատանքների եւ առաջիկա ծրագրերի մասին)

Զեկուցումը նվիրված է Մատենադարանի շուրջ մեկ տարվա համալիր աշխատանքների արդյունքների ամփոփմանը, ընթացիկ խնդիրներին եւ զարգացման ծրագրերի առաջնահերթություններին:

Շուրջ մեկ տարի առաջ, Մատենադարանի զարգացման ծրագրերի մասին խոսելիս, հատուկ կանգ էինք առել գիտահետազոտական խնդիրների վրա՝ ընդգծելով բնականոն սերնդափոխության եւ նոր մասնագետների ներգրավման անհրաժեշտությունը, որ հայագիտության ամենացավոտ խնդիրներից է:

Մենք շեշտել էինք, որ անհրաժեշտ է վերականգնել Մատենադարանում ամենամյա գիտական նստաշրջանները, որոնք կարեւոր են հատկապես գիտնականների նոր սերունդների ձեւավորման համար, ինչպես նաև հրավիրել միջազգային գիտաժողովներ, որոնք հայագիտության զարգացման նոր հեռանկարներ են բացում:

Այժմ, ամփոփելով գիտական աշխատանքների արդյունքները նշված ժամանակահատվածում, փորձենք ներկայացնել մեր ձեռքբերումներն այս ասպարեզում:

Փորձենք ամփոփել առաջին հերթին գիտական աշխատանքներն ու արդյունքները. Մատենադարանի գիտական ներուժը անցած ժամանակահատվածում համարյա կրկնապատկվել է: Մատենադարան են մուտք գործել 30-ից ավելի երիտասարդ գիտաշխատողներ՝ գիտության թեկնածուներ, ասպիրանտներ, մագիստրատուրան գերազանց ավարտածներ, նովինիսկ մեկ ուսանող, որ Մաշտոցի անվան կրթաթոշակ է ստացել: Կարող ենք ասել, որ սրանով մասսամբ լուծել ենք մեր հիմնական՝ բնականոն սերնդափոխության խնդիրը: Նրանց մի մասը համալրել է Մատենադարանի գիտական տարրեր իմբերը, իսկ հիմնական մասն ընդգրկվել է «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց» համապարփակ ծրագրի շրջանակներում, որն իր մեջ ներառում է հայերէն ձեռագրերի Մայր ցուցակի նկարագրության, սրբագրման, խմբագրման, անվանացանկերի կազմման, համակարգչային մուտքագրման, հրատարակության նախապատրաստման եւ տպագրության հարցերը: Այս գործընթացը, որ Մատենադարանի

գիտական աշխատանքների հիմքն է, գաղտնիք չէ, որ ընթանում էր ծալրահեղորեն դանդաղ, մեծ ընդհանումներով եւ ընդհատումներով: Մենք իբրեւ հայագիտության զարգացման առաջնահերթություն ՀՀ կառավարությանը ներկայացրեցինք «Մայր ցուցակի» կազմման եւ հրատարակման 10-ամյա մի ծրագիր, որ ներառում է 11 130 ձեռագրի նկարագրության եւ 32 մեծադիր հատորներով հրատարակման ողջ ընթացքը: Ծրագիրը հավանության արժանացավ եւ ֆինանսավորվեց առանձին՝ բազային ֆինանսավորումից դուրս: Ասեմ, որ նախկին տեմպերով շարժվելու գեպքում այս աշխատանքները կավարտվեին լավագույն դեպքում կես դար հետո: Մենք ծրագրի մեջ ընդգրկել ենք 17 նոր գիտաշխատող, որոնք մեր հին եւ փորձառու աշխատակիցների հսկողության տակ աշխատում են բավական արդյունավետ: Առանց երկմտելու կարող ենք ասել, որ նոր մասնագետները, որոնք համարել են Մատենադարանի երեք՝ ձեռագրերի նկարագրության, ձեռագրագիտության եւ գրչության կենտրոնների պատմության գիտական խմբերը, հրաշալի են անցել փորձաշրջանը եւ ահա արդյունքը՝ այս ընթացքում փաստորեն 7-8 ամսում, նկարագրված են 600-ից ավելի ձեռագրեր:

Նկարագրություններն արդեն ստուգված եւ խմբագրված են: Առավել արդյունավետ են ընթանում նաեւ մուտքագրման, խմբագրման, սրբագրման, անվանացանկերի կազմման աշխատանքները, որոնք կատարվում են բարեխիղճ եւ գիտական պատշաճ մակարդակով:

**Այժմ՝ «Մայր ցուցակի» հրատարակչական աշխատանքների մասին:**

Ինչպես գիտեք, հրատարակվել է «Մայր ցուցակի» երրորդ հատորը, չորրորդ հատորն արդեն գտնվում է տպարանում, արագորեն հրատարակության է պատրաստվում հինգերորդ հատորը: Նկարագրական աշխատանքներին գուգընթաց՝ մենք պետք է 10 տարվա ընթացքում ավարտին հասցնենք 32 հատորի հրատարակությունը: Առկա տեմպերով շարժվելով՝ մենք ի զորու ենք այդ անել:

Բավարար հիմքերի վրա ենք փորձել դնել նաեւ օտարալեզու ձեռագրերի նկարագրությունները: Տարիներ ի վեր պարսկերեն ձեռագրերի նկարագրությամբ զբաղվում է մեր գիտաշխատակից Քրիստինե Կոստիկյանը, աշխատանքները կավարտվեն 2009 թ., եւ ցուցակը, բնականաբար, կհրատարակվի: Արաբերեն ձեռագրերի նկարագրության համար մենք պայմանագրով աշխատանքի ենք ընդունել նոր մասնագետի, այս տարվա ընթացքում նախատեսվում է 500 ձեռագրի համառոտ նկարագրություն, որ մենք ընդգրկել ենք մեր հրատարակչական ծրագրերում: Ասեմ նաեւ, որ մասնագետներ ենք ընդունել նաեւ օսմաներեն, եբրայերեն ձեռագրերի նկարագրման եւ ուսումնասիրման համար:

Այս ընթացքում լույս է տեսել Մատենադարանի ձեռագրաց համառոտ ցուցակի երրորդ հատորը (կազմող՝ Ա. Մալխասյան):

Մատենադարանի կարեւոր գործառույթներից է ձեռագրերի վերականգնումը. մեր վերականգնման բաժինը՝ իր մասնագետներով եւ տեխնիկական հագեցվածությամբ, լավագույններից է, եթե ոչ լավագույնը, տարածաշրջանում: Այստեղ են կենտրոնանում նաև հայագիտական տարբեր կենտրոնների եւ արտերկրի պատվերներ, մեր մասնագետները արտասահմանյան գործուղումների են մեկնում, հրավիրում են միջազգային դասընթացներ՝ օտարերկրյա հայտնի մասնագետների մասնակցությամբ: Ընթացիկ ժամանակահատվածում ամբողջովին եւ մասնակիորեն վերականգնվել են շուրջ 50 ձեռագիր, 15 հնատիպ գիրք: Տեմպերի առումով, բնականաբար, սա անբավարար է, քանի որ անցած տարիների ընթացքում վերականգնված է ձեռագրական ֆոնդի փոքր մասը: Բաժնի ձեռքբերումներից ու հաջողություններից է արծաթյա կազմերի վերանորոգումը՝ գերմանացի գործընկերների համագործակցությամբ, որը տեսում է արդեն շուրջ մեկ տասնամյակ: Դրա արդյունքները, կփորձենք ամփոփել առանձին ուսումնասիրություն-ալբոմում: Բաժինն ունի ընդլայնման մեծ պոտենցիալ՝ թե՛ գիտական ներուժի թե՛ լաբորատոր պայմանների առումով, որ մենք ներառել ենք մեր ծրագրերի մեջ: Իրեւ սկիզբ՝ մենք ՀՀ կառավարությանն ենք ներկայացրել ձեռագրերի՝ նոր տեխնոլոգիաներով ուսումնասիրման եւ վերականգնման ուղղությամբ երիտասարդ մասնագետներով համալրված գիտական խմբի եռամյա աշխատանքային մի ծրագիր, որ, հուսով ենք, հավանության կարժանանա Գիտության պետական կոմիտեի կողմից: Այս բնագավառում, իրոք, անելիքներն անսպառ են, եւ լուրջ ներդրումներ ու ներարկումներ են անհրաժեշտ:

Մատենադարանի կարեւորագույն գործառույթներից է ձեռագրական ֆոնդի համալրումը: Այս ընթացքում մենք ունեցել ենք կարեւոր ձեռքբերումներ. Մատենադարան են մուտք գործել 17 ձեռագրեր, որոնցից առավել արժեքավորներն են՝

Մեծոփա վանքի XIV դ. շքեղ Ալետարանը, բազմաթիվ հիշատակարաններով եւ մեծարժեք մանրանկարներով (գրիչ՝ Ստեփանոս, մանրանկարիչ՝ Ներսես Ծաղկող): Այս ձեռագիրը բացառիկ է նաև իր պատմությամբ, որի մասին առիթ ենք ունեցել խոսել:

Շարակնոց՝ XVI դ., գրիչ եւ ծաղկող Մեսրոպ Խիզանցի: Մանրանկարներով հարուստ շքեղ ձեռագիր է:

Ալետարան, XVII դ., գրիչ եւ ծաղկող՝ Բարաղամ: Նույնպես հարուստ է շքեղ մանրանկարներով:

Այս երեք ձեռագրերն իր ընկերների հետ գնել եւ Մատենադարանին է նվիրաբերել մոսկովաբնակ հայ բարերար Հրանտ Պողոսյանը:

Ճառընտիր, XVII դ., նոր ջուղա, պատվիրատուն է Խոչա Մահտեսի Զաքարը, մեկը նշանավոր առեւտրական տոհմից, որը աղամանդէ գաճ է նվիրել Ռուսիո թագավորին: Մեծարժեք այս ձեռագրին երկար ենք սպասել: Այն Մատենադարանին է նվիրաբերել ամերիկահայ բարերար Եղիա Հովհաննիսյանը, որը մինչ այդ եւս երկու ձեռագրի էր նվիրաբերել Մատենադարանին: Այս գործի նախաձեռնողն է հանդիսացել մեր բարերար եւ հին բարեկամ Ավո Հովհաննիսյանը, որի նվիրատվությունները Մատենադարանին զարմանք եւ հիացմունք են շարժում՝ 17 ձեռագիր, 25 պատառիկ, 2100 միավոր արիսիվային նյութեր, 300 հնատիպ գրքեր, 58 միավոր մամուլի նմուշներ: Նրա միջնորդությամբ՝ ի հավելումն այս ամենի, Մատենադարանին է նվիրվել եւս 62 ձեռագիր: Օգտվելով առիթից՝ եւս մի անգամ մեր երախտագիտությունն ենք հայտնում նրան եւ Մատենադարանի բոլոր բարերարներին:

Ավետարան, XIV դ., նվիրատուն է Հայաստանի «Էլ-ցանցեր» կազմակերպությունը, որը երրորդ նվիրատվությունն է անում ընթացիկ տարում: Հարկ է շեշտել, որ անընդհատ համալրվում են նաև Մատենադարանի գրադարանային եւ արխիվային ֆոնդերը, ինչպես նաև մամուլի հավաքածուն:

Գրադարանային ֆոնդ են մուտք գործել 7 հնատիպ գրքեր, 550 հատոր հայերեն եւ օտարալեզու մեծարժեք գիտական գրականություն: Գրականության ձեռքբերման այս գործընթացը, արտասահմանյան ֆոնդերի ֆինանսավորման միջոցով, կարիք ունի հետագա բարեկաման:

Գիտական աշխատանքների յուրատեսակ ստուգատես են Եղել այս ընթացքում Մատենադարանի կազմակերպած երկու գիտաժողովները: Առաջինը Մատենադարանի XXX հոբելյանական գիտաժողովն էր, որը հանրագումարի բերելով վերջին տարիների աշխատանքները՝ նաև նոր հետազոտությունների եւ զարգացումների հնարավորություններ էր նշում: Հուրախություն մեզ, գիտաժողովն անցավ գիտական-ստեղծագործական մինոլորտում, ծավալվեց կենդանի երկխոսություն, ներկայացվեց եւ ցուցադրվեց մեծ հետաքրքրություն եւ արժեք ներկայացնող մատենագրական-մանրանկարչական հարուստ նյութ: Բուն գիտաժողովն ինքը, կարծես, գիտական մի մեծ ծրագիր եւ զարգացումներ էր նախանշում, որում իրենց կարեւոր ներդրումն ունեցան Մատենադարանի երիտասարդ մասնագետները: Գիտաժողովի արդյունքները ամփոփված № են Մատենադարանի «Բանբերի» հատորում:

Երկրորդ միջազգային գիտաժողովը հրավիրվել էր Անթիլիասում՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսի հովանավորությամբ: Կաթողիկոսարանի հետ կազմակերպող կողմ էր հանդիսանում նաև Մաշտոցյան Մատենադարա-

նը: Գիտաժողովը նվիրված էր Կիլիկյան Հայաստանի մշակույթին եւ անցավ բացառիկ հաջողությամբ: Այն հաջողված փորձ էր ամբողջական հայացք ուրվագծելու Կիլիկյան Հայաստանի մշակույթի հանդեպ՝ իբրեւ ոչ միայն հայ միջնադարի, այլեւ արեւելաքրիստոնեական եւ համաքրիստոնեական մշակույթի ամենավառ եւ ինքնատիպ դրսեւորումներից մեկի: Մատենագարանը համաժողովին ներկայացավ բազմաթիվ զեկուցումներով, որոնք, ի թիվս այլոց, կամփոփովեն «Հասկ» հայագիտական հանդեսի առանձին հատորյակում:

Որոշվեց պարբերական դարձնել միջազգային այդ գիտաժողովը, առաջ քաշվեցին համագործակցության եւ համատեղ հրատարակությունների ծրագրեր:

Երրորդ միջազգային գիտաժողովը կգումարվի այս տարվա հոկտեմբեր ամսին: Այն նվիրված է մեծ գիտնական, Մաշտոցի անվան Մատենագարանի հիմնադիր-տնօրեն Լեւոն Խաչիկյանի ծննդյան 90-ամյակին: Սպասվում է գիտական-կազմակերպչական մեծ աշխատանք:

Այս առթիվ մենք հրատարակել ենք մեծանուն գիտնականի երկերի III հատորը: Նպատակ ունենք մեկ գրքի մեջ ամփոփել նաև արդեն լուս տեսած I եւ II հատորները, որոնց տպագրական որակը հեռու է բավարար լինելուց: Նախատեսում ենք նաև Լ. Խաչիկյանի մեծարժեք ուսումնասիրություններից մեկի՝ «Հայերը հին Մոսկվայում եւ Մոսկվա տանող ճանապարհների վրա» երկի ուսուերեն հրատարակությունը: Բնականաբար, գիտաժողովի բոլոր նյութերն այնուհետեւ կմեկտեղվեն առանձին ժողովածուում:

Այժմ հրատարակված այլ գրքերի եւ ծրագրերի մասին: Վերջերս լուս տեսավ Մատենագարանի պարսկերեն վավերագրերի IV հատորը (աշխատասիրությամբ՝ Ք. Կոստիկյանի): «Նախորի» հրատարակության հետ համատեղ հրատարակված «Մատենագարանի մանրանկարչական գանձերը» գիրք-ալբոմը առաջին մրցանակ շահեց Մոսկվայի միջազգային ցոռցահանդես-մրցույթում: Այս տարի կհրատարակվեն ալբոմի ուսուերեն եւ անգլերեն տարբերակները: Ընդհանրապես, նախատեսում ենք հայ մանրանկարչական գանձերին նվիրված հրատարակությունների շարք՝ նվիրված առանձին մանրանկարիչների, ձեռագրերի թեմատիկ եւ ծավալային տարբեր ընդգրկումներով: Աշխատանքներ են տարվում Մատենագարանի ձեռագրերի արծաթյա կազմերի հայերեն-գերմաներեն ուսումնասիրություն-ալբոմը հրատարակության նախապատրաստելու համար:

Նախատեսում ենք նաև գիտական մենագրությունների հրատարակման շարք:

Այս հրատարակությունների հիմնական մասը կատարվում է Գալուստ Գյուլբենկյան հաստատության հովանավորությամբ, որի համար մեր երախտա-

գիտությունն ենք հայտնում հաստատության հայկական բաժանմունքի տնօրեն, մեր հին բարեկամ, գոկտոր Զավեն Եկավյանին:

Կիլիկիո Հայոց կաթողիկոսարանի, Մաշտոցյան Մատենադարանի, ԵՊՀ հրատարակության եւ հայագիտական այլ կազմակերպությունների համագործակցության արդյունքում է լուս ընծայվում նշված բարեգործական հաստատության հիմնագրած «Մատենագիրք Հայոց» համընդգրկուն մատենաշարը, որի վերջին հատորները կազմվել եւ կազմվում են հիմնականում Մատենադարանի ուժերով: Այս ընթացքում լուս է տեսել մատենաշարի IX գ. ընդգրկող հատորը (կազմող՝ Հակոբ Քյոսեյան): Այս ամենը վկայությունն է Մատենադարանի բավական լարված եւ հետաքրքիր գիտական տարու, որը սրանով չի սահմանափակվում: Նկատի ունեմ մատենադարանցիների մասնակցությունը հայաստանյան եւ արտերկրյա այլ միջազգային գիտաժողովներին, ֆրանսիայում Հայաստանի տարվան նվիրված գիտական-մշակութային միջոցառումներին, Շվեյցարիայի Ժնևու քաղաքի Բողմեր հիմնադրամի թանգարանում կազմակերպված Մատենադարանի մանրանկարչական գանձերի ցուցադրությանը, նրանց գիտական հոդվածների լուսանձայմանը բազմաթիվ կատալոգներում, հեղինակած եւ հեղինակակցությամբ լուս տեսած գրքերն ու մենագրությունները արտերկրի գիտական հայտնի հրատարակություններում: Այս արդյունքները մենք տարեվերջին ամփոփելու ժամանակ դեռ կունենանք: Արդեն լուսընծայման ընթացքի մեջ են «Գանձարանի» երկու հատորները, որոնց կազմողն է Վարդան Դերիկյանը, Գրիգոր Նարեկացու մատենագրության հատորը, կազմման ընթացքի մեջ է Նարեկյան դպրոցին նվիրված հատորը:

Մատենադարանի համար կարեւոր է նաեւ ցուցադրման հնարավորությունների, ներքին տարածքների առավելագույնս օգտագործման խնդիրը: Ջրոսաշրջիկների հոսքն արդեն այս տարի զգալիորեն աճել է: Ցուցարանի աշխատակիցներն աշխատում են բարեխիղճ եւ հաճախ գերլարված: Այդ նպատակով մենք փորձում ենք լավագույն օգտագործել երկրորդ ցուցարանը եւ երկու ցուցարաններն իրար կապող նախասրանը, որպեսզի ամբողջ տարածքն ընկալվի իրեւ ցուցադրական մի ամբողջություն: Կարծում եմ, պետք է գովազդային նյութերով եւ պատկերաշարերով հարստացնել նաեւ Մատենադարանի ներքին տարածքները: Այդ գործին ի սպաս ենք դնելու հայ բարերար Փաբրիել Զեմպերճյանի նվիրած հատուկ տպագրական սարքավորումը:

Մատենադարանի հիմնականում երկրորդ ցուցարանը, նախասրահում եւ գլխավոր սրահում նշված ժամանակահատվածում մենք կազմակերպել ենք բացառիկ ցուցադրությունների մի ամբողջ շարք, որ զգալիորեն փոխել է ցուցադրության դիմամիկան եւ հագեցվածությունը, մեծացրել նյութի մատուցման հնարավորությունները, ներքին տարածքները:

Այդ ցուցագրությունների շարքում ընդգծվում են հետեւալները՝  
Թարգմանչաց տոնին նվիրված ցուցադրությունը (I սրահ),  
«Հայաստանը միջնադարյան քարտեզագրության մեջ» (նախասրահ),  
Զորս ձիավորների Ավետարանի ցուցադրությունը (II սրահ),  
Վերանորոգված արծաթյա կազմերով ձեռագրերի,  
Եղեգիսի եւ Մելիդենեի Ավետարանների ցուցադրությունները (II սրահ),  
Առաքել Գեղամեցուն (XVI) դ. մանրանկարների, ինչպես նաև տարբեր  
բարերարների կողմից նվիրաբերված ձեռագրերին նվիրված առանձին ցուցա-  
դրությունները:

Այս ընթացքում օգտագործվել են գովազդային նյութեր, պաստառներ,  
ազդագրեր եւ պլակատներ:

Այժմ երկրորդ ցուցարահում կազմակերպվել է Վասպուրականի ման-  
րանկարչությանը նվիրված մի բացառիկ ցուցադրություն:

Մինչեւ տարեմուտ նախատեսվում են Ղրիմի, Կիլիկիայի մանրանկարչու-  
թյանը, ինչպես նաև Վազգեն Վեհափառի նվիրաբերած ձեռագրերին նվիրված  
բացառիկ ցուցադրությունները: Այս ընթացքում փորձում ենք հնարավորության  
սահմաններում հարստացնել ներքին հարդարանքը, ապահովել անհրաժեշտ  
օդափոխություն եւ լուսավորություն, ձեռք բերել նոր, առավել ժամանակակից  
ցուցապահարաններ:

Մաշտոցի անվան Մատենադարանի գարգացման ծրագրերի կարեւոր  
բաղկացուցիչներից է ձեռագրերի թվայնացումը: Վերջին ամիսների ընթաց-  
քում Մատենադարանը ստացել է տեղական եւ արտերկրյա կազմակերպու-  
թյուններից այդ ոլորտին առնչվող համագործակցության առաջարկներ:

Տեղական կազմակերպությունների թվում են՝

ա. «Ավիտինֆոթել» ՓԲԸ-ն,

բ. «Զեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամը,

Արտերկրի կազմակերպություններն են՝

ա. «Վեստիգիա» ձեռագրերի հետազոտման կենտրոնը (Գրաց, Ավստրիա),

բ. «Հին ձեռագրերի Էլեկտրոնային գրադարան» կազմակերպությունը (ԱՄՆ):

Այս առաջարկների քննարկման եւ բանակցությունների ընթացքում  
մշակվել են սկզբունքներ, ձեռք են բերվել պայմանագրվածություններ,  
կնքվել են համաձայնագրեր:

Բոլոր այս սկզբունքների հիմքում եղել է մի կարեւոր նախապայման՝ այն  
է բացառել Մատենադարանի ձեռագրական ֆոնդի թվայնացված պատկերնե-

րի փոխանցում որեւէ այլ կազմակերպության՝ դրանց տնօրինման բացառիկ իրավունքը վերապահելով Մատենադարանին:

Նշված տեղական եւ արտերկրյա այդ կազմակերպությունները միջազգային վարկանիշ եւ հեղինակություն են վայելում եւ մեծ փորձառություն ունեն նորագույն տեխնոլոգիաների ներդրման եւ կիրառության ոլորտում:

«Ավիոինֆոտել»-ը այս ասպարեզում Մատենադարանի հիմնական գործընկերն է,

Մաշտոցի անվան հին ձեռագրերի ուսումնասիրման ինստիտուտ Մատենադարանը եւ «Ավիոինֆոտել» կազմակերպությունը սույն թվականի մարտին համաձայնագիր են ստորագրել համագործակցության մասին՝ համատեղ ծրագրեր մշակելու եւ իրականացնելու ուղղությամբ։ Համաձայնագիրը նախապես փորձաքննության է ենթարկվել եւ հավանության արժանացել ՀՀ կառավարության համապատասխան օլակներում։

«Ավիոինֆոտել» կազմակերպությունը նոր տեխնոլոգիաների՝ հատկապես տվյալների շահմարանային ծրագրերի մշակման եւ ներդրման առաջատարներից է թե՛ Հայաստանի Հանրապետությունում եւ թե՛ արտերկրում։ Կազմակերպության մշակած եւ ներդրած մի շարք նմանօրինակ ծրագրեր բարձր արդյունավետություն են դրսեւորում շնորհիվ ծրագրային նոր փաթեթների, որոնք հնարավորություն են տալիս համացանցում առավելագույն որակով ներկայացնել մեծ ծավալ ունեցող տեղեկատվական հոսքերը, մի բան, որ միշտ էլ խնդիրներ է հարուցել օգտվողների շրջանում։

Հստ կնքված համաձայնագրի՝ «Ավիոինֆոտել» բարեգործական հիմունքներով Մատենադարանին է տրամադրում իր մշակած ծրագրային փաթեթները, պարտավորվում է Մատենադարանի ներկայացրած չափորոշիչների հիման վրա մշակել ազգային արժեքների թվայնացրած պատկերները եւ ներդնելու դրանց առնչվող գիտական տեղեկատվությունը համակարգելու եւ դասակարգելու շտեմարանային ծրագիր, որը առավելագույնս կդյուրացնի Մատենադարանի գիտահետազոտական աշխատանքները բոլոր ուղղություններով։ Բացի այդ, «Ավիոինֆոտել» Մատենադարանին անհատուց տրամադրելու է նոր սարքավորումներ՝ թվայնացման աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու համար, նորացնելու եւ ընդլայնելու է Մատենադարանում առկա համակարգչային ներքին ցանցը, ինչպես նաև ապահովելու է Մատենադարանին ինտերնետային որակյալ կապով։

Արդեն իսկ «Ավիոինֆոտել» մշակել եւ Մատենադարանի ինտերնետային կայքում տեղադրել է «Վիրտուալ Մատենադարան» եւ «Պատկերասրահ» էջերը, որոնք հնարավորություն են տալիս համացանցի միջոցով այցելել Մատենադարան, շրջել նրա սրահներով, դիտել մի շարք ցուցանմուշներ։

Վիրտուալ այցելության, ինչպես նաև ցուցանմուշների ներկայացման որակը համապատասխանում է ամենաբարձր ստանդարտներին: Կայքում տեղադրված են նաև Եվրոպայի եւ Փոքր Ասիայի բազմաշերտ թվային պատմական քարտեզները, ինչպես նաև հայ գրչության կենտրոնների բազմաշերտ թվային քարտեզները: Սրա հետ մեկտեղ «Ավիոինֆոտելի» մշակած ծրագիրը հնարավորություն չի տալիս պատճենել համացանցում տեղադրված պատկերները, ինչը կարեւոր է այդ պատկերների նկատմամբ հեղինակային իրավունքի սակետից: «Պատկերասրահ» էջը օգտվողներին պարբերաբար ներկայացնելու է Մատենադարանի գանձերը, նոր ձեռքբերումները, ժամանակավոր ցուցադրությունների ցուցանմուշները: Մոտ ապագայում Մատենադարանի կայքում կբացվի նաև «Մայր ցուցակ» էջը, որտեղ տեղադրվելու են Մատենադարանում պահպան ձեռագրերի ընդարձակ նկարագրությունները: «Ավիոինֆոտելը» ոչ միայն տրամադրում է իր մշակած շտեմարանային ծրագրերը, այլեւ Մատենադարանի գիտաշխատողներին ուսուցման հատուկ դասընթացներով հմտացնում է դրանցից օգտվելու եւ ինքնուրուցն աշխատելու մեջ:

Այսպիսով Մատենադարանի եւ «Ավիոինֆոտելի» համագործակցությունը նպատակ ունի բարձր տեխնոլոգիաների միջոցներով ազգային արժեքները աշխարհին ներկայացնել, կարելիություններ ստեղծել գիտահետազոտական աշխատանքների դյուրացման եւ արդյունավետության բարձրացման համար: Մյուս կարեւոր արդյունքը ազգային արժեքների պահպանության եւ անվտանգության ապահովման արդիական եղանակների յուրացումն ու կիրառությունն է Մատենադարանի ձեռագրերի թվային պատկերների շտեմարան ստեղծելու միջոցով: Սա միանգամայն նոր մի բնագավառ է Մատենադարանի համար եւ մի առանձին գիտական-ստեղծագործական խմբի կազմավորում է ենթադրում: Նախատեսվում է նաև «Վիրտուալ Մատենադարան» ծրագիրը մտցնելու համահայաստանյան կրթական համացանցի մեջ: Շեշտենք, որ սարքավորումները «Ավիոինֆոտելից» Մատենադարանին են փոխանցվում վերջինիս սեփականության իրավունքով:

«Զեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի հետ Մատենադարանի համագործակցությունը ենթագրում է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին առնչվող հարցերում Մատենադարանին համակողմանի աշակցություն՝ խորհրդատվության եւ տեղեկատվության տրամադրման, ծրագրերի նախապատրաստման եւ փորձաքննության իրականացման միջոցով:

Արտերկրյա կազմակերպությունների հետ Մատենադարանի համագործակցության ծրագրերը իրագործվում են նրանց կողմից նվիրատվությունների եւ դրամաշնորհների տրամադրման միջոցով, որը հնարավորություն կտանոր աշխատատեղեր բացել Մատենադարանում:

Կեւոն Գուշումճյանի բացառիկ նվիրատվության մասին հայտնի է բոլորից: Հուսով ենք, որ շուտով կստանանք թվայնացնող սարքերի նոր համալուսմ մեր բարեկամ Գաբրիել Զեմպերճյանի կողմից:

«Վեստիգիա» կենտրոնի հետ համագործակցության ծրագրով Մատենադարանին անվարձահատուց տրամադրել է միջազգային փորձաքննություն անցած թվային ֆորմատով լուսանկարող սարք՝ մոտ 400 ձեռագիր թվային ֆորմատով լուսանկարելու համար: Կենտրոնի ֆինանսավորմամբ Մատենադարանում բացվել է 3 աշխատատեղ:

Այս աշխատանքների մեջ ընդգրկված է նաև Մատենադարանի ֆոտոլաբորատորիան: Արդեն թվայնացվել են Մատենադարանի մոտ 300 ձեռագրեր: Այս մի նոր, աշխատատար ճյուղ է Մատենադարանում եւ կարիք ունի նոր ձեռքբերումների եւ ներդրումների: Նախատեսվում է ձեռագրերի նկարագրության եւ հրատարակության հետ համընթաց՝ 10 տարում ավարտել նաև ձեռագրերի թվայնացման եւ համացանցում տեղադրման աշխատանքները:

«Հին ձեռագրերի էլեկտրոնային գրադարանի» հետ ձեռք բերված նախնական պայմանավորվածությունների շրջանակներում են Մատենադարանի կրկնագիր ձեռագրերի վերծանման եւ ուսումնասիրման խնդիրները:

Այժմ Մատենադարանի տնտեսության մասին: Այս ընթացքում մշակվել եւ ՀՀ կառավարության քննարկմանն ենք ներկայացրել Մատենադարանի ենթակառուցվածքների պահպանման, վերականգնման եւ արդիականացման ծրագիր, որը, հուսով ենք, համալիր լուծում կստանա:

**Մի խնդի մասին եւս:**

Վերջապես ՀՀ կառավարությունը հաստատեց Մատենադարանի կանոնադրության լրամշակված տարբերակը, որ հստակ կանոնակարգում է մեր ներքին խնդիրները, տարբերակում է կառավարման խորհրդի եւ գիտական խորհրդի գործառությները, բյուջետային հատկացումների եւ արտաբյուջետային միջոցների նպատակային օգտագործման ուղիները, մասնավորապես, այդ միջոցներն այսուհետ շինմոնտաժային աշխատանքներից զատ, ինչպես նշված էր նախորդ տարբերակում, նախատեսվում է օգտագործել խորհրդի որոշմամբ ստեղծվող սոցիալական, խրախուսման, զարգացման, ձեռագրական եւ այլ նյութական արժեքների ձեռքբերման ֆոնդերի համար:

Բայց ամենակարեւորն այն է, որ Մատենադարանը նոր կանոնադրությամբ ստանում է գիտական աստիճաններ շնորհող խորհուրդ ձեւավորելու, ինչպես նաև ուսումնական կենտրոն ստեղծելու հնարավորություն, որ նոր հեռանկարներ է բացում Մատենադարանի համար: Յանկանում եմ շեշտել, որ բոլոր մեր նախաձեռնություններում մեզ մեծապես աջակցել է ՀՀ նախարա-

րությունը՝ նախարար Լեւոն Մկրտչյանի ղեկավարությամբ, եւ մենք մեր հատուկ երախտագիտությունն ենք հայտնում այդ կապակցությամբ:

Ասեմ, որ մեր մտահոգությունների կենտրոնում է մատենադարանցիների կենսապայմանների, հատկապես աշխատավարձերի բարձրացման հարցը: Մենք դրան ենք ուղղում մեր արտաքյուզետային միջոցների գերակշիռ մասը, բայց դա անբավարար է: Այս հարցը պետք է փորձենք լուծել ներկայացվելիք նոր բյուջեի նախագծի հաստատման միջոցով: Հուսով ենք, որ այս կարեւոր հարցում ՀՀ կառավարությունը կընդառաջի մեզ:

Այժմ ամենակարեւորի մասին.

Մատենադարանի զարգացման բոլոր ծրագրերի հիմքում Մատենադարանի գիտական նոր մասնաշենքի կառուցման խնդիրն է, որը գտնվում է ՀՀ բարձրագույն իշխանությունների, առավելապես ՀՀ նախագահի ուշադրության կենտրոնում:

Ընթացիկ ամիսների ընթացքում կառուցվելիք շենքի գլխավոր ճարտարապետին եւ աշխատանքային խմբին ներկայացվել են նախագծային հանձնարարականներ, համաձայնեցված Մատենադարանի բոլոր բաժինների ղեկավարների հետ: Նախագծի էսքիզները, ինչպես հիշում եք, ներկայացվել եւ քննարկվել են Մատենադարանի աշխատակազմի հետ, ՀՀ նախագահի մասնակցությամբ եւ արժանացել հավանության: Մեր բոլոր հեռանկարային ծրագրերը բխում են նրանից, քանի որ կապված են լաբորատոր նոր համակարգերի տեղադրման ու տեղակայման, նորագույն տեխնոլոգիաների ներդրման, ձեռագրապահոցների, տարեցտարի մեծացող արխիվային ֆոնդերի պահպանման պայմանների էական բարելավման, դրանցում օդափոխության (միկրոկիմայի) պահպանության ժամանակակից համակարգերի ներդրման հետ: Ընդլայնման իիստ կարիք ունեն նաեւ գրադարանային ֆոնդերի գրապահոցները: Նոր մասնաշենքի կառուցումը խթան կհանդիսանա նաեւ Մատենադարանի գիտական գործունեության ծավալման համար. նրանում նախատեսվում է ստեղծել աշխատասենյակներ, գիտաժողովների եւ գիտամեթոդական դասընթացների համար նախատեսված դահլիճներ եւ սրահներ, ինչպես նաեւ լսարանների միասնական համակարգ: Այս ամենը հնարավորություն կտա առնվազն եռապատկել Մատենադարանի գիտական անձնակազմը, էապես բարելավել գիտական գործունեության արդյունավետությունը, ինչպես նաեւ Մատենադարանի հիմնական կառուցյի ցուցադրական հնարավորությունները՝ համապատասխանեցնելով դրանք ժամանակակից միջազգային բարձր շափանիշներին: Միայն այս դեպքում հնարավորություն կստեղծվի իրագործել Մատենադարանի՝ որպես հայագիտական խոշորագույն կենտրոնի զարգաց-

ման ծրագրերը՝ որակական նոր մակարդակի բարձրացնելով հայագիտությունն ընդհանրապես:

Նոր գիտական մասնաշենքում նախատեսվում են արդիական պահպանական համակարգերով ապահովված ձեռագրատան պահպաներ՝ շուրջ մեկ միլիոն միավոր գրականության համար, երեք ընթերցասրահներ, երկու մեծ եւ փոքր դահլիճներ՝ գիտաժողովների եւ սեմինարների համար, աշխատասենյակներ՝ 150 գիտաշխատողների համար, վերականգնման ընդարձակ լաբորատորիա՝ շուրջ 30 վերականգնող մասնագետների համար, ֆոտոլաբորատորիա, թվայնացման եւ համակարգչային ծրագրավորման բաժինների, հրատարակական, տպագրական ծառայությունների, ուսումնամեթոդական ծրագրերի իրագործման եւ ստեղծագործող այլ խմբերի համար նախատեսվող տարածքներ։ Նախատեսվում են նաև արվեստանոցներ, լսարաններ, ցուցասրահներ, ուր նորագույն տեխնոլոգիաներով, տեսաշարերով եւ ցուցապատճեններով կներկայացվեն Մատենադարանի գանձերը։

Իսկ հին շենքը, որ երեւան քաղաքի համար պատմաճարտարապետական մի եղակի կոթող է, այսօր իր ամբողջական կառուցով, մուտքով, հինգ հարկերով եւ բազմաթիվ ցուցասրահներով կծառայի իբրեւ թանգարանային համալիր՝ մեծապես նպաստելով հայ մշակութիվ քարոզչության գործին եւ զբուշշության զարգացմանը։

Ճարտարապետների խումբն ինտենսիվ աշխատում է նախագծի վրա, աշխատանքները մտել են նոր հուն եւ, հուսով ենք, շուտով կմեկնարկեն շինարարական աշխատանքները՝ զարգացման նոր, աննախադեպ հեռանկարներ բացելով Մատենադարանի առջեւ։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

|   |            |
|---|------------|
| <b>Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ, Գրիգոր Նյուսացու «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն»</b>  | <b>5</b>   |
| Երկի հայերեն թարգմանությունը.....   |            |
| <b>Գ. ՄՈՒՐԱԴՅԱՆ, Դավիթ Անհաղթի «Վերլուծութիւն ի Ներածութիւնն Պորփիրի» երկը. տեքստաբանական հարցեր.....</b>                                   | <b>19</b>  |
| Պորփիրի «Վերլուծութիւն ի Ներածութիւնն Պորփիրի» երկը. տեքստաբանական հարցեր.....  |            |
| <b>Օ. ՎԱՐԴԱԶՅԱՐՅԱՆ, «Վարք Մաշտոցի» երկու սրբագրումները եւ Ղազար Փարպեցու վկայությունը .....</b>   | <b>41</b>  |
| Փարպեցու վկայությունը .....   |            |
| <b>Ա. ԹՈՓՅՅԱՆ, Արյոց Մովսես Խորենացին հին դարերի միա ՝կ քննադատված պատմիչն է .....</b>  | <b>59</b>  |
| Քննադատված պատմիչն է .....  |            |
| <b>Կ. ՄԱԹԵՒՀՈՍՅԱՆ, Գրիգոր Ապիրատ Մագիստրոսը եւ նրա տոհմը</b>  | <b>67</b>  |
| 11-րդ դարում .....  |            |
| <b>Զ. ԷՅԱԹՅԱՆ, Հայկական ձեռագրերի աստղագիտական բնագրերը .....</b>   | <b>95</b>  |
| Հայկական ձեռագրերի աստղագիտական բնագրերը .....  |            |
| <b>Ա. ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ, Աստվածաշնչային մի պատգամի դրսեւրումը</b>   | <b>109</b> |
| Գրիգոր Տաթևացու եւ Մկտրիչ Նաղաշի մոտ .....  |            |
| <b>Ք. ԿՈՍՏԻԿՅԱՆ, Հայոց Եկեղեցու շահերի եւ հայապահպանության համար Ղազար Զահկեցի կաթողիկոսի ձեռք բերած շահական հրովարտակ-ների մասին .....</b> | <b>115</b> |
| Ղազար Զահկեցի կաթողիկոսի ձեռք բերած շահական հրովարտակ-ների մասին .....  |            |
| <b>Մ. ԱՌԱՋԵԼՅԱՆ, Պատկերազարդ ավետարանների ուսումնասիրությունը:</b>  | <b>125</b> |
| Նոր Զուլայի հայ մանրանկարչական դպրոցի շրջանակներում (համարոտ ակնարկ) .....  |            |
| <b>Ա. ԹԱՄՐԱԶՅԱՆ, Երաժշտության կիրառումը հոգեւոր դպրոցներում.</b>  | <b>139</b> |
| Եօթնագրեանք .....   |            |
| <b>Հ. ԱՍՍԱՐՅԱՆ, Բոտական ազգային-ազատագրական շարժումների արտացոլումը «Արշալոյս Արարատեան» լրագրում (19–րդ դարի 40–70-ական թթ.) .....</b>     | <b>173</b> |

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

|   |            |
|---|------------|
| <b>Դ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Օ. ՎԱՐԴԱԶՅԱՐՅԱՆ, Նիկողայոս Արքոնցի «Կիբելա աստվածուիին» անհայտ աշխատությունը.....</b> | <b>181</b> |
| Աստվածուիին պատառիկի նոր վերծանությունը .....   |            |
| <b>Ա. ԲԱՆՈՒԹՅԱՆ, Եղիշեի Վարդանանց պատերազմի հնագույն պատառիկի նոր վերծանությունը .....</b>                | <b>217</b> |
| Աստվածուիին պատառիկի նոր վերծանությունը .....   |            |
| <b>Ա. ՄԱԼԻԱՍՅԱՆ, Մատենադարանի ձեռագրերի կազմերի արձանագրությունները .....</b>                             | <b>259</b> |
| Մատենադարանի ձեռագրությունները .....  |            |
| <b>Ա. ՄԱՂԱԼՅԱՆ – Առաքել Կոստանդնացի «Պատմութիւն Գտշայ վանուց» աշխատությունը .....</b>                     | <b>283</b> |
| ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ, ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ   |            |
| <b>Ա. ԲՈԶՈՅՅԱՆ, Լեւոն Տեր–Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, Եր. 2005 եւ Եր. 2007 .....</b>                | <b>307</b> |
| Խաչակիրները եւ հայերը .....   |            |
| <b>Ո. ՊՈՂՈՍՅԱՆ, Մատենադարանի երայերեն ձեռագրերի հին հավաքածուի համարոտ նկարագիր .....</b>                 | <b>341</b> |
| Համարոտ նկարագիր .....  |            |
| <b>Հ. ԹԱՄՐԱԶՅԱՆ, Տաթևացու հաշվետվություն .....</b>  | <b>347</b> |

## СОДЕРЖАНИЕ

### СТАТЬИ

|  |     |
|--|-----|
| <b>С. Варданян</b> , Армянский перевод сочинения Григория Нисского “Об устройении человека” .....                                    | 5   |
| <b>Г. Мурадян</b> , Сочинение Давида Анахта “Анализ Введения Порфирия”. Текстологические вопросы .....                               | 19  |
| <b>О. Вардазарян</b> , - Два уточнения в “Житии Маштоца” и свидетельство Лазара Парбези .....  | 41  |
| <b>А.Топчян</b> , Мовсес Хоренци: единственный ли раскритикованый историк древних веков? .....                                       | 59  |
| <b>К. Матевосян</b> , Григор Апират Магистрос и его род в XI веке .....  | 67  |
| <b>Д. Эйнатян</b> , Армянские рукописи по астрономии .....   | 95  |
| <b>А. Долуханян</b> , Толкование одной библейской заповеди у Григора Татеваци и Мкртича Нагаша .....                                 | 109 |
| <b>К. Костикиян</b> , О защите интересов армянской церкви и армянства в шахских указах, полученных католикосом Лазаром Джакеци ..... | 115 |
| <b>М. Аракелян</b> , Изучение иллюминированных Евангелий Новоджулльфинский школы армянской миниатюры .....                           | 125 |
| <b>А. Тамразян</b> , Применение музыки в духовных школах. Семикнижие .....   | 139 |
| <b>Г. Асмарян</b> , Отражение итальянского национально-освободительного движения в газете “Аршалуйс Ааратян” .....                   | 173 |

### ПУБЛИКАЦИИ

|   |     |
|---|-----|
| <b>П. Ованисян, О. Вардазарян, Н. Адонц</b> , “Богиня Кибела” .....                                   | 181 |
| <b>А. Банучян</b> , Новая расшифровка древнейшего фрагмента Егише “О Вардане и войне армянской” ..... | 217 |
| <b>А. Малхасян</b> , Надписи окладов рукописей Матенадарана .....                                     | 259 |

### РЕЦЕНЗИИ, БИБЛИОГРАФИЯ

|  |     |
|--|-----|
| <b>А. Бозоян</b> , Л. Тер-Петросян, “Крестоносцы и армяне”, тт. I и II .....                       | 307 |
| <b>Р. Погосян</b> , Краткое описание старой коллекции древнееврейских рукописей Матенадарана ..... | 341 |
| <b>Г. Тамразян</b> , Годичный отчет .....  | 347 |

## CONTENTS

### ARTICLES

|   |     |
|---|-----|
| S. VARDANIAN, The Armenian Translation of the Work <i>On the Making of Man</i> by Gregory of Nyssa .....  | 5   |
| G. MURADIAN, Textological Issues of the <i>Commentary of the Introduction of Porphyrius</i> by David the Invincible .....   | 19  |
| O. VARDAZARIAN, The two Corrections of the <i>Life of Mashtots</i> and the Evidence given by Ghazar Parbetsi .....  | 41  |
| A. TOPCHIAN, Is Movses Khorenatsi the Only Criticized Historian of Ancient Centuries? .....   | 59  |
| K. MATEVOSIAN, Grigor Apirat Magistros and his Family in the 11 <sup>th</sup> century .....   | 67  |
| J. EYNATIAN, Astronomical Texts in the Armenian Manuscripts .....   | 95  |
| A. DOLUKHANIAN, The Expression of a Biblical Commandment in Works by Grigor Tatevatsi and Mekertich Naghash .....   | 109 |
| K. KOSTIKIAN, About the Shahs' Firmans Obtained by Catholicos Ghazar Jahketsi for the Profit of Armenian Church and the Preservation of the Armenian Nation ..... | 115 |
| M. ARAKELIAN, Study of Armenian Illuminated Manuscripts in the Frame of the New Julfa Armenian Miniature School .....   | 125 |
| A. TAMRAZIAN, The Use of Music in Religious Schools <i>Yotnagreank</i> (Seven Books) .....  | 139 |
| H. ASMARIAN, The Echoes of Italian National Liberation Movements in the "Arshalouis Ararati" Paper (1840-70es) .....  | 173 |

### PUBLICATIONS

|   |     |
|---|-----|
| P. HOVHANNISIAN, O. VARDAZARIAN, The Unknown Work <i>The Goddess Cybela</i> by Nicolas Adontz ..... | 181 |
| A. BANUCHIAN, A New Analysis of an Ancient Fragment of <i>The War of Vartanids</i> by Eghishe ..... | 217 |
| A. MALKHASIAN, Inscriptions on the Bindings of the Matenadaran Manuscripts .....                    | 259 |
| A. MAGHALIAN, The Work <i>History of the Gtcheal Monastery</i> by Arakel Kostanians .....           | 283 |

### LITERARY REVIEWS, BIBLIOGRAPHY

|  |     |
|--|-----|
| A. BOZOYAN, Levon Ter-Petrossian, <i>The Crusaders and the Armenians</i> , Yerevan, 2005 and Yerevan, 2007 ..... | 307 |
| R. POGHOSIAN, Brief Description of the Old Collection of Hebrew Manuscripts of the Matenadaran .....             | 341 |
| H. TAMRAZIAN, Annual Report .....  | 347 |

# ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

*Համոր 18*

BANBER MATENADARAN

*Volume 18*

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА

*Том 18*

Համակարգչային ձեւավորումը Շողիկ Զարոյանի, Խունե Բարթիկյանի  
Երբագրիչ՝ Նախա Թամամյան

«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»

ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ԶԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

«Նախրի» հրատարակություն

ք. Երևան - 375009, Տեղյան փ. 91